9(49.6)
Ч-54

2 ешуруу 25р.

2004

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՕՍՄԱՆԼՈՒ

MAHMOUD II.

Empereur des Turcs

181-ԱԴՀ
9(49.6)
Կ-53
Ազ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՕՍՄԱՆԵԱՆ

ՊԵՏՈՒԹԵԱՆ

№ 3509

ԾՕՐԻՆԵԱՑ

Հ. ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

10055

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՀԱՏՈՐ Ա.

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՍՈՒՐԲՆ ՂԱԶԱՐ

—

1841

9 (56)

ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՅ

ՏԵԱՌՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ԵՒ ԵՂԲՕՐ ՆՈՐԱ ՊԱՐՈՆ ԲԱՂՏԱՍԱՐԱՅ ՆԵՓԻՍԵԱՆՑ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ի վերս անցից ազգաց հզօրաց այնքիկ առաւել բնաւորեցան յախտիժ վերծանութիւն գալ, յորս խիտ առ խիտ հիւսք իմն և մանուածք գտանիցին մեծամեծ պատերազմաց, շքեղ յաղթականաց, արագ արագ աշխարհակալութեանց, և այնպիսի արգասեաց արիութեան և հանճարոյ՝ որ անկարօտք իցեն սէպ սէպ իմաստասիրութեանց վիպագրին։ Ընդ առաջինս՝ ի սոցանէ յիրաւի է վարիանեալ զամենեան պատութեանն պատմութիւն, որ 'ի վերջանն զկարծիս հատարակաց բովանդակեալ ունի գէպս նշանաւորս, հիացուցչս խորագնին մտաց, և է զի զուարճալիս կամ ահարկուս լսողաց։

Վասն անեղծմանելի կացցէ իրացս և

խուռն բազմութիւն պատմագրաց աղ-
գին՝ որ հետ զհետէ և որ 'ի միասին իսկ
ինամ կալան գրով աւանդել զանցս ի-
բրեանց ժամանակին առ ժամանակակից
մարդիկն և առ որս զինի նոցա գայցեն
ժողովուրդք ։ Բայց թէպէտ և այս
էր , ապաքէն անհրաժեշտ հարկ 'ի
վերայ կայր մերումն ազգի գիտել հա-
ւատաւոր զերս և զյառաջադիմութիւն
և զերևելի հանգամանս հոյակապ թա-
գաւորութեան , զոր ամենախնամ տես-
չութիւնն Աստուծոյ շնորհեաց մեզ 'ի
հովանաւորութիւն ընդ ժամանակս
հնգից և աւելի ևս գարուց ։ Եւ ահա
'ի սոյն ազգս մերս այս համառօտա-
գիծ յօրինեցաւ պատմութիւն . և ըն-
ծայի 'ի վայելս այնոցիկ 'ի մերազնեայ
ուսումնասիրաց , որ վերջացեալք 'ի
տաճկականին հմտութենէ , կամ թէ
նոսին հանդերձ և բովանդակութեան
օտանեան պատմութեանս անենչա-
ցեալք՝ ցանկացան արդարապէս 'ի հայ-
րենի բարբառս իբրեանց ընթեռնուլ
զնոյն ։

Միայն թէ ոչ երկմտիմք և ներողա-
մտութեան ինչ 'ի ոցանէ հանդիպել,
որպէս 'ի քազուտ մարդկօրէն վրիպանս
գործոյս, նոյնպէս և յաղագս այնր՝ զի
պատմագրանիցն ազատութեամբ եր-
կիւղած մտօք վարեալ՝ անթարգման և
անյեղափոխ 'ի մէջ բերեալք զանուանա-
կոչութիւնս ինչ օտարս 'ի հայկական
խօսից. որպիսիք իցեն վէզիր, խան,
շահ, սուլդան, ենիչէրի և այլք սա-
կաւք։ Սակայն կամակար մտօք յան-
ձին կալաք ըստ ընիկ հնչման արդի Օս-
մանեանց կարդել զանուանս մարդկան
և զնօրոց քաղաքաց, քան ըստ ուղղա-
գրութեան միջին և վերջին դարու մա-
տենագրացն մերոց գրոշմել զնոսին, և
զընթերցանելիսն խրատուցանել. սմին
իրի Մէհէմմէտ գրեցաք և ոչ Մահ-
մատ, Պայէզիտ և ոչ Բայազիդ, Լէնկ-
թիմուր և ոչ Լանկ թամուր, Պէշիր և
ոչ Բշր, Իպրահէքիր և ոչ Աբրահաքր.
և որ այլն են։

Եւ զի անսայթաք յանկն արկանիցեն
ընթերցողք զանցս անցելոց ժամանա-

կաց, փոյթ 'ի մոխ եղաք ցանգ անմեկին
պահել յայնցանէ զուսաւորութիւն
ժամակագիր յիշատակաց. որոյ վասն
զիմաստիանն Տաճկաց զհիմարութիւն ա-
ռնուանեալ՝ եղաք յէջս խրատանջիւր
յաջմէ, և հանդէպ ոմին յահեկէ զփրկ-
չական թիւ հատարակաց. խակ զա-
ւուրս ամաց ըստ նորուն հաշուեցաք
տոմարի։

Այլ 'ի վերջան զամենայն 'ի հաւա-
տարիմ վիպագրութիւն և յանուանելոցդ
ճշգրտարանութիւն ուշ արարեալ, որ-
պէս ոչ ինչ 'ի կարեորացն յապաւեցաք
կամակար, ըստ ոմին և ոչ ինքնահնար
ինչ բնաւ յօդեցաք 'ի պատմութեան.
թէպէտ և յաստիութեան տպագրու-
թեանն հոգացեալ՝ ոչ խառնեցաք 'ի
ներքոյ ինչից խրատանջիւր զպատմա-
գրացն զանուանս՝ որ երաշխաւորեցին
մեզ զաստուածութիւն իրացն։

Քանզի առաջնորդ հաւատարիմ
կալաք մեզ 'ի պատմութեան զքաջա-
հմուտ գերմանացին զՀամմէր Փուրկ-
ստալ, որ զամս երեսուն վաստակեալ

'ի յօրինուածս բազմահատոր պատմու-
թեանն Օսմանեանց և քաղեալ զայն 'ի
բուն յաղբերաց անտի պատմագրանցն
Տաճկաց զորս երկերիւրովք ջանի յիշա-
տակէ նա, գրուատեալ է առ հատա-
ռակ յեւրոպական ազգաց. և աշխատա-
սիրութիւն նորա թարգմանեալ այժ-
մէն 'ի զանազան լեզուս նոցա։ Սակայն
պարտ անձին վարկաք և ինքնին յանկ
արկանել առեալ ոչ միայն յայլոց եւրո-
պացի մատենագրացն բանս, զոր օրի-
նակ 'ի Մուրատճա, 'ի Գանթեմիր, 'ի
Թոթ, 'ի Թոտերինի, ՅԱլիքս, 'ի Ժուա-
նէն և յայլս, այլ և որ կարևորն էր մեզ,
և քաջին Համմէրայ ևս արդեօք ըղձա-
լի, մեծապէս ատատրութիւն գրատաք
'ի բազում ինչ կրս և 'ի մերոցն պատմա-
բանից, և մանաւանդ 'ի Ժամանակակից
մարդկանէն, որպիսիք են Թունիս վար-
դապետ Մեծոփայ, Ղուկաս վարդա-
պետ Դավրիժեցի, Զաքարիա Վարդա-
շապատեցի, Երեմիա Չելէպի, Մա-
ղաքիա դպիր Ճէվահիրճեան, Գէորգ
դպիր Պալատեցի, Գէորգ Օղուզլու-

գնան Տրապիզոնցի, և յայլոց ոչ սակաւ
Հշատակարանաց և 'ի Մշոց սակա-
նատեսս և սկսանչալուր պատմագրաց։

Ոչ ինչ դանդաղեցաք սկնարկիլ եր-
կեք և յօտմանեան պատմարան, զորոց
զսպագիր մատեանսն մեծաւ մասամբ
ունէաք 'ի ձեռին, իսկ 'ի գրչագրացն
սակաւս։ Եւ ահա կարգեմք սասին
զսակաւս 'ի բազմաց անտի որ տպեալ
և որ գրչագիր, 'ի բաց Մողեալ զմատա-
կան ինչ պատմութիւնս, և զաշխարհա-
գրական գրուածս, և զպատմութիւնս
վարուց երկրի արանց։

ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՕՍՄԱՆԵԱՆՑ

ԳՐԱԴԻՐՔ

Թուրքի Աշխարհագրագէտ. Մեծարգի պատմագրութիւն Տէրվիշ Ահմէտայ ուրուն որդւոյ Եահէայի թոռին Աշրդ փաշայի. և կեցեալ է պատմագիրս առ Պայէզիտաւ Բ. արքայիւ իսկ զպատմութիւն իւր քաղեալ 'ի գրութենէ ուստէք Եսիշի անուն պատմագրի որդւոյ Էլիասայ պաշտօնէի սուլդան Օրխանայ։

Ճիհանէ-նա, որոյ մասնագիր է 'ի նէշրի ժամանակակից Աշրդ փաշազատէին։

Հէնդ գիրքը այս ինքն է Եօթն գլխանոք, զոր արարեալ է Մոլլա Խոսրա

հրամանաւ Պայէզիտայ Բ. արքայի 'ի բարբառ Պարսից։

Թուրքերէն Անէ Օսման, այն է Պատմութիւն Օսմանեանց, զոր գրեաց Լուդֆի փաշա ցամն 1553։

Թուրքերէն Անէ Օսման. որոյ պատմագիր է Միհիյէտտին Ճէմալի։

Թուրքերէն, այսինքն է Պակ պատմութեանց, զոր յօրինեալ է ակրձ և ձոխ բանիւք գենպէտան Սատէտտին էֆէնտի՝ առաջին արքունական պատմագիր։

Թուրքերէն Անէ Օսման, զոր գրեաց անկոչնատեր բանիւք պատմագիրն Ալի, և հասոյց ցմահ արքային Մէհէմմէտայ Գ։

Թուրքերէն Անէ Օսման, յօրինեալ 'ի Հասանպէկզատէ պատմագրէ. սա մինչև ցմատաւորութիւն Սիւլէյմանայ արքայի համառօտէ զՍատէտտին, և յարէ զնորոյ ժամանակին զգէտս մինչև ցամն 1636 յորում մեռաւ։ Զայս պատմութիւն թարգմանեալ Գէորգայ գրչի պալատեցւոյ, և յայլոց ոմանց

յաւելուածս 'ի սոյն արարեալ՝ գրեաց
'ի մերս բարբառ զպատմութիւն ինչ
Օսմանեանց յերկուս հատորս, և էմե-
բակառար :

Թարգմ. Անի Օսման, գրեալ 'ի Սո-
լակզատեն պատմագրէ ցամն 1644 :

Զհետս հանրապատում մատենա-
գրացս երևելի են և պատմագանքն ճէ-
լալզատեն Մուսագաֆա, Գարաչէլէպի-
զատեն Ապուլբազիզ էֆէնտի, Փէչուլի
կամ Փէչէվի Իպրահիմ էֆէնտի, Սէլա-
նիքի, Շէմնի փաշա, Քէմանքէշազատեն,
Վէնիհի, Նաստուհի փաշազատեն, Նուրի,
Սիւհէյլի, Մէհէմմէտ խալիֆէ, Հաճի
խալիֆէ Քեաթիպ չէլէպի, Վէյզի
Ինվէրի, Մէլէք էֆէնտի, Ռէամի Ահ-
մէտ էֆէնտի և այլք. որք է զի զոմանց
ոմանց 'ի Թագաւորացն Օսմանեանց ա-
ւանդէցին զգործս, և է զի զպատերազ-
մաց ինչ կամ զբաղմանվրդով խառվու-
թեանց պեատութեանն Հառեցին :

ԹԷՕՖԻԼՈՍ-ԻՆ-ՍԻՆՈՊՍԻ ԷՊԻՍԿՈՊՈՍ, Պատմութիւն Նաւատարագին Օսմանեանց, որոյ մատենագիր է բազմավէպն Գեւորգիոս Չէլէպի, տպագրեալ յամի 1728։

ԿԷՍԱՐԻ ԽՈՒՔՔՈ, զոր յօրինեալ է պատմագիրն Նազմիզատէ, տպագրեալ յամի 1730։

ԹՈՓԼԻՄԱՐ-ՆԷՇԻՐԻՆ, որ է Ժամանակագիր ազիւսակք, գործ Գեւորգիոս Չէլէպւոյ՝ յաւելուածովք այլոց ոմանց տպագրեալ յամին 1732։

ՆՈՅԻՆ, պատմագիր արքունի՝ որ յերկուս հատորս բովանդակէ զվէպս պատերազմանց յամին 1659, տպագրեալ յամի 1734։

ՐՈՒԷՊ, որ գրէ յերկուս հատորս զպատմութիւն անցիցն անցելոց յամէ 1661 ցամին 1721, տպագրեալ յամին 1741։

ՉԷԼԻԳԻԼՈՓԷ, որ բովանդակէ զպատ-

մութիւնս անցեալ աշխարհին յամէ 1722 ցամին 1728, ապագրեալ 'ի 1741։

Սաֆ. Շաֆէր և Սոֆի, երրեակ պատմագրանք որ առանձին զքսոյցս Թագաւորութեան Մահմուտայ արքայի Ա. յամէ 1730 ցամին 1743, միահատոր ապագրեալ 'ի 1783։

Իսֆ, որ պատմէ զանցս պէտութեանն յամէ 1744 ցամին 1750, ապագրեալ յամին 1784։

Ահմէտ Վասիֆ Էֆէնտի, որ զարտայայտութիւն պատմութեանն Խաւայ յօրինեալ հատոյց ցամին 1774, ապագրեալ յամին 1814։

Ա՛սի ղաֆէր կամ Ո՛սի ղաֆէր, գործ արքունի պատմագրին Էսատայ, յորում պատմէ զանցս կոտորածի և բարձմանն Ենիչէրեաց։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՕՍՄԱՆԵԱՆՑ

ԱԶԳԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՆԱԽՆԵԱՑՆ ՕՍՄԱՆԵԱՆՑ

Օսմանեանց նախնիս քան կարգի ազգաբանելով ածեն հասուցանեն պատմագիրք նոցա մինչև 'ի Յաբեթ, որոյ թոռն հանարին զթիւրք զնախահայր ազգին Թուրքաց, և զինքեանս սերունդ նոցա։

Աշխարհ բնակուեցեան Թուրքաց ցարդ ևս Թուրքաստան կոչեցեալ 'ի վերնակողմանս Ասիոյ կայ, յարևելից սահմանն զՉինս ունելով, յարևմտից զԵրկիրն Խարէզմի, 'ի հիւսիսոյ զՍիբիր, և 'ի հարաւոյ զմեծ Թամբարս։

Բնիկ բարբառ նոցա, որ Ձէզամիայ-
ականն կոչի [1], 'ի հնդեւասանելոցդ
դարէ և այսր մնալոյ մինչեւ 'ի լեզուացն
Ասորացւոց և Պարսից՝ պերճ և ճոխ
ընծայի 'ի բերան Օսմանեանց քան
զամենայն բարբառս արևելեայց:

Իսկ աւանդ նոցա պատմեսցեն յայս
բովանդակի: Էր, ասեն, 'ի ժամանակս
Աբրահամու Ուղուզ խան որդի Գա-
լայի, որդւոյ Գայեայ, որդւոյ Թիւրք
խանի, այր որսորդ և հաւժկու. որոյ
եկեալ 'ի ծանօթութիւն ճշմարտին Ա-
ստուծոյ, յուրասա կայ 'ի հայրենի գիւղն
պաշտամանէ, և զանն եօթանասուն
զդէմ կալեալ պատերազմաւ հօրն իւ-
րոյ Գարայի, յորոյ ուրեմն յաղթէ
նմին, և հաստատեալ զաթոռ իշխա-
նութեան իւրոյ 'ի մեծ քաղաքն Եաշ [2]
ընդ իւրև նուաճէ զամենայն զԹուրք-
քաստան:

Եւ էին Ուղուզայ որդիք վեց. Կիւն
խան, Այ խան, Եղլդիզ խան, Կէօք
խան, Տաղ խան, Տէնիզ խան: Յաւուր
միում գալեալ սոցա յորսս ազնիւն մի

1 Ի Ձէզամիայէ յորդւոյ Ճինկիզ խանին
տուեալ զանուանն:

2 Որ յորդի ժամանակս Նա մայրաքաղաք
էր Բագդատրոնիեան Իսպէրէանց: Եւ զի
արքատեալ հասին Ուղուզեանք մինչև 'ի Մա-
փուիա, ի-որ-ոնց մայրաքաղաքին անուամբն
Իսպէրն և զգիւղատոր քաղաք էրիրն Եաշ:

ենեմս երթա՝ ածեն ասա. Հայրն իւրեանց-
ն նա ասց զորդին 'ի պարզև երթցն ե-
րթցապուռնից, և կրասերացն երեցուն
ընեսան։ Սոքա բաժանեն յիւրեանս զը-
նեսան, և առաջինքն խորասկեն զա-
ղէն։ և Ռեղուզ զկրասերսն ասուսանեսալ
Եռանեսս, Խէշ օգ, կարգէ 'ի գլուխ
ձախու Թեկի բանակին իւրոց, և զերի-
ցապոյնսն կոչէ Խորասկիչս, Պօղուզ, և
զաջ Թև բանակին ասց 'ի ձեռս նոցա։

Իբրև մեռաւ Ռեղուզ, Եռանեսքն
կարան իւրեանց բաժին զարևելեան
մասն Թուրքաստանի, և Խորասկիչքն
զարևմտայինն։ և մէն մի 'ի վերցուսեց
իշխանացս առանձի հայր լեալ չորից եւ
որդւոց, յորոց սերեալ համարին բազ-
մաց և զորս առհմք անուանեալք յաշխարհին
Թուրքաց։

Արդ մեր Թողեալ զպատմութիւն
իշխանացն արևելեան Թուրքաստանի,
զարևմտեանսն ասասանեմք հրաշալաւ
յոյժ յոյժ, և մինչև 'ի Բիւզանդիոն և 'ի
Պանուբ յաղթանակս կանգնեալս։ և 'ի
սոցանէ ահա սերին Ռեղուզեանք, Սել-
ջուզեանքն Օսմանեանք։ Ռեղուզեանցն
ցերազեալ համարի Տաղ խան, Սելջու-
զեանց [1] Տէնիզ խան, և Օսմանեանց
Կէօք խան։

1 Եթէ զի նախահայրք սելջուքեանքն փոխի
ասցի Սելճուք ի՝ քէր որդի Տաքաքայ՝ հաշ-
տացեալ 'ի փանէրորդի դարուն 'ի Իսլամաս

Զ Ուզուզեանց այսչափ ինչ յիշատակք են 'ի կարգոյ, զի յար 'ի պատերազմեալս էին ընդ թագաւորացն Պարսից և ընդ ամիրապետացն Արաբացւոց. և զի Սալար խան նոցա 'ի տաճկերգդ դարուն ընկալեալ զմեհկեանսկան կրոնս՝ կոչէցաւ Ճանազ խան կամ Գաբրա խան, և զԺողովուրդ իւր առ առաջին անուանեաց տան Թիւրքմանս՝ կամ Թորգոմեականս՝ առ որոշելոյ յայլոց Թուրքաց, որք յետ Ժամանակաց եկեալ դարձան 'ի նոյն կրօնս։

Իսկ Սելջուզեանք զկնի տաճկերգդ դարուն հզօրացեալք ակռեցին 'ի Կապադովկիոյ ծովէ մինչև 'ի Միջերկրականն, գրաւեալ զՊարսս, և զԴամասկոս, զՌուրիա և զիրարն Ասիա. և 'ի սոցանէ պետութիւն աւելանակաց կանգնեցաւ հաստատակառոյց շինուածն Օսմանեան պետութիւն. զորմէ ժամ է ասել։

Սմրղանդայ, ոմն իրի Ե յաջորդս նորին 'ի նորա անուան յորջորջեցան։

1 Պապանգիրն Ներսէսի սպասաւորանէ զանուն սոցա թիւրք ինան, որպէս ինչ թուրքահաւաք։ Բնիկ ազխարհ սոցա յարևելս Կապադովկիոյ ծովուն էգի. և անդի ապա 'ի Ռիպասանէրոյդի դարուն հարաւոյ 'ի նոցանէ էին սպասէցաւ 'ի Հայասպան ազխարհ։

Ի ԲԱԹՆԱԼ Ճինկիզ խանին զանբան թիւն Խարէզմի, որ թաւանք էին հզօր արձանացեալ կոյր ցոյնժամ ընդդէմ արշաւանացն Մոգոլաց յարևելուստ կոյս, Սիւլէյման շահ որդի Գայասէդդինայ յազնուատոհմ սերնդոց Կէօք խանին՝ եկ ընտանեօք խրովք արամբք յիսուն հազարաւ 'ի Մահան գաւառէ ուխտարհին Խորասանայ, և գիսեալ 'ի Հայս՝ բնակուիթիւն կալաւ 'ի կողմանս Էրզնկայ 'ի գաւառին Եկեղեաց մինչև 'ի Խլաթ։

Ապա իբրև մեռաւ Ճինկիզ խան յետ եօթն ամաց՝ չոս արարք Սիւլէյման խրովքն հանդերձ գառնալ յերկիրն Հայրենի 'ի Մահան. և յանցանել խրովք ընդ գետն Եփրատ մերձ 'ի Բերիսն՝ առեալ անկաւ երիվարաւն 'ի գետ անդր և հեղձաւ։ Զմարմին նորա հանեալ թաղեցին խրքն առ Ճապէր անուն ամրոցաւն, ուր ցարդ կայ յիշատակի գերեզման նորա. և ինքեանք անառաջ նորդք ցրուեցան յերկրին Ասորոց, և կէսք երթեալ դարձարեցին 'ի Հայս յամի տեառն 1231, և 'ի հիճրէթին 629։

Որդիք չորք էին Սիւլէյմանայ. Սէնգարիկին, Կիւնդօղմէ, Տուռնապ և Էրդօղրուլ։ Էրեցարդոյնքն երկոքին գարձան անդրին 'ի Խորասան. իսկ Տուռնապ և Էրդօղրուլ խաղացին գնացին 'ի 'ի բարձր Հայս 'ի գաշան Բասենոյ, և անտի յարևմտակողմն 'ի սահմանս ան-

բուլթեան Սելջուգեանց, որոց թագաւորէր յայնժամ քաջն Ալայէտտին Ա։ Առ որ առաքեալ Էրզրումայ զմի յորդւոց իւրոց՝ խնդրեաց 'ի նմանէ տեղի բնակութեան, և նա եւ նմա 'ի կարուածս զԳարագեհատարն անուանեալ լեառն՝ որ յարևմտից կայ գաւառին Անկիւրիոյ։

Դէպ ելն Էրզրումայ պատահէլ ըստ ճանապարհայն մեծի պատերազմի Սելջուգեանց ընդ թաղիարս. և չև եւս ծանուցեալ է թէ ոչք ոմանք ելցեն որ մարտնչեցին, ընտրեալ կարաւ արիաբար ձեռն տալ սկսարագունեն կողմանեն, և տարաւ յաղթութիւն մեծ 'ի վերայ թաղիարաց իւրովքն չորեքհարիւր քառասուն և չորիւք ընտիր հեծելովք։ Սակս որոյ և Ալայէտտին զգեցոյց նմա հանդերձ պատուոյ, և զուարթն բաշխեաց 'ի մարտիկս նորուն։

Յետ այնորիկ նեղեալ Էրզրումայ 'ի մերձակայ Յունաց, խաղաց ընդդէմ նոցա մարտիւ պատերազմի, և էառ զամուրն Գարագահիսար և զայլ եւս տեղիս առ Կուտինա, որ է Փիւթահիէ. և Ալայէտտին յաւէլնոյ փառս և կարուածս բազումս։

Եւ մեռաւ Էրզրումայ ամուսն հիմնաւն և երից, թողեալ երիս որդիս, որոց անուանք էին Օսման, Կիւնտուզալի, և Սամնի, որ և Սարիպալի. և առքա թաղեցին զՆայրն իւրեանց յաւանն

Սէօկիւմ, որ է ընդ մէջ Լէւքէ և Էսկիշէհիր քաղաքաց։

Ա յարևելակ եղև սկիզբն Օսմանեան թագաւորութեան 'ի փոքրիկ և յանշնչեալ գաւառի անդ՝ որ կոչի Սուլդան Էօնիւ, և քաղաքք 'ի նմա էին Էսկիշէհիր, Սէօկիւմ, Սիսի Ղալա և Լէւքէ։

ՍՈՒԼԹԱՆ ՕՍՄԱՆ Ա ԳԱՆՋԻ

ԻՍԱՆ և շարկց ամաց էր Օսման 'ի մեռանել հօրն իւրոյ Էրդողրուլայ, ան-դրանիկն յետքարս իւր, և քաջութեամբ հօրն լիուլի ժառանգորդ։ Քանզի էր իսկ Օսման բարեբարոյ, գեղեցկադէմ, յօնեղ, լիխահեր, սեւաչորուա, արծ-ռանգն, երկայնաբազուկ, և ցորենա-գոյն. ասկս որոյ անդամին 'ի պատա-նեկութեան գոլով տիս՝ Գարա Օսման անուանէր, և ահարկու էր խշմանացն Յունաց որ շուրջ բնակեալ էին զան-դեօքն. վասն որոյ և բազումք 'ի նոցա-նէ ընդ ակամբ հայէին 'ի նա և նեղէին զարս նորա։

Մինչն խշմանն Պիլէճիկ ամրոցին բարեկամութեամբ գնայր ընդ Օսման-նայ. ասկս որոյ և նա 'ի գնալ իւրում՝ ամի ամի յանարատան տեղս աղաչէաց զխշմանն պահել յաւանդ զկահս և զարարս ասն իւրոյ և զարանցն որ ընդ իւր էին՝ յամրոցն անդ. և նա յանձին կալաւ զինեղին. այլ պայման-նաւ՝ զի մի յարանց ոք, այլ կանայք լինիցին որ զկահսն 'ի բերդ անդր ա-

ծիլեն. և Օսման այնպէս առնէր զանն ինչ:

Ընդ այն ժամանակս էր ասեն՝ թէ զի զ-ոչ ուրեմն մերձ յԷսկիշէհիր ծերունի ոմն Էռէպալն անուն այր երկիւղած և ի-մաստուն՝: Առ սա յաճախէր Օսման, և սէր սաստիկ զգուստս նորա խնդրէր առ-նուլ զնա իւր՝ ի կնութիւն, այլ հայրն ոչ էտ. զի և յոյն իշխան Էսկիշէհրին կամէր փեսայանալ Էռէպալեայ: Սմին երկի և սիրացաւ իշխանն ընդ Օսմանայ և յարեաւ՝ ի վերայ նորին մարտիս պա-տերազմի. այլ վանեցաւ՝ ի նմանէ. և բարեկամ նորին Քէօսէ Միխալ ա-նուն գերի վարեալ յՕսմանայ՝ այն-պէս նին կապեցաւ՝ ի սէր բարեկամու-թեան նորին, զի և՝ ի հաւատոց քրիս-տոնէութեանն անկաւ. և ասէր նորա Միխալ օրին անուամբ ընդ բազում ժամանակս հաշակեցաւ՝ իսլամութեան Օսմանեանց:

Աբդ՝ ի գլուխ երկուց ամաց տե-սիլ երազոյ պատմեաց Օսման Էռէ-պալեայ, հայցելով՝ ի նմանէ և զմեկ-նութիւն. ասէ. «Թուէր ինձ ընկ-ողմանեալ գնիլ առ քև. և տեսանէի

1 Զսա ընկալաք ասեն ընալ պապմաբանք, այլ սակս ոգորմածութեանն պանդոխ ոանել՝ ի գեղջ իւրում, և զանցաւորս առ իւր ա-գուցանելով յերի պապուասիրել: Են որք ընթ-ռնեան զանուանն Իսպէպալի:

և ահա և քանէր 'ի ծոցոյ քուամն լու-
սին կարակնաձև, զայր խոնարհէր առ
իս, և մատաչ 'ի ծոց իմ ամիսոփէր։
Ընձիւղէր ապա 'ի ծոցոյս ծառ վար-
սապէղ ամուռնաձիւղ, և գամ քան ըզ-
գամ ընդարձակեալ հովանաւորէր ըզ-
լերինս և զծովս առ հասարակ, և ջորք
գէաք գրախտնաւոդանէին զնս։ Տե-
սանէի ընդ ծառովն և լայնանիստ քա-
ղաքս և աւանս անհամարս զարդարեալս
պարտիզօք և աշտարակօք, և տերեք ծա-
ռոյն սուսերաձև ինն երևէին։ Յարեաւ
յանկարծակի հողմն ուժգին, և 'ի ըրա-
նուլեան իւրում զդաղաթունս ծա-
ռոյն մեծի հակէր խոնարհէր գէպուղ-
ղեալ 'ի թագաւորեալ քաղաքն 'ի Բիւ-
զանդիոն, որ յերկուց ծովուց միջոցի
զնիստն ունելով իբրև զաղամանդ 'ի
մէջ շաքիւղայ և զմրգոտի, մատանի ինն
հոյակապ աշաց իսոց երևէր. զոր այն
ինչ կամէի, ասէ, ազուցանել 'ի մա-
տունս իմ, թօմաքեցաւ յինէն քուն,
և ահա երազ էր։»։

Ի լուր պարզ և մեկին անրջոցս քա-
ջիկ խնամուտ եղև Ժերուանին խնա-
մոյն Օսմանայ, և քան զանուրջն Ազ-
գրբատոյն գուշակութիւն հանդէր-
ձելոյ մեծութեանն Օսմանայ հասա-
լեալ զինաւոր քաջութիւն նորին և
զարանց որ ընդ նմա, սեւաստրեաց
նմին և որդւոց նորա զիտաս թագա-
ւորութեան մեծի. և ինքնին կամեցեալ

սկիզբն առնել կատարման իրացն գուշակելոց, եւ Օսմանայ զգուստն իւր 'ի կնութիւն. զի ահա սա է, ասէ, լուսինն զոր յերազեցեր։

Դարձեալ և միանձն [1] ոմն Ապտալ գուժիալ անուն ասէր զանձնէ՝ թէ տեսեալ ինչ բազէ մեծ հովանացեալ թեւատարած 'ի վերայ Օսմանայ 'ի նշանակ թագաւորելոյ նորա. և Օսման շնորհատարս նմին զանձն իւր համարեալ, պարգևեաց նմա սուսեր մի և բաժակ, և խոստացաւ կառուցանել մենաստան մի յանուն նորին 'ի լուանալ գուշակութիւնն. որպէս և արար իսկ 'ի թագաւորել իւրում։

Այսպիսեաք քաջալերեալ կանխատացութիւնքք արին Օսման՝ յորդորագոյն միտ դնէր ընդարձակելոյ սահմանաց իւրոց. և նախ առաջին փութացաւ վերժինդիր լինել 'ի յոյն լեռնանէ Էյնեկէօլ բերդին, որ նեղէր զհովիւս հօտին Օսմանայ։ Խաղաց 'ի վերայ նորա եօթանասուն արամբք, և էառ զբերդն, և զամրոցն Գարաճահիսար որ առ նովաւ։

1 Տերվիշ։ Եւ միանձնութիւն պատճառ որ անէրպին 'ի ժամանակաց Մահմետի հալածեն զծագումն Իրանց, 'ի Բաղդատիս ֆորփորոհին. այլ հալածիչքն 'ի նոսա են որ ֆուլին Ղաֆըղանէպի, Գաֆըրի, Մէվլէվի, Պէքթաշի, և Բիֆայի։

Եւ Ալայէտտին Բ. ազգայ Իկոնիոնի առաքեաց առ Օսման նշանս իշխանութեան, այսինքն գրօշ մի, և սուսեր, և երիվար, և թմբուկ, և թուղ՝ որ է ձաղ[1]. որոց ընդառաջ ելեալ Օսմանայ մեծաւ պատկառանաւք, և իւրով առագաստն ի Սանգարիոս մինչև գվախճանելն Հրոյ ընդունեալ փողոցն և թմբկաց յոտին կացեալ, ապա ընկալաւ զրնծայսն[2]:

Զեկեղեցին Գարամանիայոյ փոխեաց ապա 'ի մզկիթ, և կարգեաց 'ի քաղաքին օրէնսուսոյց զոմն, և զայլ ոմն գաւառս, պատուէր հրամանին տուեալ նմա՝ անխափար իրաւ առնել տաճկաց և քրիստոնէից:

Ընդ այսչափ Հոխոսութիւն Օսմանայ մնասացաւ իշխանն Պիլէճիկ ամիրայն,

1 'Նշանակ է սա հեթի իշխանութեան' 'ի թուրքաց անպի 'ի վաղ ժամանակաց հետէ անցեալ ե 'ի սովորութիւնս Օսմանեանց. և է յարս ոգի յիշոյ խոխեալ 'ի ծոգ ոսկեգլուխ յուղոյ, և խանգնի 'ի գոտրս արքունեաց և վրանաց սնուցեալ ժամանակս յառաջ քան զլուս թագաւորին իսմ սպարապետին և իսմ խոսաքալին: Բաւական յարգ են թագաւորին, վեզիրաց երրեակ, գենպետին և հեծելոց խոսաքալաց երկին, և այլոց դեակ:

2 Սովին արարողութեամբ վարեցան և յաջորդս նորին մինչև ցԱրեհեմնէպ Բ. այլ նա զսովորութիւն ոգնակցութիւնն դադարեցոյց:

և խորհէր դաւաճանել զնա յաւուր հարսանեաց իւրոց, յորում առնէր զդուստր իշխանին Եարհիսարայ։ Իբրև գիտաց Օսման զդաւն 'ի մատնութենէ մանկանին իւրոյ Գէօսէ Մի-խալոյ, որ առ երեսս խորհրդակից էր բերդակալին և այլոց Յունաց, հնարեցաւ խորագիտագոյն գաւով զդէմ ուղել խարէութեանն։

Առաքեաց նախ 'ի Պիլէճիկ հօտ մի ոչխարաց իբր 'ի պարգևս հարսանեացն, և միանգամայն հրամանս հայցէր 'ի բերդակալէն՝ գնելոյ զինչս իւր և զընտանիս առ նմա 'ի պահեստի. որպէս սովոր էր առնել՝ յորժամ գնայր քաղաքեայ լինել ամարային ընդ տուարտաճանսն իւր։ Անդաց յոյժ բերդակալն 'ի միտս իւր ընդ անաչխատ յաջողել գաւոյն, և մտադիր եւ զհրամանն. և Օսման ընդ երեսուն և հինգ այլընտիր քաջաց իւրոց ծպտելոց 'ի հիւրպարանս պատուանց՝ խառնեցելոց 'ի բերդն բերեալս զինուց պատատոք։ Եւ զի ամրականքն մեծաւ մասամբ 'ի հարսանիս երթեալ էին յամրոցն Եարհիսար, ոչոր անհոգանն ոչիրեցին ամրոյն։ Ընտրեալ գիմեալ 'ի տեղի հարսանեացն՝ ապանեին զիեսայն զբերդակալն Պիլէճիկու, և զհարսն յինքեանս առին, զոր և ապա կարգեաց Օսման 'ի կնութիւն որդւոյ իւրում Օրխանայ։

Ի նմին ժամանակի Ալայէտին Բ

մեռաւ, և տէրութիւն Սելջուգեանց 'ի տասն մասունս բաժանեցաւ, որոց ամենեցուն գաւառապետք որպէս մի մի թագաւորք սկսին իւրեանց իւրեանք. և էին գաւառք տէրութեան սոցա Ասիոն, Սարուխան, Կէրմիան, Հէմիտ, Թէքէ, Մենթէշէ, Գարէսի, Գատագէ մունի, և Գարամանն՝ որ մասն է Կիլիկիոյ:

Յայնժամ սկսին եղև և իւրեանիշխան սիրապետութիւնն Օսմանեայ 'ի շրջակայս անդ Ալեմդարեայ. հաստատեաց զամենայն թագաւորութիւն իւրոյ 'ի քաղաքն Ենիշէհիր. կարգեաց իւր գեներալ՝ զՏուրսուն Գաղին զորդին Էմէրազլեայ, և հրամայեաց նա յիւր անուն կարգալ այնուհետև զմարդիանան յաւուրս ուրբաթուց [1]:

Իսկ զայլ տեղիս աշխարհին իւրոյ բաժանեաց 'ի նեղակակիցս իւր [2]: Զոր-

1 Մի-ՓԲԻ, այսինքն է վճռապես իսմ Բարգման օրինաց. գլուխ է գէնի նոցա և գիպնոսականաց, գերագոյն քան զամենայն աստուգանին և հաստատապարտ վերջիրին ռեծի:

2 Այն է Խոսրոպէ, իբրու հանգանակ գաստանութեան նոցա, յոր յարին մաղթանք վասն Մահմէտի և յաջորդաց նորա, և ապա վասն Բաֆաւորի ժամանակին. և սովոր է ընթերցող մաղթանացն 'ի Բարձրաւանդակ Բէմբի ընթերանուլ զնոյն՝ յետքեալ 'ի պապէանս սուրբերի. և այս 'ի փաղաքաստէալս զինուս զբարութեամբ:

գին իւր զՕսման կացոյց Իշխան Գաբրաձահիսարայ, զԵղբայր իւր զԿիւնոխեզալի 'ի քաղաքաքաղաքս Էսկիշէհրին. Այլուսաքիայ եւ զանիրայն ին Էօնիւ և Եօնահիսար, Հասանաքիայ զԵարհիսար, և Տուրղուսաքիայ զԷնեկէօլ. և զՊիլէճիկ եւ 'ի կալուածս անելոյ իւրում Էսէպալեայ:

Ի բազմաց հետէ ակն եղեալ էր Օսման ամրոցին Քէօփրիհիսարայ որ հանգէալ կայ Էնիշէհրին. վասն որոյ խորհուրդ կալաւ ընդ զօրավարս իւր յառաւելն ամրոյն: Հրամայէր իւր ծերոնին Տունտար հակառակ եկաց խորհրդոյն, և ոչ խոհականութեան հաճարէր գործ անդէն 'ի սկզբանն յաճախել իւրեանց ասելս և նախանձորդս. և Օսման զսոսնուալ արձակեաց զնեա իւր և ասպատառ արկ զնա:

Այս յարձակեցաւ էառ ոչ միայն զՔէօփրիհիսար, այլ և զայլ ամրոցս առ Սկիլիս Բիւզանացւոց, որ է Իզնիկ, և արշաւեաց մինչև հուպ 'ի պարիսպս քաղաքին. և առ 'ի գիւղեցոյ զառաւելն նորին կամ գնեաց առ նոսա ամրոց մի, զոր կոչեաց յանուն մոյ 'ի զօրավարաց իւրոց Գարղան:

Զհետ ամաց վեցից Իշխանք բերդոցն ոմանց առ Պրուսային միաբանեալ եկին ընդդէմ Օսմանայ, և վանեցան 'ի նեմանէ. և քաղաքաքաղաքն Ռաքուպատ քաղաքն, որ է Աղուզանիա, անձ-

նաստուր էզև յաղթականին՝ պայմանաւ զի Օսմանեանք մի երբէք անցցեն ըստ գետն Հանանուն։ Բան եւ Օսման, և զքաղաքապետն անդէն յօշատեալ ըստ պան. այլ և նա և յաջորդք նորին ըզխոստումն չանցանելոյ ըստ գետն պահեցին ըստ ձայնին, թէպէտ և ոչ ըստ խնամոյն. զի չանցին երբէք ընդ գետն Ուլուպատ, այլ 'ի ծովն շրջան առեալ նաւուք արշաւեցին յայն կողմն գետոյն։

Մինչդեռ Օսման Ղազի յաւելոյր զերկրակալութիւնս իւր 'ի հիւսիսակողմն, և առնոյր զամուր ամուր տեղիս Բիւթանիոյ, Օրխան որդի նորա նիզակակից ունելով զԳէորգէ Միխալ, զՆգՇէ գօՇա, զԳօնուրալպէ և զայլս 'ի քաջաց, վանեաց զԹաթարս յարձակեալս 'ի հարաւոյ կուսէ 'ի ԳարաՇահիսար, և ընդարձակեաց և նա զսահմանս հօրն իւրոյ։

Զամն տասն նորօրինակ ինն պաշարմամբ 'ի նեղ արկ Օսման զՆիկիա և զՊրուսա, գրաւեալ զամենայն բերդս բոլոր որ զնոքաք, և նորս նա իրրև մարտկոցս կանգնեալ հանդէպ նոցին։

Եւ յետ այնորիկ կարգեալ զորդին իւր ապարատպետ ամենայն զօրաց իւրոց՝ արձակեաց յառուն Պրուսայի. զի ինքն վասնզէր յոտնացաւէ։

Էառ Օրխան զամուրն Էսքիշեհիր, և գիմեաց 'ի Պրուսա. այլ քաղաքա-

պետ նորին միջնորդութեամբ Քէօսէ Միխալայ յանձին կալաւ տալ խաղաղութեամբ զքաղաքն, միայն թէ ամրակունքն եկցեն անտի ազատութեամբ. և Օրխան զինքեան ինդրոյն՝ պահանջեալ ոսկիս երեսուն հազար: Եւ եղև հրաշակաւոր մայրաքաղաքն Բիւթանացոց ամուր թագաւորութեան նախնի Օսմանեանց:

Ա՛յլ Օսման 'ի գրուն մահու առեալ զաւակս մեծի յաղթանակին, հաղիւ հազ եառեալ զորդին իւր զՕրխան, և պատուիրեալ նմա քաջպրութեամբ և արդարութեամբ թագաւորել, և ըզմարմին իւր 'ի Պրուսա թաղել, մեռաւ յամին 1326, ամաց եօթանասնից՝ թագաւորեալ ամս քսան և եօթն:

Շիրիմ նորա Կիւմիւշքիւմիզէթ անուամբ ուխտատեղի է տաճկաց. որ 'ի սկզբան գարուս այրեցաւ 'ի մեծի հրդեհին Պրուսայի, և այժմ փոխանակ արծաթափայլ գմբէթին գերեզման բռնալ եւեթ տեսանի 'ի տեղւոջն: Խակ գրոշն Օսմանայ և սուսերն երկասայրն պահեալ կայ 'ի գանձի թագաւորաց. և այն սուսեր է որ գրոշմի 'ի գրոշու ծովակալին Օսմանեանց միանչև ցայսօր:

ՍՈՒԼԴԱՆ ՕՐԽԱՆ

ԴԱՆԶԻ

( )ՐԽԱՆ արքայ անցեալ յամիսն հայրենի՝ նախ քան զամենայն հոգաց սուրբ բաժանել ընդ եղբօր իւրում Եւրիցու, որ կոչէր Աբայէտոմին փաշա[1], զանպատճառն ժառանգութիւնս հօրն իւրեանց, այսինքն է զերիվարս և զարջառս և զոչխարս։ Աբայէտոմին ըստ իւրում անգութութեանն բարուցն հրաժեշտ կալաւ՝ ի բաժնէն իւրմէ, և կամէր մեկնել առանձինն կալ՝ ի գեղջ ուրեքարայ Օրխան գիտելով չափ զիսհանան խնամութիւն եղբօրն՝ ապաշնաց զնա երկրորդ իւր լինել՝ ի մատաւորութիւնն, և անուանեաց զնա վէզիր[2]։

Եւ մինչդեռ Օրխան արքայ և զո-

1 Փաշայն երբեմն դրդի է՝ ի բարբառս Թուրքաց. և փանդի Աբայէտոմին երբեմն էր յորդի Օսմանայ և նոյն վէզիր Օրխանայ, ասպի ըստ ինքեան խլաս սովորութիւնն Փաշա յայնելոյ ամենայն վէզիրաց և խասախլաց։

2 Որ՝ յարաբացի բարբառս Ռէհանութիւն է. իսկ և ՍաՓրի ապէմ, որպէս ինքն գէրագոյն լանչ պէգուրիէան։

բանալիք իւր քաջակորով նորանոր յաղթանակս կանգնէին ազատաբոյ, վէ-
զիրն Ալայէտմին փաշա խնամուն օ-
րէնադրութեամբք զարդարէր զպէտու-
թիւնն 'ի ներքուստ։

Դարձեալ խորհրդով սկիզբն արար Օր-
խան գրամ հատանել յիւր անուն. ո-
բոշեալ ասէին ամենեքեան զձև և զգոյն գէր-
խանացուցն Օսմանեանց, և կարգեաց
խուժքս հեռաւոր զօրաց, որոց թագակք
էին 'ի ժամանակս պատերազմի փոշ-
մի [1] յառաջ քան զլուխ, (զի ցայնժամ
Էրգօղլուլ և Օսման հեծելազօրս ևեթ
վարէին հրամայ [2] անուանեալս.) և կա-
ցոյց 'ի վերայ նոցա տասնապետս, հա-
րիւրապետս և հազարապետս։

Ամ. ՌՄԼԹ. զեղծան այս զօրականք
ոռնկանն խրեանց, և յանկարգու-
թիւնս մտաբերեցին, խորհուրդ կալաւ
Օրխան ընդ Ալայէտմինայ և ընդ գա-
տաւորի զօրաց խրոց, որ կոչէր Մէվ-
լանա Դարա Խալիլ ճէնտէրլի այր խա-
ղաղասոյժ. և սա խրատս եառնորդանդ
զօրաց կազմել 'ի մանկանց քրիստոնէից
ևեթ գարձուցելոց 'ի մահմետականս հա-
ւատս։

1 Ապտէ. որ էր յայնժամ ԷՐԷՐՈՒԹ մահ-
ուրջանի գրամանիշոյ։

2 Ապտնամ. Ե ասէ ասպատանաւորք էին
ժէնիսարէնք՝ յառաջնոյն ԷՒՆԷԼՈՎ բան-
նոյ։

Հաւանեցան Օրխան և արար բան խորհրդոյ գաղտուրքն։ Եւ յաւուր միում առեալ ընդ իւր զոմանս 'ի նոր-ընտիր զօրականացն գնաց առ անուա-նի շեխն Հաճի Պէկիմաշ, և խնդրէր 'ի նմանէ զօրհնութիւն, և զնշան իւին գրո-շոյ, և զկոչումն անուան սակս իւրոցն զօրաց։ Զեռս էդ Պէկիմաշ 'ի վերայ միոյ 'ի նոցանէ, և ասէ. «Ընդ կո-չեալն սոցա Եէնիչէրի (այս ինքն է Նոր գունդ). յաղթական լիցի բազուկ սո-ցա, և հաստատեալ սուսերն սոցա»։

Ի յիշատակ այնր օրհնութեանն յա-ւելեալ 'ի թաղեալ սովտակ գլխարքն սրածայր՝ զոր ունէին զօրականքն՝ և փերեթ մի թաղեալ կախեալ յետուստ կողմանէ գլխարկին, 'ի յիշատակ թեզա-նեաց վերարկուին Պէկիմաշայ։

Ի սկզբան անդ հազար ենիթ էր թիւ-ենիչէրեաց. և ապա ամի ամի այլ ևս հազար մանկունք քրիստոնէից գերելոց 'ի պատերազմի ուրացեալք 'ի հայրենի հաւատացն խառնէին 'ի գունդն. և 'ի նուազն պատահել գերեաց՝ զթերի հազարին հարկ էր լնուլ 'ի մանկուց քրիստոնէից որք ընդ իշխանութեամբ Օսմանեանց։ Որով յերեքարիւր ամն ենիթ երեքարիւր հազար քրիստոնեաց մանկունք միայն այսու պատճառանօք յաւելուլ ունէին յՕսմանեանս. թող զի հազարն առ Մէհէմմէտաս երիկրորդն ևս երիսունամեայ հազար, առ Սու-

լեյմանաւ քան հազար, և առ Մէհէմ-մէտաւ չորրորդիւ քառասուն հազար։ Եւ ուր առաջիկ նոցա մի ևեթ փող էր, յետ ժամանակաց եօթնապատիկ առաւելաւ։

Եւ իբր 'ի ցոյց առաւ և Ճոխ թոշակի նորոյ գնդիւն զօրավարքն նոցին 'ի խահ-ապարուեմեան ազգաց ընկալան ըզկոչումն. զի գնդապետին անուն կոչէր Զօրպաշը, և որոց ըստ նմանէ Աշքպաշը և Սագապաշը։ Դիւրաշ նոցա կարմրագոյն էր, և 'ի վերայ մահիկ արծաթափայլ, և երկայնքին Էօմէրայ. և առ կատարսն բոլորէին նաև առ 'ի խորհուրդ 'ի մէջ առնուլ։

Կարգաւորեաց ապա Ալայէտտին և զայլ զօրականն, և հեծելազօրուն պարտաւ 'ի վերայ եղ զՀանապարհս յարգարել առաջի բանակին, խրամն հատանել, և կամուրջս կազմել։ Եւ էին չորք վաշտք հեծելազօրուն կամ ապայլեցն, որք 'ի սկզբան անդ ոչինչ աւելի էին քան զՀազար և չորեքհարիւր, և ապա առ մեծն Սիւլէյմանաւ եղեն չորք հազարք, այս ինքն հազար ապայք, հազար զինակիրք, հազար թոշակաւորք և հազար օտարականք. և ապա առաւելան յոյժ յոյժ։ Իսկ անկանոն հեծելազօրքն հրամայեցին։

Առաջին շահատակութիւն օսմանեանն քաջամարտակացս երևեցաւ յառման անդ Վիկիոյ, որ մի միայն մարտ-

կոց ամիրայութեան ինացեալ էր նուա-
զելոյ կայսերութեանն Յունաց արաս-
քոյ Բիւզանդիոնի։

Յարձակեցաւ Օրխան զորոք խրոմք
'ի վերայ քաղաքին 'ի մերկայոյզ գիշե-
րի միում. և քաղաքացիքն որ յամենց
հեռէ յոգիս ապաստան կային 'ի ան-
վոյ և 'ի ապրաժամ մահուանէ, ունձ-
նաստուր եղին Օսմանեանոց. և ամենք
ոմանք ևեթ 'ի բերդակիանացն խնդրե-
ցին դնալ յազատութիւն։

Եմուտ Օրխան խաղաղութեամբ 'ի
Նիկիա, և փոխանակ աւարի քաղաքին՝
որում ծարաւէին զօրականքն իւր, զայ-
րին և զորբացեալ օրիորդս նորին բաժ-
նեաց 'ի նոսա։ Զհոյակապ զայն տա-
ճար, յորում երբեմն կրկին տիեզե-
րական ժողովք հաստատեցան՝ փոխեաց
Օրխան 'ի մզկիթ. կարգեաց առ նովին
և դպրոց մեծ և ազքատանոց, յորում
երբէք երբէք ինքնին ազքայ ապաստա-
րէր առնէ ազքատաց և լուցանէր զձը-
մեռեալս նոցա։

Կացոյց քաղաքապետս Նիկիոյ զորդին
իւր զՍիւլէյման փաշա, և 'ի դատաւոր
զԴարախալիլն Ճէնանէրէլ, և ինքն դար-
ձոյց զգէնս իւր 'ի Յունաց 'ի վերայ ին-
նեցունց թագաւորացն՝ որք բաժանեալ
էին յիւրեանս զերկիր ոչխրութեան
Սելճուգեանց։ Էառ զՊերգամոն մոյ-
սրաքաղաք Սիւսիոյ, որ է Գարէսի, և
զայլ տեղիս, և ապա զամս քսան լուռ

'ի պատերազմից՝ զՀետ եղև զարգարելոյ զամուս թագաւորութեան խրոյ զՊրուսա բազմապատիկ շինութեամբք։

Ի նմին ժամանակի և ոչխար բարեկամութեան հաստատեալ ընդ կայսերն Յունաց Կոստանդին Կանտակուզենայ, խնդրեաց 'ի նմանէ խաչ 'ի կնութիւն զդուստրն նորին զԻռոդորա։ Եւ նա քանզի կարծէր նենգակցութեան նորա ընդդէմ այլոց թշնամեաց խրոց որ անգաստ ապատակէին 'ի Յունաստան, հաւանեցաւ ընդ խնդիրն։

Յայնժամ առաքեաց Օրխան 'ի Սելիվրիա եւ զուստրն բազմութեամբ հանէր զոր առնուլ զհարսն և աժել։ Եւ հաս անդր և կայսրն խնդրեին զքսանին հանդերձ զորոշն և զպատուականսն. և 'ի վճարել հանդերձիցն և արարողութեանցն և խնջոյից կարգեալ էր կարգաւորք 'ի տեղւոջ անդ. եւ ելեալ ապատաք՝ յանձն արարին զորիորդն 'ի ձեռս փեսային, և գարձան։ Ի միում ամի Օրխան աղքայ խնդրեին եւ յայց անեղոյ խրատ յԱստուծոյ, և գարձեալ խնջոյք և խրախութիւք յաճախեցին անդանօր։ Եւ արդասիք բարեկամութեանցն ոչ այլ խնջ եղեն, քայց անցանել Օսմանեանց յԵւրոպակողմն։

Քանզի 'ի լսանալ առնոյն քանիցս երբեմն եառեալ Օրխան՝ զի շփոթք են 'ի Կոստանդնուպաւլս վասն ամուսոյ կայսերութեան, ժամ պատեհ համարեցաւ

հաստատել զոտս իւր յԵրուսաղէմ։ Սիւլէյման փաշայ որդի նորին և վէզիր՝ յա-
ջորդ Ալայէտտինայ, երիտասարդ փա-
ռասէր և իրատես, խորհուրդ կալաւ ընդ
քաջ նիզակակից իշխանս իւր, որոց ա-
նուանք էին Իսմէալէյ, Ղազի Գազել,
Էվրէնոս և Հաճի Իլէկի, և առ ան-
ցանելոյ յասխարհն Ծովախանայ անտի
յԵրուսաղէմ՝ էառ կազմել լաստափայտս
երկուս, և երեսուն և մի ոստիք անց
'ի հանդիպակողմն, և մատնուեցեալք
ուրուն յունի էառ զամրոցն Զէմին-
ելիք կամ Զիմնի. անտի առաքեաց նա-
ւակս, և այլ ևս երեքարիւր մարտիկս
անցոյց յայնկոյս։

Կայսրն Կոնստանդինոս պահանջէր
'ի Սիւլէյմանայ զամրոցն, և խոստա-
նայր տալն հազար ոսկիս հատուցանել
նմա, որպէս և հատոյցն իսկ. այլ քան-
զի ընդ նոյն աւուրս սաստնուեցիւն մեծ
եղև 'ի Յունաստան, և գրեթէ ամե-
նայն ծովեզերեայք Թրակիոյ կործա-
նեցան, Սիւլէյման ոչ միայն զամրոցն
ոչ գարձոյց անդրէն, այլ և յառաջ ևս
խաղացեալ էառ զքաղաքն Կէլիպօլու
'ի ձեռն Իսմէալէյ և Գազել Ղազի զ-
ղուարարաց իւրոց. ապա և ինքնին եկեալ
էառ զայլ ևս բերդս յայս և քաղաքս, և
գաղթականս 'ի Թուրքաց և յԱրաբա-
ցւոց բերեալ բնակեցոյց 'ի նոսին մինչև
'ի Զորլու։

Բողոք կալաւ կայսրն առ Օրխան

սակս արշաւանին Օսմանեանց յերկիր
իւր. և նա խոստացաւ իրաւախոհ լի-
նել ընդ նոսա 'ի գէպ ժամանակի։ Եւ
էր գէպն ժամանակ անդորրութեան
կայսերութեանն Յունաց, որ երկայնով
երկայրև վատթարներնեղբինչփոխիւք։

Մինչև վայելեալ Սիւլէյմանայ ընդ
երկար 'ի միջանակս իւր, զհետ երե-
կուց ամաց անկաւ յերկնարին իւրմէ
յորսս և մեռաւ, և թաղեցաւ 'ի Պու-
ղայրդ. և զերեզման նորա ուխտաւորի
է առանկաց, ըստ որում սա երկրորդ
վերջն եկաց, և առաջին հիմնեաց յԵ-
րուպա զօսմանեան պետութիւն։

Յետ սակաւուց և Օրխան արքայ մե-
ծապէս ցաւագնեալ 'ի վերայ մահուան
որդւոյն՝ մեռաւ ամաց եօթանասուն
և հնգից, թագաւորեալ ամս երեսուն և
հինգ, և եղեալ զիշատակ քաջայաղթ
աշխարհակալի, արդարակերով թագա-
ւորի, և խնամառու օրէնդրի։ Եւ էր,
ասեն, ըստ նեկարագրի կերպարանացն՝
երկայնահասակ և թիկնաւէտ, լայնա-
ճակատ, միայն և շիկահեր, և 'ի բոլ-
թակ ունկանն աջոյ ունէր սիսակ մեծ։

ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱՏ Ա
ՂԱԶԻ ԽԻՏԱՎԻՆՏԿԻՍ

Ի՝ԶԴՍՏՆ 'ի սկզբանէ Թագաւորութեան իւրոյ առուգեաց սա արդեամբք գործոցն զքեզ անուանակոչութիւնս իւր։ Քանզի անդէն վաղվաղակի անց յԵրուսաղէմ, զի ընդարձակեսցէ զյաղթութեանս եղբօրն իւրոյ Սիւլէյմանայ։ Այլ երբեմն լուր եհաս առ նա, եթէ իշխան էրկրին Կիլիկիոյ, որ է Գարամանն, յարձակեալ 'ի գաւառս Օսմանեանց, խոյացաւ յարևմտից յարևելս, վանեաց զմշնամին մինչև անդր քան զԳարամանս, և սասանեցոյց զաշխարհն։ և բրուտակաքն Անկիւրիոյ, որ կոչէին Ախիէր, եկին ընդառաջ արքային, և եռուն 'ի նա զքաղաքն յամի 1360։

Յայնժամ ընդ բանակին Օսմանեանց գնայր և գաւառն Պրուսայի։ վասն որոյ Մուրատ արքայ կարգեաց առանձին գասն ասքէր կամ Գազիասքէր, որ է գաւառաւոր զօրաց, զԳարա Խալիլ ճէնտէրէլի։ և զմի 'ի քաջ նիզակակցացն Սիւլէյմանայ Լալա Շահին անուն՝ անուանեաց Պէյլէրպէյի, այսինքն է իշխանաց իշխան կամ կոմենտէտ, և ա-

սա անց զարձեալ յԵրուսա և էառ զքաղաքս քաղաքս և զամուրս. ուր և զօրավարքն իւր Հաձի Իլալէկի և Էրբէ-նոս յոլով առեալս գրաւեալ էին մինչև'ի Պուրսայ:

Անտի արձակեաց Մուրատ զսպա-բապետն Լալա Շահին, և ընդ նմա զԻլ-ալէկի, 'ի վերայ Ադրիանուպոլսոյ: Իշ-խան քաղաքին ելն ընդառաջացս, և զա-բաշար հարուածեալ'ի փախուստ խու-ճապեցուս, և եմուղ ելեալ զամուր սա-տուսին բիւրամեղեան կայսերութեան 'ի ձեռս Օսմանեանց:

Ընդ եդ 'ի մտի Մուրատ ազգայ հաս-տատել զամուրս թագաւորութեան իւ-րոյ. այլ առ Ժամն յանձն արարեալ զքաղաքն 'ի Լալա Շահին, ինքն հաստա-տեաց զինակուութիւն իւր 'ի Տիմոթեայս: Իսկ զօրավարքն իւր անընդհատ յաղթա-նակաց տիրեցին մինչև 'ի Փիլիպէ, և առին զայն [1]:

[1] Անկաւ էր 'ի ժամանակին բազմաթիւն գերեաց, ոչ միայն ի հարեւանութենէ քաղաքին Մարդասգերին: Սակայն իրի խորհրդովն Գաբրիէլ անուն օրէնագիտին սահմանեաց արքայ յայնմհետէ զհինգերորդ մասն արծիթոյ գերեաց, այսինքն է քառասուն ի հինգ յարգանիս գալ. և այն էին փինգիտ կամ իսքենձն անուանեալ գոսրտ գերեաց ի սարկաց:

Մինչդեռ Մուրատ գարձ ապարեալ 'ի Պրուսա հրամայեալ աւերեաց ա-ռաքէր առ շրջակայ թագաւորս արևելից վասն երկրակալութեանց իւրոց, լուր էառ զի թագաւորքն Մաճառաց, Սերբաց, Պոսնացւոց, և իշխանքն Վլահաց յարձակեալ գան 'ի սահմանս Օսմանեանց: Եւ մինչև Մուրատայ հրամանն ետ տուեալ վասն իրացն, և ահա եկին հասին թշնամիքն մերձ յԱդրիանուպօլիս:

Լալա Շահին անյոյս գոլով զդէմ ուղղել սակաւաձեռն գնդաւ այնչափ զօրաց, արձակեաց 'ի վերայ նոցա զքաջն Հաճի Իլչէկի: Դա տասն հազար զօրաք գիշերատեսան անկաւ 'ի վերայ արևելեայց. և ձայնք թմբկաց և փողոց և գոչիւն ազազակի Օսմանեանց Ալլահ Ալլահ լցին զսիրտ թշնամեաց առ հասարակ մեծաւ արհաւրաք, և հալածեցին զնոսա մինչև 'ի սպառ: Բայց Լալա Շահին մանրացեալ ընդ փառս Իլչէկեայ՝ գնաց մանրու արքայն Ռումի, և սպան զնա:

Ի միւսում ամին զկնաւ Մուրատ արքայ 'ի հաշտութիւն ընդ Բակուզայիսն, որ խոստանային հատուցանել Օսմանեանց ամ ըստ ամէ հինգհարիւր ասկիս: Եւ զի անդէտ էր գայրութեան, 'ի յեռակարի գաշանցն փոխանակ սորա դրեալ՝ թաթաւեաց զձեռն իւր 'ի մեղան, և սպաւորեաց 'ի թղթին. և ահա այն է գուղտս, զոր յետ ժամանակաց

Հարատարքն վայելապրեցին, և յաւելին 'ի նմա զանուն Թագաւորին և զՀօրնորա:

Յետ հնգամեայ արշաւանացն գարձաւ Մուրատ անդրէն յԱսիա, կարգեաց զՀնեռէրէլին 'ի վերայ մեծ, և անուանեաց զնա Խայրէտտին փաշա: Ապա արձակեաց զնա ընդ Էրէնոս պէյին 'ի վերայ Իշխանացն Վլահաց և Մոլդաւիոյ [1], և նոքա առին քաղաքս և բերդս բազումս, եւ և զամուրն Նիշ:

Յայնժամ Իշխանին Սերբիոյ խնդրեաց 'ի Մուրատայ զխաղաղութիւն, և խոստացաւ հատուցանել Օսմանեանց ամի ամի հինգեալս հազար, և ոսկիս երեսուն հազար. և մեծ Իշխանին Բուլղարաց Սիսման կամ Սուսման փոխանակ հարկի եւ Մուրատայ զդուստր իւր 'ի կնութիւն:

Զամն վեց խաղաղութեամբ անցոյց Մուրատ ազգայ Յաղիանուսլիս, ուրանօր կառուցեալ էր իւր ապարանս: Բազում բարեկարգութիւնս արար 'ի զօրս իւր 'ի ձեռն թիմուրգաշ կոչմանպետին: Սահմանեաց ապայիցն մեծ և փոքր ռոճիկս, որ կոչին Զիամէթ և Թիմար, և եւ 'նոցա դրոշ կարմիր: Կարգեաց և գունդ մի քրիստոնեայ զօրս

1 Եւ փանդի Պողդան այսինքն Աստուածատուր անուն էր Իշխանին Մոլդաւիոյ, ուստերին Օսմանեանք յայնմհետէ և զՄուսթաֆա Պողդան անուանէր:

կանաց Վ ոյնիք կամ Վ ոյնաք անուանի յանարգ պաշտօն դարմանելոյ զերի-
վարս արքունի, և ազատս արար զնոսա 'ի հարկատուութենէ :

Կառարեաց և զհարանիս անդրանիկն իւրոյ, որում անուն էր Եղբայրն Պայէզիտ, մեծաւ շքով 'ի Պրուսա. և հարսն դուստր մեծի իշխանին Կէրմիանու որ կոչէր Եաղուպ՝ էրեր ընդ իւր պաշտաստական զբանալիս Էյրիկէօզ, Դալչանը, Սիսաւ, և Կուտինա քաղաքաց. և հարսնածուքն էին դաստուրն Պրուսայի Գօճա Մահմուտ Էֆէնտի և գրոշակիրն Ագաէնդուր՝ հանդերձ կանանովք իւրեանց, և այլ ևս հազարաւոր անձինք : Իսկ 'ի հանդիպի հարսանեացն գուսան գեսպանք ոչ միայն սահմանակից իշխանացն Մէնթէշէի, Գարագէմանեայ և Գարամանու, այլև Ասորւոց և Եգիպտոսի, ածելով ընդ իւրեանս օժիտս և ընծայս քաղուսն երիվարաց և կերպասաց, և յոյն գերեաց և ազատեալց :

Յաւարս հարսանեացն ասէ Մուրատ զգեսպան իշխանին Հաղիտու. «Ոչ ունեալ յինէն զիշխանդ քո զՀիւսէյին ոչ՝ ծանուցանս զի կամիմ դնել զքանի մի քաղաքս նորս սահմանակիցս իսոյ աշխարհիս» : Եւ իշխանն առ ահի վառեալ Մուրատայ զքաղաքս իւր, որոց գլխաւորք էին Պէկշէհրի, Սէյտիշէհրի, Եաշաւաճ, Գարա ազաճ, Սարթա, և

Ազգէնիկ, ուր թագեալ կայ ասեն խաչ կարն առանց նապտուտին խոշոր։

Ի միում ամի իշխանն Պալատան էառ զմեծ քաղաքն Սոֆիա, որ է Սարդիկէ, յետ երկամեայ պաշարման այսպիսի ինն հնարիւք։ Պատանի ոմն յՕսմանեանց անուն իբրև դատաղիք փախստական ապատանեալ 'ի քաղաքապետն Սոֆիայի՝ եմուտ 'ի ապատարանութիւն նորին յորում որպէս քաղէկալ. և յաւուր միում որոյ աղաղակ հեռացուցեալ զքաղաքապետն 'ի քաղաքէն՝ յանկարծակի կապեաց կաշկանդեաց զնա 'ի վերայ երիվարին, և ած տարաւ առ Պալատան. և նա յածեցուցեալ այնպէս երիվարաւ զքաղաքապետն զքաղաքաւն՝ էառ զայն խաղաղութեամբ յամի 1382։

Կայսրն Յունաց Յովհաննէս Պալէոլոգ ոչ ևս համբերեալ ակամայ բանակութեամբ գնալ ընդ Օսմանեանս որպէս ցայնժամ, դիմեաց 'ի Հռոմ առ Ուրբանոս Ե, և պատն խոստացաւ նմա զձեռնտուութիւն իւր և զմարդաւորացն արևմտից։ Ապ կայսրն 'ի դարձին իւրում 'ի Հռոմէ իբրև եհաս 'ի Վենետիկ, վաճառականք քաղաքին արգելին զնա անդէն ասկս պարտուցն։

Իսկ երեց որդի նորա Անդրոնիկոս, որ ունէր յայնժամ զինուն տերութեան 'ի Կոստանդնուպաւլիս, ջանէր արար զաղաչանս հօրն. մինչև կրասեր

եղբայր նորին Մանուէլ խաղաց 'ի Վենետիկ, և հաստատեալ զպատիս հօրն՝ դարձոյց զնա յաթոռ իւր. և կայսրն եւ զիշխանութիւնն Ընդրոնիկեայ 'ի ձեռս Մանուէլի։

Յայնժամ և նա զկծեալ Ընդրոնիկեայ՝ եդեալ իւր համախոհ զՍավէրիպէյ զորդի Մուրատայ ազգայի հանգոյն ինքեան ապաշնորհ ընդդէմ հօրն և փոփաքող մահու նորին. և մինչդեռ Մուրատ յԱրիա էր՝ ազգս ապստամբեցին յայսմանէ յերկրաքանչիւր հարցն։

Իբրև ազգ եղև Մուրատայ՝ կոչեաց վաղվաղակի զկայսրն 'ի դուռն իւր, և պահանջէր 'ի նմանէ զհամար վատրանք ջուլթեան որդւոյն իւրոյ. և յասել նորա երդմամբ շամի՝ եթէ ոչինչ յեղելոցն բնաւ յիմ գիտութիւն եկիր, միաբանեցին հարքն երկոքեան ընդդէմ որդւոյն, և խոստացան քրիստ զաչս նոցին։

Էանց Մուրատ յԵրուսաղեմ մերձ 'ի Կոստանդնուպոլիս, ուր առ հեղեղատաւ միով բանակ հարեալ էին ապստամբքն երկոքեան. և գիշերայն անցեալ երիվարաւն յայնկոյս հեղեղատին՝ 'ի ձայն բարձր կարդաց առ ապստամբսն դառնալ յիւրաքանչիւր պարտս։ Յայնժամ մատակիքն Սավէրիպէյ և իսկ իրեն նեցան զՄուրատաւ, և խնդրեցին զնեղրուձն։

Ի վաղիւ անդր պաշարեաց Մուրատ զՏիմեթրա, ուր փախուցեալն էր Սավ-

ձի, և կալեալ զնա բրեաց զաչս նո-
բա, ապա և ապան եւ . և զՀաւատա-
բիմ նիզակակիցս նորին զյոյնս երկուս
երկուս գեռամէժս արար 'ի պարսպաց
քաղաքին առաջի աչաց իւրոց : Ազդ ա-
բար և կայսերն կատարել զնոսուն
իւր . և նա կուրացոյց զԱնդրոնիկոս ե-
ռացեալ քացախով :

Սակաւ ինչ ընդհատ յայսմանէ էր
վասանդն՝ յոր արկ և Մանուէլ զկայսե-
բութիւն հօրն իւրոյ : Զի եկեալ 'ի Թե-
սաղոնիկեայ, որոյ քաղաքապետ կար-
գեալ էր 'ի հօրէն, յարձակեցաւ յե-
զակարծուստ 'ի վերայ Սէրեզ քաղաքի
որ 'ի ձեռս Օսմանեանց էր : Առաքեաց
Մուրատ վաղվաղակի զվէզիրն իւր ըզ-
խայրէտտին փաշա 'ի Թեսաղոնիկէ . և
Մանուէլն Թողեալ զքեալ զքաղաքն՝
փոխեաւ ընդ ծով 'ի Կոստանդնուպո-
լիս . այլ հայրն իւր երկեաւ ընդունել
զնա 'ի քաղաքն , զի մի համարիտ կար-
ծեսցի ընդ որդւոյն յաչս Մուրատայ :

Դիմեաց Մանուէլ 'ի Լեսբոս կղզի
առ Գենուացիս . և 'ի նոցունց եւ մեր-
ժեալ՝ քաջալերեաց զանձն իւր և ան-
կաւ առ նա ինքն Մուրատ, հայցելով
զնեբութիւն յանդուգն խորհրդոյն : Մու-
ռատ ազգայ յեռ յերկար լուսթեամբն
ահացուցանելոյ զպատանին՝ յանդիման
նեաց զնա և խրատեաց , և ապա առա-
քեաց առ հայրն՝ պատուիրեալ նոմա ընդ-
ունել զորդին 'ի նեղբս : Յայս ամ ամար-

գուլթան հասեալ էր կայսրն Յունաց, մինչև առանց հրամանի Օսմանցոյն չիշ խելասապնչական լինել խրու

։

Ընդ այն առուքն մեռաւ քաջ սպարապետն Խայրէտտին փաշա յԵնիշէհիր՝ կնքեալ զյաղթանակս իւր առ մահին Թեսաղոնիկեայ. և էր ինքն ազգաց Հարիւրոց, ասն բազումն խորհրդական լեալ Օսմանայ, ասն երեսուն և հինգ դատաւոր կացեալ 'ի Պրուսա առ Օրխանաւ, և ասն քսան և եօթն ծառայեալ Մուրատայ։

Յայնժամ թագաւորն Գարամանայ կամ Կիլիկիոյ Ալայէտտին ժամ ապատեհ համարեցաւ յագեցուցանել զզայրոյթն նախանձուն իւրոյ յայտնի պատերազմաւ ընդ Օսմանեանս. և Հակառեցան կողմանքն երկոքին 'ի դաշտին Իկոնիոյ։

Զաջ թև բանակին իւրոյ զառաջնոյն էառ Մուրատ արքայ 'ի ձեռս Եղբուայ սէյ անուն որդւոյ իւրոյ, և Ներզակակից նմին կարգեաց զՍարուխէ փաշա, զՊալատան սէյ, զԻլիաս սէյ, և զՄիհալիճ-Հապ սէյ. զձախն ղեկավարացն էառ Պայէզիտայ, և Ներզակակից նմա զԳիկուշ սէյ, և զԽօճա սէյ։ Ի թիկանց կուսէ բանակին կարգեաց զկողմնապետն Թիմուրդաշ, և ինքն եկաց 'ի միջավայրին՝ շուրջ պատեալ 'ի ապայիցն և 'ի զինակրաց՝ յառաջապահս ունելով զԵնիշէհիրն։ Եւ այս կարգ պատերազմի օրինակ

եղև ամենայն յեռապայ պատերազմացն Օսմանեանց։

Այն ինչ յառաջէր աջ թևն թշնամեաց ընդդէմ ձախոյ թևին Օսմանեանց, և երկուսեքն թնդմունք թըմբկաց և հնչմունք փողոց և գոչիւն զարակի զօրացն վառելոց՝ էին Մեծ և Առուած՝ յերկիւղ հասանէր, Եղբարքըմ Պայէզիտն ոչ ևս հանդարտեալ՝ էջ յերիվարէն իւրմէ, անկաւ առ ոտս հօրն, երկիր եպադ նոնա, և առեալ զՀրամանն յարձակելոյ 'ի թշնամիս անդր, ասէաւ ալացաւ իբրև զանէծ իւրովքն հանդերձ 'ի վերայ Գարամանեանց, և անդէն սկըսան խոխոջել վասկք արեան։

Թիմուրդաշ հալածական ասէաւ զԹագաւորն Գարամանայ վՀարեաց ըզ զարամերազին, և զարտուեցաւ վէզիր կոչմամբ. և յայնմհետէ սովորութիւն եղև Վէզիր անուանել ամենայն կուսակալաց, որոց երբեակ իցեն ձաղին ձողարարձք. և երկրորդն ապրոյի կոչեցաւ Վէզիրի ազգէ, այն է վէզիր մեծ։

Յետայնմիկ պաշարեցին Օսմանեանք զԻկոնիոն, որ է Ղոնիա. և յետ երկուսաստան աւուրց թագաւորն Գարամանայ առաքեալ առ ապրոյ զկին իւր ըզդուստրն Մուրատայ, ապաչեաց զնա 'ի խաղաղութիւն. և Մուրատ խնդրեալ յարքայէն նորին՝ հրամանն եառ զի եկեսցէ թագաւորն և համբուրեսցէ զձեռս իւր. և նա իբրև եկն, եմոց Մուրատ

անդրէն 'ի ձեռս նորա զամենայն երկիրն, և դարձաւ 'ի Պրուսա:

Ի պաշարման անդ Իկոնիոնի Մուրատ արքայ պատուիրեաց զօրաց իւրոց չիողոպառել բնաւ զքնակիչս քաղաքին. և յանդամոել ոմանց 'ի Սերվացի զօրականէն՝ 'ի մահ դատապարտեալ էր զնոսա: Իբրև դարձան Սերվացիքն յերկիր իւրեանց՝ 'ի վրէժ մահու ազգակցացն գրգռեալ զարթուցին զԹագաւորն իւրեանց զԱզար կամ զԱս յապստամբութիւն: Միաբանեցին ընդ նոսա և Պոնացիք և Բուլղարք, և կոտորեցին յՕսմանեանց բնակիչս 'ի կողմանս յայնոսիկ ասս քսան հազար. յորոց հազարք հինգ ևեթ հաղիւ թէ ճողոպրեցան 'ի փախուստ:

Ընդ սարեաց Մուրատ արքայ և արձակեաց զվէզիրն մեծ զԱլի փաշա զորդի Խայրէտտինայ երեսուն հազար զօրաք 'ի վերայ Լազարայ, և 'ի վերայ Սիսմանայ արքային Բուլղարաց: Եւ ինքն կատարեալ յԵնիշէհիր զՀանդէս հարսանեաց զիւրն զերկուց որդւոցն, առնելով իւր 'ի կնութիւն զոմն յազգակցաց կայսերն Յունաց, և զորդիսն ամուսնաւորելով ընդ այլոց երկուց յոյն օրիորդաց. ապա առարեալ և զՀանդէս թագաւորութեան երկոց թոռանցն՝ յուզի անկաւ անցանել յԵւրոպա:

Ալի փաշա իբրև եհաս յամուրն Հռոմելա և էառ զայն, խաղաց անտի և պա-

շարեաց զԵկեղեցիս, ուր ամրացեալ կայր Սիսան. որոյ անձարացեալ՝ իբրև անձնատուր եղև, ած զնա վէզիրն առ Մուրատ, և նա պահանջեաց 'ի նմանէ զՀարկն, և զամրոցն Սիլիատրէ։

Ալի փաշա առաքեաց անտի զԴուզան ազգ հրոտակաքն խրատիք մինչև 'ի Դատովա, որ 'ի հարաւոյ կուսէ Պոնտոյ կայ. և քանզի Սիսան ոչ կացեալ 'ի խոտանանն՝ և նա ամրապնդէր զՍիլիատրէ ընդդէմ Օսմանեանց, դարձեալ խաղաց 'ի վերայ նորա վէզիրն բուռն զօրութեամբ, և կալեալ զնա հանդերձ ընտանեօքն ած միւսանգամ առ Մուրատ. և նա թէպէտ շնորհեաց Սիսանայ զկեանսն, այլ գրաւեալ կալաւ զամենայն երկիրն Բուլղարաց։

Զայն իբրև եառեա Լազար արքայ Սերվաց՝ և նա ամենեցուն զանձն իւր և զնիզակակցաց իւրոց, որք էին Պոնտացիք, Աղանիացիք կամ Անատուռք, Վանք, Նէհք և Մաճառք, և խրոխտաբար դեսպանս արձակեալ առ Մուրատ՝ ձայն տայր նմա 'ի պատերազմ։ Իսկ նորա կոչեցեալ առ իւր զԱնոյ զորդիսն զուռգան Պայէզիտ և զԵրագուպ չէլէպի՝ խուռն բազմութեամբ նիզակակից զօրաց եկեալց 'ի Սարուխանէ, ՅԱյդինայ, 'ի Մէնթէշայէ և 'ի Համիտայ՝ տուեալս ցոյց յոյժ յոյժ զբանակ իւր, և նոքաք հանդերձ խաղաց գնաց 'ի Դատովա, ուր բանակեալ մնային թշնամիք անհամարք

'ի բազմաթիւնք։ Խորհուրդ կալաւ Մուրատ ազգայ ընդ զօրավարս բանակին՝ դատաւորել յառաջոյ զբազմութիւն ուղղուցն, որպէս զի խրատուցեալ 'ի տեսլենէ նոցին երիվարաց թշնամեացն՝ խուսափեցին և խուճապեցին ան դէն 'ի սկզբան։ Ա՝յլ ազգայորդին Պայէզիտ զնա և կոչնապետն Թիմուրդաշ հանկարակ կացին խորհրդոյն. զի վասնզ է ասէին՝ մանաւանդ ուղղուց մերոց ապրնապել 'ի պատերազմէն վասն երկոց երիվարացն։

Յայնմ երկոցի զկայ առեալ զագարեցին երկոքեան Ճակատքն հանդէպ միմեանց. զի Օսմանեանց ընդդէմ շնչելով ուժգին հողմոյ՝ զիրոշն թշնամեացն բանակին յաչս ացու արկանէր։ Դարձեալ և 'ի Սերվացւոցն խորհրդի մի ոմն 'ի խրոխտագունից զօրավարացն ասէր դեաց զկարծիս իւր՝ թէ չիցէ օգուտ դիշերախառն անկանել 'ի վերայ Օսմանեանց. իբրու զի մի փախուցեալ նոքա 'ի մեծանն զերծանիցին 'ի սրոյ խրեանց։

Ապա ընդ այդպանալ առուքն կարգեցան կազմեցան երկուստեք։ Մուրատ ազգայ ըստ յաճախ սովորութեանն երկայ 'ի միջավայրն բանակին. զաջ թեն էր 'ի ձեռս քաջին Պայէզիտայ, և նիզակակից նմին զարի արևորն Էրբէնոս ոչէր և զՔիւրտ ազգ. իսկ զձախն էր Էրդուղ ազգին, և նիզակակից զԱյնեպէյ և զՍարուխէ փաշա։

Հասին բազխեցան ընդ միմեանս ձա-
կատքն երկոքեան անհնարին սատակու-
թեամբ իբրև զկոհակս ծովու մրրկելոյ։
Ընդ էր տեսանել զարքայորդին Պայե-
զիտ իբրև զփայլակն ընդ շամբս եղե-
գանց ընթացեալ, և լսիցուն երկա-
թեաւ զգլուխս թշնամեացն առ հա-
սարակ խորտակել։

Ի նոյն օրինակ արքայորդւոյն խրա-
խուսեալ և այլք 'ի քաջաց զօրավարացն
վարազաբար յարձակէին, և 'ի վերայ
թշնամեացն անկեալց վազս առեալ նա-
ձիս բազումս 'ի թշնամիսն գործէին, և
զգեան ծիրանեցս որ ընդ մէջ գաշտին անե-
ցանէ՝ յարիւն յապաժոյժ ներկանէին։

Յայն շփոթ սաղնապի երկաքանչիւր
կողմանցն ընդ միմեանս գոռալոյ՝ ահա
'ի միջոց գէզաղէզ գիսկանցն կուսակե-
լոց յանկարծակի 'ի վեր երևեալ Սեր-
վացի ոմն Մելոշ Գասիլովիչ անուն, իբ-
րև զարծուի գիշակերս խոյացաւ, և հերձ
բաժանեաց զյառաջապահ գունդն Օս-
մանեանց և եհաս մինչև առ Մուրատ,
ասելով թէ բանք ինչ են իմ ընդ
արքայի։ Եւ յանկարկեալ Մուրատայ զի-
մաստից, յարձակեցաւ հարաւ Մելոշ 'ի
վերայ նորա, և իբրև խոնարհեալ ինն
'ի համբոյր ոտից՝ եհար մեռաց զդա-
շոյնն 'ի փոր նորա։

Արացան 'ի վերայ առնն թիկնապահք
թագաւորին. այլ նա երկիցս և երիցս
խուսափմամբ ձողոպրեալ 'ի խուռն
բազմութենէ հեռանոց և զբազումս

'ի նոցանէ զիմաստասէր կացուցեալ, ընկ-
ալեալ սպա և ինքն և զիշատիչս պա-
տառեալս յՕսմանեանից։ Եւ սպառա-
զինութիւն նորա և երիվարքն իւրոյ
ցարդ ևս պահի, ասեն, յարքունի զինա-
բանին Կոստանդնուպօլսոյ։

Իսկ Մուրատ արքայ հեծեալ և 'ի
մեծ վիրաւորեալ էր, սակայն ժամա-
նակս տեսանել և զկատարած մարտին,
և զմեծ Լազարոյ արքային Սերբաց,
զոր կենդանւոյն ձերբակալ արարեալ
ածեալ էին 'ի խորան նորա։ Ընդ 'ի
տեղւոջ խորանին կառուցաւ 'ի ժամուն
մկրտի փոքրիկ, այլ գեղեցիկ արքայի ա-
ծեալ 'ի Պրուսա՝ անդանօր հիացեալ
'ի մկրտին մեծի զոր իւր իսկ շինեալ էր։

Եւ էր արքայն Մուրատ Ղազի Խան-
վենկեալ ամենայն օրհնութեամբ և միոյ,
յորժամ մեռաւն հիացեալ ամե-
նայն։ Ասեն։ Ասեալ էր սա 'ի բարե-
պաշտութիւն մեռանի քան թշնամին գե-
նի, և զմիսէր ասեն երդեալ 'ի գործ հնչ՝
միեջեն կարգացեալ աղօթիւք սա Աս-
տուած - որպէս և յորում պարտեալ սա-
ռանդեն Օսմանեանք վնասեալ նորա
աղօթիւք։ Իսկ մարմին նորա հիացեալ
'ի Պրուսա։

1 Եւ որ ասէն ասպի ակիզբն առեալ սո-
վորութեան յարքունիս Օսմանեանց, զի որ
կամանիցէ ոք առ արքայ՝ անդէն ուանի լինել,
և երկիւղիւ ոտս ընդ անուն խալիֆայի երբ-
բանն պարտանէին։

ՍՈՒԼԹԱՆ ՊԱՅԵԶԻՏ Ա ԵՐԼՏՐՐԱՄ

Լսեալ փչել Մուրատայ զորքին՝ ապան Պայեզիտ զեզբարդ իւր զԱտրոպատական՝ ընդ զատրուակսն բարդոյ և հան զքառասուն հազարակաց [1]։

Ապա արձակեալ յարևելս ըստ օրինի հրովարտակս առնուստս գյաղթութեանն և զիւրոյ սիրատենչելոյն 'ի գահն հայրենի, միտ եդ 'ի բարեկարգել զկրս աշխարհին Սեբաստայ։ Պատուէր եառ Ի կիսի ապէր զգրաւարքին արշաւել միանգամ 'ի Պատեմոս, և Ֆիլիպոսայ միանգամ 'ի Վիսանոսի։ Ոչինչ Գարամանոս քաղաքի՝ ուստի ազատանի էլուն, և հասուցանի յՕսմանեանսն ազգաբնակ քնակիցսոյց 'ի քաղաքն Բուրսա յամին 1389։

Յետ այնորիկ 'ի գալ Սուլթանին

1 Զայս գործ Պայեզիտայ ոմանք 'ի պատմագրաց ուշնամ, այլ զբարվարաց զբրան։ Սին հակառակ Ն ոմանք յԵրոպացի աւելի՝ մատենագրաց ասեն սպանեալ Պայեզիտայ զեօթն եղբարս իւր հրանգամայն. որ նորա ի զեն եղբարք աւելի քան զեր։ Ն 'ի Բագասարէն ուլ Ն ամ ֆայր ին 'ի ինչ։

որդւոյ Լազարայ Թագաւորին Սերբաց
'ի մեծարանս երեւաց Պայէզիտայ, զի-
ջաւ արքայ խօսել ընդ նմա 'ի հաշտու-
թիւն խաղաղութեան այսու պայման-
նաւ, զի յամենայն պատերազմունս նի-
զակակից լինիցի նա Օսմանեանց. զի տա-
ցէ նմա 'ի կնութիւն զքոյրն իւր, և զի
հատուցէ նմա հարկս ամէն ամի յար-
ծաթոյ երկրին։

Ընդ այնժամանակս Անդրոնիկոս որ-
դի կայսերին Յովհաննու, և Յովհաննէս
եղբօրորդի նորին թէպէտև զաչացուք
ընդ թերատես լուսոյ աչաց իւրեանց
ունելով 'ի պատի և կայծակն յուսոյ ամ-
բառնալոյ յամառն Կոստանդնուպօլ-
սոյ, և 'ի բանտէ անտի յորում կային
ազատաբար՝ գիմեցին աղաչանաւք առ
Պայէզիտ։ Նորա խնդամիտ հաճեալ 'ի
Կոստանդնուպօլիս վերադարձ հեծե-
լովք և ջրեալ հազարաւ հետեւակաւք՝ զկայսրն
հանդերձ որդւովն Մանուէլիւ արքել
յայն բերդ, յորում բանտեալ կային
Անդրոնիկոս և Յովհաննէս, և զԱնդրո-
նիկոս Թագաւորեցոյց դաշամբ՝ զի հար-
կեսցի Օսմանեանց ամ ըստ ամէ այսչափ
ինչ արծաթ և ոսկի, և ազատեցէ զհայրն
իւր և զեղբայրն։

Ի յաղագս նորա զկատարումն ան-
պժան խոստմանն, կայսրն Յովհաննէս
ընդ որդւոյ իւրում կրտսերոյ Մանուէ-
լի զերծաւ յարգելանէն օգնականութե-
թեամբ Գենուացւոյ և դիմեաց առ նա

ինքն Պայէզիտ ազերբիջ պաղատանաց, և խոստանալով հատուցանել նմա զնոյն հարկ զոր հարկէրն Անգրոնիկոս, և նիզակակից լինել Օսմանեանց ամի ամի Երիկոտասան հազարաւ արանց:

Յայնժամ Պայէզիտ արքայ կարդէաց զՄանուէլ գահակից հօրն, և Անգրոնիկեայ Եթող զքանի մի քաղաքս՝ որ գտանէին յայնժամ ընդ ձեռամբ Յունաց արտաքոյ Կոստանդնուպօլսոյ:

Մինչև դարձեալ Պայէզիտայ արքայն Յերուսալիմ ՅԱսիա՝ կառոյց Յադրիանուպօլիս մզկիթ մեծ. և եդ 'ի մոլ առնուլ 'ի Յունաց զԱլաշէհիր քաղաք, որ է Փիլադելփիա, և կարդել զայն 'ի կալուած մզկիթին: Խաղաց 'ի վերայ քաղաքին Նիզակակից զորոք Սերվաց և Յունաց, որոց առաջնորդէին անձամբ կայսերքն Յովհաննէս և Մանուէլ: Սոքա զառաջինն յորդոր լինէին յոյն քաղաքապետին՝ տալ խաղաղութեամբ զքաղաքն. և յարհամարհել նորա զկայսերսն Իբրև զմանիչս Իսլամանց քաղաքի 'ի ձեռս խուժից, Պայէզիտ սատակացոյց զպաշարուելոն և էառ զքաղաքն:

Յայնժամ Իշխանն Այդինի, ընդ որոյ պաշտպանութեամբ էր և Ալաշէհիր, էառ Պայէզիտայ և զբովանդակ դաւառ սէրուելեան Իբրոյ հանդերձ Եփեսոսիւ, և ինքն մեկնեցաւ 'ի քաղաքն Թիրէ:

Նոյնպէս և Իշխանքն Սարուխանայ և

Մէնթէշայի թողեալ զերկիր իւրեանց՝ խոյս եառն յերեսաց Եղլամբրմին առ Քէօթրիւմ Պայէզիտ, որ ի Գաղդէմոնի և 'ի Սինոպ։ Որով 'ի տան թագաւորութեանց անտի Գադդէմոնի և Գարամանն ևեթ ազատ էին 'ի ըծոյ Օսմանեանց, մին ընդ հարաւ և միւսն ընդ հիւսիսի։ Ի դէպ ժամուն բազաքաղ կուք հասեալք յաշխարհէն Գարամանայ ընդդէմ թագաւորին իւրեանց՝ ազատէին զՊայէզիտ արքայ ազատել զանձինս իւրեանց 'ի հարատաւորութենէ բռնաւորին։ Եւ նորա լուծեալ այնուհետև զդաշն բարեկամութեանն զոր հաստատեալ էր ընդ նմա հայրն իւր Մուրատ, խաղաց 'ի վերայ թագաւորին՝ որում Աղայէտտին անուն էր։ Թագաւորն փախուստեամբ զերծեալ ամրացաւ 'ի վերին Կիլիկիա, և Պայէզիտ պաշարեաց զՎիճնիան. և խստութեամբն առ ջրականս իւր և ողոք բանիւքն առ քաղաքացիս այնպէս նմին յինքն յանկոյց զնոսա. զի կամակար մոռք բացին նմա զդրունս Վիճնիանի և զայլոց քաղաքաց, որ էին Ագշէհիր, Նիկէա և Ագսէրայ։

Իսկ Աղայէտտին զի մի հանցէ 'ի ձեռաց զքնաւ իսկ աշխարհն, յանձին կալաւ տալ 'ի բաց զմասն մի նորին. և հաստատեցաւ 'ի միջի պայմանս հաշտութեան, զի գեան Զարշամպա սահմանս իցէ այնուհետև ընդ միջ երկուց պետութեանցն։

Պայէզիտ ազգայ այսօրինակ 'ի կարգի եղեալ զտեսչութիւն ասիակողմանն, ուշ եղ անցանել յԵրուսաղէմ։ Ամիրացոյց յառաջ քան զամենայն զքաղաքն Կէլիսօրու անգոյնի նաւակայիւք և հաստակառոյց աշտարակաւ։

Աղա զանն եղեալ 'ի կղզիս Յունաստանի և 'ի Բիւզանդիոն առաքեաց կոչեաց իւր 'ի Թիկուն զկայսրն ըստ գաշանցն պայմանի. և նիզակակցութեամբ նորին վաթառն նաւուք անցեալ 'ի Բիոս, որ է Սագէզ. 'ի հուր և 'ի սուր գառեցաւ զքաղաքս և զգիւղս կղզւոյն։

Ազգ եղև նոցա անդանօր՝ եթէ Յով հանեալս կայսր զհետ է ամիրացուցանել և նս զԿոստանդնուպօլիս, և զեկեղեցիս քաղաքին փլուզեալ՝ բերդս երկուս յաւելու կառուցանել 'ի նոսա։ Պատգամ հրամանի առաքեաց առ նա Պայէզիտ հիմնայատակ առնել վաղվաղակի զբերդսն. ապա թէ ոչ, ասէր, ընդ հուպ կուրացեալ տեսցես առ քեզ զորդին քո զՄանուէլ։ Ընդէն ահաբեկ պտիւ հնազանդեցաւ կայսրն ծերունի, և առ գոութաղէմից ապառնացելոց որդւոյն իւրոյ՝ հիւանդացեալ մեռաւ։

Զայն իրրև լուաւ Մանուէլ, փախուցեալ գնաց 'ի Կոստանդնուպօլիս. և Պայէզիտ ազգայ ծանրացաւուն եղեալ 'ի վերայ իւրոցն՝ որ չգիտացին պահ ունել Մանուէլի, և ընդդէմ նմին խակ. պատգամ առաքեաց առ նա՝ զե

յայնմհետէ գաղտուստ ոք ասձիկ կար-
գեալ 'ի Կոստանդնուպօլիս՝ նա ուստի
զգաստ ասձկաց գտելոց անդանօր. զի չէ
և չէ արժան ասէր մերոցն կալ յառա-
նէ քրիստոնէից։ Միանգամայն և զօրս
բաղումս զհետս գեսպանին 'ի Բիւթա-
նիոյ 'ի Թրակիա անցուցեալ՝ յաւար և
'ի քանդումն մատնեաց զամենայն ըղ-
վարան, և զբնակիչսն 'ի գերութիւն վա-
ռեաց, և հրամանն էր նոցա պաշարել
զԲիւզանդիոն։ Եւ զմնացորդս զօրացն
ուղարկեաց յասպատակել 'ի Բուլղարս,
'ի Վլահս, 'ի Պոնիս, և յերկիրն Մա-
ճառաց։

Մինչդեռ այսպէս աշխատութեանէր
Պայէզիտ ոչքայ զամենայն Եւրոպա՝
հարկեցաւ անցանել դարձեալ յԱսիա.
զի Լենկներդարտանոյ մեծաւ սատ-
կութեամբ հասեալ էր մինչև յԱնկիւ-
րիա և 'ի Պրուսա, և ձերբակալ եւ ապա-
ռեալ զկողմնապետն Թիմուրդաշ։ Եվ
ընդ առաջ նմին ելն Պայէզիտ, և ըղ-
գեսպան Աքայէտմնայ՝ որ 'ի Պրուսա
կալով ապաչէր զարքայ 'ի հաշտութիւն
և 'ի նեղութիւն՝ յետս դարձոյց ասելով.
Սուտերիա է այսուհետև վնիս հատա-
նել զկրացդ։

Ի պատերազմն անդ առ Աղչայ գե-
տով գերի վարեցաւ Օսմանեանց Լենկ-
խանն Դարտանոյ երկոքեանքն որդովք
եւրովք, և ինքն առանձեցաւ 'ի Պայէ-
զիտայ 'ի պահ զգուշութեան Թիմուր-

գաչին (զոր իշխանն Գարամանայ ընդ առնուլ զլուր գալստեանն Պայէզիտայ մեծամեծ պարգևաք արձակեալ էր յաղաղաւորութիւն)։ Իսկ Թիմուրղաշ անդէն վաղվաղակի կախեաց զնա և զորդիս նորին զփայտէ. ընդ որ տխրեցաւ և Պայէզիտ ինքնին։

Ի հանդերձ առնման բովանդակ երկրին Գարամանայ՝ և Պիւրսանէտտին իշխան Սեբաստիոյ, Եւդոկիոյ և Կեսարիոյ խոյս էառ'ի լերինս Խարբերդաց։ Ընդ ապան զնա Գարա Օսման ոմն իշխան երկրին, և հրաւիրեաց զՊայէզիտ'ի ժառանգել խաղաղութեամբ զամենայն աշխարհն։

Ըստ նմին օրինակի և Քէօմրիւմ Պայէզիտ իշխան Գաղէմանեաց, կամ նախնեոյն Պաղոլագոնիոյ, թողեալ զգելխաւոր քաղաքս իւր զՍամսուն, զՃանիկ և զՕսմանճըգ՝ փախեաւ'ի Սինոպ, և անտի ապաշէր զարքայ՝ շնորհել նմա զկեանսն և զամրոցն. և Պայէզիտ լուաւ նմա։

Այսպէս աշխարհակալութեամբք արտաքոյ իմն անձին եղեալ Եղլարբէյն սկսաւ անտես առնել և զինանսն թագաւորութեանն մեծի։ Սա առաջին ընդդէմ յայտնի հրամանաց դենին խրոյ, որպէս ասէն պատմագիրք Օսմանեանց, էառ զանձն'ի գինարբութիւն և'ի մեղկութիւն՝ պատրեալ'ի հրապուրանաց սմուանոյն խրոյ գասեր ազգային

Սերվաց, և 'ի գրգռելոյ կնամարդի Ա-
ել փաշային։ Սակայն Պայէզիտ ազգայ և
յայնժամ շանկաւ յարգարտակէր մը-
ուացն կարովոյ։ Եւ տեսեալ զի օրինակաւ
խրով և խրոյ վէճերին Ալի այ զերծեալ
զառաջանէին 'ի շարիս ոչ միայն պա-
ղատականք խր, այլ և զօրականք և ժո-
ղովուրդք և գաստուրք, անաչառ խրա-
տեմամբ սկսաւ պատուհասակոծ
առնել զամենայն անօրէնութիւն։

Ուստեն գաստուրս կամէր յաւուր
միում 'ի սան ուրեք 'ի Պէկշէհրի քա-
ղաքին հրոյ Ճարակ տալ, փոխանակ զի
անիրաւ գատաստանաց և կաշառակուրծ
լինելով խուէին զժողովուրդն։ Պա-
տեաւ առաջի ազգային արարացի ծաղ-
բածուներին 'ի խրատեալ յԱլի փաշայէն,
և ազաչէր առաքել զնոքն գերպատու-
թեամբ 'ի Կոստանդնուպօլիս։ Եւ 'ի հար-
ցանել Պայէզիտայ զպատճառս շուտն,
«Զի առեց, ասէ, 'ի կայսերէն մոնա-
զոնս Յունաց գիտուն և բերեալ այսր
փոխանակ գաստուրաց մերոց ազգատաց,
զորս պրեալն կամիմք»։ Խնդրաւ թագ-
աւորն զՆեպոն, և ձայնեալ զվէզիրն
հարցանէր եթէ զի է զի այսպիսի խնա-
տուն գաստուրք խոտորէին զհետ կա-
շառաց։ Ասէ վէզիրն. «Եսս այն իսկ
զի անորիշ և անսահման ինն է թագաւոր
ազգին և հասցէ»։ Եւ սահմանեցաւ
այնուհետև զերկուս 'ի հարիւրէ յեր-
բարձեալ գաստս վճարել գաստաւորին։

Յետ այնորիկ 'ի զՔաջուն եկեալ արքայ 'ի խրատուց Շէմսէտտին Մէհէմմէտ Պուխարի անուն ծերունեոյն, որ 'ի տոհմէն Մահմետի հանդերձեալ էր Սուլթան՝ կոչէր, ապաշուէաց յայտնապէս զմեզն, և յայնմհետէ գուն գործեալ՝ զի և անձին օրինակաւ շինեաց զմիտս իւրոյ ժողովրդեան, կատարելագործեալ երկուս 'ի Պրուսա։ Սա նախ ինքն ինչ և ընկերքս յամիրապետէն Եգիպտոսի զոսարեալ Սուլթան անուանակոչեալ է։

Պարտեալ և զՊրուսա, և 'ի նմին ժամանակի կանգնեաց մերձ 'ի Կոստանդնուպօլիս զբերդն Կիւղէճէ հիսար, որ և Աշնուօլու հիսարի, զի սատակագոյն ամենայն պաշարումն Թագաւորեալ քաղաքին։

Ա՛յլ միւսանգամ հարկեցաւ գիմել յարեւմտեան սահմանս տեղուեալն իւրոյ և նուաճել անդրէն զՄոմիով, զՎիսին, զՎիկոպօլիս և զՍիլիստրէ, զվերադարձեալն յետքն։ և էառ գարձեալ քաջայաղթ պատերազմաւ զԹեսաղոնիկէ։

1 Արաբացի բառդ Էմիր իշխան նշանակէ, որպէս և 'ի մեզ գոնի Ամիր և Ամիրայ։ այլ սա Օսմանեանս անուան պատճառաց է սա սերնդոց Գոգիմեի դուքէր Մահմետի և ինոջ Ալիայ։ Ա՝ Արաբացիս անուանին սոքա Սէյիք, և սա Պորսիս Սաէնի։

Սիգիսմունդ կամ Զիկմունտ արքայ Մահմատայ գեսպանս առաքեալ առ Պայէզիտ ինդրէր զհաշտութիւն խաղաղութեան։ Իսկ Պայէզիտ արքայ փոխանակ պատասխանի առնելոյ գեսպանին՝ ած զնա 'ի պահ ընդարձակ զարդարեալ զինուք և դրօշիւք Բուլղարայց և Եգրոյց նման զինոսին, և զնեռս և զաղեղունս. որով յայտ առնէր եթէ սէր է նա աշխարհին Բուլղարայց։

Յայնժամ և Սիգիսմունդ յանհնարելոյն մեծալ ինդրեաց իւր Զիկմունտ յարքայէն Գաղղիոյ և յիշխանէն Վլահայ, 'ի մարդասպանէն Հռոգայեայ, և յայլևայլ պետութեանց Գերմանիոյ. և ելն պաշարեաց նոքաք հանդերձ զարմիք վասն հաղարաւ զնիկոպոլիս, յորում ամրացեալ Դուզան պէյ արիաբար զդէմ կայաւ պաշարմանն զաւուրս վեց. զի անելիքն յաւուր ապատեալ մնայր օգնականութեան յԱստուծոյ։

Եւ զորագունք, և մանաւանդ Գաղղիացիք ընկղմեալ 'ի խնջոյս գինեքրուայ՝ արհամարհէին խրոխտանօք զՊայէզիտ, և հաւատալ անդամ չկամէին բանիբերացն, որք ասէին թէ Օսմանեանք եկեալ հասեալ են մինչև 'ի հեռաւորութիւն ժամուց վեցից։

Եւ ահա յանկարծակի երևեցան յառաջապահք օսմանեան բանակին հրասակքն մեկնակազէք, և ծածկեցին զամենայն երեսս գաշտին։

Սիգիսմունդ արքայ որ հեռուն և կիրճ էր յօսմանեան պատերազմունն՝ խորհուրդ տիսանի տայր ներգակակից զօրավարացն Թէոդորոսէն զօրս հանել նախ ընդդէմ Թշնամեաց, և զընտիր ընտրեալս յեռակուսէ պահել ընդդէմ ենիչէրեացն և ապայեց։ Սակայն Գաղղիացիք այնպէս իմն չէրանջէրամ ամենեալ էին գիտնագրաւ լինել՝ ի Թշնամիս անդր, մինչև առ սասիկ հասանելն ան կեալ՝ ի վերայ օսմանեան գէրեաց՝ որ գտանէին՝ ի բանակի անդ, խաժաբար ընդ սուր անցուցին զամենեսեան։

Զհետ ապէտարեց կոտորածիս սկիզբն եղև ահագնարար պատերազմին։ Յառաջապահք Օսմանեանց ոչ հանդարտեցին ընդդէմ բուռն յարձակմանՊաղդիացւոց, այլ և ոչ ենիչէրիք. զի ըստ մնոյն անկան ոգբա անդէն, և ըստ մնոյն խոյս էառուն՝ ի Թիկունս ապայեցն։ Բախեցան և ապայքն ընդ Գաղղիացիս, և խորտակեցան և նոքա ալք իրրև հինգ հազարք։

Յայնմ պահու եմէ անապին Գաղղիացիք զօրավարին խրեանց, և զկայ առեալ՝ ի սեղանչ անդ ինային հասանելոյ Մաճառաց, անշուշտ նոցա էր յաղթութիւն։ Սակայն նոքա ձիգ զհետ ընդեցան զերծելոց ապայեցն դէպուղիս՝ ի բլուրն որ հանդիպոյ կայր, և կարծէին վախճան առնել այնու բովանդակ պատերազմին։

Ամ իրն սեմին յեռ կուսէ բլոյն զանասառանձն բանակին Պայէզիտայ ընդ էրկայնութիւն քառասուն հազար կանգնոց ապրածեալ անշարժ և անվզով, յապուշ հարեալ զկիրճսն և ընդ խլրտել ահեղ բանակին, որպա ահարեկ խուճապանքն 'ի փախուստ դարձեալ՝ կուտրէին 'ի հեռանոյն Օսմանեանց. և դուքն Վեսէրս հանդերձ քաւն և շրջ ենիզարիցն ապայնքն ձերբակալ եղեն։ Ամբ 'ի ենիզարիցոյ, որ իրրս քայլս հազար 'ի հեռուստ կային, իրրև սեմին զիսրտակուռն Գաղղիացւոց՝ ուճապարեցին և նոքա 'ի փախուստ։ Եւ արքայն Պաճառաց եռեմ իւրովքն էրկրատասան հազարաք առ ժամ մի խորտակեալ զենիչէրիս, ապա յետս վանեցաւ և նա. և մուծեալ յիւրոցն 'ի նոսա մի փախուստ 'ի Կոստանդնուպոլիս, և անտի ապա յաշխարհն իւր։

Ի վախճան զարհուրելի պատերազմիս իրրև եռեալ յաղթական արքայն Պայէզիտ 'ի սեղանոջ Ճակատուն զգուշադանդ գիսակուն խրոցն իրրս վանեալ հազարաց, ցամենախառն արտասուաք երդուաւ վրէժխնդիր լինել արեան նոցին 'ի քրիստոնէից. և անդէն հրամայեաց զի 'ի վաղիւ անդր զառաջեւ իւրով ածցին ամենայն բազմութիւն գերելոցն։ Ածան քարշեցան առաջի նորա արբանեաք ասան հազար կապեալք. և Պայէզիտ արքայ յետս յառաջ կոչելոյ ըզ-

գուքսն Նեմրոս, զի ակամաուն լեցի կոտորածի խրոցն, ակնարկեաց առեալ զ ընդ սուր անցուցանել զամենեսեան։ Բայց ազգասանաց գրքին շնորհեաց նոցա ազգայ և քսան և չորից աւագ մարդկան որ ընդ նոսա գնեալսն։ Իսկ զայլս հրամայեաց կոտորել յանխնայս։ Որդին Պայէզիտայ գիմացեալ 'ի գեղաշատակ պատանի մի գեղջուցի ազգաւոր՝ Շիլմպէրկէր անուն՝ խնդրեաց 'ի հօրէն շնորհել և նմին զարևն կենաց, և ազգայ ազատեաց զնա։ Յայդոսէ մինչև ցընդերկիս աւուրն անբնդհատ սէր կոտորածն, մինչև անկան առ ոտս Թագաւորին աւագանին խաչ հայցելով խնայել 'ի մեռցելոցն։ Եւ Պայէզիտ զինչ ասացեալ յարգանս նոցա՝ հրամայեաց զդուքսն քսան և չորսք ազգայնքն ազգեալսն 'ի Կէլիպօլիս, և զայլս բաշխել յիւրաքանչիւր գեղիչս։

Իսկ սեպհն Օսմանեանք, զի տղայ նեռաց խաչակրացն առեալ տանին զՄիքիսանուն ազգայ 'ի Կոստանդնուպօլսոյ 'ի Դարդանոս, հանին տղեցին զդեղին յարիւնս ծովուն առ Կէլիպօլիս, և ակամն այլն առնելով կարգալ 'ի նեռաս անդր առ Թագաւորն՝ զի

1 Սա զինի էրէանաձայ գէրսանէանն գալ ալարէալ յերիւր է, 'ի գէր զրուցեաց ազգ զանունայն ազէպս և զանց պատէրազին՝ որոց անանապէան էզէալ էր։

փրկանաւորեացէ զգերիսն։ Եւ ապքայն վանմամբ, որ ինքնայօժար ձգէր 'ի ձեռն, 'ի գալ ամէն միւռոյ եօթն հազար ոսկիս առաքեաց առ Պայէզիտ ապքայ, և զերծոյց զնիզակակիցսն իւր 'ի գերութենէ։

Զնոյն ապարհն և թագաւորք Գաղղիոյ և Վենետկոյ, և փրկանաւորեցին զգերիս իւրեանց։ Իսկ գուբանն Լեհերու հանգերձ գերեկցաքն երթեալ 'ի Պրուսա՝ անսի արձակեցաւ յաղաւութիւն ընդ երկերիւր հազար ոսկւոյ։ Զսկ Պայէզիտ ցՆեհերս յարձակել անդ իւրում գնա։ «Ահա լուծանեմ զքեզ յերդմանէդ՝ զոր երդուար ինձ ոչ ևս ամբառնալ զձեռս քո 'ի վերայ Օսմանեանց։ Եթէ երդմնեցուցանեմ ևս զքեզ փութալ յարուցանել 'ի վերայ իմ՝ ըզհանօրէն քրիստոնեայս, զի և ևս յաճախեսցէն փառք իմն։ Եւ մինչև մեկնեալ Նորա իւրովքն 'ի Պրուսայէ՝ որսաւէր ապքայն կամեցաւ կարգել առաջի Նորա որս բազէից մեծամանդէս, յորում էին եօթն հազար բազէակալք, և վեց հազար բարակապանք։ Յորմէ ապառնէցան որորդացն գունդք, և աւելի քան յերեսուն խուժդս որսհեալք՝ մնան ի զեն օսմանեանն զինուորութեան։

Յետ այնորիկ աւելուորս առաքեաց Պայէզիտ ապքայ առ ամենայն թագաւորս և իշխանս արևելից վասն մեծի յաղթութեանն։ Եւ ամիրապետն Եգիպ-

տուն ընդ աւուրսն Հրուսպատակին յղեաց 'ի պարգևս և պատանիս վաճառեն 'ի գերութենէ անտի. զի զկնի այնորր յաղթութեան արշաւեալ էր նա և անդր ընդ բացարձակ վայրս և ածեալ գերիս վերադարձան հազար։

Ապա վերադարձոյց զաչս իւր 'ի Կոստանդնուպօլիս. և արձակեաց զվերզնին Ալի փաշա մինչև 'ի դրունս թագաւորական քաղաքին առ 'ի հարկի կացուցանել զկայսրն Յովհաննէս. որ և խոստացաւ զի թոյլ տացէ կանգնել 'ի Կոստանդնուպօլիս մզկիթ և դատարան, և հարկեացն Օսմանեանց ամ ըստ ամէ տասն հազար ոսկիս, և վերզրին տացէ ձիուն վեց լցեալս ոսկւով և արծաթով։

Ի նոսին ժամանակի կողմնապետն Թիմուրդաշ ընդարձակէր զսահմանս Օսմանեանց ընդ հիւսիսի և ընդ արևելս. որով էառ զԴանդրա, զՏիվրիկէ, զՏէրինտէ, զՊէհէանի, զՄելամինէ, և զամուրն Կամախ։

Իսկ ինքն ապրաց մինչդեռ 'ի Բերիա կայր, որ է Դարաֆիէրիէ, յոյն եպիսկոպոսն Փոմիդեաց մատնաւոր հայրենի աշխարհին՝ հրաւիրեաց զնա 'ի Յունաստան. և նա գիտեալ էառ զդիտաւոր քաղաքս Թեսաղիոյ զԱրմատա, այն է Ենիշէհիր, զԹրհալա, զՓարսալա, ըստ Հէյլիսուն՝ որ 'ի Թերմոպիլէ, զՎրդոս և զՎիթէնա. և 'ի բնակիչս անտի ոգիս

երեսուն հազար խախտեալ անցցոյց Ամա, և ած փոխանակ նոցին յոյսկոյս հատուածս թուքքաց և թամբարաց։

Այսպէս 'ի սուլ Ժամանակի էառ գրեալ Թէ զամենայն զՅունաստան և զՊեղոպոնէս, որ է Մոռա, և գարձաւ անդրէն 'ի Պրուսա։

Ապա յամին 1401 գիմեալ անտի 'ի Կոստանդնուպոլիս, զոր 'ի հնգից ամաց հետէ պաշարէին թուքքն, դեսպանս ուղարկեաց առ Յովհաննէս կայսր և ասէ. «Ոչ վասն քո ինչ, այլ վասն իմ վանեցի ես յաթոռոյ այսմ զՄանուէլ. արդ արի տուր այսմ, և ես ասց քեզ զիշխանութիւն զոր և կամիցիս. ապա թէ ոչ պատրաստ կաց Հարակ լինել քոյովքդ հանդերձ արս իսուսմ»։

Սակայն յայս ներապ ես բռնագաւեցաւ թագուլ լքանել զպաշարումն յահէ արշաւանացն թամբարաց 'ի սահմանս իւր, զոր առեալ էին և զՄերասիա զամուր պատուարն սէրբեմեան իւրոց։

Քանզի ահեղ սիրելիսկարն Լենկթիմուր, որ և Թիմուրլենկ և Թիմուր կուլ, յերեսուն ամաց հետէ բռնացեալ հզոր զօրութեամբ ընդ արևելս մինչև յաշխարհն Չինաց, յարևմուտս մինչև 'ի ծովափնեայս Միջերկրականին, ընդ հիւսիսս մինչև 'ի միջնաշխարհն Ռուսոց, և ընդ հարաւ մինչև 'ի սահմանս Եգիպտոսի, անհամար զօրաք և զարհու-

ելն ի պատերազմաց սիրտ ունուցանեն և հօմն աշխարհաց. և ապա դարձ արարեալ յաղթեալ խաղ 'ի Սիրիանդ մեծաւ յաղթութեամբ, խաղաց վերատին 'ի Պարս և 'ի Հայս և 'ի Վրաստան, և նոքա կռուն արար զոյս միանգամ խլրտէին յապստամբել 'ի նեղութեան ձեռին նորա:

Այդ միջոցի բանակեալ էր Թիմուր յաշխարհին Սիւնեաց, իշխանքն Կէրմիան, Այրնայ, Արենիշէի և այլոց գաւառաց՝ որ մարդ կացեալ էին Օսմանեանց, և ընդ նոսին Դահիրիէն կամ Դուհուրիէն իշխան Եղզնկայի. փախուցեալ անկան առ Թիմուր, և զոր զոր կարան առ նա զբռնութիւն Պայազիտայ արքայի, որ յաղթեալ էր զանէին զգաւառս տիրութիւն մերոց:

Յայնմ ամի արձակեաց Թիմուր զեսպան առ Պայազիտ արքայ և ձայն տայր նմին յասպարիզ մարտի. և ինքն չուս արարեալ բանակաւն ելին էառ զտեղին Սեբաստիա. զգարիսպն քանդեալ կործանեաց, զքնակիչսն 'ի սուր առաբերն կոտորեաց, և զքաղաքն ամենայն Հայոց կիզեալ ոչն թողեաց անհետ ունելոյ ամենայն խիզձութիւն: Ընդ այս լուր գառնալոյ և ընդ բանս զեսպանացն 'ի սրտնոութիւն բարկութիւն բորբոքեալ Պայազիտ կամէր անդէն առաստաստիանեալ զմիզմաբերս զեսպանացն իրրև ապաշէցին զնա իւրքն շյանցանել ընդդէմ զիմեաց ազգաց. զրեաց

առ Թիմուր Թուղթ լի նախատանօք և արձակեաց առ նա ընդ ձեռն դեսպանաց, և ինքն կազմեցաւ պատրաստեցաւ դիմել 'ի վերայ նորա։

Մինչդեռ 'ի Սեբաստիա էր Թիմուր ընկալաւ զԹուղթն, և հարկս ստանձեալ զգայրոյթ ցասմանն՝ չէաւ զընծայս բերեալս 'ի նոցանէ։ Հրամայեաց կազմել զգունդս զօրաց իւրոց 'ի հանդէս հանդարոյ, որ տեսեաց զօրն ցերեկ, և զդեսպանս Պայէզիտայ յանձնցուցեալ ընդ ամենայն բանսին՝ արձակեաց զնոսա, և խոստացաւ հաշտել ընդ Պայէզիտայ՝ եթէ Թողցէ նա յազատութիւն զընտանիս Դահերթէնայ իշխանին Երզնկայ, և առաքեսցէ առ ինքն զմի յորդւոց իւրոց, զոր երբեւ զնա որդի գդուեցոյց ասէր։

Սակայն Պայէզիտ ոչ միայն զնորին խորհրդակցութիւն առ ասն և հարս, այլ և զնուրոյն՝ որք լաւ հաստատէին պաշտպանել աշխարհին յանձուկ կերաց ապահ եւեթ կալեալ, և ոչ մեկ 'ի յայսոսիկ պատերազմ։ և հարիւր և քսան հազար արամբք շուտեաց գնաց 'ի Պրուսայէ։ Ի սոցանէ ութսուն հազարք էին Թաթարքն, և տասն հազար Սերբացիք ընդ արքային իւրեանց Լազարայ։

Ազդ եղև Թիմուրայ եթէ հաս Պայէզիտ զիս զօրաք իւրովք յԱնդորկիա. անդէն խաղաց ընդդէմ նորա, և յաւուրս երկուսասան և հաս մինչև յԱնկիւրիա, և

պաշարեաց զքաղաքն։ Այլ երբեմն լուաւ զմերձենալ օսմանեանն բանակին, և զիրեղ զպաշարումն և զհարս զահագին բանակ իւր 'ի ջրարբի կողմն դաշտին։ Իսկ Պայէզիտ եկն բանակեցաւ 'ի միւս կողմն յանկողմանէ։ և առ 'ի նշանակ իւրում անեկիւզումեան 'ի թիմուրայ կարգեաց 'ի բարձունսն հանդէս որոյ։ և հինգ հազարք յիւրոցն մնան պաշտպանեալք 'ի ծարաւոյ։

Կարգեցան ճակատեցան ապա կողմանքն երկոքին թուով երբեմն հազարք հազարաց։ զի Օսմանեանքն հարիւր և քառասնհազարք էին, իսկ թաթարքն եօթնապատիկ առաւել։ Այլում թեպետ թաթարացն բանակին զօրավարքն Միրզա Մերանշահ երեց որդի թիմուրայ։ 'ի ձախումն կրտաւրքն Միրզա Շահրուխ և Միրզա Խալիլ։ 'ի միջամարտին առաջնորդքն թոռն թիմուրայ Մահմատ Սուլթան։ և ինքն թիմուր յետ կուսակ բանակին կայր 'ի գլուխ քառասուն գնդից։ Աստի և Պայէզիտ ոչքայ զաջ թեւն տայր 'ի ձեռս որդւոյ իւրում Էմիր Սիւլէյման շահին, զձախն՝ յորում էին և սերբացի զօրք՝ 'ի ձեռս Լազարայ թագաւորին Սերբաց որդւոյ Վուլքայ անուանեալն Պայէզիտայ։ և 'ի միջի բանակին ինքն կայր ընդ որդւոց իւրոց, որք էին Իսա, Մուսա, և Մուսթաֆա։ Իսկ զմերձակայսն զօրականին վարէր միւս որդի նորին Զէլէպի սուլթան Մահմատ։

Ընդ որում ամս քառասնորդի առաջ ամենամեծ յուլիսի յամսին 1402 սկսեալ եղև պատերազմին 'ի ձայն փողոց Թամբուրայ, 'ի Մեղբեան Թմբկացն Օսմանեանոց և 'ի գոչիւն զարհուրելի երկաթանջիւր կողմանց: Մկրտչա Էպուսկէպոս որդի Մկրտիչ Հանդրաս եղեալ յարձակեցաւ 'ի վերայ Սերվաց, և ուժգին վանեցաւ 'ի նոցանէ. և մինչդեռ քաջքն այնոքիկ բարձրաձայն նախճիրս գործէին 'ի Թամբուրս, զունդք զաւառին Ա. յաղնոց առաւել զիշխան խրեանոց 'ի կողմն Թխմուրայ՝ խուժեցին անցին յայնկոյս: Զնոյն արարին և զունդք Սարուխանոց, Կերմիանու, Մենթէշէի, և զրոհից ուժանց Թամբուրայ:

Յայնժամ Թագաւորն Սերվաց խրոմքն ապառաղնեաք հեղձեալ զբազմութիւն Թշնամեաց՝ և հաս առ Պայէզիտ արքայ, և գոչէր առ նա ապրեցուցանել զանձն իւր: Ա. Պայէզիտ յամառեալ ամենեալ ճեայր 'ի բլրին՝ ակն կալեալ կատարածի Ճակատուն ասան հարարենիչերուք, մինչև օրն ապրաժամէր, և ենիչերիքն ևս 'ի ծարաւոյ և 'ի պոյ մաշեալ ապառէին:

Ա. յն հինգ զիջեալ արքայի յարդարեան Մինենեթարէյին՝ որ յորդորէր զնա խոյս տալ 'ի սեզոնէ ամսոյ՝ գարձուցանէր զնչատանակ երիվարին, և ահա երիվարն նորին գիմեալ ամենայն, և Մահմուտ խան Թամբուրայ հասեալ 'ի վերայ՝ կալաւ

զնա և յամենայնի ապրուստ առ թիմուր, առ որում կային և որդի նորա Մուսա, և զորավարքն Մինեհմ, Մուստաֆա, Ալի, Ֆիրուզ, և կոչնանուն թիմուրդաշ, և որդի նորին Սամիշ ագէյ։ Իսկ միւս արքայորդիքն Սիւլէյման, Մէհէմմէտ և նոքա փոխուցեալ զերծան։ և Մուստաֆա անցեալ էզև 'ի սեղանոջ Հանգաստն։

Զամենայն զարմս և զանձարանս և զոյզ թիմուր Պայէզիտայ։ և սեպհական զնա հաստատեալ հին 'ի սօֆայ սուրբն և 'ի սարդեսագ զարմանալի, և փոշէլից և սիրարգէմ, հրամայեաց բերել նոսա ի ծաւալ քաղաքին հանելոյ, նոսայ զնա առեալ, կարգեաց նոսա 'ի բնակութիւն վերանոսա էրիս շքեղապարգս, և երդմամբ երդուաւ չանգանջել կենաց նորին։

Ազատեաց Պայէզիտ խնդիր առնել վասն որդւոց իւրոց։ և Էնկիմիսուր անդէն արձակեաց ամենայն խնդրանս զկնի նոցա։ այլ միայն Մուսա Զելէպի՝ գերեալ 'ի բանակին թիմուրայ՝ շքեղ հանդերձիւք ածաւ առ հայրն։

Մի 'ի մեծամեծ զարմանացս աշխարհի է Ամենիւրեանս այս Հանգաստարան անուանեալ և բազմութիւն մարդկանցն, և քաղաքութիւն և մեծութիւն աշխարհակալ հրաշագործացն, և աղանդաւորութիւն հրաշագործացն զարմանալոցն։ Զի զթիմուրայ շուրջ զարս առեալ կային վեցեքսան որդիք նո-

բա և երկրաման թագաւորք՝ իշխանք մեծամեծ աշխարհաց։

Ներսէհն այն քաղցրութիւն թիւրաց առ Պայէզիտ փոխեցաւ ապա 'ի փոքր մի խառութիւն։ Քանզի հրամանեաւ Մէհմէտմէտայ որդւոյ Պայէզիտայ, որ զերծեալ էր փախստականք 'ի պատերազմէն, Օսմանցիք ոմանք գիշերային մտեալ 'ի բանակն Թամարայ՝ 'ի մօտակայ վրանէ միոջէ ակաւն հատին մինչև 'ի վրանն Պայէզիտայ ազգայի, զի զերծուցեն զնա։

Ապ այն ինչ հատին ակամահատքն 'ի միջավայրս անդր վրանին Պայէզիտայ, հարան 'ի վերայ նոցա պահպանողքն Թամարայ։ Օսմանեանքն փախուցեալ Հոգոպրեցան. և Թիմուր յանդիմանեալ զՊայէզիտ՝ խոսիւ պատուիրեաց իւրոցն զգուշապէս պահել նոսա, և զգայդ շղթայակապ պահել 'ի սնեակի միում, որոյ դուռն էր վանդակ երկաթի։ Եւ քանզի տարկամն գոփէս զվանդակ թռչնոյ և զորպիսի և լցէ վանդակս անխոտորնշանակէ, ասաղ յայտանէ առ զի կարաս բանն՝ իբրու ելմէ 'ի վանդակ պարզ երկաթի արգելեալ լցէ Թիմուրայ զՊայէզիտ։ Եւ առաջին յոգիչ աղասպելիս ասին Փրանգասբուզանդացի, և Ազատաշահ ասորի [1]։

1 Պոփանգիրս Ներսոպոցւոյ ժամանակագրութեան ասեն պոփերաշի, ընդ որս և գերման-

Հաւատարմագոյն քան զայս թուին և օգտակարագոյն արդեաք՝ քանզի թիմուրայ առ Պայէզիտ, և պատասխանիքն որպս առ նա՝ ի պատահել անդ նոցա զառաջինն իրեարայ և՝ ի բազմել առընթեր։ Զայս, ասեն, Լենկթիմուր առ Պայէզիտ. «Ընդդէմ ապարտ է քեզ առ Աստուած և ես և դու սակս սիրելի թեւոնս տեսելոյ մեզ առ՝ ի նմանել։» Պայէզիտ

նոցին Ճիմպերիէրաթանապետան ամենայն անցից ճանապարհին, զվանդալին իրս համայն ճառին Օսմանեան պատմութենից։ Յնչեցուն բուզանդացի պատմագրաց, յորոց մին է Փրանզաս, հաւատարմագոյնքն երիւթինոսյան և Բրանդիզաս զվանդալին ելանելոցն։ Այլ և ոչ պատմութենք Պորսիոյ և Արաբացւոց՝ Ճէրեֆէդդին, Հոբիքի, Լարի, Ճենապի, և Իպն Ճէուզի։ Իսկ հնագոյնն՝ ի պատմագիրս Օսմանեանց Անէրգիաղլուզէ, ընդ որս՝ և Նէշրի, այսպիսի ինչ Նէրի յաւելուն՝ լուսաւոր յանանապետս վիայից, էնէ Թիմուր՝ ի լուսաւ իւրում զՊայէզիտ արքայ ածէր ընդ իւր ընդ մեջ երկուց երկվարցն՝ բաղմեցուցանէաւ՝ ի վանդալայն կամ՝ ի խաղխաղեայ պատգարակի։ որպիսի է և պատգարակ կանանցն Օսմանեանց։ Վասն որոյ յիրաւի պատարակի ասորին Արապշահ՝ ի տալ պատմագրին Սապէդդինայ որպէս ապայոգ և անխոհեմ։ Ոչ ինչ ընդհակառակ յայսմանէ Բուի և այն՝ էնէ Թիմուր՝ ի Ճերեսլանէաւ իւրում՝ ի յի՝ ի Պայէզիտ արքայ յենուալ ի՝ ոռվերեալ։

ասէ. «Եւ ընդէր»։ Ասէ Թիմոթ. «Զի բաժանեաց զայն ընդ իս ընդ կապս[1], և ընդ քեզ ընդ ասեցուածդ. ինձ առեալ 'ի բաժին 'ի Հեզկաց միանձն 'ի Սերասոիս, և քեզ 'ի Սերասոիոյ միանձն 'ի Արձառս։ Յորմէ յայտ իսկ է եղեալ քանի խառնեալ եղեալ յաչս Բարձրելոյն թագաւորութիւնս աշխարհի. զի փոխանակ անարատութեան զանազանեալս ընտրեալ նմին անօրինեալս։ Եւ գաւազան բարկութեան Աստուծոյ եմ 'ի վերայ քո, փոխանակ զի ոչ ծանեար զաւ զբարեբարութիւնս նորա. այլ մի ինչ վշտացիս և զբարկս. և հնար առնս որ յուժի և 'ի քաջութիւն եղեալ եղեալ՝ գառնալ անդրէն յիւր նախկին բարեբաստութիւն»։

Զհետ Ճակատամարտութեան Ենկիւրիոյ Արիզա Արհեմիկ թագն Թիմուրայ երեսուն հազար հեծելովք հետամուտ լինալ Սիւլէյմանայ որդւոյ Պայէզիտայ՝ չորեքհազարաբաք եհաս 'ի Պրուսա, ուստի փախուցեալ էր Սիւլէյման։

Պաղատանաց և հրդեհեաց զբաղաքն

1 Զիաղուրիանն ուլ 'ի բնէ ինչ ուռնէր նա, այլ զի ի սմբարձեալ յաճուռ ճանգաւորութեան՝ վերս 'ի բարձան ուռեալ էր 'ի մարդի և իաղացեալ։ Իսկ ինքն ըստ նիարագրին բարձրահասակ էր և յաղնանդամ, ճեծագլուխ, լայնաճակատ և գեղադիպակ. և հէրդ գըլխոյն էրիայնայիգ, և 'ի ծննդենէն հէպէ ոգիպակ իբրև գիրն։

ողջոյն, զմիկիսն կարգեաց յախուռն ելրիսարաց, և զկանայս և զդստերս Թագաւորին հանդերձ ամենայն գանձիւն և ոսկեղէն և արծաթեղէն ապասուքն բարձեալ յուզոյն առաքեաց առ Թիմուր 'ի Կուսինս Թմբկաք և պարսաք, և ինքն ասպատակ սիրեաց ընդ ամենայն երկիրն Օսմանեանց մինչև 'ի ծովեզերեայս աշխարհին:

Թիմուր դարձոյց ետ անդրէն Պայէզիտայ զկին նորա զսերմացին: Զորդի իշխանին Գարամանայ Թագաւորեցոյց 'ի վերայ հայրենի աշխարհին՝ առեալ նմա զքաղաքսն Իկոնիոն, Լարենտա, Ագսէրայ, Ամիտաւա, Ագշէհիր, Սիվասիայ և Պէկիպազարի:

Առաքեաց գեսպանս առ կայսրն Յունաց և պահանջէր 'ի նմանէ հարկս. և նա աճապարեաց յղել ընդ հարկացն և ընծայս բազումս: Դարձեալ և զորդին Պայէզիտայ զՄուսէյման առաքեաց կոչեաց յԱնտիոքս հիւսիսէն. ապա թէ չկամիս գալ, ասէր, հատս քեզ զհարկն: Եւ Մուսէյման ընդ հարկացն առաքեաց առ նա և երիսարս և բազէս որսակուս. և գալեաս առ նա խոստացաւ՝ եթէ թողցէ Թիմուր յաղատութիւն զհայրն իւր:

Խոստացեալս վարեցաւ Թիմուր ընդ կողմնապահն Թիմուրգաշայ, զորոյ ըզգանձս Հոխոնիանն զտեալ էր 'ի Կուսինս. ասէ. «Էր ոսկեայս կուտեցեր զգանձդ. և զի է զի ոչ վարձկանեցեր

գոքոք զօրս 'ի պաշտպանութիւն թագաւորին քում»։ Եւ պատասխանի թիմուրդաշ. «Թագաւորն իմ ոչ երիկեանդ թագաւոր է, զի առ 'ի զօրս գումարելոյ պէտս ունիցի ընչից իշխանացն իւրոց»։ — «Ապա ուրեմն կաց մնա 'ի գերութեանդ, ասէ թիմուր. զի չեմ արժանի ազատութեան սակս գոռոզ պատասխանւոյդ»։

Վաղու եւս արձակեաց թիմուր զզօրավարս իւր յառուն Զմիւռնոյ 'ի ձեռաց սուլթանին Հռոդացւոց. և 'ի յամել նոցա ինքնին խաղաց 'ի վերայ քաղաքին։ Ազգ սրոյ բնակչացն դառնալ 'ի մահմետականն կրօնս, կամ թէ հարկս հարկանել նմա, և զդրօշ իւր կանգնել 'ի վերայ պարսպացն։ Եւ 'ի ջանալ սուլթանացն՝ պատնէշ պաշարմանէ 'ի նեղ սրկ զքաղաքն ընդ ծով և ընդ ցամաք, և զաւուրս հնգետասան սասակաղէս մարտուցեալ էառ զայն։ Հազար ոգիս 'ի բնակչաց անսի կոտորեալ, զզբուխս նոցա լցաս մնային կուտեաց 'ի դրունս քաղաքին, և լցաս մնային եւս ընկենուլ 'ի նաւս քրիստոնէից՝ որ գեռ ևս ժամանէին յօգնութիւն քաղաքին։

Վասն նոցանակի արշաւանին թիմուրայ յարևմուտս կոյս Զմիւռնիս լեալ, անսի վերայն դարձ արար յարևելս նովին խժական ընթացիւք որով ցայնմ վայր եկեալն էր։ Ի մտանել նորա 'ի մի 'ի քաղաքաց փոքրուն Ասիոյ՝ ամենայն

մանկամն այնր տարաբաղդ քաղաքի և-
լին նման ընդ առաջ՝ զկուրանն 'ի գիրկս
ունելով և կարդալով անոմ գլուխս
ինչ 'ի բերան։ Եհարց խուժադուժն՝
եթէ զինչ այն խղուրդամն ելցէ ձայ-
նից. և նրան գիտաց՝ զի յաղերս ածել
կամին զնա, հրամանն եւ հեծելազօրուն
առ հասարակ ոսնակոս առնել զան-
պարտ մանկամն։

Մինչդեռ այսպէս Թիմուր հանդերձ
որդւովքն և թառամքք 'ի հուր և 'ի սուր
ապատակէր 'ի վրայն Ասիա, որդիքն
Պայէզիտայ աղքայի բաժանէին յիւ-
րեանս զթագաւորութիւն հօրն իւ-
րեանց։

Սիւլէյման որդի Պայէզիտայ առան-
ձինն գնապատութեամբ խնդրեաց 'ի Թի-
մուրայ զթագաւորութիւն Եւրոպա-
կողմանն. և Թիմուր եւ զայն նման հրա-
վարտակաւ՝ զոր թաթով ձեռնին թա-
թաւելոյ 'ի կարմրագեղ գրոշմեալ էր
'ի հաստատութիւն՝ ըստ թաթարաց օ-
րինի։

Յաւուր միում ասէ Թիմուր ցՊայէ-
զիտ. «Եթէ դու դառնայցես յերկիր
քո, զարդ թուի քեզ, մի թէ որդիքն
քո խոնարհեսցին քեզ 'ի հպատակու-
թիւն»։ Նա պատասխանի Պայէզիտ.
«Տուր ինձ դու նախ զգաստութիւն,
և ես գիտեմ քաջ նուաճել զնոսա»։
Ապ Թիմուր ասէ ցնա. «Հանդարտ կաց
իշխանդ. ես տարայց զքեզ նախ 'ի Սա-

մերզանդ, և անտի ապա առաքեցեալ ըզ-
քեզ յերկիր քո։

Յայնժամ ընկղմեալ Պայէզիտայ 'ի
խոր տխրութիւն՝ յեւ տակաւուց հի-
ւանդացաւ և մեռաւ 'ի կամաւոյն Աստ-
ուծոյ 'ի շնչարգելութենէ ՅԱՂՇԷՀԻՐ քաղա-
քի, այսօրինակ կնքեալ զքնիթացս քա-
ւառաւն և շարեաց ամաց կենացն իւրոց և
զարքայութեանն։ Եւ զմարմին նորա
եւս թիմուրայ որդւոյ նորին Մուսայի ածել թաղել 'ի Պրուսա։

Սակայն և արիւնարբուշն Լենկթի-
մուր ոչինչ յերկարակեաց եղև այնու-
հետև աւելի քան զամիս երիսուն։ Ա-
յլ իբրև եհաս 'ի Սմերզանդ, և խաղայր
գնայր անտի յաշխարհն Ձիւռց, զՇա-
հնապարհայն փչեաց զոգին ամաց եւ-
թանասուն և մոյ՝ թաղաւորեալ ամս
երեսուն և վեց, և թողեալ յիշատակ շա-
րութեան իւրոյ զամենայնեալ աշխարհս,
զքաղաքս խորտակեալս, և զկարկա-
ռակոյսս մերկեան կոտորելոց։

Յայնմ ժամանակի յամին 1404 աշ-
խարհս թաղաւորութեան Օսմանեանց
բաժանեալ էր 'ի Մէհէմմէտ, յԻսա,
'ի Մուսա և 'ի Սիւլէյման յորդիսն Պայ-
զիտայ ամենիշխանն։ և իշխանքն Ա-
յրնէն, Մէնթէշէն, Թէքքէն, Կէրմիա-
նեն և Գարամանայ հաստատեալ էին
'ի Թիմուրայ յիւրաքանչիւր տիրու-
թիւնս։ Ապա զկնի տասն ամաց եւ թ

յաջողեցաւ ինքնիշխան թագաւորել
աղքայորդին Մէհէմմէտ։

Բանզի զինի պատերազմին Ընկիւ-
բոյ Ալի փաշա վէզիրն մեծ և իշխանն
Էյնէպէյ և Հասան զօրավար Ենիչէրաց
փախուցին զերկոց աղքայորդին զՍու-
լէյման յԵդրապա, և Պայէզիտ փաշա
փախոյց զկրտաերն զՄէհէմմէտ զմեկ-
ամուսնանալն Կիւրէշճի չէլէպի մանուկ
մեռանելոյ յԱմասիա։

Մնեալ յաղթութիւնս աւանդեն
Օսմանեանք կատարեալ Մէհէմմէտայ
յառաջեալ ամի անդ 'ի վերայ այլեալք
բռնակալաց 'ի ձեռն ապարատութեան ի-
րոյ Պայէզիտ փաշայի, և խորհրդով գայ-
էկին իւրոյ որ կոչէր Սոֆի Պայէզիտ։

Ապա հրամիրեալ 'ի Թիմուրայ՝ իբրև
յուզն անկանէր էրթալ 'ի կոչն, եաւս
զի թշնամիք իւր կարէալ էին զամենայն
անցս Հանապարհաց։ Վասն որոյ առա-
քեալ առ Թիմուր զդայեանին՝ 'ի չքանելս
էզև. և նա 'ի դառնալ իւրում ընդ դէս
պանին Թիմուրայ՝ էրթր նմա և զդայ
մահու հրամանարին Պայէզիտայ ապքայի։

Ի մեկնել ապա Թիմուրայ յարևելս,
աղքայորդին Սիւլէյման ոկրէր յԱդրիա-
նուպոլիս։ Եւ ապա հասանելոյ 'ի թա-
գաւորութեան իւրում դաշինս բարե-
կամութեան կռեալ ընդ կայսերն Յու-
նաց՝ էդ առ նմա 'ի պատանդի զեղբայր
իւր զԴասրմ և զքոյրն Ֆադիմէ, և ինքն
առ իւր 'ի կնութիւն զդուստր էզբոր

Մանուէլի կայսրը, որ միանգամ ան-
ցեալ էր յաղթեալն Բիւզանդիոյ։

Բայց միւս եղբայրն Միքէլեանոյ զամ-
սի ոչիչն 'ի Թագաւոր կացեալ 'ի կողմանս Պրուսայի, և առ անհաւանք հրամն օժանդակ իւր գտեալ զկոլենատեան Թիւրքաշ զբերդեալն կամ զփոխուցեալն 'ի գերութենէ անտի Թիւրքայ, Թագաւորեաց ևնա 'ի Պրուսա, և գաշնեաց ուխտի հաստատեաց ընդ կայսրը։

Իսկ Մուսա վերադարձեալ յորդիս Պայէզիտայ և գերեալ հրամանաւ Պայէզիտայ 'ի Թիւրքայ 'ի պատհ զգուշութեան իշխանութեան Կէրմիանու, ընդ իւր ունելով և զիսկին հօր իւրոյ Պայէզիտայ ոսկրայի։

Աղբայրդին Մէհէմմէտ եղեալ յԱնտիոքայ և հասեալ զօրաք 'ի Պրուսա, նամակագիր լինէր առ Բայ, և խրատ տայր նոցա բաժանել ընդ իւր զերկիրն։ Եթէ իրրև մերժեաց նա զառաջարկութիւնն, Մէհէմմէտ յառաջ մղեաց զգունդս առ Ուրուսաս քաղաքս. առանց փոխուցեալ կոլենատեան Թիւրքաշ տարտամեալ Բայի՝ ապատաս 'ի ծառայէն իւրմէ։

Մէհէմմէտ զգրեալս կոլենատեանն առաքեաց առ եղբայրն իւր Միքէլեան, իրրև 'ի նշանակ յաղթութեան իւրոյ. և հարցեալ զԲաս չէլէպի մինչև 'ի Կոստանդնուպօլիս, որոյ Պրուսայի և Նիկիոյ։

Դեսպանս առաքեաց անտի առ իշ-

խումն Կէրմիանու, և ինդրէր արձակել առ ինքն զԿրայր իւր զՄուսա Չէլէպի, և զդիակն հօր իւրոյ։ Եւ հասեալ ինդրոյ իւրում՝ Մուսայի շնորհեաց ըզկնունն, և զդիակն հօր իւրոյ թաղեաց 'ի Պրուսա, և ինքն դարձ արար յամիս թագաւորութեան իւրոյ յԱմասիա։

Իսկ Խայի անցեալ յԱդրիանուպոլիս, և օժանդակեալ 'ի Սիւլէյմանայ, դարձաւ 'ի Պրուսա տասն հազար արամբք, և վանեալ յերգրէն՝ փախեաւ առ Խաֆէնտիար իշխան Գասդէմունեայ։

Ղորքն նիզակակցութեամբ յարեաւ Էրդորդ անդամ 'ի վերայ Մէհէմմէտայ, և դարձեալ վանեցաւ 'ի կողմանս Զմիւռնիոյ։ Եւ ապա միաբանեալ ընդ իւր զիշխանս Ալայնայ, Սարուխանայ, Թէքէքէի և Մէնթէշէի, արամբք իբրու քսան հազարաւ գիմեաց ընդդէմ Էղբօրն։ Այլ Մէհէմմէտ խորամանեաց զբանակ նորա. Իբրզբ շահ իշխանն Սարուխանայ գերի վարեալ ապանեաւ։ Եւ գուսպ իշխան Կէրմիանու էառ զբանակն բերդորդեից իւրոց 'ի ձեռս յաղթականին. և Խայ փախեաւ 'ի Գարամանն, և այլ ոչ ևս բանք եղեն զնմանէ։

Սիւլէյման՝ որ ցայնժամ յԱդրիանուպոլիս քաղաքեաց և ինքնագլուխ պարակէր, և անդորր ոգւով հանդիսանէր կայր պատերազմաց Էղբարցն յԱսիա. 'ի լուր յաղթանակացն Մէհէմմէտայ

զարթեալ 'ի նախանձ, և վառեցաւ 'ի կարգել 'ի ձեռաց նորա զպատուական թագաւորութեան հօր իւրոյ։

Ընդ յամին 1406 յԱսիա զջրաբ բազմաք. վանեաց առաջի իւր զիշխանս Դարբանդայ և Կէրմիանու, և առաքեաց յԵփեսոսէ զԱլի փաշա զվէզիրն մինչև յԱնկիւրիա, զոր տրիապար պաշտպանէր Եաղուպ ազգ որդի Ֆիրուզայ։

Ի սոգնոյ ժամուն Մէհէմմէտ նամակագիր եղեալ յԵդոկիոյ առ Եաղուպ՝ քաջալերէր զնա պինդ կալ անել պաշարմանն մինչև հացին առ նա ընդհուպ զոյք իւր 'ի Թիկուն։ Բայց Ալի փաշա կալեալ զքաղքատարն, ոչ թողի զրեցաց առ Եաղուպ 'ի գիտաց Մէհէմմէտայ հակառակ խնամոյն առաջնոյն, յորդորելով զնա անձնատուր լինել 'ի ձեռս վէզիրին։

Իսկ և հաս Մէհէմմէտ մերձ յԱնկիւրիա, և եռեալ զքաղաքն 'ի ձեռս թշնամեաց իւրոց, գիտեաց գէպ ուղիղ 'ի Պրուսա. ուր 'ի ժամուն Սիւլէյմանն 'ի բազանիս գոլով էառ զլուրն, և փախեաւ իւրովքն հանդերձ յԵնիշէհիր. և անտի յԱդրիանուպոլիս։

Յայնժամ խորհուրդ եւս Պրուսա քէլէպի եղբօրն իւրում Մէհէմմէտայ գիտել յԵւրոպա, և անդ նեղել զՍիւլէյմանն։ Ապա ինքնին Պրուսա յարձակեալ անդր՝ զառաջինն վանեցաւ 'ի Սիւլէյմանայ. և զինի մինչև ոնա յԱդրիանու-

պօքիս ընկղմեալ էր յարբեցութիւնս և 'ի հեշտութիւնս բազմանեաց, ապդ ա-
բար նմա Միխայէլ օրդու եմէ ահա ար-
քայորդին Մուսա զօրք բազմք առ
դրունս քաղաքիս հասեալ կայ. և Սի-
ւէյման ծաղր արար զնա և զՄուսա։

Փարձ փարձեաց և իշխանն Իւրէնոս
զարթուցանել զՍիւէյման 'ի խոր թմբ-
րութենէ անտի, և գանգատէր առ Հա-
սան զօրավար ենիչէրեաց զանզգայու-
թենէ արքայորդւոյն։ Մատեաւ առ-
նա Հասան 'ի բազմիսն և սասիկս
բարբառեցաւ. և Սիւէյման բարկա-
ցեալ հրամայեաց գերծուլ սուսերաւ
զմօրուս նորին։ Յայնժամ յանհնարին
ցասումն բարկութեան բորբոքեալ Հա-
սանայ՝ խոյացաւ երիվարաւն առ աւա-
գանին 'ի բանակ անդր, և պատմեալ
նոցա զիայտառականս իւր և զչարա-
ութիւն թագաւորին՝ անց 'ի կողմն
Մուսայի, և նոքա փողեցին զկենի նորա։

Ար ուրեմն անձին զգաստ լեալ Սի-
ւէյման իբրև եաւս թմբամբեալ յին-
քենէ զամենայն աւագանին, երիւք ա-
մսաթիւք եմէ ամենապարեաց փախչել առ
աներ իւր առ կայսրն Յունաց 'ի Կոս-
տանդնուպօլիս. այլ 'ի հասանել նո-
ցին 'ի գիւղն Տիւյիւնճիլէր քէօյու, զո-
րոյ զշնակիչսն զԹիւրքմէնս բազում ան-
գամ խուսեալ էր նորա, երբարբք հինգ
վարժք 'ի հեծելութիւն և յաղեղնա-
ւորութիւն՝ ընթացան ընդ առաջ նո-

բան՝ Թեբեան'ի հետաքննեալ ինչ։ Իսկ Սիւլէյման երկուցեալ, զերկուսն'ի նոցանէ եհար և տապալեաց յերկիր։ Յայնժամ միւս եղբարքն երեքին միանգամայն նետաձիգ եղեալ'ի նա՝ սրկին զնա յերիվարէն, և հատին զգլուխն։

Այսպէս վճարեաց Սիւլէյման ըզտասնամեայ թագաւորութիւն իւր յամին 1410, ոչինչ յիշատակ բարի թողեալ զանձնէ, բայց զանէր իւր և զանիծս ապրանս առ ապս գիտնականս որ գտանէին'ի ժամանակին։ որպիսիք ոմանք էին Իսմաէլ Սիւլէյման չէլէպի, Ալիազի, Ահմէտ, Հանչա, և Եսմէլպան Օսմանեանց Ներսէսոսին խոշա [1]։

1 Ընդհանուր ազգագրութեանս ի հասպանոյս'ի բերան ասային և'ի գիր Օսմանեանց։ Ասպանոր ազգիս Նէր ասա յիսպանէ դրուագեցուց։ Ազալեալ'ի բնակչաց Ընդիշհրին գնալ դէսպանութեամբ առ Թիմուր՝ հարցանէ Ներսէսին ցիրանն իւր, երբ ազգս ինչ'ի պարզոց արքան Բուլիցի գանել յընծայ աչխարհակալին, ինչ էրիք սէր ինին։ Եւ'ի գովել ինոյն ազգարիսին որպէս աշնաւագոյն ինչ հրգ և գեղեցիկագոյն, Ներսէսին եդեալ'ի մտի երիք լէր պարգ անուալ ինանոցի խորհրդոյ՝ ընդրեալ ինչաս նոին հանակ ազնուն ածել։ Իբրև յանդիման եղեալ հանդերձ ընծայիւն առ Թիմուր, հրամայեաց բանակալն արձակել ազնուական հ առ հ'ի գլուխ Ներսէսոյ, որ առ հնն հ հա-

Մուսա չէլէպի ինքնիշխան ոկրատե-
ռեալ յեւրոպական մասին, առ Ժա-
մայն յայտնի արար զնատուԹիւն բա-
ղուցն. զի զերիս եղբարն ապատոպս Սի-
լէյմանայ հանդերձ հանօրէն գիւղակցաւ
նոցին փակեալ արգելեալ յիւրաքան-
չիւր խրճիԹս այրեաց զնոսա կենդան-
ւոյն։ Ապա ասպատակեալ յերկիր Թա-
գաւորին Սերբաց՝ զայր և զկին 'ի սուր
սուսերի կոտորեաց, և զմանկունս 'ի գե-
րուԹիւն վարեաց. և 'ի վերայ գիակացս

բուաց Ռգոյն 'ի յայն Բարձր գոհանայր զԱ-
պուծոյ։ Եհարց Թիմուր զպապճառս գո-
հանալոյն. և նա դարձեալ ետուս էր Ապու-
ծոյ և ասէ. զի ոչ լուայ խորհրդոյ ինոջ
իմոյ և լքեալ սերիեալս, որովք անզուարթ
ջաղջախեալ էր արդ գլուխ իմ։

Յայլում նուագի պարտ Ղասրէպին առ
Թիմուր պատն վարոնգս յերախայրէաց երի-
ին, և Թիմուր հրամայէաց պալ նմա ասկիս
պատն։ Ապա մինչդեռ առապուրիան յոյժ էր
վարնգի, պարտ առ նա դարձեալ վարոնգս
հինգհարիւր. և հրամայէաց Թիմուր նոյն-
լոք գան հարիանել 'ի գարշապարս ծերուն-
ոյն։ Իբրև էարբ Ղասրէպին զվէս գա-
նին, ազալէաց զի մեռս ինքն պատի գլխա-
ւորին 'ի պահանորդս վրանի Թագաւորին. զ-
խոսացայ ասէր պալ նմա զվէս պարգևացնի
զարս ընդունիցիմ յարքայէ, և ապա Ռայլ էպ
ինչ մպանել այսր։ Եւ զէրիէրիւր և յիսուն
հարուածսն ընկալաս պահակապետն։

քրիստոնէիցն ինչոյս կարգեաց զօրավարացն իւրոց և ապայից։

Պաշարեաց և զԹեսաղոնիկէ, և առաքեաց առ կայսրն զԽալրահիմ զորդի Ալի փաշային (որ մեռեալ էր 'ի նմին ժամանակի) ապահանջել զհարկս։ Ալ Խալրահիմ երկուցեալ 'ի բռնութենէն Մուսայի՝ յորդորեաց զկայսրն ընդդէմ կալ նմին, և ինքն փոխեաւ առ Մէհէմմէտ 'ի Պրուսա և կարգեցաւ 'ի նմանէ վէզիր մեծ։

Զայրացաւ Մուսա ընդ այն գործ Խալրահիմայ յոյժ յոյժ, և գիմեաց պաշարեաց զՆոսանդնուպոլիս. և կայսրն աղերսիւ կոչեաց զՄէհէմմէտ ազգայ իւր 'ի Թիկուռնս օգնականութեան։ Որոյ եկեալ ասկարաձեռն զօրօք 'ի Բիւզանդիոն՝ մեծարեցաւ յոյժ 'ի Մանուէլէ։ Եկ ապա իւրովքն և հելլենացւովք 'ի պատերազմ. և հարեալ միանգամ և երկիցս 'ի Մուսայէ, իրրև լուաւ և զյարձակումն Ճիւնէյտ անուն իշխանին Ակրենայ 'ի սահմանս իւր՝ գարձ արար առ ժամն յԱսիա։

Ճիւնէյտ՝ որ յառաջագոյն ընդ Թեարկուութեամբ Սիւլէյմանայ կայր, վաղ խառնարհեցաւ ընդ ձեռամբ Մէհէմմէտայ 'ի տարկութիւն։ Զնոյն արարին և իշխանքն Ենկիւրիոյ և Զիւլգադարայ. և Մէհէմմէտ նիզակակից զօրօք Սերվայ և Յունայ էանց յԵւրոպա։

Յայնժամ առապանին Մուսայի՝ ընդ

որս և քաջն Էրեմնոս։ և որդի նորա և Եմիշի սկիզ՝ հեռացեալ անցին 'ի կողմն Մէհէմմէտայ, որում ընդ հուպ տիրեաց նա և ամենայն երկրին մինչև 'ի նիշ։ Իսկ Մուսա, որ արդէն լուծեալ զպաշտօնն Կոստանդնուպօլսոյ՝ հետամուտ էր Մէհէմմէտեանց, զուն ուրեք հարեալ զնոսա՝ յոլովագոյնս հարաւ խորտակեցաւ 'ի նոցանէ, մինչև եկին բանակեցան կողմանքն երկրին Հակառա առ Հակառա 'ի գաւառն Զամուրլու։

Ապրայորդին Մէհէմմէտ զանխ թիև բանակին իւրոյ աւանդեաց 'ի Սուրիա՝նոս որբոյ Սերվաց, և զաջն Էրեմնոս սպարապետ։ Իբրև կարգեցան երկրաքանչիւր կողմանքն, Հասան զօրավարք ենիչէրեաց՝ որ 'ի Մուսայէ անցեալ էր առ Մէհէմմէտ, յառաջ մատեան, գոչեաց առ ենիչէրսն իւր որ եօթն հա-

1 Տեսեալ ծերոնոյս զվարքն Էրեմնոսի՝ պապճառնցաս զնուրուին, և խնդրեր հրաման ապաստ լինելոյ այնուհետև 'ի պաշտամանէն։ Մուսա թանչի խիրայր 'ի խորաթիթուռնէնէ ալնորին՝ թորյնէ կամեցաս զսպուռթուռնեան բանիցն, և հրաբերեաց զնա 'ի սեղան, յորում արքաս և կերակուր յօրինեալ 'ի գորգանց՝ ախորժելի յոյժ ծերունոյն։ Այլ խորամանկուռնեան Էրեմնոսի յաղնեաց որիորդուռնեան խրատ, և մինչև հրամայեալ Մուսայի՝ լմնեաց զյեան իւր 'ի կերակուր անդր։

զարաւ շատ էին ընդ Մուսայի. «Զի յապաղէք որդեակք իմ անցանել առ արդարակորով և առաքինի այրեայս Օսմանեանց։ Երթուք ինայք տակաւին զրկեալքդ և անիրաւեալքդ առ ան որ և ոչ անձին փրկութեան ունի հնարս գտանելոյ։

Ոչ ևս կարաց Մուսա ժուժել բաւել նախատանացն Հասանայ. յարձակեցաւ առեւծարար 'ի վերայ նորա, և հաս զինի, և շեշտ ընդ մէջ ձեղքեալ ի հերձ գնա վերուստ 'ի վայր։ Այլ երբեւ կամէր կրկնել զհարուածն՝ մի ոմն յընկերացն Հասանայ ընդ մէջ մտեալ ի հաս զբարձուն Մուսայի։ Զայն իրրև տեսին ենիշէրիքն, անդէն հասուածեցան խմբովին առ Մէհէմմէտեան, և Մուսա դարձոյց զերեսս իւր և փախեաւ 'ի կողմն Վլահայ։ Եհաս զինի նորա Սարուձէ փաշա իւրով հեծելաշղեղաւն, և եդիս գնա մեռեալ ընկեցեալ 'ի ճահիճս ուրեք։

Այսպէս յամին 1413 ինքեանց զերկամեայ թագաւորութիւն իւր և Մուսա չէլէպի, որ զիտաս առատաձեռն և արիական բարուցն սոսեբացոյց սարդարապետն խառութեամբն, և թօշափեցաւ յամենայն աւագանեայն։

ՍՈՒԼԹԱՆ ՄԷՀԷՄՄԷՏ Ա ՀԷԼԷՊԻ

Մ՝ԷՀԷՄՄԷՏ արքայ ըստ գեղադիտակ սեալեանն և վայելուչ հասակին Հէլէպի մականուանեալ, առաւել ևս գրուատեալ է սակս արդարութեանն, և գթալոյ առատաձեռնութեան և քաղցրութեան առ Օսմանեանս և առ քրիստոնեայս անխտիր. որով յարուցեալ կանգնեաց ոչ միայն զիւրն, այլ և զՅունացն թագաւորութիւն:

Քանզի լուեալ Մանուէլի կայսերս զլուսն յաղթանակի նորա 'ի վերայ Եղբօրն՝ առանձին գեղապանութեամբ խնդակից եղև նմա, և խնդրեաց 'ի նմանէ զնորոգութիւն դաշանցն բարեկամութեան: Եւ նա դարձոյց առ կայսրն զամենայն բերդորայս սեաւ ծովուն և ընդ Թեսաղոյ և զՄարմառայի հանդերձ երդմամբ ասելով ցդեսպանն. «Դիտացէ կայսրդ Յունաց՝ զի հայր իմ է նա, և զի ոչ մոռացայց ես երբեք՝ եթէ նորին օժանդակութեամբ ժառանգեցի ես զտէրութիւն հարց իմոց, և ոչինչ պակաս արարից 'ի պարտուցս իմոց առ նա»:

Ինքն ի ժամանակի եկին առ նա գեսպանք խնդակցութեան և 'ի Սերվաց, Վլահաց, Բուլղարաց, և յայլոց ազգաց Եւրոպայ: Որոց բազում մեծարանաք բազմանգամս առեալ՝ ասէ. «Ասացէք ցանազգս ձեր, զի ես սամ ամենեցուն և ընդունիմ յամենեցունց զխաղաղութիւն, և որ լուծցէ զայն Աստուածն խաղաղութեան գասուցի զնա»:

Դարձեալ հաստատեաց և ընդ Վենետկեցիս և ընդ Բանքուզացիս, և ապա հարկեցաւ ջուել յասիակողմն և նկուն առնել զբնակութիւն և զբռնութիւն ի խաներն Գարամանայ, և զՃիրնէյայ:

Քանզի խլեաներն Գարամանայ ամենայն զգրութիւնսն յարձակեալ 'ի Պրուսա, երբեմն ոչ կարաց առնուլ զքաղաքն 'ի ձեռաց Անվաղ փաշային, սկսաւ քանդել աւերել զարուարձանսն այս նորին շուրջանակի, և զսակրս աղքային Պայէզիտայ հանեալ 'ի շիրմէն՝ հրոյ ճարակ եառ 'ի վերջ մահուան հօրն իւրոյ ապանեղոյ 'ի Թիմուրգաշայ:

Ընդ այն առուրս ածաւ և զիսակն Մուսա չելեպւոյն 'ի Պրուսա, զի թագեսցի առ հօր իւրում: Զայն տեսեալ խլեաներն Գարամանայ՝ սհաբեկ խուճապեալքն 'ի փախուստս դարձան, թերևս կարծելով եթէ և արքայն Մէհէմմէտ յուշարկաւորն եկեալ հասեալ էին գիւրկան ելոցն: Ի դէպ հեղձեաց զնա յայն

ժամ ծաղրածուն իւր որ կոչէր Խրիմեան ասնասի, և ասէ. «Տէր իմ, եթէ այդչափ զարհուրիս յերեսաց որդւոյն Օսմանայ մեռելոյ, կենդանւոյն զիարդ բաւեսցես կալ՝ ի դիմի և հանդարտել»: Այլ այս համարձակութիւն եղեալ խեղդամահ սատակմամբն պատուհասեցաւ:

Իսկ Մէհէմմէտ ազգայ նախ խաղաց ընդդէմ Ճիւնէյտայ և հալածեաց զնա մինչև՝ ի Զմիւռնիա. և յետ սատերիայ պաշարման առեալ զքաղաքն՝ զաշտարակս և զպարիսպս նորին կործանեցայլ զմայրն, զկին և զորդիս Ճիւնէյտայ որ անկեալ առ ոտս նորա խնդրէին ողնեղութիւն՝ արձակեաց յազատութիւն: Ներեցաց և նմին իսկ Ճիւնէյտայ ազգի. Ջացելոյ ընդ ապստամբել իւր. այլ քաղաքապետ Զմիւռնիոյ կարգեաց զուրացեալն Աղէքսանդր Սիմանն զորդի Լազարայ ազգայնի Սերբաց:

Անսի ապա գիմեալ՝ ի վերայ Իշխանին Գարամանայ՝ էառ գիւղապէս ընդքաղաքն Ագշէհիր, Պէկշէհրի, և Սէյտիշէհիր, և պաշարեաց զԻկոնիոն: Եւ Իշխանին Գարամանայ առ օրին խնդրեալ զհաշտութիւն, թողութեան հանդիպեցաւ յազգայէ. ապայն՝ ի միւսում ամին դրժեաց երդմանն, և գարձեալ ձգեաց զՕսմանեանս՝ ի վերայ իւր:

Մէհէմմէտ ազգայ յայնմ ապշաւանին հասեալ յԱնկիւրիա խօթացաւ, և աղուանի բանասաղծն և բժիշկ Սիմեան

Հէյսի անուն գիտացեալ զի մեքանաշ
էր պատճառք խօսիմութեանն, վասն որոց
եմիկ աւելոյք ինն յաղիմութեան Օս-
մանեանց 'ի վերայ թշնամեաց՝ մի
միայն դեղից է առողջութեան արքային:
Զայս դեղ դարմանոյ հնարեցաւ կազ-
մել նոնս վեզիրն իւր Պայէզիտ փաշա:
Որոյ 'ի հերուն հետէ բարեկամ դոլով
իշխանին Դարամանայ՝ կերդուապանը
նամակաւ կոչեաց զնա մերձ 'ի Պրու-
սա, զի պատրաստ լինիցիս ասէ ընդ մե-
ռանել Մէհէմմէտայ ընդ հուսկ՝ յա-
փշտակել զանձ կառավարութեան
աշխարհին Օսմանեանց: Թակարդեցաւ
իշխանն Դարամանայ 'ի հաղբան, և հա-
րաւ 'ի Պայէզիտ փաշայէն, որ կայր 'ի
դարանի, և որդին իւր Մուսդաֆա
ընկրկեցաւ 'ի գերութիւն:

Ի լուր յաղթանակին արդարև առող-
ջացաւ Մէհէմմէտ, և զիշխանորդին Դա-
րամանայ զՄուսդաֆա արձակեաց յա-
զատութիւն: Իսկ նա զաջ ձեռն բա-
խեալ 'ի լանջս իւր՝ երդուաւ այսպէս.
«Յորչափ ոգի կենդանի շնչէ, ասէ, 'ի
մարմնի սոսա, մի լցցի ինձ երբէք ակն
դնել աշխարհիդ Օսմանեանց»: Մէ-
հէմմէտ արքայ շատացաւ երդմամբն,
խոստացաւ դարձուցանել առ նա ան-
դրէն զամենայն զքաղաքսն Հայրենիս, և
պատուէաց զնա ընծայիւք թմբկի, և
դրօշոյ, և երիվարաց և ուղտաց:

Իսկ Մուսդաֆա հաղիւթիւ մեկնեալ

'ի բանակէն Մէհէմմէտայ՝ դրժեալ զերդումն, և գերծեալ տարաւ ընդ իւր զաղբատակսն երիվարս Օսմանեանց. ասէ. «Ի խառնաբերոց մինչև 'ի Թաղուումն գերեզմանի անհաշտ թշնամութիւն եղեալ ընդ մէջ Օսմանեանց և Գարամանեանց»:

Եւ 'ի յուշ առնել նմա աւագանեցն զերդումն իւր՝ Եհան 'ի ծոցոյ իւրմէ զաղաւնի մի մեռեալ (զոր 'ի կալն իւրում յանդիման Մէհէմմէտայ կենդանի ուներ 'ի ծոցին), և ասէ. «Ցորչափ ոգի կենդանի շնչէ 'ի մարմնի սոսա»:

Ա. յապէս յետ հեղձուցանելոյ զաղաւնին՝ անխիղճ 'ի մարտ մատուցեալ ամիրացսա Յիկոնիոն: Իսկ Մէհէմմէտ ալբայ պատանէշ պաշարեմամբ էառ գարձեալ զքաղաքն, և դարձեալ հաշտութիւն խօսեցաւ ընդ երգմնադանցին Մուսադափայի. և ինքն գէմ եդ անցանել յԵւրոպա յամին 1416 յամսեանն մայիսի:

Կազմեաց 'ի Կէլիպօլիս տորմիղ նաւուց երեանից. որոմք ծովակալն Զալը պէյ ասպատակեալ 'ի կղզիս Ադրիատիկական՝ բաղում քանդմունս և կոտորածս գործեաց: Ապա մարտ եդ ընդ հնդեռասան նաւուց Վենետիկեցւոց, և պարտեցաւ: Եւ ծովակալ նոցին Պետրոս Լորեսան թէպէտ և 'ի դէմն և 'ի ձեռս կարէվէր խոցոտեալ 'ի թուռնաւոր նետիցն Օսմանեանց, այլ թնդանօթիւքն իւրովք ցրուեալ զՕսմանեանս,

զնաւ Ժողովարարն կարգաւ, և զՆեղ-
ատատն Նաւուցն Նուաստս յանդիման
կանգնեց և որդւոց Նոցին որ կային 'ի
Հանդիպոյ 'ի Ժողովարարն, 'ի սուր սու-
սերի կոտորեաց:

Ի վերջս անդր զամենայն Եւրոպա-
յին անցեալս 'ի կողմն Օսմանեանց, զոր
կարէաք էր Վենետիկեցւոց 'ի նաւատոր-
մին, հրամայեաց Լոռեատն կամել 'ի
կայսն Նաւուցն:

Ապա յետ երից տարոյ հաստատե-
ցաւ դաշն խաղաղութեան ընդ մէջ Օս-
մանեանց և Վենետիկեցւոց, և զդաշնա-
գիրն տարագրեալ 'ի Փոքրոյ և 'ի Վե-
նիսիս անուն դեսպանացն Վենետիկ-
ցւոց էած 'ի Վենետիկ դեսպան ոմն օս-
մանեան, և ընկալան զնա Վենետիկ-
ցիք շքեղաշուք հանդիսիւ:

Զբազմութիւն ապատաւորս և զարբա-
նեակս նորուն ձրի կերակրեցին, և ապա-
տուեցին զնա ոսկեհուռ դիպակաւ, և
չորիւք աղեղամիջք գեղատաձոյձ ակա-
նակուռ զարդարելովք ըստ օսմանեան
սխորժակաց [1]:

1 Ապոլիոն Ռիգորանք առ գէսպան 'ի
նախնի հաւանայեցուցն սովորութենէ անցեալ
ասի առ Բիւզանդացիս և առ Վենետիկեցիս
և առ Օսմանեանս: Այլ առ յետնոցս այժմ
պարտաճանին նէին ընդհանրոյ սովորութիւն
պահի. որ խանիսա օրէն էր և բնախարան
կարգէր նոցա յԷնլէի խան, և առնէիս յարբ-
տանաւոր:

Յայնմ ժամանակի թագաւորք և իշխանք արևելից եկեալ զմիմեանսք առնէին 'ի պատուել զՄէհէմմէտ արքայ թղթովք խնդակցութեան և 'ի շահել զբարեկամութիւն նորին. յորոց միջի գլխաւորքն էին Շահրուխ որդի Լէնկթիմուրայ, Գարա Եուսուֆ արքայ Թիւրքմէնաց, կայսերք Բիւզանդիոյ և Տրապիզոնի, և իշխանք աշխարհացն Հայոց, Վրաց, և Աղուանից:

Սակայն յարևմուտս Վահք և Մաճառք գլուխ ամբարձեալ ընդդէմ Օսմանեանց՝ ձգեցին ածին զարքայ մինչև 'ի Ռուսճուգ, և 'ի պարտութիւն մատնեալ առաջի նորա՝ խնդրեցին զխաղաղութիւն: Յայնժամ կանգնեաց Մէհէմմէտ մերձ 'ի Ռուսճուգ զամուրն Երկէոյ կամ Ճուրճով: Ղորոգեաց և զայլ բերդս այս, կարգեաց քաղաքապետս Նիկոպոլեայ զիշխանն Զմիւռնիոյ զՃիւնէյտ, և յետ պատերազմաց խիզ և յաղթութեանց զորս տարաւ 'ի սահմանս Մաճառաց՝ դարձաւ յԱթիա, և հանդարտեաց զվէճս սահմանակից իշխանացն Սիմոպայ, Գատէմուռնեայ, Երզինկայի և Ճանիկու յամին 1420:

Իբրև գառնայր գայր Մէհէմմէտ արքայ 'ի Պրուսա, պատահեցաւ տոհմի միոյ Թաթարաց մնացելոց 'ի կողմանսն յայնոսիկ 'ի ժամանակաց անտի արշաւանացն Թիմուրայ: Եհարց Մէհէմմէտ եթէ ո՞յք ոմանք եցեն, և ո՞ գլուխ նոցին.

և նոքա ասեն. Թամիարք եկին՝ի տունն Սամարիանց, և իշխանն մեր Մենեմեպէյ չէ ասա, այլ երիթեալ է՝ի հարսանիս ուրեք։ «Այսպէս ուրեմն, ասաց Մէհէմմէտ, մինչ ես՝ի պատերազմ երանեմ, իշխանքս այսպիսի Թամիարք՝ի ինչոցս հարսանեաց պարապեն, և չերեսին իսկ յիմաստ դրան. արիք անցէք յԵրուսաղէմ»։ Եւ Մենեմեպէյ գաղիեալ ետուաքն հանդերձ մինչև՝ի Փիլիպէ, հիմնեաց անդ քաղաք, որ կոչեցաւ Թամիար պաղարի։

Ընդ այն ժամանակս վասնզ մեծ՝ի վերայ կայր տէրութեան Օսմանեանց յերեսաց ազանդոյ ուրումն Պէօրքլիանէ Մուսաֆայի, և այն՝ի սպրանաց Սիմաէլա օղլու Պէարէատին օրէնդիտին։

Այս Պէարէատին դատաւոր զօրաց և կուսակից ազգայրդեան Մուսայի՝ զինեն խորտակման ներին առաքեալ էր՝ի Մէհէմմէտայ՝ի Վիկիա, և անտի փախուցեալ հեռանէր խորհէրնորդութեամբ ազանդոյ պատճառանոք՝ի ձեռս բերել զաթոռն ազգութեան։

Ի այն վախճան ընտրեաց իւր դորձի զինեն Պէօրքլիանէ Մուսաֆա, որում աշակերտք ներսն Տէտէ սուլթան կոչէին, և ընդ նմա զուրացող հրեայն զԴորլադ Հուսային Բէմալ։ Եւ սոքա՝ի գլուխ անցեալ տէրութեանց բազմաց, ընդ ամենայն տեղիս քարոզէին նոր հին

վարդապետութիւն, ուսուցանելով
զաղքատութիւն և զհաստատութիւն
ընչից և պատուոյ, և նզովելով զայնո-
սիկ ոչք ոչ ատուածապաշտս հաստա-
տեցին զքրիստոնեայս. և եղև թիւ աշա-
կերտաց նոցին իբրու վեց հազար ա-
րանց։

Զօրավարք Մէհէմմէտայ արքայի
մի անգամ և երկիցս հարան 'ի նոցանէ,
մինչև առաքեաց արքայ 'ի վերայ խե-
ռելոցն զորդի իւր զՄուրատ երկրատա-
ստանամեայ զկուսակալն Աշմանոյ, և ընդ
նմին զմեծ վէզիրն իւր զՊայէզիտ բազ-
մութեամբ ասիացի և եւրոպացի զօրաց։
Որոց մարտ սաստիկ տուեալ ընդ ա-
զանդաւորացն 'ի բուն խակ 'ի կաղաղա
նոցին 'ի Գարատուրուն առ Զմիւռ-
նաւ, զերի կալան ընդ այլոց բազմաց և
զառաջնորդ նոցին զՊէօրքիւՃէ Մուս-
դաֆա, և բազմապատիկ կամանօք ոչ
կարացին դարձուցանել զնա յաղան-
դոյն։

Եւ թէպէտ մահուամբ նորին ակա-
ռայսն աշակերտք նորա, սակայն ընդ-
երկար ժամանակս համբաւէր 'ի մէջ
նանրահաւատից՝ եթէ ոչ մեռ էր դեռ ևս
Մուսդաֆա, և որպէս թէ յանմահից
ոք էր։

Յետ այնորիկ Պայէզիտ փաշա խոր-
ամանէալ և զերիս հազար ազանդակիցս
Դորլաղ Քէմանլին, զնա ևս եհան 'ի կա-
խաղան, և աճապարեաց յԵւրոպա, ուր

ամենայն չարութեամբ պատերազմեն Պէտրէսոսին յոլով կուսակցաք զնոյն ազգեալ քարոզէր։ Եւ խորտակեալ զբոլոր նորին առ Սէրէդ քաղաքաւ, կալաւ և զնա ինքն զՊէտրէսոսին և ածէ առ արքայ։ Ընդ առաջի աւագանեացն և գիտնականաց կշռանեալ արքային զնառնարարն՝ ըստ վճռոյ գենոսէսին գատապարտեաց զնա 'ի կախաղան յամին 1421։

Զհետ աւուրց ինչ յարեաւ միւս ոմն Տիւզմէ Մուսդաֆա անուն, որ ասէր զանձնէն՝ թէ Մուսդաֆայն էր որդի արքային Պայէզիտայ անյայտացեալն 'ի պատերազմին առ Ընկիւրաւ, և որպէս ելիցագոյն քան զՄէհէմմէտ՝ օրինաւոր ժառանգ Հայրենի աթոռոյն։ Եւ զբազում առ ինքն ոչ միայն ամբոխս բազում, այլ և զՃիւնէյտ, և զորդիս Թիմուրդաշայ, և զԷրզէնոս, և զայլս յաւագ որեալս։

1 Բուլգանդայոց պատմիչքն հաստատեն՝ թէ ճշմարտիւ այս այն Մուսդաֆա էր որդի արքային Պայէզիտայ. և յՕսմանէանց անփի 'նէէրին 'ի ասն խորթիւ է, որ այլ որ էին նորա՝ ձերբէն ամենեքին։ Սակայն անանուանս քննողաց Բուլգարաց արդարանալ առաջնոցն բան, նախ՝ զի արդարդոյն Մուսդաֆայի և ոչ դիանին անգամ գպաս 'ի ճակատուն գէզուլ առ Ընկիւրաս. երբեմն՝ զի Մէհէմմէտ արդայ քոյր ունի խլաս զգուշաւոր պահպանութեանն Մուսդաֆայի առ

Եվ ընդդէմ նորա Մէհէմէտ արքայ, և մերձ 'ի Թեսաղոնիկ տարեալ պատերազմիւն՝ ցրուեաց զնիզակակից զօրանոցին զՎլահս։ Մուրատ և Ձիւնէյտ տակաւուք ոմանք ապատան ելեն 'ի քաղաքն. և զի Թեսաղոնիկ 'ի ձեռս Յունաց էր յայնժամ, դեսպանս առաքեալ արքայ Մէհէմէտ խնդրէր 'ի կայսերէն տալ 'ի ձեռս իւր զքաղաքն։ Իսկ Մանուէլն կայսեր քաղցրութեամբ և Ճարտար բանիւք առաջի արարեալ նոցա զպարտս անդրդժելի հաստատութեան առ ապատանեալսն 'ի գթութիւն իւր, խոստացաւ երդմամբ չամի՝ ոչ երբէք արձակել զՄուրատ և զՁիւնէյտ յարգելանէ՝ յոր արկից ասէր զնոսա անդ։

Հաւանեցաւ և Մէհէմէտ ընդ պայմանն, և առաքէր ամի ամի երիս հարիւր հազար փոխս 'ի դարման արգելականացն։

Այս 'ի պատիժ պատուհասի ար-

էյուէր Յունաց. և երբոր՝ գէր ուշ գունոպէյտ ոմանք էին որ հարուածէցան գէնէպ առանն։

1 Փոշ իմ ապՃէ ժամանակին ասէլի էր դան գայժոս գահէլան Օսմանէանց. ասէ որոյ և 300,000 քոշ հաւասարէին 30,000 Ինէպէլեան ասէոյ, հաշուէալ զսոկին որպէս զուգակշիռս յայնժամ գան քոշոյ իմ էրիւոց գերմանական ֆլորինաց։

քային Վլատաց, որ ձեռնտու լեալ էր առաքելութեանն Մուսադաֆայի, ապաստակեաց յերկիր Նորա, և գարձաւ յԱնիա ընդ Ճանապարհ Կոստանդնուպօլսոյ։

Բազում պատիւս մեծարանաց եցոյց նմա կայսրն Մանուէլ, ընդ առաջ ելեալ նմա բազմութեամբ առագանեոյն մինչև 'ի Պէշիքգաշ, և ուղեկից լեալ մինչև յԻսակիւսարը, ուստի գարձաւ 'ի Բիւզանդիոն. և Մէհէմմէտ գնաց 'ի Նիկոմիդիա անդորրացեալ ոգւով յերկիրս Մուսադաֆայի։

Իսկ զմիւս եղբայրն իւր զԳասրմ անդէն 'ի ժամ թագաւորելոյն իւրոյ առեալ 'ի կայսերէն և կուրացուցեալ էր, և 'ի կալուած բնակութեան սահմանեալ նմա զքաղաքն Ադիանապ [1]։

Ի գալ միւսոյ գարնանոյն վերստին գարձ արար Մէհէմմէտ ազգայ յԱդրիանուպօլիս. և զՃանապարհայն յետ երկից աւուրց հարեալ 'ի կամուրջն՝ անկաւ յերիվարէն։

Երբև եռեալ թէ մեռանի, կոչեաց զընդհանուրսն՝ վերլրն իւր զքաջն Պայէզիտ, և յանձն արար նմա իշխանով զոր-

1 Ադրիանդէն Բիւզանդայի՝ էրնէ և այլ էղիայր արքայի ընդ Գոսրմայ ի յայր 'ի Կոստանդնուպօլիս, որ ապա հրդեալ էղեալ երիս տարի։

գին իւր զՄուրատ, որ յայնժամ կուսակալէր յԱմասիա։ Պատուիրեաց թագաւորեցուցանել զնա զՀետ իւր, այլ զերիսանին զկրոսերագոյնս յորդւոց իւրոց աւանդել 'ի պահ զգուշութեան կայսեր Յունաց, զի ապրեսցին յերեսաց եղբօրն իւրեանց երիցու։

Ի վաղիւ անդր երևեցաւ դարձեալ ազգայ զօրացն իւրոց, որք 'ի մի բերան աղօթս և մաղթանս արարին վասն կենաց նորուն։ Այլ նա 'ի միւսում աւուրն 'ի կրկնել կամեցուածին անբարբառ եղեալ՝ ընդ երեկս վախճանեցաւ։

Խորհուրդ կալան վէզիրք իւր Խալիհիմ և Պայէզիտ թագուն պահել զմահ ազգայի մինչև ցմատաւորել ազգայորդւոյն Մուրատայ 'ի Պրուսա։ Արձակեցին վաղվաղակի առ նա սուրհանդակ մի յԱմասիա, և ինքեանք հնարեցան ըստ հանապազորդ սովորութեան յատեան խորհրդոյ ժողովել առ ազգայի։

Խնամ կալան արձակել զզօրան կիսով չափ յԱսիա, զի նոքօք զօրացի կոչին նորոյ թագաւորին. և ասէին ցնոսա՝ եթէ կամք են ազգայի արշաւան դնել յասիակողմն։ Այլ ենիչէրիք ապընդէին առնանել նախ զազգայ, և խմանալ թէ կենդանի իցէ, և ապա մեկնեսցուք ասէին։

Ի զուր համոզիչք լինէին նոցա վէզիրքն եթէ բնաւ և խլրատելն իսկ զար-

քայ 'ի ժամուն յաւելու զգաւառորա. և թէ այդ խակ երկմտել խրատանց ընդ կենդանութիւն թագաւորին և թէ լուր ելցի յունկն արքայի՝ երագեցոյ անշուշտ մահ նորա։ Ապա 'ի տագնապ անհնարին պաշարեալք՝ այսպիսի խնդիր հնարեցան 'ի ձեռն ճարտար բժշկի ուրուն որ կոչէր Քիւրոս Իւզէն։

Բազմեցուցին զարքայ խրովք մեծաշուք զգեստուքն 'ի վերնատան անդ 'ի գահոյս, և մի ոմն 'ի սպասաւորացն նորա կացեալ 'ի թիկանց կուսէ գիսկանն՝ երբէք երբէք շարժէր զմեզանիս մուշտակի արքային։ Պատուհանք վերնատանն փակեալ էին. զի ազդ եղեալ էր զօրականին թէ ըստ բանի բժշկացն՝ բախտուն օգոյ մահաբեր էր թագաւորին։ Այսպէս անցին ենիշերիք և սպայք ընդ պատուհանիքն՝ տեսանելով ընդ ապակիս զարքայ 'ի գահոյս նստեալ 'ի մեծան և զարժուն ձեռին նրբու յողջունատուութիւն նոցա. և այնու շատացեալ՝ սկսան 'ի ձայն բարձր մաղթել թագաւորին երկայն աւուրս, և մեկնեցան յԱնիա։

Զհետ աւուրց քառասանից վախճանելոյն արքային՝ երբև գարձաւ սուրհանդակին արձակեալ յՄահիա, և ազդ արար զդալուստ արքայորդւոյն 'ի Պրուսա, համբաւեցաւ միանգամայն և մահ Մէհէմմէտայ. և թագաւորել որդւոյ նորին Մուրատայ 'ի Պրուսա, և գիսկին

Մէհէմմէտայ հանդերձ կիսով բանա-
կին ածաւ անդր [1]:

Բայց՝ ի զանազան երևելի շինուածոց՝ կատարեաց արքայ Մէհէմմէտ և զհոյակապ մզկիթն Աղբիանուպոլսոյ զՄուրատ Խանի, և զՊրուսային զհանմանուն, զորս հայրն իւր և եղբարք հիմնեալ էին: Եւ ապա կառոյց՝ ի Պրուսա զնոր, որ կոչեցաւ Եշիլ խանարէթ՝ սակս կանանչագոյն պարսկի յախճապակեացն՝ որովք յարկեալ էին յայնժամ գմբէթք և աշտարակք մզկիթին. և շինեցաւ Հարսապրագործ մզկիթն յանմ էրիս, և ծախեցան՝ ի նա քառասուն հազար ոսկիք: Հուպ՝ ի մզկիթս կառուցաւ ապա և հոյակապ շիրիմ նորին Մէհէմմէտայ հանդերձ ապքասանոցաւ:

Ար նոսա սկիզբն էրև և գիտութեանց և մասնաւորապէս ծաղկելոյ՝ ի սէրուեթեան Օսմանեանց, և արդեամբք ցուցաւ յամենայնի ընտիր և

1 Այս սովորութիւն՝ ի ծածուկ ունէլոյ զվախճանել թագաւորին փեսայի և այլ էրքէտ՝ ի պոպոնիանս, ի պոպճաս անհաճուսկ ծառանգելոյ զգահն յաջորդին՝ յորժամ՝ ի Բայէսայ գրանէր նա: Զնի ժամանակաց իբրև ոչ ևս առաւէլին արքայորդիք հոսակալուելեամբ՝ ի հնոսպան, այլ անդէն յորդանիս պահէին՝ ի խանանոցի անդ՝ ի վանդոին անուանեալ փեղոջ, դարբերաց ընդ կանգին և այն զգուշութիւն:

ազգիս բարք և սխորժակ Հելլէնի սուլ-
թան Մէհէմմէտին առաջնոյ, որմեռաւ
ամնոյ քառասուն և երկոց, Թագաւո-
րեալ ամս ութ, և ունէր որդիս հինգ,
որք են սուլթան Մուրատ, Մահմուտ,
Եուսուֆ, Մուսթաֆա, և Ահմէտ։ Եր-
կուքն 'ի սպանէ մեռեալ էին առ կեն-
դանութեամբ հօրն իւրեանոյ. և եր-
կուքն ապա վախճանեցան 'ի սարա-
ժամ մահուանէ։

ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱՏ Բ
ԷՊԻԻԼ ԽԱՅՐԱԹ

ՅՈՒԹԱՒՏԱՍՆ ամաց հասակին թագաւորեալ սորա, և ածեալ ընդ մէջ ըզսուսերն 'ի ձեռն Պուխարի ծերունւոյն, իբրև կատարեաց զուխտ օրեայ սուգ մահու հօրն իւրոյ՝ արձակեաց շուրջանակի առ սահմանակից տէրութիւնսն գեսպանս, և նորոգեաց զդաշինսն որ ընդ հայր իւր և ընդ նոսա։ Ընդ իշխանին Գարամանայ հաստատեցաւ ուխտ բարեկամութեան, և ընդ արքային Մաճառաց Սիգիսմունդայ հնգամեայ դադարումն զինուց։

Մինչև հասեալ գեսպանացն Մուրատայ 'ի Կոստանդնուպոլիս, Մանուէլ կայսր առաքեալ ապա՝ պահանջէր 'ի Մուրատայ աւանդել 'ի ձեռս իւր զերկոսին եղբարսն ըստ պատուիրելոյ Մէհէմմէտայ. ապա թէ ոչ, արձակեմ ասէր զորդին Պայէզիտայ զՄուսդաֆա զբուն ժառանգ աթոռոյդ։ Եւ պատասխանի Պայէզիտ փոխան յանուն արքային՝ եթէ հակառակ է օրինաց մերոց տալ զորդիս մեր 'ի դատարակութիւն ընդ ձեռամբ քրիստոնէից. շատ լիցի կայսերդ բարեկամութիւն մեր։

Յայնժամ կայսրն ընդ հակառակս արքայի գնացեալ՝ առաքեաց ի հան յարդելանէն Լենոսի զՄուսաֆիա և զգ-ճիւնէյս տասն նաւուք. և Մուսաֆիա 'ի փոխարէնս ազատութեանն երդուա-լծողուլ 'ի կայսրն զԿէլիսօլու և զամ-նայն զծովեզերայսն 'ի հիւսիսակողմն Կոստանդնուպօլսոյ մինչև յերկիրն Վա-հաց։

Բնակիչքն Կէլիսօլեայ և մերձակայ վայրաց վաղ յարեցան 'ի Մուսաֆիա-այլ ոչ և ամրականքն։ Վասն որոյ ծո-ղեալ 'ի պաշարումն բերդին զնիզակա-կից զօրս Յունաց, ինքն յաճէր շուրջ զդաւառաւն և յաւելոյր զմիւս զօրաց խրոց օր ըստ օրէ։

Երբև ազդ եղեն իբրն առ Մուրատ արքայ, վերկրքն իւր Իպրահիմ և Ա-վազ փաշա յորդորեցին զնա առաքել ընդդէմ Տիւզմէ Մուսաֆային զքաջ ապարատեան ծերունի զՊայէզիտ, ընդ որոյ փառսն 'ի վաղուց հետէ մնային։ Յանձն էառ արին Պայէզիտ զխոնդն ոսկս հայրենի աշխարհին, և անց առ-կառաձեռն գնեցաւ ընդ Վոսփոր յԵւ-րոպա։ Եւ զօրաժողով լեալ անդէն ա-ռանց երթոյ երեսուն հազարաց՝ բանա-կեցաւ հանդէպ Ադրիանուպօլսոյ 'ի Հարիհարուա հովտին՝ որ կոչի Սազլը ուրկ։

Իսկ Մուսաֆիա երբև եկն Հակա-ռեցաւ և նա 'ի հանդիպոյ, ձայն եառ զ-

բոցն Մուրատայ՝ քաջ Ճանաչէլ զորի-
նաւոր ժառանգ ամիրայն Օսմանեանց,
և չիարիլ։ Եւ ահա անդէն վաղվաղա-
կի ամենայն զօրքն գունդագունդ ան-
ցին առ նա յայնկոյս, և Պայէզիտ և Ե-
ղբայրն իւր Հասցա ոչէր ձերբակալելոք
արկան 'ի շղթայս։

Անօրէնն ճիւնէյտ՝ որ յառնաց բազ-
մաց խեռայր ընդ Պայէզիտայ, հրամանն
ընկալաւ 'ի Մուսդաֆայէ, և էառ զե-
նուլ զարի զօրավարն առաջի աչաց իւ-
րոց չարաչար նախատանօք, այլ Համ-
զայի ընդհանուր զկնանն։

Ի լուր այսր յաղթութեան անձնա-
տուր եղեն և ամրականքն Կէլիպօլէայ 'ի
Մուդաֆա։ Այլ նա գրժեալ երդ-
մանն՝ խաբեաց զՅոյնս, և ոչինչ ոչ էառ
կայսերն։ Յայնժամ գիմեաց կայսրն
վերատին առ Մուրատ ազգայ, և խնդրէր
զարքեկամութիւն նորա. այլ զի նա յա-
մառեալ ամենեալ էր պահանջել միան-
գամայն զեղբարս ազգայի զորդիս Մէ-
հէմմէտայ, բանք իւր չեն զեն բնաւ լսել,
և ազգայ Մուրատ փոխանակ կայսերն
քարեկամութեան խնդրեաց զնեղզակակ-
ցութիւն Գենուացւոցն Փոռկիդեայ [1]։

Նոցին նաւուք վարձելովք ընդ յի-

1 Սոքա յամաց հէգէ ինքնիշխան քէրա-
դէրէն 'ի Մէլիքինէ կղզւոջ, և ցան ռեծ
էր նոցա 'ի հանդիպակաց լեռնէ անգի՝ յոր-
մէ դէպի ասպարէնամբ գաղնէր ընդէր։

սուն հազար ոսկւոյ մինչեւ պատրաստակը Մուրատ անցանել յԵւրոպա, ճանեալ զարքայն զՄուսդաֆա 'ի թըմբուքենէն՝ որով 'ի մեղկութիւն զառածանէր նա յԱդրիանուպոլիս, և անցոյց զնա բազմութեամբ զօրաց յԱսիա. և բանակեցան երկոքին կողմանքն մերձ 'ի Լամիսակ ատոմ և անուն Ուրուսպա գետոյ։

Մուրատ աղքայ ըստ խրատու որդւոյն Թիմուրդաշայ, որք էին Ալի, Ռամազ ոգի, Ուրուճ և Հաճի Իվազ, ազատեաց եհան 'ի բանտէ զՄիխալեանն Մէհէմմէտ, զի յորդորեաց զյառաջապահ գունդն Մուսդաֆայի՝ ըզհրամանն, որոց 'ի սկզբանէ հետէ Միխալեանք զօրավար կային նոցա, և օտարացուցանէ զնոսա 'ի Մուսդաֆայէ։

Ի դէպ ժամուն յրանդանց Մուսդաֆայի արիւն բազում հոսեալ զերիս առուրս, թէպէտ և յաւուրն չորրորդի դադարեաց, այլ մնաքն կարի յոյժ թաղկացեալ ակարացաւ։

Եւ իբրև լուան հրամանքն դիշերայն զանցին Մէհէմմէտայ որ յամին գետոյն կացեալ 'ի Հանեգիսոյ կոչէր յանուանէ զգիւղաւորս նոցին զԴուբիան, ըզԿիւմլիւ օղլու, և զորդիսն Էրբէնասի, ազմուկ մեծ յարուցեալ խուժեցին յայսկոյս առ էշխանն Իբրահանայ։

Զայն տեսեալ Իվազ փաշային՝ փութ փութեաց ուղարկեալ 'ի Մուս-

գաֆայէն և զՃիւնէյտ։ Ուստի ետ նա գիշերային զեղբայր նորին զՀամզա առանձին թղթով, յորում խոստանայր նմա զկուսակալութիւն Ալեպոյ՝ եթէ լքանիցէ զկողմն Տիզմէին։ Միւս ևս թուղթ առաքեալ առ Մուսդաֆա՝ իբր 'ի ցոյց խրատուն առ նա մեծերութեան ազգ առնէր նմա զգուշանալ անձին, զի Ճիւնէյտ միաբանեալ է ասէ ընդ իւր զբազումս 'ի զօրականէն, և խնդրէ մատնել զքեզ 'ի ձեռս Մուրատայ։

Եւ ոչ 'ի զուր ինչ պատահեաց գաւն. զի Ճիւնէյտ գիշերախառն անց գնաց Օսմանասուն հեծելովք յայնկոյս գետ ուղիղ 'ի գաւառն Ալեպոյ։ Եւ իբրև այդ եղև, 'ի յայտնել գաւառմանութեանն՝ զօրք Մուսդաֆայի ահագին խուճապմամբ 'ի փախուստ ածապարեցին. և ինքն իսկ Մուսդաֆա սակաւուք ոմամբք խուսափեալ անց 'ի Կէլիպօլու։

Ընդ դիմեաց Մուրատ զբազայ Օսմանքք մեծամեծ նաւուք գենուացւոց. և մինչ զօրք Մուսդաֆայի գեռ մարտնչէին ընդ Մուրատեանս, ինքն Մուսդաֆա փախեաւ յԱդրիանուպօլիս, և անտի յերկիրն Վլահաց։

Աւուրս երիս եկաց Մուրատ 'ի Կէլիպօլու. զամրականսն կոտորեաց, և զիշխանն գենուացւոց մեծարեաց յոյժ և ազատ կացոյց 'ի տրոց անտի սարեկանաց՝ զոր հատուցանէին գենուացիք

Օսմանեանց ոսկիս քանանեօմն հազար։ Ելա խաղաց գնաց յԱգրիանուպոլիս, և զինակիցս քաղաքին որ առ հասարակ 'ի ձայն ցնծութեան եղին նոքա ընդ առաջ՝ հրամիրեաց յարքունիս իւր 'ի մեծաձախ ինչոցս ուրախութեան։ Իսկ Մուրադիս մատնութեամբ խրոյն ձերբակալ եղեալ 'ի Դրզբազան՝ ածան առ Մուրատ, և նա հրամայեաց կախել զնա 'ի մի յաշտարակաց քաղաքին յամի 1422։

Իբրև եռեա կայսրն Մանուէլ՝ զի խորտակեցաւ նենգութիւն ամբաստութեան խրոյ Մուրատիս, ուղարկեաց գեսպանս արձակել զարձեալ առ Մուրատ, և զանձն անբասիր արարեալ՝ զամենայն զինեալս եղելոցն արկանէր զՊոյկիլիսաս, որ ոչ առանձեաց 'ի ձեռաս իւր զեզբարս արքայի։

Բայց Մուրատ բնաւ և ուրանալ անդամ չկամեցաւ զդեսպանսն, և կալեալ զնոսա 'ի գիպահոջ մինչև կազմեացէ զարտաքուստս զջրսն գիսել 'ի Կոստանդնուպոլիս, արձակեաց զնոսա յերուս, և զարտաքինս ասել կայսերս, թէ ահա ես ինքնին գլխովին գամ 'ի մոտս ոտս նոցա ուրախանալի։

Խաղաց գնաց 'ի Բիւզանդիոն քանանեհազար արամբք, և հեղեղաբար ազարեալ զամենայն շրջակայս թագաւորեալ քաղաքին, զքնոս հրդեհեալ, զանասունս կոտորեալ, և զմարդիկ 'ի գե-

բուլթիւն վարեալ՝ եկն պաշարեաց զքա-
ղաքն 'ի ցամաք կուսէ. և կանգնեալ ա-
մուր պատնէշ 'ի կողմն Դոմ գաւառ ա-
նուանեալ գրանն՝ սկսաւ հարկանել
զպարիսպն բարձունք մեծամեծք : Զի
էին 'ի բանակին աշտարակք փայտա-
շէնք բան բարձրութեան պարսպաց քա-
ղաքին՝ յերկամտապատ անիւս խարրա-
խեալք, և կառք գերանդաղէնք և կրիայք
անհամարք 'ի բազմութենէ : Եւ առ
յորդորագոյնս առնելոց զզօրսն քարոզ
կարգաց 'ի բանակին՝ եթէ քաղաքն ողջ
ոչն յաւար մատնեսցի նոցա :

Ընդ էր սեռանել զխիզախութիւն ա-
հագին բանակին, որք ելեալ զմիմեանսիք
արարեալ փութային յառ և յապուռ
փարթամութեանցն Յունաց :

Յայնժամ՝ և ծերունին Պուխարի Ի-
միր սուլթան եկն անդր՝ անցեալ 'ի գը-
լուխ հինգհարիւր տէրվիշաց, և ախտա-
բանան գուշակութեամբ հատատեաց՝
թէ 'ի քառասնորդի չորրորդի աւուր օ-
գոստոսի զհատարակ աւուրբ 'ի մերկա-
նալ խրոտմ զուսերն և 'ի գոչել առ
Աստուած երիցս անգամ, ինքնին հա-
ստատեսցին նրբև զՋուր պարիսպքն Բիւզան-
դիոնի :

Եկն ի հետ օրն այն, և Պուխարի հե-
ծեալ 'ի ջորւոջ առաջնորդէր ամենայն
բանակին առատրամարկ մինչև մօտ 'ի
պարիսպն : Եւ 'ի գոչել ընդ նոսա ա-
մենայն Օսմանեանց յերկինս 'ի մի ձայն

բարբառոյ, Թիւրանդացիք առ հասարակ 'ի ղէն ընթացեալք՝ մինչև կանայք և մանկունք անգամ 'ի պարիսպս անդր եկանէին, և փոխանակ սուսերաց մանգաղս, և փոխանակ սապարաց յատակս տակառաց 'ի գործ արկեալ կատաղաբար մարտնչէին։

Ընդդէմ վէշերաց և ամիրայից արխուռաքն կռուէին, և ընդդէմ սերմիշաց միայնակեացք. և ընդ գոչիւն աղաղակի Օսմանեանց խառն հնչեցեալ աղաղակ քաղաքացեացն, և շաչիւն նետից և շառաչիւն հրացինուց, զարհուրելի զգաստերացին գործէին։

Այն ինչ արեգակն 'ի մեռաս խոնարհէր, և տակաւին Յոյնք անյողդողդ արութեամբ մարտս եղեալ կռուէին, Օսմանեանք հուր հարին 'ի մանգղինս խրլեանց, և բարձեալ զգաշարուն մեկնեցան փոքր ինչ։

Քանզի լուր եհաս առ Մուրատ արքայ՝ թէ եղբայր նորա Մուսաֆա, որ մանուկ էր յայնժամ ուսոց երեքտասանից, ելեալ 'ի գահ նորին՝ բրեալ եալ է 'ի Նիկիա նենգակամութեամբ իշխանացն Գարամանոյ և Կէրմիանու։ Ամենայն էանց Մուրատ արքայ յԱսիա. և ընդ հասանել յառաջապահ զօրացն արքունի 'ի գրուեն Նիկիոյ՝ նոր վէզիրն Մուսաֆայի թաղէատին եհան զնա 'ի բազանեաց, և հեծուցեալ յեղիվարն՝ դարձաւ 'ի փախուստ։

Բայց Իշխան ոչ սակաւապիսի Մուրատ փաշայի կամեցաւ կալաւեալ զ'ի Մուրատայ, մեծամեծ խոստմունքք կալաւած զնոցայր Նորին 'ի բանակ անդր. և Մուրատ հրամայեաց կոխել զոյս և զբոլոր Մուսապէտս զիմանելոյ միոյ որ կայր հանդէպ քաղաքին, և զիսակին Նորա Լիազգեցաւ առ հօրն իւրում 'ի Պրուսա: Զկրտակալ ելն ապա և Թաղէոսն և յոչ յոչ կոտորեալ ապաւեաւ յաւի 1423։

Մինչդեռ զօրավարքն Մուրատայ Դիրուզ և որդին Էրքինոսի յոլովութիւնս առնէին յԱրբոպա, մին ընդդէմ Վլահայ, և միւսն ընդդէմ Յունայ և Առնաւուտայ, ինքն ոչոչայ խաղայ 'ի վերայ Խաֆէնտիարայ էշխանին Սինոպայ՝ որ ծիկահեալ էր զՄուրատ։ Այլ նա վաղ նուաճեալ յաղթեցէ՝ և թող 'ի նա զԴասգէմունդ, և զդուստր իւր խոստացաւ տալ նմա 'ի կնութիւն։

Յեկայնորդիկ կամեցեալ ոչոչ ինչ զիմել զմիս վէճիցս խրոց (որ էին երկքին որդիք Թիմուրգաշայ, և Խալլ, և Խալուսիմ), զՄեհմետ կարգեաց իշխան Կէրմիանու, զՄուրատ՝ կոչնեալն Ասիոյ, և զԱլի՝ իշխան Սարուխանայ։ Թշնամիք Խալլայ ոչխարանն էին զնանել առ ոչոչայ՝ որպէս թէ խորհէին գաւառանել զնա։ Յաւուր միում ըստ գիպաց իւրոց էին եղեալ ոչոչայի զնեն իւր'ի Թիկունս Նորին՝ խնդացաւ զի զրա-

հաւոր էր Իմաղ 'ի նեղբոյ զգեստուցն. Է հարց զնա, թէ զինչ այն ելցէ. և յա- սել Իմաղայ՝ Եթէ առ ահի զօրականին է, յաւելան կասկածանք 'ի միտս ար- քայի, և հրամայեաց կուրացուցանել զնա։ Այսպէս ճնաց մի միայն վէզիր Իպրահիմ փաշա։

Դարձ արարեալ Մուրատայ Ա դիմառաւելս՝ կատարեաց մեծաւ շք- քով զհարսանիս իւր ընդ դստեր Իշ- խանին Սինանայ. ապա և զհարսանիս երեցուն քերցն Իւրոց, զորոց զմին էառ 'ի կնութիւն Գասպարայ որդի Խաֆէն- տիարայ, զերկրորդն Գարագէ չէլէպի կուսակալ փոքուն Ասիոյ, որ ապա անկաւ 'ի պատերազմին Վառնայի, և զերրորդն Մահմուտ չէլէպի որդի Իպ- րահիմ փաշային։

Ի նմին ամի մեռաւ կայսրն Մա- նուէլ, և Մուրատ արքայ խաղաղու- թիւն խոստացաւ ընդ յաջորդի նորին Յովհաննու, պայմանաւ՝ զի զամենայն քաղաքս և զբերդսայս որ 'ի կողմն Սեաւ ծովու՝ թողցէ կայսրն 'ի ձեռս Օսմանեանց, և ամի ամի երեսուն հա- զար վենետիկեան ոսկիս հարկեացն նո- ցա։ Դեսպանս առաքեաց և առ նորա- պատակ արքայն Մաճառաց Սիգիսմունդ բարեսէր ընծայիւք ոսկեհուռն գիպա- կաց և կապերտոց և արծաթի անօթոց, և հաստատեաց զուլ առնել զինուց երկամեայ. և Սիգիսմունդ 'ի փոխա-

րէն ընծայեցին առաքեաց առ նա գի-
պակս, շուխայս, երիվարս վեց և ոս-
կիս ջրեքհարիւր։

Ընդ այն առուրս անհանդարտն Ճիւ-
նէյտ, որ փախուցեալ 'ի բանակէ Տիզ-
մէ Մուսաֆիային և անկեալ էր 'ի
Ջիւանիա, խաժամուժ զօրաք յարձա-
կեալ էր 'ի վերայ Լիշանին Ա յորմէ
և սպրեալ երկրին նորուն, և երթալով
երթայր և զօրանայր։

Առաքեաց Մուրատ 'ի վերայ նորա
զԽալիլ Եսիրշի ոգի զքեռայրն Պայէ-
զիտայ սպանելոյ 'ի Ճիւնէյտայ. և նա
յառաջեալ Ճակատուն 'ի գերութեան
վարեաց զերդայրն և զորդի մատնեցին։
Զայն զդայեալ Ճիւնէյտայ՝ ամենա-
ցաւ 'ի քերդն Խիսարա. և երբոր լուաւ
եղեալ այլ ևս զօրք առաքին 'ի Մուրա-
տայ 'ի վերայ իւր, յանձն արար զա-
մուրն Եղբօր իւրում Կրտսերոյ, և ինքն
գնացեալ առ Լիշանն Գարամանայ՝ ընդ-
կալաւ 'ի նմանէ յոգնականութիւն ոչ
ինչ աւելի քան զՀեծեալս հինգ հա-
րիւր, և դարձաւ եկն յԽիսարա, զոր
պաշարէր Հանզա ոգի Եղբայր Պայէզի-
տայ յիւրն հարկաւ։

Եմուտ Ճիւնէյտ հնարիւք յամրոցն,
և սկսաւ մարտս գնել սաստկապէս ընդ
պաշարիչսն։ Ա՛յլ յառաջել ազգայի
ընդ ծով 'ի վերայ ամրոցին զԼիշիանն
Գենուացւոց, երբոր եռեաս Ճիւնէյտ՝ զի
և Ներսակակից հինգ հարիւրքն Ղեկա-

հեալ վասրանջեցին 'ի նմանէ և անցին 'ի կողմն Թշնամեաց, երգմնի արար ըզ Խալիլ փաշա հնազանդել 'ի կեանս իւր, և անձնատուր եղև նմին։

Հանդա ակէ որ 'ի Ժամուն ՅԵվեռաս երթեալ էր, իբրև դարձաւ 'ի բանակ անդր և զգաց զեղեալն, արձակեաց գիշերայն գահիճս չորս 'ի տուն ՃԻՆԷյաց. և նոքա երթեալ խեղդամահ սատակեցին զՃԻՆԷյ ընտանեաքն հանգերձ մինչև ցեռ խոր 'ի քուն ննջէին, և զդլուխս նոցա առաքեցին առ Թագաւորն ՅԱՂԲԻՍՆԵՍՊՕԼԻՍ։

Յայնժամ հրամայեաց ապքայ 'ի մահ տալ և զՀանդա զեղբայր ՃԻՆԷյաց, և զԲԻԼԲԱ զորդի նորին, որ 'ի կալանս կային 'ի ԿԷԼԻՊՕԼՍ։ Եւ յամին 1425 ՉԷՆԷՑԱՒ տուին ՃԻՆԷյաց խառվարար մատնչի, որ զամս քսան ոչ գադարէր 'ի տարշնապէզոյ զԹագաւորս Օսմանեանց։

ԶԷրթեալ Մուրատ ապքայ 'ի բուռն Թշնամւոյն՝ անց ՅԱՂԽԱ, զի այլ արարցէ գաւառաց սէրուԹեանն և ամրացուցէ զնոսին։ Ի քաղաքին ԵՓԵՍՈՅ ընկալաւ զդեսպանս դաշնակից սէրուԹեանցն Վլահաց, Սերվաց, Յունաց, Գենուայեաց և այլոց, բաց 'ի Վենետկեցւոց. քանզի ոխացեալ էր ապքայ ընդդէմ նոցա յաղագս գնելոյ նոցին 'ի կայսերէն Յունաց զԹեսաղոնիկէ։

Ընդ այն ժամանակս բազմացեալ

էին յերուսաղէմ 'ի կողմանս Եւդոկիոյ և Ամասիոյ. որոց գլխաւորքն էին որդիք Ջոլոր Գէորգ Գօձա անուն Թիւրքմէնին։ Եօրկիւռ փաշա վասն մի գաստիարակն ազգայն՝ որ ունէր յայնժամ զկուսակալութիւն փոքուն Ամասիոյ, խոհական գաւով հրաւիրեաց զնոսա յԱմասիա, որպէս թէ կամիցի նոցին նիստակցութեամբ յառնել 'ի վերայ Թիւրքմէնացն բռնացելոց 'ի կողմանս ճանիկու։

Եւ որպէս զի գիւրաւ ձգեսցէ զարսն 'ի ծուղակ անդր՝ հեռացոյց յինքենէ զբոլոր իւր. կեղծեաց ինքն յԱմասիա զաօմութիւն, և զորդին իւր հանդերձ ընծայիւք արձակեաց ընդ առաջ նոցա 'ի Մարզուան՝ նեղուն հայցէր 'ի նոցանէ, զի չկարասցէ ինքնին պատուել զնոսա։ Իբրև եկին հասին նոքա ազգ շորեքհարիւր յԱմասիա, ինչպէս կարգեաց նոցին 'ի սան ուրեք. և 'ի խոր գիշերի մինչդեռ թմբեալ կային անշարժք 'ի քնոյ և յարբեցութենէ, Եօրկիւռ փաշա եհաս 'ի տեղին, կապեաց կաշկանդեաց զամենեսին զնոսա և արկ 'ի տուն բանտի, և զդուռն տանն հիւսեաց՝ հուր եհար և այրեաց զնոսա 'ի նեմս։ Ապա դիմեաց զօրաք 'ի բուն քնակութիւնս նոցին՝ յուարմի էառ զամենայն ինչս նոցա և զոչխարս անհամարս 'ի բազմութենէ։

Յաւուր եօթնեւտասնից զկնի հրդեհ հին իբրև դարձաւ Եօրկիւռ յԱմասիա, ան-

կաւ առ ոսս նորա պատաւ ուն կին, և հայցէր շնորհել ինքեան զդիակն որ-դւոյ իւրոյ, որքան գիպաց հիւանդալէր 'ի սան բանտին ընդ ջրեքհարիւր յե-լուզական, և ինքն չէր 'ի Թուոյ նոցա։ Երբեմն էառ զհրամանն, ապացաւ 'ի սուն անդր մայրն գորովագութ, և եգիտ 'ի մէջ ջրեքհարիւր գիսկանոց զորդեանն իւր. անկաւ 'ի վերայ նորա ողբողբմ կսկանեմամբ, և տեսեալ 'ի նմա զնշան կենդանութեան՝ առ սարսաւ զնա 'ի սուն, և Հարսաւր հեպրիք առաջնոյ-ցոյց զնա։

Այսպիսի ինն խորագիտութեամբ կալաւ Եօրկիւռ և զամենեն Գոհարդայսն 'ի ձեռաց Հայոէրոյ։ Զի որսա-ցեալ զմի ուն 'ի մոնրոնց Հայոէրոյ՝ խոսուտարով սաղ նմին 'ի կնութիւն զդուստր իւր, խրատ էառ զի հաւր հարց նէ 'ի հանիարանոցս և 'ի զինարանս ամ-բոցին. և նա արար այնպէս, և ամբա-կանքն անձնատուր եղեն։ Այսպէս հեա-րէր առնուլ և զբերդն Ճանիկու 'ի ձե-ռաց Հիւանէյին ոչէր։ Այս Հիւանէյին ինքնին բերեալ առ Եօրկիւռ զբանտաքս իւրոյ բերդին՝ բանտարգել եղև 'ի նը-մանէ 'ի Պրուսա, և անոր փոխուցեալ անկաւ առ նա ինքն Մուրատ արքայ, որ շնորհեաց նմա ընդ կենացն և զբը-գեշխութիւն մոյ 'ի նահանգաց Եւրո-պական մասին։

Ոչ ինչ ընդհատ Հոխարար վարեցաւ

Մուրատ արքայ և ընդ իշխանին Կէր-
միանու, որ յայլոց եկեալ էր նմին յԱ-
զրիանուպոլիս, և արքայական մեծա-
բանաւք պատուասիրեաց զնա։ Ապա ի-
շխանին անցեալոյ զանցելոյ քան զարքայ յա-
ռաստաձեռնութեան մնասին։ զի յան-
բան գանձուց անսի զոր ածեալն էր
ընդ իւր՝ այնչափ ինչ պարգևս շռայ-
լեաց գաղրոցաց և աղքատաց և որոց կար-
գեալ էին յարքայէ առաջնորդել նմա,
զի՛ի գարձին իւրում իբրև ի Հաս՛ի Կէ-
լիպօլիս՝ չգոյր նորա գրամ հատուցա-
նելոյ վասն անցեցեալ յայսմոյս։ վասն ո-
րոյ նամականին արձակեալ առ արքայ
յայսմ արար նմին զայսպիսի։ Ասեալ ար-
քային զիմաստնին ասէ։ «Գոհութիւն
երկնից, որ եառնէ մեզ զայրոյր զոմն՝ որ
ոչ միայն զիւրոյ երկրին զՀաս, այլև
զմերսն ծախեալ ապառէ»։ Սակայն
փութով առաքեաց առ նա յոլով գը-
րասն ըստ արժանեաց առողին և ա-
ռողի։

Յառաջն յայնմիկ յամին 1450
արքատեալ Թեսաղոնիկեցոց յԵրե-
սաց առաքելոյ Հեռանեանց,
որք գեռ ևս յարքանակեալ էին և՛ ի
վերայ Մահմատայ և առեալ զամենայն
ամենայն տեղիս, և ոչ ևս յուսացեալ՝ ի
ձեռնտուութիւն կայսերէ, վասնզի
էին գրաստքն իւրեանց՝ ի ձեռս Վե-
նետիկեցոց, և զՆեգրոպոնիկոս քաղաքն
զեղբայրն կայսերէ յուզակեալ
նախատանաւք՝ ի Թուրքանոն։

Ընդ որ զայրացեալ Մուրատայ արքայի՝ մերժեաց զհրեշտակութիւն Վենետկեցւոց. «Զթեսաղոնիկ վաղ ուրեմն առեալ էր, ասէ, հաւուն խնոյ Պայէզիտայ. և իմ իշխանութիւն էր պահանջել զայն 'ի Յունաց յորժամ և իցէ որպէս զիմ ժառանգութիւն հայրենի։ Ընդ զինէ իրաւունք իցեն փոանկացդ գնոց առնուլ զքաղաք այդպիսի»։

Այս խաղաց գնաց յԱդրիանուպոլսոյ 'ի Սկիպէ, և անտի արձակեաց 'ի պաշարումն Թեսաղոնիկեայ զՀանքաղէյ Հանդերձ զօրօք որ հարիւրապատիկ առաւել էին քան զմիւս բնակչացն, տակաւ որոյ և հազիւ գտանէր մնն մի այր պահեակ երկուց և երից մարտիկացայ 'ի վերայ պարսպին։

Զառաջինն յորդորէր զքաղաքացիսն երկիցս և երիցս՝ անձնատուր լինել, և երդնոյր ոչ ինչ առնել նոցա չեռա. այլ Վենետկեցիք անասցին ինչ ոչ, Թէպէտ և 'ի վերայ հասեալ գիտէին զսպառասպառ լքումն Յունաց։

Հրամայեաց Մուրատ քարոզ կարգալ 'ի բանակին, եթէ զքաղաք զհոգ երկրին եւեթ անձին պահեալ՝ զամենայն զքաղաքն բնակչաքն հանդերձ յաւար մատնէ զօրաց իւրոց։ Յայնժամ ամենեցին Օսմանեանք զպաշարումն քաղաքին սասկասէս յարևելից և յարևմտից, և սկսան սեղալ 'ի պարիսպս

անդր ապրափս նեռոց. մինչև ոչ կա-
բացեալ պաշարելոցն այլ եւ տակ ու-
նել 'ի պարսպին՝ հարկէին յեռս յեռս
խուսելով վանելը բռնաքարամբք զվեր-
ելեալսն ընդ սանդուղս. որպէս զի
բազումք Յովսանեանց չեւ անցեալ ըզ-
կէս սանդղոցն՝ տապաստ անկանէին
յերկիր, մինչև մի ոմն 'ի նոցանէ խրոխ-
տագոյն քան զայլսն՝ զսուրն կալեալ
յառաջնորդս իւր՝ տղոսկեցաւ էլ 'ի վերս.
Զայն տեսեալ քաղաքացոցն՝ շուտ
ապձնապաւ աղմկեալք խուսափէին.
Հանարէին այնպէս, եթէ առաւ պա-
ղիսպ քն ողջոյն։ Եւ յիրաւի խուժեցին
Յովսանեանք ընդ սանդուղսն ի ընդ խրա-
մաս, և լցան զեղան 'ի մէջ քաղաքին։

Յայնժամ սկիզբն եղև ահագնալուր
աղէտից քաղաքացոցն։ Յայնժամ այր
այր Յովսանեանց խլեալ զձիս որսկանս
խոյացեալք 'ի վերայ ազատց և կռնատց
խուճապելոց՝ զերիսն յարիշտակէին, և
խառն 'ի խուռն կապեալ զնոսա ընդ
միմեանս ածէին 'ի բանտակեալսն։ Ընդ
էր տեսանել զողորմ կոտորած ազգայոց
անմեղաց, և զպատահաւաչ բաժանումն
ծնողաց յորդեկաց։ Պղծեցան եկեղե-
ցիք, և սուսակոխ եղեն պատկերք սրբոց։
Պեղեցին զգերեզման սրբոյն Դեմետրի
պաշտպանի քաղաքին՝ յուսալով գտա-
նել 'ի նմա գանձ բազում, և կամելով
ապառել զանապատ աղխուր անուշա-
հոտ միւռոնին որ հոսէր 'ի սրատուա-
կան նշխարաց սրբոյն։

Ցեռ այնորիկ հոգացեալ Մուրատայ՝ զի մի 'ի սպառ անեմարդաբնակ լցցի քաղաքն, հրամայեաց գերեացն փրկանաւորելոց յիւրեանցն ազգականաց՝ դառնալ բնակել 'ի քաղաքին։ Զքաղաքացիսն յեկեղեցեացն կարգեաց 'ի մզկիթս, և զայլս քանդեալ՝ քարամբք նոցին շինեաց 'ի մէջ քաղաքին բաղանիս. իսկ զվանորայս կարգեաց յինչևսն կարաւանաց։

Եւ ինքն արձակեալ զԴարձէ փաշա 'ի սիրել Եանեա քաղաքի՝ զորոյ զբանաչիս բերեալ էին առ նա խշմանք երկրին, փութացաւ հասանել 'ի Կէլիսոլու, զոր հարկանէր 'ի ծովակոյմն կուսէ ծովակալն Վենետիկեցւոց Անդրէաս Մոչենիկոյ. և անդ Մուրատ արքայ խօսեցաւ ընդ Վենետիկեցիս 'ի խաղաղութիւն։

Ի նմին ամի, որպէս և յաւելումն, յաճախեցին յերուսաղէմն մասին սուք, արտաքսութիւնք և սատանութիւնք յոյժ. մեռան երկու եղբարքն արքայի Եուսուֆ և Մահմուտ, ետ և ծերունին Մէհէմմէտ Պուխարի, և վէզիրն Խաղ, և մեծ վէզիրն Խրամիմ, որոյ որդին Խալիլ կարաւ զսեղի նորա։

Այլ Մուրատ արքայ միխիթարեցաւ 'ի վերայ մահուան աւագ արանցն ծնընդեամբ որդւոյ իւրոյ Մէհէմմէտայ, որ կոչեցաւն Ֆաթիհ, յամին 1432, և մեծամեծ արութեամբքն զորս գործեաց

նա զկնի ժամանակաց յարևելս և յա-
րևմուտս՝ կարծէցուցց պատմագրաց իւ-
րուն գարու եմիէ այնմ ամի կանխա-
զեկոյց գուշակք լեալ ի ցեղն Հանգերձ
անՀաւոր սասանութիւնքն և բնական
խաւարմունք լուսաւորաց և երևոյթ
սաստկագիսաւորի, որ առ ծննդեանքն
նորա պատահեցին։

Մինչդեռ յԵրուսաղէմ էր տակաւին
Մուրատ արքայ, Վլատ Տրագուլ [1] ոմն
ազան զիշխանն Վլահաց զՏան և զեղ-
բայր նորին, և անց՝ի տեղի նորա։ Խոր-
տակեաց և զգօրս արքայի զարձակեալս
՝ի վերայ իւր. այլ ապա Հաստատեալ
զաՀմանեալ Հարկսն՝ եկաց ինաց յին-
խանութեան իւրում։

Իսկ արքայի գիմեալ յերկիրն Մա-
ՀառԱ՝ի Թրանսիլվանիա, որ է Էր-
մէլ, ասպատակ սիրեաց ընդ ամե-
նայն գաւառն։ Այլ Էրմն լուաւ զամ-
բառնալ արքային ՄաՀառաց Սիգիս-
մունդայ՝ի պատիս կայսերութեան, կա-
մեցեալ նորոգել ընդ նմա զուխտ բա-
րեկամութեանն՝ գեսպանս արս երկու
սասան Հանգերձ ընծայիւք առաքեաց
առ նա. և էին ընծայքն երկուսասան
բաժակք ոսկեղէնք զեղունք ոսկեով։
Եւ Սիգիսմունդ պատուեալ զնոսա

1 Այսպէս իսկ էր եալ սակս իւրոյ դիտակն
անգիտութեանն. զի Տրագուլ յայնդ՝ի
իւրքիստ Վլահաց ապրանոյ լսի։

արքայական ընծայիւք անդրէն դարձոյց առ Մուրատ։

Մուրատ արքայ էանց դարձեալ յԱխոս և դիմեաց 'ի վերայ իշխանին Գարամանայ, որ միւսանգամ գլուխ ամբառնայր ընդդէմ Օսմանեանց։ Էառ զքաղաքս նորին զՊէկշէհրի, զԱգշէհիր և զԻկոնիոն. և ապա 'ի խնդրոյ իշխանին և 'ի միջնորդելոյ կնոջ նորա քեռ Մուրատայ զինչեալ ընդ նմա 'ի հաշտութիւն՝ եւ 'ի նա վերադարձն զքաղաքն զայնոսիկ, և դարձ արար անդրէն յՆիւրատա 'ի պատուհասեալ զմեղապարտն Մահմատայ, և զիշխանին Սերբաց, զորս կարծէր հանգիստս և գրգռիչս իշխանին Գարամանայ յապստամբութիւն։

Գէորգ Պրանքովիչ իշխանն Սերբաց քանզի գիտայր Ճորտրելն զանձն իւր 'ի վերահաս վտանգէն, ապաչեալ զՄուրատ 'ի ձեռն դեսպանայ իւրոց, զի հաճեցի կատարել զհարանիս դատելն իւրոյ՝ զոր ասէր յառաջ իրատեցեալն էր արքայիւր 'ի կնութիւն. և արքայ լուաւ նմա։ Ա՛յլ երկիրն Մահմատայ ամենակոխ եղև յՕսմանեանց. զի Ալի փաշա որ զի Էրզէրումն բազմութիւնամբ հրամայեցեալ և նիզակակից զորաց Սերբաց և Վլահաց խառնայ մինչև 'ի Թրանսիլվանիա. էառ զՄէաւաշ, պաշարեաց զՍիպին, հրձիգ արար զաւանս Պրաշովայ. և զաւարս քարաւանն և հինգ ամսամտեալ շուրջ զդաւառսն՝ եօթնա-

նաստն հաղար գերիս խոզացոյց տա-
բաս ընդ իւր առ Մուրատ։

Զձմեռն զայն անցուցեալ յԱդրիա-
նուպոլիս 'ի խնջոյս հարսանեաց, գար-
նանի յամին 1438 սադրանաք Խնդ-
պէին խորհէր արքայ դիմել 'ի վերայ
աներոյն իւրոյ Թագաւորին Սերբաց,
և իշխանին Վլահաց։ Կոչեաց զերկո-
սեան առ ինքն. այլ Պրանքովիչ փախու-
ցեալ անկաւ առ արքայն Մաճառաց,
և Տրագուլ երթեալ առ արքայ՝ ար-
կաւ 'ի քաղաք աշտարակին 'ի Կելիպօլիս։
Ապա առեալ զերկոսին արդիս իւր 'ի
պատանեաց՝ հատատուցաւ անդրէն յԱշ-
խանութեան իւրում։

Յայնմ ժամանակի Խնդպէյ որ-
դի Էրէնոսի, և Օսման չէլէպի Թոռն
Թիմուրգաշայ առին պատերազմաւ զա-
մուրն Սէմէնտրէ. և մինչդեռ պատրաս-
տէին դիմել 'ի Նիկոպօլիս, ապդ էզև
նոցա յարձակուէին Մաճառաց, և զարձ-
ան ընդդէմ նոցա։ Ահագին էր պատ-
երազն, և սասիկ աւարն։ Յափրշ-
տակեցան մանկունք և աղջկունք Մա-
ճառաց այնչափ, մինչև զմի ազատին
փոխանակէին Օսմանեանք ընդ միոյ
հոլաթափի։

1 Մի էր 'ի մարդկաց անդի և պատմա-
գիրն Աշըգիաղլաղէ, որ ընդ հինգ գե-
ղեաց ուլինալ սահելի խարոցի, ասէ, առնուլ
գինս՝ քան զքառս հինգհարիւր։

Զ.Հետ երկոց ամաց Մէջիտ սէյ ըստուարագունդ բանակաւ անցանէր երկիրն Վլահաց 'ի Թրանսիլվանիա, և պաշարեաց զՄիսիրն. այլ յաղթեալ 'ի քաջ զօրավարէն Մաճառաց Յովհաննէ Հունիատայ [1] սպանաւ ընդ որդւոյ իւրում, և իւրքն հալածեցան մինչև անդր քան զԴանուբ: Յետ ոչ բազմաց էլ ընդդէմ Մաճառաց Շէհապէտտին փաշա ուղարկաւ. և ասէր նա խրոխտանօք՝ եթէ 'ի տեսել եթէ իւրոյ փակեզանն փախցէն թշնամիք հանդոյց 'ի հանդուցէ զաւուրս բազումս, որպէս ասէ Նէշրի: Այլ ինքն ձերբակալ եղև, Օսման սէյ և այլ զօրավարք կորովիք անկան 'ի Հակառուն տեղւոջ, և հինգ հազար Օսմանեանք վարեցան 'ի գերութիւն:

Ի միւսում ամին որ էր 1443, միաբանեցան Մաճառք, Լեհք, Սերբացիք, Վլահք և Գերմանացիք ընդդէմ Օսմանեանց՝առ աշնորդ Հանիսարիին ունելով զՊրանքովիչարքայ: Անցին ընդ Դանուբ, և հասին մինչև 'ի Սոֆիանդէ. և Յովհաննէս Հունիատ երկոտասան հազար ընտիր հեծելովք եհաս 'ի նեղուր եղև Հակառատնարտ մեծ, և անկան յՕսմանեանց աղք երկու հազար, ջրաք հազարք գերեցան, և առան զրոշք

1 Հունիէտ է սա և սա Օսմանեան Եանգօ անուանակոչուիր:

ին։ Ապա առեալ զՍոֆիա, դիմեցին քրիստոնեայքն 'ի Փիլիպպէ։

Հրամայեաց Մուրատ արքայ ցանկել առաջի նոցա զդրուշս անձուկ կըռնոցն որ կոչին Սուլու տէրպէնտ, և ըստ ջուր գետակին որ կոչէր Խլատի կամ Զատիցա՝ գիշերայն հեղուլ 'ի վերայ ձեռանն, զի սրտէոցի Հանդարտին առ հատարակ։ Այլ զօրք Թշնամեաց անցին ընդ առուոյսն, և հասեալ յերկիրն Բուլղարաց՝ նոքաք և ևս առուարացան։

Իբրև եկն եհաս 'ի գաւառն Եաբովաց՝ և արքայն Լեհաց Վլատիսլաւ, սկիզբն եղև պատերազմին, և Օսմանեանք 'ի պարտութիւն մատնեցան։ Գտարամ՝ պէյ, որ կոչմնորէտ էր եւրոպէան մասին, և Մահմուտ չէլէպի եղբայրն մեծի վեզիրին Խաղիլայ և քեռայրն Մուրատայ անկան 'ի գերութիւն։ և Հունիսս յաղթանակս առեալ տարաւ զնոսա յերկիր իւր։

Ի նոմին ժամանակի և իշխանն Գարամանայ սկսաւ դարձեալ զգլուխն իւր այս երրորդ անգամ, և տարաւակեաց 'ի քաղաքն Կոնիա, Ակիսրիա, Պուրսափատին, Սիվրիհիսար, Ագհիսար, Ագշէհիր, և Պէկշէհրի։ Եւ արքայ Մուրատ անցեալ յԱսիա, և ոտնակոխ արարեալ զքաղաքս Գարամանայ՝ զԻկոնիոն՝ և զԱրքենեկ և զայլսն, ապա դիմեաց զինքեան 'ի հաշտութիւն ընդ Գա-

բա Սուրբի անուն վէճերին գաղա-
մանաց, զի փութայր գառնալ անդրէն
Յերուսաղէմ ընդդէմ արշաւանին Մա-
հմատայ։

Ընդ քոյրն իւր կին Մահմատայ գե-
րի վարելոյ 'ի Մաճառս՝ ապատեալ մի-
նայր գալստեան արքային, զի ազա-
չեսցէ զնա խաղաղութիւն առնել ընդ
քրիստոնեայսն։ Եւ արքայ Մուրատ
խօսեցաւ 'ի հաշտութիւն ընդ իշխանս
Վրաց և Սերբաց, և ընդ արքային Մա-
ճառաց։ Փրկանաւորեաց զՄահմատ
էլէպի ընդ եօթանասուն հազար ոսկւոյ,
դարձոյցաւ Տրապոլ և առ Պրան-
քովէ զորդիս նոցին, զորս կուրացու-
ցեալ էր։ Եւ յարքայն Սերբաց զա-
մենայն վերկիրն նորա, եւ և զամրոցն
Սէմէնդրէ, և խոստացաւ թողուլ զեր-
կիրն Վրաց ոչինչ ընդ ձեռամբ ար-
քային Մաճառաց։ Զոյսոսիկ պայմանս
հաստատեաց արքայն Մաճառաց երդ-
մամբ յաւետապանին սուրբ (և ոչ 'ի սուրբ
խորհուրդն՝ որպէս պահանջէին Օսմա-
նեանք), և Մուրատերդուաւ 'ի կուրանին։

Ձի եւ կնքեալ դաշանցն՝ էանց գնաց
Մուրատ արքայ յԱթէնս։ Քանզի էառ
զսուրբ մահուան սիրելի որդւոյն իւրոյ
Աղայէսանայ յԱմասիա, և 'ի խորխո-
ցեալ առ վշտին, և թերեւս ապրեցեալ
յանբնդհատ պատերազմաց զորս մղէր
'ի քաւն և երից ամաց հետէ, և զ 'ի մոլ
հրամարեալ 'ի թագաւորութենէն։

Ալանդեաց զգաւառսն որդւոյ Խ-
բուամ Մէհէմմէտայ, որ էր յայնժամ
ամենց շրջակայսն. խնամակալ պե-
տութեանն կարգեաց զմեծ վէզիրն Խա-
լիլ փաշա, և գտաւոր զօրաց զօրէնքա-
գէսն Մուլլա Խիւսրէվ: Իսկ ինքն ամենց
գաղով քաղաքին՝ էառ ընդ իւր զԽա-
հապ պէյ և զՀամզա պէյ, և մեկնեցաւ
յամին 1444 'ի Մադնեսիա, պահեալ
իւր 'ի կալուածոց Համարի զկուսակա-
լութիւնս Մէնթէշէի, Սարուխանայ և
Այդընի:

Զարմ ժամանակի գաշանցն գուլ առ-
նելոյ զինուց՝ զորս պայմանեաց Վլա-
խաքաւ ընդ Մուրատայ՝ ասան ամբ
էին: Այլ չև անցեալ ասան աւուրց 'ի
վերայ՝ հասին գեսպանք յայլոց պե-
տութեանցն Եւրոպայս առ Վլատիսլաւ
արքայ Մաճառաց, որք ասէին եթէ
անոքոյ են գաղտնիք խորհրդութեան կը-
ուեալք 'ի նմանէ ընդ Օսմանեանս՝ ա-
ռանց հաւանութեան ամենեցուն իւ-
րեանց. քանզի հասարէին զՀրաժեշտն
Մուրատայ յամենայն իւրմէ զեպ ժա-
մանակ վանելոյ զՕսմանեանս յԵւրո-
պական սահմանաց: Յոլով սակս և ըղ-
պատճառանսն զոր պատճառէին 'ի
լուծումն երդմանն կռելոյ՝ խրատցն
հասարէին: Սակայն իրր վերոյն պատրա-
ստեալք 'ի պատերազմ խաչակիրքն Մա-
ճառք, Լեհք և Վլահք՝ խորհեցան գնա-
ցին բուռն զօրութեամբ, և յաղթու-

թիւոն ինչ մնանուն ասրեալ 'ի վերայ Օսմանեանց՝ եկին հասին մինչև 'ի Վառնա։ Ընդ առին ներքս զահագին զուրն, եթէ արքայ Մուրատ քան ազաչանաց խրոցն անդրէն 'ի ձեռն առեալ զանձ կառավարութեան աշխարհին՝ գիտեալ գայ զայրագին յԱխոց արանքք իրբ քառասուն հազարաւ, և անցեալ նա։ ուք Գնեռացոց ընդ Վարդար՝ ոչինչ հեռի է 'ի Վառնայէ քան զքայլս չորեքհազար։

Ճանաչեցան կարգեցան կողմանքն երկոքին առ քաղաքաւն։ Ի բանակի անդ քրիստոնէից Մաձառքն և Վլահք յաջմէ և յահեկէ թեւս կարգեին նոցա՝ 'ի միջի ունելով հինգհարիւր հեծելով զարքայն իւրեանց զՎլատիսլաւ։ և 'ի թիկունց կուսէ կային Լեհացիք, և յառաջոյ նոցա սայլք և կահք և թընդանոթք։ Իսկ աջուստ թեւի բանակին Օսմանեանց հրամայէր կողմնապետն եւրոպէան, ճանաչին սահմանին։ և Մուրատ արքայ հանդերձ ենիչէրիաքն 'ի միջավայրին կայր՝ իրամ ցցապատնէշ ունելով առաջի, և անդ տեսանիր երկոքինագին քրիստոնէից հարեալ 'ի ձոգ բարձր՝ 'ի յանդիմանութիւն նոցա։ Իսկ յետուստ բանակին կային ուղղաբանանքն հանդերձ կարգաւորաւ։

Ինքին պահս հոգին ուժգին շնչեալ հերձուածք զդրօշս Մաձառաց, որով ոչ սակաւ լքանէին քրիստոնեայք։

Ալ Հռոմիսա, որ հոգին էրգոգցես ամենայն բանակին, գնեցրաս էզեալ խրովքն վանեաց զկոչնապետն Ամոց զԳարաձա, և Վասիք զրուեցին ըզգունդն Օսմանեանց զէրրոպեան, և հասին աւարով մինչև 'ի խորանն արքայի։

Այն ինչ կամէր Մուրատ արքայ 'ի վերուստ դառնալ, կարաս զանձից էրիսարն նորին կոչնապետն Գարաձա, և էրգնեցուցանէր զնա չլքուցանել զձեռս մարտիկին Օսմանեանց։ Եւ թէպէտ ինքն Գարաձա առ էառէր տարատ անկանէր 'ի սրոյ Մահմատայ, այլ Մուրատ ենթէրբէրն անցուցցուցէ զանձն կարաս անցէնատաս յորձանքեալ կատարեաց զանձնատուն թագաւորին Մահմատայ։ Երիսարն Վասիքայ ևս խոցեալ անկաւ, և ենթէրբին ամն Գոնա Խրզբր անուն հատեալ զգլուխն Վասիքայ և անցուցեալ 'ի սէր նիզակին՝ տարաւ առ Մուրատ։

Զայն իրրև էառս Հռոմիսա՝ սահապարեաց և նա Վասիքն հանդերձ 'ի վերուստ։ Եւ զի տարտամեալ էր օրն, յառաւօտուն պահս մինչև Մահմատ գէտ ակն կալեալ 'ի բանակին սէրազ մնալին Հռոմիսայ, ասեաւ 'ի վերայ նոցա Մուրատ և ընդարձակ անցոյց զրեա թէ զամենեսեան։

Ապա մինչև շուրջ յաձէր զանեկերվքն 'ի Հանկասան, և զարմանայր

զի չգտանէր 'ի խառն անդ գիա-
կանցն ալէխառն զբ, այլ ամենեքեան
երիտասարդք էին և պատանիք գեղա-
հասակք, եւ պատասխանի Ազատ ոչ
որ ընդ նոսա շրջէր՝ և ասէ. «Թէ գոյք
զբ 'ի գուսա ծերունի ալեւոր, ոչ աղ-
գէաք յայսպիսի յանդուգն գործ մի-
խէին»:

Երկերիւր և յիսուն այլք լցեալք
աւարաւ անկան 'ի ձեռս յաղթակա-
նացն, և Մուրատ զԱզատ ոչ թողեալ
հանդերձ աւերեալոյ առաքեաց առ
սուլթանն Եգիպտոսի, և ընդ նոսա քան
և հինգ գերիս ազատագէն զուսհաւորս.
զի ցուցցէ թէ զոսկեաց յաղթականն
գուսաւոր արանց։ Իսկ զդերեսն Վա-
սիրաւոյ եղեալ նախ 'ի մեզ՝ զի ան-
ապական պահեսցի, ապա առաքեաց
առ քաղաքապետն Պրուսայի ճիւ-
ղէ Ալի [1]. և նա առեալ զայն և լուա-
ցեալ և հագուցեալ 'ի սէգ նիզակի՝ յա-
ծեցոյց յաղթանակաւ ընդ փողոցս քա-
ղաքին։

Յետ այնորիկ յամին 1445 գարձ ա-
ռաքի Մուրատ ազգաց յառաջին հան-
գիստն իւր և 'ի զբօսանս 'ի Մագնեսիա.
այլ վաղ հարկեցաւ երկրորդ անգամ, և
բազմել երրորդ անգամ 'ի գահ Օս-

[1] Ի սորա անուան Իսլամբէյ ասի զ 'ի Բը-
ռանց փողոցին Կոստանդնուպօլսոյ՝ ճիւղդ
Ալի գոգոնաս։

մանեանց։ Զի ենիշէրիք յապտամբ-
բութիւն թեւակոխեալ՝ հրդեհեցին ըզ-
մեծ մասն Ադրիանուպօլսոյ, և էլեալ
բանակեցան արտաքոյ քաղաքին յահ և
'ի սասանութեան ամենայն բնակչաց նո-
րուն։ Սոքա ուր ուրեմն հանդարտե-
ցին՝ ընկալեալք զյաւելուած ռոճկին
իւրեանց կիսով փողոց. սակայն աւա-
գանին արձակեալ ապա առ Մուրատ՝
ապաչեցին զնա գալ դարձեալ առնուլ
զգաւազանն արքունի 'ի ձեռս իւր։ Եւ
նա եկեալ յԱդրիանուպօլիս, առա-
քեաց զարքայորդին զՄէհէմմէտ ապա-
տանի վերադարձեալ՝ կալ առ ժա-
մանակ մի ևս 'ի Մագնեսիա։

Ոչ ևս այլ եմոց Մուրատ'ի ձեռա-
նէ ոչ զսանձն թագաւորութեան, և
ոչ զսուսերն յաղթողական Պեղոպոն-
նեսեայ և աշխարհին Ռումելոյ։
Քանզի թէպէտ կայսրն Յովհաննէս բա-
նեկամութեամբ էր ընդ Մուրատայ,
գէթ առ երեսս, այլ եղբայրն նորա
Կոստանդին խլեաւ Պեղոպոնեսեայ
պարապեալ զերկիր իւր ընդդէմ Օս-
մանեանց, օր ըստ օրէ ամրանայր 'ի նեմա։

Խաղաց 'ի վերայ նորա Մուրատ արք-
քայ վեթասուն հազար զօրօք, և յետ բա-
զում պատգամաւորութեանց [1] իբրև

[1] Մի 'ի պապքամբերացն Յոանայ էր
պապանգիրն Քալիանդիզաս, զոր Մուրատ
արքայ Բանդարգէլ արար 'ի Սերբէ։

եաւս զի Կոստանդին չկամի անձնաառաջ լինել, պաշարեաց զքաղաքեալ կիրճս ցամաք կողոյն վասն առնելոյ հաղարաւ արանց, և յերրորդում առաջ յարձակեալ էառ զքաղաքն՝ ուստի փոխուցեալ էին Յոյնք։

Եմուտ ապա յԱքայիս. հրամիջ արար զԿորնթոս, և քանդեալ կործանեաց զՊատրաս. և իբրև եհաս կուսակալն Դարիոն ի և Ճոխ ուստրաս և բազմութեամբ վասն առնելոյ հարար զերկոցունս. Որոյ արքայ խաղաղութիւն արար ընդ Կոստանդինոսյաս պայմանաս, զի յայնմ հետէ Պերսոպոնեսս հարկատու լիցի Օսմանեանց։ Ամենեցուն և զՀարկս Բակուզացոյ՝ ի հինգ հարիւր ոսկւոյ զհարաւ. փոխանակ զինուս երկուս տուեալ էին նորա յօժանդակութիւն նուաստութեան խաչակրաց ընդդէմ Օսմանեանց։

Ամսոն խաղացոյց Մուրատ արքայ ընդ զօրս իւր դէպ ուղիղ յաշխարհն Աղուանուստայ յԱրքանիս. այլ զՀանտարարն հարկեցուս՝ ի պատերազմ ընդ հաշակերայն Հունիատայ՝ որ բանեալ զորս հարարս ընտիր ազատութեանց, և ասեն հարար ներքսակեալց զորոք Վլահաց և Դերբանեանցուց անցեալ էր ընդ Դանուբ, և հասեալ կայր՝ ի Դասիս։

Ընդ՝ ի նշանաւոր գաշանի Հանկուանցն կացին երկարութեամբ կողմանքն. և՝ ի խառնել մարտին՝ Օսմանեանք՝ ի մէջ փակեալ զմեծ գունդ մի Մաճառաց

կոտրեցին զնոսա։ Հատուածեցան և զոլորն Վրահայոց և անցին ընդ գրոշիւք Օսմանեանոց, և Հռոմիսա խնդրեին 'ի փա-խուստս գարձաւ։ Զերիս աւուրս անեաց մնացին, և անկան եօթնեւտասն հազարք 'ի Մահմետայ, խակ Օսմանեանոց կրկնապատիկ առաւել, սակայն և թիւ հա-մարոյ սպանեալ հարիւրեւ յիսուն հազար։

Յայնժամ սկիզբն եղև քանանեհինգա-մեայ պատերազմին Խաչնոցէր անուն խիստ մեծ։ Ազգաւոր կամ նախնոյն Ե-պիսոսի և Մակեդոնիոյ, որ յեօթն ա-մեայ հետէ զօրացեալ հարկանէր 'ի ան-զգա անգին յերկրի խրատ զզօրս Օսմա-նեանոց։

Մարտս ազգայ հարիւր հազար զ-ոչք յարուցեալ 'ի վերայ նորա՝ էառ զգլխաւոր քաղաքս նորին ամ զամն կնեն զամն երկուս։ Եւ յերկար զհետս ապն-դեալ նորին՝ խլեալ ոչ կարացին 'ի ձեռս բե-րել զնա ոգոքով և ապառնալիս, ամ-բառնալ 'ի ձառնդրուքիսն և 'ի ցաւս

1 Որդի էր սա առն փրիսքանէի ազգա-նիստոյ. որ 'ի մանկութեան գերի վարեալ յՕսմանեանց և 'ի նոցին կրօնս անեալ և վար-ժեալ, ապա յերեսնամեայ հասակին փախու-ցեալ էր 'ի Բանակին և Բանացեալ 'ի հայ-րենի աշխարհին յամուրն Պուրսայ, որ է Անգ-հիսար։ Այլ է և Սփանքար Բանակեալ, որ յաստուրց անգի Պայեզիդայ արքայի հարսնա-հարեր զհայասպան աշխարհ։

հիւանդութեան մեկնեցաւ յԱգրիա-
նուպոլիս յամին 1449։

Աղդր է հաս առ նա 'ի միւսում ա-
մի հանդերձապետն կայսերս Յունաց
Գրանդան գերապանութեամբ. զի Յով-
հաննէս կայսր մեռեալ էր անորդի, և
եղբարքն նորա Կոստանդին և Դեմետր
վիճէին զաթոռն։ Իսկ Մուրատ ար-
քայ զինչաւ 'ի խնդիր գերապանին, և հրա-
մայեաց զի Կոստանդին թագաւորեսցէ։

Ի նմին ամի կատարեաց անդէն և ըզ-
հարսանիս որդւոյ իւրոյ Մէհէմմէտայ
ածեալ նմա 'ի կնութիւն զդուստր իշ-
խանին Մարաշոյ. և հանդէս հարսա-
նեացն մեծաց ամիսս երիս. և ապա ար-
քայորդին Մէհէմմէտ դարձ արար 'ի
բնակութիւն իւր 'ի Մագնեսիա։

Եւ զինին ամենարեայ մի աւուրց մինչ
դեռ 'ի կղզւոջ ուրեք 'ի ծովակին Ա-
դրիանուպոլսոյ 'ի զբօսանս խնջոյից պա-
տրաստէր՝ հարեալ 'ի կամուրջն մեռաւ
արքայն Մուրատ ամաց քառասուն և
իւրանց, թագաւորեալ ամս երեսուն
մեծաւ փառաւք, արդարակրօտով քաջու-
թեամբ, և աշխարհաշէն մեծագործու-
թեամբ։

Եւ էին նորա որդիքն վեց. Ալայէդ-

1 Հոյակապ է յոյժ մանրիւն ձեռագրի-
խառուցեալս 'ի նմանէ յԱդրիանուպոլիս և
'ի Պրուսա, և համարիցն ձեռագրին յէրուե-
նէ, 'ի Պուլգարիա հիսար, և յայլ տեղիս։

ոյն, Մէհէմմէտ, Պիւյիւք Ահմէտ, Հաս-
ան, Օրխան Չէլէպի, և Քիւչիւք Ահ-
մէտ։ Ի սոցանէ բաց 'ի Մէհէմմէտայ
որ Մաղաւորեաց, չորեքին և բիւրապոյնք
ձեռն յառաջ քան զմահ հօրն խա-
րեանց. իսկ կրտսերն Քիւչիւք Ահմէտ
ոչ կից եղև հօրն խրոտմ, որպէս ա-
սեն Օսմանեանք. այն իսկ է՝ զի խեղ-
գամահ վՃարեցաւ 'ի կենաց, և ընդ հօրն
խրոտմ ածեալ Մաղեցաւ 'ի Պրուսա։

ՍՈՒԼԴԱՆ ՄԷՀԷՄՄԷՏ Բ

ԳԱԹԻՀ

Օ ԳՈՑԾ մահուան հօրն իւրոյ յետ
երկոցաւուրց առեալ զարքայութիւն Մե-
հէմմէտ՝ աճապարեաց հեծաւ ասէն
յերիվարն իւր և գոչեաց. «Որ զիսն սի-
րիցէն, հետևեալ զիս իմ եկեսցէն»։ Եւ
բազմութեամբ սուսերամերկ զօրակա-
նաց եհաս 'ի Պէլիսօրու։ Ընդ զաւուրս
երիս զամսն կալեալ՝ ապէր յԱ-
զիմանուսէրն զդաշտամնէն իւրմէ, և յու-
զն անկաւ երիթալ անդր. և աւագանին
հանդերձ զասուք զիմանականաց էլեալ
ետես ընդ առաջ մինչև 'ի հեռատեսն, ի-
ջին յերիվարաց իւրեանց, և յետ զը-
նարդոյ առաջն ելեալ հետն և լուին մինչև
մօտ 'ի քաղաքն՝ ամբարձին զձայնս իւ-
րեանց առ հասարակ և արտասուաւոր
կանչեցեալքն ողբացին զմահ Մուրատայ
արքայի։ Զնոյն օրինակ և արքայորդին
Մէհէմմէտ ինքեալ յերիվարէ իւրմէ
խառն ողբակից եղև ընդ նոսա, և ա-
պա վերամին հեծեալ՝ ածաւ մինչև յա-
պարանս արքունի։

Ի վաղիւն անդր բազմեալ հանդիսիս
յամենայն իշխանս ետես զի մեծ վէճիրն

խաղալ և միւս վեզիրն Խաղաղ սակաւ մի հեռագոյն կայնն յինքնէ, իբրու զի խիթայնն 'ի ցաւանանէ արքայի վասն երկիցս խլուցանելոյ նոցա զնա յաթոռոյ անտի, ասէ Մէհէմմէտ ցնեղբինաւեան. «Զի է զի 'ի բացեայ կան յինէն վեզիրքն իմ. կոչեա զնոսին, և ասա ցխալալ՝ զի վեզիր իմ է, և Խաղաղ փաշա որպէս կոչնասէս Ալիոյ կառաւելացէ զԹաղուանն հօր իմոյ 'ի Պուսայ»: Եւ նոքա անդէն մատուցեալ հասին բերցին զձեռս արքայի:

Ի նոյն աւուրս ընկալաւ բազում մարգարկութեամբ զդեսպանս Կոստանդնի կայսերն Յունաց՝ որ եկեալ էին խնդակից լինել Թագաւորելոյ նորա. և խոստացաւ ոչ միայն զուխտ բարեկամութեանն անլոյծ պահել, այլ և ամի ամի հատուցանել նմա երեքհարիւր հազար փոխ 'ի գարման Օրխանայ եղբօրորդւոյ Սիւլէյմանայ, որ կայր 'ի Կոստանդնուպօլիս: Եկին և յամենայն սահմանակից ազատութեանց դեսպանք յԱգրիանուպօլիս: Բակուզացիք ինքնակամ յաւելին 'ի հարկան զոր հարկէին՝ այլ ևս հինգհարիւր ոսկիս, և դեսպանք Հունիատայ հաստատեցին զինադադարութիւն ևս ամեայ: Ընդդէմ իշխանին Գարամանայ ելեալ հրամայեցաւ թշնամութիւն և պատերազմ. զի Իպրահիմ պէյ վտարանքեալ յՕսմանեանց՝ կամէր տիրել Կէրմիանու,

Այրենայ և Մէնթէշէի։ Խաղաց 'ի վերայ նորա Մէհէմմէտ արքայ. և Խպտահիմ աՀապարնայ խոստացաւ տալ նմա զբուսաբ իւր կնութեան, և իսնդրէր զՀաշտուԹիւն։

Դիւրաւ զիջանէր Մէհէմմէտ'ի խաղաղութիւն ընդ Գարամանայ, զի 'ի մեծ էգեալ էր լուծանել զբարեկամութիւնն ընդ Ցունայ։ Ի չարագէպ ժամու և կայրն գեսպանս արձակեալ առ Մէհէմմէտ՝ յանխորհուրդս սոսպէր հաստատանել զխաղաղութիւն ընդ Հիկն վասն գարամանոյ Օրխանին, և այն սպառնալեօք հանդերձ արձակելոյ յարգելանէն զՕրխան սոսի Մէհէմմէտայ։ Եւ Մէհէմմէտ առ ժամն թագուցեալ զչարչարանս՝ խոստացաւ կատարել զկամս կայսերս'ի ժամանել իւրում յԱդրիանուպոլիս։

Իբրև եհաս արքայ 'ի Պրուսա, Էնիշէրիք սկսին արարեալ պահանջէին 'ի նմանէ պարգևս. և նա զառաջինն չբերեալն արարեալ՝ ապա շնորհեաց նոցա տասն քսակս ոսկւոյ։ Սակայն յետ աւուրց կոչեցեալ զբարվարս նոցին՝ ուրեմն անուն էր Գազանէրն Տոզան, ապատակոծ և գանալոց արար զնա կշռամբ բանից, և արկ յիշխանութենէն [1]։

[1] Այս առաջին պարբն է զոր սմբոխիւն առնին ընկալան Էնիշէրիս 'ի նորընթիր ԹագաւորէՆ. որ Ն զնի ժամանակաց այնպէս

Ընդ անցեալ 'ի Կէլիբոլուս յամի 1452 հրամարտակ արար ընդ ամենայն տեղիս տէրութեան իւրոյ՝ գալ ժողովել առ իւր հազար ոստնագրաց և հիւսանց, և ածել կուտել 'ի քերան Վոսփորի կիր և առաղձ բազում 'ի կառոյցս ամրոցի մոյ յեւրոպէան էգէրս նեզուցին։

Ի լուր երանց զարհուրեալ կայսերս հանդերձ ամենայն քաղաքացեաքն՝ գնա պանս ազաչանաք առաքէր առ Մէհէմմէտ՝ ձեռնթափ լինել 'ի շինուածոյ անտի և շատանալ որովք հարկաց։ Եւ պատասխանի Մէհէմմէտ ասէր զայրացեալն և ասէ. «Վաղու ես կամք էին հրամն իմոյ Մուրատայ կանգնել յանցս Վոսփորի ամրոց հրաբ, զի հանարձակ լիցի մերոցն անցանել յայսկոյս. և զոր նա չկարաց կատարել՝ ահա ես կատարեցից։ Եւ մինչ չեցեմ իշխան կառուցանել յիմեամ երկրիս բերդս և ամուրս որչափ և կամիցիմ։ Երթայք ապա և ասասջիք ցանէրն ձեր, զի մի կարծեսցէ զիս երբեւ զհարս իմ. զոր նոքա չկարացին առնել, ինձ դիւրին է ամենեքեան։ և զոր նոքա չկամեցան երբէք, ես կամիմ ազատարար։ Երթէ այլ ես յղեսցէ ինձ դեսպան զոք, գիտասցէ զի կենդանեալն մորմէզերծ արարից զնա։»։

ԱՆՔԱՅ ԸՍՔ ԱՍԷՆ Ե ԸՍՔ ԲԱՆԱՌՔԷԱՆ. ՄԻՆՔ 'Ի ԱՊԱՌ ԲԱՐՅԱՌ 'Ի ՄԷՋՈՅ։

Զայս պատասխանեն ոպառնալոց ընկալեալ Կոստանդնի՝ սկսաւ 'ի ներքուստ ահիոյսուցանել զքաղաքն իւր, և համարարս կուտել 'ի ներքս։

Իսկ ապքայ Մէհէմմէտ յերիս ամսեան կատարեալ զամրոցն՝ զոր անուանեաց Պօղազ քէսէն՝, զարձաւ յԱդրիանու պոլիս 'ի հանդերձանս պաշարմանն Բիզանդիոյ. և առ խորհրդեալոյ զԴեմետր և զԹեոդոսիոս զիշխանսԿերպենեսեայ 'ի ձեռնտու լինելոյ կայսերն՝ արձակեաց 'ի վերայ նոցա զկարիմպէգն Դարիան։

Էր յայնմ ամ յԱդրիանու պոլիս ձուլիչ ոմն Օրպան անուն մանչաս յաղգէ Գեռ և փախուցեալ 'ի Կոստանդնուպոլսոյ. սա խոստացաւ Մէհէմմէտայ ձուլել զԹեզանսօթ մի խոշորագոյն պարսպարան Կոստանդնուպոլսոյ, և ձուլեաց իսկ զայն սահմանի մեծութեամբ. զի յայնութիւն բերանոյն էր, ասէն, քիչս երկոտասան։ Զփոյձ թնդանօթիս կամեցեալ առնել առ դրամբն Աղրիանուպոլսոյ՝ և անախորժեալ 'ի նայելոյ քարոզի ապ ապաք քարաքարացուցն զայնմանէ, զի մի յահագին ձայնէ անտի յանկարծակի զարհուրեալք ջարեաց ինչ պատահեսցեն։ Էր արդարև տակաւին երեւ որոտանայն արձակումն թնդանօթին.

1 Եւ՝ այն է որ արդ կոչի Ռուսիոյ հիւսիսը, և հանդիպէ ի Աստրախանայ հիւսիսին կանգնելոյ 'ի Պայէզիդայ արքայէ։

լցան փողոցք 'ի ծխոյ անտի նորա, և առաքն ընդ մեզն մի ոստուցեալ՝ խրեցաւ յերկիր ցիսրաւթիւն կանդնոյ միոյ։

Այնուհետև զցայդ և զբերեկ ամենայն խորհուրդք Մէհէմմէտայ զպաշարմանէն Բիւզանդիոնի յաճէին, և ընդ երեկս յանծանօթս երեալ զքէր 'ի փողոցս Ադրիանուպօլսոյ՝ խնդալ թէ զինչ բանք եղեն 'ի բերանս ամենայնի և զրուցանին։

Ի գիշերի միում առաքեալ կոչեաց առ իւր զԽալիլ փաշա. և նա քանզի ցանդ երկիւղն էր յաղբայէ ասէս կրկին անդամ արկանելոյ խրոյ զՄէհէմմէտ յաթոռոյն առ կենդանութեամբն հօրն նորին Մուրատայ, էառ ընդ իւր զի սկսաւ ասել, և տարեալ էգ առաս աղբայի՝ որ զդէցեալ զհանդերձն և նստեալ էր յանկողնի։ Եհարց զնա թագաւորն թէ զինչ եղէ այն։ Եւ նա ասէ. «Սովորութիւն է աւագորդեաց, զի տարսաժամ կոչեցեալք յաղբայէ՝ ոչ երբէք գասարկաձեռն երևին առաջի նորա. սակայն և այս ոչ իմ ինչ է, ապէր, այլ քո»։ Ասէ թագաւորն. «Զնե՛ն ինչ ինձ զէսոք այգոցիկ. զայսմ ինչ ևս թագաւորեսցի՛ 'ի քէն, զի օգնեսցես ինձ 'ի սիրել Կոստանդնուպօլսոյ»։ Պատասխանեաց առեալ Խալիլայ բան սրտի աղբայէն՝ ասէ. «Տէր Աստուած մեր, որ զաշխարհն Յունաց մեծաւ մասամբ եւ ընդ քո ձեռամբ, ոչ յաղագս ցի

անշուշտ և զմայր քաղաքաց նոցա մատնել 'ի ձեռս քո. և ամենայն ծառայք քո եղեալ զմիմեանս ապատանեն աներկրայ 'ի նուիրել զենչս և զկենս իւրեանց 'ի սէր քոյ։

Այդ յամին 1453 'ի սկզբան ամենայն փեղոսարի սկսաւ փոխադրութիւնն մեծի թագաւորութեան Յունաստանեայց 'ի Բիւզանդիոն։ Յիսուն զոյգք էին եղանցն որ ձգէին զայն, և ամք երկերիւր ասուի և անուի գնալով միտ դնէին չթիւրելոյ նորուն յաջ կամ յահեակ. և յիսուն այր բահիւք և փայտատոգ յառաջ ընթացք լինէին 'ի հարթել զճանապարհս և 'ի կապել զկամուրջս։ Եւ Դարանաս ոչ, որում յանձն էր ջուն այն, զամենայն երկիրն և զամուրսն ընդ լծով արկանէր Օսմանեանց, էր զոր խաղաղութեամբ, և էր զոր ուժգին զօրութեամբ։

Մինչդեռ Օսմանեանք յամենայն կողմանց Եւրոպայ և Ասիոյ խուռն գիմէին Յունաստանաւորս 'ի պատրաստութիւն մեծի պատերազմին, Յոյնք 'ի նեղքս 'ի Բիւզանդիոն փակեալք բազում այն էր զի զմիմեանս խուծանէին երկչոտակ խորհրդովք զկրաց եկեղեցոյ։ Զի ոմանք՝ որպէս և կայսրն ինքնին հանգերձ ամենայն վիճակաւորաք արքունի՝ քահանայիւք և ասպետաւագաք և ժողովրդովք հաճեալ էին ընդ միաբանութիւն եկեղեցոյն Յու-

նաց ընդ Լատինաց, որոյ միջնորդ ա-
ռաքեալ էր 'ի պապէն առաւ Ծիրանա-
ւորն Խիզորաս. և այն գոնեա յու-
սով օգնականութիւն գտանելոյ Յու-
նարացւոց 'ի վերջին աղէտն յոր պա-
տարեալ էին: Իսկ այլք, որպէս վանա-
հայրք և միանձունք առ հասարակ ընդ
պատրիարգին խրատուն Գենադէայ նը-
գովէին զդաւանութիւն որոյ եկեղե-
ցւոյ և զվարդապետութիւն որոյն
Թովմայի:

Ի սոցա կողմն էր և Ծովակաչն Յու-
նաց Ղուկաս Նոտարաս, որասէր. «Լաւ
է ինձ տեսանել յամենա քաղաքին ըզ-
փակեալն Օսմանեանց, քան թէ զնոյր
Ծիրանաւորացն Լատինաց»: Սմին խրի
և եկեղեցի որոյն Սոփիոյ, յորում
յ 12 աւուր գեկտեմբերի ընթերցեալ
էին Յոյնք զԹուղթ միաբանութեան,
լքեալ կայր ամայացեալ: Բազում ախ-
տաժէաք անհաղորդ մեռանէին սակս
միաբան լինելոյ խրատուն ընդ Լատի-
նացւոց, և միանձունք և կուսանք չկա-
մէին ընդունել զնորհուրդս 'ի քահա-
նայից՝ որք ոչ հակառակէին առաքե-
լական եկեղեցւոյ: Ա յաջմնակ
անցին աւուրք քառասնօրեայ պահոցն:

Ի վերջորդում աւուր ամենեան ա-
պրիլի էին ենդ ԱՐՀԷՄԷՍ որքայ
հանդէպ Կոստանդնուպօլսի երկերիւր
յիսունհազար զօրք. ենդ զնաւսն 'ի
վերայ բլրակի մոյ առաջի Էյուպ գա-

փոս անուանեալ գրանն. Հրամայեաց պաշարել զքաղաքն ընդ ամենայն ցամաքակողմն, և զմեծ Թեղանոցն զեռ զեալ ընդգէմ գրան արքոյն Ռոմանոսի, որ յայնմհետէ կոչեցաւ Դոմի գափու։ Յամէ երկու անցանէին 'ի ընուլ զանոցն, և եօթն անդամ յաւուրն հաշիւ արձակէին. այլ այն վայր պայթուցեալ յուսթերորդումն՝ սպան և զքաջ ձուլիչն Իւր զՕրպան։ Զեռ զեցան փոխանակ այնր այլ Թեղանոցք երկու ոչ յոյժ փոքունք քան զառաջինն, և այլք միջակք և մանունք 'ի կողմանս կողմանս պարսպին։ Կառուցան և աշտարակք շրջք շարժականք՝ ներքոյ և արտաքոյ պատեալք մորթովք եզանց և թանձր թաղեօք. թող զայլ մեքենայս և մանգլինս մանունս։ Հարիւր հազար հեծեալք կային յետ կուսակ բանակին. հարիւր հազարք յաջուստ թեկ զաջակողմն պարսպին պաշարեին մինչև ցդուռն Ոսկի անուանեալ, և յետուն հազարք 'ի ձախմէ զձախակողմն մինչև 'ի Վշաշէր։ Մէհէմմէտ արքայ հնգետասան հազար ենիչէրեօք 'ի միջավայրին կայր արձանացեալ. և Զաղնուս փաշա ընտիր ընտիր զօրօքն կայր 'ի բարձրաւանդակի ուրեք յետ կուսակ Ղալատայոյ հանդէպ Կոստանդնուպօլսոյ։

Տորմիզ Օսմանեանց որում առաջնորդէր Պալիա օղլու անուն ունի ուրացող

բուլպար [1], էր ընդ մեծ և ընդ փոքր
ջրերքհարիւր և քսան նաւուց հանդէս,
յորս էին ութուտասն նաւք մեծամեծք
երեքկարգեան թիւրք, և քառասուն
և ութ երիկարդեանք։

Ա յս հանդերձանք Օսմանեանց քա-
նապատիկ առաւել էին քան զՅունացն
պաշարելոց, որոց մեծ յոյս ապաստա-
նին 'ի Գենուացիսն էր յերեքհարիւր
կամ 'ի հինգհարիւր մարտիկս, որ ընդ ա-
ռաջնորդութեամբ Յուստինեանն Յով-
հաննու իշխանին Ղալատիոյ։ Եւ 'ի նա-
ւահանդստի անդ կային նաւք ջրերքա-
սասն, որք քան մեծի մասին էին Վե-
նետիկեցւոց և այլոց Եւրոպականաց։
Սակայն և ինքեանք Յոյնքն հինգհա-
զար զօրք խրեանց մեծաւ քաջութ-
թեամբ պատերազմէին. զկրակաձիսն պա-
ղատագին զցայգ ընուին փայտիւք, և զա-
կանահատս հուրբ վանէին 'ի բաց։ Ա յ-
բեցին յուշեակսն հրոյն զօրութեամբ։ [2]

1 Եւ զի սա ընտրագոյնն էր յայնմ յոյ-
բան 'ի Վոսֆորի անդ 'ի փեղուին որ կոչէր
Փիդալիա՝ ելն էր մարդիօք և համբարուք,
յայն սակս և փեղին յիւրանուն կոչեցաւ յայնմ
հետէ Պալիա Լիմանը, կամ Պալիա օղլու Լի-
մանը։

2 Համբաւէաւ հրոյն յուշեակին գիւղա-
սանդի պատահէաւ յԵօրնէրոդ քարու. այն
զնի հնգեպատանէրոդին խաֆանէաւն պէտ
նորին և յօրինուածք։ Կարծեալի է ոչ խա-

և զմեծ աշխարհակալն մանգլիսն Օս-
մանեանց, ընդ որ զարմացաւ և ինքն
Մէհէմմէտ արքայ։

Ի հնգեւասանեւրորդի աւուր ապրի-
լի նաւատորմն Օսմանեանց եկն խարբա-
խեցաւ 'ի Պէշիքդաշ։ Յետ աւուրց ինչ
երևեցան և նաւք հինգ, մին կայսերա-
կան, և չորքն գենուացիք հասեալք
'ի Փիռսէ յօգնութիւն պաշարելոցն։
Յայնժամ հարիւր և յիսուն նաւք Օս-
մանեանց հասուածեալք 'ի հանդիսին
կարգն զնուաս Յունաց 'ի նաւահան-
գիստն, և էզև 'ի տեղւոջն նաւամարտ
սաստիկ. զի Յոյնք զհասանուս զհուրն
կիրարկեան ամենակոր հանդերձ հոսէին 'ի
թշնամիս, և զնեաս և զնիզակս հանդոյն
սարսափոյ տեղային 'ի նոսա, և վա-
նէին առաջի իւրեանց։

Իբրև եռեւ յարմանց անսի արքայն
Մէհէմմէտ զգրուխ իւրոյն, այլ յայլ-
մէ էզև, և առ անհնարին պատնա-
թեանն կրճատելով զառաջնոսն իւր
մարտիկ 'ի կուշտ արարեալ երիվարին
յարձակեցաւ եռեւ առիւծարար 'ի
մէջ խորակուսակ ալեաց ծովուն իբր
'ի յարիշատակել զյաղթութիւնն 'ի Յու-
նաց։ Խուժեցին անկան զհետ նորա 'ի
ծովն և որ շուրջն կային զնոսաւ, և կա-

նոսդ ինչ էր այն քուրքին, նուրի և ծծմ-
բոյ. այլ ոչ զի զիրդ վառեր և յերբեմն ըմ-
խամ 'ի ջուրս՝ ի յայտ։

մէին հասանել ըմբռնել զնաւս թշնա-
մեացն՝ որ ոչ ինչ հեռագոյն էին 'ի ցա-
մաքէն քան զքարընկէց մի։ Ալ նոքա
վաղ մոմն յաղթանակաւք 'ի նաւահան-
գիստն, և ձգեցաւ անդրէն երկաթի
շղթայն 'ի դրանէն Ղալատիոյ, որ կոչի
Պալըզ փազարի, մինչև 'ի միւս գուն
Կոստանդնուպօլսոյ հասնիցուն։

Ի ցաւումն բարկութեան բորբոքեալ
ազգայն ընդ Պալթա օղլուն՝ կամէր առ-
նուլ զցաւսդ ատամկէ զնա. այլ
խոնարհեալ յաղաչանս ենիչէրեաց՝ շատ
հանգրեցաւ զառացուցանել զնա յեր-
կիր, և ինքնին իւրումն լանթա շամիեաց
նմա հարուածս հարիւր և նոյնչափ
վէրս։

Տեսեալ Խալիլ փաշային զքաջու-
թիւն Յունաց, և զկրկին ամրանալ նո-
ցա համբարօք կերակրոց՝ զոր նաւքն
ածին, հնարեցաւ հանդգնիր լինել ար-
քային՝ բառնալ զպաշարումն։ Առեալ
կազմեցաւ, և ընդդէմ կացին խորհրդ-
դոյն Զաղնուս փաշա, Մոլլա Մէհէմ-
մէտ Կիւրանի, և մեծ շէյխն Ազշէմեան-
սին՝ որ անդադար քաջալերէր կարդայր 'ի
բանակին և քաջալերէր զջրդս մարդա-

1 Կամ որպէս այլք ասեն, 'ի ծոփոց ան-
փո�ոնի պալատանն մինչև յայսմրոյն Ղա-
լատիոյ։ Եւ հասապատեալ էր, ասեն, ՇԸՇ-
Ի՝ 'ի ՀԷՐՈՅ ՓՈԽՓԱԼՈՅ՝ ԶԻ ԻՍՈՅՆԷ ՃԱՍՈՅՆ
ՆԵՐԵԱՍ ՁՈՍՐՈՅ։

ըհուբիաամբքն խրովք։ Ա՛յլ ի հաբ-
ցանել արքայի՝ թէ որով հնարիւք խոր-
հիցին խորտակել զառաւար շղթայս
նաւահանգստին առ ի մարտս գնելոյ
ընդ քաղաքին և ի ծովակողմն կուսէ,
շուարեալք լուցին։

Ընդէն վաղվաղակի եղեալ արքայ ըզ-
ժուարութիւնն. և նոյն խնդասիս ո-
գին՝ որով ընդ աչս ձիավարիչս, հա-
մարձակեաց զնա և ընդ ցամաք նաւա-
գնաց լինել, և ի Պէշկրդաշէ ի թիկանց
կուսէ Ղաբոգիոյ անցեալ նաւուք՝ ի
ծոց նաւահանգստին ելանել։ Երկուց
ժամուց ճանապարհ էր միջոցն, այլ
երկիրն անհարթ և խորաձորովք լի-
վասն որոյ հրամայեաց Մէհմէտ ճա-
նապարհ կազմել ասխատակեաց, և օծա-
նել զասխատակսն ճարպով եզանց և
խոյոց, զի գիւրաւ սահեսցին նաւքն ի
վերայ։

Եօթանասուն նաւք երկարգեանք
հանգերձ այլ ևս մեծամեծ նաւուք վա-
րեցան ի միում եւ թ գիշերի ընդ բլուրս
և ընդ ձորս ասխատեցն Վ ասիոյի ի նա-
ւահանգիստն հոլանալոյ առագաստիք
ի ձայն թմբկաց և փողոց. և ընդ լու-
սանալ առաւօտն մեծաւ ապշութեամբ
տեսանէին զարարարարքն զինանել նա-
ւուցն Օսմանեանց ի հանգիստոյ ի նա-
ւահանգիստ խրեանց հեռագիտակ։

Դիւրաւցին Յունանեան եղեալ ի
մտի ի միւսում գիշերին հրձիգ առնել

զեկամուտ նուաստ՝ մերձեցաւ առ նոս. իսկ Օսմանեանք որ արիւնն հրակոզութեամբ ճնային նոքա՝ ազգեալք կամեցան 'ի մատնութենէ այլոց Դենուացւոց՝ արձակեցին Մեղատիոմ մի մեծ 'ի վերայ նորա, որով խորտակեալ ընկզմեցաւ նաւն հարիւր և յիսուն ի տաղացի նաւատուէն, և Յուսանենանն ելեալ փոխատուութիւն 'ի լիւղ ապրեցաւ։

Իբրև այդ եղև հրամայեաց Մէհէմմէտ ազգայ, և կոչեցին կամուրջ կամ լաստ մեծ 'ի վերայ նաւուհանդատին դիրկս հինգ 'ի լայնութիւն, և հարիւր յերկայնութիւն, ասկառս մեծամեծս Հանիոք երկաթեաք ամրեալ ընդ միմեանս, և ասխատակս 'ի վերայ նոցին բնեալ։

Երեք եօթնեակք անցեալ էին 'ի վերայ պաշարմանն 'ի ցամաք կուսէ՝ յորժամ ամրեցաւ պաշարումն և 'ի ծովէ. և չէր հնչ գժուարին այնուհետև առնուլ զքաղաքն, զի և խրամատ մեծ բացեալ էր 'ի Դոմ գարմուն, և կործանեալ էին աշտարակք ջորք։ Բայց Մէհէմմէտ ապրեալ ասէր առ կայսրն զազգակից իւր զԽաֆիէտարտ օղլու ոչ իրրև գեղարն, այլ որպէս խորհրդակն բարեաց, և խոստանայր նոցա զանազանութիւն՝ եթէ յանձն առցէ հպատակել, և անդամին փրկանաւորել զանձն իւր և զիւրսն 'ի գառն գերութենէ։ Եւ պատասխանի կայսրն.

«Ընդանի թէ պահէր արքայ զխոստումն իւր իրրև զիւր նախնիս, և շատանայր արուք հարկաց եւեթ, և չպահանջէր զքաղաքս՝ յորոյ միջի յանձն առեալ եմ ես խնդրոյ հանդերձ մեռանել քան թէ անձնատուր լինել»։

Զայս պատասխանի առեալ Մէհմէտ մէտայ, կոչեաց 'ի մի վայր զամենայն զօրագլուխս իւր, և երդմամբ խոստացաւ մատնել նոցա յաւար զամենայն զքաղաքացիս և զինչս նոցին, և անձին զպարկեշտն և զչինուածս եւեթ պահել. և հնչեաց բանակին առ հասարակ 'ի ձայնէ ցնծութեան։

Յայնմ երեկոյի հրաման եղև լուսաւորութիւն առնել 'ի բանակին ընդ ծով և ընդ ցամաք 'ի նաւս և 'ի վրանս, և թուէր թէն քաղաքն ոչիցն պատեալ յահագին հրոյ։ Քաղաքացիքն այնպէս համարեցան զառաջինն՝ եթէ հրդեհեալ էր բանակն Օսմանեանց. այլ 'ի ցնծալոյ աղաղակէ նոցա խնդացեալ զնոսաղուս յարձակումն վերջին, արծարծեցին գարձեալ ասկառ մի զաշխատեալ կայծակն քաջութեան իւրեանց։ Այլ անխուսիչ վատասկաւորք և գիսնամարտք Օսմանեանց որպէս ցայնժամ, նոյնպէս և յայնմ պահու օտարազգիքն էին՝ Գենուացիք, Վենետիկեցիք, Սպանիացիք, ռուս ծիրանաւորն Խիզարաս, և Ճարտար ձուլիչն հրաշինուց գերմանացին Կաանեմ։ Իսկ

գլուխ և առաջնորդ ամենեցուն սոցա Յուսուֆենեանն էր արդարև 'ի ժամուն զօրավար քաջ, որ բանիւք և արդեամբք ճգնէր 'ի փրկութիւն քաղաքին. ըղխրատնատն կարկատէր, ապառնէշս նորանորս 'ի նեղբուստս կանգնէր, և ինքնին ձեռամբ իւրով զվերելեակսն ընդ սանդուղս մղեալ յերկիր կործանէր:

Ի քանեորդի ութերորդի աւուր ամսեանն մայիսի հրամայեաց Մէհէմմէտ զի սարարատել առ վաղիւ 'ի վերջին յարձակումն: Եւ ընդ մուտս արեգական գոչումն օսմանեան բանակին և ազազակ քաղաքին, շառաչիւն զինուց և հնչմունք փողոց խառն արձակեալք իբրև զձայն լեռնաձև ալեաց մրրկեալ ծովու զսեղիս խլացուցանէին:

Յայնժամ գնաց կայսրն Կոստանդին յեկեղեցի սրբոյն Սոփիայ, և հաղորդեալ սրբոյ խորհրդոյն՝ խնդրեաց զնեբու� 'ի պարատականաց իւրոց: Զնոյն արարին և բազումք յաւագանեացն, և ամենեքեան առ հասարակ յարատաւորս հարեալ ողբային:

Յայնմ գիշերի ամենեքին արմտեալեամբ հանէին, և կայսրն ընդ հաւատարմագունից յիւրոցն զօրավարաց անդադար շուրջ յածեալ երիվարաւն քաջալերէր զմարտիկսն. և ընդ արշալուսին սկիզբն եղև մեծի պատերազմին:

Հնչէին առ հասարակ փողք և թմբուկք խառն ընդ գոչիւն և ընդ գո-

սու�մարդկաց. և արձակեցան միան-
գամայն 'ի միասին ամենայն թնդա-
նօթք և հրազէնք, և անդէն սկսա-
յարձակումն յամենայն կողմանց. և
թուէր քաղաքն ամենայն պատուալ ը-
ստուար պարանաւ՝ երբեմն խեղդու

լինելով։

Աւելի քան զերկուս ժամս տեւեաց
մարտն յարձակումն. և պաշտօնեայք
վարդապետք յետ կուսէ կացեալք էր
կամիմ մահակօք և արջասաղօք հար-
կանելով յառաջ մղէին զմարտիկսն։
Աղբայն իսկ ինքեանն անդադար խրա-
խոյս կարդայր զօրաց խրոց քաջաբա-
թեամբ և ապառնալեաւ՝ լսեալ էրկա-
թի կրելով 'ի ձեռին։ Տեղային քարինք
'ի վերուստ յաշտարակաց անտի. հա-
սէր հուրն յուռնակսն ընդ պարիսպն նա-
ւահանգստոյն. ամենուրեք 'ի վերայ ամ-
դղոց հարեալ խորտակէին, ուստիք
ոմիք պատահեալ սհոպին Հայմ-
մանայ գործէին, և մէջ և մատաղ
փոշեայն թանձրութեամբն ծածկեալ էր
միանգամայն զքաղաքն և զարեգակն։
Խոցեցաւ յայնմ պահուն Յուսանենն
և ապաքեալ զկայսն փոխանակէլ 'ի
ոչոչ ելբ՝ փոխեաւ 'ի Պաղատիա, և
լքան վհատեցան զօրականքն առ հա-
ստակ։ Զաղնուս փոշու տեսեալ զաղ-
մուկ պաշարելոցն՝ վասն ոչ բորբոքեաց
վերատին զենիչքսն իւր. և մի ոմն 'ի
նոցանէ Հասան անուն ձախաւ ձեռամբ

կալեալ 'ի վերայ գլխոյն զվահանն, և աջովն զսուսերն՝ կռուէցաւ յորմն և սղոսկեալ էլանէր 'ի վեր, և այլք ելբանիւ չափ զկնի նորա։ Յոյնք նեռիւք նիզակօք և մեծամեծ քարամբք վանէին զնոսա և Թօքմափէին յերկիր. այլ 'ի տեղի նոցա այլք փոխանակէին, մինչև հասան ինքնին ոչ կարող ունելով ընդդէմ տարափոյ քարանց՝ Թաղէցաւ ընդ նոքին։

Մինչդեռ այսպէս արիսկան գիմամարտութիւնք լինէին 'ի Դոմի գափու, յիսուն ոգք յՕսմանեանց մտին ընդ դուռն Ալման սէրայ [1], և սկսան հարկանել 'ի Թիկանց կուսէ զպարսպաւորսն։ Յայնժամ գոյժ հարաւ մինչև 'ի Դոմի գափու՝ եՀէ առաւ քաղաքն։ Եղարձեալ աղմկեալ շփոթեցան դունդքն Կոստանդնի։

Որոյ տեսեալ զանձողոպրելն աղէտս քաղաքին խրոյ, ՀԱաւ է ինձ ասէր մեռանել, քան Թէ ի ցեմ այլ կամ կենդանի։ Ընկաւ 'ի վերայ յարձակելոցն Օսմանեանց և բազում նախճիրս գործեաց 'ի նոսա, մինչև ելեալ միայնակ անօգնական յիւրոցն սկսաւ գո-

1 Գրանցի զայն դուռն ցանկանալ Նէրն էին Յոյնք ըսք հրամանի կայսէր, հասուցանէ 'ի կանխապէս կոյց ինչ մարգարէութիւն, էրէ ընդ այն դուռն մտցեն Ռընամէ և ընդ նոյն վանէսցին։

չէլ ապիոդորմ ձայնիւ, «Եւ ինչ դ քրիստոնեայ որ հաստիչ զդլուխ իմ։ Այն ինչ բանքն 'ի բերան նորա էին, ենիչէրիք երկու յառաջոյ և 'ի թիկանց հարեալ զերեսս և զմիկունսն նորա՝ սպանին։ Այսպէս զրաւեցաւ 'ի կենաց Կոստանդին Պալէոլոգ վերջին 'ի կայսերս Յունաց։

Ի նմին պահս խուժեցին Օսմանեանք 'ի նեղքս և ընդ դուռն Էյուբ գափս՝ ընթացեալք 'ի վերայ դիականցն դէզադէզ կուտակելոց 'ի խրամատսն և 'ի խրամս, և ահագին կոտորածս գործեցին 'ի զօրսն որք փախչէին 'ի պարսպաց անտի։

Կործէին Օսմանեանք զառաջինն եթէ դէմ յիսուն հազարք էին զօրք քրիստոնեայ. և իրրև տեսին զնոսա ըստ սուսուրս ինն կոտորեալս, սարսեցան յոյժ, զի կամէին կենդանեայն գերփել զնոսա և տանել 'ի գերութիւն։ Սկսան ապա խրոչանչիւր դէպ երեսաց խրամանց ելանել Ռեպընիթաց արշաւանաք զՀռոմ Յունաց, որ խուճապեալք այսր և անդր խուսափէին աւարեկ կականմամբ։

Դիմեաց ամբոխն մեծաւ մասամբ 'ի Նաւահանգիստս անդր, զի փախցին 'ի նաւս Յունացն Գենուացւոց. այլ պահապանք դրան նաւահանգստին փակեալ 'ի նեղքուստ զդրունս ընդդէմ փախստականցն՝ ընկեցին զրանալիսն անդր

քան զպարիսպն արտաքս, յեղեալք 'ի նանրահաւատ ինն՝ գուշակութիւն որպէս թէ մատանեալով մոցեն Օսմանեանք մինչև 'ի մէջ քաղաքին և հասցեն 'ի Դաւուզ պաղարի, և ապա յետս վանեսցին 'ի բնակչաց անտի։

Յայնժամ խուռնընթաց շտապաւ դիմեցին յեկեղեցի սրբոյն Սոփիայ աջք և կանայք, ծերք և մանկունք, միանձունք և կուսանք առ հասարակ 'ի նոյն տապարանի մարգարէութիւն հաստատեալք։ Զի բան գարձեալ պատմէր առ նոսա, թէ 'ի հասանել Օսմանեանց մինչև 'ի սիւն մեծին Կոստանդիանոսի, հրեշտակ յերկնից ինքեալ՝ ասցէ 'ի ձեռս առն միոյ անարգի տեսեր մերկ և գաւազան արքունի, և ասասցէ. «Ա՛ռ զվրէժ Յոգովիզեան Տեառն»։ և Յոյնք ամենայն փողեալ զՏէր առնն՝ հարցեն զիշնամիս և հաղածականս վարեսցեն բացէ 'ի բաց մինչև 'ի սահմանս Պարսից աշխարհին։

Տաճար սրբոյն Սոփիայ, որ փառք էր աշխարհին, այլ 'ի բազմաց հեռէ անշուք և ամայի քեալ կայր իբրև այրս աւազակաց ասէս եբիպառակութեան եկեղեցւոյն 'ի կորուստ հոգւոց, յաւուր յայնմիկ լցաւ զերազ մարգկանէ ծագէ 'ի ծագ, որ գրոքն փակելովք անկեալեալ մնային մարմնոյն փրկութիւն։ Լային կականէին արտասուաւ ի պաղատանաւք։ այլ ձայնք աղաղակի

թշնամեացն 'ի վերայ յարձակելոց ընդարմացուցին զերկիրսն ընդունելս որպէս յանել ծուղակի։

Հասին խորտակեցին։ Օսմանեանք զդրուն առնարին, և զժողովուրդն որ անդր ամրացեալ էր իբր 'ի փարախս ոչխարաց քարշեցին ձգեցին 'ի սպանդ և 'ի դերութիւն։ Կապեցին կաշկանդեցին զարս և զկանայս երիսուս երիսուս շուանդք և գոռոզք՝ առանց խորհելոյ զհասակ և զպատման, զվանահայրն ընդ գրանապանին, զոխինն ընդ աղախնոյ. զբնորդն պաշտաման ընդ արգելական կուսանին որպէս և զիարդ բարուք թուեցաւ յամիրապետացն հաճոյից։ Ընդհանրեալք քաղաքեալքք. պատկերք սրբոց կողոպտեցան և խորտակեցան, աղօթք ոսկւոյ և արծաթոյ յաւուր մատնեցան. սպասք արքոյ սեղանոյն առան 'ի ծածկոցի երիվարաց, և նոքին իսկ սեղանքն եղեն 'ի բազմականս և 'ի մահիճս զբաղականացն և 'ի մտուրս երիվարաց նոցա։

Մինչ այս և մինչ այն, ելան զեղան Օսմանեանք և ընդ գուռն Ռէն գաւառս անուանեալ և սպայ յամենայն կողմանց՝ 'ի քաղաքն։ Կալան ընդ սակաւս յաւագանեսն և զՂուկաս Նոտարոս 'ի փախչել նորին 'ի տուն իւր։ Օրեան եղբօրորդի Սիւլէյմանայ հասեաց զանձն իւր ընդ պարիսպն և մեռաւ. և սկսան Օսմանեանք կապուտ կողոպուտ առնել զտունս և զեկեղե-

ցիս։ Եւ առաւ մայրն քաղաքաց մեծն Կոստանդնուպոլիս 'ի 29 աւուր մայիսի յամին 1453, 'ի յիսնեքսարդի երրորդի աւուր պաշարմանն։

Մէհէմմէտ ոչ ընդ զօրս իւր եմուտ 'ի նեղքս 'ի քաղաքն, այլ սպասեալ մնայր առ առեաց առմանն քաղաքին բովանդակ յիւրոց անտի։ Յայնժամ սպա զհասարակ աւուրբ շուրջ պատեալ 'ի վէզիրաց և 'ի Թիկնապահաց եմուտ 'ի Կոստանդնուպոլիս անարկիւղ և անկասկած, և գէպ ուղիղ գնացեալ 'ի սուրբն Սոփիա՝ էջ յերիվարէն և եմուտ 'ի նեղքս։ Հայեցաւ առեալ մեծաւ զարմանալեաւ շուրջանակի զհարիւր և զեօթն սիւնսն երկնագէպս և ազնիւս, և յերկնաբերձ գմբէթս անդ տաճարին զհոյակապ պատկերս ջրոյց աւետարանչաց և սրբոյ Աստուածածնին. և որչափ ամբառնայր զաչս իւր, այնչափ յաւելոյր 'ի զարմանս։ Դարձոյց սպա զհայեցուածս իւր 'ի բարձանց անտի 'ի գետին, և ահա մի ոմն 'ի զօրականէն Ջանայր խորտակել զազնիւ մարմարիոնս յատակին՝ որ գեղեցիկս քանդակեալ ըստ ծածանման միանանց ջուրց թռուէր հատել ընդ գրուանս տաճարին արտաքս 'ի նմանութիւն ջրոյց գետոցն Եդեմայ։ Եհար անդէն թագաւորն զայրն զայն առաւելս և ասէ. «Զգանձս քաղաքիդ եղու ձեզ յաւար, այլ զինուածքս իմ ենտ. և քարշեալ ին-

կերցաւ զօրականն կիսակենդան արտաքս։

Այլ հրամայեաց արքայ միում 'ի կարգացողաց երանելի յանձնն և ընթերցանել զգաւառութիւնն մահմետականն, և ինքն իսկ երեալ 'ի վերայ աւագ աներգանոյն՝ կատարեաց զաղօթս իւր ըստ ճաշու [1]։

Երեալ Մահմէտայ 'ի մզկիթ անտի Այա սոֆեային՝ իսկ և իսկ հրամայեաց ածել զառաջեաւ զծովակն Ղուրան Ղուրարա. «Տե՛ս, ասէ ցնա թարգմանն, զգերեցիկ արուեղ գիտակացութեան քո»։ Հայեցեալ 'ի կոյս անդր գիտակացն, և 'ի խուռն բազմութիւն գերեալոյն։ Պատասխանի եւ Ղուրարա և ասէ. «Ոչ յիսմ և ոչ 'ի կայսերս ձեռս այնչափ իշխանութիւն էր հաւանեցուցանելոյ զքարոզաքարոյս յանձնառութիւնն, մանաւանդ զի և թուղթ իշխանութիւնք 'ի գիտակացութիւն հասին 'ի ձեռս մեր»։ Ընդէն կապած կալաւ զարքայ գիտալոյ. ասկայն 'ի ժամուն ոչինչ 'ի վերայ հանեալ, և հարց ցՂուրարա եթէ կայսրն փախուցեալ լոյսն ընդ հնդից նաւուցն գնեալ

1 Այն է Ղուրան իսմ Սուլթան անուանեալ աղօթք մահմետականաց, որ հնգից անգամ պայտի յաւուրն հանդէրձ խանութիւն։ Աղաղարարութեամբ յայնոգին, որ էլան ի-էի, յորմէ և յայնոգն Մի-էգեալին։

որ էին մեկնեցան 'ի Նառատանդրապ-
ատէն։ Եւ մինչդեռ ասէր նա չգիտէր,
ենիչէրիք երկու աղաղակեցին թէ մեք
սպանաք զնա, և գնացեալ գտին զնա
'ի մէջ գիսկանց՝ ծանուցեալ 'ի ծերա-
նի կշկայն գործէլոց ոսկեթել ար-
ծուենշանաւ։ Յայնժամ արձակեաց
ալքայ զՆոսարան 'ի առն իւր. և զգը-
լուխ կայսերն վարեալ 'ի սիւն մի
կանգնեալ երբեմն 'ի մեծէն Կոստան-
դիանոսէ 'ի հրապարակի անդ որ արդ
կոչի Սարայ մէյտանը հուպ յԱյա սո-
ֆիա, ընդ երեկս եւ ինքուցանել զայն,
և զմորմն հանեալ և յարդաւոց արա-
բեալ առաքեաց 'ի քաղաքս Ասիոյ 'ի
տեսիլ նշաւակի մեծի յաղթութեանն։
Իսկ զդիակն շնորհեաց ապա Յունաց՝
զի թաղեսցեն։

Դենուացիք որ ամրացեալ կային
ցայնժամ 'ի Ղալատիա՝ բերին առ ար-
քայ զբանալիս բերդին, և ասէրսէին՝
գթութեամբ վարել ընդ բնակիչսն. և
նա զինչս 'ի խնդիրն։ Զայնուս փոյթ
գնաց 'ի Ղալատիա խաղաղութեամբ
'ի գիմաց ալքայի, և զՅոյնս Կոստանդ-
նուպօլսոյ ոչք չև էին վարեալք 'ի գե-
րութիւն՝ անդէն բնակեցուցեալ, բաց 'ի
Նոսարայ՝ որ 'ի շնորհելոյ ալքային
բնակեցաւ 'ի Կոստանդնուպօլիս յիւ-
լուսմ յառաջին պարտականն։

Ի վաղիւ անդր եկն ալքայ վերատին
'ի քաղաքն, և գնաց երիվարաւն յա-

պարանոս Ղոսարայ. որոյ երկեալ ընդառաջ թագաւորին անկանէր առ ոտս նորա և ցուցանէր նմա զգանձն զոր պահեցի, ասէր, վասն քո։ Եհարց զնա Մէհէմմէտ. «Ո՞ է սա քեզ ասէ, զայդ ամենայն գանձս հանդերձ քաղաքաւդ։ Եւ յասել Ղոսարայ՝ Եթէ Աստուած, պատասխանի էր թագաւորն. «Ապա ուրեմն զԱստուծոյ պարտիմ գոհանալ, և ոչ զքէնդ։ Սակայն մինչեւ ի ելանց զնա առ Ժամն և զորդիս նորա. և ինքն շրջեալ ընդ ամենայն փողոցս թագաւորական քաղաքին՝ որ կապուտ կողոպուտ յամենայն փառաց ողորմ առեալ անցաւորացն ցուցանէր, չորքաւ'ի պարսուն արքունի, և ընդ երկուս անմոռոգացեալ սրահն մեծամեծս անցեալ՝ յիշատակ արար պարսկական տաղից ինչ որ քաջիկ տային զնկարագիր ամայութեան արքունեացն։

Ապա հրամայեաց ինքնայն կարգել առ արքունի պալատամբն մեծածախս յոյժ, և ընդ գինեխս մոռալ առաքեաց կոչեաց առ ինքն զչորեքտասանամեայ որդին Ղոսարայ՝ զոր'ի տան նորին առեալ էր։ Իբրև ոչ կամեցաւ Ղոսարաս արձակել զորդին, էառ արքայ զնա ինքն Ղոսարաս ամենայն ընտանեօքն հանդերձ ածել զառաջեւս իւրով. և զորդին առ իւր կալեալ, զայլսն առ հաստատակ հրամայեաց ընդ սուր անցուցանել։ Եւ ինքն Ղոսարաս զկնի ականա-

տես լինելոյ կատարածի խրատն 'ի խոնարհել իւրում ընդ որում գահն ինն գոշեր. «Արդար է դու Տէր»։

Յետ այնորիկ սպանումն և այլք բազումք 'ի Յունաց և յԵբրայեցոց, ընդ որս և պայլն կամ գեսպանն Վենետկոյ հանդերձ որդւովն, և բդեաշխն Սպանիոյ երկոքումբք որդւովքիւրովք։ Ծիրանաւորն խիզարաս գերի վաճառեալ 'ի Ղալգիա՝ վասնեաւ անոր, և ապա գրեաց զպատմութիւն առանձն քաղաքին։ Որպէս և հանդերձապէսն կայսեր պատանդիրն Պրանդաս փախուցեալ 'ի գերութենէ՝ անկաւ 'ի Պեզոպոնեսս, և անտի 'ի Կորկիւրա, որ է Քորֆու, ուր և կրօնաւորեալ ուրեք մեռաւ։ Խակ այլք 'ի Յունաց վասրեցան յԱխիա և յԱդրիանուպոլիս։

Յաւուր երրորդի առանձն Կոստանդնուպոլսոյ արքանկեաց Մէհէմմէտ արքայ զքօրն և զնաւատորին յայսմանութիւն, և երին մեկնեցան Օսմանեանք վասնեալք աւարաւ մեծաւորեալ քաղաքին։ Ղաւք ամենայն և վասնք չի էին գերեաք և ապրեցեաք, անօթիք ոսկւոյ և արծաթոյ, և անհատոր մասնենիք։

Յայնժամ կատարեցաւ և առանձն քաղաքին, և աւարաւն, և կործանումն, և անցեալութիւն մինչև 'ի սպան. և 'ի չորրորդում աւուր սկիզբն եղև շինութիւն և կարգաւորութիւն Կոստանդնուպոլսոյ ըստ այժմու տարեգրի։

Քանզի էր խակ Մեհեմմեդ ազգաց ընդ հզօր աշխարհակալութեան և աշխարհաշէն ոչ սակաւ, և խորհուրդ ազգաց իւրոց խոնարհելոց ընդ ահագին սուսերաւն՝ խնամեա հոգալ բարձեալ։

Եւ նախ կամեցեալ կարգել զոչ 'ի պատրիարգ Յունաց, հրամայեաց ամենեցուն որ 'ի Թագաւորանն իցեն՝ անելոցիւրք ելանել արտաքս, և ունել զիւրաքանչիւրքն ակարտանս ազատութեամբ որպէս և յառաջն։ Ապա յընտրել նոցա 'ի պատրիարգ իւրեանց զԳէորգ վանականն, որ և Գենենադիոս, Թագաւորն հրամայեաց զնա 'ի Հաշ. իսկակից եղև նմա ընդ երկար բազում պատուախրութեամբ, եւ 'ի ձեռս նորա զաւազան մեծագին, և ապա հեծուցեալ յերիվար ընտիր՝ ուղեկից եղև նմա մինչև 'ի նոր պատրիարգարանն յեկեղեցի սրբոյ Առաքելոց [1]. զի առաջինն էր 'ի սուրբն Սոփիա։

Ապա հրամանն եւ կործանեալ զպատրիարգ Ղազարոսի 'ի ցամաքին կուսէ, և զբարձրութիւն մեծի աշտարակին նորին հարթեալ հաւասարեցոյց բարձ-

[1] Սոֆոյն նա ինքն Գենենադիոս քահանայէ՝ ապա զարիս պարբերութեանն յեղեալ Տիրամօրն, որ արդ հալիր է Գիերհիսէ Յայնէալ, զի և այլ դարձեալ զմին ծանանաքոց քահանային զարիսն 'ի Գիներ։

բռնեան Իսրայելի գամուռս անուա-
նեալ դրան։ Եւ առ 'ի ընուլ բնակչաց
զքաղաքն Կոստանդնուպոլիս՝ ժողո-
վեաց նախ բազմութիւն յոյժ որոնա-
գրաց և աղեսապագուծաց, և ապա խա-
զացոյց անդր 'ի Տրապիզոնէ, 'ի Սինո-
պայ և յայլոց քաղաքաց գերդաստանս
հինգհազար։

Զմի ոմն 'ի ծառայից իւրոց Սիւլէյ-
ման անուն կարգեաց առաջ քաղա-
քին, և պատուիրեաց նմա՝ զի մինչև
ցամիսն սեպտեմբեր զեռեղեալ բնա-
կեսցեն եկաւորքն ամենայն 'ի նորաշէն
տունս քաղաքին։ Բազում յիշխանա-
ւորաց անդամ Յունաց վատահացեալք
'ի խոստմունս հրովարտակին ազգայն
եկին 'ի քաղաքն, և 'ի ժամադրեալ ա-
ռաւ յառաջ մտեան 'ի հաստատել
զարքունատունութիւն իւրեանց։ Իսկ
ազգայ հրամայեաց առ օրին հատանել
զդրսոյս նոցա։

Զհետ առուրց քանից ուղևորեցաւ
Մէհէմմէտ ազգայ ՅԱդրիանուպոլիս
խուռն բազմութեամբ ընտիր ընտիր գե-
րեաց՝ արանց և կանանց։ Էր ընդ կա-
պեալն և Խալիլ փաշա վէզիրն մեծ,
զորոյ զկաշառաբերին լինել 'ի Յունաց
բազում իրք ստուգեալ էր ազգայի [1],

[1] Յառաջ հրամայեալ արքայի աղա-
հի կապեալ առ գրանն՝ ասէ։ «Ո՛ անիրաւ,
ո՞ է սրտիդ առ Խալիլ 'ի գինել զարքա-

և բանտարկեալ զնա յԵրուսղէմ առաքէր յետ առնելոյ Բիւզանդիոյ. և ընդ հատանելն յԱգրիանոսաւրիս եհատցեալ գլուխ նորա, և քան հազար ոսկիս 'ի գանձուց նորին էառ յարքունիս:

Ապուի արձակեաց հրովարտակս աւետարարս 'ի Պարսկաստան, յԵգիպտոս և 'ի Մէքքէ, որովք ազգ առնէր նոցա զառաւելն Կոստանդնուպօլսոյ: Ընդ ընկալաւ և վիճակաւորեցեալ գեղարքան ասիմանակից պետութեանց Երուսաղեմոյ, և պահանջեաց 'ի նոցանէ տարեկան հարկս, և որք կանխաւ ետ հարկերին Օսմանեանց՝ յաւել և ետ ծանրացուցանել զտուրքն 'ի վերայ նոցա: Նոյնպէս և յերիսանացն Պերզանեանց 'ի Դեմեարէ և 'ի Թաւրիզէ պահանջեալ հարկս ամ ըստ ամէ տասն հազար ոսկւոյ՝ եմեալ զաշխարհն 'ի ձեռս նոցա և խոստացաւ պաշտպան լինել նոցա և հովանի:

Զձմեռն զայն անցուցեալ արքայն խաղաղութեամբ յԱգրիանուպօլիս, ապա 'ի գալ գարնանայնոյն ուշ արար 'ի գրաւումն աշխարհին Սերբաց. վասն որոյ պատգամ առաքեալ առ Գէորգ Պրանքովիչ իշխան նոցա ասէ. «Ոչ քո է աշխարհդ, այլ Սաւեփանոսի

Ռիսան գոյր: Ընդ այս բան զարհուրեալ ինքնիշխանն՝ խնդրեաց, ասէն, հրաման գնալոյ յոտաբ 'ի Մէքքէ. այլ արքայ ընդ նմա ասէր:

որդւոյ Լազարոյ, վասն որոյ և իմ
խակ. շատ լիցի քեզ բաժին Վուլքայ
հօրն քոյ »։ Եւ պատուէր սատակ եղ
'ի վերայ գեղապանին հանդերձ սպառ-
նալեաք մահու՝ չյապաղել անդէն ա-
ւելի քան զաւուրս քսան և հինգ։ Ա՛յլ
քանզի Պրանքովիչ երթեալ էր առ
Հունիատ 'ի Մաճառս՝ 'ի խնդիր նիզա-
կակցութեան, իբրև յամենայն գեղապանն
աւուրս երեսուն՝ Մէհէմմէտ ազգայ
գիմեաց պատմութեամբ 'ի Փիլիպպէ,
ուր գտեալ զպատգամաւորն հաղիւ
շնորհեաց նմա զկեանսն 'ի մի առեալ
զպատճառս յապաղելոյն։

Խաղաց անտի 'ի Սոֆիա, և անդ թող-
եալ զմեծ մասն զօրականին՝ քսան
հազար հեծելովք եմուտ 'ի Սերվիա,
պաշարեաց զամրոցն Սէմէնտրէ, և
Օսմրովից, որ է Սիվրի հիսար, և ա-
պատակեալ ընդ ամենայն երկիրն՝ խա-
զացոյց յԱխիս գերիս յիսուն հազար։
Էառ ապա և զՕսմրովից, երբարձ ըղ-
պաշարումն Սէմէնտրէի և դարձաւ յԱ-
դրիանուպոլիս՝ թողեալ զՓիրուզ պէյ
երեսուն հազարաւ 'ի Բրուսայոյ ընդ-
դէմ Մաճառաց և Սերվաց։ Հունիատ
և Պրանքովիչ հարին զՕսմանեանս, ըղ-
Փիրուզ պէյ ձերբակալ արարին, և ըղ-
քաղաքն Վիսին հրձիգ արարեալ այրե-
ցին։ Ապա դարձաւ Հունիատ յազգա-
նակաւ յերկիր իւր, և Պրանքովիչ երթ-
ալն հազար ոսկւոյ հարկս խոստացեալ

Մեհեմմեմատ ամի ամի՝ զկիրակս զնա 'ի հաշտութիւն։

Դարձեալ եղև Մեհեմմէտ և ընդ Վենետիկեցիս, և հրամայեաց նոցա ուղղել զեսպան զամն 'ի Բիւզանդիոն. և ինքն երթեալ 'ի Կոստանդնուպաւլիս՝ կառոյց մզկիթ մի յԷյոպ՝, և 'ի տեղւոջէ եկեղեցւոյ Առաքելոցն կանգնեաց զպարարտ իւր, որ յետ շինութեանն այժմս ապարատանն կոչեցաւ Էսկի սերայ։ Կարգեաց վեզիր մեծ զՄահմուտ փաշա, սերմայցի 'ի մօրէ, և յոյն 'ի հօրէ։ Եւ ապա 'ի յորդորելոյ սահմանակալ իշխանին Խան ազգի զօրաժողով լեալ յԱդրիանուպաւլիս՝ գիմեաց յերկիրն Սերվաց, և բանակեցաւ առ ոստանաւն Գարամիտա լերին։

Ընդ խաղացեալ պարարեաց զՇոմ քաղաքն Նովպրոս կամ Նովապիրտ, և յեօթնեներորդում առաւր պաշարումն առեալ զայն՝ զպարիսպսն կործանեաց, և զաւարն բաշխեաց 'ի մարտիկս իւր։ Ապա էառ և զամրոցսն Թրիմ

1 Քանզի ասանդ է Օսմանէանց՝ երբէ անդամոնս ընալիւ Խայնէ դրօշիր մարգարէին Իսրէանց Խալիֆ որդի Զէյդայ՝ մահանուանելն Էպի Էյոպ, կամ Էյոպի Էնսարի, որ յամի քրիստոս 673 կամ 668, ընդ Եղիպտանան զօրավարին Աբուբիոսոյ եկեալ 'ի պաշարումն Կոստանդնուպօլսոյ, և անդ մեռեալ էր։

Հաև Դաշիխաբ, և 'ի Գոսովա գաշտին 'ի յիշատակ հաւուն իւրոյ Մուրատայ առաջնոյ, որ անդ սպանեալ էր, քաշխեաց զօրականին իւրում առատապարգևս տուրս, և դարձաւ 'ի Կոստանդնուպօլիս յամի 1455։

Ի հերուն հետէ պահանջեալ էր Մէհէմմէտ հարկս 'ի մագիստրոսէն Հռոդացւոց. և էառ 'ի նմանէ պատասխանի՝ եթէ չէք իմ հրամանի իշխանութեան 'ի պետութեանցն Եւրոպայ՝ հարկիլ այլազգեացդ, այլ ես յիսմէ կողմանէ պատրաստ եմ ամի ամի ընծայաբերս լինել արքայիդ ըստ իսնում կարի։ Ընդ որ զայրացեալ արքայն՝ կապեաց վաղվաղակի տղայսն նաւուց և նաւակաց հարիւր և ութսնից, և տուեալ 'ի ձեռս Հանգա ապէյ ծովակալին՝ արձակեաց 'ի Հռոդոս։ Իսկ նորա նաւեալ նախ 'ի Լէսբոս, և անդ 'ի գենուացի դքսէ կղզւոյն ընծայիւք պատուեալ՝ դիմեաց 'ի Քիոս, որ է Սագիզ. և այն քանզի ամրապինդ էր, ուղևորեցաւ 'ի Հռոդոս։ Զայն ևս ամրագոյն քան զՔիոս գտեալ, ունայնաձեռն դարձաւ 'ի Կէլիպօլիս։

Սրտմտեալ Մէհէմմէտայ ընդ վատութիւնն Հանգայի, ասէ ցնա. «Եթէ չէր քո վայելեալ 'ի սէր հօրն իմոյ, արդ կենդանուոյն իսկ մորթեալդ առնէի զքեզ». և 'ի բաց վանեաց զնա յերեսաց իւրոց։ Եւ կարգեալ փոխանակ

նորա ծովակալ զԽաս Եօնուս փաշա՝ ասան մեծամեծ նաւուք արձակեաց ընդ ծով 'ի վերայ կղզեացն Արշիպե-զագոսի, և ինքն խաղաց անդր ընդ ցամաք յամի 1456։

Իշխանն Եղնոս կամ Էնէզ կղզւոյ, զորմէ բողոք կալեալ էր դատաւորին Իփսալայի առ արքայ՝ որպէս թէ խուսի-ցէ զՕսմանցիս, փախուցեալ 'ի Սամոթրակէ՝ առաքեաց առ թագաւորն զդուստր իւր քազուա՛ ընծայիւք։ Իսկ նա 'ի սուղ ժամանակի առեալ զկղզին զԵղնոս, զՍամոթրակէ, զԹասոս, և զԻմբրոս, դէմ եդ 'ի Քիոս. այլ 'ի խնդրել Քիացւոց զխաղաղութիւն՝ հաստատե-լով նոցա ոսկիս երեսուն հազար և խոստանալով տալոյ հարկս ասան հազար ոսկւոյ, խոստացաւ 'ի նոցանէ 'ի Լէմնոս։ Քանզի Լէմնացիք բողոք կա-լան առ Մէհէմմէտ արքայ զիշխանէն խրիմոնց զՆիկոպոլսոյ. և լաւ հանա-րեալ մնանէլ ընդ իշխանութեամբ Օս-մանեանց՝ խնդրեցին կացուցանել 'ի վերայ կղզւոյն կուսակալ զոք յիւրոցն. և արքայ եդ իշխան կղզւոյն զՀամզա պէյ։ Եւ զի փութայր դիմել մեծաւ պատրաստութեամբ յերկիրն Մաճա-ռայ, թերակղզեայ ելմոզ առ ժամն զկղզնս երկրակալութեանցն 'ի Յունաս-տան։

Խաղաց գնաց Մէհէմմէտ արքայ հա-լիւր և յիսուն հազար զօրաք և երեքա-

ինք հրամինուք և պաշարեաց զՊԷԼ
կրաս քաղաք Սերմաց, և նաև էրկե-
ինք ինքոյց ընդ ծով 'ի Դանուբ։ Եհան
և Հունիաս սպարապետ Պաճառաց և
ամենայն խաշակրաց երթու վասն
հաղարաց՝ նոյնչափ նաւուք հանդէպ
Պելկրատու, և վանեալ զսորմիզ Օս-
մանեանց եմուտ 'ի Պելկրատ։

Յայնժամ ի սրտմտութեամբ ինքնին
Մէհէմմէտ խաղացոյց վարեաց զենի-
չէրիսն բուռն զօրութեամբ, և եմոյծ
պատերազմաւ յարտաքին քաղաքն, և
սկսաւ մարտս գնել ընդ նեղքնոյն սատ-
կապէս։ Մինչև Հունիաս անգամ վհա-
տեալ յուսահատ լինէր 'ի փրկութենէ
քաղաքին։ այլ Յովհաննէս Կապիս-
տրան սխոլաստն բանակին քրիստոնէից
անցեալ 'ի գլուխ հաղար խաշակրաց՝
վանեաց զպաշարիչսն։

Զայն իրրև եղեւ Մէհէմմէտ ազգայ,
յարձակեցաւ առիւծաբար, և 'ի մի հա-
րուած ձեռքեալ զմի ոմն 'ի թշնամեաց,
խոցեցաւ և ինքն 'ի բարձսն։ Եւ ապա
ի ցասմամբ կրասմբել սկսաւ զՀասան
զօրավար Ենիչէրեաց։ և այլն քաջ պա-
տասխանի եւ ասէ։ «Մեծ մասն զօրականիդ ահա վիրաւոր է, և
այլքն խառապարանոցք»։ Զայս ասաց,
և անդէն անցասպաղ յարձակեցաւ 'ի վի-
րայ թշնամեաց, և սասրատ սրկաւ 'ի
սրոյ նոցա առաջի նորին իսկ ազգայի։ Ի
նմին պահու և վերց հաղար հեծեալք Օս-

մանեանց հասին 'ի Թիկուռնս, և վանեցին զնաչակիրսն անդրէն 'ի քաղաքն. այլ Մէհէմմէտ մեկնեցաւ 'ի Սոֆիա զ-ամենայն հանդերձ՝ կորուսեալ զոս քան և չորս հազար, և զիախուցեալսն 'ի բանակէն 'ի սուր սուսերի կոտորեաց։ Ի նմին ժամանակի խլեսանն Մոլատեոյ Պետրոս անուն տեսեալ զանցսղմելի զօրութիւնս օսմանեան պետութեանն՝ աճապարեաց եկ ընդ առաջ ազգայի և խոստացաւ հատուցանել նոսա ամ ըստ ամէ հարկս երկու հազար ոսկւոյ վասն անդորրութեան իւրոյ աշխարհին։

Դարձ արարեալ ազգայնին Մէհէմմէտայ յԱդրիանուպոլիս, առ 'ի քաջալերելոյ զլքուեալն զօրաց իւրոց ընդ յետադարձն 'ի Պելկրատէ առանց ինչ յաղթանակի՝ արար զհանդէս թլփատութեան երկոցունց որդւոցն իւրոց Պայէզիտայ և Մուսդաֆայի, կոչեցեալ զմին յԱնատոլոյ, և զմիւսն 'ի Մադնեսիոյ յամին 1457։ Ի կղզւոջն մեծի որ առ քաղաքաւ Ադրիանուպոլսոյ կայ՝ հարան բազմութիւնք խորանաց, և 'ի միջի նոցին խորանն ազգայի հանդերձ գահոյիւք։ Անդ յառաջնում աւուր հանդիսին մեծարեցան գիտնականացն դասք, որոց պարագլուխ էր Խայրէտտին խոճա ուսուցիչն ազգայի. և արձակեցան ապա պատուաւոր զանազան պարգևաք հանդերձիւ և դրամով։ Յետոյ բարգաւանեցեալ ազգայնոյն զարմանակ պատուասիրեցան

տէրութիւնք և միանձնութիւնք։ Յաւուրն երրորդի եղեն զինախառնութիւնք, մանկանախառնութիւնք, և հանդէպ ապէրնաւորութեան. և յաղթողքն պարգևեցան յարքայէ առատապէս։ Իսկ 'ի չորրորդումն հապարեցան դրամք առ ժողովուրդն։ Ընծայարէրք եղեն և ամենայն առագրութիւն առ արքայ. և ընծայք վէզիրին մեծի զանցանէին զայլովքն ամենեքումբք քան զհոխութեան։

Ի կատարել աւուրց հանդիսին արձակեաց արքայ զերկուս հծուռնն էրբինոսի, որոց երկաքանչիւրոցն Խան անուն էր, ապատասկել 'ի Մաճառս և յԱլպանիա։ Հրամայեաց կառուցանել 'ի Կոստանդնուպօլիս զեօթնաշտարակեան ամրոցն[1]. և մինչդեռ ինքն պատրաստէր գիմել 'ի Պելոպոնեսս՝ առաքեաց զՄահմուտ փաշա զվէզիրն 'ի նուաճումն Սերվիոյ։

Զօրաժողով եղև Մահմուտ փաշա հուպ 'ի Կոստանդնուպօլիս 'ի դաշտավայրին՝ որ ցարդ ևս յանուն նորա կոչի, և յարձակեալ մինչև 'ի Դանուբ՝ առանց ինչ մեծի դիմադրութեան էառ բազում բերդս, և զաւուրս ծմեռնային

[1] Այն է ամրոցն Եփիփոսէ 'ի հարաւային ծոփս պարսպաց Կոստանդնուպօլսի. զոր 'ի պահել զփանիս ինչ խառոյց, ասեն, Մէհեմէտ արքայ։

բանաստեղծին։ զոհելի կալեալ ՝ի Վեր-
ապա ստիպաստակ սիրեաց մինչև անգր
քան զԴանուբ, և ած թափեաց առաջի
արքային յԻսպահան աւար և գերի բա-
զում յոյժ։

Ընդ այն առուրս մեռեալ էր Պրան-
քուվիշ իշխանն Սերբաց. և Լազար որ-
դի նորին կուրացուցեալ զերգքարս իւր
զերիցապոյնս, զեզ մահու արբուցեալ
մեր իւրում, այլ կալեալ զիշխանու-
թիւն հօրն իւրոյ ոչինչ աւելի քան զա-
միսս երկուս՝ մեռաւ և ինքն. և կին նո-
րա Հելենէ առանգեաց զաշխարհն իրր
՝ի կալուած ՝ի ձեռս պապին։ Ընդ որ
գժգոհեալ առագանեոյն Սերբաց, լա-
հանարեցան մնանել ընդ լծով Օսման-
նեանց, և ընտրեցին իւրեանց իշխան
զՄիքայէլ Ասղոկովիշ զերգքայր Մահ-
մուտ փաշայի։ Հելենէ հեռանալ ինն
ձերբակալեաց զՄիքայէլ և առաքեաց
զնա շղթայակապ՝ ի Մանսուս։ այլ Մի-
հէմմէտ արքայ պաշարեաց զնա ՝ի Սե-
մենդրէ, և էառ զամուրն խորագու-
թեամբ, թոյլ տուեալ Հելենեայ մեկ-
նել առաջ յն և կամիցի։ Ապա և այլ
բերդորայք աշխարհին անհակառակ
անձնատուր եղեն արքայի. ոգիք էր-
կերիւր հաղար վարեցան ՝ի գերու-

1 Զ.ԻԹ ԷՐԷՆՕՐԷԱՅ ՊԱՀՈՅՍ ԳԱՆ Է ՆՈՅՈ
ՅԱՌԱՋՆՈՒՄ ԱՌՈՒՐ ՔԻՎԼԱԼ ԱՄԱՅ, Ե ԳԵՆԷ
ԱՌՈՒՐՍ ԷՐԻՆ։

թեան. և այնուհետև մտրակ էկաց և Սերմա օսմանեան պետութեան միջև մտա յաւուրս մեր։

Յետ այնորիկ զամս երիս անընդհատ ապստամբեալ Մէհէմմէտայ 'ի Պերպանենա՝ մերթ անձամբ և մերթ 'ի ձեռն զօրագլխաց իւրոց, յետոյ ուրեմն նուաճեաց զՅունանստան ոչնչոյն, բաց 'ի նաւահանգստաց ոմանց՝ զորս Վենետիկեցիք ունէին անդէն։

Ոչք ընդդէմ կային նմա քաղաքք, յետ առման նոցին՝ զբնակիչսն 'ի հրապարակ ածեալ ընդ սուր անցուցանէր կամ կարիճակոտոր առնէր, և զքաղաքսն ընդ մէջ ոչնչեալ հերձոյր յահ և յերկիւղ այլոց քաղաքաց։ Իսկ ոչք անձնատուրն լինէին՝ բան մնային 'ի գերութիւն վարէր, և զայլս խաղացուցեալ յաւանս 'ի շրջակայս Թիւրանդիոյ բնակեցուցանէր. մինչև յետոյ ուրեմն դարձ արար յարմանակաւ Ազգիանուպոլս՝ բարձեալ 'ի միջոց 'ի ապա ապուռ զամենայն տէրութիւն Յունաց յԵրուսղեմ։

Ի գոմանալ այնպէս արևմտեան բազկի երկնից ծառոյ կայսերութեանն Յունաց, արևելեանն դեռ ևս կայր մնայր 'ի Տրապիզան. ամին երի հարկ էր ապրայի անցանել յԱսիա, և առնուլ նախ 'ի Գենեուացւոց զԱմիսոս, և 'ի Թիւրքմէնաց զՍինոպ, և անտի ապա խաղալ 'ի վերայ Տրապիզանի։

Եւ զի մի 'ի մեկնել խրատ յեւրոպական կողմանց՝ շփոթք ինչ մեծամեծք յուզեցին դարձեալ անդանօր, իսուսեցաւ հաշտութիւն ընդ Խաքէնտէր սէյին Ռէնաւուատց, որ գէռ ևս ոչ դադարէր աշխատ առնել զբօրավարս Օսմանեանց։ Շնորհեաց նմա զանդորդ վայելս աշխարհին իւրոյ ազատաբար, և ինքն դիմեաց 'ի Կոստանդնուպօլսոյ յԱսիա։ Գնեաց զինքս որ տիրէին յԱմասիա, խնդրեցին յարքայէ բազում անգամ զՂալադիա. և 'ի զանալ նորա զայն և յասել, «Ոչ բռնութեամբ ինչ առեալ է իմ զՂալադիա, այլ յինքնամատոյց յօժարութենէ քաղաքացւոց նորին ընկալայ ես զնոյն ընդ խնամովքս յօգուտ նոցա քան 'ի ձեռաց», գնեաց 'ի մարտ պատրաստեցան։ Յայնժամ արքայ առաքեաց ընդդէմ նոցա զվէզիրն մեծ զՄահմուտ Հարիբ և յիսուն նաւուք ընդ Պոնտոս, և ինքն ասիացի զօրքն և բազում ուղղութեամբ գնացեալ էառ զՄամատրա 'ի Գեղեուացւոց անուն խաղաղութեամբ, և զերկրորդ մասն բնակչացն անդէն թողեալ՝ զայլս խաղացոյց 'ի Կոստանդնուպօլիս։

Այս արշաւանք թագաւորին, որպէս և այլքն առ հաստատակ, թէ յո՞ ուղիցի և յինչ պատճառս՝ անծանօթ էր առագանոյն անգամ. վասն որոյ 'ի ժամել ուրուն յիշխանաց և 'ի հարցանել ցնա զպատճառս արշաւանին՝

եւ պատասխանի թագաւորն. «Եթէ յանկարծ մոգ մի մօրուաց իմոց իմանայր զիարհուրդս իմ, անդէն խլեալ 'ի հուր զայն այրէիր։ Սոքին անյայտ վախճանաւ զանդի առեալ առ Ժամանակ մի 'ի Պրուսա զօրաժողով լինէր, զի գիմեացէ 'ի Սիւոպ և 'ի Տրապիզոն։

Մինչեւ առեալ Մէհէմմէտայ զԿոստանդնուպօլիս՝ գութ մեծ ունելով 'ի վերայ ազգին, խոստացեալ էր Յովանկիմայ եպիսկոպոսի առաջնորդին Պրուսայի զպատրիարգական իշխանութիւն՝ եթէ յաջողեացի առնուլ զԹագաւորեալ քաղաքն։ Արդ 'ի գալ իւրում 'ի Պրուսա՝ կատարեաց զիսոստումն, և առանձին հրովարտակաւ կարգեալ զնա պատրիարգ ամենայն Հայոց որ ընդ օսմանեան տէրութեամբ՝ առաքեաց 'ի Կոստանդնուպօլիս. և ընդ նոսա առնս քանի մի յերեւելեաց ազգին 'ի Պրուսայէ և յԱնկիւրիոյ և յայլոց տեղեաց, որ բնակեցան 'ի Ղալատիա, և 'ի բուն քաղաքին։

։ Ասի բան՝ եւ նէ Մէհէմմէտ արքայ առանձնասցի էնելոյ յապստամբութենէ Յոնայ՝ աջնալ և բնակեցուցեալ ի նէ զՀայս 'ի վերոյ հողմանս քաղաքին, և նէ այն ինչ որ յարքունի հրովարտակի պատրիարքին յիշատակի վէր ձեռնարդ անուանեալ։ Ապանուանեալս ոմանք յազգատոց ազգին գտանին 'ի վերս տնղիսն՝ որ արդ հուլին Օգալար։

Յետ այնորիկ պատուէր յղեաց ար-
քայ առ իշխանն Սինոպայ Խանցիլ ոչ-
և ասէ. «Ցանկալի է ինձ քաղաքդ քո
Սինոպ. թէ ախորժես, ասա քեզ փո-
խանակ այդր զՓիլիպպէ. ապա թէ ոչ,
ահա գամ 'ի վերայ քո»: Զայս պատ-
գամ արձակեալ առ նա՝ անդէն և
զԳԼՈՒԽԸ ԱՀՄԷՏ զեղբայրն իշխանին Խ-
ամցիլի որ առ իւր 'ի բանակի անդ
էր, տէր և իշխան կացոյց կիսոյ մասին
երկրի Եղբօրն: Եւ Խամցիլ երբոր եառ
զկիրն, և լուաւ զյորդորս Մահմուտիա-
շային 'ի տալ խաղաղութեամբ 'ի ձեռս
արքայի զերկիրն, անյապաղ հպատա-
կեաց, և ընդ առաջ ելեալ թագաւո-
րին կամէր հանդերձել զձեռս նորա.
բայց նա ոչ եթող, այլ գերկն ընդ խառն
հանդերձեալ՝ կոչեաց զնա իւր անդրա-
նիկ եղբայրն, և շնորհեաց նմա 'ի բաժին
կալուածոց զՇենիշէհիր, զԷյնեկիէլ և
զԱրտիսար, յետ ժամանակաց և զՓի-
լիպպէ:

Ի նաւահանգստի անդ Սինոպայ էր
նաւ մի մեծ քան զամենայն նաւս ժա-
մանակին, որ սանէր տակառս լիս հա-
լիւբ. զայն առ խաղացոյց Մէհէմմէտ
արքայ 'ի Կոստանդնուպոլիս, և ինքն ևս
սկսաւ մեծամեծս այնուհետև կառու-
ցանել նաւս:

Ի Սինոպայ չուս արար թագաւորն
ընդ կողմն Կարնոյ, որպէս թէ ոչ 'ի
Տրապիզոն դէմ եղեալ ելցէ գնալ. այլ

'ի վերայ Ռազմն Հասան իշխանին Ազ-
գջունեաց անուանեալ տահմին Թուրք-
քաց։ Այս Ռազմն Հասան միեսոյ գո-
լով Դաւթի Կոմնենոսի ազգային Տրա-
պիզոնայ՝ 'ի հերուն հետէ գերապատ ա-
ռաքեալ առ Մէհէմմէտ՝ խնդրէր վասն
Դաւթի զազատութիւն 'ի հարկաց էր-
կուհազար ոսկւոյն. այլ և վասն իւր
զկարգեալ ընծայսն՝ զոր տայր, ասէ,
նախնեացն իմոց նախնին քո Մէհէմ-
մէտ ամ ըստ ամէ։ Եւ ազգայի յետս
դարձուցեալ զդեսպանսն ասէ. «Եր-
թայք 'ի խաղաղութիւն. ես ինձէն է-
կից ընդ հուպ, և հատուցից զպարտս
իմ»։

Էառ ապա զդքնաւոր բերդն Ռազմն
Հասանայ զԳոյունեաց հիսար. և մինչ
դեռ ի քանէր յԵրզնկայ, էլ նման ընդ
առաջ Սարա մայրն Հասանայ ընդ Հիւ-
սէյին անուն շեխին պատուական ըն-
ծայիւք. և հայցէր զխաղաղութիւն 'ի
գլխոյ որդւոյ իւրոյ։ Մեծաւ մարդա-
սիրութեամբ խօսեցեալ ընդ նոսա ազ-
գային, զնչաւ 'ի խնդիրն, և դարձաւ
դէպ ուղիղ 'ի Տրապիզոն։

Եւ քանզի բարձրարերձ լերինք գը-
ժուարուք էին 'ի Հանապարհին, մե-
ծաւ մասամբ հետի երանէր ընդ նոսա
Մէհէմմէտ ազգայ։ Ասէ ցնա Սարա.
«Եւ զիմիրդ յանձն առնուցուս, որ-
դեակ, զայդչափ վիշտս վասնզի վասն
Տրապիզոնի»։ Եւ պատասխանեաց ազ-

քայ. «Սուտ օսմանեան աւանդակ է ինձ, մայրիկ. և զիարդ կոչիցեմ Դաւիթ (այս ինքն է յաղթող), եթէ ոչ յաղթեցից ամենայն գժուարութեանց»:

Դաւիթ Կոմնենոս, որ յութից ամաց հետէ հարկաւոր գոլով Օսմանեանց թագաւորէր 'ի Տրապիզոն, աւուրբ յառաջ քաջութեամբ մարտս դնէր ընդ Մահմուտ փաշայի, որ կամեցեալ ամենեքեան լեալ էր անդր ընդ ծով քան զարքայ:

Երբեմն Հասան Մէհէմմէտ արքայ, աղդարար վաղվաղակի առ Դաւիթ, զի կամ էլցէ մեկնեսցի 'ի քաղաքէն ծառայիք և սարդուածովք հանդերձ յաղաւութիւն, և կամ յանձն առցէ անկանել ընդ նմա և 'ի կենաց միանգամայն: Եւ Դաւիթ անդէն վաղվաղակի զառաջինն ընտրեալ կալաւ, և ուղեորեցաւ ընտանեօք իւրովք 'ի Կոստանդնուպոլիս. և Տրապիզոն յաւէրաւ 'ի գաւառս տէրութեան Օսմանեանց:

Յետ ոչ բազում ժամանակի կասկած կալաւ զարքայ վասն նամակի իրիք գրելոյ 'ի կեռջէն Ուզուն Հասանայ առ Դաւիթ՝ որով հրաւիրէր նա առ ինքն զԱլեքս զեղբայրն Դաւթի. և հրամայեաց ընդ սուր անցուցանել զամենայն զառհին Կոմնենեանց, զԴաւիթ հանդերձ եօթանիւք որդւովքն, յորոց միոյն ուիթերորդ որդին Դաւթի եկեաց շարաչար՝ ուրացեալ 'ի հաւատոյն:

Ա յսոկս էգև բնարարաձ ՔՆՔուն ար-
քունական շքոյ 'ի սանէն Յունաց յա-
բեռ և յարեւմուտս ահագին արիւնհե-
զութեամբ և անհնարին նեղութեամբ
յամին 1461։

Մինչդեռ արքայ Մէհէմմէտ Երկրա-
կալութիւնս առնէր յԱսիա, անա-
գորոյն և խորամանկ իշխանին Վրա-
հայ Վլատ Տրակուլ անուն, զոր Օս-
մանեանք Դրաքիլը վոչվոտս անուանեն
սակս դիւահնար սովորութեանն ցցա-
հար ապանեալոյ զմիշտամիս իւր, ապ-
ատակէր 'ի սահմանս Օսմանեանց։

1 Բազում անգամ խնջոյս զուարճութեան
խրգէր, ասէն, 'ի մէջ բազմութեան ցցահար
ուղրելէաց։ Զոմանց 'ի գերբեալոցն Օսմանէանց
ընդծայր զմորթս յոտից իսուսէ, և զվէրան ա-
ղիս փայր ջիբեւ զայլոց զքաղքեղուանս 'ի գը-
լուխս նոցին բնէռէր։ Յաւուր մի Հրա-
ուիրեալ 'ի խրախճանս զամենայն մարդիկս
աղխարհին, մինչդեռ ուրախանոքա՝ հուր արկ
'ի գեղին և այրեաց զամենեսեան։ Նոյնպէս
հրդեհեալ այրեաց լրբեւհարիւր մանկունս
եկեալս 'ի Մահմուտայ յուսուցմն բարբարոս
վրահայ։ Ի խուսիածոպ մինչ ընալ զհինգ
հարիւր ասպետ որբերոյ աղխարհին՝ առ հա-
սարակ ցցահարս մահացոյց զնոսա։ Զոմն 'ի
մանկանց փեսեալ զի չեր հեծանէր՝ ինքն
հանդերձ 'ի ցից եհան. Բազ զայլ նս անա-
գորոնութիւնան անպատմելիս, որոնք 'ի սա-
կաս ամն կոգորեաց սաեալի գան զոգիս գոան
հաղար ընդ այր և ընդ կին և ընդ մանկիկ։

Արձակեաց արքայ ընդդէմ նորա զՀանկա ոգի զիշխանն Վխմենայ բազմութեամբ զօրաց, որ հրամիրէր նենգաւ զՏրադուլ 'ի խօսել ընդ միմեանս բերան 'ի բերան: Խնդացաւ Տրադուլ զդաւն, և կալեալ զՀանկա և զորս ընդ նմանն էին՝ առ Հասարակ 'ի ձեռաց և յոտից անողխատեն արար, և 'ի ցեցս եհար, և զՀանկա 'ի ցեց բարձրագոյն 'ի միջի նոցա: Յարձակեցաւ ապա 'ի Բուլ զարս, հրձիգ արար զքաղաքս և յաստակեաց զնոսա, և ած սարսուռ ընդ իւր զերկիս աւէրն քան զքան և հինգ հազար:

Զայս ամենայն լուեալ արքայի, զարմացեալ էրն արանց իւրոց երկիւղիւք և յիսուն հազարաց, որպէս ասեն, և առաքեաց զնոսա ընդ ձեռամբ Մահմուտ փաշայիսն միոջն 'ի Դամասկոս. և ինքն հարիւր և եօթանասուն հազարաւք եկեալ 'ի Սեաւ ծով, եմուտ 'ի Դամասկոս. և ուր և հասանէր այրեացուցանէր զքաղաքս և զգիւղս:

Տրադուլ առաքեաց զկանայս և զորդիս իւր 'ի Պարսիս. և զկէս զօրացն արձակեալ ընդդէմ խշխանին Մորուսիոյ որ ներքակակից էր Օսմանեանց, զմիւս կէսն պահեաց առ իւր արս հեծեալս եօթն կամ տասն հազար: Ապա անձամբ լուսեալ նոսա զարշանին Օսմանեանց, յարձակեցաւ ապա իւրովքն հանդերձ գիշերամառն 'ի վերայ նոցա Ջահիւք և լապտերօք, և կամէր մատնել

մինչև 'ի խորանն ազգայի. այլ վանեցաւ յենիչէրեաց։ Ճակատեցան կազմեցան վաղվաղակի Օսմանեանք, և յաւաղջեալ մարմն անդ հալածեցին զՎահս, և հաղար գերիս ածին առ արքայ, զորս հրամայեաց նա 'ի սուր սուսերի կոտորել։

Հետամուտ եղև Մէհէմմէտ Վահայ բանակաւն հանդերձ մինչև յանտառս ուրեք աշխարհին, և տեսանէր տեսիլ քաջելի. զի քան հաղար Տաճիկք և Բուլղարք գիակեացեալք զգահար կային սիրեալ ընդ երեսս գաշտին ընդ երկայնութիւն կիսոյ ժամու ճանապարհի, և Հանձա ոչ էր խրով իշխանական զգեստուքն 'ի մէջ նոցա։ Յապուշ հարաւ թագաւորն ընդ բուռն խժդժութիւն Գազբգլը վրվռային, որ յետ բարձեալ անդամ նեղելոյ ամենայն ուստիք զբանակն Օսմանեանց փախուցեալ առ արքայն Մահմատայ՝ 'ի կալանս բանտի արկեալ էր 'ի նմանէ։ Դարձան հրամայեալ առ արքայ՝ առպատակեալ զամենայն երկիրն Վահայ և ածեալ ընդ իւրեանս ոչինչ պակաս քան զերկերիւր հաղարս երիտասարդաց և այլոց անուանոց. և արքայ պատուիրեալ Ալիսէյ անուն իշխանի նոցա կարգել յանձնն Տրապուզայ զերգայր նորին զՄիսաուլ, դարձ արար 'ի Կոստանդնուպաւլս։

Թագաւորեաց Ռաուլ ամս հնգե-

սատան՝ հաստատանելով աղքայի ըզ
հարկն տալիսն սատն հաղար ոս-
կւոց. և երբոր սպանաւ նա յիւրոց անան-
դիւաբարոյն Տրդատայ զերծեալ 'ի բան-
սէ կալաւ դարձեալ զիշխանութիւն
երկրին. սակայն ոչինչ աւելի յերկա-
րեալ 'ի նմա քան զառն երկուս՝ սա-
սակեցաւ յուժգնէն 'ի գերեալ ի բոց
Յաժգեցուցին Օսմանեանք զդրախ նո-
րին յայլմանակաւ ընդ ամենայն քա-
ղաքս աշխարհին. և յայնմհետէ սիրա-
գեալեցին 'ի սպան աշխարհին Վրաց:

Աշնանի դիմեաց Մէհէմմէտ սրբոյ
'ի Լէռս, զոր Գենուացիք ունէին
յայնժամ [1]: Առաքեաց նախ զՄահ-
մուտ փաշա Եսմանասուն և Եսմն նա-
ւոք, և ինքն երկու հազար Անիչէրիս
բանակեալ սպան 'ի ցամաքակողմն կու-
սէ քաղաքին, սրդ. սրսր գենուացւոց
դրսի կղզոյն 'Անկոզայսն' անձնատուր
լինել խաղաղութեամբ: Եւ յընդդէմ
դառնալ դրսին՝ սպանելով յամրու-
թիւն սարսափայն, 'ի բաղմութիւն գի-
նուց և 'ի հինգ հազար սպառազինն,
Մահմուտ փաշա բան սկսարկութեան
սրբոյն զաւուրս քան և Եսմն բա-
խեալ խորհուրդս զգարիսոս քաղաք-
քին: Յայնժամ մեծաւ սարսաւեալ 'ի

1 Օսմանեանց յանուն գլխաւորք փաշայի
ինքնոյս Մէլիքինէայ Մէրիլլի յայնն ըն-
Լէռ:

Վերայ առաջնոյ հակառակութեանն՝ եկն անկաւ Նիկողայոս առաջի արքայի, և խոստանայր այնուհետև վասն նորա երդանել 'ի պատերազմ ուր և պէտք ինչ լինիցին։ Եւ յԱրաբի ինքնին առաջնորդեաց Նիկողայոս Մէհէմմէտայ յաղուն և այլոց քաղաքաց կղզւոյն։

Ապա յերիս տարուն Մէհէմմէտայ զենակիչս կղզւոյն, զտառապեալ և զանպիտան մարդիկն ելիսոզ յԵրուսաղէմ ընակութեան, զմիջակայինս պարդևեաց ենիչէրեացն 'ի գերիս և յաղախնայս, իսկ զՀնոյս խաղացոյց 'ի Կոստանդնուպոլիս՝ անձին պահեալ մանկունս և օրիորդս ուիմարիս։ Յետ սակաւուց յանցաւոր գտեալ և գուքան Նիկողայոս՝ ուրացաւ 'ի հաւատոցն, և առ ժամանակ մի ելեալ յերկարեալ 'ի կեանսն՝ ապա տրկաւ 'ի բանս և խոստովանեաց։

Զձմեռն զայն ոչինչ պարապեալ Մէհէմմէտայ շինութեանց 'ի Կոստանդնուպոլիս ներքոյ և արտաքոյ, կառոյց և զԴարդանելն քերդոպայն յամի 1464. զորոց զմին որ 'ի կոզմն Եւրոպայ՝ անուանեաց Սէտտ իւլպահր, այսինքն է Հո

և յիսուն հազար զօրք խաղաց 'ի վերայ աղքայրն Պոմպէոյ։ Քանզի նա 'ի հերուն հետէ 'ի գալ գերապանի Օսմանեանց և 'ի պահանջել զպայմանեալ հարկին՝ ածեալ էր զնա 'ի տուն գանձին, և ցուցեալ նմին զդրամս հարկին 'ի պարարտան՝ ասէր. «Ասակ է դրամն զոր չկամիմ ես քեզ առաքել առ Թագաւորդ. զի Թէ նորա կամք լցեն պատերազմաւ յառնել յիմ վերայ, սա ինձ լինիցի 'ի նպաստս մարտի. և Թէ հարկեցայց երբէք վճարանդի լինել յոշխարհէս, ապայն և յայնժամ առաքել 'ի պէտս ինձ լինիցին սոքա»։ Մէհէմմէտ աղքայ առ զայրոյթ ցասմանն բանսարդել արար զգերապանն. և ինքն արձակեալ նմա զՄահմուտ փաշա՝ գէմ եգ և անձամբն զկնի նորա։ Էառ զքաղաքս բազումս, էր զոր ինքն նին, և էր զոր 'ի ձեռն խլոյց զօրավարաց, և 'ի վերջէ պաշարեաց զՄագաւորն Պոմպէոյ յամուրն Քլիւշ։

Էին զքաղաքսն շուրջանակի Հայէնք մեծամեծք՝ որ 'ի տապոյ արեգական ցամաքեալ էին. և Օսմանեանք կարեալ զջուրս եղեգանցն և զսէգս շրբացեալս, լցին 'ի խրամն քաղաքին, և հուր հարեալ 'ի նոսա բորբոքեցին հրդեհ մեծ։ Յայնժամ Թագաւորն պատգամաւորս առաքեալ խոստանայր անձնատուր լինել, եԹէ երդուիցէ վէզիրն շնորհել նմա զկեանսն։ Երդուաւ նա,

և զքաղաքն առեալ՝ զքնակիչսն յերիս բաժանեաց, որպէս 'ի Լեպրոս. իսկ զՆոխս քաղաքին հանդերձ թագաւորաւն տարաւ յինծայ ազգայն։

Դժկամակ եղև յոյժ ազգայն ընդ երդումն Մահմետայ. զի ասէր թէ զեր ժառանգել յանդորրս զերկրակալութիւնս, բայց ապաստանեալ ազգայս նոցին։ Այլ առ ժամն 'ի կարանս արկեալ զիթագաւորն Պոնիոյ՝ ապաստանեալս նոցա և զինուցեալ գաւառս նորա, և ապա վերին երդոյց յԱլի Պէգասին առնուն զիսնականն ամենայ վասիսաւն և երկոյ՝ եթէ օրէն իցէ ապաստանել զիթագաւորն Պոնացւոց։ Եւ յասել նորա թէ կարի իսկ քաջ, կոչեաց Մէհէմմէտ զերկերլի թագաւորն զառաջեաւ. և նա գուշակելով իմն զապէտս իւր էին առնա՝ ասելով 'ի ձեռին իւրում զերդ ցնորդիրն Մահմետայ։ Իսկ Պէգասին որ ջրեալ էր զայն իւրով վնասն, յանձն էառ զահիճ նա կալ նմին, և երդաս իւրով ձեռամբ զգլուխ թագաւորին։ Եւ Պոնիա նա յաւէլաւ յոյժ մեծ 'ի գաւառս պատմեան Օսմանեանց։

Իսկ ազգայն հաստատեալ 'ի կուսակալ Պոնիոյ զՄիհնեմեթ պէյ՝ դարձ արար 'ի տեղի իւր։ Երեսուն հազար Պոնացիք կարգեցան 'ի գունդս ենիչէրեաց, և ամենայն ազգ զօրութեան դրեցան 'ի զինուորութիւն Օսմանեանց։

Յաջին երկրորդի ազգ եղև Մէհէմ-

մեռաց եմք արքայն Մահմատայ Մա-
ատամիսաս Քորմին առեալ է զգլխաւոր
քաղաքն Պոանիոց զՆայձա։ Դիմեաց
անդր երեսուն հազար զօրք, և պատ-
նէշ պաշարեսին՝ ի նեղ էարկ զքաղաքն։

Մինչդեռ Օսմանեանք առեալ զ-
մարտս գնէին, և արքայ 'ի Թիկանոց ան-
ցին կացեալ հրամանս կարդային, ոմանք
'ի նոցանէ յարձակեցան երթին 'ի պա-
տերազմն. և մի ոմն այն ինչ յարձակէր
յաշտարակէ անտի զգրոշն, մինչև
ունն հարան 'ի վերայ տանկին, և նոսա
հանեցեալ հանեցան ընդ պարիսպն։

Եբարձ այնուհետև Մէհէմմէտ զրա-
շարանն, զի և Քորմին արքայ այլոք
պաշարեալ էր սատակապէս զամրոցն
Զվորնիք։ Յայնժամ Մահմատ փա-
շա ընդ իւր առեալ զամենայն զօրս
վարս երթայր անդ զօրայ՝ զԷրինա-
սեանսն և զՄիսալեանսն, յարձակե-
ցան 'ի վերայ Մահմատայ. որք և շուտ
սպանեալս 'ի փոխուստ դարձան՝ թո-
ղեալ զամենայն զկահ և զկարասի բա-
նակին իւրեանց առ բերդաւն, և վերկին
հալածեալ զարքայն Մահմատայ մինչև
'ի գետն Սաւա։

Ընդ պատերազմին սկսելոյ 'ի Պա-
նիա սկիզբն եղև կրկին պատերազմաց
նա, մին ընդ Վենետիկցիս 'ի Պերզոպոն-
նեսս, և միւսն ընդ Գարամանս յԱսիա։
Բաւական մի ոմն 'ի գերեաց կուսակալին
Օսմանեանց յԱթենս՝ փոխուցեալ ան-

կեալ էր 'ի Կարն առ Վենետիկեցի ոմն ազնուական. և 'ի պահանջիլ կուսակալին զայրն իրրև ոչ անասց Վենետիկեցին՝ առելով եթէ գերին այն քրիստոնեայ էր զի, յարձակեցան գունդք Օսմանեանց յԱրգուս և յԷյնեպախտի և 'ի Մեհձոն: Զայն իրրև զգացին Վենետիկեցիք՝ առաքարկեցին արձակել անդր զծովակալն Լորենսոն, որ էկեալ պաշարեաց զԿորնեմոս: Ի նմին ժամանակի եհաս 'ի տեղին Էշլերն մեծ ուժառն հաղարաս. յորմէ զարհուրեալ Վենետիկեցւոց 'ի փոխառաս գարձան:

Ա յսոսկս Վենետիկեցիք զանս վերաստան մարտ էգեալ, Թէոդէա և բազում արուեստիւնս ցուցեալ ընդդէմ Օսմանեանց՝ ապատամբեցուցին 'ի նոցանէ և զբազում քաղաքս Յունաց, սակայն 'ի վախճանի եթէ ոչ 'ի ապատ վանեցան անտի, այլ ամենեքեան 'ի նախնի ստեղծեալ իւրեանց:

Իսկ 'ի Գարամանն քանզի մեռեալ Խաղրահիմ ոչէ՝ Թողեալ էր իւր յաջորդ զկրտերն յեօթանասն որդիս իւր զԲահադ. ասի ծագեաց 'ի նոսա խռովութիւն մեծ, և զիմեցին երկոցունգ զոյնքն առ Մէհէմմէտ արքայ. և Բահադ առ Ուզուն Հասան՝ որ հզօրացեալ էր յոյժ յԱսիա:

Խաղաց արքայ Մէհէմմէտ ամենայն զօրքն գարձեալով 'ի Պոլսոյ և 'ի Պերգամոնէսոյ 'ի Գարամանն. էառ զԻ-

կոնիոն, և առաքեաց 'ի վերայ Լարինա քաղաքի (որ և այժմ Գարամանն) զՄահմուտ փաշա։ Անդանօր մարտ սաստիկ եղև, և Խնդագ երեալ 'ի քաղաքէն փախեաւ մարդասպանելն անդր քան զՏարսոն. որով և այս սէրուեթիւն Ասիոյ զինի հարիւր և վեցասուն տեսց ժամանակի յամին 1466 մարդ եկաց Օսմանեանց մինչև 'ի սպառ։

Հրամայեաց արքայ Մահմուտ փաշային զամենայն պուռնասաւորս Իկոնիոնի և Լարինայայ խաղացուցանել 'ի Կոստանդնուպօլիս. և զի նա ըստ յաշխարհս զմասէր բարուցն ինայեալ էր յոմանս, այսր ազգաւ և տակս այլ ինչ պատճառաց սրբասասանեցաւ առ արքայն 'ի նախանձորդէն իւրմէ յուրացելոյն Մէհէմմէտ փաշայէ, և մերժեցաւ յիշխանութենէն։ Իսկ յետոյ մերժելոյն, զոր սոէպ է տեսանել այսուհետև 'ի պատմութեան Օսմանեանց, եղև յանկարծակի կործանել զօրացն զվրան մեծի վէզիրին 'ի գլուխ նորա։ Անց 'ի տեղի նորա Բուռմ Մէհէմմէտ փաշա, և կարգեցաւ կուսակալ երկրին Գարամանայ երկրորդ արքայորդին Մուսդաֆա անուն։

Յամ էր այնուհետև նկուն առնել և զԽաքէնտէր ոչ, զմանկանութեանն ՅՕսմանեանց Խային, որ զդաշնն պայմանեալ ընդ Մէհէմմէտայ վաղուց ևս լուծեալ, և 'ի բազում Հակատամարտս

յաղթական լեալ էր զօրավարացն Օս-
մանեանց, որպիսիք ամենք էին Շէր-
մէթ պէյ, Պալապան պէյ, և Եաղուպ
պէյ։

Իբրև եառեալ Մէհէմմէտ զքաղաքն՝ զի ան-
պարտելի ճնաց այլն յայնչափ պատե-
բազմունս, հնարեցաւ գաւել զնա 'ի
ձեռն երկուց ամանց յիւրոցն՝ որ փա-
խստականէից կերպարանաւք առ նա ապա-
էիներցան և խնդրէին քրիստոնեայ լի-
նել։ Սակայն 'ի շյաջողել գաւոյն
չուեաց գնաց ազգայ և պաշարեաց զնա
նոքին զքաղաքն Քռոյա. այլ պարտա-
սեալ 'ի յարձակմանցն Իսքէնտէրայ՝
եթող անդէն զՊալապան ուխտաւն հա-
զար զօրաք, և ինքն ամենայնով զբերդն
Կրպասան, և հիմնայատակ կործանեաց
զՀռոմն՝ զոր կառուցեալ էր Իսքէն-
դէրայ յսոքն ծովու մերձ 'ի Տիւրաճ։
Ի նմին ամի մեռաւ և Իսքէնտէր պէյ
ամենց վասնաւն և երկոց, և երկիրն Ան-
նուուստայ եղև մի 'ի նահանգաց Օս-
մանեան պետութեան։ Ոչ յետ բազ-
մաց մեռաւ և Քռոմլիչ խլեան մերձա-
կայ գաւառին, և այն ևս յաւելաւ 'ի
պետութիւն Օսմանեանց Հէրսէկ ա-
նուամբ։

Զամն երկուս յետ այնորիկ դարձ-
եալ Մէհէմմէտայ յաշխարհակալու-
թեանց, կառոյց 'ի Կոստանդնուպոլիս
զնոր ապարանիսն 'ի Տրուանդանի անդ՝

որ 'ի հեռուն Վասիլիոն կոչէր [1]։ Եւ ապա առ 'ի կարձէլոյ զանընդհատ ապաստակութիւնս Վենետիկեցւոց 'ի Պելոպոնեսս, արձակեաց անդր զՄահմուտ փաշա որպէս ծովակալ հանդերձ երիքհարիւր նաւուք, յորս էին եօթանասուն հազար ոգիք։ Եւ ինքն նոյնչափ զօրօք ջուրեաց ընդ ցամաք, և բանակեցաւ հանդէպ Եւբէայի կամ Էյրիպոլ կղզւոյ։

Պաշտեալ ապա նաւակամուրջ մեծ՝ զամենայն զզօրս իւր անցոյց 'ի կղզին, և պաշարեաց սաստկապէս զքաղաքն։ Իսկ ծովակալն Վենետիկեցւոց յանխորհուրդս խարեալս արկեալ հուր 'ի կրակն՝ մեայր այլոց նաւուց հասանելոյ 'ի Կիպրոսէ։ Եւ թէպէտ նաւապետն Ընտուն Օթթոպոնի խրախուսեալ ձեռքեաց զտորմիղ Օսմանեանց և եմուտ 'ի նաւահանգիստն, այլ միւս ոմն նաւապետ 'ի նեղբուսաս մատնեաց էր առ թշնամին։

Ի զանազան յարձակմունս քան հազար Օսմանեանք և երեսուն նաւք եղին 'ի վատնումն, և Մէհէմմէտ ապաց այլ ևս զօրս անցոյց 'ի ցամաքէ անտի 'ի կղզին, և 'ի հինգերորդում յարձակ-

1 Հոյակապ շինուածոյս մեծի ի բերան լուսնի ելանի է ի ջրաբաղին, և երանս ունի եօթն էլի և մի ընդարձակ։

ման անդ էառ զքաղաքն. և էին ան-
կեալքն յՕսմանեանց յիսուն հազար
և 'ի Վենետկեցւոց ոչինչ աւելի քան
զվեց հազար: Սմին իրի Մէհէմմէտ ար-
քայ զամենայն զՎենետկեցիս քաղաքին
մահու շարաւ սպան, էր զորս մորթե-
զերծ առնելով, և էր զորս քարակոշ
կոձ տանջանօք բառնալով 'ի կենաց. և
զիշխան կղզւոյն զՊօղոս Էրիկցոյ ընդ
մէջ սղոցեաց հանդերձ այլովք ոմանքք
յաւագաց, իսկ զՅոյնս վարեաց 'ի գե-
րութիւն:

Ի նմին ամի որ էր 1470, արձակեաց
'ի Գարամանն 'ի վերայ Գաղրմ սէյին
որդւոյ Խարահինայ պաշտպանելոյ յՍու-
զան Հասանայ զվեզիրն Մէհէմմէտփաշա,
որ գիմեալ էառ զքաղաքն Հե-
րակլիա և Լարենտա. այլ ապա խորտ-
տակեցաւ 'ի միոյ 'ի զօրավարացն Վար-
սապ անուն ոմանց Թաղիարաց. և թող-
եալ զամենայն առաքն՝ փախեաւ. և
արքայն ապիեալ զնա յիշխանութենէն,
կարգեաց վեզիր մեծ զԻսահակ փաշա
զկուսակալն Պոնտիոյ [1]:

Խաղաց Իսահակ փաշա 'ի վերայ Գա-
զանայ. և հար վանեաց զնա, և զբազում
ամուր ամուր տեղիս առեալ, զքնա-

1 Բռամ Մէհէմմէտ փաշա պարսաւի յՕ-
սմանէանց որպէս այր ծլոտ և արծաթասէր,
և պոպճաս հասարակաց որոց խլտաածոյ՝
որ էուլին Մուֆաղամ:

կիշան խաղացողց 'ի Կոստանդնուպոլիս:

Ի միում ամին կոչեցեալն Կէոթիք Ահմէտ փաշա, որ յառաջն յենիչէրեաց կարգին էր, ջուրց 'ի Գարամանն, պաշարեաց զԱլայէ, և զիշխան քաղաքին որ կոչէր Գիլիճ Արսլան՝ յանձնառութիւն լինել առաքեաց 'ի Կոստանդնուպոլիս, և ազգայ էտ նմա 'ի կալուած բնակութեան զԿիւմիւլճինէ:

Յաւուր միում որոյ պատճառանաց փախեաւ Գիլիճ Արսլան յՆգիպտոս, և առաքեաց անտի առ Կէոթիք Ահմէտ փաշա զանին մի պատուական զառ 'ի յարքայէ ինքեան պարգևեալ, զի տացէ անդրէն արքայի: Ահմէտ խառն ընդ այլ ակուն առաջի արար թագաւորին և զայն՝ իբր 'ի գիտաց ակնամաճառի ուրուք. այլ ուշեղ արքայն ծանեաւ վաղվաղակի զնոսին:

Ապա էտ Ահմէտ զՄուգան բերդ և զայլ տեղիս. այլ 'ի լուր գալստեան Ուզուն Հասանայ խոյս էտ յԻկոնիոն:

Այս Ուզուն Հասան գոլով 'ի տոհմէ Թուրքաց Գարա գոյունեղու անուանելոց, 'ի քան ամաց հեռի զօրացեալ ակնեալ էր և Ազգոյունեղս տոհմին, և առեալ զամուրն Ամիդ, զՏէվէլի հիսար, զԱրղաստական աշխարհն, և ըզմեծ մասն աշխարհին Պարսից: Ու նա գիտեալ էին և որդիք Խրրահիմ ակէին Գարամանայ Փիր Ահմէտ և Գասիմ, և այլ ևս վասանդի իշխանք. և նա նո-

քաջ հանդերձ յարձակեալ էառ զԵ-
գոկիա և հրձիգ արար, և զքնակիչսն շա-
բաշար խաշանդանոք ազգի ազգի սատ-
ջեալ մահապարտ ոչինչ ընդհատ քան
զոր Լենկիմուրայ գործեալ էր 'ի
Սեբաստիա։

Զայն իրրև լուաւ արքայն Մէհէմ-
մէտ, բորբոքեալ 'ի ցասումն բարկու-
թեան հրամայեաց հարկանել զիսրան
իւր յԻսակիւսարդ, և առ իւր գալ ժո-
ղովել ամենայն զօրավարաց։ Կարգեաց
դարձեալ զՄահմուտ փաշա յառաջ-
նորդ խնամատարութեան. եւ որդւոյ իւ-
րում Մուսադափայի կուսակալին Գա-
բամանայ զարարարութեան պաշ-
տօն ինքնագիր հրովարտակաւ [1]. և կա-

1 Ան իսկ է Խաղդի ընդիկ, զորոյ զա-
ռաջին գոնն առնոր է դրուցել արքայ իւրով
յԵռամբ։ Ալ այն Բռաղի նորին իսկ Մէ-
հէմմէտայ գրով ընդարձակ, ահա պահ ա-
պանօր զԻարգմանուրիւնն առ 'ի ցոյց ոճոյ
այսպիսի հրովարտակաց. «Բարնէասպ որ-
դէակ իմ և մանուկ հզօր, լոյս ալոց գեառնս
և Բագաւորիս, զարդ քառաց և պայծա-
ռուրիւն վայելչուրիւնն դրախտի ամրապէ-
գուրիւնն, սիւն հաստատուրիւնն հաւատոյ
և ալիարհի, ներցուկ ամրուրիւնն մահմէտ-
կան ազանց, ընդարձակ Աստուծոյ գնդրագոյն
Բագաւորին որդեակ իմ Մուսադափ, որոյ
Բազմացին ասուրք ֆէնաց և ֆոգարբեսցին
իշխք հաճոյից։ Ի ծանանել առ քեզ արքա-

մէր արձակեալ զբերան 'ի Գարամանն։ Ապա առէր Մահմուտ փաշայն ցարքայ բազում խոհական զգօնութեամբ, եթէ քանզի ձմեռն 'ի վերայ հասեալ կայ, թէ հաճեսցի արքայ՝ շատ գրեսցէ այժմուս առաքել անդր զՏաւուս փաշա զկուսակալն Ասիոյ, զի ընդ արքայորդւոյն Մուսադաֆայի պահ եթէ կալցի աշխարհին ընդդէմ արշաւանացն Թուրքմենաց։ Եւ արքայ հաւանեցաւ նմա։

Նախան գրոյս երկանկի գիրս ուրիշ՝ զի Ռաղուն հասան արքանին խախաղանի և հեղ յամղյուն մահու վասն ամենայնի զոր անցոյց ընդ Էպոսայիս և ընդ ճիհանկահ, զոր և զեր խորքակեսցէ մերկ ընդ մերկ, նամակնի և պէսպէս արար առ մեզ լի ծարհուրեամբ և ընդանաւօք։ Մեք ելանեցաք նմա զպատգամանին որ անմատոյ է 'ի դէպ, այսինքն է զաբաուրեան, որով և աղուէսն խորամանկ 'ի նապատպակ քուրի վերհերուքն արդ ահա պարբասիմ սպառազինեալ նմին հանեալ ասի-ծովն մերովք 'ի մարդ պատերազմի։ Արդ գիրքերով զո զի ելանք նորին լուսաւանք 'ի սարբելոյ որդւոցն Գարամանայ զոր եդեալ են մերամ աշխարհիս, ահա խորգեալ եմ զքեզ առաջնորդ զբերոյ իմոյ, վանեալիր զնա։ Եւ 'ի վերայ նորա նիզակիցորեամբ հոգնապետացն Եւրոպայ և Ասիոյ։ և մի զանց արասցես մի և զմովի խրիք 'ի հաւանութեան զնա փանել փեսան օգնականութեամբ։

Ի նմին ամի Օսմանեանք՝ ի պար-
սուիթիւն մասնեալ զզօրավարն Ռա-
զուն Հասանայ զԵռուսուֆ միրզա, ձեր-
բակալ արարին և զնա ինքն զզօրավարն,
և առաքեցին առ արքայն Մէհէմմէտ,
և նա էարկ զԵռուսուֆ 'ի բանտ։

Գարնանն չուեալ արքայն Յենիշէ-
հիր, հանդէս արար զօրաց իւրոց հա-
լիւր զարաց 'ի գաշտին Սեբաստիոյ։
Խաս Մուրատ փաշա կոչմնական եւ բա-
պեան քառասուն գրօշիւք և քսան հա-
զար Ենիշէրիւ օք կայր յաջուստ թեւի ընդ-
առաջնորդութեամբ արքայորդւոյն Պայ-
էզիտայ, Տաւուտ փաշա քսան և չորս
գրօշիւք և քսան հազար զօրականօք 'ի
ձախուստն ընդ սպարապետութեամբ
Մուստաֆայի, և արքայ շուրջ փա-
կեալ յինանր ընտիր հեծելոց 'ի միջա-
վայրին։

Արձակեցան նախ հրամանքն, որոց
զօրավարքն Աղիսէյ Մեհմատեան, առ-
պատակեալ յերկրին Ռազուն Հասանայ,
որ ամրացեալ էր ուրեք առ Եփրատ-
սաւ։ Ապա գիմագրաւ եղև Խաս Մու-
ռատ փաշա յառաջապահ գնդաւն ընդ-
դէմ խորհրդոյ Մահմուտ փաշային,
և Հասան կեղծ փախստեամբ խոտ-
բնցուցեալ զՄուրատ մինչև 'ի տեղին
ուր զարանեցուցեալ էր զզօրս իւր՝ խոր-
տակեաց զգունդ նորա, տպան զնա, և
ձերբակալ արար զԻմամբ պէյ զորդի
Դարխանայ ընդ այլոց ամենց զօրա-

վարաց։ Խօսեցաւ Հասան ընդ խամ-
բայ յոխորտաս, և ասէ. «Արդ բեկի և
ահա զոմն Օսմանեանց՝ ձերբակալեալ
զմի միայն արի զօրավար նոցին զորդի
աշխարհակալին Դարիանայ»։ Եւ պա-
տասխանեի խամբը. «Խաբիս խշանդ.
զի հարիւր հազար զօրավարք քաջք գը-
տանին 'ի ձեռս մերոյ ազգային»։ Եւ
զորբոքեալ ցասումն Հասանայ հաշիւ
կարաց շինուցանել ոգոք բանիւք։

Յետ աւուրց ինչ Մէհէմմէտ ար-
քայ սիրելեաց զանձն և զզօրս իւրոսե-
լեամբ երեալոյ ՝. «Տեսանիցի ասէ յա-
նուրջս զանձն իմ բռնանարտիկ լինել
ընդ Հասանայ 'ի հանդերձս ըմբշաց։
Զառաջինն ընկիցէր զիս Հասան. այլ
ես անդէն 'ի վեր ոստուցեալ բախեի
սասիկ հարուածով զանջնորա, մին-
չև մնան 'ի գրէն Հասանայ պատա-
ռեալ յերկիր անկանէր»։ Եւ ընդ հուպ
կատարեալ հանարեցաւ երազն։

Քանզի Ճակատեցան երկոքին կող-
մանքն ահեղ պատրաստութեամբ մերձ
'ի Դերջան։ Ուզուն Հասան զաջ թև
իւրոյ բանակին 'ի ձեռս տայր որդւոյ
իւրում կրտսերոյ, որում անուն էր
Զէյնել, և զձախն երկոցուն Ուզուրլու

1 Տաճիկք զանուրջն գտանէրորդ նան
հանարին մարգարէութեան. նա զանուրջն ար-
դարոյ ուլինլ ընդհոպ ասին լինել գան գրէ-
ին և զմարգարէութիւնս։

Մէհէմմէտ կոչեցեալ։ Սոցին հանդէպ արձանացեալ կային ասսի աղքայրդին Մուսադաֆա ասիացի զօրօքն ընդ ձախմէ, և աղքայրդին Պայէզիտ Եւրոպացւովքն և Ենիչէրիօք ընդ աջմէ։ Ընդ 'ի խառնել մարտին խորտակեցաւ աջ թեւ բանակին Հասանայ, և անկաւ որդի նորին Զէյնէլ։ Մի ոմն 'ի սպայիցն Օսմանեանց ազատարեաց տարաւ զգլուխն Զէյնէլայ և եդ առ ոտս աղքայրդւոյն Մուսադաֆայի, և նա առաքեաց զայն առ Հայրն իւր. որում Ճշմարտեալ թուեցաւ և երանն աղքային, իբր զի որդին հատոր է որոյ հօրն։

Ապա վանեաց և Պայէզիտ զձախ թեւ բանակին Հասանայ, և խռովեաց զամենայն զօրս Թիւրքմէնացն. մինչև ինքն իսկ Ուզուն Հասան մարդասիրս ճողոպրեցաւ 'ի փախուստ՝ թողեալ Օսմանեանց զբանակն իւր հանդերձ կահիւ և կարասեաւ։

Զաւուրս երիս զուգի կային անդէն Մէհէմմէտ աղքայ 'ի կռապէլ ըզգէրիսն. յորոց զգիանականս ոչ միայն ազատս արար 'ի կապանաց, այլ և մեծապէս պատուեաց զնոսա։ Նոյնպէս արձակեաց յազատութիւն և զիշխանս որ 'ի կալանս գերութեան կային առ Ուզուն Հասանայ։

Իսկ 'ի գառնալ բանակին յետս մինչև 'ի Գարահիսար, ըստ ամենայն իջևա-

նաց կոտրած լինէր շրջէքարիւր գե-
ղեաց. որով ապատուն յուզուէր անդ և
բէքհազար թիւրքմէնք։

Ի սկզբան անդ պատերազմին 'ի հա-
ստատել Օսմանեանց յայս ամիս, Մահ-
մուտ փաշա խորհուրդ տուեալ էր ար-
քային նախ զաս առնուլ, զի մի ոնի-
ցիմք ասէ թշնամի զոք 'ի թիկանց մե-
րոց։ Եւ պատասխանի Մէհէմմէտ ար-
քայ զայրացին և ասէ. «Ոչ յառաջ
բերդից եկեալ է մեր այսր, այլ 'ի վա-
նել խորտակել զչորս թշնամեաց»։
Զկնի պատերազմին Դերջանայ յորում
պարտեցաւ Ուզուն Հասան, բերդա-
քաղաքն Դարահիսարայ Տարսայ ոչ ինք-
նին անձնատուր եղև, և պատուեցաւ
'ի Մէհէմմէտայ կուսակալութեամբ
Զիրմէն գաւառի։

Իսկ Էհաս Մէհէմմէտ արքայ Ա-
գրիմուսաղլու, բաժանեաց զձոիս ա-
ւարն 'ի մարտիկս իւր, և յաւել պար-
գևել նոցա փոքր տուն միլիոն, և ազա-
տութիւն շնորհեաց գերեաց իւրոց ա-
ւելի քան քառասուն հազարաց՝ իբրու
զոհանալով զԱստուծոյ ակն մեծի
յաղթութեան։ Ապանակեաց թագաւորն
Հիւսէյին Պայդարա և առ որդին իւր
ճեմ Իշխան Քաղէմոնենայ, և հրա-
մայն էր կուսակալաց և բդեշխաց առ-
հասարակ հանդէս ցնծութիւն կա-
տարել 'ի քաղաքս և 'ի գիւղս։

Ապա՝ի գառնալ իւրում՝ ի Կոստանդնուպոլիս՝ սրկ գարձեալ զՄահմուտփաշա յիշխանութենէ։ Եւ պատճառաք՝ համարձակութիւն նորա թոռի՝ ի սալ խորհուրդս արքայի. այլ կերպարանք այնպէս համբաւեցաւ՝ եթէ՝ ի մեռանել արքայորդւոյն Մուսդաֆայի՝ ի նոյն աւուրս՝ Մահմուտ փաշա փոխանակ թխադրեաց լինելոյ և՝ սուգ մնանելոյ՝ ի հանդերձս ապխտակս նստեալ և՝ ի խաղնարարս զբօսեալ ցցէ. սակս որոյ և մահու պարտս համարեալ զլեսանեցաւ։

Այս Մահմուտ փաշա առաջին է՝ ի վեզիրս Օսմանեանց, որ անանց եթող յիշատակս աւանդաբերս և աշխարհաշէն բարուց իւրոց։ Զի ոչ միայն մեծարէր և պատուասիրէր զգիտակսն, այլ և ինքն քերթուածս յօրինէր։ Եւ մեկնիմք և բարձնիք և վարձառնոցք լինեալք՝ ի նմանէ՝ ի Կոստանդնուպոլիս, յԱդրիանուպոլիս, յԱնկիւրիա և՝ ի Սոֆիա, ցարդ ևս յանուն նորա յիշատակին։ Յաւ մնոյն աւուրս հինգշաբաթուց հրաւիրէր յընթրիս իւր արս գիտակսն, և տայր արկանել՝ ի սեղան, եթող զայլ կերակրս, և սկաւառակ մի բրնձոյ և սխառան։ Սխառանքն մեծաւ մասամբ ձոյլ ոսկիք էին, և որչափ ինչ գայր՝ ի տարգաչ առն առն՝ այն նորա էր բաժին. և Մահմուտ յաւելոյր ասել. «Առ քաջաբախտ ոսկին ինքնին գայ՝ ի քերանն»։

Հանքաւեալ են և խնամալից քանք Մահմուտայ առ արքայ։ Որպէս այն զի 'ի հարցանել արքային ցումն գիտանական եթէ զինչ պատճառք իցեն նուազելոյ գիտութեանց 'ի Խրիմ, ուր էր բեռն գաղանէին աւելի քան զշրջեքարիւր արուեստս գիտնոց, ետ պատասխանի գիտնականն և ասէ. «Առ յանցանաց է այդ վեզիրիս մեծի, զի շարաւելոյն զդաս գիտնականաց՝ զԽրիմ ըզդրախան երկրաւոր փոխեաց յանապատ անմարդի»։ Յայնժամ Մէհէմմէտ արքայ դարձուցեալ զբանն առ Մահմուտ՝ յորդոր լինէր նմա 'ի պատուիրանել զուսումնասէրս, և փութացան գաղանել 'ի զարգացումն գիտութեանց։ Իսկ հանձարեղն Մահմուտ ասէ հանդարձակ. «Արդարև յանցանք են այդ վեզիրիս. այլ առաւել ևս արքայի, զի չգիտաց ընտրել զուսապոյնն»։

Դարձեալ և 'ի կամակին խրատ գրեաց, ասեն, Մահմուտ այսպէս. «Մեով երիվարաւ, մեով առաքաւ, և հինգհարիւր փողով մատեայ ես մինչև 'ի գահն արքունի. և զոր ինչ 'ի վերայ շահեցայ՝ ամենայնն արքայի անկ է, յորոյ 'ի գթութենն առնեմ ապատանն զկեանս որդւոյ իմոյ Մէհէմմէտայ և զպահպանութիւն շինուածոց իմոց յոգուս հատարակաց»։

Յառաջագոյն քան զմահ մեծի վեզիրին առաքեալ էր արքայի զՄէհմէտ Ահմէտ և զորդին իւր զՄուսդաֆա 'ի

նուաճել զինացեալ ամենայն ամենայն տե-
ղիս Գարամանայ։ Փիր Ահմէտ ամիրա-
ցեալ էր խրովքն հանդերձ 'ի բերդն
Մինան. և Կէտիք փաշա յետ առնլոյ
զամուրն Էրմէնակ՝ պաշարեաց սասա-
կապէս և զՄինան, և էառ զայն։ Յայն-
ժամ Փիր Ահմէտ հոսեաց անձամբ
զանձն իւր 'ի բերդէ անտի և մեռաւ։

Ապա էառ Կէտիք Ահմէտ փաշա և
զՄելիկիա քաղաք մասնաւորութեամբ կա-
շառաբերկ պահանջողացն։ Քանզի սո-
քա զպատրոյգսն դիւրավառս փոխա-
նակ 'ի բերանս հրացինուցն և ոմքաց
արկանելոյ ընդդէմ պաշարողաց քա-
ղաքին, 'ի մեծերս անդր վառօղոյն ար-
կին զնոսա. յորոյ 'ի բորբոքելն ահա-
գին ճայթմամբ և 'ի պատառել զպա-
րիսպն՝ խուժեցին Օսմանեանքն ընդ-
խրամատսն 'ի ներքս 'ի բերդն, և սուր
'ի վերայ եդեալ կոտորեցին 'ի նմա ո-
գիս հարիւր և ութսուն՝ որ չէին յանձն
առեալ զմատնութիւնն։

Իսկ արքայորդին Մուսդաֆա մինչ-
դեռ պաշարէր զբերդն Տէվէլի գարա
հիսար՝ հիւանդացաւ, և յանձն արար
զառուն բերդին 'ի Գօնա պէյ։ Բեր-
դակալ եղեալն Ամմանձա պէյ ոչ կա-
ցաւ յանձին տալ զբերդն, բայց էթէ
'ի ձեռս արքայորդւոյն. և Մուսդա-
ֆա խօսեցաւ էրմեալ 'ի բերդն՝ տի-
բեաց ղեմին. այլ դարձ արարեալ յԻ-
կոնիոն, 'ի Հնոսպարհին մեռաւ 'ի
Նիկոմ։

Յայնժամ կարգէցաւ յարքայէ՝ մեզ նոցա կուսակալ Գարամանոյ միաւորդիւն եւ Ճէմ իշխանն Գաղէմանեանց. իսկ փոխանակ Մահմուտ փաշայիւն ապանելոյ կարգէցաւ Վէզիր մեծ Կէանիք Ահմէտ փաշա։

Մինչդեռ այսպէս ասիացի Օսմանեանք երկրակալէին՝ ի կողմանս Կիլիկիոյ, ոչ գադարէին եւրոպականքն՝ ի չորից ամաց հետէ սպասակիր՝ ի Մաշհաւս մինչև՝ ի Վարսաւիս, և յերկիրն Խրուսիոց և՝ ի Դաղմատիա մինչև՝ ի քաղաքն Լուսիանա։ Եւ Պալի օղլու Մարգովիչ կամ Մարգոչ իշխանն Սէմէնտրէի առաքեաց՝ ի Կոստանդնուպոլիս բազում պարկս ցեղաց գլխով և ընչով բնակչացն Վարսաւիս։

Ոչ նոյնպէս յաջողեաց եւրոպական կոչնապետին Խաստիմ Սիւլէյման փաշայի առնուլ զԱքորա կամ զԻպէնտրէյէ քաղաք Ադնաւուտոց. զի թէպէտև Օսմանեանք խրամատեալ զպարիսպն զերան՝ ի ներքս, այլ քաղաքացիքն առաջնորդութեամբ Ընտանի Աղեսան վիճակեցոյ ժամն ուստ պատերազմեալ վանեցին զպաշարիչսն. և նոքա՝ ի դարձին իւրեանց ապատակեալ ընդ գաւառն՝ որս քան հազար՝ ի գերութիւն վարեցին մինչև՝ ի գալ՝ ի Բակուզա։ Եւ քանզի՝ ի պաշարման անդ Աքորայ երկու ապտք բակուզացիք բազում արութիւնս ցուցեալ էին ընդդէմ Օսմանեանց, ոչ՝ ի վերջ

քինու ապայեցն՝ ծանրացուցին 'ի վերայ քաղաքացւոց զհարկն զոր հարկէին նոցա ամի ամի ուրթ հազար ոսկիս, և սահմանեցին տալ այնուհետև ոսկիս տասն հազար։

Սիւլէյման փաշա պատուէր ընկալեալ յարքայէն խաղալ 'ի Մոլտաւիա, զի Ստեփանոս իշխան աշխարհին չկամէր հաստատանել զկարգեալ հարկսն, հարիւր հազար զօրականօք մեկնաւ յերկիրն, ոչ ետէ միտեգեալ սասկատառոյց ձեռագրեցն և համբարոցն պակասութիւն։ Ստեփանոս ձգեաց զՕսմանեանս 'ի թաւուտս Ազաձ տէնիզլի անուանեալ անտառացն մերձ 'ի Դանուբ, խորտակեաց զնաւս, և զմնացեալսն հալածական տարեալ մինչև 'ի հեռաստան, դարձ արար յաղթական յերկիր իւրոյ։ Զոր իբրև զդիակունս Օսմանեանց այրեաց, զբազուսն 'ի գերեաց զցամաքս մահացելոց, և ոսկերաց նոցին բլուրս յաղթական կանգնեաց։ Թող զայլ աւարն, հարիւր դրօշք ևս Օսմանեանց կապուցան, և բազում բերդորայք որ առ Դանուբաւ՝ վասրանչիւղ յՕսմանեանց անցին առ Մոլտաւիան։

Ընդ այն ժամանակս տարիոյ երիք հարիւր նաւաց հանդերձեր 'ի Կոստանդնուպոլիս, և չէր յայտ եթէ յո՞ դէմ եղեալ ելցէ արքայ արշաւել նոքօք։ Վենետիկեցիք առաքեալ դեսպան զրքաւ Մէհէմմէտ 'ի խնդիր հաշտութեան՝ ընկալան 'ի նմանէ պատաս-

խանի, զի թէ արդարև կամիցին զնապ-
ղութիւն՝ թող տացեն 'ի քաց զամենայն
ամրոցս աշխարհին Ասնաւուրաց, և
մնասցեն զՔուրդս, և վճարեսցեն 'ի
գանձն արքունի ոսկիս հարիւր և յի-
սուն հազար։ Եւ 'ի չառնուլ դեսպա-
նին յանձն իւր զպայմանն, եցոյց նմա
արքայ զերեքարիւր նաւսն պատրաս-
տակեալս 'ի չուս. այլ առժամայս զանց
առնեմ զվնասակիցդ, ասէ,
պայմանս՝ զի և դուք մի ձգիցէք
զձեռս ձեր 'ի զէն։

Այսպէս արձակեալ զդեսպանն
հրամանն Եւ վէզիրին մեծի խաղալ գնալ
նաւատորմնն 'ի վերայ Գենուացւոց,
որ 'ի Ժանանակին յայնմիկ տիրապե-
տեալք յամուր ամուր տեղիս Խրիմու
Հոխանային մեծաւ շահավաճառու-
թեամբ ընդ Պարսս և ընդ Հնդիկս ընդ
Ճանապարհ Աժտէրխանու։ Քանզի
Մահմէտն արքայ 'ի գրգռութենէ Ի-
մինէք պէյ անուն թաթար կուսակալ
շրջակայիցն Քէֆէի, որ և Կաֆա, և 'ի
մատնութենէ Սքուէրչաֆիքոյ անուն
գենուացւոյն որ խոստանայր բանալ
նմա զդրունս քաղաքին, առաքեաց նախ
անդր զմեծ վէզիրն երեքհարիւրնաւուքն
հանդերձ, յորս էին քառասուն հազար
զօրականք. և յառաջ քան զելսն 'ի
նաւահանգստէն մեծարեաց զնա պատ-
մուճանաւ պատուոյ և ոսկեկազմ էրի-
վարաւ։

Յառաջնում՝ աւուր ասեն յու-

նախ խարխափ արկեալ Օսմանեանց հանդէպ Քէֆէի պաշարմանցն զքաղաքն ընդ ծով, ուր ընդ ցամաք պաշարեալ խակ էր 'ի խանէն Թաթարաց։ Հայկազն իշխանք Քէֆէի զդէմ կալան պաշարմանն մեծաւ քաջութեամբ ցաւոտս երիւսայլ ապա առեալ զիսանուսս իշխանին Գենուացւոց, և զմուրութիւն զօրականաց նոցա, և վատահացեալք յերդումն վէզիրին որ խոստանայր ոչ ինչ մեղանչել նոցա, անձնատուր եղեն և ինքեանք. զի գենուացիք պահ ունէին միոյ կողման բերդին, և Հայք միւսումն։

Առեալ Ահմէտայ զքաղաքն՝ զառաջինն խաղաղութեամբ գնայր ընդ բնակիչսն, և բազում անգամ ձաշ և ընթրիս տուեալ մեծամեծացադիս՝ հրապուրէր զնոսա դառնալ 'ի մահմէտականն կրօնս. այլ նոքա արիական հաստատակամութեամբ ասային պատասխանեցուցեալ մեզ հաւատս ընդ հաւատոց վաճառել կամ փոխանակել. այլ սէր ընդ սիրոյ հատուցանել ոչ ինչ դանդաղիմք։։։

Զօրավարք զօրացն Օսմանեանց ձանձրացեալ 'ի պանդխտանալոյ այլ ևս յօտար երկրին՝ ազաչէին զՔէմալփաշազատէ զդատաւորն ասիացի զօրաց՝ հաւանեցուցանել զարքայ 'ի չուս դարձի առնել։ Յաւուր միում մինչդեռ ձիավարէր նա ընդ արքայի զբօսանաց ազագաւ, ասէ ցնա Սէլիմ. «Զինչ բանք լցեն 'ի բերան ամբոխին»։ Եւ նա ասէ. «Արդ իսկ լուայ, տէր իմ, զի զօրակամք ոմանք յամին Ղեղոսի երդս ինչ երդէին ըղձակատս 'ի դառնալ 'ի հայրենիսն իւրեանց»։ Սէլիմ արքայ առ ժամն խոստացաւ երագել զդարձն, և հրամանս ևս արար պատրաստութեան 'ի չուն. սակայն յայլուամ աւուր էհարց զնա դարձեալ և ասէ. «Գիտիցէ՞ս արդեօք եթէ էր սակս ուսուցչին քո մոլլա Լուդֆի 'ի մահ դատապարտեցաւ»։ Ասէ դատաւորն. «Քանզի բաղում թշնամիս անձին իւրոյ ստացեալ ունէր յաղագս անժամկատակարութեանց իւրոց»։—«Մի արդեօք և քո առ 'ի նմանէ ուսեալ ևս կեղծել զձշմարտութիւն»։ Պատասխանի ետ դատաւորն. «Աղու ևս անկեալ է այն յուշոյ մտաց իմոց. և կատարն արդ նմա է անկ՝ որ զապաշնորհ ծառայս իւր ընդ իւր առնէ ուղեկից»։ Ի վերայ էած թագաւորն ժպտելով. «Եւ արդ ո՞չ ապաքէն կեղ-

ծեք էին քո և ինքնահնար գիւտ և զոր գոնելուեալ ասէիր զերգս զօրականին։ Խոտոտման եղև գառաւորն զՇնարիսան. և Սէլիմ փոխանակ գլխատելոյ եւ նմա 'ի պարգև ոսկիս հինգհարիւր։

Յետ այնորիկ Սէլիմ աղքայ ընկալաւ յառաջնորդէ Մէքքէի, որում անուն էր Շէրիֆ Մէհէմմէտ Էպիւլ Պէրքեաթ, զիսկանս հռչակելոյ քարտաքին արծաթի սկուտղք. որով և հաստատեցաւ աղքայն Օսմանեանց յամիրապետութեանն պատուի՝ զոր առմամբն Եգիպտոսի ժառանգեալ էր։ Նմին երի կրկին յաւելեալ յընծայսն զոր հարքն իւր առաքէին ամի ամի 'ի Մէքքէ և 'ի Մէտինէ, հաստատեաց և զհանդէս աղաքման ընծայիցն՝ զորս սովոր էին թագաւորք Եգիպտացւոց բառնալ հռչակաւ յուզս մի, և կոչէր ուզան այն Ալբաքացւոց բարբառովն Մըհմէլ։

1 Թէպէպ Ե ըսք օրինաց գէնին նոցա պարք է ամիրապէպին կամ խալիֆային լինել 'ի սէրնգոց մեր ուրուք 'ի յաջորդացն Մահմէպի, սակայն ըսք օրէնագիրքս նոցին ասէլոյ, այն իրաւունք յառման անդ Եգիպտոսի օրինաւորապէս անցին 'ի Սէլիմ արքայ Ե 'ի յաջորդս նորա։ Վասնզի Ե ամիրապէպն Մէհէմմէպ ժին, մահանուանէալն Էպիւ Ճաֆէր, ինքնակամ հրաժարեցաւ խալիֆայութենէ իւրմէ Ե ասանդէաց զնոյն 'ի Սէլիմ արքայ։ Ինքն երթալ 'ի Կոստանդնուպօլիս՝ անդ մեռաւ յամին 1538։

Յամենայն սեպուհեալքի գարձ արար Սէլիմ արքայ Ղաորիս, անբաւ գանձս ոսկւոյ և արծաթոյ բարձեալ յուզաս հաղար, և բազմութիւն արուեստաւորաց խաղացուցեալ'ի Կոստանդնուպոլիս։

Որպէս էանց ընդ անապատն և էհաս 'ի սահմանս երկրին Ղաորոց, ասէ ցՆուա փաշա ցվէզիրն մեծ՝ որ առնթեր նմին ձիավարէր. «Ա յապէս ուրեմն 'ի թիկանց մերոց ունիմք զԵգիպտոս»։ Ոչ էս ժուժեալ Նոնուայ պատրուակեալ զդժկամակն լինել անձին իւրոյ ընդ այն արշաւանս թագաւորին, ասէ. «Եթէ զինչ հան յայնչափ վրաց և 'ի վտանգաց. բայց կորուստ կիսոյ մանին զօրացս յանապատն և 'ի տեղոջ ձակատու, և աւանդումն Եգիպտոսի 'ի ձեռս արանց գաւառանաց»։ Սէլիմ բորբոքեալ 'ի ցասումն բարկութեան խսկոյն հրամայեաց թիկնապահին հարկանել զկառամն Նոնուայ. որ և անդէն թաղեցաւ, և Սէլիմ անուանեաց 'ի տեղն Նորա վէզիր մեծ զփիրն փաշա, որ տեղապահ էր յայնժամ Կոստանդնուպօլսոյ։

Ժամանեալ 'ի Դամասկոս՝ կարգս և օրէնս հարկաց սահմանեաց արքայ երկրին Ղաորոց. հրամայեաց էր երթալ ոմանց յաւագագրերոյն աշխարհագիր առնել ընդ երկրին. և ընդ գեղապատեացն Վենետիկեցւոց, որ յԵգիպտոս եկեալ էին

առ նա, նորոգեաց զդաշինսն, և սահմանեաց նա, զի յայնմհետէ նման հաստատեցին զուիթ հազար ոսկիսն զոր հաստատանէին կանխաւ սուլթանին Եգիպտոսի վասն կղզւոյն Կիպրոսի: Նորոգեցան և դաշինք դուլ առնելոյ զինուց ընդ Մահմատ զամ մի նա և շահն Պարսից առաքմամբ ընծայից խնդակցէր Սէլիմայ ընդ ակերդ աշխարհակալութիւնսն:

Ապա յանձն արար զառաջութիւն Դամասկոսի 'ի ձեռս Ղազալեայ, և չուեաց անտի 'ի Բերիա: Անդանօր կացեալ ամիս երկուս, նոյնչափ ժամանեալ ժամեաց և 'ի ժամանել 'ի Կոստանդնուպոլիս. և յետ աւուրց ինչ գնացեալ Ադրիանուպոլիս՝ արձակեաց անտի զորդին իւր զՍիւլէյման բազում պարգևաք յերկիր Իշխանութեան նորա 'ի Սարուխան:

Ի նմին ամի կարդեաց խան Խրիմու զԱէհէմմէտ քէրէյ զորդի Մէնկլի քէրէյին, որ 'ի չորից ամաց հետէ մեռեալ էր զինի քառասուն և եօթն ամաց իշխանութեան. և 'ի միւսումն յերկրաբաձգեաց զզինադադարութիւն ընդ Մահմատ ընդ ամ մի նա: Քանզի զոչք Օսմանեանց 'ի հերուն հետէ պատարեալ էին 'ի ցածուցանել զարքունիկ ապստամբութեան յարուցելոյ Ախա յուսէմ նէ ճէլալի անուն ազանդաւորի, որ յանձնաւոր ուրեք 'ի կողմանս Եւրոպիոյ ամբացեալ իւրովք արբանեկաքն ասէր՝

եմ ապատեալ մեամ գալստեանն Մեհ-
մետայ, զի մերձ է կատարած աշխարհիս։
Առաքեցաւ ընդդէմ ապստամբացն այ-
նոցիկ Գիրհատ փաշա կոչմամբեան
Եբրատեան. այլ նոքա քան զնա Շէհ-
սուվար օղլու խլեան Զիւրգատրայհա-
լածեաց և խորտակեաց զնոսա. և կո-
ստակաբք և գաւառապետք երկրին Ա-
սորոց հատեալ զգլուխն Ճէլալեայ ա-
ռաքեցին յԱգրիանուպօլիս։ Սուրբս
և հանդերձն ապրածեալ 'ի նոյն աւուրս
որպէս թէ Մուրատ որդի Ահմէտայ,
որ 'ի Պարսս մեռեալն էր, կենդանի
լցէ, և հեռանիցէ թագաւորու-
թիւնն։

Այսորիկ անդրդուցաւ 'ի կատա-
ծանաց ոգին Սէլիմայ. այլ Ճարակումն
ժամանակին յԱգրիանուպօլիս՝ հար-
կեցոյց զնա դարձ առնել 'ի Ռիւզան-

1 Մեհմետ երիտասարդ և վերջին՝ հրապէս 'ի փոխանն Ալիի յամին 873 իրասնեալ իսկ աներկարութիւն ալեալ ասի 'ի փարանիսաս սարէն՝ երիտասարդութեան գուլալ հասանիս։ Կարծիս այս են Օսմանեանց զամանէ՝ երիք մօտ 'ի իսպարտի աշխարհի գայրէ իւրեանց ազգին առնայն 'ի ճշմարիտ հաստատս. իսկ Պորսիւք վարիանին երիք գնա և իենդանի իշէ Մեհմետն այն յայրի սարէն անծանօթ 'ի մարդիանէ, և զբրհանապետն ասին երանան նորա և իանգնելոյ զամբրապետութիւն փանն Ալիայ։

գիտե, ուր 'ի ժամանակին յայնմիկ հա-
մարակալն Ազոխուսէլամ կառուցա-
նէր հանդէպ արքունեացն պատշգամ
հոյակապ՝ զարդարեալ գեղապատճոյճ
նկարուք և կենդանագրովք։ Մի'ի կեն-
դանագրաց անտի զՄէհէմմէտ Բ ա-
ռաջի առնէր զաշխարհակալն. սակայն
այրքայ որ եօթնամենի ուրեմն գոլով
'ի վախճանել հաւուն՝ յիշէր տակաւին
զնկարագիր կերպարանաց նորա, չհա-
ճեցաւ ընդ կենդանագիրն։ Առաւել ևս
ահաճ և գժկամակ եցոյց զանձն իւր
ընդ այնչափ ծախս պատշգամին և զար-
գուցն որ 'ի նմա. քանզի այդ իսկ է, ա-
սէր, յուսալիս շուայլել զգանձն հա-
սարակաց։ Ընդէն անկաւառ ոսն նորա
Ճարտարապետն հանճարակալն և յայտ ա-
րար ցաւոլիեամբ՝ եթէ ոչ'ի հասարակ
գանձուէն առնէ նա զծախսն, այլ յիւ-
րոյին գրամոց։ Ընդ որ ախորժեալ ար-
քայն յոյժ յոյժ՝ զգեցոյց նմա պատ-
մուճանս երիս մի զմիոյ կնի, և ասաց
նմա խնդրել յիւրմէ զոր ինչ և կամիցի
անձն նորա։ Իսկ հանճարակալն զերկուս
տեղիս եւեթ խնդրեաց 'ի նմանէ յեռ-
կուսէ քաղաքին Նիկոմիդացւոց միջոցն
յանուանն. և արքայ շնորհեաց նմա
առանց իսկ կամելոյ գիտել զչափ ապ-
բածուլիեան նոցա. և տոհմն Ազոխու-
սէլամոյ եղև մի 'ի Ճոխագունեցն 'ի պե-
տութեան Օսմանեանոց։ Ընդ պատշգա-
մին չինուլիեան արկաւ հիմն և մեծի

մզկիթին Սէլիմայ. զոր ապա որդի նո-
ին աւարառեաց։ Սակայն Սէլիմ ոչքայ
'ի վերջ քան զամենայն փութայր նաւա
կառուցանել. և հրաման եւս կազմել
նաւս երկերիւր և յիսուն՝ անշուշտ
սակս արշաւելոյ 'ի Հռոդոս. սակս որոյ
և զօրաժողովէր յԱսիա արանց իբրու
վանթասուն հազարաց։ Յահի մեծի կային
Եւրոպացիք առ Հասարակ. այլ Սէլիմ
մեծաւ զգուշութեամբ թագուն պա-
հէր զխորհուրդս մտաց իւրոց։

Յաւուր միում ասէ ցաւագանիսիր.
"Դուք ինձ յորդոր լինիք գիմել յա-
ռումն Հռոդոսի. այլ գիտիցէք բնաւ է-
թէ զինչ պէտք կարևորք իցեն առ այն.
և որչափ ինչ վաւոդ գտանիցի 'ի համ-
քարս"։ Ընդ որս ակնկոտեալք լուռ եղեն
կացին. և 'ի վաղիւ անդր ասեն, եթէ
վաւոդն զոր ունիմք՝ շատ է 'ի պաշա-
ռումն ջոկքատանեաց Ժանանակի։ Ընդ-
մանեալ Սէլիմ գոչեաց ընդդէմ նոցա և
ասէ. "Եւ այն զինչ իցէ, ուր և կրկին
չէ շատ. կամիք դուք ուրեմն նորոգել
'ի վերայ իմ զհարուածս զորս կրեաց
հաւն իմ Մէհէմմէտ։ Եւ ոչ երթամ 'ի
պատերազմ այդգոնական անմիտ հան-
գերձանօք, և ոչ յուղղն անկանիմ. քայց
եթէ յանուն կենաց ուղղորդիցիմ"։

Եւ Ճշմարտութեան յիսուն բանք նորա։
Զի մինչդեռ գնայր 'ի թագաւորեալ
քաղաքէն յԱդրիանուպոլիս՝ կիր ցաւոյ
մեծի անկեալ 'ի թիկունսէն նորա ժամ

'ի ժամէ զայրացաւ, և արկ զնա 'ի մահ։ Եւ 'ի կողմանս Հորդանանայ 'ի գիւղն Գարիշարրան։ Ճարակեցաւ ապա այսուհետև իբրև զքաղցկեղ ընդ մարմին, մինչև բժիշկք անգամ անոյշս եղեն 'ի կենաց արքային։ Ա՛ռ նմա էր հաւատալիսմ սենեկապետն իւր Հասանձան հայր մեծի պատմագրին Սատէոսի, որ առ 'ի ծածուկ ուսելոյ զմահ Թագաւորին զամենայն հնարս հնարեալ՝ խորհուրդ եւ վէճերաց բան սովորական օրինին ժողովեալս արքայ'ի խորհուրդ, և ոչ ոք գիտաց զկրան մինչև 'ի գալուստ արքայորդւոյն Սիւլէյմանայ, բայց Հասանձան, և վէճերքն երկքին, և բժիշկք ջղք, և սենեկապետն ոմն արքայի։

Ա՛յսպէս կնքեաց զուխտամեայ Թագաւորութիւն իւր մեծայաղթ Թագաւորն Նաւուզն սուլթան Սէլիմ՝ բազում ինչ և մեծամեծս գործեալ 'ի սուղ ժամանակին. և 'ի դէպ նեմանեցուցեալ յուսմանէ 'ի քերթողացն Օսմանեանց՝ արեգական 'ի մուտս կոյս խոնարհեցելոյ, որոյ սուղ է ժամանակ, և սուտերքն երկայնաձիգք։

Ի կարգի օրէնադիրացն նորա անուանի յոյժ էր գեներալն Ճէմալի անուն. ընդդէմ որոյ Թէպէտ և բազում ան-

1 'Եւ ինքն է Բէնմալիքալպապէ Ահմէտ էֆէնտի, որ ուրբաթանոյօրինէաց 'ի մահն Սէլիմայ։

գամ գոչէր՝ եթէ օրէնսդէսք մի խառնեսցին 'ի գործս արքունի, այլ պատկառեալ 'ի բանիցն՝ անասրնեան, և պատուէր եւս։ Ղորին ճէմալէայ խորհրդով փրկեցան քրիստոնեայք և 'ի հանրական կոտորածէ։ Քանզի Սէլիմ արքայ զնի կոտորածի պարսկադէն աղանդաւորաց պետութեան իւրոյ կամեցեալ բնաջինջ առնել և զազգն Յունաց, և զեկեղեցիս ամենայն քրիստոնէից յաւար և 'ի յափշտակութիւն մատնել, եհարց զգէնպէտն ճէմալի և ասէ. «Ո՞ր 'ի սոցանէ յերկոցուն ընդունելի եւ իցէ առաջի Աստուծոյ. զաշխարհ ամենայն ընդ հարկաւ նուաճել, եթէ զազգս և զազգինս 'ի հնազանդութիւն գենիս մերոյ խոնարհեցուցանել»։ Ոչ գիտելով ճէմալէայ զիտս թագաւորին՝ ասէ. «Զինք ինչ արդարև հաճոյ առաջի Աստուծոյ և մեծամեծ վարձուց արժանի քան զարձուցանել առ նա զայլակրօնս և զանհաւատս»։ Յայնժամ հրամանն եւ Սէլիմ մեծի վէզիրին զամենայն եկեղեցիս քրիստոնէից փոխել 'ի մզկիթս, խափանել զամենայն զաստուածային պաշտամունս, և մահու պարտ առնել առ հասարակ զքրիստոնեայս՝ որ չկամիցին ուրանալ 'ի Հայրենի հաւատոցն քրիստոնէութեան։

Յապուշ կրթեալ վէզիրին ընդ այն հրամանն սակաւին, աճապարեաց խորհուրդ կալաւ ընդ ճէմալէայ, և պա-

տուիրեաց պատրիարգին Յունաց 'ի ծածուկ, զի 'ի հրատարակել հրամանին խնդրեացէ սուղ ինչ ժամանակ առ 'ի կարելոյ յանդիման լինել արքայի : Եւ նա արար այնպէս . զի երթեալ հանդերձ ամենայն ժառանգաւորաքն յԱգրիանուպոլիս՝ յանդիման եղև արքայի, և յուշ արար նմա զհրովարտակին Մէհէմմէտայ երկրորդի, յորում խոստացեալ էր նա Յունաց՝ չիոխել երբէք զեկեղեցիս քրիստոնէից 'ի մզկիթս , և չխափանել զպաշտամունս նոցա և ըզհանդէս զատկին. և յաւել ևս էթէ լսա կուրանին խակ պատուիրելոյ՝ փոխանակ ուրացութեան հաւատոց ապաքէն զքահանայիս հատուցանեն քրիստոնեայք : Եւ թէպէտ պատճէն հրովարտակին չէր 'ի միջի, զի 'ի հրայրեացս ուրեմն քաղաքին վասնեալ էր . այլ երբէք հինաւուրց ենիչէրիք՝ որ վասնեն և հինգ ամաք յառաջագոյն ակամառեալ էին առանն Կոստանդնուպոլսոյ՝ վկայեցին ստուգութեան իրացն, և թէ յայնժամ Մէհէմմէտ արքայ բանիւ ևս բերանոյ շնորհեալ էր քրիստոնէից զերեսին ազատութիւնն լու 'ի լու ամենեցուն :

Իրաւունս էտ Սէլիմ արքայ վՀռոյ կուրանին և խոստման հաւուն խրոյ՝ առ 'ի չխափանելոյ զեկեղեցական պաշտամունս. այլ մի թէ օրէնքն մեր հրամայեցնէ, ասէ, քրիստոնէից եկեղեցիս ու-

նեալ Հոյակապս. և հրամայեաց զեկեղեցիսն որ 'ի Կոստանդնուպաւլիս իցեն՝ փոխել 'ի մզկիթս, և կառուցանել փոխանակ նոցին այլս փայտաշէնս:

ՍՈՒԼԹԱՆ ՍԻՒԼԻՑՄԱՆ Ա. ԳԱՆՈՒՆԻ

Ի ԺԱՄԱՆԱԿԻ յորում պէտք հոյակապք աշխարհակալէին յընդհանուրս, որպէս Լեոն Ժ. քահանայապետ 'ի Հռոմ, Փրանկիսկոս Ա թագաւոր 'ի Գաղղիա, Ենրիկոս Ը. արքայ յԱնգղիա, Կարոլոս Ե կայսր 'ի Գերմանիա, Անդրէաս Կրիթիի գուքս 'ի Վենետիկ, Վասիլ Դ 'ի Ռուսիա, Սիգիսմունդ Ա 'ի Լեհս, շահ Իսմայէլ 'ի Պարսս, և շահ Եքպէր 'ի Հնդիկս, ամբարձաւ 'ի գահ 'ի մեծն Կոստանդնուպօլիս օրհնագիրն մեծն Սիւլէյման՝ երկրորդ Սողոմոն յիւրոցն կարգացեալ [1], որ և զիտուն օտմանեան պետութեան 'ի ծաղն հասոյց քաղաքական պայծառութեան։ Եւ էր նա ըստ գիտակին թիւրագէմ, բարձրաձայնակատ, մրոյն, ծանրաբարոյ. և նորընձև արտախոյսն իւր բազմամանուած՝ Եուսուֆի անուանեալ, զոր մինչև 'ի

[1] Ի զուր է ոմանց յԵւրոպացւոց անուանել զսա Սի-լէյման Բ, առաջին Սի-լէյման համարելով զերդին Պայէզիդայ առաջնոյ։

յօնան վայրապիետալ կրէր 'ի գլուխ [1], յաւէլոյր զերկիւղ և զպատկառանս սեսանելեացն։

Ի գառնալ սուլտանդակին 'ի Մագնեսիոյ և յազգ առնել զգալուստ արքայորդւոյն Սիւլէյմանայ 'ի Կոստանդնուպօլիս՝ գուսանրեաց վէշլրն մեծ 'ի մի վայր զանձնապահս Թագաւորին և յայտ արարեցուցա զվախճան Սէլիմայ։

[1] Ընդ յոլով ծամանակս խոքիրք գլխանոցաց կարևոր իմն համարեալ էին յալս արանէայց. և առ Ռագաւորութեանմէն Սիւլէյմանայ կարգ և սահման նոցին հասպասքեալ յորքանչ Օսմանեանց՝ անքոքոխելի մնացեալ էր մինչև ցմեր իսկ առաւրս։ Քանզի վէզիրք ագանէին երկայնայեալ իմն գլխարկ լայնանիսք և 'ի վերայ ծապաւէն ասկի արկեալս 'ի ներս. և խուլէր այն գաւէզի։ Զօրավարացն խոյրք քոքրիւռէանմէն ներն ընդհապ էին յորքանչ արքախուրէն՝ Մի-ճէվէզէ յայնէայս։ Գիքանչանացն գասք բուլորայեալ ագանէին քէնէզն՝ խորասանի անուանեալ։ Պահանորդք արքանէացն ներքինք կրէին զգիշանս ասկեգոյն որ Իսոքիւֆ յորջորջէր. արքաքինք զպարանա ֆուլէոնեան գլխագիր կարմրագոյն վայրահակ։ Զօրավարք ենիչէրեաց սաղաւարքայեալ իմն ագանէին քէնգրաղարդ՝ գիքէն անուանեալ, և ենիչէրքն զմեազեայն՝ որ կոչէր Քէնէզ։ Իսկ հասարակաց ամենեքեան ագանէին արքախոյրն էր՝ 'ի ներքս ներքս քարանեալ վեր 'ի վերայ։

Եւ նոքա անդէն զգեանսն հարեալ զԳԼԽԼ
խառնոցս խլեանց՝ սկսան 'ի ձայն բարձր
աղաղակել զմահ ազգայնոց. և 'ի նշան սգա-
լից տրամութեանն կոծանելոցն զամե-
նայն զվրանս բանակին։ Իսկ վեղիրն մեծ
Կիլիկեաց զայլս գանձուցն ազգուն.
հրամայեաց զօրավարաց զօրուն ածել
զգիակն Սելիմայ 'ի թագաւորական քա-
ղաքն, և ինքն 'ի կերպարանս եղեալ
քաջընթաց սուրհանդակի՝ ածապա-
րեաց անդր ընդ առաջ նորոյ թա-
գաւորին, որ այն ինչ դեռ ևս ժամա-
նեալ էր յարքունիսն։

Ի վաղիւ անդր որ օր էր անուանելոյդ էր
ամենեան սեպտեմբերի՝ եհան և զիակն
Սելիմայ 'ի գուռն քաղաքին. և Սիւլէյ-
ման ազգայ ինքնին ելեալ ընդ առաջ 'ի
հանդերձս ազատրոյ՝ ած թաղեաց ըզ-
հայրն իւր մեծահանդէս փառաք 'ի
բարձրաւանդակ տեղւոջն որ հանդէպ
կայ Ֆէնէրին. և հրամայեաց կառուցա-
նել 'ի վերայ նորա մեկնեթ հոյակապ։

Յետ այնորիկ բան պահանջանաց ե-
նիչէրեացն բաշխեաց 'ի նոսա պարգևս
առատապէս, որպէս և ամենայն զօրա-
կանին, և յաւել ևս զառձիկս նոցա.
և բազմեալ յաթոռն ազգուն՝ անդէն
ձեռն 'ի գործ արար և յայտնեաց զամ-
բան զգամ զարդարասէր և զառատա-
ձեռն բարս իւր։ Ազգակեաց յաղա-
տութիւն զվեցհարիւր Եգիպտացիս
խախտեալս 'ի հայրենի երկրէն իւրեանց

աս. Սելիմաս։ Պատուհասակոծ արար զծովակալն Ճաֆէր ապէյ զայլն անագ-
ոյն սակս անբաս չարեացն զոր գոր-
ծեալ էր, և եռհանել զնա՝ի կախաղան։
Մեծապէս պատուով ընկալաս զդես-
պանս ազգաց մօտաւորաց, և թուղ-
թքս աւետաւորս արձակեաց շուրջա-
նակի, ուր վաղաժամն խակ հռչակեալ
էր համբաս լաւութեան նորա։

Ճանպէրտի Ղազալի որ կուսակալէր
յԱղեպիս՝ ընդ առնուլ զլուր մահուան
Սելիմայ ալքայի թօխմախեաց զլուծ
ծառայութեան Օսմանեանց. և՝ ի նոյն
յորդորեալ և զայլ կուսակալս աշխար-
հին՝ խաղաց՝ի Դամասկոսէ՝ի Կոստանդ-
նուպօլիս հնգետասան հազար հեծե-
լովք թիւրքմէնաց և Ղուրացւոց և ութ
հազար հետեւակ զօրս. և առեալ զՏրա-
պօլիս և զՊէրութ՝ Եկն պաշարեաց զՔ-
ռէրիա, յորում Դարուճա փաշա մե-
ծաս քաջութեամբ զդէմ ունէր նմա
զամիս երկուս, մինչև եհաս՝ի թի-
կունս նորին Գէրհատ փաշա բազմա-
թեամբ զօրաց Ասիոյ, և մարտիս պա-
տերազմի վանեաց զնա մինչև անդրքան
զԴամասկոս. և Ղազալի՝ի փախչել ի-
րում՝ ի կերպարանս սէրվիշի՝ մատնե-
ցաս՝ի գանձապետէն իւրմէ, և ձերբա-
կալեալ գլխատեցաս։ Ի լուր յաղթա-
նակին զուարթացեալ ալքայի՝ կամէր
զկատարին Ղազալեայ առանձին հրեշ-
տակութեամբ արձակել լաս գուքան վէ-

նեակոյ. այլ գեղապանն Վենետիկեցւոց հեռեցաւ խափան արկանել իրացն։ Ապա հրամայեաց արքայ Ֆէրհատայ կազմ կալ զօրօքն 'ի քաղաքին Կեսարացւոց, մինչև տեսցէ թէ յինչ վճռիցի զբաժողով արքային Պարսից շահ Խանայելի, յորմէ կասկածէր։

Սուլթանն և անհրաժեշտ հարկ 'ի վերայ կայր գիմել Օսմանեանց 'ի ժամուն 'ի Մաճառս կոյս, փոխանակ զի արքայն Մաճառաց ընդ այն աւուրս ապանեալ էր նախատաքից մահուամբ զհարկապահանջն Օսմանեանց։ Խաղաց Սիւլէյման արքայ յամին 1521 'ի Մաճառս հնգեռասան հազարաւ հեռեակ զօրու, երիքհարիւր հրացանաւք և քառասուն նաւուք, և հանդէս ապար զօրացն 'ի Սոֆիա, ուր եհաս և Ֆէրհատ փաշա էրեսուն հազար ուղղաւք, և այլ ևս կուսակալք ասիակողմանն հանդերձ իւրեանց զօրականաւք։

Ի նմին քաղաքէ գէմ եդ Ահմէտ փաշա կողմնակալն եւրոպեան 'ի Սապաշ. և գունդք հրասակացն յերկուս առաջս բաժանեալ ոմանք արշաւեցին 'ի Դրանսիլվանիա, և այլք յառաջընթաց ինեին արքունի բանակին՝ որ գայր ապաշարել զՍապաշ։ Ահմէտ փաշա սատակաւէս յարձակեալ էառ զամուրն, և զամրականացն հարիւրոց զկառափունս առգեաց ասսի և անսի Ճանապարհին՝ ընդ որ գայր մուտն էր յամրոցն Սիւլէյ-

ման արքայ։ Հրամայեաց նա ամրացու-
ցանել և նա զբերդն, և կազմել 'ի վերայ
Սաւա գետոյ կամուրջ մեծ հազար և
ութ հարիւր գրկաչափ յերկայնութի-
ւն և ժրաջան փութով աւարառեցաւ
յաւուրս ինն. քանզի ինքնին արքայ
հարեալ զմորան իւր առ գետափանն
խրախոյս կարդայր գործն, և զ-
բանակին համօրէն մնական 'ի
ձեռս Ալեքսէին զնոսա։

Ընդ առեալ արքայի զաւէրս առնը-
լոյ վէզիրին զՉէմլին՝ անց ընդ կամուրջն
և եհաս 'ի Պելկրատ, զոր յամենայն ժա-
մանակի հեռի պաշարեալ էր վէզիրն
մեծ Փկրի փաշա։ Եւ քանզի քաղաքա-
ւորն Պելկրատու փախուցեալ էր ան-
տի, դիւրաւ եղև քաղաքն. և ոչք 'ի մէջ
նորին մտրացեալ էին՝ յեւ յերկար
մաքառման անձնատուր եղեն և նոքա։
Յայնժամ վարեցան 'ի Պելկրատէ 'ի
Կոստանդնուպօլիս բաղմութիւնք Ռուս
զարաց, և բնակեալ 'ի քաղաքին և 'ի
Վոսֆորն՝ զուռի բնակութեան իւ-
րեանց կոչեցին Պելկրատ կամ Պելկրատ։
Խակ յաւեալ քաղաքին կարդեցաւ իշ-
խան Պալի ագէյ, և պահակապանք էնի-
չէրիք երեքհազար. և քան հազար Վլա-
հաց հրամայեցաւ նորոգել զաւերեալս
Պելկրատու։ Ընդ ամենայն քաղաքին մե-
ծի անկան և ամրոցքն Քուլիենից, Պա-
ռին, Միհիրովիչ, Քարլովիչ, Ոչլոք.
և այլք. և Սիւլէյման դարձ արար

յաղթանակաւ 'ի Կոստանդնուպոլիս։ Մինչդեռ տակաւին յուզոմ էր՝ ընկալաւ զդոյժ մահու երկեմեան որդւոյ իւրոյ Մուրատայ. և 'ի ժամանել անդ նորա 'ի քաղաքն մեռան և ուստր մի նորա և դուստր։ Այլ նա վաղ մխիթարեցաւ՝ մինչ եղեալ անդադար 'ի բարեկարգութիւնս և 'ի բարգաւաճանս իւրոյ աշխարհին։

Սիւլէյման ոչքայ զձմեռն զայն անցուցեալ 'ի կառոյցս նուռոց բազմաց՝ կարգեր պատրաստէր առնուլ զՀռոդոս 'ի ձեռաց ասպետաց կարդի որոյն Յովհաննու. որպէս զի և համարձակ լիցի նաւուցիւրոց երթևեկառնել յԵգիպտոս և յԱրաբիա, և Ջնջեացն կերպ աշնուանդանիցն իւրոյ Մէհէմմէտայ երկրորդի, որում զայն ևեթ կոչն ցայժմ զեռաց առնուլ։ Ի նոյն և անմիաբանութիւն թագաւորացն քրիստոնէից 'ի ժամանակին, և մատնութիւնք Հռոդացւոց ոմանց փոխուստից ոչ սակաւ զնա խրախուսէին։

Սակայն ըստ պատուիրելոյ գենեին իւրեանց՝ գրեաց նախ առ մեծիստրոսն հրովարտակ, յորում ապդ առնէր տալ զքաղաքն խաղաղութեամբ, և երդնոյր ըստ սովորական օրինին 'ի տէր Աստուած, և 'ի մարգարէն իւրեանց, և 'ի հարիւր քսան և չորս հազար մարգարէս, և 'ի չորեսին երկնաւոր մատեան

նրա՝, զի թէ զիջանիցիս անձնատուութեանն ոչ ինչ վասանգ հասուցից, ասէր, կենաց քոց։ Եւ ապա զերկրորդ վեղարն զՄուսդաֆա փաշա երեքհարիւր նաւուք ընդ ծով արձակեաց, և ինքն հարիւր հազար զօրաք ընդ ցամաք չուս առնէր ընդ փոքրն Ասիա։

Ի քառասներորդի ութներորդի աւուր ամսեանն յուլիսի եհաս 'ի Հռոդոս Սիւլէյման սրքայ. և 'ի ձայն թնդման հարիւրոց և աւելի ևս հրանկնուց, յորոց միջի երկուասան թնդանօթք ահագինք էին, հատասուեաց զոտս իւր 'ի հուշակեալն այն կղզի. և զնեալ զամրոսութիւնս քաղաքին և զզօրութիւն իւրոց բանակին՝ հրաման եառ և պաշարեցաւ Հռոդոս. և 'ի նեղքս անդ եօթնեակ մարտկոցաց քաղաքին և մսից նաւահանգստին պահ ունէին ութից ազգաց ախոյեանք, այս ինքն են Գասղիացիք, Գերմանացիք, Անգղիացիք, Սպանիացիք, Լուսիտանացիք, Իտալացիք, և այլք։

1 Զի գոյնլոֆ մարգարէս հալուէն Տոնիէ՝ նէգի անուանէալս. Ռոզ զայս պէրէհարիւր և երեքպատան մարգարէս, զորս Բէսուլ կամ Ալուֆէալս ֆուլէն։ Իսկ երինաուֆ մարէանս հանարին զհնգամարէանն Մուլնէի, զսաղմոս Դաւթի, զաւետարանն (որ ըստ Իւրէանց ասանդէից), և զէուրանն, և ֆուլէն զսուս Մահմէտ։

Եւ զի մի քան զամիսն յերկարեսցի բանս, այսչափ ինչ ասասցուք, եթէ զամիս երիս սահեաց պաշարումն. յորում ժամանակի անդադար էր դոցեալ բրուն հիմանց պարսպին արտաքուստ, և հակառակ վասակ պաշարելոցն 'ի ներքուստ: Ի բախմանէ զարհուրական թնդանօթիցն խրամասեցան պարիսպքն ուստեք ուստեք. այլ ոչք ընդ խրամսան 'ի ներքս խուժէին՝ դիմաթաւալ անկանէին 'ի հոդացեոց անտի:

Ապա 'ի քանեւորդի չորրորդի աւուր ամենանն սեպտեմբերի հրաման եղև առ հասարակ յարձակել զօրացն 'ի վերայ քաղաքին, և քարոզքն ամենայնք ընդ բանակն աղաղակէին 'ի ձայն բարձր. «Հոգք և քարինք քաղաքիդ ոչքայն բաժինք են. արիւն և ինչք՝ յաղթականն մարտկաց»: Սակայն քաղաքացիքն ոչք և կանայք անդադարեալ քաջութեամբ մարտ եղեալ կռուէցան, և դիակունք հնդէտասան հազար զօրականաց մեռելոց ընդ խրամսան 'ի ներքս՝ լցին ըզխրամն և զմոտս: Ցասուցեալ ոչքայն ընդ կոտորածն և ընդ անյաջող ելս յարձակմանն՝ արկ յիշխանութենէ զԱյսս փաշա զկողմնապետան եւրոպեան, թէպէտ և յեռոյ անդրէն 'ի նմին հասատեաց զնա: Ահմէտ փաշա կացեալ ապարատեալ փոխանակ Մուսդաֆայի (որ Յեդիսարոս առաքեցաւ 'ի տեղի Խայ-

բէպայ պէյին մեռելոյ), յարձակեցան միւսանգամ ընդ ակար կողմն պարսպացն. այլ անդրէն ընդ կրունկն վանեցան մեծաւ փեսաւ։

Իբրև եառեալ Սիւլէյման զարքայ զիրուսաս խլացն Իրրու Հարիւր Հազարաց 'ի Հրոյ և 'ի Հիւանդութենէն, կանգնեաց զրօշ գաղարելոյ մարդոյն. և նամակ առեալ առ պաշարեալսն՝ ազգ ազգաց ասպետաց ասալ զքաղաքն յերկոց առուրց միջոցի, և երթալ յա և կամք իցեն. ապա թէ ոչ՝ 'ի մարդոյ մինչև ցանասուն ոչ զերծցին, ասէր, 'ի սրոյ զօրաց խնոց։ Նոքուն պատասխանի ասպետքն՝ եթէ կարի սուղ է ժամադրութիւնդ առ 'ի խորհուրդ կոչելոյ զայլ և այլ ազգաց զդիւանուրս որ էին 'ի քաղաքին. և արքայ Հրամայեաց պնդել սասկապէս զպաշարուն. մինչև սպանցան պաշարեալքն թողուլ զպատնէշն, և 'ի նեղբս 'ի քաղաքն խուսափիլ. զի և վառօդ Հրազինուց նոցին սպառեալ Հասեալ էր։

Առաքեցին ասպետքն առ սպարապետն Օսմանեանց Ահմէտփաշա զլեկար ուխտին՝ զորսուեալ էր նոցա Պայէզիտ Բ, և խնդրէին զՀաշտուրթիւն. իսկ նորա առեալ զայն՝ պատասխանեալ ընկէց 'ի գետին և ոտնակոխ արար. և զերիսուց գերեաց ձերբակալ եղելոց 'ի նմին առուր զմնասուն և զուռչա և զանկանչ կրճատեալ. և տուեալ 'ի ձեռս

նոցա թողլի լի թշնամանաք՝ արձակեաց
'ի նեղբս։

Յայնժամ յանհնարս մոռալ մեծի
մագիստրոսին՝ խոնարհեցաւ ասալ զքա-
զաքն՝ պայմանաւ երանելոյ Հոռդա-
ցւոց'ի քաղաքէն ցաւուրս երկուասան,
և յանձին ունելով ասալ պատանդ Օս-
մանեանց որս յիսուն յասպետաց ան-
ուն և 'ի քաղաքացւոց։ Զիջաւ Սիւլէյ-
ման և առաւձին խնդրոյ նուիրակացն.
զի հրամայեաց զօրացն հեռանալ յամե-
նայն կողմանց քաղաքին ընդ բացաս
մոյ մրնի։ Ա՛լ յետ աւուրց ինչ ժա-
մանեալ'ի սահմանացն Պարսից հնգե-
տասան հազար ենիչէրիք ընդ Ֆէրհատ
փաշային՝ յարձակեցան մոին գէպուղ
'ի տաճար սրբոյն Յովհաննու Մը-
կրտչի, խորտակեցին զպատկերս, կոր-
ծանեցին զսեղանս, բացին զգերեզմանս
մագիստրոսաց, զգիմակս կոտորեցին,
և զմնացեալսն իրրև զդրսոսս բնակ-
ուրեալ աւարաք խաղացուցին'ի նաւակս
իւրեանց։ Եւ այս ամենայն եղև յա-
ւուր ութն ծննդեանն տեառն։

Ի վաղիւ անդր գնաց մագիստրոսն
մեծ, որում անուն էր Վիլլիէ Տէլիլ
Ադամ, 'ի կոչ Սիւլէյմանայ. և յետ
ընդ երկար սպասելոյ արտաքոյ դրաց
խորանին ձիւնածեծ և անձրևաթաց,
քանզի ուրբաթ էր և օր առնէի, ապա
եմուտ առ արքայ զգեցեալ զպատմու-
ճանն զրմնին։ Եւ իրրև ոչ տակաւ ունաչ-

բառ կացին երկոքեան հանդէպ իրեարց. Սիւլէյման ոչքայ սկսաւ խօսել ընդ մոգիսարսին, և քաջալերէր բանիւք ասէ ցնա. «Ոչ օտարսոի ինչ է թագաւորաց և իշխանաց հանել 'ի ձեռաց զքարոզս և զգաւառս»: Եւ մեկնեցաւ մոգիսարսն յետ աւուրց իւրոցքն հանդերձ գիշերայն յԵրուսաղէմ:

Յետ այնորիկ հրամայեաց ոչքայ ապանանել զորդի տարաբաղին ճէմայ՝ որդւոյն իւրով հանդերձ, որ յերբոպեան տարաղ զգեստուց պահեալ կայր ցայնժամ 'ի Հռոդոս: Շուրջ յածեալ ապա ընդ քաղաքն, զեկեղեցի սրբոյն Յովհաննու կարպեաց 'ի մէջեմ. ենիշերիս հինգհարիւր ելթող պահապանս քաղաքին. և պատուէր տուեալ իշխանացն կանգնել զպարիսպս Հռոդոսի 'ի սկզբան նորոյ տարւոյն դարձ տարի 'ի Կոստանդնուպօլիս յաղթանակաւ ոչ միայն Հռոդոսի, այլ և ուրեքեց որ սա նոցա:

Ընդ թուղթս աւետաւորս յաղթութեանն արձակեաց առ խանն Խրիմու և առ շէրիֆն Մէքքէի, և 'ի քրիստոնեայ պետութեանց միջի առ դուքսն Վենետկեցւոց: Ի լուր մեծի յաղթանակին ուճապարեաց և ոչքայն Պարսից շահ խանայել 'ի լուծու�բազմաժանմանակեաց լուութեան իւրոյ, և արձակեաց առ Սիւլէյման գեսպան զոք՝ խնդակից լինել թագաւորելոյ 'նորին. այլ ոչքայ

'ի հինգհարիւր երիսնամեայ անուն՝ զորս ընդ իւր ածեալ էր գերապանն՝ քանիցս ևեթ մեռա շնորհեաց 'ի թագաւորեալ քաղաքն։ Ընդ էր 'ի ժամանակին և Իւան Առաջով գերապան Վասլի ազգային Ռուսաց, որ հնարէր մանրմնամեալ ընդ Սիւլէյմանայ։

Ընդ այն աւուրս արկաւ յիշխանութեանն բազմավաստակ վէզիրն մեծ Փիրի փաշա՝ ըստ զուր քսութեանց Ահմէտ փաշային. և կարգեցաւ 'ի տեղի նորա մանրին ազգայի 'ի մանկութենէ հեռի և անենկատեալ Խրահիմ փաշա։ Իսկ քսութիւն Ահմէտայ յոչ կամս շնորհեաց ազգայ զկուսակալութիւնն Եգիպտոսի։ Քանզի ապարատեան Աղուգաֆա փաշա 'ի սէպ թախանձանաց կնոջն իւրոյ քեռ ազգայի կոչեցեալ էր յԵգիպտոսէ, և փոխանակ նորա կուսակալէր անդ Կիւզելճէ Գասըմ փաշա։

Իբրև եհաս յԵգիպտոս փառատոնն Ահմէտ, որպէս 'ի ծածուկ զնախապատս երկրին և զՄէմլիքսն. այլ ենթէ էրկիք արիացան ընդդէմ կալ նմին. վասն որոյ և նա զամիս վեց պէսպէս պատճառանաւք կոտրեալ զենիչէրիս. ապա և յայտնապէս վտարանչեաց

1 Սայէք ժամանակաց չինէ զմի յարուցեալ յանէայց փաղաքին Կոստանդնուպօլսոյ հուպ 'ի նաւահանգիստն, որ Ն յարդ Ներ զնորին բերէ զանուն։

յարքայէ. զի որչափաց երկրորդ լինել
արքայի՝ արքայ լինիցի աշխարհին Եգիպ-
տացւոց։ Պաշարեաց զմիջնաբերդն, հա-
րաւ ընդ ենիշէրիսն բերդակալս, և ապա
ընդ ասորերկրեայ իսին Ջրմուզս մուտ
գտեալ՝ ի բերդն՝ ի այր սուսերի կոտո-
րեաց զենիշէրիս։ և այնուհետև սուլ-
թան զանձն իւր անուանեալ՝ եհատ և
գրաւեաց յիւր անուն։ Յայնմ ժա-
մանակի եհատ առ նա հրովարտակ յար-
քայէ զի դարձցի և եկեսցէ՝ ի Կոստանդ-
նուպաւլիս, սաստգեալ զիշխանութիւնն
յայր ոմն քաջ Գարա Մուսա անուն։
այլ Ահմէտ ապատն և զնա և զիշխանութիւն
և ապա զերիս ոմանս անուանեալ իւր
վէզիրս՝ հիսգաւորեաց յԵգիպտոս։
Այլ Մէհէմմէտ ալէյ մի յերիցս անսի
կամեցեալ գաւառանել զԱհմէտ, զոր
գումարեաց՝ ի ծածուկ, և հասեալ՝ ի
վերայ նորա՝ ի բազանիս այն ինչ հեր-
բուկալ առնէր զանձրկնն, փախեաւ նա
ընդ ասանան՝ կիսով չափ սափրեալ ու-
նելով զմորուսն, և՝ ի ձի վերելակեալ է-
մուտ զօրեցաւ՝ ի միջնաբերդ անդր, և
անտի ևս փախուստսն գնաց ընդ անա-
պատն։ Մէհէմմէտ իւրովքն հետամուտ
լեալ նմա երիւք հազարաւք ապառազէն
մարդկաց մինչև՝ ի հեռաստան, կալաւ
զնա, և զգլուխ նորին հասեալ առա-
քեաց՝ ի Կոստանդնուպաւլիս, և ընկալաւ
՝ ի փոխարէն իւրոյ քաջութեանն զանա-
շութիւն քաղաքին Եգիպտոսի։ Իսկ

կուսակալութիւնն վերատին առանդեցաւ 'ի ձեռս Գասրմայ։

Ի Կոստանդնուպոլիս կատարէր յայնժամ արքայ զՀարամանիս քեռն իւրոյ, զոր ասէր 'ի կնութիւն մուերմին իւրում Իբրահիմ փաշայի. Հանդէս՝ որպիսի չէր երբէք երևեալ 'ի Թագաւորեալ քաղաքին ասկս Հոխուութեան հանդերձանացն և պէսպէս հրապարակական ուսապանաց։

Ի ձիարձակարանին մեծի, որ է ՎՀԹ մէյտանը, հարանիսորանք պատպաՀունք և գահ մեծաշուք վասն Թագաւորին։ Ջուրս ուեմ մեծարեցան բազմածախ ընթրեաք և խնջոյիք գունդ գունդ զօրականաց Հանդերձ իւրեանց զօրավարաք. և յիններորդումն անցեալ արքայն ընդ փողոցս զարդարեալս ոսկեՀուռն գիպակաք շորաւ յապարանս Իբրահիմայ՝ որ անդէն 'ի հրապարակին կառուցեալ կայր. և 'ի ժամ իրարանցումն կարգեցան առաջի արքայի և առագ բազմականացն վէՀքուսումնականք յաղանուոր վարժարանաց քաղաքին. և արքայ զՀարամանեկան ՆուռագՆ էարբ միապարոյ բաժակաւն՝ որ 'ի կապուտակագոյն ինն քարէ Փիրուզէ անուանելոյ յօրինեալ՝ և պահի, որպէս ասեն, 'ի գանձարանին արքունի։ Ի վաղիւ անդր խաղացին ելին արտաքինքն Հարամանեկանք. մին 'ի Ներսանէ յօրինեալ էր 'ի վամաուն Հաղարոց, և միւս ևս 'ի քառա-

սուն հազար կտորակաց մանուանց, յորս
կերպարանեալ սեսանէին ծառք և ծաղ-
կունք և ազգք ազգք կենդանեացսքան.
չերպուեսս յարդարեալք։ Այս ոչինչ
աւուրց վերոյ միսանգամ գնաց ա-
քայ յապարանս փեսային, և երեն զա-
նազան հանդէսք ըմբշաց, լարախա-
ղացից, մականախաղաց, աղեղնաւորաց
և այլոց նման սոցին զուարճութեանց։

Այսչափ փառաք և պատուով ճոխա-
ցեալ վերկրն մեծ Խրատիմ փաշա ար-
ձակեցաւ հինգհարիւր ենիչէրեաք և
երկուհազար մարտիկ զօրաք յԵգիպտոս
'ի ցաւուցանել զդժուութիւնն որ ծա-
գեալ էին ընդ կուսակալն Գասրմ փաշա
և ընդ տէսուչ քաղաքին Մէհէմէտ
պէյ։ Եւ նորա մեծաւ հանդիսիւ մը-
տեալ յԵգիպտոս, և զարդարութիւն
և զնեղոյամտութիւն ըստ արժանեոյն
'ի գործ արկեալ՝ բարեկարգեաց զամե-
նայն, և դարձաւ փութանակի 'ի Կոս-
տանդնուպոլիս։

Քանզի մինչդեռ Սիւլէյման ազգայ
յԱղբիանուպոլիս որսոց պարապէր, և
իրք թագաւորեալ քաղաքին ոչ ըստ օրի-
նի ընթանային, խռովեցան ենիչէրիք,
և ամբոխ ապարեալ դիմեցին 'ի տունս
աւագանեոյն և աւար հարին զսպարանս
Խրատիմայ և զԱյսս փաշայի և զՀա-
մարակալին։ և ապաստակէին ընդ փողոց
քաղաքին հինգրեալով պարգևս։ Ամենա-
ին եկին Սիւլէյման 'ի Կոստանդնու-

պօլիս. զերեցուն գլխաւորաց խառնուելթեամբն յանդգնելոց եկանել առաջի նորա՝ ինքնին խրով ձեռամբ եհատ զգլուխս. այլ 'ի լարել այլոց զաղեղս նրա 'ի վերայ նորա՝ խոյս եառ, և երկերիւր հազար ոսկւոյ բաշխմամբ հանդարտեցոյց զենիչէրիսն. և զգլխաւորսն նոցա զՄուսդաֆա, և զսպարապետս սպայլեցն մահու գատեցաւ: Հարկ էր սոպա 'ի խազմն ուրեք պատերազմացուցանել զբոլորն զօրականն. և պատեհ ժամանակ էր տրշաւելոյ նախ 'ի Մաճառս, և ապա 'ի Պարսս: Զի Մաճառք յառնեն հետ Պելկրատայ Օսմանեանց՝ մարտ եղեալ ընդ հրոսակս նոցին սրմեռեալս ընդ աշխարհն խրեանց, բազում այն էր զի յաղթական գտանէին:

Խաղաց գնաց սրբոյ Սեւէյնան, և ընդ նմա մեծ վէճքն Խարահիմ յամին 1526 'ի քաներորդի երրորդի աւուր ամենանն սարիկի [1], հարիւր հազար զօրք և երեքհարիւր թնդանօթք. և էր 'ի բանակի անդ կարգ և խառնութիւն բազում, մինչև գլխապարտ անդամ լինել որոց իշխեցն ասնակոխ առնել զարտաքայս կամ արձակել զերիվարս իրեանց 'ի նոսին յարօտ: Ի Սոֆիա բաժա-

1 Այս օր նշանաւոր է առ Օսմանէանս՝ Խրէլէչ'ի նոցանէ անուանէալ, որպէս գրեն նանամուտ և ամենայն բարեաց և յաջողութեան գուշակ:

նեցաւ Իբրահիմ փաշա յարքայէ, և յառաջ խաղացեալ պաշարեաց զաքաղաքն Վարամին աւուրս երկուսասան, և էառ զայն. և 'ի սահմանաց նորին արս երեքարիւր 'ի գերութիւն վարեալ, և հինգհարիւր գլխատեալ՝ դարձաւ առ արքայ որ հասեալ կայր 'ի Պելկրատ, և նա պատուեցաւ 'ի նմանէ։

Յայնժամ քարոզ կարդաց 'ի բանակին, եթէ 'ի մայրաքաղաքն Մահմատայ 'ի Պուսա, որ է Պուսին, ուշ արարեալ է արքային։ Հրամայեցաւ կազմել կամուրջ մեծ 'ի վերայ Տրաւա գետոյ, յերկայնութիւն երկերիւր և ութսուն և չորից դրկաց, և 'ի լայնութիւն երկուց. որ և կատարեցաւ յաւուրս հինգ։ Եւ նա աւուրս հինգ տեւեաց անցանել զբանակն ընդ կամուրջն. և 'ի վերջերորդին հրդեհեալ զկամուրջն, հասին 'ի մեծ գաշան Մոհաչ բազում տառապանաց տակս Հանին և ջրալից վայրացն։ Յառաջընթաց լինէր Պալի ագէ չորիւք հազարաւք տարառաքին հեծելոց. զհետ նորա գայր վեզիրն մեծ Եւրոպեան զօրաք և հինգհարիւր հրացինաւք. ապա կարգեալ էին Ահոց Պէհրամ փաշա նոյնչափ հեծեալ հրացինաւոցն. և զնոցա ետուն Սիւլէյման արքայ շուրջ պատեալ յենիչէրեաց և 'ի վերկարդեան ապայից հեծելազօրաց. իսկ վերջապահք էին բանակին հեծեալքն Պոնոյ, որոց զօրավարն էր Խոսրով ագէ։

Սիսլիյման արքայ 'ի բարձրաւանդակի ուրեք հարեալ զնորան իւր և բազմեալ 'ի գահոյս՝ նշմարեաց զբանակն Մահառաց, զի Հակառեալ կայր 'ի հանդիպոյ. հրաման եւ առեալ կարգել պատերազմի՝ յոր կոչեաց զՀինաւուրց հրամանս վերջապահացն։ Յառաջ մեռաց զօրավար նոցին խորով ոչ զԱրզրդուհա ոմն ծերունի ապառազէն՝ կապարձք 'ի թիկունսն և 'ի գլուխ իւր ապառաւոր, զորով պատէին առն և անոն ընչացքն իւր թաւամազք։ Ասէ ցեա խորով ոչ. «Ալեոր դու, արքայ կամի խորհուրդ 'ի քէն հարցանել վասն պատերազմիս»։ Եւ պատասխանի Արզրդուհա և ասէ. «Եւ ինչ՝ երբէք խորհուրդ քաջ քան զպատերազմել և եմ»։ Յայնժամ խորով ինքնին յաւել զիւրն ասել կարծիս, զի զառաջինն առն ասացի յարձակմանն հեծելաղօրուն թշնամեաց, և ապա երկուասաք փակեացին նոքա 'ի մէջ։ Եւ եկաց բանս այս, և հրամայեաց արքայ բարձրացուցանել զդրօշս պատերազմին, և ինքն տարածեալ զբազուկսիւր արտասուալից կարդաց յօգնութիւն զԱստուած. և զոչքն յայն տեսիլ և 'ի քաջալերս բանից մեծի վէճերին խրախուսեալ՝ փոքեցին դիմեցին յառաջ։

Հարան բախեցան ընդ միմեանս բանակքն երկոքեան հանդոյն ամպոց բարկաձայնի փոթորկելոց անհեպին ասա-

կուլթեանքս մղեցին զօրավարքն Մահմա-
ռայ Փերենին և Թամերլի զգուշանալ եւ ար-
պեան և արկին զասխակոնաւն, և ասոյ-
եանն Մարշալ Հանգերձ երկոքեանքն
հեծելակցաք զոգի 'ի բուն եղեալ յար-
ձակեցաւ ի հաս մինչև 'ի նոյնինքն յար-
քայն, զբաղուսն 'ի Թիկնապահացն որին
գիսթաւաալ կացոյց. մինչև 'ի կարճա-
կոտոր լինել երիվարին իւրոյ և ինքն ան-
կաւ 'ի տեղւոջն: Հաղիւ պատապարե-
ցաւ արքայ ընդդէմ նեռին և նիզակացն
Մահառայ ամրապինդ զրահիքն: Ալ
Լուդովիկոս Բ արքայ Մահառայ վերս
առեալ 'ի գլուխ իւր՝ փախեաւ 'ի ձա-
կատէն. և իւրքն տեսեալ զարձակումն
հրաշալեաւցն Օսմանեանց՝ 'ի փախուստ
ամենայն արարեցին առաջի նոցա. և քա-
զուսք, ընդ որս և Թագաւորն նոցա,
յայսր անդր խուսափել իւրեանց ընկըղ-
մեցան 'ի կարակուտ ճահիճս գաշտին,
և սակաւք ոմանք ետեղ զանազարափ
անձրևին օգնական գտեալ՝ ճողոպրե-
ցան 'ի ստոյ Օսմանեանց:

Պատուէր հրամանի քարոզեցաւ 'ի
բանակին, զի իւրաքանչիւր ոք յայնմ
գիշերի անդէն կացցէ մնասցէ՝ ուրա-
նօր կայրն 'ի ժամուն: Եւ 'ի վաղիւ ան-
դէր բազմեալ արքայն յոսկեղէն գահոյս
իւրում ընդ կարմրափայլ վրանաւն, և
ընկալեալ զաջահամբոյրս աւագանեոյն,
ինքնին իւրով ձեռամբ եդ 'ի գլուխ
վեզիրին մեծի զսկանակուռ փետուրս

ձիկուլ թռչնոյ, և այլոց զօրավարաց բաշխեաց հանդերձս պատուոյ։ Եր-կու հազար կառափուռնք մեծամեծացն Մահմատայ դիզան հանդէպ վրանին, և թիւ համարոյ անկելոցն 'ի Ճակատուն գաւառ քան և չորք հազարք։ Յաւուրն Եօթներորդի հրաման եղև ընդ սուր անցուցանել զամենայն զդերիս և զդիւ-զականս երկրին բաց 'ի կանանց, և կո-տորեցան չորք հազարք արանց։

Ի տասներորդի աւուր ամենայն սեպուհքերի և հաս ազգայ 'ի Պուռսին, զորոյ զբանալիսն 'ի հեռատեսանէ ընկալ-եալ էր. և ապրել զօրացիւրոց սատակ հրամմանաւ չմեղանչել յանձինս կամ 'ի սատակուածս բնակչաց քաղաքին. այլ նոքա յետ երկուց աւուրց հրկէզ արա-րին զմեծ մասն քաղաքին։ Փոխադրե-ցան ապա ամենայն հրաշէնք քաղաքին նաւակօք 'ի Կոստանդնուպօլիս, ընդ որս և պղնձի անդրիք Հերակլի, Ահա-սայ և Ապոլոնի[1]։

[1] Որդեւ մրցանակի Իպրահիմայ խանգնե-ցան անդրիւս այս հանդէպ ապարանից նորին 'ի յիարյալարանին ռեծի 'ի վերայ երից հոր-ղաց. այլ յոլով ժամանակի են յորմէ հեպէ Իարյան սուտ 'ի փեղլոնէ անպի։ Քանզի ան-դրադարձին 'ի ժամանակին յայնմիկ փերիոզն Գիլա-նի հեգնելով իմ երգեաց՝ երբ առաջին Իպրահիմ (նահապետն Աբրահամ) խորտա-կեաց զդրօշակսն, և երիրորդս այս անդրին

Յետ այնորիկ կամուրջ արկեալ 'ի վերայ Դանուբ գետոյ՝ անց գնաց զբանակն 'ի Փեշթ քաղաք. անդ ընկալաւ մարգարտիրութեամբ զոմանս յաւագանեանցն Մահմետայ եկեալս առ նա. խոստացաւ կարդել նոցա թագաւորս զՉափլա, և հրաման եւ բանակին չուգարձի առնել ընդ ափունս Դանուբայ: Առան զՀանապարհայն և այլ քաղաքք, էր որ գիւրաւ, և էր որ բռնութեամբ. և հրամանքն 'ի խուժդուժ խուժդուժ ապատակ ափոեալ ընդ ամենայն կողմանս՝ 'ի հոգի և 'ի սուր դատէին զամենայն. որով Հշմարտի բան պատմագրացն Օսմանեանց՝ եթէ թիւ կոտորածի ամենայն Մահմետայ յայսմ արշաւանի հասեալ ելոյ ցերկուս հարիւր հազարս արանց: Սակայն և յՕսմանեանց ոչ սակաւք, և այն յանկանաւոր մարդկանէ անկան 'ի զանազան Հանգամանսն, մինչև եհաս Սիւլէյման արքայ Ռեպով 'ի Կոստանդնուպոլիս յետ եօթնամեայ տարակայութեանն:

Եւ պատճառք Ռեպոյն ապատամբութիւն թիւրքմէնացն Կիլիկիոյ էր սակս ծանրութեան հարկաց. որք և օր ըստ օրէ սուսարացեալ 'ի բազմութիւն՝ հարիւն վանեցին զոմանեան իշխանս կողմ-

հաւատքեաց: Թէպէտ և նա էլոյծ զՀրեշ համարյանութեանն նախապալից հեծելոնքեամբ էլոյ, և ապա խիզդամահ ապանեամբ:

մանցն, եւ և զկուսակալս եւ զսպարապետն և
ասխարհն զաւառաց։ Այն ինչ գեռ եւս
ցածուցանէին զաղմուկն Թիւրքմէնաց
կուսակալն Ամիրայ Խոսրով փաշա, և
Փիրի պէյ կուսակալ Ասանոյ, միւս եւս
բոց ապստամբութեան բորբոքեցին ՚ի
կողմանսն հարաւոյ տէրութիւնք և այլ
խառնիճաղանճ ժողովրդաւանաջնորդ
գութեամբ Գալէնտէր օղլու անուանի
ուրուն, և մարտ առեալ ընդ զօրս
թագաւորին՝ բազում այն էր զի յաղ-
թական գտան քան եթէ յաղթեցան։

Եհատ շտապ տագնապաւ մեծ վէրկին
Խրսահիմ փաշա. և չկամեցեալ խակոյն
՚ի պատերազմ ձեռն արկանել, հնարե-
ցաւ նախ յինքն յանկուցանել զմեծ
մասն ապստամբացն խոստմամբ պար-
գևաց, և ապա թեթեթև մարտիւ պարտա-
եցոյց զնոսա զանազանս մինչև ՚ի ապառ։
Յայնժամ յառնան գաստասանին կոչե-
ցեալ զկուսակալսն և զգաւառապետս
Օսմանեանց՝ ի պատմութեամբ եհարց
՚ի նոցանէ զպատճառս նախկին փախու-
ստին նոցին. «Զի՞ է զի թիկնապարձոյց
եղեալ փախեարուք, ասէ, վատութեամբ
յերեսաց խուժանի տէրվիշացն»։ Եւ
յանկարծակի նոցա և զմիմեանսն դյան-
ցանսն արկանել՝ այն ինչ ակնարկէր
Խրսահիմ գահճացն յառաջ մատչել,
Մէհէմմէտ պէյ որդի Փիրի փաշային
խօսել կալաւ և ասէ. «Զոր օրինակ ա-
ռաջինքն մեր առ Ասառաց ապաւինու-

թեամբ, և ծերունեացն խորհրդով յայսպիսիս ձեռնարկեալ և յաջողէին, նոյնպէս և մերս ձախողութիւն ոմին հակառակ 'ի յանձնապատման յանդգնութենէ եհաս 'ի վերայ մեր »։ Զի Քաւ 'ի բանից ասոյ ձշմարտութեան ցասումն Խրատիմոյ, և նեղոյզ գաւեալ առ Ժողովականսն՝ գարձ արար 'ի Կոստանդնուպօլիս։

Յետ երից ամսոց խնդիր ինն յուզեցաւ 'ի Մարգարէալ քաղաքին, ընդ որ խառնեցաւ արքայ և ամենայն Կոստանդնուպօլիս. զի Գաղղոյ անուն ոմն օրէնսգէտ ասիաստանեցաւ առ արքայն Եմէ զՅիսուս և զաւետարանն սուրբ մեծ հանարինա. քան զՄէհէմմէտ և զկուրանն նորին։ Այլ երկոքին գաստաւորքն զօրաց Ֆէնարիզատէ Մուհիյէտտին չէլէպի և Գաղղոյ չէլէպի յետ սուղ ինչ վիճելոյ ընդ առնն յառնելի մեծի վէճիսին՝ վարեցին զնա 'ի բաց։ Բարկացեալ ընդ այն Սիւլէյմանայ, որ գաղտ ունկնդիր լինէր վիճմանն յետուստ վանդակին, և կին և յանկարծ 'ի մէջ. և յանդիմանեալ զառնեակսն՝ հրամայեաց յաստան գնալոյ, որ էր առուանին Քէմարիշազատէ. հանել զինդիրն, և օրինաք 'ի քնին արկանել։ Այլ Գաղղ անդադրդդ կացեալ մնացեալ միւսն կարծիս՝ 'ի մահ գատապարտեցաւ։ Զայս այսպէս առանձնն պատմագիրքն Ալի. Փնչէվի, և Սալազատէ։

Ի միւսում ամին ոչ սակաւ սպասամ բռնութիւնք ծագեալք 'ի Կիլիկիա, 'ի Բերիա և 'ի Պոնտիս՝ անդրէն խափանեցան զիւրս զօրութիւնսն, և Խոսրով պէյ կուսակալ կողմանցն Պոնտոյ բազում բերդարայս յաւել յաշխարհն Օսմանեանց. ընդ որս զԵայձա, զՊանեաղուքա, զՊէլայեզերթ, զՍոգոլ, և զայլ ամուր ամուր գրեսակս: Բաս խրնդրոյ Լազքի անուն գեսպանին Մաճառաց կորդեաց ազգայ Սիւլէյման'ի Մագաւոր նոցա փոխանակ Լուգոմիկոսի զՅովհաննէս Զափոլիա, որ և Եանուշ Զոլոլեւ. և խոստացաւ ինքնին գիմել անձամբ և առնուլ անդրէն 'ի ձեռաց Փերտինանտոսի ազգայնի Պոհեմիոյ և Մաճառաց ոչ միայն զՊուսա զգրաւեալն 'ի զօրաց նորա, այլ և զՎիեննա ընդամենն քաղաքաց նորուն: Վասն որոյ և զգեսպանս նոցին զՀոպոռամանքի և զՎարքսէլէրիէր զեկեալս 'ի պահանջել անդրէն զքաղաքս Մաճառաստանի զորս առեալ էր Օսմանեանց՝ ազգեալ փակեաց 'ի գիպահոջ զամիս մին, մինչև կողմեցաւ պատրաստեցաւ 'ի պատերազմն. ապա արձակեալ զեսպանս առ կայսրն ասէ. «Երթայք ասացէք տէրտն ձերում, զի ահա ես ինքնին գամ հաստատեցանել նմա որչափ ինչ արժանի լցէ»:

Ընտանին հրամայրսակաւ հաստատեալ ապա զվէզիրն մեծ յետում հրամանս, և ապարատեա ևս կար-

գեալ զնա, յամենեանն ծայիսի չու ա-
լար խաղաց յԵրուսաղէմ հարիւր և քսան
հազար արամբք, և քսան հազար ուղ-
տուք. և մեծաւ տաժանմամբ եհատ
զուզին զայն ամենայն ուրեք որ-
զեալ գոլոյ վայրացն 'ի յաձախութենէ
անձրևաց և 'ի գետոց յարուցելոց. որ-
պէս և առ Փիլիպպէ քաղաքաւ զայրա-
ցեալ գեան Արիրմ հեղեղեաց զբանա-
կեանն Օսմանեանց, որում բազում մար-
դիկ ջրահեղձոյց եղեն, և այլք 'ի ծառս
ապառաժեալք սովամահ մեռան:

Իբրև հասին 'ի գաշան Մոհաչ՝ ընդ
առաջիկ աղքայիկ Հանուշ Մագաւորն Մա-
ճառաց վերհազար հեծելովք, և համ-
բուրեալ զաջ նորին բազմեցաւ 'ի վրանի
նորա առընթեր նմին: Խօսեցաւ ընդ
նմա Սիւլէյման մեծաւ յարգանաք, և
եւ նմա 'ի պարգև երիս ընտիր երիվարս
ոսկեզարդս, և դիպակս չորս:

Ապա խաղացեալ 'ի Պուտա պաշա-
բեաց զայն Սիւլէյման ընդ Իպրահիմայ
կրկին անգամ. այլ մինչև նեղեալ քա-
ղաքացւոցն՝ բացին նմա զդրունսն. և
արքայ ոչ եմոյ ենիչէրեաց մեռեալ յա-
ւար քաղաքին: Ապա 'ի ձեռն միոյ ու-
ղտուք 'ի զօրավարաց զդրուն բազմեցոյց
զՀանուշ 'ի գահ Մագաւորութեան
Մաճառաց. և ինքն յամենեանն սեպ-
ուհանիներն դիմեաց պարարեաց զվ ենեա,
յառաջագոյն արձակեալ զասպարա-
կաւորսն գերեալ գերիսն և առար հար-

կանել ուր ուրեք և հասանելցին ոչք նոցա։

Վերջապես հոգալ զօրականքն Լեհ էին 'ի քաղաքին. այլ արիութիւն զօրավարացն նոցա, և ահ լծոյ ծառայութեան Օսմանեանց վառեցին զնոսա 'ի քաջութիւն անպարտելի. որովասէս յարձակեալք ընդ զանազան դրուն քաղաքին՝ բազում նախձիկս գործէին, և անխոնջ վառակովք զնրամոս պարսպացն նորոգեալ՝ զամենայն ճիգն Օսմանեանց 'ի դերև հանէին։ Զմեռն սասկասառոյց և պակասութիւն մթերից 'ի վերայ հասեալ՝ ոչ սակաւ լքուցանէին զպաշարիչսն. սակայն վերջիք և կուսակալք սուրն խորհրդոյ կազմեալ, հաստատեցին միաս ևս անգամ յարձակել սասկապէս 'ի քաղաքն, և խոստացան ենիչէրեանցն ըստ գլուխ փոխս հազար, կամ սակիս քսան. և քարոզքն ազազակէին՝ զի որ նախ եկցէ 'ի պարիսպս անգամ, թէպէտ 'ի սպոյից ոք եկցէ՝ երեսուն հազար փոխս առցէ իւր պարգև։ Սիւլէյման ազգայ ինքնին եկ խրատ երկարաբ 'ի զնին խրամոց պարսպացն, և հաճեալ ընդ բացսոս ընդունելութեան նոցին՝ գովեաց զվասակս Խրատիմայ։ Ապա 'ի ջորեքասասանեարդի աւուր ամ սեանն հոկտեմբերի յարձակեցան Օսմանեանք մեծաւ սասակութեամբ ընդ խրամսոն բացեալս առ դրամբն Քարինթիոյ, և ահագին քաջութիւնս արա-

բին. այլ 'ի վերջէ ուրեմն հրաման եւ
արքայ բանեալ զպաշարումն, և չու
դարձի առնել։ Յայնժամ եւ պաշա-
ռեալքն երբէք երբէք յարձակեալ ոչա-
կաւ արս կոտորեցին Օսմանեանց.
բայց այն ամենայն չէր թեզ բնաւ առ
անչափ կոտորածիւ և աւարառու-
թեամբն՝ զոր ցայնժամ և զոր յետ այ-
նորիկ գործեցին ապստամբաւորքն ընդ
հանրէն Ասորեաց, և ընդ ամենայն ան-
զիս ընդ որս զդարձն արարին։ Իսկ ար-
քայ առ 'ի սփոփելոյ զզրաւեալսն գարձ
զօրականին, անդէն իսկ յուղղոջ գրով
բաշխեաց 'ի նոսա գրամն և պարգևս. և
հասեալ 'ի Կոստանդնուպոլիս կատա-
ռեաց զՀանդէս Թլփատուեցեանն որդւոց
իւրոց, Մուսաֆիայի, Մէհէմմէտայ և
Սէլիմայ։

Զաւուրս քսան տեւեաց հանդէսն
այն 'ի ձիարձակարանին մեծի այնպիսի
ճոխութեամբ և փառաւք, զոր ուրուք
յառաջնոց թագաւորացն չէր բնաւ ե-
րևեցուցեալ։ Խորանն արքայի շքեղ փոշ
փոշէր ոսկեփայլ յարկաւն 'ի վերայ
կապուտակագոյն սեանց, և շուրջ զնո-
վաւ հարեալ էին իբր 'ի նշաւակ յաղ-
թութեան խորանք թագաւորաց և իշխա-
նացն արևելից նկուն եղեալք առաջի
օսմանեանն զօրութեան. ընդ որս և խո-
րանք Ուզուն Հասանայ և Գանսու
Ղաբիւայ։ Յաւուրն երրորդի մատու-
ցին աւարառեալն զքնծայաբերութիւնս

իբրեանց առ արքայ. և էին ընծայքն ազգի ազգի դիպակք և կերպասք և ոսկեթել գործածք Հնդկաց, Պարսից, Դամասկոսի, Վենետկոյ և Յունաստանի. սկաւառակք արծաթիք զերդունք ոսկւով, բաժակք ոսկեղէնք թանթաղունք աքսանք պատուականօք, յախճապակք Չինաց, մուշտակք թանթարաց, երիվարք արաբացիք, ուժոյգք Հայաստանի, և գերիք եղիպտացիք, յոյնք, եթովպացիք և մանառք: Եւ ընծայքն վէզիրին եւ թ մեծի յուսն հազար ոսկւոյ գինք էին: Զօր ամենայն Ղորանոր խնջոյք և խրախութիւնք, Ղորանոր խաղարկութիւնք, Ջոհավառութիւնք, ընթշամարտութիւնք և կեղծ պատերազմունք լինէին:

Ի շրջեքասանեքորդում առուր հանդիսին ածան և արքայորդիքն երիքեան մեծապանծ փառօք 'ի Հիպոդրոմն յապարանս Խրոհնայ և թրխատեցան. և 'ի վաղիւ անդր արկաւ Ճաշն արքունի, և կային բազմեալք ընդ ամենի Ղորա ամենայն վէզիրք և կոմնապետք և դատաւորք զօրաց, և ուսուցիչ արքայորդւոցն Խայրէտին, և որդի խանին Խրիմու. և ընդ ահեկէ Փիրի Մէհէմմէտ փաշա, որ յառաջն վէզիր էր. և Զէյնէլ փաշա, և Գէրուխշատ պէյ 'ի տոհմէն Ուզուն Հասանայ, և Մուրատ պէյ որդի արքային Եգիպտացւոց Գանսու Ղաւրէայ, և Լատիֆ պէյ վերջինն յիշեալս տոհմին Զիւլղատ-

լոյ։ Ի միւսում աւուրն կարգեցաւ հանդէս հակառաւութեան գիտնականաց, որոց պարագլուխ էր գենպեան ինքնին. և որ քաջանային 'ի պատասխանիս՝ գովասանութեանց հանդիպէին, և որ ապիսանայինն՝ իւրեանց իսկ ընթերանալոյն պատուհասէին։ Որպէս և մի ոմն 'ի վարժապետաց Սիւլէյման Խալիֆէ անուն իբրև եռեւս զի չգոսանէ զպատասխանին վաղվաղակի՝ առ կարի ամթոյն հարաւ 'ի կաթուածէ, և տարեալ 'ի տուն իւր փչեաց զոգին։ Հրաւիրեալ էր 'ի հանդէսն և դուքսն Վենետիկոյ Անդրէաս Կրիթթի. այլ նա պատճառեալ զծերութիւն և զիսաթութիւն՝ հրաժարեցաւ կալաւ, և առաքեաց 'ի դիմաց իւրոց զԾէն և զՄոչենիկոյ զաւագ որեարն իւր։

Ի նմին ամի դեսպանք 'ի Փերսիոնատոսէ արքայէ հասեալ 'ի Կոստանդնուպօլիս խնդրէին խաղաղութիւն առնել ընդ Սիւլէյմանայ. և այն պայմանաւ, զի հատարեալի և 'ի նմանէ արքայն իւրեանց թագաւոր Մաճառաց։ Ընդ որ ցասուցեալ Սիւլէյման և վէզիրն մեծ՝ առ երեսս խոստացան կատարել զինդիրն. այլ ապա ունայնաձեռն արձակեալ զնոսա, պատրաստեցան 'ի պատերազմ ոչ ընդդէմ Փերսիոնատոսի, այլ ընդդէմ Եղբօրնորա կայսերն Գերմանացւոց Կարոլոսի Ե. զի զՓերսիոնատոս յարհամարհս ունելոյ հապիւ թէ

սպասպետ վարկանէին Կարոլոսի, քան թագաւոր ոք։

Զօրաժողով եղև արքայ արանց երկու հարիւր հազարաց. յորս էին վեշ տասան հազար եւրոպեան զօրք, երեսուն հազար ասիական, երկոտասան հազար ենիչէրիք, քսան հազար կանոնաւոր հեծելազօրք, և վաթսուն հազար ապատակաւորք. թող զհնգետասան հազար թաթարս, զորս ած 'ի Խրիմոյ Սահիպ քէրէյ եղբայր խանին, և զհարիւր հազար զօրն Պոմեիոյ՝ որոնք էհաս 'ի Պելկրատ առ արքայ Խոսրով պէյ։ Իսկ հրազէնքն թէպէտև մանուանք՝ ոչ ինչ պակաս էին քան զերիս հարիւր։

Ապրիլի հանգերձանօք խաղացեալ Օսմանեանցս առին զբազում բերդորայս աշխարհին Մաճառաց որ ընդ ձեռամբ Փերտինանտոսի կային. այլ ոչ սակաւ աշխատ արար զվէզիրն առուն Կիւնս անուն ամրոցին, յորում էօթնհարիւր բերդակալաք զգէմ կալաւ նոցա ցաւուս քան քաջ զօրավարն Վիկոդայոս Եուրիչիչ խրուաթ յազգէ, և անյողդողդմարտ եղեալ կռուէցաւ ընդդէմ ասէպ ասէպ յարձակմանց պաշարողացն։ Եհաս անդր և Սիւլէյման արքայ. և Իպրահիմ աճապարեաց առանձին թղթով համոզիչս լինել զօրավարին՝ զի անձնատուր լիցի, և զի խոստացի հարկս ինչ տարեկան։ Եւ իբրև չէառ նա յանձն, հրամայեաց Իպրահիմ և սասակցու-

ցին Օսմանեանք զպաշարումն, այլ դարձեալ վանեցան 'ի բաց։ Յայնժամ հասին 'ի խրատնասն զոք ջոջք յՕսմանեանց՝ զոք յանուն Վէզիրին մեծի հրաւիրեին զքաջն Եուրիշիշ 'ի բանակն. և նա ոչ եւս դանդաղեցաւ գնալ 'ի կոչն, զի և վէրս 'ի բարձան ընկալեալ էր, և ամրակամեացն իւրոց թիւ նուազեալ, և վառօդ հրազինուցն սպառեալ։ Եկ ընդառաջ նմին Խաղրահիմ, և կալեալ զձեռանէ նորա բազմեցոյց առ իւր, և բազում խնջ յարգանաց խօսեցաւ ընդ նմա. ապա ասաց նմա յանդիման լինել և արքայի. այլ նա պատճառեալ զոկարութիւն՝ ապաշեաց եւթ զի մի զոք յՕսմանեանց մոցէ յանուն. և Վէզիրն կատարեալ զմանդիրն՝ արձակեաց զնա 'ի խաղաղութիւն։

Կարողաև Վերմենանոս 'ի բուն խակ 'ի Վենետանէկալեալ մնային գալատեան Օսմանեանց. սակայն Սիւլէյմանայ միոք էին յապատ գաշան մարտ եղեալ կռուել ընդ Կարոլոսի. նմին իրի խակ չէր բերեալ ընդ իւր գործիս պաշարման, և ոչ հրազէնս ծանուցեալ. թող զի առ 'ի միեւոյ միանգամ 'ի Վենետա՝ հարկ 'ի վերայ կայր բազմաց ոչիրանալ նախ ամուր ամուր բերդորդեից։ Վասն որոյ ապատամբ ոմեալ 'ի նահանգս կողմանցն Աւստրիոյ շուրջանակի միանգամ 'ի Պրաց քաղաք, երեսուն հազար գերիս խաղացուցին ածին Օսմանեանք ընդ

իւրեանս. զքաղաքս և զդիւղս ողջոյն հրձիգ արարեալ քանդեցին, և զբնակիչս նոցին 'ի սուր սուսերի մատնեցին։ Էին և ոչ սակաւք 'ի զօրավարացն Գերմանացւոց, որ 'ի բերդից բերդից արիաբար վանէին զՕսմանեանս. այլ նոքա այնու առաւել ևս զայրանային, հանդոյն մրրկայոյզ կոհակաց ծովու փրփրագէզ մեկնելոց 'ի բախմանէ անվկանդ ժայռից։

Մինչդեռ դարձ արարեալ գնայր Սիւլէյման արքայ 'ի Կոստանդնուպոլիս, առ Պելկրատաւ եհար զբանակիւր, և ընկալաւ զինդակցութիւն աւագանուոյն ընդ յաղթանակն։ Ի փիլիպէ առեան յօրինեալ խորհրդոյ՝ կարգեաց 'ի խան խրիմու զԱահիպ քէրէյ փոխանակ եղբօրն Սատաէթ քէրէյայ։ և հասեալ 'ի Կոստանդնուպոլիս յուծուսան աւուր ամենեանն նոյեմբերի՝ զաւուրս հինգ հանդէս ջահավառութեան արար 'ի քաղաքին և յարուարձանեայսն՝ հրամայեալ 'ի բաց թողուլ զդրունս վաճառանոցին և զցայգն ամենայն։

Այս մնավասակ դարձ Սիւլէյմանայ յարշաւանէն, որպէս և առնուլ ծովակալին Կարոլոսի կայսեր Անդրէի Տորիայ զամուրն Կորոն որ 'ի Մոռա, և հանդերձանք պարսկական պատերազմին բռնադատեցին զարքայ խոնարհել 'ի հաշտութիւն ընդ Փերսիանս։

տասի, որ սուէպ սուէպ գէսպանու-
թեամբ 'ի խնդիր էր խաղաղութեան։
Աբձակէաց և ինքն գէսպան զոմն 'ի
Վենետա, և ընդ ձեռն նորա պահանջէր
զիսկանս Կրան քաղաքի, խոստանալով
դուլ առնել զնուց 'ի ժամուն։ Եւ
Փերոմենատոս յակամայ կամս առա-
քեաց զիսկանսն առ Սիւլէյման հան-
դերձ նամակաւոր և ընծայիւք. այլ
վէզիրն Իպրահիմ իբրև եռեռս զնոսին
'ի ձեռս գէսպանացն՝ ժպիտ ինն ախոր-
ժանաց'ի գէմն քերեալ, ակնարկի արար
նմա առ իւր զիսկանսն ունել, իսկ զն-
ծայսն ընկալաւ մտադիր հաճութեամբ,
և էին գինք եօթն հազար ոսկւոյ։ Յեր-
կարաձգեաց Սիւլէյման և զդուլ զնուցն
ընդ Լեհս յոյժ սակս առաքեալ էր առ նա
Սիգիսմունդ արքայ Լեհաց զիշխանն
Օփալինսքի։

Իսկ պարսկական արշաւանին պատ-
ճառք վասրանջելն էր քդեշխին Բաղդ-
շոյ և անցանել առ Դահմասէպ կամ
Դահմասպ արքայ Պարսից, և զն Ռուսմ
կուսակալ Աղրպատականն աշխարհի հա-
տուածեալ էր առ Սիւլէյման. և կուսա-
կալն Պաղտատայ Զիւլֆիկար խան ա-
ռաքեալ էր առ Սիւլէյման զիսկանս
քաղաքին։ Դու յաւել և զընդդէմս հա-
կառակութիւն Օսմանեանց ընդ Պարս,
և զդեսպանացն Դահմասպայ անդամն
եկաւորել 'ի խնդակցութիւն թագա-
ւորելոյն Սիւլէյմանայ։ Սմին իրն ան-

գլուխն 'ի Ժամանակի արշաւանացն 'ի Գերմանիա արձակեալ էր արքայ զնա ինքն Ռուլամէ 'ի վերայ խանին Բաղիշոյ-ապա և զէգիրն մեծ Իպրահիմ փաշա ուղեորեալ 'ի Պարսս, էառ նախ զամուր ամուր տեղիս աշխարհին Հայոց, զԱրծ-կէ, զԱրձէշ և զԽլաթ. ընկալաւ և զգ-փականս անմարտանելի բերդին Վանայ և զԱնբկայ, և եմուտ շքեղաշուք հան-գիսիւ 'ի Դաւրէժ, ուստի փախուցեալ էր շահն Պարսից. և ապա նամականի առաքեալ առ արքայ Սիւլէյման հան-գերձ բանալիսքն Վանայ՝ ազգ առնէր զեղեալսն: Իսկ նա որ ինքնին անձամբ գիմեալ գայր 'ի Դաւրէժ՝ յետ աւուրց ինչ եհաս անդր, և պարգևս բաշխեալ զօրացն և Իպրահիմայ և ամենայն զօրա-վարաց, հրաման ետ չուս առնել 'ի Պաղ-տատ: Եւ Թէպէտ անձնատուրն լինել պարսիկ կուսակալացն կողմանցն առ Օս-մանեանս՝ փարատէր 'ի նոցանէ զեր-կիւղ մարտի պատերազմի, այլ սատ-կատուոյց ձմերանին, և ապառաժուք վայրացն յոգիս ապատան արարիներգ-զօրականն: Բազում դրատոք տապատ անկեալ սատակեցան, և հարկեալ հրդ-ձիգ առնել հարիւր կառս հրազինուց, և զհրազէնսն անդէն ընդ հողով ծածկել:

Թէքքէլի Մէհէմմէտ կուսակալն Պաղտատայ ետ զքաղաքն 'ի Սիւլէյման արքայ և մեկնեցաւ անտի զօրքն իւ-

բովք. և նորա մահաբեր զինի մեծի վեզ-
ին 'ի քաղաքն՝ դարձեալ պատիս և
պարգևս բաշխեաց առագանուոյն և զ-
բանականացն։ Զմերեալ ապա անդանք
ամիս չորս, կարգս և օրէնս սահմա-
նեաց 'ի կողմանսն յայնոսիկ. աշխարհ-
գիր արար ընդ բովանդակ երկիրն, և
յայց էլ ամենայն շիրմաց մարգարէից
Տաճկաց՝ որ թաղեալ կան 'ի Պաղեստա-
և 'ի մերձակայս նորին։ Յորում ժա-
մանակի 'ի բանտարկութենէ մեծի վե-
զիրին 'ի մահ դատապարտեաց և զԽա-
քէնաէր չէլէպի զհամարակալն՝ որոյ
խոհական ընթացք վարուցն և մանա-
ւանդ անբաս Ճոխութիւնք խէթ էին
որոնին Խրատիմայ. և զվեցհազար գ-
ին նորա որ առ հատարակ ոսկեկազմ
էին՝ խառնեաց ոսկոյ 'ի դաս պաշ-
ածնէից գրան իւրոյ։

Յետ այնորիկ զառեչութիւն կողման-
ցն Պաղեստայ յանձն արար թագա-
ւորն 'ի Սիւլէյման փաշա հանդերձ
կարևոր պահնակաք, և չուեաց ամենայն
բանակաւն 'ի Դամասկ։ Ընդ ինքն միայն
ընդ մեծի վեզիրին ՆԷՔԷՐ յարքունիս
թագաւորին Պարսից. իսկ այլ զօրա-
վարք և առագանին ընդ վրանաք սմէին։
Եւ անտի վեցամսեայ ուղևորութեամբ
հասեալ ոստիկ Կոստանդնուպօլիս,
եմուտ անդր մեծապէս հանդիսաւ յաղ-
թանակի 'ի սկզբան ամին 1536, և նախ-
կին գործ առեչութեան արար զկռէն

գաշինս ուխտի ընդ արքային Գաղղիոյ, որ առանձինն գնապատուութեամբ խընդրէր 'ի նմանէ զէապէս պայմանս և աշառութիւնս սակս Գաղղիացւոց գտելոց 'ի Թագաւորեալ քաղաքին։

Եհաս ժամ աղօտանալոյ և փառացն Խղտահիմայ, որ 'ի ջրեքտասան ամաց հետէ 'ի տիպ լուսնի Հախր առեալ զարքայութիւն, և զամ քան զդամ պայծառացեալ, ոչ ևս տեսէր բաւէր ժոյժ ունել տեսչութեան ոգւոյն, և կամէր ինն տեսչաւոր յանժոռն արքունի, որ միայն պակասէր նմա. և որում սկիզբն ևս արար՝ կոչելով զանձն իւր Սէրասքէր սուլդան[1]։ Վասն ևս 'ի կասկածս միտս էր արքայ զնմանէ, զի և անմոռաց յուշի ունէր զանիրաւմահ Խաքէնտէրայ, և զի արհաւրոք զերայն զոր 'ի Պաղտատ 'ի գիշերի անդ յետ մահուս քաջի առնն տեսեալ էր. Իբրու զի ուրուականն Խաքէնտէրայ սպառնալից երևեալ կշտամբէր զնա սակս այնպէս զամենայն գործս տեսչութեան աշխարհին և զգաստատեալ անպարտ արեանց լքանելոյն արքայի 'ի

1 Եւ այս ինչ էր, ասէն պապանգիր։ Օսմանէանց, ճշմարիտ պապճառ փինու ՀԷՂԻՐԻՆ ընդդէմ Խուքէնտէրայ. փանգի նա յանդիմանէր զԻսրահիմ ասէլով Էրէ լէ օրէն՝ լէ 'ի դէպ նմա զանուն պապուայ զսէպհանն արքայի զանյամբ առնուլ։

ձեռամբ բռնաւորին Իպրահիմայ. և ապա
ահագին ոմն յարձակեալ 'ի վերայ խեղ-
դամահ կամէր առնել զնա, մինչև 'ի վեր
վազել արքայի յընկողնացն վայելովառ
ահին։ Արդ 'ի միում գիշերի մեծի պա-
հոցն Ցաճկաց գնաց Իպրահիմ որպէս
սովարն էր յապարանս արքունի ընթ-
րել ընդ թագաւորին, և ապա ննջել
'ի նմին սենեկի. և ընդ այդն խեղդամահ
գտաւ 'ի մահիճն. և գիտակն նորա անփա-
ռոնակ թաղեցաւ 'ի մենարանի ուրեք
տերվիշաց 'ի Ղալատիա։ Եւ փոխանակ
նորա կարգեցաւ Ալյաս փաշա։ Այս
կատարած եղև Ջնարահար յոյն գեր-
եոյն մոգնիսացւոյ, որ շնթող և խի-
զախ և պատրաստաբան բարուքն ամ-
բարձեալ մինչև յազգակցութիւն ար-
քայի, և մեծամեծ վաստակովքն առ-
տրնին և 'ի բանակի անցեալ զանցեալ
զամենայն բարձրութեամբ, գահավէժ
անկաւ յանկարծակի 'ի մահուն խոր-
խորատ [1]։

Ի ժամանակս երկրակալութեանն
Սիւլէյմանայ յաշխարհին Պարսից և

1 Ի յիւրաքանչիւր ըղձմարար ինչ-
հինայ սահանքն պատմագիրն Անի, զի մինչ
դեռ փոխանն սենեկապետ էր նա արքայի,
զհատուածս եղանգանց նորին 'ի ներսն արքունի
հաստատեր առնոյր, և ջուր արկեալ 'ի վերայ
սրոցն ընոյն զանձամբ և զայլոսկ պաղատանս
նոցա ինքն ջուր վարդին։

գաղգէացւոց, քաջահամբաւն Խայ-
բէտաին փաշա[1] զծովեզերեայս Ակրի-
կոյ զՃէզայիր և զԹունուզ զաշխարհս
նախնոյն Կարթագինոյ։ Քանզի սա 'ի
յորվանաց հեռեկ հինարբար ապատա-
կեալ ընդ միջերկրականն՝ ոչ սակաւ աշ-
խատ արար զՍպանիացիս. ապա ան-
ընդ և թագաւորեալ քաղաքին Ճէ-
զայիրայ, սպանեալ զթագաւոր նորին
զՍէլիմ, այլ զկրաւունս դրամ հա-
տանելոյ և զմաղթանաց ուրբաթն
պահելոց արքայի, և ազգ արար զյաղթա-
նակէն առ Սիւլէյման։ Իսկ նորա կար-
գեալ զԽայրէտտին 'ի կուսակալ կող-
մանցն, քաջալերեաց զնա չդերծուցա-
նել 'ի ձեռաց զաշխարհն մեծ։ Էառ
Խայրէտտին և առեալս ինչ յերկրէն Սպա-
նիացւոց. վանեաց նաւամարտիս զծո-
վակալն զՎեդրէաս Տորիա, և խաղացոյց
յԱնտալուսիոյ 'ի ծովեզերքն Սպանիա-
ցւոց եօթանասուն հազար Մաւրիտա-
նացիս 'ի հանդիպակողմն յԱֆրիկէ։

Ապա կոչեցեալ Խայրէտտին յար-
քայէ մինչդեռ գայր 'ի Կոստանդնու-
պօլիս, կալաւ հանդէպ Մեսինակզուոյն
նաւս ութուտասն, և գոստարկեալ զնո-
սին հրձիգ արար։ Եւ երբեմն եհաս 'ի
Կոստանդնուպօլիս, հրամանն եւս նոսա
արքայ նաւս կազմել որչափ և կամիցի,

1 Ցայդմէ է սա Եւրոպացւոց՝ Պարպա-
ռոսա յորջորջմամբն, այն է ջիֆմորուս։

և երթալ սկսել 'ի սպառ Կարթագինոյ
Խաղաց գնաց Խայրէտտին ուխտան
նաւուք, ուխտ հազար ենիչէրիւք և ուխտ
հարիւր հազար ոսկով, և զՃանապար-
հայն բացում քերդոցայս առեալ յի-
տալացեոց, սպասուսկեաց և 'ի ծովե-
զերեայս Նէապօլսոյ, և Եհսա 'ի Թունուզ
քաղաք, յորում Թագաւորէր Միւէյ
Հասան ոմն 'ի վաղեմի տոհմէ որդւոցն
Հաֆսայ: Սարսեալ կուռեցաւ ընդ
նմա Խայրէտտին, և էառ զամուր գրեանն
Հալգիւլվատ, որ և Կոլէթթա. այլ ոչ
ինչ յերկարեաց ինդուլթիւն նորա: Զի
կայսրն Կարոլոս հինգ հարիւր նաւուք
Եհսա յօգնութիւն արքային Թունու-
զայ, յաղթեաց պատերազմաւ զօրացն
Օսմանեանց և հալածեալ փախոյց
զԽայրէտտին ասկաւ արամբք 'ի լեռնա-
կողմանս, և անտի 'ի ճէզայիր: Եւ ապա
պայմանեալ ընդ Միւէյ Հասանայ դա-
շինակարգաց յանդորրութիւն քրիստո-
նէից կողմանցն՝ դարձ արար յերկիր իւր:

Հասարան երեանամեայ խաղաղու-
թեան Օսմանեանց ընդ Վենետիկեցիս
զոլով Խարահիմ փաշա, 'ի կործանել
նորին բացաւ և դուռն պատերազմի:
Քանզի Խայրէտտին փաշա, դարձ 'ի Կոս-
տանդնուպօլիս արարեալ և ծովակալ
եղեալ էր, և ցանդ պատճառս խնդրէր
նաւամարտի ընդ քրիստոնեայս: Ի չա-
րադէպ ժամուն և զօրավարքն Վենետ-
կեցւոց առ Կորկիւրաս անկեալ 'ի վե-

բայերից նաւուց Օսմանեանց՝ վարեցին
զնաւայանգէաս 'ի ցամաք. և էր 'ի նաւս
անդ Եօնուս ոչ ոչ արձակեալ 'ի Սիւլէյ-
մանայ զեսպանութեամբ 'ի Վենետիկ:
Եւ թէպէտ ծերակոյտն Վենետկոյ պա-
տուհասակոծ արարին զզօրավարս իւ-
բեանց սակս լուծանելոյ հրեշտակու-
թեանն օրինաց, սակայն Սիւլէյման
զքաջ ստուարագունդ բանակաւ գի-
մեաց ընդ ցամաք 'ի վերայ նոցա և ե-
հաս մինչև յԱլբանա: Հրամայեաց և ծովակալին Խայրէտտինայ և մեծի վե-
զիրին Ալյասայ, և նաւատորմին Լուդ-
ֆիեայ յարձակել ընդ ծով յառուն
կղզւոյն Կորկիւրայ, այն է Քորֆու
կամ՝ Քէօրֆէզ: Եղեն 'ի կղզին յիսուն
հազար զօրականք երեսուն հրաղինուք
մեծամեծք, և ապստամբեալ շուրջա-
նակի զերիս տիւս և զերիս գիշերս, ապա
պաշարեցին և զբուն քաղաքն: Եհաս
անդր և Սիւլէյման ինքնին, և ազգ արար
'ի նեղբս՝ ասել զքաղաքն. և իբրև ան-
պատասխանեալ արձակեցաւ զեսպանն 'ի
Վենետիկեցւոց, հրամայեաց զինդել
զպաշարումն: Ալեջափ էր բռնութիւն
և թափ արձակման հրաղինուցն Օսմա-
նեանց, զի ոչ ումեքն ոտուցեալք 'ի նոյ-
ցանէ քաջ 'ի բաց զքաղաքաւն զան-
ցեալ 'ի ծովանդր անկանէին, խուռն ինչ
ինեալ հասուցանելով պաշարելոցն: Իսկ
որ 'ի նեղբուսա 'ի գլեկէ անսոխ ոչ ոչ

արձակէին՝ անվրէպ դիպեալք 'ի պա-
շարիչսն՝ բազում մահուանս 'ի նոսա
գործէին։ Երկու նաւք Օսմանեանց
ընկղմուցան, և 'ի մի հարուած ռմբի արք
չորք միանդամայն գիտապատ անկան
'ի վերայ մարտկոցացն, որ ըստ այնր
ժամու զինուորութեան ոչ փոքր ինչ
զարմանք էին։ Եւ այս գէպք շատ ե-
ղեն Սիւլէյմանայ, որպէս ասեն պատ-
մագիրք Օսմանեանց, 'ի բառնալ զպա-
շարումն։ Իբրու զի պատուական էին
ասէր նա՝ կենդանութիւն միոյ Օսման-
ցւոյ, քան զբիւր բերդորայս։

Ի գարձին իւրում 'ի Կոստանդնու-
պօլիս գրաւեաց Սիւլէյման արքայ և
զամենայն կղզիս Արշիպելագոսի ընդ
ձեռն խայրէտտինայ 'ի Վենետիկեցւոց։
Յորում ժամանակի և Խոսրով ակէյ կու-
սակալ Պոնտիոյ էառ հանդերձ այլովք
կուսակալքք կողմանցն բազում բերդ-
բայս յերկրէն Դաղմատացւոց և յաշ-
խարհէն Մաճառաց, Թէպէտ և առ ի-
րեւս խաղաղութիւն էր յայնժամ ընդ
Օսմանեանս և ընդ Գերմանացիս։ Ար-
ձակեաց Փերտինանտոս ընդդէմ ա-
պատակութեանցն Խոսրովայ վեշտա-
սան հազար հեռեւակազօրս և ութ հա-
զար հեծելս, որոց զօրավարէր Գա-
ցիանէռ։ այլ Խոսրով եհար խորտա-
կեաց զզօրսն և ըստ լիացաւ բազում
աւարաւք։ զի Գացիանէռ անդամն 'ի

սկզբան Հակառամարտին վատութեան գործ յանձին ցուցեալ 'ի փախուստ դարձաւ [1]։

Զամն որ զկնի անցոյց Սիւլէյման դարձեալ 'ի մեծամեծ յաղթանակութիւնս։ Քանզի պատճառս ինչ անհաւատարմութեան գտեալ 'ի Ռարէշ իշխանն Մոլտաւիոյ, որ 'ի քան և երկուց ամաց հետէ հարկատու էր Օսմանեանց՝ խաղաց 'ի վերայ նորա զօրու ծանուս։ Ընդ առաջ եկն նմա առ Եաշ քաղաքաւ Սահիպ քէրէյ խան Խրիմու թիւ հազար հեծելովք, և մեծապէս պատուեցաւ յաղթայէ։ Ապա հրաման եւ Սիւլէյման զօրացն յարձակել 'ի քաղաքն Եաշ, յորում նորաշէն ապարանք Ռարէշայ ամենայն եկեղեցեաք հանդերձ քաղաքին մոխրեցան. և թամբարքն և ապաստակաւորք հալածեցին զՌարէշ մինչև յանտառամէջս Դրանիկ վանիոյ։ Ի մերձենալ Սիւլէյմանայ 'ի Սուչավա, որ 'ի ժամանակին յայնմիկ քաղաք մեծ էր և ամրակնդ, աւաղանին Ռարէշայ մատգիւր բացին նմա զդրունսն. այլ ոչ զերծան 'ի յափշտակ

1 Ընդ այլ հրապէնս գերմանական բանին անխա 'ի յնոս Օսմանեանց և ընդանօրն ռեծ թնդանօն Քացիանէաս, ևամ որպէս պապանգիրք նոցա ի՝ուլին՝ գօլան գօքոս ա՝նուանէալ. զոր և ընդ ամ էրիերքիս վարէին նոքա 'ի ռեծամեծ պապերազմսն։

կուլթենք և 'ի կողոպտելոյ զօրացն Օս-
մանեանց։ Կարգեաց Սիւլէյման ըստ
խնդրոյ աւագանեացն իշխան երկրին
Պաբիանոս զեղբայրն Ռարէշայ, և եա
նոնա գլխատեց և սամուրենի և դրոշ և
թմբուկ, հանդերձ ծանր ծանր պայ-
մանօք. և մի էր 'ի պայմանացն՝ ածելիշ
խանին անձամբ 'ի Կոստանդնուպօլիս
ամի ամի զհարկն տահմանեալս։ Եւ
դարձ արարեալ ապքայն 'ի Բուլղարս,
ձմերեաց յԱդրիանուպօլիս։

Ընդ երեսս առ նոցա ծովակալ իշխանն
Խայրէտտին, որ 'ի հերուն հեռէ հա-
րիւր և յիսուն նաւուք արշաւանս ե-
դեալ 'ի միջերկրական ծովուն՝ երկոտա-
սան կղզիս ընդ հարկաւ կացուցեալ էր,
և յայլ ևս երեքտասան կղզիս ապա-
տակեալ. և մի ըստ միոջէ պատմեաց
զկրան յառնելն Թագաւորին։ Ընդ որս
և զնաւատարան ընդ մեծի նաւահան-
գիստն քրիստոնէից, յորում էին նաւք
Վենետիկեցւոց և դաշնակցաց նոցին
հարիւր և վեցասուն և վեց։ Որոց գէմ
եդեալ 'ի վերայ ամուր քաղաքին Փրե-
վեզայի Ճակատեցան ընդդէմ նաւուցն
Խայրէտտինայ, և մարտեան ընդ նմա
սաստկապէս։ Այն ինչ խոյս տալ կամէր
Խայրէտտին 'ի քաղաքն կոյս, ծովակալն
Տորիա յանկարծակի ելն խոյս եառ և 'ի
փախուստ դարձաւ։ Սակայն 'ի վաղիւ
անդր 'ի ասկելոյ այլոց նաւատոկ զօ-
րավարացն վերատին 'ի Ճակատ մատեաւ,

և խորտակեցաւ յՕսմանեանց. ոչք ըզ-
կէաս նաւուցն հարին ջախջախեցին,
զկէաս ընդ բռամբ խրեանց արկին, և
զսմանս հրդեհեալ այրեցին. և գիշերն
ևեթ 'ի վերայ հասեալ զերծոյց զքրիս-
տոնեայս յառաւելագոյն ինաստէ։
Սակս այսր ամենայնի քաջութեանցն
Խայրէտտինայ յաւել ազգայ 'ի թոշակ
նորին այլ ևս փոքր հարիւր հազար։

Այլ 'ի վերս քան զնա ապիացաւ Խա-
տիմ Սիւլէյման փաշա կուսակալն Ե-
գիպտոսի յարշաւանին իւրում 'ի Կարմիր
ծովուն 'ի ծովեզերս Արաբիոյ և
Հնդկաց։ Սա այր յերկեալ յուխտանա-
մեայ ծերութիւն, կարճահասակ, և յոյր
այնչափ՝ մինչև առանց ջրոյ ոմանց
բառնալոյ ցկարել յառնել 'ի տեղւոջէ
իւրմէ, լի էր երիտասարդական ոգւով
արութեան։ Իսմանասուն նաւաք և
քսան հազար զօրականաք էլեալ 'ի նա-
ւահանգստէն Սիւվէյիայ, գիմեաց 'ի
ծովեղն Քիւշրամթու ընդդէմ Լուսի-
տանաց կամ Փորթուգալաց, որ սիրեալ
էին ամուր ամուր քաղաքաց աշխարհ-
հին։ Յարձակեցաւ էառ 'ի նոցանէ զամ-
րոցն Քիւքէ և Գամթ, և պաշարեաց
զՏիու։ Եւ յերկարել ձգել պաշարմանն
ցաւուրս քսան՝ իբրև եռեաս Սիւլէյման
զի պակասեցին համբարք զօրականին
իւրոյ, առանդեաց էառ զկուսակալու-
թիւն աշխարհին Եմենու, որ է երկրա-
նին անուանեալ Արաբիա, զՄուսդա-

ֆա պէյ որդի Պայազիտ Մահմէտայ. արձակեաց զնաւատորմն 'ի ճիտան, և ինքն ուղևորեալ եհաս 'ի Կոստանդնուպոլիս, քերեալ առ Թագաւորն հանդերձ բազում գանձիւք և երեքարիւր արկեղս ոսկւոյ և արծաթոյ, զորս յաւանդ տուեալ էր նմա Պէհաատիր շահ իշխանն Ադրբէջոյ յերեսաց արշաւանացն ՓոլԹուգալաց, և ապա ինքն մեռեալ էր:

Ընդ այնաւուրս յամին 1539 հրդեհ մեծ անկեալ 'ի նաւարանն Կոստանդնուպոլսոյ՝ կիզեաց ընդ յոլով շինուածոց և զկարանաւորս տեղւոյն առհասարակ. և 'ի շնչել սաստիկ հողմոյ անդր եւ քան զնաւարանն ծաւալեալ բոցոյն, ոչ ինչ նուազ կատարածս գործեաց քան զորս 'ի նմին ժամանակի ծախէր սպառէր և ախտն ժանտ անհնարին զայրացմամբ: Ընդառնեցաւ 'ի ժանտէն և մեծ վէճիւն Ադամ փաշա և մեռաւ, և եՀող հարիւր և քսան որդիս: Զնա յաջորդեաց յիշխանութեանն փեսայն արքայի Լուդֆի փաշա. այլ չարախօսեալ 'ի պալատականաց անոմ՝ զհետ երկուց ամաց մերժեցաւ 'ի պատուոյն և վտարեցաւ 'ի ՏիմեԹոքա, ուր և մահնադրեաց գիպս բազումս, և պատմագրութիւն մի եւ Օսմանեան մեծարգի յաչս իսնամանոց: Իսկ զտեղի նորա փոխանակեաց կուսակալն Եգիպտացւոց Խասեմ Սիւլէյման փաշա:

Աշնանի եկ թագաւորն յորսս յԱ-
ռիա. և մինչդեռ դարձ արարեալ գայր
'ի Պրուսա, ընդ առաջ եելին նմա քա-
զաքացիքն հեծեալք յիբաքանչիւր ե-
ղիվարս: Ծանր թուեցաւ այն յաչս
ազգայի. վասն որոյ և պատուէր հրա-
մանի եդաւ՝ զի մի ևս ոք իշխեսցէ երի-
վարաւ եկանել ընդ առաջ ազգայի, բայց
միայն յաւագ որելոյ: Ապա իբրև ժա-
մանեաց 'ի Կոստանդնուպօլիս, արար
զհանդէս թլխատութեան երկուց որ-
դւոց իւրոց Պայէզիտայ և Ճիհանկիրայ
բազմօրեայ ուրախութեամբ և քաղ-
ցրածախ խնջոյիւք և ազգի ազգի խաղարկ-
ութեամբք. յորոց մի և այն էր՝ զի
Հրեայք յօրինեալ Ճարտարութեամբ
վիշապ անարի եօթնագլուխ ընթացու-
ցին 'ի ձիարձակարանին: Եւ կային անդ
'ի տեսիլ ամբոխին առիւծք և ինձք և
ընձառիւծք, վագրք և լուսանուշք և
գայլք և ընձուղտք 'ի կապանս շղթայից:

Յետ այնորիկ կատարեաց ազգայ և
զհարսանիս դստերն իւրոյ՝ զոր ամուսի-
նացոյց ընդ Ռիւսթէմ փաշայի. և հրա-
վիրեաց 'ի հանդէսն ընդ այլոց գեսպան-
նաց և զպայլն Վենետիկեցւոց զՔանա-
լէ՝ ազատեալ զնա յարգելանէն, յորում
կայր սակս եռամեայ պատերազմին որ
ցայնժամ տեւէր 'ի միջերկրական ծո-
վուն: Առաւ յայսմանէ քաջալերս յու-
սոյ առացեալ ծերակուտին Վենետիկ-
եցւոց առ 'ի հաշտութիւն խնդրելոյ

զՍիւլէյման, առաքեցին առ նա բազում դեսպանս ողջունեաք, և ոչ ուրեմն յանձին կալեալ թողուլ 'ի նա զեօթն կղզիս յԱրշիպելագոս, և զՄալվազիա և զՆէապօլիս Ռոմանիոյ 'ի Մոռա, և զՆատին և զՊերատա 'ի ծովեզերս Դաղմատիոյ, և տուգանել ոսկիս էրեսուն հազար փոխանակ տուժիցն էզելոց 'ի ժամանակի պատերազմին, հաւանեցուցին զնա յետս կոչել զծովակալն Խայրէտին, և հատուցեալ դարձեալ 'ի միջի զեղանի քարեկամութեան գաշնեա:

Ընդ այն ժամանակս լինէր մեռանել Յովհաննու Զափոլէայ արքային Մաճառաց, և թողուլ որդի մի դեռահասակ Միքիսոնոնգ անուն ընդ խնամակալութեամբ դշխոյին իւրոյ Իզաբելէայ քեռ թագաւորին Լեհաց: Փերամինամոս արքայ փութացաւ 'ի պատեհ ժամուն յինքն կորզել և զնացեալ մատաչարկին Մաճառաց. սակս որոյ և դեսպան արձակեալ առ Սիւլէյման զԱրքի զհատուածն 'ի Զափոլէայ առ իւր, խնդրէր 'ի նմանէ զհաշտութիւն քարեկամութեան: Զայն զդացեալ դշխոյին Զափոլէայ՝ բողոք կալաւ առ Սիւլէյման, և 'ի նա ապատան առնէր զգուութս խնամոց գերկնչեալ որդեկին իւրոյ. և Սիւլէյման արքայ առաքեալ մանկանն Զափոլէայ զՀրովարական թագաւորութեան, արդեալ 'ի

դիպահոյ զգեստսն Փերմինատոսի
զԼատգէ, և հրամարակեաց ընդդէմ
Գերմանացւոց զմարս պատերազմի.
քանզի Փերմինատոս սկսեալ իսկ էր
մտել 'ի Մաճառս և առնուլ զքաղաքս
քաղաքս աշխարհին։ Եմոզ 'ի Կոս-
տանդնուպօլիս ասիական զօրաք ըզ-
Սիւլէյման փաշա զվէզիրն մեծ, ոչ
այնչափ ծերութեանն աղագաւ, այլ
մանաւանդ սակս երկիւղի կասկածա-
նաց՝ որով խիմայրն յորդոյն իւրմէ
'ի Մուսդաֆայէ. և ապա առեալ
ընդ իւր զարքայորդին Պայէզիտ խաղաց
գնաց 'ի Մաճառս։ Հասեալ 'ի Վարա-
սին էառ զբերդ, խորտակեաց Գերմա-
նացւոցն պաշարողաց զՊուսին. զի ոչ
միայն Օսմանեանք էին որ մարտնչէին
ընդդէմ Գերմանացւոց, այլ և նոքին
իսկ Մաճարք. և գիւղականք անգամ
նոցա զէն 'ի վեր առեալ յարձակէին
հարկանէին զսուս իբրև զյափշտակողս
աթոռոյ հայրենի իւրեանց աշխարհին։
Իբրև եհաս անդր և Սիւլէյման արքայ,
բանակեցաւ արտաքոյ քաղաքին, և զվէց
հարիւր գերիս Գերմանացւոց ածեալ
առաջի իւր հրամայեաց ընդ սուր անցու-
ցանել։ Ապա քայլս ոսկիս շորս, և ե-
րիս ոսկեանձն երիվարս առաքեալ ար-
քայորդւոյն Մաճառաց 'ի պարգևս,
էառ տանել և առ դշխոյն մեռանիս և
շղարշ և ապարանջանս հանդերձ պա-
տուիրանաւ ասելով, եթէ քանզի չէ

օրէն մեծի արքային անձամբ գնալնամա
'ի տեսութիւն, թող արձակեսցէ առ նա
զորդեանն իւր։ Զանգիտեալ նախ դը-
խոյին և խռովեալ յոյժ 'ի բանէ անտի
չկամէր անեալ հրամանին. այլ ապա
յորդորեալ յիւրոց նախարարացն, եգ
զմանկիկն յոսկեկազմ 'ի կառս և ար-
ձակեաց զնա ընդ դայեկին և ընդ եր-
կուց պառաւանց և ընդ վեցեսին խոր-
հրդականս իւր։ Սոքա կացին յայլում
վրանի, և դայեակն եհեծ ընդ միում 'ի
նախարարացն տարեալ զՍիգիսմունդ
առ Սիւլէյման, և դարձաւ անդրէն։
Յայնժամ ծանոյց արքայ նախարարացն
Պաշտաւաց, եթէ կամիմ զՊուսին ընդ
խնով ձեռամբ ունել մինչև հասցէ Սի-
գիսմունդ յարս. և 'ի նմին պահու ենի-
չէրիք լցան զերազն 'ի քաղաքն անհա-
կառակ։ Ապա եմուտ անդր և Սիւլէյ-
ման, և զեկեղեցի Տիրամօրն փոխեաց
'ի մզկիթ. հրամայեաց գշիոյին ե-
լանել ընակել որդւոցն հանդերձ ար-
ամաքոյ Պուսինայ ուր և կամք իցեն նամ-
կարդեաց 'ի քաղաքին երկու հազար
ենիչէրիս և գոնդ մի հեծելոց 'ի պահ-
պանութիւն, և գառաւորս երկուս,
զմին տաճիկ յազգէ և զմիւսն մաճառ.
և զոեսչութիւն նորին աւանդեալ 'ի
Սիւլէյման փաշա որ յառաջ կուսակալ
էր Պաղտատայ, հրամայեաց չուս դար-
ձի առնել։

Ընդդ հասին և դեսպանք 'ի Փիլոսոֆ-

նանասոնէ 'ի խնդիր հաշտութեան. և ճաշեալ նախ 'ի վրանի վէզիրաց յանօթս խեցեղէնս ապիկեալս, ապա ածան 'ի խորանն արքայի՝ ասնելով ընծայս բազմակ մեծ ոսկեզօծեալ բազմագիւն, և ժամացոյց գործի մեծ ճարտարարուեստ յօրինուածով, յորում ոչ միայն ժամք աւուրն և թիւք աւուրց ամենեան երևէին, այլ և բոլորմունք լուսաւորաց երկնից։ Սիւլէյման արքայ բազմեալ կայր 'ի բարձրաբերձ գահոյս՝ յաջմէ և յահեկէ վահան ունելով և լախտ և կապարձս նեռոց և ազեզանց, և պարառեալ 'ի վէզիրաց և յայլոց մեծամեծաց. և ախորժ հաճութեամբ զնեալ մանր զժամացոյցն՝ էառ զձեռսիւր 'ի համբոյր գեղարուեստն. և յառաջի առնել նոցա զնեղիր թագաւորին խրատուց՝ ասէ. «Զինչ զոր խօսին դոքա. և զինչ զոր խնդրեն»։ Եւ այն ինչ սկսանէին նոքա խօսել՝ ասէ. «Եւ չասցին դոքա ըզփոխանորդն իմ զՊիւսթէմ փաշա»։ Խակ իբրև աւարտեցին նոքա զբանն, «Թէ չունին ինչ, ասէ, այլ ևս ասել, էլցեն 'ի բաց»։ Յետ երկուց աւուրց խօսեցան նոքա ընդ Պիւսթէմայ յերկարագոյն. այլ ոչ միայն չընկալան զոր խնդրէին զպայմանս հաշտութեան՝ պատհանչմամբ թագին Մահմատայ, այլ և առին պատուէր սատանիկ, եթէ չէր փերոմնանասն այլազգ հաշտել ընդ մեծի դրան Օսմանեանց, բայց 'ի

քաց տալով զամենայն զքաղաքն զորս գրաւեալ ունէր յերկրէն Մաճառաց, և հարկեալով ևս ամի ամի այսչափ ինչ գրան։ Զայրագնեալ գեսպանաց ընդ պահանջանն՝ խնդրեցին առ ժամանակ առնել զինուց։ փրկանաւորեցին ըզ-գերիս իւրեանց, և պատուեցան յար-քայէ ընծայիւք գիսակաց և պատմու-ճանաց։

Մինչդեռ մնայէին գեսպանքն՝ի համ բոյր ձեռաց Սիւլէյմանայ, կալաւ զմի 'ի նոցանէ ցաւ միջաց սաստիկ յոյժ, և գոչէաց 'ի բարբառ իւր առ Բիւամիմ «Ձեռն տուր ինձ վասն սիրոյն Աստու-ծոյ»։ և Բիւամիմ ոչ ինչ խլրտեցաւ 'ի տեղւոջէն, Թէպէտ և քաջ իմանայր զբարբառն։ այլ ապրայ անդէն ամբարձ զձեռն իւր իբրու Թզաչափ մի վերոյ քան զծունկն, զի գիւրեսցէ ծերուն-ւոյ առն զհամբոյրն։

Սիւլէյման ապրայ ջաւ դարձի ապա-ւեալ 'ի Կոստանդնուպօլիս, և հաս անդր յետ երկուց ամաց։ Եւ քանզի գունդք գունդք ապստամբաւորացն Օսմա-նեանց ոչ դադարէին յարշաւելոյ 'ի սահմանս Փերսիանոսի, իբրև գիմե-ցին զոյք նորա ուխտառն հաղարաւ չափ 'ի պաշարումն ՓէշԹ քաղաքի, Սիւլէյ-ման ապրայ հրամարտակ սպառնալից ապար առ Մաճառս, զի Թէ, ասէ, ունին գնիցէք բանիցն Փերսիանոսի, հարիւր հազար Թալիարք իմ և ապստամբաւորք

յանձնն գաստուցին զձեզ և զամենայն
ինչ զձեր։ Եւ ոչ այնու շատացեալ՝ էգ
'ի մոխ միւս անգամ խաղալ գնալ 'ի
կողմանսն։ Փոփոխութիւնս արար 'ի
պաշտամունս աստուածոյն, կարգեաց
խան Խրիմու փոխանակ Սահիպայ զՏէվ
լեմ քէրէյ, և պատրաստեցաւ մեծաւ
կարգաւորութեամբ քան զայլ նուագս
առնել զարշաւանն յերկիրն Մաճա-
ռաց։ այլ յառաջագոյն արձակեաց զծո-
վակալն Խայրէտտին յօգնութիւն Թա-
գաւորին Գաղղիացւոց ընդդէմ Կարո-
լոսի կայսերի։

Քանզի ընդ նոյն ժամանակս Ռէնատն
գեղապն գաղղիացի 'ի գալ իւրում 'ի
Կոստանդնուպօլիս ապանեալ էր 'ի կող-
մանս Խաչիոյ. և զի հաստատի ինն էր
'ի հրամանէ Կարոլոսի լինել գաւառա-
նութիւնն, Փրանկիսկոս Ա Թագաւոր
Գաղղիացւոց վառեալ 'ի նոխանդ վրէժ-
խնդիր լինելոյ՝ հրեշտակս արձակեաց
առ Սիւլէյման և աղաչեաց զնա արձա-
կել իւր 'ի Թիկուն օգնականութեան
ընդդէմ Կարոլոսի զօրս պատերազմիկս
ընդ ծով. և Սիւլէյման առաքեաց ըզ-
Խայրէտտին հարիւր և յիսուն նաւուք։
Էառ Խայրէտտին զՃանապարհայն ըզ-
Մեսինա. և մտա քերեալ զափամբք Ի-
տալիոյ՝ սատանեցոյց զմեծն Հռովմ, և
անցեալ գնաց 'ի Մարսիլիա. պաշա-
րեաց զամուրն՝ Սիցցա և նեղեաց սատ-
կապէս. այլ 'ի քրիստոնէիլ էնիչէրեաց, և

'ի սպառել վառօդոյ Գաղղիացւոց՝ ծանրացաւուն էղև Խայրէտտին, և բարձեալ զպաշարումն մեկնեցաւ։

Սիւլէյման աղքայ մինչև էլեալ 'ի Կոստանդնուպօլսոյ առ 'ի գիմելոյ 'ի Մոնձառա՝ հրամայեաց հարիւր քան և չորս հազար քոռ գարւոյ և քառասուն հազար քոռ ցորենոյ բարձուցանել յերեքարիւր և վաթսուն նաւս և առաքել ընդ Սեաւ ծով 'ի Դանուբ. և զաւուրս ձմերայնոյն յԱդրիանուպօլիս անցուցեալ՝ 'ի գալ գարնայնոյն յուրմն անկաւ ահագին բանակաւն այս տանեբորդ անգամ։

Յառաջընթաց լինէին ջրկիրքն տկարարձք, և զհետ նոցա երկու հազար և հարիւր ջորիք որ տանէին զդանձն արքունի և զկարասիս թագաւորին։ Զկնի նոցա գնային լիանհարիւր երիվարք, և ուղտք բեռնաւորեալք համբարովք և մեքենայիւք հինգ հազար և չորեքհարիւր. ապա զինապանք հազար, ականաւորք հինգհարիւր, ռմբաձիգք ութհարիւր, և վարողք թնդանօթաձիգ կառաց չորեքհարիւր հանդերձ իւրեանց զօրավարօք[1]։ Զհետ գնային պաշտօնեայք արքունի

[1] Զինապանացն, որ ճեպեցի յայնէին գործ էր խնամ ունել զինուոց և պարէրաշխան ռեգենայիս. իսկ ռմբայիգքն, և որ զկառն ընդառնային վարէին՝ էուլէին գոռմպարաճի և գոֆարագաճի, և առ հասարակ գոֆճի։

քունեաց, մատակարարն մեծ, և գան՝
ձագեան և անտեան կամ հաղարապետ։
Ապա գայր հեծելազօրն. յաջուամ թեւի
երկու հազար հեծեալք ընդ կարմիր
դրօշաւ, և 'ի ձախուամ երկու հազար զի-
նակիրք գեղին դրօշաւ։ Վարձեան զոլոր
հինգհարիւր խապային ընդ աջմէ դրօշ
տանելով կանաչագոյն, և ընդ ձախմէ այլ
վարձեանք հինգհարիւր՝ որոց խառն էր
գոյն դրօշաւն ապխտակ և կանաչ. և զնո-
ցին կնի եկամուտքն ապխտակադրօշք հա-
զար։ Զհեռնոցախաղային տեռնակաքն,
տեռնագլուխք, համարակալք, դատա-
ւորք զօրաց, և վեզիրք ջորք, որոց առաջի
ընթանային քառեակ ձաւք ձողաբարձք
և շուրջանակի բազմութիւն գերեաց և
ծառայից։ Զկնի նոցա գայր հանդէս
որոյ թագաւորին, այսինքն են բազէ-
կալք, արծուէկիրք, բարակապանք,
սուրհանդակք, և խոհապետք. և ապա
երիվարքն ոսկեանի զարդարեալք 'ի
ամենայն ոսկեղէնս և յասպասանդս ար-
ծաթիս, և յականակուս և յոսկե-
հուսն համեստ և 'ի ծածկոյթս ոսկե-
գիպակս։ Ապա ընթանային երեքա-
բիւր սենեկապանք հեծեալք յերի-
վարս, և ապա խաղային երկոտասան
հազար ենիչէրիք. յորոց յերկայնաձիգ
թաղեայսն արկեալս զուսով արեգակ
նափայլ նշողէին տարգալքն պղնձիք. և
ունէին նոքա զէնս սուսեր և նիզակ 'ի
ձեռին, և 'ի թիկունս հրացանս մեծա-

մեծս, և յառաջոյ իւրեանց ձարս երիս
ձողաբարձս։ Իսկ գրոշք նոցին կարմրա-
գոյնք վեց էին թռուով։ Զհետ նոցին
շքեղս հովահարեալ գային եօթնաթիւ
գրոշքն արքունի ոսկեհուռք, և եօթն
ձաղք ոսկեզօծք։ Ապա հարիւր փոքա-
հաղք ոսկեզօծ շղթայիւք՝ իկախ ունելով
զգաղարափոքսն զպարանոցաց իւրեանց,
և հարիւր թմբկահարքն ընդ նոսին զպա-
սեբաղմնականն հնչեցուցանէին նուագ-
որոց զհետ գային չորեքհարիւր թիկնա-
պահք արքայի ընտրելիք աղեղնաւորք,
և զօրավարքն նոցա հուպ գնային յասպա-
սանգս թագաւորին, ամենեքեան գրե-
խարկս ունելով թաղեալս զարդարեալս
ընտրասարած փետրովք մեծամեծք [1],
և էին գօտիքն նոցա մեսաքսեայք, և կա-
պարձքն և աղեղունքն ոսկեայս ընդե-

[1] Ընտրեալ՝ ի հոովմայեցւոցն սովորէին
և Օսմանեանք քէպրաղարդ առնել ընտրա-
սարքս իւրեանց. այլ նոքա այլ ինչ յաւելան
այնմ պարծանս։ Քանզի յաւուրս Պայէզի-
տայ Ա. սմանք՝ ի զօրավարացն Էնիչէրեաց էր-
ինէալ յայր ձիրմ Հաճի Պէկիրեալայ հուպ՝ ի
տաղտն Կէսարացւոց, անդ տեսին՝ ասեն, զի
առեալ ձիրմն յօրինեալ էր՝ ի քէպրոց ջայլե-
ման, և մի ոմն՝ ի նոցանէ առեալ էր զայն՝ ի
գլուխ իւր՝ ի նշան մեծարանաց. զնոյն և այլք
արարին, և զնի ժամանակաց յաւելին յեր ի-
ոչ սաղաարքին և քէպուր ի առնի և ի-
յինիուալ հաւնոյ։

լուզեալք։ Հարիւր և յիսուն շաւուշք կամ նուիրակք արքունի՝ կալեալ 'ի ձեռին մէն մի գաւազան արծաթի, յորոց շինգլ արծաթի կախեալ շառաչէր ընդ ոտին գոփելոյ, գայլն ընդ մէջ աղեղնաւորացն՝ գոչելով անհաւատ զաւորականն մաղթանս երկայն աւուրց թագաւորին։ Մօտագոյնս քան զնոսա ընթանային եօթանասուն պայիկք տապարաւորք ոսկեկմուռեայ սաղաւարտիւք ըզգեցեալք հանդերձս ոսկեգիպակս[1]։ Եւ 'ի նոցա միջի խաղայր գայլ հզօր արքայն Սիւլէյման հեծեալ 'ի նժոյգ ահապարանոց, և հովանաւորեալ 'ի փերոց անուն աղեղնաւորացն։

Ա յապիսեաւ ուղևորութեամբ շուարարեալ Սիւլէյմանայ, երբև եհաս 'ի Փիլիպէ՝ էառ զլուր յաղթութեանն զոր տարեալ էին Պալն փաշա Պուտինայ և Ուլամէ փաշա Պոանիոյ 'ի վերայ զօրացն Փերսինանտոսի։ Խաղաց և ինքն և էառ ամուր ամուր բերդաքաղաքս բազումս, էր զոր խաղաղութեամբ, և էր զոր պատնէշ պաշարմամբ։ և յամենայն յունական երանաւ մեծահանդէս յաղթանակաւ 'ի Պուտին։ և 'ի նմին պահուն եպիսկոպոսն Աքիպէյ բռնանգակ տարմղաւն

1 Այն իսկ են Փէյիթ անուանեալ գոնդ գոան և լրիոց զբրանանոց, որ ընտանի հոռվ մայնցուցն գաղաբաւորաց Ռուէին Բէրբէ ընտանութիւն։

հասեալ գոլով ընդ Դանուբ՝ ուրոյն
էառ արքայի արձակմամբ ամենայն թըն-
անօթաց միանգամայն։ Ընդ վարձա-
ուելոյն զօրավարքն և զօրականք արիա-
ցեալք յառումունս բերդից զՇանապար-
հայն. և ապա ածան 'ի պաշարումն
Կրան քաղաքի, յորում պահ ունէին
հազար և երեքարիւր բերդականք Գեր-
մանացիք, Սպանիացիք և Իտալացիք։
Առաքեաց Սիւլէյման 'ի նեղբս զերիս ու-
րացողս յերից ազգաց անտի, զի յիւրա-
քանչիւր բարբառս իւրեանց հաւանեա-
ցին տալ զքաղաքն. այլ նոքա չառին
յանձն. և ևս քաջալերեցան 'ի հաստա-
նել վերհարիւր նիզակակից զօրաց 'ի
Վիեննայէ։ Սակայն 'ի դերև հանին զը-
քաջութիւն բերդականացն փոխուստա-
կանք ոմանք առ Օսմանեանս, որք և
ծանուցինն նոցա զոկարագոյն կողմն բեր-
դին. և Օսմանեանք՝ որ ցայնժամ տե-
ղացեալ էին 'ի վերայ քաղաքին ռումբա-
աւելի քան զիններհազար և հինգհարիւր,
այն ինչ բուռն զօրութեամբ յարձակէ-
ին 'ի նեղբս, անձնատուր եղեն բերդա-
կանքն, և շնորհեցաւ նոցա ազատս
գնալ անտի։ Ի նմին աւուր Սիւլէյման
մտեալ անդր փոխեաց 'ի մզկիթ զմայր
եկեղեցին. և եդեալ 'ի քաղաքին զօրս
և իշխանս, գնաց 'ի պաշարումն Պէլկրա-
դուն Մոնճարաց [1]։ Յետ չորեքտասան

[1] Ան է Բ-ՐՈՒՆ ՊԷԼԳՐԱԴ, ԿԱՄ ՇՈՒ Ի-

աւուրց էառ և զայն խաղաղութեամբ. և զոք բանադնաց լեալ էին 'ի տրուշութիւն քաղաքին՝ նոցին ևեթ շնորհեալ զկեանս, զայլ քնակիչսն հրամայեաց կոչել 'ի մեծ հրապարակն՝ զի երդնուցուն զերդումն հաւատարմութեան, և առ հասարակ ընդ սուր անցոյց զամենեսեան. ապա և զքնակիչսն կոտորեաց. և յոյց եւ գամբարանաց թագաւորացն Մահառաց, որ էին 'ի քաղաքին, գթասիրագոյն գտեալ առ մեռելսն քան առ կենդանիս։

Աշնայնի գարձ արար Սիւլէյման 'ի Կոստանդնուպօլիս. այլ զհանդէս յաղթութեանն փոխանակեաց սուգ գառնակիծ սակս մահուան սիրելոյ որդւոյն իւրոյ Մէհէմմէտայ 'ի Մագնեսիա. զորոյ զգիսակն էառ քերել արքայ 'ի Կոստանդնուպօլիս, և թաղել 'ի հրապարակի անդ հանդէպ հին ձմերոցն Ենիչէրեաց. և կառոյց առընթեր շիրմին մզկիթ մեծ, յոր ծախեցան երեքարիւր հազար ոսկիք. և ձարտարապետն էր հռչակաւորն Սինան՝ գօճա միմար անուանեալ՝. իսկ մզկիթն կոչի Շէհզատէ

փալացւոց՝ Անդա ռէալէ, ուր պատկերն նոր-ին թագաւորի Մահառայ, և 'ի հեռանել իրենց անդէն թաղէին։

1 Սուրա ասեն խառուցեալ ուրուան մզկիթն, և լուրեւորիւր աղջիանոցս և այլ շինուածս բազումս, և ինչեալս ասելի սոն ընարիր։

ձամիսի։ Եւ զի անընդհատ էր տակաւին պատերազմն 'ի Մաճառս, Մէհէմմէտ սէյ կուսակալն Պուտինայ էառ պաշարմամբ զբարձր քերդն Վիշէկրատ՝ յորում պահէին ընդ այն ժամանակս թագաւորք Մաճառաց, և զքերդական աշն կոտորեցին ենիչէրիք ընդդէմ կամաց կուսակալին։ Եւ խորհրդական նորին խալիլ այր խոհեմամիտ կազմեաց հաշուեգիր երկոտասան գաւառապետութեանց աշխարհին Մաճառաց, որ ընդ ամս հարիւր և յիսուն անփոփոխ պահեցաւ, և ըստ այնմ գնային հարկք երկրին 'ի գուռն արքունի։

Յետ այնորիկ կրկին մեծամեծ փոփոխութիւնք գէպ եղեն 'ի պետութեան Օսմանեանց։ Առաջին, զի արքայորդին Սէլիմ փոխադրեցաւ յԿոնստանդ 'ի Մագնեսիա փոխանակ Մէհէմմէտայ վախճանելոյն։ Քանզի որ միանգամ յարքայորդւոց մեռադունին լինէր ելեան կուսակալութեան Մագնեսիոյ, նմա անկանէր թագաւորութեանն ժառանգութիւն. և թէպէտ ըստ կարգի զՏեա Մէհէմմէտայ ոչ Սէլիմայ՝ այլ Մուսադֆայի անկ էր թագաւորել, սակայն Սիւլէյման փոխեաց յայնժամ զկերպարանս իրաւանցն, կատարելով զՏաճոյս դշխոյին իւրոյ խուրրէմայ մոր Սէլիմայ։ Երկրորդ, զի ինքնանամեայ վէզիրն մեծ Սիւլէյման փաշա արկաւ յիշխանութենէ իւրմէ սակս

գժտութիւն ընդ խստով փաշային, որ էր երբորդ վեզիր. և կարգեցաւ 'ի տեղի նորա երկրորդն 'ի վեզիրս Միւսթէֆ փաշայ ազգաբնակ խրուաթ յազգէ, այր քաջ 'ի պատերազմունս, այլ առեղծողքերթող։ Ընդ նոյն ժամանակս և ծովակալն մեծ Խայրէտտին փաշա, որ առ Կարթագինեաւ գետ ևս վանեալ էր զկայսրն Կարոլոս՝ օգնական իւր գտեալ զմիրիկ մեծ, և դարձեալ 'ի Կոստանդնուպոլիս մեռաւ, և թաղեցաւ հուպ 'ի դպրոցն յիւրմէ կառուցեալ 'ի Պեշիքդաշ 'ի ծովեզերին Վոսփորի, ուր ցարդ ևս կանգուն կայ շիրիմ նորին. և որպէս ցանկալեալն զօրաց խմբաւորութիւն 'ի դաշտին Տաւուա փաշայի, սոյնպէս և նահատակին Օսմանեանց առ շիրմաւն Խայրէտտինայ սովոր է լինել։

Ի գալ միւսոյ տարւոյն և երկուց որ զինի՝ հաղիւ յաջողեաց Փերհինանտոսի և Կարոլոսի հաւանեցուցանել զՍիւլէյման 'ի հաշտութիւն, խոստանալով հատուցանել նմա ամի ամի ոսկիս երեսուն հազար. և հաստատեցան դաշինքն ՅԱգրիանուպոլիս, ուր երթեալ էր արքայի յոտաքինութեան տեղին, որովնեղէր նա 'ի վերոյ ասեալ հետէ։

Ի դէպ կռուեցան դաշինք խաղաղութեան ընդ Ենրոպէանս 'ի ժամանակի՝ յորում 'ի Պարսս կոյս հարկ էր զգէնսն դարձուցանել։ Քանզի Իշգաս միրզա եղբայր շահին Պարսից 'Դահմասպայ

եկեալ առ արքայ Սիւլէյման՝ խնդրէր՝ նմանէ ձեռն օգնականութեան ընդդէմ բռնութեանց եղբօրն իւրոյ։ Ա կանուանէս եղև Իլգաս նախ մոխցն Սիւլէյմանայ Ադրիանուպոլիս. և յորժամ անցանէին գունդագունդ զօրականք և պաշտօնեայք, զմի մի՝ ի զօրադլխացն. ցին հանարեալ եթէ թագաւորն իցէ մեծաւ պատկառանաւք յոսն կայր։ Ապա երբև գայր անցանէր զօրավարն Ենիչէրեաց, դարձեալ և յորժամ անցանէին վէզիրքն երեքեան, և զինքն նոցա վէզիրն մեծ, ոչ ևս երկնչէր Իլգաս եթէ մի՝ ի նոցանէ արքայն իցէ։ Խոնջեալ ապա յընդերկար սպասելոյ և՝ ի պատրանաց անտի, երբև էառեալ զանցանելն արքայի ընդ մէջ լուսանշեալ սաղաւարտից և հոլվանաւոր փեսրոց, ընդ մէջ ոսկեգործ գլխանոցաց և արծաթափայլ նիզակաց, եկաց ինքն նա բազմեալ՝ ի տեղւոջ իւրում որպէս արտաքոյ ինքն անձին յապշութիւն ընկնեալ։ Ի վաղիւ անդր հրաւիրեցաւ յընթրիս ընդ վէզիրաց, և յետ այնորիկ պատուեցաւ երեսի ընծայիւք յարքայէն և՝ ի գշխոյէ նորին և յաւագանւոյն. և էին ընծայքն քսակք բազումք ոսկւոյ և արծաթոյ, գիպակք ազնիւք և երիսմրք ընտիրք, և ծառայք և աղախնեայք սեաւք և սպիտակք։

Սիւլէյման արքայ՝ ի բնէ գիւրապատրաստն՝ ի մարտ պատերազմի ընդդէմ Պարսից, ՝ի նոյն գրգռեցաւ և ևս

'ի գշխոյէն իւրմէ, որում անուն էր Խուրրէմ սուլդան ուսա յաղդէ, և ետ Իգասայ զօրս բազումս և արձակեաց յառաջագոյն 'ի սահմանագլուխս աշխարհին Պարսից։ Ապա և ինքնին խաղացեալ ընդ Իկոնիոն և ընդ Սեբաստիա մինչև 'ի Դաւրէժ, տիրեաց նմին, այլ ոչ խողխողեաց զքնակիչսն, և ոչ խախտեաց զնուսա անտէ. որպէս խրատ տայր նմա Իգաս։ Անտի գիմեաց յառուսն բերդին Վանայ, որ յետ ուխտելոյ պաշարմանն մատնեցաւ 'ի բերդականացն, և կարգեաց անդ իշխան զՀէրքէս խաքէնտէր փաշա։ Ի նմին պահուն Դահմասպ ոստակոս առնէր զՎրծկէ, ըզՄուշ, զԽլաթ և զԿարս, կոտորեալ զորս միանգամ դիմակացս տեսանէր յՕսմանեանց։ Առաքեցաւ ընդդէմ նորա Երզրում վէզիրն Ահմէտ փաշա. և նա զառաջապահ գունդն ետ 'ի ձեռս քաջի եղբարացն Օսմանայ։ Սա ագռաւս յապխս երիվարաց բազմաց կապեալ վարեաց 'ի մեծն գիշերոյ 'ի բանակ անդր Պարսից. որոց կարծեալ եթէ զօրք Օսմանեանց հասեալ անկեալ էին 'ի վերայ, սկսան սուր 'ի վերայ եղեալ կոտորել այր զընկեր. և Օսման տակաւ հնարիւն ճարտարութեամբ ընկալաւ զիշխանութիւն Բերիոյ։ Իսկ Իգաս Մէրզա, որ խաժամուժ ամբոխիս ապատակէր 'ի սահմանս Պարսից, զառաջինն յաղթութիւնս ինչ կալաւ, այլ ապա

ձերբակալ եղև յանկարծակի յերդրկն
իւրմէ Զոհրապայ, և Դահմանդ արկ
զնա 'ի բերդի ուրեք 'ի բանտ մշտական:

Յամենայն յուլխն գարձ արար և
Սիւլէյման յերկիր իւր, և 'ի Կարնոյ
արձակեաց զԱհմէտ փաշա 'ի կողմանս
Վրաց աշխարհին, և նա կալաւ անոր
բերդս քաւն, և մեծարեցաւ յարքայէ
հանդերձիւք փառաց և շքեղ պարգևաք:
Եւ իբրև եհաս արքայ 'ի Կոստանդնու-
պօլիս, աւետաւոր թղթովք առաքեալ
առ Վենետիկեցիս, առ արքայն Լեհաց,
և առ Փերսիանոս, ոձով պատմէր
նոցա զառուն քաղաքաց երևանից և
մերոյ, զքանդուն շորեքտասանից, և զբ-
նորոգումսիւն քաւն և ուխտ բերդաքա-
ղաքաց:

Եւ քանզի պայմանք խաղաղութեանն
ընդ Փերսիանոսի լուծեալ էին յա-
ռուգան յայնոսիկ յերկուստեք պատե-
բազմաց 'ի Դրանսիլվանիա և յայլ կող-
մանս երկրին Մաճառաց. Սիւլէյման ի
ցամաքէ արդել զդեսպանն Գերմանա-
ցւոց 'ի խիստ բանտ յԱնտրիոս հիսա-
բին, և արձակեաց զերկրորդ վէզիրն Ահ-
մէտ, և զՍոգոլլու Դաւիթ Մէհէմմէտ
զկողմնապետն Եւրոպեան, և զՀասան
զկուսակալն Ասիոյ 'ի Մաճառս: Յետ
առնուն ամենեքեան ամենայն զինարբ-
հին պաշարեցին սոքա սասկապէս և
զամենեն Դմիշվար, և Եբրից հազար ազգաց
կոտորածիւ ոչ ուրեմն առին զաշտա-

բակն։ Յայնժամ անձնատուր եղև քաջ զօրավարն Վահառաց Լոզոնչի՝ պայմանաւ եկանելոյ յամրոցն անվնաս. այլ իբրև եառաւ զենիչերեացն խուժելոց 'ի ներքս զանխնայ յափշտակութիւնս և զաւարառութիւնս, չկարացուցեալ ժոյժ աղէկէզ արտուութեանն, և անդէն սուր առեալ յարձակեցաւ սպասաւորակ զիրանոցդ կողմնապետին, և սուրայր յայլոց ևս 'ի վերայ գոչելով. Ա՛յսպէս ուրեմն պահեն Օսմանեանք զբանս հաւատարմութեան։ Սակայն և ինքն անկաւ վիրաւորեալ, և ձերբակալ եղեալ ածաւ առ Ահմէտ և կշտամբեաց զերդմնազանցութիւնսորին զառնթըշնամանաց. և Ահմէտ հրամայեաց անգէն հարկանել զկառավարն նորա, և զդիւրսին յարդալոց արարեալ առաքեաց առ Սիւլէյման։

Չկնի Դմբշվարայ անկան և այլ ևս բերդարայք 'ի ձեռս Օսմանեանց, աւելի քան զքսանևվեց. բայց ոչ և Էռլաւ քաղաք, որ է Ակրիա։ Քանզի Ահմէտ փաշա հասեալ առաջի քաղաքին յաղթական զօրաք իւրովք արարեալ ուխտաւն հազարաւ, արձակեաց 'ի ներքս պատգամաւորս զոք և հրամայէր տալ փութով զքաղաքն 'ի ձեռս իւր։ Քաղաքապետն բանտարգել արար զպատգամաւորն, և կառոյց 'ի վերայ պարսպացն շիրիմ մեծ 'ի մէջ երկուց նիզակաց. որով յայտ ինն առնէր զանյոգ-

դողդ միաս իւր և զիւրոցն, յանձին ու-
նելով մեռանել 'ի վերայ քաղաքին ա-
ռիւաբար՝ քան զուսալ զայն 'ի ձեռս Օս-
մանեանց։ Զաւուրս քառասուն տեւեաց
սասակապինդ պաշարումն քաղաքին
յամենայն կողմանց. սակայն անպար-
տելի քաջութեամբ դիմամարտս եղեն
քաղաքացիքն ոչք և կանայք առ հա-
սարակ և վանեցին զյարձակմունս Օս-
մանեանց. 'ի դերևս հանին զանդադար
բախմունս ռմբաց նոցին, և բազում ան-
գամ դիակամբք նոցա լցին զխրամատս
զոր բանային նոքա։ Յօրինեցին տիկս 'ի
կաշւոյ և 'ի մորթոյ, և լցեալ զնոսին
ծծմբով և նաւթիւ, ձարպով խոզից
և դիւրավառ փայտիւք և վառօդով, և
բորբոքեալ հրդեհեցին նոքօք գիշերայն
զփայտեայ մարտկոցս Օսմանեանց։ Եւ
կանայք և աղջկունք անհնարին երա-
գումեամբ հասուցեալ 'ի պարիսպն
ջուր և խաղ եռացեալ 'ի գոյլս գոյլս՝ հո-
սէին 'ի վերայ պաշարողացն և խարշա-
ռէին զնոսա։ Զարմացան և նոքին իսկ
Օսմանեանք ընդ արիութիւն պաշարե-
լոցն. դարձեալ արձակեցին զմարձաւ-
ոք 'ի նեղքս թղթով հանդերձ գովու-
թեան, և խոստմամբ ամենայն ազա-
տութեան. այլ նոքա չեւ յանկն արկեալ
զդիրն՝ պատասխանեցին զայն, և զկէսն 'ի
հուր արկին, և զմնացեալն 'ի կուռ ե-
տուն թղթաբերին, և յառաջ վարեցին
զմարմն։ Ի միում 'ի մարտկոցաց անսի

պատերազմէին մայր ամն և վեռաց նո-
ցին և գուռաց. անկանէր այրն մեռեալ,
և յասել մօրն ցգուռսն զի Թաղեսցէ
զնա, ասց պատասխանի. «Թող առէց
նախ զվրէժ մահու նորին». և յանվրէ-
տակեալ զվահան նորա և զսուսերն՝ հար-
կանէ խոցէ զերիս ոմանս 'ի Թշնամեաց,
և ապա ըստանձնեալ զգիակն առն իւ-
րոյ՝ տանի Թաղէ զնա յեկեղեցւոջ։
Զայս ամենայն քաջութիւն պաշարե-
լոցն առաւեալ վէզիրին և ասիպետալ 'ի ձիւ-
նաբերաց և 'ի Ջաղբ անձրևածից, եբարձ
զպաշարումն և մեկնեցաւ. և ընդ այդն
եղեալ ժողովեցին քաղաքացիքն երկո-
տասան հազարս ոմբաց և կուռեցին 'ի
հրապարակամիջի անդ յարձան հոյա-
կապ յաղթանակին։

Ի նմին ժամանակի և շահն Պարսից
Դահմասպ քաղաքս բազում հասանէր
յաշխարհէն Հայոց։ Յարձակեցաւ և
ՅԱՐՁԷՐ, ՅԱՐԾԿԷ և 'Ի ԽՐԱԹ. զորոյ
զբնակիչսն նենգութեամբ կոչեալ ար-
տաքս՝ զի երթիցեն յա և կամիցին, 'Ի
սուր սուսերի կոտորեաց։ Եւ որդիս նո-
ցին Իսմայէլ Մերզա գիմեալ 'Ի Կարին.
գարան գործեաց կուսակալին Իսքէն-
դերայ, և այնպէս ինն խորտակեաց զնա,
զի և իշխանքն Տրապիզոնի, Մելիտենոյ,
Պոզուգայ և Գարահիսարայ գան ընդ-
մեռեալսն, և ոմանք յսկանաւոր ա-
բանց 'Ի գերութեան վարեցան։

Զվանթանամենիւք ուրեմն էր յայն-

ժամ Սիւլէյման ազգայ, և էր եղեալ'ի մեռ արձակեալ զայն Նուսադ'ի Պարսս ընդ վէզիրն մեծ զՐիւսթէմ, և զՍոդոլու Մէհէմմէտ. և արձակեաց իսկ զնոսա յԱսիա, այլ ընդ հուպ հարկեցաւ փոխել զառաջարկութիւն մեռացն։ Քանզի Ռիւսթէմ 'ի ձեռն Շէմսի անուն զօրավարի հեծելազօրուն նամակ արարեալ ազգ առնէր ազգայի, եթէ ենիչէրիք առ հասարակ զկողմն կամին ունել զարքայորդւոյն Մուսդաֆայի հակառակ Սիւլէյմանայ, և թէ այս բանք յածին 'ի թերանս ամենեցուն։ «Սիւլէյման ազգայ ծերացեալ է, և ոչ ևս կարէ անձամբն խաղալ 'ի մարտս. և զինչ գժուարին իցէ արգելուլ զնա 'ի Տիմոթիքա և թագաւորեցուցանել զարքայորդին Մուսդաֆա. և զի վէզիրն ևեթ թուի հակառակել այսմ, գործ մի գիւրին է սպանանել զնա։» Զայս իրրև զգաց Սիւլէյման, ոչ ինչ բնաւ ումեք 'ի վերայ հանեալ՝ գրեաց թուղթ առ Ռիւսթէմ իւրով ձեռամբ, յորում պատուէր տայր ձմերել զօրացն յիւրաքանչիւր տունս մինչև ցաւուրս գարնանայնոյն, զի յայնժամ ես ինքնին յօժարեալ եմ ասէր 'ի գլուխս կալ բանակիդ։ Իրրև ազգ ելեն իրքն առ շահն Պարսից, գեսպանս առաքէր'ի հնարս խաղալոյ թեան. այլ Սիւլէյման ետ պատասխանի՝ եթէ իւր կամք են 'ի Բերիա բանադնաց լինել զիսաղաղութենէ։

Խաղաց գնաց Սիսլէյման աշնանի յամին 1553 բազմութեամբ զօրաց յԱ-սիա։ Ազբայորդին Սէլիմ եկն 'ի համ-բոյր ձեռաց հօրն 'ի Պուլամանն. և մինչդեռ արքայական հարեալ էր անդր քան զԷրէկլի քաղաք, և հասեալ արքայորդին Մուսդաֆա, որում խորան շքեղաշուք հարաւ առընթեր խորանի թագաւորին։ Ի վաղիւ անդր աշուանակեալ Մուսդաֆա 'ի ներոյգն պալատական՝ շուրջ պատեալ 'ի վեզիրաց և յենիչէրեաց 'ի ձայն ցնծութեան մատչէր 'ի խորանն արքունի 'ի համբոյր հայրական ձեռին։ Այլ յարհաւիրս անհնարին մատնեցաւ արքայորդին 'ի տեսանել անդ զխորանն լոկ և ոչնայն 'ի հօրէն խրմէ յարքայէ, և 'ի մեծէ վեզիրէն. և միայն զեօթանասնին հանելոն զահարկու գործադիրս հրամանին Սիսլէյմանայ, որ յետոյ կողմանէ խորանին կայր։ Հասին նոքա 'ի վերայ եղկելոյն և անդէն խեղդամահ արարին՝ ոչ ինչ անասցեալ ազիողորմ աղաչանացն։ Մինչդեռ 'ի նեղբա 'ի վրանի անդ այս իրք գործէին, գլխատեցան արտաքոյ պաշտօնեայք արքայորդւոյն. և Ենիչէրիքն ահագին խուճապմամբ տագնապեալք ապառնային խուռվ հարկանել 'ի բանակին. զի կարծէին թէ Բիւրեթէմայ իցէ գաւն. վասն որոյ և գոչէին, ապանցի Բիւրեթէմ, մեռցի անօրէնն։ Կայրն աւագորեարն բազմեալ յաստենի, և չգիտէին

զինչ ասիցեն. և ահա եկին սենեկապետն
աղքայի, էառ 'ի մեծէ վէզիրէն զինքն
ոսկի զնշանակ իշխանութեան նորին, և
առէ ցերկրորդ վէզիրն ցՀայաէր փաշա.
«Երթ 'ի խորանքդ»։ Հպատակեցին
հրամանին Ռիւսթէմ և Հայաէր. և մինչ
զեռ այլք անգէն յառեղին էին, եին
նոյն սենեկապետ, և զինքք մեծի վէզի-
ռութեան էառ ցԳարա Ահմէտ փաշա։
Ապա հրաման եղև տանել զդիակն
Մուսդաֆայի 'ի Թաղուն. և ողբացին
զնա զօրք և գիտնականք առ հատարակ.
զի գիտէին եթէ Ռիւսթէմ էր պատ-
ճառ շարեացն, և այն 'ի գրգռելոյ
Խուրրէմ գշնոյին, որ զանդրանիկն իւր
զՄէլիմ կամէր թագաւորեցուցանել։
Այլ քան զամենեսեան 'ի խոր խոցեցաւ
ճիհանկիր եղբայրն Մուսդաֆայի. որ
թէպէտ և էր տապաստոն կրկնակի.
այլ ամենիւ յոյժ բարուք, և ճարտար 'ի
բանս. որով և սիրեցեալ յոյժ 'ի հօրէն։
Ի բազում ցաւոց սրտին հիւանդացեալ
մեռաւ ճիհանկիր. և Սիւլէյման՝ որ
ցանգ խրախանայր զուարճախօս բա-
նիւք նորա, դառնապէս ողբացեալ 'ի
վերայ որդւոյն՝ էառ 'ի ժամուն թաղել
զնա առ եղբօրն իւրում Մէհէմմէտայ,
և ապականգնեաց յանուն նորին մզկիթ
հոյակապ 'ի բարձրաւանդակին 'ի վերոյ
Դոմիանէի։

1 Ոմանք 'ի պատմագրէն Եւրոպացւոյ

Ի Բերիա ձմերեալ արքայի, գարնայ-
նի չուս արար բանակաւն, և 'ի Տիգրա-
նակերտ առեան կարգեալ հանրական՝
ծանոյց զկամս իւր արշաւելոյ մինչև 'ի
խորս աշխարհին Պարսից առ սէր գէնին
և հայրենեաց. և յասել ժողովականացն
'ի մի բերան՝ Եթէ պատրաստ եմք գնալ
ըստ հրամանի արքայիդ մինչև 'ի ծագս
աշխարհի, յուզի անկաւ բանակն ընդ
կարին, և 'ի Սուշէհրի կարգաւորեցաւ։
Ընդդէմ եհաս և կողմնապահեան Սոգոլքու
Մէհէմմէտ Եւրոպեան զօրքն, որ մորթս
ընձուց արկեալ զուսովք, և ձեռս
ազուեսուց ունելով 'ի գագաթանց սա-
զաւարտիցն հովահարեալս, սպառա-
զէնք էին երկաթապատք պատենազէնք,
վահանս կրէին ահագինս մեծութեամբ,
և բազկանոցս կապուտակս, և ձեռս
երկաթիս, և երիվարք նոցա գոյնագոյն

[illegible] 'ի ելրոյցս անցեալ անցելոց
առ մահուամբն Արոսդաֆոյի՝ բանոյ ելիարա-
գոյնս փոքրն ըստ ամենայն հանգամանաց, և
դեպս 'ի մեջ բերելն նորանորս և զարմանալիս,
այլ ոչ ինչ նմանս ճշմարտութեան իրացն. զի
նոցա միտ այն էր, որպէս ինչ ասի, պատ-
ճառս և իմաստս փոլիերնոզաց 'ի յօրինուած
ոգիերգական փոքրոց, և ոչ զարդիանս եղելոցն
պատմութեանէ։ Օրինակ իսկ և զխորհրդա-
ւորութեան փոքրիոցի համարելով և ոչ առ-
յաջիկ, զանուն և նորին յեղանակելոյ ինքն
Ոռոսէան։

նկարեալք սիրարկու էին և պանչելի
յաչս նոցին իսկ Օսմանեանց։ Զհետ վեց
աւուրց Ժամանեաց և արքայորդին Սէ-
լիմ ասիացի զօրաք. և շուրջ ընդ Կարս,
ոռնակոխ արարին զսահմանս Նախ-
ջուանայ և Երևանայ, և քանդեալ կոր-
ծանեցին զամենայն երևելի շինուածս
քաղաքացն երկոցուն։ Այրեացուցեալ
արարին զամենայն զՍիւնիս, և մինչև
ընդ Ճանապարհ աւուրց հնգից շուրջ-
նակի ոչ երևէր գեղ գաղար կամ բնա-
կութիւն անկործան։ Լուր եհաս եթէ
հուպ 'ի լեռնակողմանս անդ է շահ
Դահմասպ արքայ Պարսից. այլ յանա-
պատացեալ վայրան չկամելով Սիւլէ-
մանայ յամենալ, չու դարձի արար։
Այնուհետև զամենաչքոյն ծախեցին երկ-
ուսանք 'ի բանագնացութիւնս զկնե-
ցուցիչս միմեանց. մինչև 'ի հասանել բա-
նակին Օսմանեանց 'ի Կարին, եկն անդր
և պատգամաւոր յարքայէն Պարսից
Շահգուլի անուն, և հասուցեալ դուլ
առնել զինուց այնչափ՝ ցորչափ ոչ լու-
ծանիցեն Պարսք զդաշինսխաղաղութեն։
Զգա եհաս և այլ գեսպան յԱմասիա՝
բերելով նամականի ընդարձակ և հոյա-
կապ իմն ոճով գրեալ առ Սիւլէյման
արքայ, և պատուեցաւ 'ի նմանէ բաղ-
մապատիկ պարգևաք։ Յայնժամ կուրցան
'ի միջի և առաջին գաշինք խաղաղու-
թեան ընդ մէջ Պարսից և Օսմանեանց.
զի ցայն վայր գագարումն եւեթ զինուց

էր որ անջրպետէր զմշնամութիւնս էր-
կաքանչիւր կողմանց առ ժամանակ մի։

Աղդ յԱմասիա եկեալ էր և Պուս-
պէք գեսպան Փերդինանդոսի հան-
գերձ ընծայիւք արծաթի անօթոց և
տասն հազար ոսկւոց. զի յերկոց ամաց
հետէ զհետս ամենդեալ էր Փերդինանդոս
խաղաղութեան՝ ջանալով յինքն գրա-
ել զԴրանսիսկանիա. այլ այն ոչ յա-
ջողեաց նմա։ Յաւել մատուցանել նմա
ութսուն հազարոսկիս, և առագաստ
քսան և ութ հազար. ասկոյն արքայ
Սիւլէյման գրել և նմա հաստատեցաւ առ-
նել զմնուց այլ և ամիսս վեց, մինչև զկա-
նիցէ Փերդինանդոս՝ ի պահանջանացն։

Յամին 1555 մեկնեցաւ Սիւլէյման
արքայ յԱմասիոյ և մեծամեծ վարձս
փոխարինեաց վաստակոց զօրավարացն.
յաւել կարգեաց զԴաւիթ Մէհէմմէտ
Սոգոլլու՝ ի վեզիր, և փոխանակ նորա
եբրայեան կողմնապետս կացոյց զՓէր-
թէվ փաշա։ Եւ իբրև եհաս՝ ի Կոս-
տանդնուպօլիս, առաքեաց վազվա-
զակի զՍոգոլլուն երեքհազար ենի-
չէրեաք և չորս հազար հեծելովք՝ ի կող-
մանս Թեսաղոնիկեայ։ Զի խռովարար
ոմն յարուցեալ անդանօր՝ ասէր զանձնէ
եմէ արքայորդին Մուսդաֆա կոչէ, և
ժողովեալ էր առ իւր արս իբրու տասն
հազար. կարգեալ էր իւր և վեզիր զոմն,
և կրկին գառաւորս զօրաց։ Այլ վեզիր
նորին, որ հաւանեցաւ ոմն էր, մատ-

նեաց զերկիրն 'ի ձեռս Մէհմէտայ, և նա առաքեաց զնա առ Սիւլէյման՝ որ հրամայեաց կախել զնենգաւորն, և մատնչին շնորհեաց կալուած մեծ։

Վէզիրն մեծ Գարա Ահմէտ փաշա յանկանոյ կամս յանձին կալեալ էր զիշխանութիւնն, և այն ապաւինեալ էր գումն Սիւլէյմանայ՝ չառնել զնա ընկեցիկ 'ի պատուոյն. և սակայն յետ սակաւ ժամանակի յաւուր միում մինչդեռ գնայր ըստ սովորութեան իւրում առ արքայ, արդեալաւ 'ի գաւթի անդ արքունեացն և սպանեաւ։ Եւ պատճառք ոչ այլ ինչ կարծելի են անշուշտ անակնկալ սպանութեան՝ եթէ ոչ գրգռութիւնք Խուրրէմ դշխոյին, որ զիւրայն իւր զԻբրահիմ կամէր ամբառնալ վերրատին յայն պաշտօն, որպէս և արարն իսկ։ Ա՛յլ յիշատակն Ահմէտայ անմոռանալի մնաց և 'ի շինուած մզկիթին մեծի որ առ դրամքն Դոմի գտիս անուանեալ 'ի բարձրաւանդակ վայրի։

Ընդ այն ժամանակս կատարեցաւ և մզկիթն մեծ անուանեալ Սիւլէյմանիէ, քան զոր չկայ 'ի Թագաւորեալ քաղաքին շինուած պանծալի զկնի Այա սոֆիային։ Յերկոս գոլով տարհեալ մեծամեծ քառակուսիս՝ գմբէթս ունի մեսասան, և շուրջանակի տրահն սիւնազարդս ծածկեալս քան և ութ գմբէթիւք, և 'ի շուրեանն անկիւնս իւր քառեակ աշտարակս։ Ճարտարապետաց

զսա Համբաւեալն Սինան յամս վեց, և ծախեցան 'ի նա ոսկիք աւելի քան զԵՕ-թըն հարիւր հազար: Ապա կառոյց ալ-քայ առ մզկիթաւն դպրոցս մեծամեծս չորս, և կարգեաց վարժապետացն որ 'ի նոսա հասս և ռոնիկ առաս:

Յայնժամ ելհաս և 'ի շահէն Պարսից Թուղթ ինդակցութեան առ Սիւլէյ-ման ալքայ ընդ առաքել մզկիթին և ընդ ամբառնալ Ռիւսթէմայ միւսան-գամ յառաջին պատիւն իւր. որպէս և 'ի տիկնոջէ շահին առանձինն Թուղթ ժամանեաց առ Խուրրէմ գշնոյ: Ալ-ա ոչ ևս յերկարակեաց լեալ այնու-հետև մեռանէր, և յիշատակ անձին Թո-ղոյր քան զմզկիթն Խասէքի սուլթան կոչեցեալ՝ զասուերածն զորս արկ 'ի նա զփառաք մեծի ալքային Սիւլէյմանայ. զի որպէս ասեաս՝ 'ի նորին սաղմանաց ապանան վէզիրքն Իպրահիմ և Ահմէտ, և ալքայորդին Մուսդաֆա: Յայնմհետ-ոէ յիրաւի է զասանամեայ ծնացորդս կենացն Սիւլէյմանայ առաւս կարեաց նմին հանարել. զի Թէպէտ և գործել գործեցան 'ի նոսին գեռ ևս յաղթա-նակութիւնք ոչ սակաւք, այլ գժաու-Թիւնք և խռովութիւնք ահագինք ծա-գեալք 'ի մէջ ալքայորդւոցն՝ կարի ինն պատասեցուցին զնա և յոգիս արարին ապաստան:

Ռիւսթէմ վէզիրն մեծ խեթիւ հայէր 'ի Լալա Մուսդաֆա փաշա, զի հաւա-

տարիմ արքանեակ լեալ էր նա Ահմե-
տայ նախորդին իւրոյ, և մանրիմ թը-
ւէր արքայորդւոյն Պայէզիտայ. ամին իսի
ջանահնար եղև և կարգեաց զնա անն-
կապետ արքայորդւոյն Սէլիմայ, որպէս
զի դիւրին էր այնուհետև բարուրա ինչ
առաջի արկեալ արքայորդւոյն՝ բառ-
նալ զՄուսդաֆա'ի կենաց։ Ապ զան
այն վասն գերևացաւ։ Քանզի Մուսդա-
ֆա խորամանկագոյն քան զԻսմէթ
գտեալ՝ հոգացաւ՝ խաշտամանն իւրում
այնպէս յառաջադէմ լինել, զի 'ի թա-
գաւորել յետոյ Սէլիմայ՝ նախկին բարձ
պատուոյն անձին իւրում վիճակեսցի։
Հարկ էր ապա անկասկածելի առնել
զԹագաւորութիւնն Սէլիմայ՝ կործան-
մամբ եղբօր նորին Պայէզիտայ։ Խոր-
հրդակից եղև Սէլիմայ, քանց առ նա
զԻսմէթայ և ասէ. «Ահա միայն է որ
հնարի խափանել զքեզ յիրաւանց թա-
գաւորութեանդ. զի ձեռն նորա գաղտ-
նապէս ընդ Պայէզիտայ է, և ինքն
չգադարէ ամբաստան լինել զքէն առ
արքայի, և ուծացուցանել զնա 'ի քէն
իրրև 'ի շուայտաց պատանւոյ և յան-
պիտանէ առ գործս պետութեան։ Եթէ
ազատութիւն էր, ասէ, յիմ ձեռս,
այլազգ անշուշտ յեղանակեին իրքս։
Ցայնժամ հրաման եւ նմա Սէլիմ առ-
նել զոր 'ի գէպն կարծիցէ, խոտանա-
լով կարգել զնա իւր վէզիր. և Մուս-
դաֆա բուռն եհար զպատիր խորա-
մանկութեանց իւրոց։

գրեաց առ Պայէզիտ թուղթ նեղ-
գութեան, յորում կէզծեալ առ նա
զիւր զնախնի մուերմութիւն՝ առաջի
առնէր նմա եթէ քանի՝ գիւր ելէ նմա
զերծանել 'ի Սէլիմայ ընկղմելոյ 'ի շը-
ւայտութիւնս, որպէս զի անխափան լի-
ցի այնուհետև յաջորդել զհայրն։ Եւ
ցուցեալ Սէլիմայ զթուղթն, առաքեաց
զայն դարձեալ առ Պայէզիտ։ Թախարթե-
ցաւ Պայէզիտ 'ի պատրանսն, և գրեաց
առ մատնիչն պատասխանի, յորում
ապաւինէր եղկելին 'ի հնարս Ճարտա-
րութեան Մուսդաֆայի. և սա էր ըզ-
թուղթն անքաց 'ի ձեռս Սէլիմայ։ Ապա
միւս ևս թուղթ գրեալ յորդորէր զՊայ-
էզիտ՝ ձայն տալ եղբօր իւրում խրոխ-
տանօք 'ի պատերազմ, որով ընդ հուպ
վՃարեցի տէր ամենայն ինչ։ Գրեաց
եղկելին Պայէզիտ առ Սէլիմ թուղթ
լի թշնամանօք, առաքեալ առ նա ընդ
նմին կանացի պարեգօտ, և ապարշ և
աղեկատ։ Այսոքիկ ամենայն առաքե-
ցան 'ի Սէլիմայ և 'ի Մուսդաֆայէ առ
Սիւէյման արքայ. և նորա զայրացեալ
ընդ անարժանութեանս Պայէզիտայ ընդ-
դէմ եղբօրն իւրոյ երիցու, խրատս և
կշտամբանս գրեաց առ նա։ Այլ Մուս-
դաֆա էր ձերբակալ առնել զթշնամ-
տարսն և սպանանել, և զնամակսն 'ի
հուր արկանել. և ապա թերլագիր եղև
Սէլիմայ, զի ամբաստան լինի առ հայրն
որպէս թէ Պայէզիտայ գործեալ էր և

զայն չարիս. և նաև արար այնպէս Յայն-
ժամ խորհեցաւ արքայ հեռացուցա-
նել զՊայէզիտ 'ի Կիլիկիոյ որպէս ինա-
սակար իրաց պէտութեան, և հուպ առ
ինքն ածել զՅՍմասիա. և զՍէլիմ փո-
խադրեաց 'ի Մագնեսիոյ 'ի Քիւթահ-
եա:

Իսկոյն յուղի անկաւ Սէլիմ ըստ
հրամանի հօրն և եհաս 'ի Պրուսա. այլ
Պայէզիտ ոչ միայն չանսաց հրամանին,
այլ և զօր գումարեալ 'ի Քրդաց, 'ի
Թիւրքմէնաց և յԱսորւոց արս իբրու
քսան հազար, Թեսակոնեաց 'ի յայտնի
ապստամբութիւն: Հրաման եւ արքայ
կուսակալաց և գաւառապետացն արև-
ելից զօրաժողովելոյ 'ի սահմանս Կի-
լիկիոյ, և զՍոգոլլու Մէհէմմէտ զվէզիրն
երկրորդ արձակեաց անդր հազար ենի-
չէրեաք, և քառասուն հրացանաւք:
Սարսռեալ կուսակացն սասկապէս
կողմանքն երկոքին, և Պայէզիտ յա-
ւուրն երկրորդի 'ի սպառ 'ի սպառ խոր-
տակեալ փախեաւ յՍմասիա. և անտի
գրեալ արտասուալից սրտիւ թուղթ
առ հայրն իւր՝ պաղատէր զնեռուն
յանցաւածոյն: Սակայն և այս թուղթ
անկաւ 'ի ձեռս Սուլդանին, և չե-
հաս առ արքայ:

Իբրև եառեալ Պայէզիտ, զի զօրավարք
հօրն իւրոյ և զբոլոր զօրս ի հալա-
ծելոյ գնան, ժողովեաց առ իւր արս երբ-
կոտասան հազար, որք և սիրէին զնա

առաւել յաղագս աւելի ինն հանդի-
սութեան կերպարանացն ընդ հօր իւ-
րում և յաղագս հանդարտաբարոյ գնա-
ցեցն. և 'ի նոսին ապաստանեալ ջորիւք
որդւովքն իւրովք դէմ եդ փախչել 'ի
սէմանս աշխարհին Պարսից։ Յայն-
ժամ ոչ ևս ծածկեցան 'ի Բիւզանդիայ
խորամանկութիւնքն Մուսդաֆայի.
վասն որոյ սոխպէտաց զարքայ արձակել
զնա կուսակալութեամբ 'ի Դամբշվար, և
ապա 'ի Վան։ Իսկ արքայ Սիւլէյման որ
առ զգուշութեան անցեալ էր յԲա-
կիւտար, ազգ արար վաղվաղակի զյան-
ցանաց որդւոյն առ Դահմասպ արքայ
Պարսից։ Այլ նա մինչև ընկալեալ ըզ-
թուղթն Սիւլէյմանայ՝ սասնջական եղև
արքայորդւոյն մեծաշուք պատուով 'ի
Դամրէժ, սկսաւ առակս երեսուն զե-
զուանուկով և արծաթով, մարգարտաք
և ակամբք պատուականաք թափեաց
'ի գլուխ նորա, և երդուաւ ևս չմնա-
նել զնա 'ի ձեռս հօրն. և Պայէզիտ ըն-
ծայեաց նմա յիսուն նժոյգս հայաս-
տանեայս ոսկեկազմս, և երկուասան ա-
նօթս արծաթիս։ Ապա խրդև հասին առ
Դահմասպ թուղթ և դեսպանք Սիւլէյ-
մանայ մի զմիոյ կնի, որովք սոխպէտ զնա
տալ զորդին 'ի ձեռս իւր, և կամ ինք-
նին արկանել զնա յարևէ, Դահմասպ
յամենայնի պատրաստական ցուցեալ
զանձն իւր 'ի լրումն կամացն Սիւլէյման-
նայ, ցրուեաց զամենայն զօրս Պայէզի-

ասայ 'ի նմանէ առ սակաւ սակաւ. թէ-
պէտ և առ երեսս պատուասիրէր յոյժ
զնա, և զօր ամենայն ընդ իւր տայր
նմա Հաշէլ: Յաւուր միում մինչդեռ
յընթրիս բազմեալ կայր Պայէզիտ ընդ
շահին, սենեկապան ոմն Պայէզիտայ
Ալտաղ Մէհէմմէտ անուն մատնաւոր
լեալ սեառն իւրոյ՝ ասէ հնծելով ընդ
ունկն Դահմասպայ. «Զգոյշ լեր 'ի պա-
տանուոյդ, որ հայրանենգ եղեալ միան-
գամ՝ կարող է ձգել և 'ի քեզ կրկին
գնասակս հրազինուց»: Զարհուրեալ
Թագաւորին 'ի բանից անտի՝ պատճա-
ռեցաւ զիսմութիւն և եկ անդէն յընթ-
րեացն. ընդ նմա եկին և պաշտօնեայքն
իւր: Իսկ մի ոմն 'ի մտերիմ արքանե-
կացն Պայէզիտայ քանզի լուեալ էր
զիւրս Ալտաղին, եհար զմտակէզն իւր
զգեանսն, անկաւ Թաւալեցաւ և ինքն
յերկիր, և պատմեաց նմա զամենայն:
Ալ Պայէզիտ առանց ինչ քննութեան
հրամայեաց գլխատել զայրն: Զոր տե-
սեալ և այլք ոմանք յիւրոցն՝ փախեան
առ Թագաւորն Պարսից, ասելով եթէ
և մեք պատուէր ունէաք 'ի Պայէզիտայ
սպանանել զԹագաւորդ: Խռովեալ
աղմկեցաւ և ժողովուրդն, և գիմեալք
առ հասարակ յապարանս արքայորդ-
ւոյն՝ բանս Թշնամանաց արձակէին ընդ-
դէմ նորա: Եւ նորա այնպէս համա-
րեալ՝ եթէ վճարեալ ելցէ այնուհետև
վասն իւր, էառ ածել զառաջեաւ զոր-

գեակն՝ զի իւրով ձեռամբ սպանցէ զնոսա, և մի անկցին 'ի սուր թշնամեաց-այլ անդէն ժամանեալ 'ի Թագաւորէն նախարարք երկու՝ անքաջիր արարին զաղմկեալսն, և ընծայիւք բազմաք հնարեցան հանդարտել զնա։ Սակայն զհետաւուրց ինչ հրաւիրեալ Պայէզիտ միւսանգամ յընթրիս արքային՝ ձերբակալ եղև յանկարծակի 'ի զօրաց նոցա հանգերձ որդւովքն և արկաւ 'ի բանտ, և թիկնապահք նորա կոտորեցան։ Եւ մինչդեռ հնարս անիրաւութեան խորհուէր Դահմասպ՝ զի անտագիւտ կարասցէ դրժել երդման իւրում, հասին դարձեալ դեսպանք 'ի Սիւլէյմանայ, ընդ որս և սենեկապետն Սէլիմայ Աղի, որ պատուէր ընկալեալ էր 'ի նմանէ՝ ինքնին դահիճ կալ Պայէզիտայ։ Յայնժամ էտ Դահմասպ գերծուլ զհերս և զմորուս արքայորդւոյն, և ապահեցան զնա առ դեսպանսն գրգռեկաւ միով և չուան գօտեաւ։ և Աղի կատարեաց ըզխուժադուժ հրաման առաքչին իւրոյ 'ի վերայ ուշիմ և արի արքայորդւոյն և անմեղ որդւոց նորին յամի 1561։ և գիտակունք նոցա ածեալ թաղեցան 'ի Սեբաստիա։ Էր և որդի հինգերորդ Պայէզիտայ՝ եռամեայ գոլով հասակաւ, և խեղդամահ մեռաւ նա 'ի Պրուսա յառաջ քան զերդարս իւր։ Իսկ արքայ Սիւլէյման առաքեաց 'ի փոխարէն մեռեալն Դահմասպայ ոսկիս և-

ընչհարիւր հազար, և Սէլիմ յիւրմէ
կողմանէ հարիւր հազար։

Յառաջ քան զմեռանիլ արքայորդ-
ւոյն Պայէզիտայ մեռաւ վէզիրն մեծ
Ռիւսթէմ փաշա այլն ժամու, ամբաս-
տաւան, և ընչաքաղց. և ուրուք ի վե-
զիրաց էրէլոց նախ քան զնա չէր թո-
ղեալ այնչափ ինչս։ Քանզի էին նորա
գործարանք ոմն հարիւր և հնգեսուն
յայլ և այլ տեղիս, ջրաղացք չորեքհա-
րիւր և եօթանասուն և վեց, գերիք հա-
զար և եօթնհարիւր, պատերազմիկ ե-
րիվարք երկուհազար և ինեհարիւր,
ուղտք հազար, խոշայք և գրէստք պա-
տուոյ հինգհազար, փակէղունք ոմն հա-
զար, զրահք երկուհազար և ինեհարիւր,
սաղաւարտք արծաթիք հազար և հինգ-
հարիւր, սուսերք ակամանակուռք եօթն-
հարիւր և վաթսուն, կուրանք ոմն հա-
րիւր ազնիւք և ակամանակապք, զանա-
զան մատանիք հինգհազար, ոսկիք վաթ-
սուն և ութ հազար, ակունք պատուա-
կանք երեսուն և երկու՝ որոց գինք էին
մեծասան միլիոն փողք, և արծաթի
դրամք հազար քեռն, կամ ոսկիք երկու
միլիոն. թող զայլս։ Իսկ յաջորդ նորա
Ալի փաշա, մականուանեալն Սէմիզ
կամ Յոյր՝ ասկս գիրապարար թանձրա-
մտութեանն, որոյ վասն գուն ուրեք
գտանէր երիվար որ կարիցէ բառնալ
զնա, նմին հակառակ բարս ունէր ան-
ընչասէրս և բարեմոյնս. ամին իրի և գիս-

բաղէս հնարեցաւ զկնոյց զարքայ 'ի հաշտութիւն ընդ Փերսիանոսի, որ յուխտից ամաց հեռէ այնմ էր 'ի խնդիր ընդ ձեռն դեսպանաց իւրոց։

Յետ այնորիկ կառարեաց Սիւլէյման արքայ զհարսանիս Թոռանց իւրոց դրաստերացն Սէլիմայ և Մուսդաֆայի, զմին առաջի կնութիւն երկրորդի վէզիրին Սոգոլլու Մէհէմմէտայ, զերկրորդն ծոռվասպետին Փիալէի, և զդուստրն Մուսդաֆայի ամուսնացոյց ընդ Ապտիւլքէրիմ անուն զօրավարին Ենիչէրեաց։ Ընդ արտաքին ուրախութիւնքս այսքիկ բնաւ չազդէին 'ի սիրտն Սիւլէյմանայ. յորոյ 'ի կարեվէր խոցուածն ընդ մահ որդւոցն և Թոռանց՝ սատակագոյն երաշխէաց յաւելուին անբարի գնացք ժառանգորդին իւրոյ Սէլիմայ ընկղմելոյ 'ի գինեքրուս և 'ի շուայտութիւնս։ Եւ խրատքն իւր 'ի չուծանել կանանկար մոգք զօրէնս դենին և 'ի չարպել զգինի՝ ոչ միայն չօգտեցին ինչ Սէլիմայ, այլ և ամենայն զկծեցուցին զնաթէպէս և առ ժամն ոչ ինչ յայտնապէս հակառակութեան ինչ նշանակս եցոյց հօրն։ Եւ նորա զբաղեալ միտս պատգամաւորութեան արևմտեան և արևելեան ազգաց, յորոց ոմանք զհզօր նիզակակցութիւն նորոյն խնդրէին, և ոմանք զդաշինս բարեկամութեան հաստատէին, ապա ձեռն էարկ և 'ի կատոյցս կարեւոր շինուածոց ջրաբաշխ

հանքարաց 'ի պատճառս մեծի հեղեղին գիպեալոյ յայնմ ամի, որպիսի այլ ցնչաստակի երբեք 'ի պատմութիւնս Օսմանեանց։

Սիւլէյման արքայ յաւուր յայնմիկ որ քանեարորդ էր ամենայն սեպտեմբերի՝ յորս եղեալ էր 'ի Հալգալը տէրէ անուանեալ հովտին՝ որ հեռի է 'ի քաղաքէն ժամս վեց. և ահա յանկարծակի յուզեցաւ մրրիկ սարսափելի, որ տևեաց անընդհատ ժամս քսան և չորս, և թմբեցաւ շանթս կայծականց աւելի քան զեռմանասուն և չորս։ Պատուեցան Ջրմուղքն դեռ ապէս շինեալք 'ի Սիւլէյմանայ. խլեցան տապալեցան 'ի դաշտին Բեազատխանէի ծառաստունկք և գործարանք. և ալիք ծովուն մրրկելոյ լեռնաձև կուտակեալք և իբրու ոչ կա բովանդակեալք 'ի Վոսփորոնին՝ դիզան զեղան բարձրացան և կործանեցին գոգցեա զամենայն շէնս ծովեզերին։ Ջրատարք եղեն կամուրջք որ 'ի մեծն և 'ի փոքր Ճէքմէճէ, 'ի Հարամի տէրէ և 'ի Սիլիվրի. և ընդ եօթնեակ մի ողջ պղտոր և քաղցրախառն էր, ասեն, ջուր ծովուն։ Հազարս հազարաց ոսկիս էառ Սիւլէյման 'ի նորոգումն ջրմղացն, և կապարեայ ագուդայից հարիւր և տասանց, և 'ի շինուած քարեղէն կամրջի 'ի Ճէքմէճէ։

Ընդ այն ժամանակս ծովապետն Փիալէ, և մնացեալք քաջամարտիկն Տուր-

զուա բազում արուեստիւնս ցուցանէին 'ի նաւամարտս ընդ քրիստոնեայս 'ի միջերկրական ծովուն. որով առին 'ի ձեռաց նոցա զամուրն Ճէրպէ, և զՏրապօլիս և զայլ երեսուն տեղիս: Ապար հարկանէին և 'ի ծովափունս Ղէսապօլսոյ, և 'ի կղզիսն Մայորիկա և Կորսիկա, և մինչև 'ի սահմանս Կարթագինեայ, ուր կուսակալէր 'ի ճէզայիր Հասան որդի քաջին Խայրէտտինայ, և յետ նորա Սալիհ ռէիս: Ալ չկարացին առնուլ զՄելիտէ, այն է Մալթա, 'ի ձեռաց ասպետաց կարգի սրբոյն Յովհաննու. և յետ սաստարելոյ զայն բազմութեամբ զօրաց հաւրիւր և երեսուն նաւուք, և զամիսս չորս սաստկապէս մարտնչելոյ, խրտեան և զդարձուստ փոխարքային Սիկիլիոյ յօգնութիւն Մելիտացւոց, բարձին զպաշարումն. զի և քաջն Տուրգուտ անկեալ էր 'ի սկզբան մարտին:

Գանգի մի 'ի քարանց պարապին փշրեալ 'ի բռնութենէ ռմբաց՝ հարաւ 'ի գլուխ նորա և հատեաց արիւն յորդ ընդ ունգունսն և ընդ ականջս, և մեռաւ: Մեծամեծ արուեստիւնս եցոյց 'ի մարտի անդ Մուսդաֆա փաշա, և էառ զվիճ մահուն Տուրգուտայ առմամբ ամիրային որ կոչէր Սանան Էլմօ. զորոյ զպահապանսն ապս հարեալ և երեքհարիւր 'ի սուր սուսերի կոտորեաց, և զդիակունս նոցին յօշատեալ և բեւեռեալ 'ի փայտս խաչաձև արկ 'ի ծով, զի վարեսցին

յաջեաց անտէ 'ի սորոսս ամուր բեր-
դին կոչեցելոյ Սանթ Ընդէլօ, զոր չկա-
րացին առնուլ։ Իսկ մագիստրոսն Մելի-
տացւոց Լավալէթ անուն՝ մուտացեալ
զդուռն քրիստոսական հաւատոց՝ հրա-
մայեաց գլխատել զամենայն զդէրիս Օս-
մանեանց, և զկառափունս նոցին արձա-
կեաց 'ի բանակ նոցա փոխանակ ռմբաց։
Մուրատ փաշա առաքեաց 'ի ներքս
զդէրն ումն Ծերունի, և յորդորէր սալ
'ի բաց զամուրն. այլ մագիստրոսն ցու-
ցեալ նմա զմարտկոցսն և զկրակն՝ ասէ.
«Թէ կամիցի սպարապետդ՝ ասա նմա
մուրդիւր այնչափ ինչ երկիր, զի բաւա-
կան լցէ 'ի Թաղումն դիականց ենիչե-
րաց իւրոց»։ Յայնժամ սասակացոյց
և նա զպաշարումն, այլ սասակագոյնս
'ի բաց վանեցաւ՝ կորուսեալ ոգիս ա-
ռելի քան զքսան հազար, և 'ի պաշարե-
լոցն կոտորեալ հինգհազար եւեթ։

Յաւելուն սասանոր պատմաբանք
Օսմանեանց և դէպս ինչ բերել 'ի մէջ։
Իբրու զի 'ի մեկնել նաւահանգիստն 'ի
Կոստանդնուպօլսոյ՝ վերկրն մեծ Սեմիզ
Ալի փաշա յուզարկ երթեալ սակաւ մի
ընդ ծովապետսն Փիալէի և ընդ սպարա-
պետսն՝ որ էր Գրզալ Ահմէտի Մուս-
դաֆա փաշա հինգերորդ վերջիր ծերու-
նի եօթանասուն և հինգ ամաց, ըստ իւ-
րումն զուարճախօս բարոյից ծաղր ինն
արար զերկոսին զնոսա և ասէ ցմերձա-
կայս իւր...Ահաւասիկ ապք երկու զրժ-

միոք և ծանրակացք, որ սկսեն զնահ-
ել և զափիոն, և գնան զբօսանել՝ի կրդ-
ֆս. և անչուշտ դարձցին ընդ հուսպ-
բակլայս ածելով արաբացիս, և բանկ։
Զայս այսպէս պատմեալ Օսմանեանք
յայտ առնեն և զարարագէսն լինել այս-
պիսոյ կատակաբանութեան՝ի ժամ-
ուն՝ի բերան առն աւագի, և պատ-
ճառս ելեն հանարիլն զնոյն ձախող ելից
արշաւանին։ Ա՛յս ինչ հաւատոյ է, զի
և Սիւլէյման ազգայ ծանրացաւումն ելն
ընդ զսպեան արշաւանն. վասն որոյ
պատուիրեաց ծովակալին գիշերայն
առնել զմուտ իւր՝ի քաղաքն. և յա-
ռնելն վէզիրայ խօսեցաւ իսկ ոչ ընդ
Մուսաֆայլ։

Ի մեռանել Փերհատանոսի կայսերս
յերկրորդում՝ ամի զինադադարսն՝
ելեալ Թագաւորեաց Մաքսիմիլիանոս,
պահանջեաց՝ի նմանէ վէզիրն մեծ զե-
ղից ամաց զՀարկան միանգամայն, այս
ինքն է ոսկիս ինեանն հազար։ Զ՚ինչս
Մաքսիմիլիանոս՝ի հատուցումն այնչափ
արծաթոյն, զի թերևս հնար լեցի նո-
րոգելոյ հաշտութեանն. այլ քանզի՝ի
սահմանս աշխարհին Մաճառաց անընդ-
հատ պատերազմունք էին ընդ գաւա-
ռապետս Օսմանեանց, և ընդ սահմա-
նակալ իշխանս Գերմանացւոց, և զի ընդ-
այն աւուրս պատերազմասէրն Սոգոլլու
Մէհէմմէտ կարգեցաւ վէզիր մեծ փո-
խանակ Սէմիզ Ալւոյ մեռելոյ. ընդու-

նայն եղեն զեսպանութիւնք Մաքսիմի-
լիանոսի 'ի Կոստանդնուպոլիս 'ի խնդիր
հաշտութեան : Կուսակալն Պոնտոյ
Մուսդաֆա Սոդոլլու եղբօրորդին Մե-
հէմմէտայ պշաւեալ յերկիրն Խրոս-
թից՝ էառ զքերդն Քրուփիա, և զա-
մուրն Փանքոթիա : Յայնժամ Մաք-
սիմիլիանոս հրեշտակս առաքեալ առ
Սիւլէյման՝ պահանջէր յետս տալ զամ-
րոցսն : Իսկ նորա զայրացեալ ընդ այն
յոյժ յոյժ, զի ոչ միայն զհարկսն չհա-
տուցանէր, այլ և պահանջէր 'ի նոսա-
նէ առնէր, արդէլ զդեսպանն 'ի խիստ
բանսն, և եդ 'ի մահ անձամբ խոզալ
յերկիր նորին, և 'ի բաց քերել զկնգա-
անուն պարտութեան զօրաց իւրոց առ
Մելիտեաւ, և առ Ակրիա քաղաքաւ :

Ազգ արար Սիգիսմունդայ Զափո-
լեայ և Տէվլէթ քէրէյի խանին Խրիմու
առնուլ զամուրսն Սաղմար և Թոքայ-
և ինքն յառաջեալ յամենեանն մայ-
ի յամին 1566 յուղի անկաւ 'ի Կոս-
տանդնուպոլսոյ. և հանդէս հանդէր-
ձանացն զանցանէր շքեղութիւն քան զա-
մենայն ուղևորութիւնս նորին 'ի պա-
տերազմ : Ոչ երիվարաւ առնէր զհանդ-
պարտն զայս նուագ, այլ 'ի կառս, վասն
ծերութեանն և տանջանացն : Ընդ նմա
եղին և հնգէքին վեզիրքն Մէհէմմէտ,
Փէրհատ Փէրհատ, Ահմէտ և Մուս-
դաֆա. և վեզիրն մեծ միով օթևանաւ
յառաջընթաց լինէր 'ի կազմել զճա-

նապարշն։ Իսկ 'ի Կոստանդնուպօլիս
տեղակալէր Իսքէնտէր փաշա։ Ի Զէմլին
կատարեալ զոսն գառնագէնուհեանն,
հրաւիրեաց առ իւր զՋափոլեա, որ և
եկն 'ի բանակն չորեքարիւր ապատորե-
րով և մեծաւ շքով և բազում ընծայիւք
արծաթի ապատուց եմուտ 'ի խորանն
Սիւլէյմանայ, երկիր եպագ երիցս առաջի
ոսկեփայլ գահոյից մեծի թագաւորին, և երիցս անգամ հրամայեաց նա
նմա յոտն կալ և եւ նմին զձեռս իւր 'ի
համբոյր. և ողջագուրեալ զնա իբրև
զիւր որդի՝ հրամայեաց արկանել նմա
աթոռ ականակուռ անյենարան, և բազում ինչ քաղցրութեամբ խօսեցեալ
ընդ նմա ասէ. «Ոչ մեկնեցայց ես ասել,
մինչև պատկեցից զորդեակդ իմ 'ի թագաւոր Մառնառացոյ։ Կամէր և 'ի նմանէն
հրաւիրել զնա. այլ խափանեկաց այնմ
վէզիրն մեծ, պատճառելով եթէ գուցէ ասէ՝ ինչ 'ի կերակրոց ինչասեալ նմա՝
կարծիցիսք Մառնառաց գաւ ինչ գործեալ նշխանին իւրեանց։ Իսկ 'ի ներքուստ ոմանցեալ էր ընդ Զափոլեայ,
փոխանակ զի չէր հաւանեալ նա յայց
երանել ինքեան ըստ խնդրոյ իւրում՝
'ի խորանին, այլ բացօթեայ, և այն առանց ինչանելոյ յերիվարին։ Եւ յետ
երկուց աւուրց արձակեցաւ նա քաջալերը բանիւք և մեծամեծ խոստմամբք
յարքայէ։

Մինչդեռ կամէր Սիւլէյման անցա-

նել ընդ կամուրջն Վարաքնայ յա-
ռուն Վիրիոյ, որ է Էռլաա, ազգ եկն
նմա՝ եթէ Նիքոլա կամ՝ Անկողայոս Զ-
բինն խրուաթ իշխանն խորասկեալ է
ապառապուռ զգօրս Մէհէմմէտայ ըզ-
դեշխին Թրհալայի. և փոխեաց զուզին
ի ցամանն գիմել յառուն բերդին
Զբինեայ, որում անուն էր Սիկեթ-
վար։ Պատուիրելով պատուիրեալ էր
ազգայն զօրայ իւրոց չկենդել ընաա ըզ-
դիւզականս երկրին. և իբրև գիտաց զ-
մանց հրդեհելզդիւղս ինչ, հրամայեաց
ընդ առաջ անցուցանել զնոսին։ Որպէս
և զՎարան ոչ զկուսակալն Պուռնայ
էա ապանանել՝ ի պատճառս անհրա-
ժեշտութեան ապատակելոյ նորա՝ ի սահման
Թշնամեաց, և մանաւանդ յաղագս տա-
լոյն՝ ի ձեռս նոցին զամուրն Վէսիրիմ
և Թաթիա։ Հրամայեալ էր ազգայ միում
՝ի պաշտօնէից գրանն երթալ ածել առ
ինքն զգլուխն Վարանայ։ Այլ իբրև գի-
տաց՝ զի նա վարս էա մեկնեալ՝ ի Պուռ-
նէն գայ՝ ի բանակն ազգունն, պա-
տուիրեաց զի հատցի կառափն նորա՝ ի
ժանանել նորին՝ ի խորան վէզիրին մեծի։
Եհատ Վարան հնգետասան ապառազին
հեծելովք, և եմուտ՝ ի խորան վէզիրին.
որոյ անդէն յոտն կացեալ գոչեաց
ընդդէմ Վարանայ և ասէ. «Զի կայ քո
ասասնոր. և յո՞ ապատասան արարեալ
թողեր զզօրականդ։ Ազգայ գրեզ կողմ-
նապետ կարգեաց աշխարհս, և դու

մասնեցեր զամուրս սորա 'ի ձեռս անհաւատից. ա՛ չուառական, հաստատեալ է արդ վՀիս մահուան 'ի վերայ քոյ։ Եւ ասէ ցմի ոմն յորոց մերձն կային.«Մասիր պատահեա անօրինիդ»։ Ապան ոչ անխառով մտաք է հան 'ի ծոցոյ իւրմէ նամականի կրկին, զի տացէն ազգայի, և ինքնին 'ի ծուռնր իջեալ առաջի գահնին ասէ.«Հապա փուլմա և մի յապաղեր, և քաջ ամրեա զիսեղդանդ»։ Եւ անդէն խեղդամահ եղև։

Ի վաղիւ անդր եմուտ ազգայ հանդիսիւ 'ի փեջ քաղաք, ոգեռնեալով զզօրան ասի և անտի տուրեալս 'ի քաղաքին, և 'ի հինգերորդում աւուր ամենայն օգոստոսի գնաց 'ի պաշարումն Սիկէմայ, զոր յերից աւուրց հետէ պաշարեալ էր կուսակալն Եւրոպէան ինքնուն հազար զօրաք և երեքարիւր հրազինուք։

Հրամանն եղև յարձակել 'ի վերայ քաղաքին յերից կողմանց, և 'ի չորեքտասաներորդում աւուր առաւ քերդն արտաքին։ Սակայն մեծաւ տրխումբ մարտ գնէր 'ի նեղքուստ Ջրմնի՝ ոչ ինչ անտացեալ յորդորանացն Սիւլէյմանայ 'ի տալ զմիջնաբերդն։ Այլ սկսան ենիչէրիք ակսան հատանել 'ի հիմունս բերդին, և հանգերձեալ էին հրկէզ առնել զայն 'ի վաղիւ անդր։ Այլ ազգայ Սիւլէյման 'ի նմին գիշերի որոյ հինգերորդ էր ամենայն սեպտեմբերի, մեռաւ 'ի ծերութենէ, կամ 'ի խիզոց և կամ 'ի

կաթուածէ. և չկարաց տեսանել զա-
ռու�Սիկեթայ, որոյ վասն 'ի ժամ
մահուն իւրով ձեռամբ գրեալ էր առ
վեզիրն մեծ. «Մինչև ցե՞րբ ոչ բորբոքի-
ցի վառարանդ. մինչև ցե՞րբ չհնչիցէ փողն
յաղթութեան»։ Զամենայն հնարս
հնարեցաւ Սոգոլուն առ 'ի թաքուն
պահելոյ զմահ թագաւորին. և օր ըստ
օրէ թուղթս յանուն արքայի ափուէր 'ի
բանակին խորհրդակցութեամբ Ֆէրի-
տունայ և ճաֆէր աղայի, որ քաջիկ
նմանեցուցանէր զգրուած իւր գրուա-
ծոցն Սիւլէյմանայ։

Յութ սեպտեմբերի հարկ էր Զրի-
նեայ կամ անձնատուր լինել, կամ աշ-
տարակաւն հանդերձ յօգս ամբար-
ձեալ մեռանել. քանզի անդէն 'ի նմին
աշտարակի էր և համբարանոց վառօդոյն։
Ալ նա արժանի իւրումն քաջութեան
խորհեցեալ խորհուրդ, զգեցաւ զհան-
գերձս իշխանութեան իւրոյ, արկ զպա-
տանոցաւ զմանեակն ոսկի, եդաւ 'ի
գլուխ զկայրն մեծաշուք, արկ 'ի ծոց
իւր ոսկիս հարիւր և ընդ նոսին զգա-
կանս բերդին, և ասէ. «Յորչափ կարացիս
ես շարժել զմին 'ի բազկացս իմոց, ոչ ոք
հանցէ յինէն զոսկիս կամ զգիտականս.
իսկ զմեռս մահուան իմոյ թող առցէ
զնոսին ո՛ ոք և կամեցի. այլ ես էր-
գուեալ եմ, զի 'ի բանակին Տաճկաց մի
ինչ ուսեալ ցուցանել զիս մատամբ՝ նեթ
սա է Զրինի»։ Սոսին արութեամբ

խրախուսեալ զիւրան վերջնարիւր ախոյ-
եանս, այն ինչ երանելի ծուխ բորբոքե-
ցոյ աշտարակին՝ յարձակեցաւ նոքաք
հանդերձ, անզրահ և անսաղաւարտ, և
միայն սուսերս պողպատիկ 'ի ձեռին, 'ի
խուռն բազմութիւն թշնամեաց իբրև
զկայծակն 'ի շամբս երեւեցանց։ Սակայն
հարեալ 'ի կրկին ոմբաց 'ի լանջսն՝ ան-
կաւ և ինքն. և ենիչերիքն յարիշտակեալ
զնա կիսակենդան եդին 'ի վերայ թնդա-
նօթին Քաղիանէռայ և գլխատեցին։
Յայնժամ և սենեկապանն Զրինեայ
հոսր երեր 'ի պահպանն վառօդոյ աշ-
տարակին. որ ահագին ճայթմամբ ոչ-
ոչեալ ընդ օդս, ծածկեաց ընդ իւրև
երիս հաղարս 'ի զօրականաց որ չժա-
մանեցին խուսափել։ Ի նմին աւուր ա-
ռաքեաց վեզիրն զգլուխ Զրինեայ առ
կայսրն Մաքսիմիլիանոս։ Գրեաց ապա
ըստ սովորութեան 'ի դիմաց արքայի
թուղթս աւետեաց առ խանն Խրիմու,
առ շերիֆն Մէքքէի, առ շահն Պարսից
և առ այլ պետութիւնս։ Բաշխեաց
զօրացն և զօրավարաց պարգևս և իշ-
խանութիւնս, և հուշակեաց ընդ բա-
նակն՝ եթէ քանզի այսուցեալ են ոչք
արքայի, չկարէ արտաքս երանել։ Եւ
խոհական զգուշութեամբ մեծի վեզի-
րին յաջողեցաւ թաղնութիւն մահուա-
նին Սիւլէյմանայ ցերիս եօթնեակս,
մինչև ցհասանել արքայորդւոյն Սէլի-
մայ 'ի Կոնիայ 'ի Կոստանդնուպոլիս։

Տեսաւ ահաւասիկ կարծ 'ի կարծոյ, եթէ չէր կացեալ յառաջ քան զՄիւ-
լէյման, որպէս և չեկաց ետ զինեւորաց-
աւուրս բազումս Թագաւոր Օսմանեանց
մեծ քան զնա, վասն 'ի գործս, վասն 'ի
խորհուրդս, անվեհեր 'ի վտանգաց, ան-
ընկճելի 'ի պատահարաց. աշխարհալն
մեծագործ, և յաղթական յամենայն
գոգցեալս արշաւանս, մանաւանդ յերկ-
տասանեամն 'ի մեծամեծսն, որովք
յաւել յիւրն պետութիւն բերդս և
քաղաքս հարիւր, կամ որպէս այլք ա-
սեն՝ երեքարիւր վաթսուն և վեց։
Սակս որոյ յիրաւի Մեծ և Մեծագործ
անուամբք հռչակեցաւ յԵւրոպացւոց։
Այլ շքեղ ետ համարեցուք զառ 'ի
յիւրմէ ժողովրդենէն արժանապէս ըն-
ծայեալ նոսա զԳանուանի կամ զՕրինդս-
գիրն անուանակոչութիւն։

Որպէս 'ի պատերազմական, նոյն-
պէս և 'ի քաղաքական բարեկարգութեա-
արս հանճարեղս և անուանիս ա-
տարս ունէր խելացն խորհրդոց. սակայն
և այն յաճախեալ նոսա ապաքէն զիտաս
քաջակիրթ ընտրութեանն ընդ այր և ընդ
այր։ Եթէ ոք ապագիտս մեծ 'ի նոսա ան-
ուանիցէ զպատրաստն յիւրմէ բամբասանէն
'ի կորուստս արանց քաջաց ոչ ինչ այնպէս
յանցաւորաց, անկցին 'ի սիրտս նորա և
'ի յուշ մտաց՝ որոյն հանճարաւանն ար-
կածք, եթէ արժան իցէ ասել, մեծին
ասեմ 'ի Թագաւորս Խարոյնէլի արկածք։

Գլուխք օրինացն Սիւլէյմանայ, որ-
պէս զի կարձառօտս հատից, բովանդա-
կին 'ի սահմանագրութիւնս յաղագս
ենիչէրեաց, յաղագս կալուածոց որ
յԵրուսաղեմն և յասիական կողմանս,
յաղագս վարձկանացն կալուածոց որ
յԵգիպտոս, յաղագս սարկաց՝ քրիստո-
նէից և Հրէից, յաղագս բաժանման
աշխարհին 'ի քսան և մի նահանգս և
յերկերիւր և յիսուն գաւառս. և յա-
ղագս պատժոց յանցանաց:

Ի սարկացն օրէնս, որք ապա քա-
մանին հատատուեցան, և քան մանին
առաւելան յԱհմէտայ արքայէ առաջ-
նոյ, որոյ հարկապահանջութիւնքն
յաղագս ագարակաց և անգատանաց,
հարստանեաց, խաշանց, արօտոց, ձմե-
րոցի, փեթակաց, աղօրեաց, գերդաս-
տանաց, գատաստանաց, և գերեաց:
Իսկ 'ի պատժականան խնամով Ճշգել
թոռն Սիւլէյման զմանուն անգամ 'ի
յանցուածոց, 'ի հինգ գլուխս ամփո-
փեալ. որոց նախիկին սահմանն զպա-
տիժս պառնկութեան, առաւելապէս
տուգանս գրանց: Յերկրորդումն կրչ-
ին պատիժք և տուգանք թշնամանաց
կապի և կռուոյ. որպէս այն՝ թէ որ
խլիցէ ոք զայլոյ զմորուս, կամ ապտա-
կրա ուսմբ հանիցէ, և կամ վերս 'ի գլու-
խոյն գնիցէ, նոյն անցք և ընդ նա ան-
ցուցին. սակայն խլման է ինչ ասին
տուգանս գրանց պահանջել յասիկն.

զոր օրինակ ընդ միոյ սատանան փշրել ը
երկերիւր փողս 'ի մեծատանէ, և երե
սուն յաղքատոյ: Զգերեալս ոչխս կի
սով չափ հատուցանել պարտին տեսչ
նոցուն: Կանայք երկու թէ կադիցեն
ընդ միմեանս, և 'ի քօղաւորացն իցեն և
'ի պարկեշտից, քան փոքս տուժե
ցեն. իսկ թէ հոլանի իցեն և հեբատուկ,
կշռամբեսցին և տուժեսցին առ մեն մի
հարուած փոքս կրկին:

Ցերրորդումն սահմանին պատիժ
արքեցողաց, գողոց, սպանողաց, և ա
ւարտողաց. իբրու այն, որ գինեմոլու լինի
ցի՝ առ իւրաքանչիւր նուազս փող մի
տուժեսցէ: Զիսպողոց ձեռն հատցի,
կամ՝ երկերիւր փոքս տուգանեսցին:
Մարդագողն, և որ տէր 'ի գողութիս
մանուանս ըմբռնեալ իցէ՝ կախեսցի: Սուտ
վկայից և գրամահատից ձեռն հատցի:
Որ զանց առնիցէ երիցս զօրական աղ
թականացուցեալ ամբն (որ 'ի հինգ նուազս
կատարի), և որ զպահն լուծանիցէ,
փող մի տուգանս տացէ: Շահք գրամոց
մի անցցեն քան զմեռանան առ հարիւր:
Զբարարողքն և ամբաստանքն երաշխա
ւոր լիցին և պարտականքն ինքեանք՝ զոր
գործիցեն շարախոսութիւն իւրեանց:

Չորրորդումն սահմանք յաղագս առի
և արոյկարդին, և հինգերորդին՝ յաղագս
արուեստից - յառաջնումն պատուիրի
և գութ գրոցմոյ առ անասունս - և 'ի
միւսումն սահմանին հացարարաց չափք

աչքը և կոգւոյ 'ի յօրինուած այլեայլ պղակունոց, և անագողց զպղնձին՝ չափ և տարրաց անագելոյն. որպէս և գինք զանազան ազանեալեաց ոսկից, և համեմից, երաստանակաց և սանձից։ Որոց վաճառիցեն պտուղս չորացեալս, և խաղող, շնորհեալ էշահ տան առ հաբիւր։ Բազանէսաեարց պատուիրի չտալ անխոտիր 'ի վար տանձկաց և այլակրօնից զնոյն ածելիսև զանձեռոցս։ Աղքատաց՝ յարգոյ աւուրս ևեթ ելանել 'ի մոյր, և 'ի մզկիթս ոչ երբէք. բորոտաց և ուրկաց մի շրջել 'ի քաղաքին։ Զվաճառել ինչ բնաւ, որում չեցէ գին հատեալ դատաւոր քաղաքին։ Զայս ամենայն այսպէս գիտացեն և պահեսցեն, ասէ, ամենեքեան, և ոչ այլազգ։

Ներոդամիսզիջուն Սիւլէյմանայ առ հպատակսիւր ակն յայտնի երևի ոչ միայն յօրէնսն, այլ և 'ի թողացուցանել անդ նորին զՀոխուլթիւն և զզեղխուլթիւն յարքունիս և յապարանս աւագանեացն, և 'ի չխափանել զնուա խահվէի, (զոր յերկոց դարուց հետէ հնարեալ էր Շէուելի ումն շէյխ արարացի,) և զբնուած խահվէխանէ անուանեալ զբօսարանաց 'ի Կոստանդնուպօլիս յամին 1554։ Զգայլթակղուլթի օրէնսգիտացն տանձկաց ընդ ոսկի և արծաթի ապատս սեղանոյ թագաւորին երարձ Սիւլէյման, վարելով ինքն փոխանակ նոցին յախճապակիս Չինաց։ Այլ զի վէճ էր առ

նոսա, զի եթէ կենդանեաւ մարդարէին
իւրեանց լինէր գիւտ խաղվէին, արդ.
ըստ նա զարդուանն եթէ ոչ, լուեայ
գենդեան Էպիսիուս. որ և մեծա-
պէս օժանդակեաց Սիբէյմանայ ի կար-
գումն կանոնացն :

Դրուատաւալ է Սիբէյման և սակ-
ուսումնասէր քարոզչն, և քերթողական
հանճարոյն. և իւրով առատաձեռնու-
թեամբ առ գիտնականս այնչափ խրա-
խուսեաց զնոսա, զի թիւ քերթողաց
եղեալ առ նովաւ կացեալ հաշուին հա-
լիւր և յիսուն. և ի նոսա ասանէին
սոքա համբաւեալք են յոյժ. Խիալի,
որ առ մէն մի ի տաղիցն վոռս հարիւր
և յիսուն հազար տունոյր յարքայէ : Զա-
թի, որ յաւուրց անուն Պայէզիտայ ար-
քայի պարսկական էր ամի ամի երիս քեր-
թուածս յօրինել, վասն նորոյ տարոյն,
և վասն երկուց ամսիցն Տաճկաց : Տէր
Պիւրատէր, Եահէա ալէյ, Ֆիւզուլի.
ճէլիլի, Ֆիքրի, Ռէվանի, և Լամիի.
այլ ասանէրորդն Ապուլ Պաքի պա-
ղատրեալս հանարի ամենեցուն ասցա, զի
և ի Սիբէյմանայ սոքայէ անուանեցաւ
մի միայն քերթող օսմանեան, և ընկալաւ
ի նմանէ հրովարտակ պատուոյ. որ և
ոչինչ ցաւագինս յօրինեաց ապա ի մահն
Սիբէյմանայ :

Եւ եղեն ամք թագաւորութեանն
Սիբէյմանայ սղքայի քառասուն և եր-
թեն. և ի մեռանել իւրում էր նա ա-
մաց երեսնեւսուն և չորից :

ՍՈՒԼԴԱՆ ՍԷԼԻՄ Բ,
ՀԱԼԻՄ

Զ ՀԵՏ առումն Միկէթվարայ, Հասան շաւուշ առաքեալ 'ի վէզիրէն առ Սէլիմ, յաւուրն ուրբաթի ժամանեալ թղթով 'ի Կաւոմնա. և ուր և անցանէր՝ զայս ասէր, եթէ Սիւլէյմանն արքայ չկամի մեկնել 'ի Միկէթայ՝ մինչև քաջ ամրացուցեալ լցէ զնոյն։ Իսկ արքայորդին Սէլիմ շտապ տագնապաւ յերիս աւուրս հասեալ 'ի Քաղկեդոն, զեկոյց առեալ Իբրէնտէրայ զգալուստ իւր, և միանգամայն յայտ արար զգարմանս իւր ընդ անպատրաստութեան ինեալ ամենայնի։ Շփոթեալ առեալսն ընդ իրան՝ եւ պատասխանի չգիտէալ ինչ բնաւ յերեսաց. այլ իբրև ընթերցաւ զթուղթ վէզիրին՝ փութացաւ անց յԲասկիւտար և հանդերձեաց զձեռս Սէլիմայ։ Իբրև եմուտ Սէլիմ 'ի դուռն, և ուղղորդէր 'ի քաղաքն կոյս, արձակեցան յաշտարակէն Լէանդրի, որ է Գալատ գուլէսի, թմբու

ազդարարք մահուան Սիւլէյմանայ, և թագաւորեալն Սէլիմայ։ Եկին 'ի հանդերձս ձեռաց դորա և ոչք միանգամ գոսանէին 'ի թագաւո-

ռեալ քաղաքին յուսադրելոյն և 'ի գիտ-
նականաց. և ապա յայց ելեալ բան ա-
վորութեան 'ի շրջանն Եյուսպայ և 'ի գե-
ղեցմանս իւրոց նախնեաց, և ոսկիս վեց
հարիւր թողեալ 'ի մի մի 'ի նոցանէ, յա-
ւուրն երրորդի յուղի անկաւ գնալ 'ի
բանակն։ Ի Սոֆիա քաղաքէ գեսպանս
արձակեաց 'ի Վենետիկ, 'ի Բաղդադ,
'ի Գաղղիա և 'ի Պարսս, ծանուցանել
նոցա զմեռանելն հօրն, և զիւր թագա-
ւորելն 'ի սեղն նորա։ Ապա բան մեծ
վէճիրն խորհրդոյ զկայ էառ 'ի Պել-
կրատ, զի մի սուրս պարզեաց ինդրե-
ցեն զօրականքն, և արքայ չունիցի ա-
ձեռն բան բաւականին։

Դեռ ևս անգէտ էին զօրականք մա-
հուն Սիւլէյմանայ. զի Սոգոլլուն յետ
թաղելոյ զմեծարոտիս մեռելոյն 'ի վրանի
անդ նորին, զեռեղեաց զդիակն 'ի
պատգարակի, հրամայեաց 'ի գիմաց
արքայի՝ չուել 'ի Կոստանդնուպօլիս, և
'ի ժամ չուելոյն երբէք երբէք մատչէր
'ի պատգարակ անդր խրատ հծծելով
ինչ ընդ արքայի։ Հասեալ ապա մերձ
'ի Պելկրատ օթևանս շորս, զհատարակ
գիշերաւ հրամայեաց վէզիրն ընթեր-
ցողաց կուրանին ակուռք առնուլ զդա-
գաղքն, զի 'ի նմին ժամու վախճանեալ
էր Սիւլէյման զկեանս իւր քառասուն
և ութ աւուրքք յառաջագոյն։ Այն
ինչ ժամանէր բանակն 'ի սորոսս ու-
րեք անտառաց, հնչեցին ընթերցողքն

զնայնս աղօթից միաբան գոչմամբ։ Եւ
իբրև այլք անդրէն կցեցին զողբական
նուագն, բարձին զձայնս իւրեանց յան-
կարծակի զօրականքն առհասարակ,
և աչագին կոծմամբ կականաւ լային.
և անդէն զուռղի կալեալ՝ ոչ ևս կամէին
յառաջ խաղալ։ Յայնժամ ժողովեցան
վեզիրքն առ Սոգոլլուն և ասրջանային
ընդ տարաժամ յայտնութիւն գաղտ-
նեացն. այլ նա ինքն վեզիրն մեծ ընթա-
ցեալ ընդ բանակն 'ի լուսանալ առաւօ-
տուն գոչէր. «Ո՛ ընկերակիցք իմ, զի
է ձեզ գաղտ առնուլ ատէն։ Զայս
հաստատանիցէք թագաւորին ձերում,
որ զայսչափ ամս հայրօրէն գգուեաց
զմի մի 'ի ձէնջ իւրաքանչիւր. նա պարտ
և պատշաճ է մեզ փառս վերառաքել
Աստուծոյ յանուն նորա և երգս յաղ-
թութեան նուագել։ Հապա 'ի գլուխս
մեր բարձեալ զդիակն նորա երկրաքնդ
առաջ որդւոյ նորին Սէլիմայ արքայի
որ մնայ ձեզ 'ի Պելկրատ լիաձեռն պարգ-
ևաք։ Հանգարտ լերուք, և մի խափա-
նեք զընթերցողսդ յաղօթից, և չուեսցուք։»։ Եւ իբրև ոչ ևս հեռի էր բանակն
'ի Պելկրատ քան զմի օրեան, ապդ-
արարին Սէլիմայ առագանին խոնարհ-
ութեամբ ընդ ձեռն թղթատարի, զի
հաճեսցի արքայ բազմել յոսկի գահն
Սիւլէյմանայ՝ որ 'ի բանակին կայր, և
այնպէս ընդունել զինադակցութիւն զո-
ղականին, և խոստանալ նոցա զարվորա-

կան պարգևան։ Սելիմ եցոյց նախ ըզ-
թագաւորն ուսուցչին իւրում՝ որ կոչէր
Աղաուբրահ, և սենեկապետին՝ որում
անուն էր Լալա Հիւսէյին. այլ նոքա
յաւելորդս գրեցին զկրոն, ոմն ասէր մի
եթէ հանդէս թագաւորելոյն վաղ իսկ
վճարեցաւ 'ի Կոստանդնուպաւլիս. և ոմն՝
եթէ 'ի հնուն յառակս էր՝ օսմանեան
արքայից ՀՀ այլապէս թագաւորել, բայց
անցանելով ընդ մէջ սուսերաց զօրացն
իւրեանց. և Ճշմարտապէս էր առանձն
յայնժամ, այլ ոչ և զարդիս, ուր իրա-
ւունք ժառանգութեան զօրացեալ են։
Ի նմին պահու հարաւ խորանն Սիւլէյ-
մանայ 'ի բլրի ուրեք հանդէպ Պելիրա-
ման, և Սելիմ անդէն եմուտ 'ի նեղբս
իւրովքն հանդերձ։ Զայն իբրև զգաց
վեզիրն մեծ ասէ ցմտերիմն իւր ցՅԻՍՐԻ-
ՄՈՒՆ. «Ահա այս արդարեք են ահա անկար-
գութեան, յորժամ վեզիրն կատարէ
զիւրն պարտիս՝ առաջի առնելով զկար-
ծիս իւր, և թագաւորն խորհուրդ 'ի նոր
ցանել հարցանէ՝ որ անհմուտք են իրաց
պետութեան։ Եւ զի էր թէ խառա-
նայր և թագաւոր զօրականին զարդեան
և զինչ շահ 'ի մեռան Ճառասանաց սե-
նեկապետին»։

Ի վաղիւ անդր մինչև արեգական ըզ-
Ճառագայթս իւր սփռեալ յերկիր, ա-
մենայն բանակն զգեցաւ զՀանդերձ
ազոյ. առագաստն պատատեցին զԳԼԵ-
խովք իւրեանց կերպասս սուտս. ան-

նապահք թագաւորին 'ի բաց էդին ըզ-
փէտու

զգիտակն Սիւլէյմանայ 'ի Կոստանդնուպօլիս, և բաշխել զօրացն պարգևս։ Ի վերջանալն վաշտս հեծելազօրուն բաշխեցան քսան ոսկիք ըստ գլուխ, և առ մին մի յենիչէրեաց քառասուն. ոսկայն ոչչս պահանջէին վաճառն, և 'ի վերայ նորին առանձին պարգևատակս արշաւանին։ Տուաւ նոցա պատասխանի՝ եթէ չէք 'ի բանակին առ ժամայն գանձ բաւական։ Վասն որոյ յաւելան թշուառք նոցա և առանձինք ըստ խրատանէր շատս. և յաւուրն հինգերորդի յուզի անկաւ բանակն 'ի Կոստանդնուպօլիս։

Ի դաշտն անդ Սէմէնտրէի երկոքին գաստուրքն զօրաց Սէվանա Համիտ և Սէվանա Փէրվիզ ատոմ և անոմ թագաւորին գնալով հարուստ ժամն՝ հանդիպանակեցան քաղցրութիւնք ոգի առնել նմա, եթէ քանի ըզձալի լցէ ծշդրիտ պահպանութիւն պատուիրանին ջամպէլոյ զգինի, զոր հրամայեալ էր Սիւլէյման ոչիչայ. այլ Սէլիմ որ գինեսէր յոյժ էր՝ խրոն եհաս 'ի Սէմէնտրէ. ընկէցիկ ոտար զերիսոսին ևս յիշանութեանէ անոմ խրատանց։

Դամանեալ ապա թագաւորին 'ի գիւղն ոչքունի 'ի Հալգալը. մինչդեռ լինէին պատրաստութիւք հանդիսապէս մասանելոյ 'ի թագաւորական քաղաքն, եղին ընդ առաջ նորա սեղապահն Խաքէնտէր փաշա և ծովապետն Փիալէ, և գինուորն Էպիւսիւուտ հանդերձ գա-

սուք գիտնականաց 'ի համբոյր ձեռաց
արքայի։ Ապա 'ի ժամանել հանդիսին
ձայնիւ ցնծութեան մինչև 'ի դուռն
քաղաքին որ կոչի Էմրէնէ գափուսու,
յանկարծակի զկայ առին յառաջն-
թացքն հասեալք 'ի մեկիլեն Շէհզատէ
Ճամիսի անուանեալ, և ոչ ևս խլրտէին.
և Սէլիմ հարկեցաւ ապասել անդանօր
աւելի քան զժամ մի։ Ի հարցանելս
ապարդիւնն եթէ զի՞նչ այն իցէ, ասաւ
պատասխանի. «Այլ խոտոյ կալեալ
ունի զմեռաս գրանն». և առակ էր այն,
և նշանակ ուժգոհութեան զօրականին։
Ապէ ցնոսա էրկրորդ վէզիրն Փէրհէվ.
«Ձէ վայելուչ գործդ ո՛ ընկերակիցք»։
Եւ նոքա ապաստակեցին. «Եւ միթէ կի-
ուլի՞ իցէ ասասանօր»։ Եհար զնա մի ոմն
'ի նոցանէ նիզակաւն և ասպալեաց յե-
րիվարէն, և պաճուճազարդ ապասխոյրն
գլորեցաւ ընդ երեսս գետնոյն։ Մա-
տեաւ ապաչել զնոսա ծովապետն Փիա-
լէ, և զնա ևս հարեալ կործանեցին յե-
րիվարէն ասելով. «Չի՞ կայ մեր և քո
եղկելի նաւապետ»։ Եւ զՓէրհատփաշա
և զերիվար նորին շարաչար հարուածե-
ցին գնասովք հրացանից։ Ապա վէզիրն
Ահմէտ և մեծ վէզիրն Մէհէմմէտ լի բը-
ռամբ ոսկիս Ճապաղեալ 'ի նոսա՝ հա-
զիւ հերձին զնոսա և շուտիպ հորդեցին
արքայի մինչև 'ի դուռն արքունեացն։
Ընդ առեալ ենիչէրեաց զդրուշս գաւ-
թին՝ յափշտակեցին իջուցին յերիվա-

բաց զամենայն զվէզիրսն, կալան զսուսերաց նոցին և զդաստակաց, ածին զնոսա առաջի Սէլիմայ և դոյզին. «Տուր մեզ պարգևս բան նախնեաց սովորութեան»: Յայնժամ ասէ Թագաւորն. «Տուէք ձեզ». և բացեալ զդրունսն մուծին զարքայ դովաբանութեամբ 'ի նեղքս:

Ի վաղիւ անդր որ օր սամանէրորդ էր ասնեանն գեկաեմբերի և ուրբաթ, 'ի զուր ակնկալեալ ինայր ժողովուրդն դնալոյ Թագաւորին 'ի մզկիթ: Այլ 'ի միւս վաղիւն բաշխեցան պարգևքն, և ենիչէրիք ոչ մեկնեցան մինչև առին ոսկիս վաթսուն ըստ գլուխ: Պատուեցան և գիտնականք և իշխանք խիստիւք և յաւելուածովք Թոշակաց, և եղեն փոփոխութիւնք պաշտօնանց. և Փիալէ որ գեռ ևս դարձեալ էր յաղթանակս յարշաւանացն 'ի Քիոս և 'ի Փուլիա, կարգեցաւ ընդ վէզիրս: Իսկ ըստ փոթք ապստամբութեանն Հազիս անդորրացան գլխատմամբ գլխաւորացն 'ի խռովարարս անդ:

Ի միւսում ամին յաջողեաց գեսպանացն Մաքսիմիլիանոսի հասարակ զդաշինս ուխտեալ խաղաղութեան, խոստանալով ամի ամի վճարել զսահմանեալսն երեսուն հազար մաճառ ոսկւոյ՝ որպէս թէ ընծայարեր լինելով: Յաւուրսն յայնոսիկ յԱդրիանուպօլիս էր և Շահգուլի սուլթան կուսակալն Երևանայ գեսպան յարքայէն Պարսից

եկեալ 'ի խնդակից լինել Թագաւորի-
լոյն Սէլիմայ, հարիւր և քսան ազատո-
բերով և երկերիւր հեծելով և չորեքա-
րիւր վաճառականօք, որք առ հասարակ
դիպակազգեաց զարդարեալք էին. իսկ
Թիւ երիվարացն և ջորեաց և ուղտուց
էր ինն հազար։ Եւ ոչ այս բարձեալ
բերէին զընծայսն ազգայի, որ էին խո-
րանք երկու ոսկեձեղուն ասղնագոր-
ծեալք, կապերոք քսան մեսաքսեայք
մեծամեծք յոյժ և ասղնագործք. գլ-
խակքն կերպասք, որոց գինք էին հարիւր
վաթսուն և չորք հազարք ոսկւոյ. ինն
Թամբք ձիոց ակնեակուռք, եօթն գա-
ւազանք արծաթիք, եօթն ասղեղունք
և եօթն կապարձք ակնագործք. կու-
բան մի՝ ձեռագրեալ յԱլեայ, որպէս
կարծէր. տուփ մի ակնոց պատուական-
նաց, երկու մարգարիտք՝ որ կշռէին
տասն մեծեալ կամ քառասուն տրամ,
և զէնք և կարասիք տարաբախտին Պայ-
եզիտայ եղբօրն Սէլիմայ ազգայի։

Շէմսի փաշա կարգէցաւ 'ի պաշտօն
ընդունելոյ զդեսպանն և մուծանելոյ
առ ազգայ, որպէս ընտանի Թագաւո-
րին և այր բանասէզ և հանճարեղ։
Եւ զի 'ի նոյն աւուրս յԱգրիանուպօլիս
եկեալ մտանէին և դեսպանք Գերմա-
նացւոց, Գաղղիացւոց, Լեհաց, և Վե-
նետիկեցւոց, ևս և դեսպանք իշխանացն
Բանուզայի, Մոլդաւիոյ և Վլահաց աշ-
խարհին, Շահգուլի սեպեալ զի ամե-

նեքեան նոքա համակեալ էին յոսկի և յարծաթի և՝ ի հանդերձս բազմագունիս՝ ասէ ցՇէմսի. «Ազդարև զհարսնաձուաց ոմանց թուին սոքա բերել զնմանութիւն»։ —«Այո ասէր, ասէ Շէմսի. սոքա իսկ են զորս ընտրեաց իւր փեսաէրս հարսնն Զալտրբանու (այն է աշխարհն Պարսից)»։ Մինչդեռ անցանէր հանդէպ գեսպանացն Եւրոպացւոց, եռեռս զի նոքա բացմամբ գլխարկաց իւրեանց ողջոյն տային նմա. և չիմացեալ զպատճառսն ասէ ցՇէմսի. «Զի՞նչ այդու կամիցին գոքա նշանակել»։ Եւ նա ասէ. «Յայտ իմն կամին առնել, եթէ պատրաստ են՝ ի գնելըզ գլուխս իւրեանց ընդ ոտիւք մերոյ արքայիս»։ Յետ երթից աւուրց եմուտ առ արքայ։ Խօսեալ սկսաւ Սէլիմ և ասէ ցդեսպանն. «Զիարդ կաս»։ Իսկ այրն խորագէտ որպէս թէ ընդարմացեալ՝ ի սեսիլ շքոյ մեծի արքային՝ ակնկոծեալ էկաց պապանձեալ. և ապա մատոյց զմուզմի իւրոյ թագաւորին՝ յորում կային հազար և հինգհարիւր տոպք բանից հիւսեալք կուսակուութեամբ անմատոյց բառից չափազանցութեան և աւելսիսոս Հանարտակութեան։ Յետ այնորիկ մեծապէս պատուեցաւ Շահգուլի՝ ի թագաւորէն, և՝ ի մեծէ վեզիրէն, և նոքին հանդիսիւ գարձ արար յերկիր իւր։

Յամին 1569 դիպաւ՝ ի Կոստանդ-

նուազելիս հրդեհ մեծ, յորում այրեցան առնքերեսուն և վեց հազար. և զի 'ի թաղն Հրեից բորբոքեալ էր, ենիչէրիք փոխանակ շինուցանելոյ զհուրն, և ևս վառեցին, և զքնակիչսն կոտորեցին։ Սմին իրի ճաքիէր ապա զօրավար ենիչէրեաց, որ սակս խօսմուռեանն չէր պատահեալ անձամբ 'ի տեղւոջն, ընկեցիկ եղև 'ի պաշտամանէն։

Ընդ այն ժամանակս կրկին գործք հոյակապք յիշատակ կանգնեցին Սէլիմայ, և մանաւանդ մեծի վէզիրին Սոգոլու Մէհէմմէտայ խորհրդատուին նորին։ Առաջին, մեծ մզկիթն Սէլիմիյէ հիմնեալ յառաջնում, ամի թագաւորութեան նորին ՅԱգրիանուպոլիս, պատկ հանձարոյ քաջի Հարտարապետին Սինանայ. և երկրորդ, առաջարկութիւն միաւորելոյ զՏոն գետ ընդ Վոլկայի՝ որ է Էթիլ։ Առաջնոյն յաջողակի վճարեցաւ կատարումն. և ընդարձակութիւն գմբէթի նորին կրկին գերկաչափս առաւելու քան զԱյա Սոֆիային։ Բայց ոչ նոյնպէս յաջողեաց երկրորդն։ Քանզի Ջէրքէս Գաղամպէյ քաղաքապետն Քէֆէի երեք հազար ենիչէրիօք և քսան հազար հեծելովք խաղաց յԱժտէրխան, և հնգետասան նաւք ածէին ընդ Ազաս երիս հազար գործաւորս և հինգ հազար ենիչէրիս։ Ամ հնգետասան հազար Ռուսք անկեալ 'ի վերայ գործավարացն ցրուեցին զնո-

սա, և արքանանակք խանին Խրիմու բա-
զում գժուարութիւնս 'ի մէջ ածեալ
խոփանն եղեն գործոյն։ Եւ մինչև
դարձ առնէին Օսմանեանք յերկիրն
Իւրեանց, մրրիկ մեծ յարուցեալ 'ի ծո-
վանն Նաւակոծեաց զբազումս 'ի նոցանէ,
և եօթն հազար ոգիք եղեալ ժամանեցին
ողջամբ 'ի Կոստանդնուպոլիս։ Սակայն
Իւան Վասիլևիչ արքայ Ռուսաց ա-
ռանձին գնապատութեամբ նորոգեաց
զդաշն բարեկամութեանն ընդ արքային
Օսմանեանց։

Աղուագոյնս տիրեցին Օսմանեանք
երջանիկն Աղաբիոյ, այն է Եմին, ուր
ապստամբութեամբ բռնացեալ էին Ա-
բարացիք։ Եւ յաղթականք նոցին եղեն
Սինան փաշա, Պէհրամ փաշա, և քանի
Օսման որդի Իւզուէմիրայ։

Սէլիմ արքայ գնա՛ և ոչ պա-
տանեկութեան գոլով կիրթ էր յոյժ.
Ժակս ազնիւ ըմբռնելոյ, և ակն եղեալ
էր կղզւոյն Կիպրոսի, որոյ գինեաւն
յաճախ զմայլանաքր։ Այլ առաւել ևս
գրգռէր զնա յառաւելն կղզւոյն ապա-
լեզու հրեայն Եռասէֆ Նասի, 'ի ման-
կութենէ հետէ մատրիճն Սէլիմայ, և
կարդեալն 'ի նմանէ գուքս Նաքսոսի
և այլոց կղզեաց Արշիպելագոսի։ Հարկ
էր ապա լուծանել զդաշն բարեկամու-
թեան վենետիկեցւոց, յորոց 'ի ձեռս
էր Կիպրոս յերկերիւր ամաց հետէ. և
'ի նոյն գրգռէին զարքայ բաց 'ի Նասէայ

և Փիալէ ծովապետ, և վալեմի սենեկապետն արքայի Լալա Մուսդաֆա փաշա. զի երկոքին առքս ջանասէր լինէին շնորհս գտանել առաջի Սէլիմայ գործովք ինչ արութեանընդ ծով և ընդ ցամաք։ Իսկ խաղաղասէր վէզիրն մեծ ոխերիմ Ղատեայ թէպէտ և մեծապէս գուն գործեաց խափան գնել իրացն, սակայն 'ի վնասել գենոպէսին զօրինաւորն լինել գաշանցն լուծմանն՝ ոչ ետ կարաց ինչ ընդդիմանալ։ Քանզի այսպիսի խին եռ նա վնիռ, եթէ «Զէ օրինաւոր բարեկամութիւնն ընդ այլազգիս, յորժամ չիք ինչ անսի օգուտ մահմետականաց. և թէ հատատաեալ իսկ ինչ բարեկամութիւնն դաշանքք ուխտից, և ապա 'ի վերս երևեսցի օգուտ ինչ կամ շահ տեսակաւն և կամ առժամանակեայ, հարկ է լուծանել զնոյն 'ի դէպ ժամանակի»։ Յաւել 'ի նոյն Սէլիմ և զպատճառսն՝ եթէ Կիպրոս յառաջ ժամանակաւ ընդ իշխանութեամբ էր տերջանացն Եգիպտացւոց, և հապք նորին 'ի բաժին կարգեալ էին Մէքքէի և Մէդինէի։ Սմին իրի և գեղապանս առաքեալ 'ի Վենետիկ պահանջէր 'ի ծերակուտէն զԿիպրոս, եթէ կամիցին նոքա պահել ընդ իւր զիսաղաղութիւն։ Ծերակոյտն ողջ բանիւք ընդդէմ եկաց առաջարկութեանն իրացն. այլ ժողովուրդն իբրև այնմ իրազգած եղեն՝ քարոզեցան 'ի պատերազմ բարկու-

թեան, և Ծերակոյսն հաղիւ զերծոյց զգեսպանսն 'ի ցասմանէ անտի նոցա՝ փախուցեալ ընդ գուռն գաղանի։

Յաւուրս գարնայնոյն եկ 'ի Կոստանդ. նուազոյց ասղիկ երեքարիւր և վաթսուն նաւուց յերիս հանդէս. միւսն ծովապետէր Փիալէ փաշա, երկրորդին Մուրատ Ռէիս, և երրորդին Միւէզզին-զատէ Ալի փաշա. և զցամաքայինս զրացն զսպարապետութիւն ունէր Լաչա Մուսդաֆա փաշա։

Ի ժամանել Օսմանեանց 'ի Կիպրոս՝ Փիալէ կամէր պաշարել զՖամակոստա, այլ հաստատեցաւ խորհուրդ սպարապետին պաշարել նախ զՆիկոսիա, որ և Լեւքոշէ, յորում կային զօրք Վենետկեցւոց ասան հազար։ Յեօթն գունդս բաժանեաց Մուսդաֆա զիւրսն զարս յիսուն հազար, և Հայկաստեցոյց հանդէպ եօթանեցուն աշտարակաց քաղաքին։ Զհետ եօթն եօթնեկաց պաշարման առան չորեքին աշտարակքն յինն ներորդի աւուր ամենեան անպատմելի, և Օսմանեանք խուժեալ 'ի քաղաքն՝ կոտորեցին յանխնայ զզօրսն և զբնակիչս առ հասարակ. բազում կանայք հոսեցան 'ի տանեաց, բազումք խոչնոցեցին զիւրեանց իսկ զանարգանսն եհար զորդեակն իւր, և ապա զանձն իւր ևս, և այլ ոմն առնացի քաջութեամբ ընթացեալ հուր եհար 'ի վառօդանոց երկուց մեծամեծ նաւուցն

Օսմանեանց՝ որ լի գերեաք և աղախ-
նեաքև ոսկեով և արծաթով ունէին մեկ-
նել 'ի Կոստանդնուպոլիս ընդ այլոց
ուխտաւորաց, և այրեաց զնոսին։
Զաւուրս ութ տեւեաց սիգապին կռուր-
ած և յաւիշտակութիւն քաղաքին, և
եղև թիւ կոտորելոցն քսան հազար, և
երկու հազարք 'ի գերութիւն վարեցան։
Յետ այնորիկ առան և այլ տեղիք կրդ-
զոյն, և Մուսդաֆա փաշա քառա-
սուն նաւս ետի կալեալ անդէն, զայլս
արձակեաց 'ի Կոստանդնուպոլիս։ Պատ-
նէշ պաշարմամբ ձմերեաց առ Ֆամա-
կուսթա քաղաքաւ, որ և Մաղուսա, զի
մի կարասցեն քաղաքացիքն համարս
կերակրոյ գտանել. սակայն նաւք եր-
կուսասան ժամանեալք 'ի Վենետկոյ
հերձին զտորմիղ Օսմանեանց, և մուծին
'ի քաղաքն զօրս և կերակուր։

Որոն եկին հասին աւուրք գարնայ-
նոյ, ժամանեցին գարձեալ 'ի Կիպրոս
այլ ևս ուխտաւն նաւք Օսմանեանց.
կանգնեցան զքաղաքաւն պատնէշք բար-
ձրարերձք ասան. զեռեղեցան հրա-
զէնք ելօթանասուն և չորք ընդդէմ հրե-
գեց աշտարակաց քաղաքին, և սկսան
հարկանել զպարիսպն։ Մարկոս Ան-
տոնիոս Պրոկատին, որ իշխան էր քա-
ղաքին, առ 'ի գիւրագոյնս և անխոցան
մարտս գնելոյ ընդդէմ թշնամեաց՝ հրա-
մայեաց ետ բնակչացն գնալ սիրոիլ յայլ և
այլ տեղիս կղզւոյն ընդ գաղանի Հա-

նապարհս. և մնացին 'ի թմբրդի անդ եօթն
հազար մարտիկք, որոց կէսք Վենետ-
կեցիք էին և այլք հելլենացիք. և նոքօք
հանդերձ զդէմ կալաւ Թշնամեաց ընդ-
ամենս երկուս։ Այլ զի ապառնեցաւ վա-
ռօգն, 'ի խորհուրդ բազմեցաւ Պրակա-
մին յերկարագոյնս ընդ նիզակակից ել-
խանեան, և հատատեաց տալ զքաղաքն
'ի ձեռս Օսմանեանց. և ապրմանեցաւ
եւանել զնաւ պաշարելոցն հանդերձ ըն-
ջիւք իւրեանց անարատս, և մնացելոցն
ոչ մնաց վառանգս կրել ընդդէմ կամ կենաց։
Յերիս աւուրս դառնալոցաւ քաղաքն,
և 'ի ջորդորդումն քաջն Պրակամին ընդ
երիս զօրավարաց երթեալ 'ի բանակն
մատոյց ապարանեալն զքանալիս քա-
ղաքին, և պատուեցաւ 'ի նմանէ։ Նաև
քառասուն մատոյցապարանեալն 'ի վո-
խադրել զբերդականսն և զինչս նոցա 'ի
Կրետէ. և վասն այնորիկ պահանջէր զի
տացի ինքեան 'ի պատանդի մին յերից
ընկերակցացն Պրակամինաց Քուիրինի
անուն։ Այլ Պրակամին չէաւ բնաւ
յանձն. և մերժեաց զքանս ապարա-
նեալն խառագոյնս քան զոր 'ի գէպ
էր 'ի ժամուն։ Ելին կրկին և Մուս-
դաֆիա 'ի սրտմտութիւն բարկութեան
բրդեալ հրամանն եառնէր զնա և զնչխա-
նակիցս նորին զՊաշլանին և զՔուիրինի

1 Օսմանեան պատմագրաց Փրոշոքի գրէն
զանուն զբրանքրին, Ի Խոլին զնա այլ յամա-
Ի խանիոբ, Ի զբանս նորա ցուրբս Ի հաս։

կապեալս առաջի իւրոյ վասնին, և անդ հրամայեաց զերկոսին իշխանանցն սուր անցուցանել, և զՊրոկոպիոսայ հատանել զունչս և զականջս։

Ապա յետ առուրց տասանց նաւուցեալ զնա յանձոս, և թագ ընդ ոտիւքն եղեալ, հրամայեաց բարձրացուցանել զնա մինչև 'ի ծագս կայմի նաւուն, և ապա ինքուցեալ մտել 'ի ջուր. իբրու զի ջահեղձոյց մահուամբ նոյնօրինակ կորուսեալ էր կանխաւ Պրոկոպիոսայ զերիս օտանցիս յիսուն, որպէս ասէ պատմագիրն Ալի։ Ապա եղին յուս նորա կողովս կրկին, որովք տանէր զհող և զքար առ նորոգիչս պարսպացն, և յամենայն նաւագս յորս անցանէր զառաջեաւ Մուսադիայի պարսէրխոնարհել մինչև 'ի գետին։ Զկնիկ այլ ևս անտանելի տանջանաց և գանից ածաւ 'ի հրապարակ քաղաքին, և սպարապետն հրամայեաց մորթեզերծ առնել զնա. զի ասէ. "Որ ելհեղ զարիւն Տաճկաց, պարտ է զի հեղցի քամեցի բովանդակ արիւն նորին"։ Պրոկոպիոն յայնչափ սղէսան ոչինչ անհամբերութեան տալեալ ցոյց, 'ի ձայն բարձր կարդայր զյիսնեներորդ սաղմոսն. և ժամանեալ 'ի բանն, "Սիրտ սուրբ հատատեսցի յիս Աստուած", աւանդեաց զոգին։ — "Ո՞ւր է արդ Քրիստոսն քո" գոչեաց ապարատեսն. և ապա հրամանեաւ փողոսել զերեքարիւր քրիստոնեայսն որ էին 'ի

բանակի անդ, և զոր նաւուք 'ի Կրետէ
շուտ առնէին՝ վարեաց 'ի գերութեան։
Իսկ զմարմին Պրակատինայ եւ յօշ յօշ
ատամանէլ և 'ի շորեսին աշտարակս
քաղաքին վարեալ, և զմորթն յարդալից
շրջեցուցանել առ առակէ ընդ քաղաքն,
որ և ապա եդեալ 'ի բաղանիս ուրեք 'ի
Կոստանդնուպօլիս 'ի նշաւակ քրիստո-
նէից առ ժամանակ մի, ածաւ անտի 'ի
Վենետիկ, և կայ պահի անդ յեկեղեց-
ոջ սրբոյն Յովհաննու և Պօղոսի։

Յետ այնորիկ փոխեաց Մուսդաֆա
զսաստիկ սրբոյն Նիկոդայոսի 'ի մզկիթ,
և զգերեզմանն բացեալ՝ ցրուեաց եւ
հողմոյ զոսկերսն։ և զԿիպրոս կար-
գեաց 'ի հաստ կալուածոց մօր Թագա-
ւորին, և ինքն գարձ արար յաղթանա-
կաւ 'ի Կոստանդնուպօլիս, կորուսեալ
յայնմ արշաւանին յիւրոց անտի ապա
յիսուն հազար։

Մինչդեռ ապարապեան Օսմանեանց
Մուսդաֆա պաշարեալ պահէր ամ-
կաւին զՖամակոստա, ծովապետն
Ալի փաշա և նաւապետքն Ուլուճ Ալի
և Գարակէօզ [1] արշաւեալ բազմա-
թեւամբ նաւուց ապատակէին 'ի Կրե-
տէ, 'ի Զէրիկօ, 'ի Զանթա, 'ի Քէֆալո-

[1] Սոքա էրէոքին ապանիացիք էին ազ-
գաւք 'ի հաւատոցն քրիստոնէութեան, և իւրեր
առաջինն Օքիալի, և երիրորդն Գարա-
գօզա։

նիա, 'ի Լէպանա և 'ի Քուրջոյա։ Մեծ վէզիր Մէհէմմէտ, որ 'ի սկզբանէ հետէ գժկամակ էր ընդ լուծումն ոսխոյ բաբեկամութեան Վենետիկեցւոց, փութայր նորոգել զնոցն և հաստատել վերստին։ Սակայն նոքա միաբանեալ ընդ ազգային Սպանիացւոց և ընդ այլ ազգս սուրբ Լատինոյ՝ գումարեցան ընդդէմ Օսմանեանց 'ի նաւամարտս առ Մեսինա կղզեաւ յամին 1571, յամսեանն սեպտեմբերի։

Եւ նաւատորմին գլուխք էին գուքսն Քուրնեա և սեպուհն Վէնիէր, և Յովհաննէս Աւստրիական, որ և ծովապետ կոչէր բովանդակ նաւահանգիստն, աւելի քան երկու հարիւր նաւուց։ Իսկ Օսմանեանցն տորմիղ երեքարիւր նաւուք կոչէր 'ի Նաւարինս, որ է Էյնէպահտի։ և զօրավարքն նոցին՝ սպարապետն ցամաքային զօրաց Փէրհատ փաշա, ծովապետն Մուէզզինզատէ Ալի, կուսակալն Կարիմագինոյ Ուլուճ Ալի, կուսակալն Տրապօլսոյ Ճաֆէր փաշա, որ էին Խայրէտտինայ Հասան փաշա, և այլ ևս կուսակալք հեղեռասուն։

Ճակատեցան կողմանքն երկոքին առ Նաւարինսայ լուսնանձև կիսաբոլոր հնոգէսք միմեանց։ և յետ սակաւ ինչ լուծեան արձակեաց ծովապետն Օսմանեանց հրեղանօմ մի։ արձակեցին և քրիստոնեայքն, և խառնեցան պատերազմն։ Յարձակեցաւ Ալի գէպ ուղիղ

'ի վերայ ծովապետութեան շնամեաց և մեր-
ցաւ ընդ մէջ երկուց նաւուց նոցին, և
երեք հարիւր ենիշէրիսքն ընդ ժամ մի
ոչՀ մարդ էգեալ կռուեցաւ ընդ զօր
ՅովՀաննու։ Այլ նա իրրև տապաստ անկ-
անէր'ի ոմանք ուստերքսիրնեալ կոչան
Սպանիացիք ինաւն, և մի ոմն 'ի նոցա-
նէ եՀատ զգլուխ կիսակենդան ծովա-
պետին։ Զերբակալ եղեն և նաւք փէր-
թէվայ և Գարակիօզի. սա 'ի կորուստ
մատնեցաւ, իսկ փէրթէվ գոյն մատու-
կաւ Հոգոպրեցաւ 'ի փախուստ։ ՈւրուՀ
Ալի ևեթ առ ժամ մի քաջութեամբ
զգէմ կալեալ աՀուժ թեկ քրիստոնէ-
ից, յետոյ ուրեմն քառասուն նաւս և
եթ նշխարեալս 'ի կոտորածէ անտի է-
հան 'ի ծանծաղ։ Խորտակեցան և ընկ-
ղուզան նաւք Օսմանեանց երկերիւր
քսան և չորք. հրՀիգ եղեն ինեսուն և չորք
և հարիւր և երեսուն նաւք բաշխեցան
'ի դաշնակից քրիստոնեայսն. որպէս և
թնդանօթքն երեքարիւր եօթանասուն
և երեք. և դերիք երեք հազար չորք
հարիւր վաթսուն և ութ. եթիւ մեռ-
ելոցն եղև երեսուն հազար. ընդ որս և
բդեաշիք և կուսակալք աւելի քան ըզ-
սուսն։ Իսկ քրիստոնեայքկորուսին նաւս
հնգեսուսն, և զօրականս ութ հազար,
ընդ որս և քսան և ինն ոգիս յազգաս-
երերոյն Վենետիկեցւոց։ Այլ այն փոքր
ինչ էր առ մեծաւ յաղթութեամբն զոր
կալան. վասն որոյ և կանդնեցին 'ի Պա-

տուա զհոյակապ տաճար սրբուհւոյն Յուսափանեայ, (զի օր յաղթանակին ոմն էր նորին վկայուհւոյ,) և 'ի Վենետիկ մատուռն պայծառ յեկեղեցւոջ սրբոցն Յովհաննու և Պօղոսի [1]:

Ի մուտս ամենեանն գեկտեմբերի ե մուտ Ուլուճ Ալի 'ի Կոստանդնուպոլիս ուխտուն և եօթն նաւուք հաւաքելովք ատոն և անոն: Սէլիմ արքայ կարգեաց զնա ծովապետ, և անուանեաց զԳլուճ Ալի. և հրամայեաց նորոգել անդրէն զառսիոն, և յոտին կացուցանել բան առաջնոյ տարազուն: Անդէն ձեռն 'ի գործ արար մեծ վէզիրն Մէհէմմէտ ընդ Գլուճ Ալեայ 'ի կատարումն հրամանին. ընդարձակեաց և ետ զնուագարանն և յաւել յայն այլ ևս ուխտ նաւակայս կամարակապս, և 'ի նմին ևեթ ձմերան կառոյց նաւս աւելի քան զհարիւր և յիսուն: Ասէ ծովապետն զՄէհէմմէտ. «Դիւրին իմն է նաւս կառուցանել արշաւի և կամիջիսք. այլ յանհնարին թուի ինձ պատրաստել երկերիւրնաւուց խորիսխս կարելորս հինգհարիւր և կառանս

1 Զայս ամենայն մանրապատում արարէալ Ն Քէոմիէպ Զէլէպի յիւրում մատենին. ընդ ինքն արիանէ Բուլանդսի զծովապետին յամառութեամբ. փանդէ այլ էր, ասէ, ամբարտաւան և անհնազանդ պապէրազի, և ալ ինչ ուանիդիր լինէր ինչ ինչ ինքն Ալի:

և մարուխա և որ այլ ինչ կահք էին ոմ-
ոանիք 'ի սուղ Ժամանակին։ Պատա-
խանի եւ ետուն Մէհէմմէտ և ասէ. «Այս
ինչ յայտնի լոցի քեզ իշխանդ, եթէ
այնչափ է զօրութիւն և փարթամութի
գրանս մեծի, զի կարող է արծաթիս յո-
ւինել քեզ խարխանս որչափ և ախոր-
ժեացես, և մարուխս մեռաքեայս, և ա-
ռաջատաս կերպասիս. յինէն խնդրես-
ջիր գու որ ինչ ախոյն էցէ առ մէն մի
'ի նաւուցդ»։ Եւ Գէլէմ Ալի խոնարհ-
հեալ միջոցք շատի, և զձեռն իւր զերկ-
բաւ բերեալ, գոմէաց զմէզին և ասէ.
«Քաջ իսկ գիտէի եթէ կարող է տէրդ
իմ յանթերի կատարումն իրացս»։

Զայս ամենայն ահեղ պատրաստու-
թիւն տեսեալ Վենետիկեցոց՝ փութա-
ցան խնդրել զհաշտութիւն խաղաղու-
թեան. և ասէ Յոգոլուն ցդեսպանն նո-
ցա. «Տեսանես ապաքէն եթէ որպիսի
ապութեամբ քաջանամք մեք և զինի
պատրաստեան, և թէ քանի մեծ է
խոյին ընդ մեզս և ընդ ձեր խորտակու-
մին։ Մեք առատամբ Կիպրոսի՝ զբազուկ
ձեր զմի հատեալ ընկեցաք. իսկ գուք
հարուածով նաւատորմին մերոյ զմ-
բուռս մերատիրեցէք։ Բազուկ հատեալ
ոչ եւ ածէ. այլ մարուք գերծեալք թան-
ձրագոյնս բազքոջենն»։ Եւ ոչ ընդու-
նայր ինչ էին պանծանքն։ Թուլացան
անկան 'ի զօրութենէ և գաշնակից քրիս-
տոնեայքն, և երկպառակեալ յիրեար

նրա՝ ոչ կարացին երեսել անգամ ընդ-
դէմ երկերիւր և յիսուն նաւուց՝ որովք
էլ Գէլէմ Ալի՝ի Կոստանդնուպօլսոյ և
գարձաւ անդրէն։

Եւ Վենետիկեցիք ինդրեալ կալան
զխաղաղութիւն այսու պայմանօք, զի
հատուցին Օսմանեանց զծախս պա-
տերազմին Կիպրոսի երեքհարիւր հա-
զար ոսկիս՝ի միջոցի երից ամաց. զի յա-
ւելցին՝ի տարեկան հարկաց հինգհարիւր
ոսկիս Զանթայի այլ ևս ոսկիք հազար.
և զի սահմանք Վենետիկեցւոց և Օսմա-
նեանց՝ի Դարմատիա և յԱլպանիա բան
առաջին կարգացն կացցեն մնացին։
Թուէր իմն այնպէս, եթէ Օսմանեանց
ոչ կարէաք զյաղթութիւնն առ Ղաւ-
պակաւ։

Զայնս ժամանակս Յովհաննէս
Աւարիական սպանիացի նաւատորմ-
ին առեալ էր անդրէն՝ի ձեռաց Օս-
մանեանց զԹունուզ քաղաք Կարթա-
գինոյ։ Խաղաց անդր Գէլէմ Ալի էր-
կերիւր և հինսուն նաւով և քա-
ռասուն հազար զօրօք, որոց սպարա-
պետ էր Սինան փաշա. էառ զԹունուզ
աւարաբար, որպէս և զամենն Հայդիւ-
վասյեան երեսունօրեայ պաշարմանն. ան-
կան՝ի սուր Օսմանեանց Սպանիացիք
հինգհազար, և երկու հազարք՝ի գե-
րութիւն վարեցան. առան և թեղա-
նօքք երկերիւր և գրօշք երեսուն և ե-
րեք։ Յայնմհետէ և Թունուզ ընդ Ալ-

Հէրեայ և Ցրապօլայ եղև մի 'ի կուսակալութենէն Օսմանեանց։

Այլ ամ որ վերջին էր կենացն Սէլիմայ, յաճախութիւն յոյժ էր գեսպանաց խուռն գիմելոց յամենայն դոցն։ Սկսաւ թեանց Եւրոպայ 'ի Կոստանդնուպօլիս. զորոց զպատճառս չէ սեղեալս մանրամասն կարդել. սակայն առ հասարակ 'ի խնդիր խաղաղութեան և հզօր թեարկութեան մեծի արքային Օսմանեանց յանկէին ամենայն բանագնացութիւնք նոցա։

Ի նոյն 'ի վերջին ամս Սէլիմայ պատահեցին և դէպք մեծ, զոր սովոր են պատմարանք Օսմանեանց գուշակս հանել մեծամեծ պատահարաց։ Քանզի էրեկեցաւ առաջ մի գիսաւոր. ապա եղև 'ի Կոստանդնուպօլիս սատանութիւն մեծ, որով կործանեցան տունք շրջակայ հարիւր. և 'ի Մէքքէ յարուցեալ հեղեղ մեծ՝ հարկեցոյց զուխտաւորսն ընդ չուր առնել զմատոյն շուրջանակի ըղձելապէս։ Այլ առաւել քան զայսոսիկ ամենայն տիրեցոյց զարքայ հրդեհն բորբոքեալ 'ի խոհանոցի արքունեաց իւրոցն։ Զարդուշակ հանարէր նա զարկածն։ Քան որում և առաջինն Սէլիմ հաւն իւր յետ այսպիսում հրդեհի պատահելոյ յԱղբիանուպօլիս՝ վճարեալ էր 'ի կենաց։ Յաւել զարմանութիւն նորին և մահ գենդերմին Էմիրսիուսայ, որ ընդ ամս երեսուն ներցուկ հաստատութեան լեալ էր սկսութենն։

Յետ ոչ բազում ինչ աւուրց կատարեցաւ շինուած բազանեաց ինչ յարքունիս, որ կոչեցաւ Գուռուր հատամ. և զի ցանկալ որմոցն՝ շոգաւ անդր Սէլիմ արքայ. և գայթեալ անկաւ 'ի ստրծուռ յատակն կՃատալս, որ աւելի քան Թացեալք էին առ որմոցն խոնաւութեան։ Ընդէն վաղվաղակի բարձին զնա և հանգուցին 'ի մահիճս. այլ նա ընթռնեալ 'ի ուենդէ՝ մեռաւ յետ աւուրց մեռանելոց յերկուսանեն ըստգի աւուր ամենայն գեկտեմբերի, Թագաւորեալ ամս ութ։ Եւ էին նորա որդիք հինգ. Մուրատ, Սիւլէյման, Մուսդաֆա, Ճիհանկիր և Օսման. և դստերք երեք. Իսմա սուլթան կին մեծի վեզիրին Մէհէմմէտայ, Ճէվհէր սուլթան՝ որ ամուսնացեալ էր ընդ Ծուվալլին Փիաչէի, և Գոգիմէ սուլթան՝ որ ապա առաւ 'ի կնութիւն Սիաւուշ փաշայի։ Իսկ ըստ նեկարագրի կերպարանացն միջահասակ էր ասեն, ատամունք, լայնաձակառ, կապուտակն, շիկամորուս, կանգաղախոս, բարձրապարանոց, և քաջարարուկ։

Առաւեր յուշ լինի 'ի կարգոյ, զի մեծ վէզիրք ութ, և այլ աւագագունարն որ կացին առ Սիւլէյմանաւ և առ Սելիմաւ, ուրացեալք էին 'ի քրիստոնէութեան կրօնից. այս ինքն են Խալրահիմ. Խասիմ Սիւլէյման. Ալյաս. Լուգֆի. Ահմէտ, Սէմիզ Ալի. Փերհատ Հերսեկ

օղլու և Տուզաքին օղլու, որ առնա-
ւուք էին յաղդէ: Ղիւսմէտ և Եղբայր
Նոյա Սինան, Ֆէրհատ, Խային Ահմէտ,
Տաւուս Փաշա և միւս Սինան փաշա
խրուամբ: Սոգոլլու Մէհէմմէտ, Գա-
ղրա Մուսդաֆա, Խոսրով Լալա Մուս-
դաֆա փաշա և այլք բազումք պոռնա-
ցիք, և Հասան և Ճաֆէր ռուսք:

ՍՈՒԼԴԱՆ ՄՈՒՐԱՏ Գ.

Մինչ զեր հրապարակեալ մահուն Սելիմայ՝ եհաս 'ի Մագնեսիոյ անդրանիկ որդին Մուրատ քան և ութամեայ երիտասարդ միջահասակ, թաւայն, շիկամորուս, վոխս մարմնով և արժգոյն գլուխք։ Յանցանել իւրում ընդծուին՝ այլայլութեան գիպեալ, իբրև էլ յամին ծովուն մերձ 'ի պատշգամն Պայէզիտայ արքայի՝ հրամայեաց ջուր ածել զի լուացցի, և առ 'ի չգոյէ անոյշ ջրոյ՝ առ ժամն ծովայնոյն վարեցաւ. սակս որոյ ապա շինեցաւ անդէն աղբիւր ջրոյ։ Եւ քանզի զհասարակ գիշերաւ ժամանեալ էր, մեծ վէզիրն Սոգոլլու Մեհեմմէտ եւ ընդ առաջ նմա ջահիւք և լապտերաք, և ամենայն յարքունիս։ Ի նմին գիշերի կատարեցան հնգէքին եղբարքն նորա, և ընդ այգն բազմեալ 'ի գահն արքունի՝ ընկալաւ զմեծարանս առաքելոյն և գիտնականաց, և ապա ոգեոյն էառ ամենեցուն և մեկնեցաւ 'ի կանանոցն։ Մինչդեռ խչիանք նեղբիներացն ձեռնամուծ կային առաջի նորա, ասէ ցնոսա. «Քաղցեալ եմ ես, ածէք

ինձ զինչ ուսեցեմ։ և ասիցէ քան
ընդարձոյս սովորութեան իւրում շա-
բաթուշակ հանարեալ զայն քան, զնոյն
և պատճառս հանարեցաւ սովոյն գի-
պելոյ 'ի նմին ամի։

Յետ այնորիկ կատարեալ արքայիս
կարգ թագաւորն հօրն և զերդարցն միան-
գամայն, բաշխեաց զօրականաց զսովո-
րութեան բաշխումն առատապէս, մինչև
անկանել ենիչէրեաց եւ թեօմենհարիւր
հազար ոսկւոյ, յիսուն ոսկի քան գլուխ։
Եւ 'ի հինգերորդում աւուր յաւելու-
րի երթեալ յԷյուպ՝ ած ընդ մէջ զաւ-
սերն արքայական, և արձակեաց 'ի Ռու-
մելի հիսարէն յազատութիւն ապա շր-
ջիքհարիւր։

Յաւուր միում մինչդեռ անցանէր
Մուրատ արքայ նուագելոն մօտ քերե-
լով առ կապէլայիս յաւնի ուրուք, ե-
նիչէրիք ոմանք զուարթացեալք 'ի գի-
նւոյ յանդգնեցան ցուցանել նմա ընդ
պատուհանն զրաժակ գինւոյն՝ զոր առ
նորին կենդանութիւն քամէին։ վասն
որոյ և նոր 'ի նորոյ հրամարակաւ ար-
գել թագաւորն զարբու�գինւոյ։ Ամ
նոքա ամբոխ եւ արարեալ յետաւուրց
հասան 'ի տրուանջ, և սկսան թշնամա-
նել զարքայ և զվէզիրն մեծ։ Յայնժամ
քարոզ կարգաց ընդ քաղաքն՝ եթէ թո-
զուցին լոյսն զօրականաց գինարբու-
լինել, միայն թէ մի յուզեսցեն զամենայն
շիտիթց։ Յորմէ՝ յայտ խակ է և նուա-

զուսն խշմանութեան վէճերին մեծի, և զօրավարին Ենիչէրեաց. և զայսմանէ յերկարագոյնս ամբաստանելին պատմութեանք ժամանակին։

Սովորական թշնամոյն արձակելոց շուրջանակի առ պետութիւնս Եւրոպայ 'ի ծանուցանել զամբարձումն Մուրատայ 'ի գահն հայրենի, զեսպանք ամենայն ուստեք, 'ի Վենետկոյ, 'ի Գաղղիոյ, 'ի Լեհաց, յԱստրիոյ, և յայլոց պետութեանց ածէին հետ զհետէ պարգևք հանդերձ պատասխանեաց, և էլ ևս զմիմեանսքն առնէին 'ի հաշտ պահել ընդ իւրեանս զքուռն զօրութիւն Օսմանեանց, և թիկունս անդամ առ 'ի նմանէ գտանել ընդ դէմ կրեաց։ Այլ ամի դողումն ունէր զծովեզերեայս Խաղիոյ և Սպանիոյ առ հասարակ յերանել ծովապետին Օսմանեանց Գէլեմ Ալի փաշայի հարիւրաւոր նաւուք 'ի Բիւզանդիոյ յասպատակել ուրեք ուրեք, և 'ի գառնալ անդրէն։

Այլ այս ահեղ զօրութիւն Օսմանեանց ոչ սակաւ նուազումն կրեաց 'ի նուազել խշմանութեան մեծի վէճերին Սոգոլլու Մէհէմմէտայ որպէս ասացաք, և այն 'ի բանասարկութենէ ոմանց յարգասանելոցն, և 'ի յորդորելոյ կանանցն Մուրատայ, զորոց զբանիւք ցկարէր կամ թէ ցկամէր զանց առնել արքայն. որ և սկսաւ զամենայն ինչ այնուհետև ինքնին վճռել և սակս գուշնա-

քէից անգամ իւրով ձեռամբ հրովարտակս հանել, և զմեռելս ազգաչանաց ժողովրդեանն ինքնին յակն արկանել, մեռելս և ոչ ժամանէր և ոչ զկէս 'ի նոցանէ ընթեռնուլ և բատաչիմ առնել իրաւունս։ Մեռան երկոքին հաստատանք խնամառութեան և զօրութեան վերզկրին մեծի դենպեան Համիտ էֆէնտի և Փիալէ փաշա. այլ կարի վէր խոցեցաւ սիրտ նորա յընկերցին լինել մանրմին իւրոյ Ֆէրիտունայ առենագրին ազգուն յիշատուութենէ իւրմէ յանիրաւի։ Եւ նա 'ի տպանանիլ ջարաչար մահուամբ Մկրտչէլի Կանտակուզինայ յոյն վաճառականին իւրոյ մեծի, որ կոչէր յՕսմանեանց Շէյդան օղլու։ Սակայն 'ի վերջ քան զայս ամենայն ընկճեաց զքաջավատակ այրն մահ Պուսդաֆայի կուսակալին Պուսինայ հօրեղբօրորդւոյ իւրոյ սատյօղ պատճառանօք։ Քանզի պահպանեն վառօդոյ որ 'ի Պուսին քաղաքի՝ բորբոքեալ էր 'ի հարուածէ երկնառաք շանթից. արձակեցաւ անդր Ֆէրհատ աղա 'ի դիմաց ազգքայի պատճառանօք զենելոյ զպատահարն, և յանկարծակի հարեալ ապան զՊուսդաֆա. և կալաւ զիշխանութիւն նորին Խալիլ փաշա սիրելին ազգքայի և սիրելին վերզկրին մեծի։

Էանց 'ի վերայ այնորիկ ամ մի, և յաւուր միում ընդ երեկս մինչդեռ բազմեալ կայր Սոդոլուն յիւրում ա-

ունելիս, մասնաւոր առ նա այր ոմն կենդանաւոր'ի ձև սէրուբինացս, որ և սովոր էր բանզուսմ անգամ առնուլ'ի վերայն գրաման ինչ յողորմութիւն. և որպէս թէ մնասուցանելով նոցա թուղթ ինչ՝ միւսանգ զգաշոյնն 'ի սիրտ նորա։ Ա՛յ անգութ, գոչեաց վերայն. և չէ՞ մնանեալ մերկանալ զսուր իւր 'ի պատենից՝ անկաւ մեռեալ։ Պոռնայի էր այրն որպէս զնաւայլ ոչ ինչ իւիք ազգաւ ասնջանաց հնար էղև որսալ 'ի քերանոյ նորա եթէ յինչ պատճառաց եկեալ ելոյ յոնձիրն. և 'ի ջրոյց երիվարաց ընդ քարշ ածեալ սատակեսցի էղև։ Ա՛յսպէս զբաւեցաւ 'ի կենաց մեծն 'ի վերայս Օսմանեանց Սոգոլլու Դաւիթ Մէհէմմէտ, որ 'ի ջրեքասասն ամաց հետէ հզօր խոհականութեամբ կատարեալ զպաշտօնն մեծ ընդ երիւք թագաւորաց, յետ Սիւլէյմանայ մի միայն պայծառացուցիչ եկաց ազատութեանն ցորչափ եկեաց, և 'ի մահուն իւրում ընդ իւր տարաւ գոգցեաւ զմանն ինչ պայծառութեան նորին։ Եւ կարդեցաւ փոխանակ նորա վերայն մեծ Ահմէտ փաշա։

Ինքնին ամի խորհրդով ուսուցչի թագաւորին, որ էր անուանի պատմագրին Սատէտտին, ատուզագէտ ոմն թագեկատին անուն շինեաց 'ի Ղալատիա 'ի վերնակողմն Դոմիտանէին գիտանոց տորերկրեայ՝ առ 'ի գիտելոյ զատանս զցայգ և զցերեկ. ապա որոյ և անուն-

նէր առնուլ ոսկիս վերցնալոյ։ Այլ որ
թշնամիք էին սաղարդուշակ հմայից, և
մանաւանդ Սամէսոմենայ, շարժեցան
երկնս առ արքայն՝ ձեռամբքս զիրան հա-
մարելով. և հատատանէին զբանս իւ-
րեանց օրինակաւք ոչ առաջեանց կործա-
նելոց զկնի չինուածոյ այսպիսի գիտա-
նոցաց, և խորհանէին զարդն։

Զրկեաք ամաք յառաջ քան զմահ Սո-
գոլեցւոյն եկն 'ի Կոստանդնուպաղս
գեսպան արքային Պարսից Թոգռուլ
խան երկերիւր և յիսուն արամբք, և
հինգ հարիւր ուղտուք։ Ընդառաջեաց
նմա կոչնապետն եւրոպէան երիս
հազար և հինգ հարիւր արամբք յԲանկիս-
սար, և ծովակալ իշխանն ընկալաւ զնա
'ի հանդէս երեսուն նաւուց շքեղ զար-
դարելոց, հանդերձեալ նմա յառաջ
նուէն սեղան մեծաձախ։ Եւ իբրև գնեալ
գեսպանն զառաջին պատառն 'ի բերան՝
արձակեցան միանգամայն հրացէնք ա-
մենայն, և յաշտարակէն Լէանդրի՝ որ
է Գալգալէսի՝ հնչեցին թնդանօթք հա-
րիւր։ Թծուէն զերիս ընկալաւ զգեսպանն
զօրավարն Ենիչէրեաց ճղալէզատէ, և
նիզն կացեալ ընդ ձախմէ նորա, և կոզմ-
նապետն ընդ աջմէ, ածին 'ի պատրաստ-
եալ օթևանսն։ Զառաջոյ կոչմանէ իրա-
զայնն անդրուանքն էին գեղեցիկս զար-
դարեալք, ապա քառասուն Հնդիկք
կամ եթովպացիք գիպակազգեստք։
Զհետոնոցա յիսուն պաշտօնեայք տա-

նաւորք, ապա երեք հեծեալք գօտիս ունելով բոժոժիւք և զանգակօք զարդարեալս, և ապա զինակիրք երեք, մին ըզսուսերն տանելով, միւսն զաղեղն և երրորդն զականակուռ կապարձա։ Իսկ գեսպանն զգեցեալ էր վերարկու կարմիր ոսկեգործ, և արտախոյր բազմագին։

Մուրատ աղբայ քանզի յորս եղեալ էր՝ յապաղեաց զմեռս իւր 'ի քաղաքն զաւուրս հինգ՝ առ 'ի ցուցանելոյ գեսպանին զպերճութիւն օսմանեան արքունեացն։ Ապա ընկալաւ զնոցայն որս զպէսպէս, յորս էին և վարսուն հատորք պարսկական քերթուածոց. վասն մի բաժանեալ 'ի քառասուն սենեակս, որոյ միւնակն ծառ էր համակ ոսկեղէն լի ակամբք պատուականօք. քառասուն կապերտք, և վեց արկեղք՝ յորս էին գոհարք ազնիւք և ոսկեհուռն գիսակք։

Ընդ այն աւուրս մեռանէր Դահմասպ աղբայ Պարսից գեղով մահու, նոյնպէս և որդի նորա Հայտէր՝ որ կամէր թագաւորել 'ի նմին գիշերի. և թագաւորեաց Խանդէլ միւս որդի Դահմասպայ՝ ապանեալ զուխտեսին եղբարս իւր. ապա կայն 'ի լրանալ միոյ ամի հեղձամղձուկ մահուամբ վնարեցաւ և նա յաշխարհէս։ Զայս ամենայն շփոթեաց աշխարհին Պարսից իբրև եռաւս կուսակալն Վանայ Խոսրով փաշա, ապէր արար 'ի գուռն արքունի՝ եթէ ահա գեպ ժամանակ յար-

ձակելոյ 'ի Պարսս. և թէ չէք ասէր այլ
մեզ պատճառք լուծանելոյ դաշանց
ոխոյ բարեկամութեան, այլ վնիռք
այնչափ գենուլուսց ընդդէմ պարս-
կադէն մարդկանն շատ իսկ իրաւունս
թուին մատուցանել։ Ոչ մեզ բնաւ հա-
ճէր վէճերն մեծ, որ էր յայնժամ Սոգոլ-
լուն, ընդ խորհուրդն. այլ զօրացաւ բար-
բառ միւս վէճերաց. և Լալա Մուսդա-
ֆա փաշա կարդեալ ապարատեա ամե-
նայն բանակին, էառ ընդ իւր հինգ հա-
զար ենիչէրիս, և զգունդս հեծելազ-
րուն, և զքարշուանս յասիական գաւառ-
ակուց իւրեանց զօրաք, և չուս արար 'ի
Վրաստան կոյս։

Յայնժամ և Թոգմակ խան դեսպանն
Պարսից՝ ապարատեա կարդեալ պարս-
կական զօրացն՝ ելհարց նախ զքաղաքս
ուրս արշաւանին, և ապա միանցաւ երե-
սուն հազար զօրաք 'ի սահմանս Օսմա-
նեանց։ Մուսդաֆա յղեաց նախ առ
Թոգմակ թուղթ ի թշնամանաք. այլ
'ի Հակառամարտին առ Զրլաղ ամբ-
ցաւ 'ի Վրաստան՝ բազում առաւելք
զիրարձ էառ քաջութեան առնն. և թէ
ակն ի իւր կալեալ էր զյաղթութիւնն,
ասկոյն արձակեաց առ Թոգմակ խան
այլ ևս թուղթ հակառակ առաջնոյն
գրեալ բազում մեծարանաք, և թելա-
դիր լինէր նմին գալ 'ի հնազանդութիւն
թագաւորին Օսմանեանց։

Տիրեաց ապա Մուսդաֆա փաշա բա-

վանեցակ աշխարհին Վրաց, յորում ու-
րեք բանեալ ընդ կուսակալս Պարսից,
և հարեալ զնոսա։ Էառ և զՏփխիս, և
կրկին եկեալ ելս 'ի քաղաքին 'ի ճգնիթ
փոխեալ, ամենայնով և նա զբերդսոյս
երկրին. և բաժանեաց զՍ բաներն 'ի
չորս կուսակալութիւնս։ Կուսակալ
Շիրուանայ կարգեցաւ Խոսրովիր Օս-
ման փաշա, Տփխիսայ Մէհէմմէտ փա-
շա, Կարսեցոյ Ալիքանդր կամ
Ալիքանդրիկ իշխան վրացի, և Սո-
խուրայ Հայոսէր փաշա։ Եւ ապա
առեալ զայլ ևս ամուր ամուր կող-
մանս վրասանն աշխարհին, գարձ ա-
յրար ապարատեան հանգերձ ամենայն
բանակաւն ձմերել 'ի Կարին յետ հա-
րիւրն և երեսուն և հինգ ամեայ բանակ
հարկանելոյ յուսմանեաց արշաւանին։
Ընդ հաւ նա զամբ յաղթանակի կու-
սակալին Շիրուանայ ընդդէմ Պարսից-
զի Օսման փաշա եռօրեայ ճանապարհ-
մարտիս խորտակեաց զՊարսս առ Էրեշ
բերդաւ, ենդզակակցութեամբ Ալիքան-
դրի եղբօր իսանին Խրիմու։ Ալ չեւ էր
հասեալ առ Օսման խրատուսակսն նա-
մակի հրամարտակին՝ յորմէ հանգա
Մկրտչ արքայորդին Պարսից ընդ մօրն
իւրում, որ առնացի քաջութեամբ ու-
նէր զսանձ պետութեանն փոխանակ
առն իւրոյ Խիւսրովնանի կնոջ չափ
կուրացելոյ, խաղաց 'ի Շիրուանայ Էր-
բիշ, և հար զԴայդաս զկուսակալ Կար-

նոյ. և զԻբրահիմն Օսման պաշարեալ
'ի Շիրուան, ձերբակալ արար զԱմիլ
քէրէյ, որ աճապարեալ էր յօգն Օս-
մանայ։ Իսկ Օսման ուրի հասեալ ընդ
մէջ Թշնամեաց անկանէր 'ի Դարբանդ,
և անդ անցուցանէր զմեռաստշունչ ձմե-
ռանին։

Դարձեալ և սպարապետն Մուսդա-
ֆա փաշա 'ի քաղաքին Կարնոյ կացեալ
'ի ձմերոց՝ կառոյց 'ի հրամանէ Մուրա-
տայ սրբոյն զբերդն Կարուց, որոյ քառա-
սուն հազար գինկ էր ջրմի շրջապատին։
Ինքին ձմերան սով սասանիկ եղև 'ի Տրփ-
խիս սակս պաշարման քաղաքին 'ի Պարս-
կաց, և կուսակալն ինքնին առ 'ի կարող
լինելոյ գտանել զոգեպահիկն անձին
իւրում՝ և իւրոցն ծախեաց սակիս մի-
սուն հազար. մինչև ծովակալն Գըլըճ
հասոյց ընդ Տրապիզոն հանդերձ կե-
ռակրաց, և Հասան փաշա որդի Սոգոլ-
լու Մէհէմմէտայ ժամանեալ յօգնու-
թիւն պաշարելոցն՝ վանեաց զզօրս Պարս-
կաց։

Ի մեղմել փոքր մի սասկութեան ո-
գոյն Մէհէմմէտ քէրէյ հան Խրիմու
և հաս բազմաձեռն գնդաւ 'ի Դարբանդ,
և Օսման փաշա նոսին հանդերձ սա-
պառակեաց անդրէն յերկիրն Պարսից
մինչև 'ի Շիրուան. և 'ի գտանեալ հանին
միւսանգամ 'ի ձմերոց յաշխարհն Իբ-
հանդրեաց Օսման 'ի մեծ գրանէն զօրս
'ի Թիֆլիս։ Յայն միջոց ժամանակի

մեռաւ և մեծ վէճիւն Ահմէտ զկնի վեց-
ամեայ իշխանութեանն. և Սինան
փաշա ոմերիմ թշնամի ապարապէտին
Մուսդաֆայի այնչափ ինչ հնարս հնա-
րեցաւ, զի արքայ հրամայեաց նմա դառ-
նալ դալ 'ի Կոստանդնուպօլիս: Ծանր
էր Մուսդաֆայի թերակատար թողուլ
քանել զյաղթանակն. այլ յոյս ակն-
կալութեան յաջորդելոյ մեծի վէճիւն
Ահմէտայ՝ յոր ճգնէր նա 'ի քառասուն
ամաց հետէ, ձեռեաց զնա 'ի թագա-
ւորական քաղաքն. սակայն 'ի զուր: Զի
ոմերիմն իւր Սինան ոչ միայն ապարա-
պէտ փոխանակ իւր կարգեալ գիմէր
յաշխարհն Պարսից, այլ և զկնիքն ար-
քունի նա ընկալաւ յուզլոջ. և Մուս-
դաֆա կամ առ զայրուցս արտին իւ-
րոյ հիւանդացեալ, և կամ գէղ մահու
արբեալ կամովին, որպէս ասեն ոմանք,
զրաւեցաւ յաշխարհէս:

Սինան փաշա հասեալ բանակաւն իւ-
րով 'ի Տփխիս՝ բարեկարգեաց զիրս իրս
աշխարհին. այլ իբրև լուաւ զդալուստ
արքային Պարսից վասնաւն հաղարաւ
'ի վերայ իւր՝ մեկնեցաւ անտի և ձմե-
ռեաց 'ի Կարին: Եւ 'ի սկզբան ամին միւ-
սոյ հրաման դարձի խնդրեաց յարքայէ,
և ուղևորեալ 'ի Կոստանդնուպօլիս՝
եմուտ անդր երեքհարիւր վասնաւն և
հինգ արամբք. զի և գերապանք Պարսից
ասէպ ասէպ եկեալք առ արքայ՝ գիւ-
րել թուէին զչաւիղս հաշտութեան՝ զի-

ջանեալով 'ի պատանեաց Օսմանեանց։
Սակայն Մուրատ արքայ իբրև եառաւ զի
վերջին 'ի նոսա Խաղրահիմ անուն քան-
անխոնարհելի ոգեալ է 'ի քանս իւր,
հանդերձելով զհաշտութիւն այսու պայ-
մանաւ՝ զի սահմանք երկաքանչիւր պե-
տութեանց կացցեն մնացեն որպէս յա-
ռաջ քան զպատերազմն, 'ի պտմանու-
թիւն բարկութեան բորբոքեալ արկ ըղ-
դեապանն 'ի քանս, և զորս ընդ նմայն
էին մատնեաց 'ի թիավարութիւն, և զնա
ինքն զՍինան ընկեցեալ յիշխանութե-
նէն՝ կարգեաց 'ի տեղի նորա զՍիավուշ
փաշա։

Իսկ պարսկական պատերազմն ապա-
բարեաւ կացեալ կոչնապետն Երա-
պետն Ֆերհատ փաշա, էառ ընդ իւր
վանատուն հազար Հնդիկս, և երեքարիւր
հրազէնս, ոսկի և արծաթ բազում, և ա-
ղուեստս Ճարտարս ոսոն հազար
'ի կառոյցս բերեալ Երևանայ, զոր և
կատարեաց հոյակապ 'ի քառասուն և
հինգ տարի։ Ի նմին ժամանակի այլք
'ի զորավարաց արշաւեալ 'ի սահմանս
Պարսից աշխարհին՝ բազում այն էր զի
յաղթական գոսն քան յաղթեցան։
Ընդ սոսն քաջութեան մեծի եմեալ 'ի
սոսս արքն Օսման Խազէմիր՝ ապա-
տակեալ 'ի լեռնակողմանս Կովկասու։
Զի 'ի նմին ամի եհաս նման յոգնութիւն
և հոյսեր փաշա մեծաւ կազմութեամբ
և սուսարագունդ բանակաւ 'ի Քէֆէ,

և անսի յետ եռամեայ սաստանակիր ուղղութեան ընդ անմարդի անապատս ժամանեաց ի Դարբանդ, որ է Դուռն ծովայ։ Ելին ենդակացութեամբ կալաւ Օսմանն յաղթութիւն մեծ ի վերայ զօրավարին Պարսից Խանամ գուրի խանին Գանձակայ, որ յիւսուն հազարաւ յարձակեալ գայր ի վերայ Օսմանեանց։ Սոքա արիաբար մարտս եղեալ կռուեցան զօրն ոսկոյն և զդիշերն ոսկոյն, և ընդ այդն հալածեցին վանեցին զՊարս առ հասարակ, և հասին մինչև ի Շապուրան և ի Շամախի։ Զայսոքիսակ ինքեալ Օսմանայ զպերճ արշաւանսն, և թող կուսակալ կողմանցն զՃաֆիկը, և ինքն դարձ արար ընդ Խրիմ ի Կոստանդնուպաւլիս։

Մեծաւ զինվամբ պատուանիրեալ Մուրատ արքայ զարդիւնական զօրավարն և առ իւր բազմեցուցեալ ի պատուոյ դամի նորում ի ծովեզերին՝ եւ նոնա մի առ մի զուցարանեալ զոր ինչ միանգամ գործեալն էր։ Ապա գովեաց զնա և օրհնեաց, և ինքնին իւրով ձեռամբ եդ ի գլուխ նորին զկրկին փեսուրա ակառակուռ զարդարեալս, զոր ունէր ինքն ի գլուխ իւր. ած նոնա ընդ մէջ զիւր իսկ զուռանին ակառակաւ. և հրամայեաց հաղորդելոյն մեծի, և նոա հանեալ զՕսմանն արտաքս՝ զգեստաւորեաց զնա արքունական զգեստուք յոտից մինչև ցգլուխ, և ած անդրէն ի նեղբն։ Ընդ

ժամս չորս ձգելցան զրուցասրութիւնքքն. և յետ երից եօթնեկաց ընդարձակ Օսմանայ 'ի վերջոր մեծ՝ հանգերձ կրնքաւն արքունի ընկալաւ և զպաշտօն ապարդարութեան 'ի վարձ վատակոց իւրոց, և 'ի բուռն հարկանել 'ի նոր արշաւանս յԱղուանսն աշխարհ. թէպէտ և թշնամիք իւր և նախանձորդք ձգնէին յաչաց հանել զնա թագաւորին, սակայն էթէ քանզի չէ նա 'ի բնէ որդի առն քրիստոնէի, վասն որոյ և չկարէ իսկարհ հպատակութեամբ ծառայել պետութեան. և թէ գինեսէր է, և թմբրադեղոյն ափիոնի անձնատուր:

Ընդ այն ժամանակս հեղեղք անձրևաց ողողեցին սատկապէս զՔեսպին 'ի Մէքքէ քաղաքի, մինչև ծածկել ջուրց և զքարն սեղրակ. և Մուրատ արքայ 'ի գարնան ելեալ ցոյց սուրբ անդր ոսկիս հարիւր և տասն հազար:

Դարձեալ և 'ի գրդռութեանց գիտնականին ուրուն Ալպիւքէրիմ կոչեցելոյ հրամանս էր արքայ փոփոխութեան ընելոյ 'ի սարդ գլխարկացն Հրէից և Յունաց և Հայոց: Իբրու զի գլխարկք նոցին գունով ևեթ զանազանեին 'ի փակեալոց գիտակացն Տաճկաց, Հրեայքն արմենջագոյն պատատեալ պատատս, Յոյնք կապուտակ, և Հայք ծաղկանկար: Եւ հրամայեցաւ ոգանել ամենեցուն սոցա գդակս մեծամեծս 'ի շուխայէ, և գոյնն պատատս զնովաւ-

այլ նոքա յետ սակաւուց քառասուն
կամ յիսուն սակիս հաստատեալ զեր-
ծան՝ի նեղից գլխատոցաց անտի։ Թշնա-
մի էր Ապուխլքէրիմ առանձին և կապ-
կաց. զորս ետ սպանանել. ընդ այս գայ-
թակղեցին և նոքին ետ Օսմանեանք, և
անուանեցին զնա Մայուանքէշ էֆէնտի,
որպէս թէ Կապկահաղած։

Յամին 1583 կատարեցաւ՝ի Կոս-
տանդնուպոլիս հանդէս թլփատութեան
արքայորդւոյն Մէհէմէտայ։ Եւ մի-
ոք ծախեցաւ՝ի պատրաստութիւն հան-
դերձանացն, և արդիւնքն ըստ նմին տա-
բաղու մեծաշուք յոյժ եղեն, այնպէս
զի չեք ուրեք երբեք լեալ հանդէս այն-
պիսի՝ի պետութեան Օսմանեանց։ Թա-
գաւորք ամենայն հրաւիրեալք՝ի Բիւ-
զանդիոն, արձակեցին անդր զդեսպան-
իւրեանց բազմապատիկ արքայական
ընծայիւք. և Ճարտարք ամենեքեան զա-
մենայն Ճիգն իւրեանց թափեցին՝ի զար-
դարանս հանդիսին։ Սատանայ նենգեա-
ցեալ մեզ շատ մատնիս պատմարանել
սակաւուք զհանգամանս հանդիսին.
քանզի ոչ սակաւ սատար լինի ցուցա-
նել ընթերցանելեացն զմեծութիւն և
զշքութիւն օսմանեան պետութեան,
թէ քանի իրաւամբք ահարկու լեալ իցէ
ամենայն ազգաց. որպիսի Ճոխութիւն և
փարթամութիւն աւագանեաց, և զինչ
աշխատանս բարգաւաճանացն Ճարտար-
արուեստս ձեռագիրացդ ժամանակին։

Զխարձակարանն մեծ տեղի էր հանդիսին չորեքհարիւր քայլ յերկայնութիւն և հարիւր 'ի լայնութիւն։ Ի վերջ նակոշին հրապարակին կանգնեալ կայր խոհարանատխտակագործ քառակուսի հարիւր քայլ 'ի մեծութիւն, և յապարանս Խարտհիմայ պատրաստեալ էին պատշգամք վասն թագաւորին և գշխոյից և արքայորդւոյն։ Սորին առաջի ապարանիցն կառուցեալ կայր շինուած երկայնաձիգ եռայարկ, որոյ ներքնատունքն 'ի սէտս դեսպանացն Եբրայեցոց կարգեալ էին, միջնատունքն յաղագս պարտականն պաշտօնէից, և վերնատունքն տակս վէգիրաց և կողմ նապետաց և կուսակալաց։ Ի հանդիպոյ ապարանիցն Խարտհիմայ՝ ուրանօր կայ արդ մզկիթն սուրբն Ասմէտ, կային դասք երաժշտաց և հարսանեկան ընտանեաց։ և առ նորօք խոնարհագոյն բարձրաւանդակ մեծաշուք վասն գեսպանին Պարսից, և առաջի նորին վասն ընդարձակ՝ յորում օշարակք և շաքարեղէն յօրինուածք ազգի ազգիք։ Ի հրապարակամիջի անդ կանգուն կային ձողք բարձրաբերձք կրկին՝ ունելով 'ի գագաթսն մի մի ջահ մեծ և լի բիւրաւոր կանթեղաք, զորս 'ի գիշերի ինքնագանեին 'ի խոնարհ։ Հոգև խնամք կարգաւորեմեան հարսանեացն առանգեալ էին 'ի կողմնապետն Եբրայեցոյ Բարահիմ փաշա, ուստեղեաց և ընտանեաց

'ի կոչնապետն Ասիոյ ճաֆիէր փաշա, և շինուածոց 'ի ծովապետն Գ.ԸԼԸԾ Ալի փաշա. և հինգհարիւր ջրացանք կարգեալ էին 'ի ոչխաս մաքրութեան հրապարակին. որք և զգեցեալք ծաղրական ինն տարազ զգեստուց 'ի կաշւոյ յօրինեալոյ՝ ունէին 'ի ձեռս իւրեանց և ոչխս ինն յայծակաձէ՝ և հարկանէին նոքաք զաղմկարարս. և զօրավարն նոցին հեծեալ'ի վերայ էշոյ՝ խաղալիկ էր ամբոխին:

Յառաջնում առուր ամենեանն յանդիման էլ աղքայ և ապա աղքայորդին յարքունեաց անտի գնալ յապարանս Խալրահիմոյ: Յառաջընթաց լինէին նուիրակք գիպակազգեստք, և այլ պարատականքն զօրավարքն. ապա գնային ջահք հարսանեկանք քսանիւ չափ, յորոց ոմանք քսան գրկաչափս էին 'ի բարձրութիւն. և բարձեալ տանէին զտասն ութսուն ենիչէրիք: Աղքայորդին զգեցեալ կերպասակարմիրագոյն՝ յորոյ վերայ գործ էր ոսկեկար հինգ մատնաչափ 'ի թանձրութիւն, ունէր 'ի գլուխ իւր կրկին փեսուրս ականակուռս, յաջոյ ունէին իւր յանկինն մեծ, 'ի ձեռին իւրում զմրուխտ մի, և 'ի միւս ձեռն գաշոյն ականակալ: Երբեմն ի հաս առ հայրն իւր և համբուրեաց զձեռս նորա, անդէն կանգնեցան ջահքն հարսանեկանք և հնչեցին նուագարանքն ամենայն առ հասարակ: Յետ երկուսաւորց եկին հա-

սին և գշխոյք և բամբշանին անբաւ շաքա-
ր ելէնք - և 'ի վերջէ թագաւորին երկրաս-
ան դերիք գային պատնացեալք որք յու-
սահատք, որ կամակար անդամոնեամբ
պատառէին սուսերօք զմիս բազկաց
իւրեանց, և շամփրովք խոցոտէին զան-
ձինս: Իսկ 'ի շաքարելէն յորինուածան
էին փիղք հինն, առիւծք եօթնեւասան,
ընձառիւծք հինգեւասան, երիվարք քսան
և երկու, ուղտք քսան և մի, ընձուղտք
չորեքտասան, հանբարուք հինն, արա-
գիլք մեռասան, ագռաւք ութ, և բազք
ութ, և աղբիւր մի ոչ 'ի ապիսակ շա-
քարէ՝ բարձեալ յարանց քսանից: Ա՛յլ
ևս արք քսան բարձեալ բերէին բերդ
մի, և դև վիթխարի, և սիրամարդս հինգ,
և Ներսեհսի աշտանակս, չիշս վեշտասան,
կապիկս ութ, ափսեայս արծաթիցս ե-
րեսուն և երիս, տախտակս նարտի եր-
կուս, և եօթն ափսեայս ծովային ձը-
կամբք, ամենայնին 'ի շաքարէ խոշորք յո-
րինուածով: Ապա գային շաքարելէնք
ուսելիք բարձեալք 'ի հնգեւասան ե-
րիվարաց զարդարելոց. և ապա Ջահք
մեծագոյնք և բարձրագոյնք քան զա-
ռաջինսն, բաժանեալք յեօթն յարկս,
որ էին եօթն գնասակք մեծամեծք գոյնա-
գոյն յորինեալք 'ի մոմոյ. և շուրջ
զնոքօք թագաւորք, և չորքոտանիք և ար-
ծուագք և հայելիք, որպէս մի մի աշխարհս
կենդանեաց մեռեալ մնասուն: Եւ առ 'ի
մարմնոյ անցս տալ Ջահին հարկ եղև

լայնել զխորոցս ինչ՝ քակելով զառաս-
տաղս և զտուն գլխովին։ Ի վաղիւ անդր
վերկրեն ամենայն ածին մատուցին զրն-
ծայս խրատեանց ըստ կարգի, երիսարս
ընտիրս ոսկեսանեան, գիպակս ալիսիս,
գերիս և ազատեանս անմիւս, և ոսկի
և արծաթ անհատար 'ի բազմութենէ։
Զօր ամենայն ընդ երեսս արկանէին
'ի հրապարակին աւելի քան զհազար
սկուտեղս բրնձոյ և մէն մի նեկատակ
հաց, և քսան եզինք ամբողջ խորովեալք
եղջերք և կճղակաւքն հանդերձ։ և ընդ
ազգել նշանին յարձակեալ խաժատու-
ժին 'ի վերայ, և 'ի քթթել ակառ ան-
սանելոյ հրապարակն լնապիւռ բրնձով
և խեցեղեկով։ և երիւրեալ գերեալք
թխավարք անդէն մաքրեին զհրապարա-
կին, և ջրացանք սրակեալ ցաձուցանէ-
ին զփոշին։ Զամենայն գիշերս ջահա-
վառութիւնք լինէին զցայգ, և զցերեկ
անդադար էին խաղարկութիւնք ամբ-
վիշաց, բռնամարտկաց, ընդախաղացից,
աձգարարաց, և երաժշտաց, և կեղծ
պատերազմաց։

Յիսնեներորդի աւուրն եօթանասուն
ամենայն արկան յընթերս դիւանական
գաւառս, ապա գնացին քրիստոնեից
մատուցին զրնծայսն։ Եւ յետոյ
կուս աւուրց ակառն անցանել թափին
գնդից արուեստաւորաց ընդ աւուրս
քսան և մի՝ մաղթելով ապրելի օրհնու-
թիւնս և աւուրս երջանկութեան, և

առնելիւ փոխարէնս Հարստութեան
խրատուց լի բառիւք փոքր նորատիպս։
Ընդ հակառակս իրերայ Ջանայիւր ոչ
ոգանել զդէսս պայծառս և զարդս
ծաղկանս, և 'ի զարդարել զպարա-
գլուխս խրատուց՝ որ կարդ ըստ կարգի
երթեալ ելանէին առաջի աչքայի։

Նախընթաց լինէին յօրինուածք կանայի
թաղիարաց և մուճակաց և զանկապա-
նաց՝ ուներով գրչաց ոսկեգիրակս. և
մանուկ մի գեղատեսիլ 'ի հանդերձս
ոսկեհուռն մատոյց աչքայի մուճակ մեծ
ոսկեգործ 'ի կարմիր կաշւոյ։ Զկնի
նոցա գային բամբակագործք բերելով
առիւծուն և նհանգս ծովային։ Ապա
հանեալագործք՝ ձգելով ընդ խրատս
խառնեալ մի 'ի վերայ ամուսոյ վերոյ,
յորում նաև վառեալ էին ոմանք
յիրատուցարուեստս։ Ապա ծաղոյք պա-
տերազմաց և մեռելաց կերպասաց՝
ոսկով գրչաց կարմրագոյնս. և յետոյ
մանուկ 'ի հանդերձս շքեղս գնացին ա-
ռաջ և ետուն կառաց ինչ՝ յորոց վերայ
այլ ոմն մանուկ ծալէր զկերպասն 'ի վե-
րայ ոսկիրեալ գլխոյ վարժապետին խր-
ատոյ երբեմն 'ի վերայ բոլորաձև մարմարիո-
նի։ Զհետս նոցա եկին 'ի հանդէս թեր-
ատանք ոսկւոյ և արծաթոյ, և ապա
յօրինուածք շաքարեղինաց։ Յայնմ երե-
կոյի ուրբաթիւք բոլորեցին զիրատուցս ըզ-
պարս, և 'ի գիշերին յոյժ ոմն երկոց ձեռ-
ցոյց հրարուեստիւն անուամբ մեծ և

պարտէզ։ Ի վերին անդր անցին շուա-
նագործք և մեռաքսագործք նորատե-
սիլ գլխանոցաք։ ապա պղակուռնորա-
գործք և վաճառողք օշարակաց՝ բաշ-
խելով անդադար օշարակս բազմագու-
նիս։ Զհետ նոցա խաղացին պողովա-
ճառք ասելով ձողս երկայնարերձս
զարդարեալս պողովք, և ապա ոսկե-
րիչք և արծաթագործք մեծաշուք պայ-
ծառութեամբ՝ հանդերձ երեքարիւր
մանկուով ոսկեհանդերձ զարդարե-
լովք։ Ապա գային զինագործք՝ յօրինե-
լովև շինելով զզէնս, և զհետ նոցա կապմ
ապարք և թղթագործք թղթեայս ու-
նելով դրօշս, և երեքարիւր մանկան
թղթազգեաս, և ասէին խաչուած՝ յո-
րոյ 'ի ստորին կողմն մանուկն ողորկէր
զթուղթ, և 'ի վերոյ մանկունք երեք
վերծանէին զկուրանն։ Զհետ նոցա խա-
զային ընկոյզնագործք և քարձագործք,
հարիւր և յիսուն մանկունք ոսկեգի-
պակք բազմեալք յոսկեզարդ քարձ-
կնեաս։ Ապա գային հայելագործք, և
ընդ նոսա հարիւր և յիսուն մանկան
շուրջ պարառեալք 'ի հայելեաց, յորս
հարեալ ճառագայթք արեգական խրա-
ղէին զաչսանելեացն զաչս, և զհետ
նոցա ասեղագործացն գաւք։ Սորա
ամենեքեան 'ի միում միում աւուր ան-
ցին 'ի հանդիսի յաւուրս քսան և մի,
անընդհատ գոլով և այլոց հանդիսից և
խաղուց զգուշանալով։ Ապա և 'ի մեա-

ցեալ աւուրս եօթնեսուն յերեսուն և
լինեն բիւրապարք, նիզակագործք, հնավա-
ճառք, գերձակք, գարբինք, ձիւնորք
և գրավաճառք. և ոչխարք փոխանակ
նուագածուց այլոց գաւուց զոհիցն
ունելին ընդ իւրեանս՝ որ գոչէին Նա՛ն
լաՀ, Հո՛ւ։ Ապա եղին սասայեանք և
երիզագործք, մանրագործք և անագիչք,
մուշտակագործք, նեսայիք, ծաղկա-
վաճառք և բանջարավաճառք. և խառա-
վաճառքն փոխանակ գրոշոց զեղն ա-
ծէին ցուկակաց։ Զհետ նոցա գայ-
ին թաղագործք, ջրկիրք, խոտանա-
կարք, կօշկարարք, կաթնավաճառք,
խոյրարարք, բեռնակիրք, և վարսալի-
բայք՝ որ ասնէին ընդ իւրեանս խաւսելն
ՀԵՑ, և 'ի նմին ճանկոսի ճանրիկ սարիր-
լով զմիմեանս։ Ապա անցին ճանկունք
գարուցաց վարժապետաց իւրեանց, ա-
պա ճարտարակագործք, մանագործք, հաւ-
գրաք, բաղանեարանք՝ սանեալով ընդ իւ-
րեանս զգործս բաղանեաց, հիւսունք,
երաժիշտք, հացագործք, նաւագործք
և նկարիչք, և այլք ընդ ամենայն հա-
լիւբ և քառասուն և մին գաղք արուեստ-
ագիտաց։

Ցեօթնեքարդի աւուր ասեն անն յու-
լիսի թ լիսաեաց զարքայորդին վերին
ՃԷՐՍԱՀ ՄԷՀԷՄԷՆ փաշա, և ընկալաւ
զՀաղարս ոսկիս 'ի վերայ այլոց պարգ-
եաց։ Եւ թիւ ճանկաւոյն քրիստոնէից
թ լիսաեաց յայս նուագ զանցանէր
քան զեօթն հազար։

Յերկարէր ձգէր արդեաք հանդէսն այլ ևս առաջս բազումս. սակայն գրժ-
առթիւն մեծ ծագեալ 'ի մէջ ենիչէ-
բեացն և հեծելազօր գնդին՝ գաղարե-
ցոյց զամենայն. և թագաւորն ինքնին
հարկեցաւ ծածկաբար գնալ յապարա-
նքս իւր: Եւ ապա ալքայորդին Մահմ-
մէտ վերջապանամեայ գոլով հասակաւ
գնաց 'ի Մագնեսիա երկու հազար ա-
բամբք ընդ հեծեալ և ընդ հետևակ:

Պասիւ և ընտանութիւն յոյժ ունէր
յայնժամ առ ալքայի Իպրահիմ փա-
շա, որ 'ի սենեկապետութեանն պաշ-
տամանէ ամբարձաւ մինչև 'ի փեսայու-
թիւն ալքայի: Սա կուսակալ Եգիպ-
տոսի կարգեալ՝ զհետ տարեոյ մինոյ կո-
չեցաւ անդրէն 'ի Բիւզանդիոն. և զՀա-
նուսարհայնուսանեալ զՏիւրքիսպիտա-
ռանչեալս յարքայէ, երբեր նոքա ընդ իւր
գանձս և պարգևս բազումս. ընդ որս և
զահ ալքունական հանեալ ոսկի ակա-
նակապ, յոր ցարդ ևս բազմին թագա-
ւորք Օսմանեանց յառաջնորդ առաջ
թագաւորելոյ իւրեանց. և երիվարք
ընտիրք ոսկեկազմք, յորոց բազումք
արծաթիս ունէին պայտս 'ի սմբակսն,
և փիղ և ընձուղտ, և այլ ինչ բազում:
Եւ Մուրատ ալքայ եռանամ'ի կնութիւն
զդուստր իւր զԱյշէ՝ հանդերձ երիք-
հարիւր հազար ոսկւոյ պարգևատակա-
նաւ:

Ուստի լարգոյն 'ի հանդերձ էր քան

զԽարահիմ քաջն Օսման փաշա վէզիր մեծ, որ քառասուն հազարաւ էր թեւալ ի Դամիէտ՝ էառ զքաղաքն գիւրապէս. զի պարսիկ քաղաքապետն գիշերապահաց լեալ էր անոր։ Օսման կամէր իւր զերծուցանել զքաղաքն յառաջառութենէ՝ այլ զի սատակաւոյն զանոնք գոսան մեռեալք ուրեք 'ի բաղանիս, ոմանք խրի և խոժանուժ զրահաւոր անասնոյն յարձակեալ առին արտի զնոյն քաղաքն Աղուանականի զերիս տիւս և զերիս գիշերս։ Այս ամենայնոյ Օսման զԴամիէտ և ած զիւռաւ պարիսպ յերկայնութենէ երկուսասան հազար և եօթնեհարիւր գրկաց. այլ ինքն խոմութենէն ակարացեալ մեռաւ 'ի Ժանանակի պատերազմին ընդ Պարս։ Ճղալէզատէ փաշա ամբարձեալ 'ի տեղի նորա առ Ժանն՝ 'ի հիւսիսարարեւելեան Ճակատամարտին ելեալ ընդ Հանգայի արքայորդւոյն Պարսից՝ ապրեաւ զյաղթանակն, և ազգ ազգաւ 'ի Կոստանդնուպոլիս։ Բայց Օսման փաշային խորհրդոյ՝ զոր 'ի Ժամ մահուն գրոշմեալ էր 'ի գիրկամէջ Մուրատ արքայ ապարդեան կարգել զորաց զՃղալէզատէ. այլ 'ի շարաւոտել ոսոխաց առնն, անձնարացեալ թագաւորին՝ կրկին հրամայեաց ապարդեանս թեքնադիրս յղեաց և առ Ճղալէզատէ, և առ Ֆէրհատ փաշա. և Ֆէրհատ խաղաց զորս Ժանու 'ի Պարսս։ Յայն միջոց Ժանանակի քառա-

սուն և ուխտ անդամ՝ բախեցան Օսմանեանք ընդ Պարսից, և յար ձախողէր նոցա. այլ ուր ուրեմն Համզա խան 'ի մատնուեցեալն Թիւրքմէնաց անօգնական ձեռնեալ յաղթեցաւ 'ի ճզալէզատէ զօրավարէն, և սպանաւ 'ի Թիւրքմէնէ ոմանէ։

Ի դէպ սպասահէաց ընդ այն ժամանակս նեղիլ Պարսից 'ի նեղբին եւ յուզմանց, և յայլմէ կողմանէ յուզէք Թաթարաց, մինչև բուռն ապքայն Պարսից շահ Աբբաս կամ Շահաբաս, որ Թագաւորեաց առ կենդանութեամբ հօրն իւրոյ Խիւսրովէնամէ շահին, դուլ աբար զինուց ընդ Օսմանեանս։ Ալ յառաջ քան զայն Ֆէրհատ փաշա յաղթանակեաց 'ի վերայ հնգետասան խանից պարսկականաց, և պարսպեաց նոր պարապէք զՆրեան 'ի քարանց մերձակայ եկեղեցեաց մերոյ ազգիս. և ճզալէզատէ էառ զՊարսատ 'ի ձեռաց ինքնագլուխ իշխանաց։

Իբրև յանկ եղանէին առուրք զինադադարսնեն, Ֆէրհատ փաշա և ճաֆիէր փաշա արշաւեալ զօրք բազմաք 'ի Սինեխ՝ առին զԴանձակ և պարպեցին զայն. և Շահաբաս առաւել 'ի ապդնադի դոլով յարևելս աշխարհին իւրոյ 'ի Թաթարաց, քան յարևմուտս յՕսմանեանց, ընդարձակ կալաւ խնդրել 'ի ոգանէ զհաշտութիւն, և առաքեաց պատանդ 'ի Կոստանդնուպոլիս զՀայ-

տար Միրզա զորդի Եղբօրն իւրոյ Համ-
զայի հազար պարակաք, հազար և հինգ-
հարիւր երիվարաք, և երեքարիւր և է-
րեսուն ջորեաք, և նախարարք ջորք գեղ-
պանքն էին։ Մեծահանդէս յոյժ եղև
մեւս սոցին 'ի թագաւորեալ քաղաքն։
Եւ 'ի պայմանս հաշտութեանն յաւե-
լան 'ի սերութիւն Օսմանեանց Դա-
վիթ հանգերձ Աղուպատկանաշխար-
հաւն, Գանձակ, և Սիւնիք, Շիրուան,
Վրաստան, և Լորիստան։

Այլ քանզի կասկած ունէր զՕսմա-
նեանս զանհաւատարմութենէ արքային
Պարսից, և զի Սիմոն արքայ Վրաց
ցանգ գոն գործէր հալածել յաշխար-
հէն իւրմէ զՕսմանեանս, ամրացուցին
զաքա զԼոռի, զԿորի, և զԱխլցխա, և
նորոգէցին զնաւաստրին իւրեանց ընդ
ձեռամբ նորոյ ծովակալին Հասանայ։
Քանզի Գէլրդ Ալի փաշա յանկարծանահ
եղեալ էր։ Ընդ այն ժամանակս և մեծ
վէզիրն Սինան կառոյց զհոյակապ ծո-
վահոյակաց պատշգամ արքունի տապա-
նանցն, որ ընդ ժամանակս բազում 'ի
նորին անուն յորջորջէր։ Այլ յամին
որ ընդ Պարսս հաշտութեան նշանաւոր
գէպք ապստամբութեան էր ենիչէ-
րեաց։

Քանզի ընդ այն ժամանակս յաճա-
խեալ էր անիրաւութիւն 'ի բազում մեշ-
խանացն Օսմանեանց, և հարստահա-
րութիւն անանկաց էր 'ի տուեալ նոցա,

որպէս Հոխագոյնս ամբաստան լինին պատմագրանք Օսմանեանց։ Թուլացեալ մեղկեալ էին 'ի պաշտամունս իշխանութեան իւրեանց, և 'ի շահ անձանց նեղեալ ակն եդեալ վատաակէին։ Ընդ ամին 'ի 1584 ամէն հետէ սկսեալ էր նուազել յարդ արժէից գրանց. և ուր 'ի մի հոգգայ զուտ արծաթոյ օրէնք էին հատանել փողս հինգհարիւր նեղեթ, հատանէին աւելի քան զհազար։ Զի գրամնհատութիւնն 'ի ձեռս հրէից էր։

Զհետ ամաց վեցից վերատեսուչ փո-

1 Յաւուրց անդի Սէլիմայ առաջնոյ մինչև յաւուրս Էրիրդէին և որդւոյ նորա Մուրատայ վերնոսն փոխ Օսմանեանց արծէին ոսկի մի վենետիկոյ կամ Մուճառաց, որպէս վիսյէ պապանգիրն Սուլթանպէ. և փառասուն փոխ առնէին գահէիան մի, և մէն մի փոխ արծէր լոմայս փասն և լորս՝ որ Մանղէր կոչէին։ Իսկ յամին 1587 յանկարծ ի՞նչ պիչան գինի երամոց կիսով լաւ. զի այնուհետև գահէիանն արծէր փոխս ուրեսուն, և ոսկին հարիւր և փասն։ Եւ զի յետ ժամանակաց էառապարկ ևս վարիարէցան երամք, մինչև արծէլ գահէիանին փոխս հարիւր և փասն, սովորութիւնն խլաս յայնմհետէ զէրիս փոխս 'ի մի հաշուէլ և ըստ այնմ նոր հապանէլ երամ՝ փարա անուանէալ. որով երկիւղ գահէիանն մանրէր 'ի փարայս փառասուն, և փարայն 'ի փոխս էրիս։ և ոչ ևս գային լոմայք 'ի պէտս, որպէս լգան յայժմս ժամանակիս և փոխ։

զերանոցին մատոյց առ Համարակալն
արքունի երկերիւր հազար փոխս, զի 'ի
ուռնիկ զօրականին զնորատիպ դրամն
բաշխեսցէ. և 'ի շառնուլ նորա ազատ-
ին յանձն, զիմեաց Համարակալն առ
Մէհէմմէտ փաշա կոչնապետս երթ-
ալեան, որոյ Համարձակութիւն մեծ էր
առ արքայն. և սա բուռն արար Համա-
րակալին՝ առնել այնպէս։ Յայնժամ
բորբոքեցաւ հուր ապստամբութեան
յենիչէրիս և 'ի հեծեալս. և այս առաջին
անգամ յարձակեցան մոին ենիչէրիք 'ի
բուն 'ի ներքս յարքունիս Թագաւորին,
և զիմեալք 'ի վերայ վէզիրացն բազմելոց
յատենի՝ 'ի ձայն գոչման ազազակի պա-
հանջէին տալ 'ի բաց զգլուխս կոչնա-
պետին և զՀամարակալին միանգամայն,
'ի զուր ամենապարեալ արքայ զերդուլ առ
նոսա գրասն յորմէ. զի նոքա նզովեալ
էին զանձինս իւրեանց ոչ ինչ հուպ 'ի
տուրս լինել մինչև առնուցուն զգլուխս
արանցն։ Հրամանն էր Մուրատայ պաշ-
ամանէից իւրոց, և պահապանաց, փոյ-
տահարաց, պարսիզապանաց և բարա-
պանաց 'ի զէն ընթանալ. ասկայն յընդ-
դէմ կալ առենակալացն՝ գրեաց Թագ-
աւորն ձեռամբ իւրով զվճիռն, եթէ
«Վաղ ընդ փոյթ մատնեսցիս»։ Ազգ ա-
բարբ կոչնապետին զվճիռն արքունի
սենեկապետն մեծ, և հանեալ զնա ար-
տաքս յատենէն՝ մերկեաց զնորին խակ
զուսերն, և գահիճն եհատ զգլուխ

նորա։ Այս գլխատեցաւ և անպատ հանդարտակալն. և Մուրատ արքայ խնա-ցեալ ելմէ այլ աւագանին ասիք կողմ-նապետին հնարեալ էին զդաւն, արկ յիշխանութենէ ընդ այլոց և զվէզիրն մեծ զԱխմէտ, և կարգեաց փոխանակ նորին զԱբնան փաշա։

Սակայ սակայ հրդեհքն պատահեալք այնուհետև՝ ի թագաւորական քաղաքին՝ յայտ իմն առնէին ելմէ չև էր՝ ի սպառ շինեալ ծուխքոցոյ ապատամբութեանն. վասն որոյ փոխեցաւ զբնակութեան ենիչէրեաց Խրզոյ սղա, և անց՝ ի նորա տեղի դրօշակիրն Մահմուտ սղա։ Եւ ոչ՝ ի Բիւզանդիոն միայն, այլ և յամենայն կողմանս ընդարձակաց աշխարհին շրփոթք ապատամբութեան յուզէին ցերիս ամս, որք ողբով և բռնութեամբ ուր ուրեմն ցաւեան։ Ի Կոստանդնուպօլիս անուշան ոմն այր սկսաւ ասել զանձնէ՝ թէ ինքն իցէ Մէհմէտ, և սպանաւ նա ցցահար՝ ի գաւթի մզկիթին սուլթան Պայէզիտայ, ուր սովորն էր մարդասպանաց ասաւթի ամբոխին, ձեռն ինչ յաւագի գծագրելով։ Այս և վեց ամենապիսիք արքայի կասեցան, փոխանակ զի խորդասեալ կամէին զինքն արքունի՝ առ՝ ի վարելոյ նոսա ըստ հաճոյս իւրեանց։

Ի Դամասկոս կուսակալն ճաֆէր փաշա այսօրինակ շինոյց զապատամբութիւն զօրականին ասկս նուազելոյ արժէքց դրամոցն։ Ցեռ ծածկելոյ զանձն իւր

առ ժամանակ մի իբրև յահէ ապատամ-
բեալցն՝ բանս եդ ընդ շրջակայ ազգացն
Մարաց, և ապա ինքնայն կարգեաց զո-
բաց իւրոց ազատաբոյ քաղաքին՝ խոտաց-
եալ անչարագուշ լինել նոցա։ Ա՛ՅԼ ՁՇ
խեմ. ասէ. յանդիման երևեալ ձեզ՝ մինչև
'ի բաց դնիցէք զգէնս իւրաքանչիւր և ա-
ռաքիցէք ինձ 'ի պատանեգ յիսուն այր։
Իբրև արարին նոքա ըստ բանիցն, եկին
յանկարծակի Մարքն գարանամուտք
շուրջանակի, և փողոտեցին զնոսա զա-
մենեսեան արս հազար և ութհարիւր։

Դարձեալ 'ի Կոստանդնուպօլիս յեա
նորոդ հրդեհի ըստ գիպաց կամ 'ի չա-
բամտութենէ բորբոքելոյ՝ ապատամ-
բեցին ենիչէրիքն, և խորտակեալ զբ-
ուռնս ապարանից կուսակալին Ամդայ
կողոպտեցին զայն, փոխանակ զի մինչ-
դեռ կուսակալ էր այրն Կարնոյ, մա-
հու չափ գանեալ էր զենիչէրի ումն։ Ապա
խուժեցին յապարանս ազգուն, և գո-
չէին ասել ինքեանց զգլուխ կուսակա-
լին. և ազգայ արկ զնա յԵմիգուլէ։ Զհետ
ամենց ութից վերասին նորոգեցաւ
ապատամբութիւնն, որոյ նշան էր մեր-
ժելն ենիչէրեաց զմատն, և հուր հար-
կանելն ուրեք. և Մուրատ առ 'ի գար-
մանն իրացն ընկեցիկ ապար զլոտակեա
նոցին, և զմէզիրն մեծ։ Զառաջնոյն ըզ-
տեղն կալաւ Խալիլ աղա՝ խաղացի
յազգէ, և զերկրորդին Սիյաուշ փաշա
այս երրորդ անգամ։

Փոխեցաւ յայնժամ և գենդիանոս Պապ թանգաւոր սակս գժտութեան իւրոց ընդ գառաւորին ասիացի զօրաց, որ էր քաջ քերթողն Պապը. այլ Զէքէրիա կամ Զաքարիա յաջորդ նորին 'ի համբուրել երբեմն զհանդերձս թագաւորին՝ ըմբռնեցաւ 'ի հեծկլատնս և յանկարծամահ եղև. և գարձեալ կարգեցաւ Պոլիմանդամէն յառաջնորդ քարձին։

Կարի խիստ Ճարակէր 'ի նմին ամի և սրածութիւնն. վասն որոյ լաւ ապրանքն հրամանին ամբոխ քաղաքին առհասարակ 'ի հրապարակս գիմեալ և 'ի լերինս ընթացեալ բացօթեայ զպարտանան առ Աստուած մատուցանէին՝ վերնան առնել ահեղ կոտորածին. զի ընդ Էարէնէ գափուսի ևեթ օր լաւ օրէ եղանէին աւելի քան զերիս հարիւր գիակունս։ Փակեցաւ կրպականին, և որք կարողքն էին ցրուեցան 'ի գիւղս։ և թագաւորն ինքնին աւագանունն հանդերձ մեկնեցաւ 'ի Վասիլոն։

Այսուհետև ձախող պատահարքք ինքեալ ասան գարուց հագարացոցն թուական, ահեղագոյն խառնութեամբ բացաւ գուռն առաջնոյ ամի նորոյ գարուն։ Քանզի սեսեալ հեծելապետն Օսմանեանց՝ եթէ ենիչէրեաց ամբոխք բաշխեցան ոռճիկքն, և ինքեանց լաւ մասին ևեթ, գիմեցին մեհատեան յանձնակալացն վերայ, և 'ի ձայն բարձր

ապազակէին. «Կամիմք զի տացի մեզ զբ-
լուխ Հոռոմականին»։ Ածան նոցա հա-
բիւր քսակք յառանձին գանձուէ թա-
գաւորին, այլ 'ի զուր։ Եկին առ նոսա
երիզքեան գաստաւորքն զօրաց, և յայտ
արարին եմէ քանի եղեռնական ոճիր
է հեղուլ զարիւն հոռոմականին՝ որ
Էմիր է ասէին, այս ինքն է արեանառու
մարգարէին Իւրեանց։ Այլ զօրքն 'ի տեղ
տարամոյ բռնաքարանց լուեցուցին զնո-
սա։ Կոչեցան ապա պերճախօս քարոզք
Սիւլէյմանիէ և Այա Սոֆիա մզկիթաց-
ասկայն և նոցին բանք ոչ ինչ ազդեցին
առ բարբառացեալսն։ Յայնժամ վէզիրն
Պօյալը Մէհէմմէտ ասէ ցվէզիրն մեծ.
«Եմէ զկոչմնապէսն մեծ մասանեցէք 'ի
կամս գոցա, զինչ մեծ է եմէ և զհոռո-
մականն մասանեցէք»։ Եւ նոքա պատաս-
խանի դէնպէսն Պոսֆանզասէ ասէզ
ձայնիւ. «Մի՛ եմէ առեսն Եզիպտոյ ինչ
առեսնս այս՝ զի կառափունք տոհմի
մարգարէին ընդ յատակս տաճարիս
Թաւրգէրիսապայցեն»։ Յայդուէ մինչև
ցօր հոռոմական ուներաց աղմուկ շփոթին։
Հրաման եւս արքայ 'ի զէն ընթանալ
հանդէն պաշտօնէից և ապատաւորաց
ապարանիցն. և նոքա որ ինչ 'ի ձեռս
գայր ընդդէմ ապատամբացն ուղղէալ
հալածէալ ցրուեցին զնոսա, և ոգիս
երեքարիւր յիսուն և եօթն ապանեալ
սատակեցին 'ի ծով։ Ապա վճարեցան ո-
ճիրք հեծելաղօրուն, ընկերակ եղեն

համարակալքն երկքին, ևս և վեղկին մեծ, որոյ փոխան ամբարձաւ գարձեալ Սենան փաշա։

Ենիշէրիք յայսչափ նուազս զսակ առեալ զօրուն ոչ ոչ խրեանց, սկսան ամբոխ առնել և սակս գուզնաքէից ինչ իրաց. հարկ էր ապա 'ի պատերազմ ուրեք զբօսնցուցանել զնոսա։ Եւ Սենան փաշա վեզիրն մեծ՝ 'ի բնակ առեցող գոլով Գերմանացւոց, թեւագիր եղև արքայի յառնել 'ի մարտ պատերազմի յերկիրն Մաճառաց. և պատճառս 'ի մէջ բերէր զնեղել Օսմանեանց 'ի կողմանսն յայնոսիկ յերուզակաց ոմանց, զորս դանդաղէր կայսրն նկուն առնել։ Վրձակեցաւ նախ Հասան փաշա կուսակալն Պոսնիոյ քան հաղարաւ առնուլ զքաղաքն Սիսէկ. այլ 'ի խորանկիլ զօրաց նորա վեզիրն ինքնին անց 'ի գլուխ նորոյ բանակի, և մեծաւ հանդերձանաք խաղացեալ 'ի Պելկրատ, էառ քաղաքս քանի մի. ընդ որս և զամուրն Ռասամ՝ որ է Եանլըգ, և զՔոմորն, ըզ Փասխա և զԹամիա և զՎ էսքրիմ։ Եւ զի նեզակակից էր Օսմանեանց յայնմ մարտի խանն Խրիմու քառասուն հազար հեծելովք, 'ի հասանել աւուրց աշնայնոյն մեծարքաց զնա Սենան՝ ընծայելով նմին կոնք և ընտակ արծաթի, և երիվար ընտիր, և դաշոյն և լատ տկանակուս։ Եւ ինքն ևս մեծապատրաստ մեծարեալ յարքայէ՝ մեկնեցաւ 'ի ձմերոց 'ի Պել

կրատ, զի գտնեսցեն վերատին և լցեալ 'ի մարտս և յապատակութիւն։

Ընդ այն ժամանակս գրոչն Նուիրակն որ պահէր 'ի Դամասկոս՝ ածաւ անտի 'ի Կոստանդնուպաստիս բազմութիւն զօրականաց, և անտի 'ի ձեռն հաստատ ենթիչիրեաց յուղարկեցաւ 'ի բանակն 'ի Պերկրատ։ Այն ինչ խրատուսէին զոչքն

1 Այն իսկ է Սանճաք Ալբիկ գլխաւորն 'ի գրոյս մարգարէին Իսրայելացոյ անուանեալ Երիսպատան ոգնալաք յերիայնութիւն. որ և վարագոյր էր սնանելոյն Աբելի ինքն Մահմետի, որպէս ասեն Օսմանեանք։ Զինի մահուանն Մահմետի Լոպի-պէգիր պարսիցն արար գրոյցս, և յայնմհետէ խնամեալ էր սա 'ի պահեսցի սա ամրապէս Պոմանուսի, Պուղատայ և Եգիպտոսի, յորոց էանց սա Օսմանեանս յառնուլ անդ Սելիմայ Ա Եգիպտոս։ Զատաչինն նիստ ճաց գրոյս 'ի Դամասկոս. և խուսափել փաղատին որպէս Լոիր իսալ հաճ. այս ինքն է պէս ուխտաց, ելեալ հանդիպեսցի յաղեր պայն ամ ամ 'ի Մէքէէ 'ի գլուխ ուխտաւորացն խրատանի, մինչև ապա խորագնեսցի խորհրդով ելեալ ինչ Սինանայ բերան 'ի Բագատրիալ փաշան, և էր 'ի պահեսցի յարգանի։ Ել է պատեալ այնուհետև գրոյցս, զոր վարեր ամրապէսն Իսրայ, և նուազս հանդիպեալ պատերազմ 'ի փաշասան պատագս Էրզրումի. և 'ի ելանի նոցին մատնեան քաղաքի գրեալ ուղարկեաց Իսրայ, և արքանի քանանգն Բէս-

առ հաստատակ, և թուէին տեսանել ըզ-
գրօշուն ինքնին ծալ 'ի ծալ ինն վերամ-
բարձ լինել յօդս, որպէս թէ յառաջ-
ընթաց լինել կամիցի քաջ ախոյենիցն,
զօրապետն Ենիշէրեաց գարձ արարձմե-
րել 'ի Կոստանդնուպօլիս. քանզի ասէր՝
թէ չէ օրէն զօրավարի Ենիշէրեաց ձմե-
րել ուրեք զատ և որիշ յարքայէ. որով
փոխանակ առաջնոյ խրախուսելոյն լու-
ծան զքան զօրականքն։ Եւ առաւել լու-
վնասութիւն նոցին 'ի գոյժ համբաւոյ
խօթութեան արքայի։

Զանգի Մուրատ արքայ ընդ այն ա-
ւուրս կատարեալ մեծահանդէս շքով
զհարսանիս դստերն իւրոյ 'ի Կոստանդ-
նուպօլիս, տալով զնա 'ի կնութիւն խա-
լիլայ, անկաւ յախտ սրտացաւութեան.
և գուշակեաց ինքն, ասէն, զօրհասն իւր։
Զի մինչդեռ բազմեալ էր 'ի պատշգա-
մին Սինանայ, և երաժշտքն նուագէին
առաջի իւր, հրամայեաց նոցա այսպէ-
սի ինն տաղս երգել. «Հիւանդ եմ ես,
ով օրհաս, հանեա զինև յայսմ 'ի գի-
շերս»։ Յետ սակաւուց յոգնուն զնա
երկուց նաւաց արձակմամբ հրամանաց,
'ի սաստիկ ցնցմանէ օդոցն խորտակեալ
հասեցան ապարտիւղկք պատշգամին։
Ասէ թագաւորն. «Զի՞ է զի յայլ նը-
աւագս թնդանօթք ոգոյն նաւատորմին

դէր, այն՝ զոր ընդ իրեն Մեհմէտ ընծայեաց էր
Սելիմայ Ն։

միանգամայն արձակեալք չասնանէին
ինչ պատշգամիս, և այժմ 'ի գոյգն
թնդմանէ հոսեցան ապակիք. այլ ահա
ընդ պատշգամիս վախճանեմ և ես ըզ
կեանս իմ»։ Զայս ասէր և թոքեցու-
ցանէր զարտասուս ընդ ծնօտն և ընդ
մորուն։ Եւ 'ի միւսում գիշերին զրա-
ւեցաւ 'ի կենաց՝ թագաւորեալ ամս
քսան, և ութող ուսերս քսան և գրս-
տերս քսան և վեց. թող զմեռեալն առ
կենդանութեանն նորա. զի ընդ
ամենայն եղեն նորա որդիք հարիւր և
երկու։ Զուարճասէր ունէր սա բարս,
և հեզ էր քան ցասկոտ։ Ցանկ 'ի պարս
գուսանաց, նուագածուաց և զաւէշ-
արարս միմոսաց զբօսանսն, և սիրէր 'ի
նոսա բռնաբիր ոսկիս. և 'ի հաստատակեալ
աւուրն, որպէս ասէ Փէշուրի Խրոս-
հիմ էֆէնտի, եղանէր Մուրատ 'ի բաղ-
մականէն ասելով. «Դոհութիւն երկ-
նից, զի զայս ևս օր այսպէս անցուցաք»։
Հանդերձ այսու յարդէր Մուրատ և
գքերթողս և զիմաստունս, և ինքն ևս
ութող քերթուածս ինչ։

Յուշ լեցի առասնօր, զի 'ի ժամանակս
Մուրատայ արքայի յահագին ընդարձա-
կութեան օսմանեան պետութեան՝ իբ-
րու քառասուն կուսակալութիւնք էին,
և չորք աշխարհք հարկատուք։ ՅԵւրոպա
ութ էին կուսակալութիւնք, աշխարհն
Մաձառաց. Էրուել կամ Դրանսիլվա-
նիա, Պոսնիա, Սէրպիստան, Բուլկիր,

Քէֆիէ, Կրեան և Ալշիպէզագոս։ ՅԱֆրիկէ ջոյք, Եգիպտոս, Ճէզայիր, Թունուզ, և Տրապոլիս։ Եւ յԱսիա քան և երկք. փոքր Ասիա, Գարամանն կամ Կիլիկիա, Մարաշ, Ասանա, Կիպրոս, Բերիա, Սիդոն կամ Սայտա, Դամասկոս, Սեբաստիա, Տրապիզոն, Վրասան, Տաղըստան կամ Կովկաս, Շիրուան, Կարս, Վան, Կարին, Շէհրիզուր, Պարտա, Պաղտատ, Մուսուլ, Ամիդ կամ Տիարպէքիր, Ճիտտէ, և Մէքքէ։ Իսկ հարկատուքն էին աշխարհն Մոլտաւիոյ և Վլահայ, և Էրուէլ, և Բակուզա։ Այսպէս զկիլին մասուն աշխարհի, յորս երբեմն սիրէին Թագաւորք հզօրք աւելի քան զքան, ընդ միավարկաւ դրաւեալ ունէր արիաբար հզօրն զապոյն արքայն Օսմանեանց։



ՍՈՒԼԹԱՆ ՄԷՀԷՄՄԷՏ Գ

Արդար թնամով թագուցաւ մեհ ազգային Մուրատայ զգալուս ազգայ-որգւոյն Մէհէմմէտայ 'ի Մադնեսիոյ՝ ոչ միայն յամբոխէն, այլ և յաւագորդոյն անգամ։ Եւ յետ ոմիթից առուրց'ի ժամանել Մէհէմմէտայ արձակեցան հրազէնք և հնչեցին քարոզք զմեհն Մուրատայ և զմագաւորել որդւոյ նորին։ Ապա և թնեռատանէքին ազգայորդիքն խեղդամեհ եղեալք 'ի ձեռն համբոյ ապրատանն՝ թագեցան առ ոտս հօրն իւրմանց. և գառերքն Մուրատայ և կանայք հանդերձ ամենայն համբոյք և միոյզ ածան'ի հիներ ազգուն։ Զհետաւուրց ինչ բաշխեցան զգրանիսին ասկրակն ապարգեքն, և 'ի բաժին ենիչէրեաց ևեթ անկան վեցհարիւր և վամսուն հազար ոսկիք։ Փոքրոխուիթեք եղեն և ապաստանեց, և փոխանակ Սինանայ եկաց վէզիր մեծ նոսրանձորդն նորին Ֆէրհատ փաշա, որ և կարգեցաւ միանգամայն ապարատակա բանակին 'ի սահմանս Մահնուց։

Սա միանգամ գնայր 'ի տուն իւր՝ ամենեք 'ի հեծելազնդէն ելին ընդառաջ՝ խնդրելին 'ի նմանէ ոսկիս յան-

լուածով. և 'ի խոստանալ նորա առնել զայն 'ի ժամու խրատ՝ իբրև բարձրացուցին նոքա զբարբառ իւրեանց, ասէ. «Զգիտիցէք, զի որ ըմբռստանան ընդդէմ տէրանց իւրեանց՝ ամբարիշտք են, և ամենեքին կանայք նոցա»: Գազանեցան զօրքն ընդ այս բան, և յանձխեալ զամբոխն՝ գիմեցին առ գենդեան և խնդրէին 'ի նմանէ վճիռ գատաստարառութեան ընդդէմ վեզիրին: Գենդեան արձակեաց զնոսա բանիւք խրատու և խաղաղութեան. այլ նոքա թշնամանեցին և զնա, և երթեալ ազմկեցին առ հաստատակ զբնակարանս իւրեանց յապըստամբութիւն: Ի վաղիւ անդր քառասուն և ութ միլիոն փողք կամ ջոքեքրիւր հազար ոսկիք էին յաշքուանի գանձուէ 'ի բաշխոյս զօրականին. այլ նոքա ոչ ինչ բնաւ հուպ էղեն 'ի գրանն, և ամբոխ արարեալ գոչէին. «Կամիմք զգլուխն Գերհատայ թշնամանչին մերոյ»: Ջանահնար էղեն գենդեան և ամենայն աւագանին ցածուցանել զնոսա համոզիչ բանիւք, այլ հաղիւ ճողոպրեցան 'ի քարկոծ լինելոյ 'ի նոցանէ ցնահ. վեզիրն Լալա Մէհէմմէտ վիրաւորեցաւ 'ի քարաձիգ լինելոյ նոցին 'ի ձեռն իւր. ծովակալն Խալիլ փաշա յուռնին իւր, և ճէրրահ Մէհէմմէտ փաշա 'ի լանջան: Յայնժամ հրամանաւ արքային Ենիչէրիք և պարտիզապան զօրականք դանահալածս արարին զհեծե-

լաջին, և ցրուեցին 'ի տարս։ Եւ քան-
զի կարծելի էր՝ եթէ վէճիւքն ճղալիզ-
զամէ և Սիամիւշ ձեռնտու լեալ իցեն
խռովացն՝ առաքեցան յաքսորս։

Ընդ այն ժամանակս Ահարոն իշխանն
Մոլսաւիոյ վասրանիկ զՕսմանեանց-
այլ ահեղագոյն քան զնա գոսա Մի-
քայէլ կամ Միխալ իշխան Վրահաց,
որ յաւէլ յապստամբութիւնն և գործ
անոգորութեան մեծի, 'ի սուրսա-
սերի կոտորեալ գաւառն 'ի Պուքրիշ ջոր
հազար Օսմանցիս, և ծոյնչափ ևս 'ի յԵր-
կեցս, որ և ճուրծով։ Ապրգ յաւուրս
գարնայնոյն խռովաց գնաց վէճիւն մեծ
Ֆէրհատ յԱգրիանուպոլիս, և անտի 'ի
Ռուսճուգ։ Արդ ևս աշխարհին Օս-
մանեանց և զՎրահս և զՄոլսաւիս, որ
յառաջն հարկատուք եղեալ էին. կու-
սակալ Մոլսաւիոյ անուանեաց զկու-
սակալն Շիրուանայ զՃաֆէր, և Վրա-
հաց զՍագուրճի Մէհէմմէտ փաշա։
Այլ ասիք Ֆէրհատայ և կուսակիցք
Սիւանայ այնչափ ինչ քսիս մատուցին
ալքայի զնմանէ, զի Ահմէտ ապա անեն-
կարգեան ալքուանի առաքեցաւ սպանա-
նել զնա։

Աւուրքն յառաջ զդայ Ֆէրհատ
զկին 'ի ձեռն հաւատարիմ լրտեսաց
իւրոց. և զալքուանի կնիքն առանդեալ
'ի ձեռս Սագուրճի Մէհէմմէտայ, էառ-
ընդ իւր երիս հազար հեծելս ընտիրս
և գիմեաց 'ի Կոստանդնուպաւլիս։ Զձա-

նապարհայն պատահեցին նմա գունդք զօրացն Սինանայ, որ առեալ այս ջոր-
ջորդ անգամ զիշխանութիւն վէզիրին մեծի և արձակեալ էր զնոսա 'ի վերայ
Ֆերհատայ՝ ասելով, «Խորան նորա ինձ,
և գանձքն ձեզ»։ Ֆերհատ առ 'ի զերծա-
նելոյ 'ի ձեռաց նոցա եթող 'ի նոսա ըզ-
կարասին և փախեաւ 'ի լերինս, և ապա
'ի Կոստանդնուպօլիս։ Ընդ 'ի քարեխոս
լինելոյ մօրթագաւորին՝ շնորհեցաւ նմա
կենդանութիւն. սակայն յաւուր մի-
ում յանկարծակի յափշտակեաց զնա
պոսթանձի պաշին և տարաւ Եմի գու-
լէ, և ապա այլ ոմն եկեալ խեղդամահ
արար զնա։

Զոր արար յերկիրն Վրաց Սինան
փաշա յամին 1595, և կամուրջ արկեալ
'ի վերայ Դանուբ գետոյ անցոյց զբա-
նակն 'ի Պուքրէշ։ Յանտառախտ և 'ի
Ճախին տեղւոջ ուրեք մերձ 'ի քաղաքն
պատահեալ զօրացն Վրաց՝ բախեցան
ընդ նոսա Օսմանեանք յայգուէ մինչև
ցերեկոյ, և առին 'ի նոցանէ երկոտասան
թնդանօթս. այլ ապա վարեցան միե-
ցան 'ի Ճախճախուտ տեղին. և Սինան
ինքնին խրեցաւ 'ի մօրուտ վայրի. զոր
Հասան ոմն այր վիճակաւոր շաղակեալ
ապրեցոյց, և յայն տակս կոչեցաւ Պա-
դադի Հասան։ Եւ քանզի Միքայէլ
մեկնեալ էր 'ի սահմանեալ այրս աշխարհին,
եմուտ Սինան 'ի Պուքրէշ. փո-
խեաց զեկեղեցիսն 'ի մզկիթս, և զքաղաքն
պատնիշափակ արարեալ ամրացոյց։

Յետ ասելոց վերոյ Միքայէլ գիմեալ էառ զՓիլիպոսիչ. և Սիրեան հուր արկեալ 'ի պատնէշս Պուքրէշայ՝ մեկնեցաւ անտի հանդերձ բանակաւն 'ի յԶրկէս։ Եւ զի խառն 'ի խառն խուճապմամբ զդարձն առնէին Օսմանեանք, Միքայէլ հարաւ 'ի վերջապահս նոցին և տարաւ գերի և առար բազում յոյժ, և ոչ ոք 'ի հրոսակաց որ յայնկոյս գետոյն կային ապրեցաւ 'ի սրոյ Վլահաց. որովասա ռեցաւ հատաւ այնուհետև այն գունդ զօրականաց։ Պաշարեաց Միքայէլ և զԶրկէս աւուրս երիս, և առեալ զայն՝ կոտրեաց զպարիսպն, և զքաղաքն հրդեհակէզ արար։

Ընտի և զոլք կայսերք, յորս էին զօրավարք գերմանացիք, իտալացիք, մանաւանդ և գաղղիացիք, պատնէշ պաշարմամբ առին զԿրան քաղաք, և զՎիշեկրատ և զայլ բերդս, և 'ի Հակատամարտս ինչ վանեցին զՕսմանեան։ Այսր ամենայնի ձախողութեանց լուրք հետզհետէ գուժէին 'ի Կոստանդնուպոլիս, և խռովեալ էր յոյժ քաղաքն։ Յաճախեաց զուարճանն և սատանութիւն մեծ 'ի քաղաքին և 'ի փողոցն Ախա, ուր գիշերք մեծամեծք փլուզեալ առէին։

Մինչեմիս արքայ հրաման եւ աղաչիր հրապարակաւ առ Աստուած մատուցանել՝ մանաւանդ սակս յաջող ելից պատերազմին. և Սիրեան փաշա իբրև եկաւ 'ի Կոստանդնուպոլիս, արկաւ 'ի

պատուոյն, և աքսորեցաւ գարձեալ 'ի Մալղարա։ Ընդ 'ի տեղի նորա Լալա Մէհէմմէտ, որ յերկոտասան ամաց միջոցի 'ի նուիրակութեանն պաշտամանէ ամբարձաւ մինչև յայս գերագոյն իշխանութիւն. այլ յետ երից աւուրց մեռաւ, և անդրէն կարգեցաւ յառաջնու

բարս, կաղմէին զկամուրջս, և զօրաժողով լինէին։ Ապա Սինան յանկարծ ամենայն եղև, առեալ զառաջ ամենայն ազգաց, և մանաւանդ քրիստոնէից և պատմագրացն Օսմանեանց՝ զորս ցանգ յարչամարչս ունէր. և զասն առ նոսա զանձք բազումք յոյժ, և վերադարձաւ հաղարոսկիք։ Եւ ամբարձաւ՝ ի տեղի նորաքնարն ազգքայի Խարսիմ փաշա։

Խաղաց գնաց Մէհէմմէտ ազգայ հանդերձ ահեղ պատրաստութեամբ բանակին յամենայն յունիսի յամի 1596, և մերձ՝ ի Վարսոն կամուրջ արկեալ անց պաշարեաց զԷրեաւ քաղաք, որ և Էկեր կամ Էկրի։ Հրաւէր կարդաց քաղաքացւոց առ գենն մահմեդական. և կամ եթէ անձնատուր ասէ լինիցիք, երդուեալ յերիմարիամ և՝ ի սուսեր, զի ազատս արձակեցից զձեզ։ Յաւուրն Օմանեարդի հրդեհեցաւ քաղաքն, և որ՝ ի միջնաբերդին էին՝ անձնատուր եղեալ ենիչէրիքն յարձակեալ կոտորեցին զնոսա յանխնայ արս շորեքհազար և հինգհարիւր։ և յայս ասկս կոչեցաւ Մէհէմմէտ ազգայ յոմանց Ֆաթհինի Էկրի։

Ապա եղեն երրեակ պատերազմունք մեծամեծք՝ ի բացի, և Օսմանեանքն յոյժս մանաւանդ կրեցին քան հասուցին ի ընդդեմս։ Գրեաց թագաւորն իւրով ձեռամբ զհակիրճ թուղթս զայս առ վեզիրն մեծ, և ասէ. «Դատարակ իմ,

զիարդ լինիցի թէ թողուցում զքեզ ասել՝ որպէս սպարապետ, և ես մեկնիցիմ 'ի Կոստանդնուպոլիս»։ Սատէոսն հակառակ կացեալ էր այսմ խորհրդոյ. զնոյն և վեզիրն մեծ արար. և յամենայն հոկտեմբերի ճակատեցան կողմանքն երկոքին 'ի գաշտին 'ի Քէրբէշիէ։ Յաջուստ թեւի կարգեցան շրջէքին կուսակալքն փոքրուն Ասիոյ, Գարամանայ, Բէրիոյ և Մարաշոյ, և 'ի ձախուստ՝ կողմնապետն Եւրոպէան և կուսակալն Դամբշվարայ. յառաջապահ էր կուսակալն Աղդայ, և 'ի միջավայրին առ նուիրական դրօշուն կայր ինքնին թագաւորն։ Հարան բանեցան երկուստեք յայգուէ ցօր հասարակ, և Մաճառք և Գերմանացիք շփոթեցին զկողմն արքայի. թերևս և զյաղթութիւնն ըմբռնէին 'ի սպառ՝ եթէ չէր նոցա ընդդէմ հրամանին Մաքսիմիլիանոսի զքսին մեծի յարձակեալ յաւուր կահուց և կարասեաց։ Յայնմ պահու մեծի վանդին Մէհէմմէտ արքայ զգեցեալ գոլով զկրկնոց մարգարէին խրատանց՝ անյողդողդ եկաց մնաց ընդդրօ-

1 Ան իսկ է Խըրքաթ Էրրիք, կամ Պէրքէթ Էրրիք անուանէալ այծէայ մարգարէին իրեանց Մահմէթի, որ'է պահէպի կայ'է գանին արքանի։ Զայս երինոց՝ յամին 630 յէտամբ իրավարոյց նա փէրեղի սահմ Գիյաթ իպն Զէհհիր իսնէնէլայ սուլ փէրեսաթին զարյիր

շաբ մարդարէին՝ քաջալերեալ 'ի քանէից Սատանայեայ. և վէճերն ճղալեզաւոր եղեալ յանկարծակի իւրովքն հանդերձ 'ի դարանէ անկաւ 'ի վերայ թշնամեաց, որք զեռ ևս տիրեալ արկեզայց գանձուն՝ ոստոստէին 'ի վերայ: Ի դոյզն ժամու ոգիք քսան հազար 'ի Մաճառաց կոտորեցան, և այլք շտապ տագնապաւ 'ի փախուստ խուճապեցան, և եղեն անկեալքն 'ի ճահիճս և 'ի տեղ թանձրաց աւելի քան զյիսուն հազար այր, և անկան 'ի ձեռս Օսմանեանց թնդանօթք ընակեալք ինեսուն և եօթն:

գովեսք յօրինեալ էր: Ապա ամբարեալ Միավիէ Ա գնաց ոսկոյ գնեաց զայն յորդորոյն Գլայպոյ, և էր ընդ նուիրական գրօշուն: Ի գառաւառն պապաս գիպալիէղէնս կոյ պապաքեալ. և գալի մ անգամ 'ի գարուոջ 'ի հնգեպառանէրորդի առուր Բամաղան ամսոյ մեծաւ հանդիսիւ և յարգանօք 'ի համբոյր արքայի և առաքանաւոյն: Զինակիրն մեծ կոչեալ 'ի կողմանէ երինոցին՝ գայ զայն 'ի համբոյր ելիլոցն, և զհամբուրեալ գնեալ արբեալ ղարուլիս՝ պարգևէ զնոյն համբուրողին: Յետ այնորիկ գնենպէգն և Ղազիպ խուլեաբաք ընդհամբուրեալ մասն երինոցին լոգանան վեր 'ի վերայ 'ի կոնգ արծաթի, և նեբրքինապէգն բաղխեալ ղջուրն 'ի բաղմանիս ջիլս և կընքեալ առաքէ յընծայ առաջիկայ եղելոցն հանդիպին:

Պատճառ սկզբի յաղթանակիս յետ
արիապէս խորհրդականին Սատէսի-
նայ՝ քաջութիւնն էր ճղալէզաւէ Սի-
նան փաշային. վասն որոյ անդէն ընդ
մտանել իւրում 'ի խորանն արքայի,
ողջունեցաւ 'ի նմանէ որպէս վէզիր մեծ:
Իսկ Խարահիմ փաշա ոչ ինչ հմուտ լի-
նելով էղելոցն՝ 'ի գործս իշխանութեան
իւրոյ պարապէր տակաւին, զի և կնիքն
արքունի չև էր 'ի բաց առեալ 'ի նմանէ.
և թուէր արքայ տարջացեալ ինն ընդ
փոփոխութիւն երկիւղեան առաւելն: Տաղ-
նապեցան ընդ այս Սատէսին և սենե-
կապետն արքայի Ղազնէֆէր, և չկա-
րէին և ոչ մին 'ի նոցանէ համարձակել
և յուշ առնել արքայի զկրան՝ գիտելով
շատ զսէր և զմտերմութիւն նորա առ
Խարահիմ: Յայնժամ սիրտ ապետն
արքունի Ահմէտ ասա յանձին կալաւ
ասել զկրան հնարիւք ինն ճարտարու-
թեան ցարքայ. և զի բերան ունի էր նա և
թիւրք, որպէս ասէ Դայիմա, եկաց ա-
ռաջի արքայի և ասէ. «Տէր արքայ,
Սատէսին էֆէնտիսիմայ՝ զի 'ի յոտա-
զել այլ ևս արքունի կնքոյն առ Խարա-
հիմայ՝ վասնզ է խռովութեան իրիք
յուզելոյ 'ի բանակին»: Եւ արքայ յետ
սակաւ ինչ մտախորհ լինելոյ ասէ. «Թող
երթիցէ սենեկապետն մեծ և առեալ
'ի նմանէ զկնիքն տացէ ցՍինան»: Եւ
էղև որպէս ասացն: Այլ Սինան զան-
մեծ հասոյցն պատուութեանն 'ի սուղ ժա-

մանակի իշխանութիւն իւրոյ։ Նախ, զի տարտարայնոն խառութիւնքն հնաւանութեամբ եղև դասալիք զօրականաց իւրոց և ելեալ հաղարաց. և զորս ածէրն ընդ բռնութիւն՝ քաշուեալ նախասալից մահուանէ վճարէր 'ի կենաց. նմին իրսն և որք զերծան 'ի ձեռաց նորա՝ սկսան 'ի խուսքս խուսքս յելուզակել զԱխա՝ յայտնի ապստամբութեամբ, որպէս ասացի։ Եւ երկրորդ, զի զՂազի քէրէչ խան Խրիմու ընկէց յիշխանութենէ անտի նորա սակս չգալոյն 'ի պատերազմն, այլ առաքելոյ անդր զնոցայն իւր զՖԷԹԻՀ քէրէչ. որով ծագեցաւ 'ի Խրիմ ապստամբութեան մեծի։

Մինչդեռ թագաւորն չու դարձի առնէր 'ի Կոստանդնուպօլիս, եհաս առնա թագուհի 'ի մօրէն իւրմէ, յորում ինքնակից լինէր որդւոյն վասն յաղթանակին, և յայտ առնէր զահաճութիւն իւր ընդ կարգումն 'ի վերայ մեծ Սինանայ։ Անդէն հրամայեաց Մէհէմմէտ առնուլ 'ի ձեռաց նորին զկնիքն արքունի. աստուծոյ գնա ՅԱՂՇԷՀԻՐ, և զաղեկամ նորուն զՍատէտին արկեալ յիշխանութենէ՝ ապատեսիլեաց նմա քնակել այնուհետև յանդորրս, և ոչ եւս խառնել յիրս պետութեան։

Զգիշեր մի օթագայեալ թագաւորին 'ի Տաւուտ փաշա, ուր եկեալ էր նմա ընդ առաջ դշխոյ մայրն իւր Սաֆիյէ սուլթան, 'ի վաղիւ անդր եմուտ մեծա-

շուք յաղթանակաւ 'ի քաղաքն։ Ամենայն ուստեք ձայնք ուրախութեան և բարեմաղթութեանց հնչէին, և ամենեքն էրկրէք էրկրէք զամէնն կրկնէին։ Աւելի քան զերկու հազար արուեստաւորս անցին 'ի հանդիպի. և թագաւորն ընդ փողոցսն զարդարեալս ոսկեհատ դիպակօք և գոյնագոյն ասուէիւք անցեալ եմուտ յապարանսն. ուր քաջ քերթողն Պագր մատոյց առ նա գքերթուած մի գիւր 'ի գալուստն արքայի. և ոսկւոյ հանդէսն ջահավառութեանց և ուրախութեանց առուրս եօթն։

Ընդ 'ի Կոստանդնուպօլիս էր յայնժամ գեղապան Շահարամայ եկեալ հազար արամբք խնդակից լինել թագաւորելոյն Մէհէմմէտայ, և ուսուցանել գյաղթութիւնս թագաւորին իւրոյ ընդդէմ Իւզուկբաց։ Մինչդեռ յայց եկեալ էր գեղապանն առ մեծ վէզիրն Խալրահիմ, եհարց սա զնա՝ եթէ և Շահարամ ուսումնասէր իցէ իրրև զնախնին իւր զԴաւութիւնս, և զոր ազգ ուսման առաւել յարգիցէ։ Եւ նա ասէ. «Էր իսկ քաջ ուսումնասէր, և առաւել քան զայլն ամենայն սիրէր նա ընդ իրաւանցն ուսումն»։ Յայնժամ Խալրահիմ «Ա՛յ, ասէ, արդարև ձեր ինչ հարկաւոր թագաւորի, որպէս արդարութիւն և իրաւունք»։ Յառնեալ վէզիրաց յանդիման լեալ գեղապանն և թագաւորին՝ մատոյց զհրովարտակն Շահարամայ առ

կրասեբագոյնն յեօթն վէզիրս, որք ձեռն
'ի ձեռանէ մատուցեալ եդին զայն առ
գահոյիւք թագաւորին. և 'ի խոնարհել
գեսպանին 'ի համբոյր դրոշակին Մէ-
հէմմէտայ և յարուցանել զհակիրճ
բարեմասնութիւնն, զոյս ևս թ ա-
բար ներս թագաւորն պատասխանի.
«Բարի է, բարի»:

Եկին հասին 'ի Բիւզանդիոն և այլ
գեսպանք եւրոպական և ասիական ազ-
գաց. յորս նշանաւոր գաւառ գես-
պան շէրիֆին Մէքքէի, որ ածէր 'ի
պարգև ազգայի զհին ծածկոյթն Քեաա-
պէի և զերեզմանին Մահմէտայ: Ընդ
առաջ ելին պարգևարարքն զարդ-
արեալ վէզիրքն և գիտունքն. և մե-
ծաւ յարգանօք թագաւոր կալեալ 'ի
ձայն թմբկաց և փողոց ածին 'ի մզկիթն
Էյուպայ 'ի պարտան ազգաւն: Նոյն-
պիսի շքով առաքեցան ապա յԱրաբիա
նոր ծածկոյթք գործեալք յԵգիպտոս
և յայնժամ սկիզբն եղև սերնդոյն
Մահմէտի՝ որ Էմիր անուանին՝ արտա-
խոյր ունել կանաչագոյն:

Սաղուրճի Մէհէմմէտ կարգեալ ըս-
պարապետ առաքեցաւ ընդ այն ժա-
մանակս յերկիրն Մաճառաց. և բա-
զում այն էր զի 'ի պարտութիւն մատ-
նեցաւ քան պարտուց զԳերմանացիս.
և զսոգիւռ ձախողանայն արկանէր ըզ-
խանիւն Խրիմու, որ չեկն յօգնութիւն
բանակին: Այնժամ պատմեալ ազգայի

ընդդէմ Խարտիսոնայ վէճիցն մեծի, որ և ևս գրգռեալ էր զազգուելն Խրիմու՝, արկ զնա յիշխանութենէն, և կարգեաց փոխանակ նորա զնեղբինին Հասան փաշա։ Սա պաշտպան ուներլով զմայրն տպրայի՝ հանդարտակ հպատահարէր զամբոխն. և զի թշնամի էր Սահակատենայ, 'ի մեռանել Պոսիանզատէ գնեալ էր զառն գործեաց խարիսն լինել զի մի ընտրեսցի Սահակատին։ Ա՛յլ արքայն ոչ միայն զհակառակն տրարտ, այլ և զվնեցքն երարձ 'ի նմանեն, և զնա հրամայեաց խնդրատուն առնել, և զինչս նորա գրաւել յարքունիս։ Եւ ապա առաքեաց զվնեցքն առ Ճէրրահ Մէհէմմէտ մեր հանդերձ թղթով՝ որ ուներ զրինակ զայս. «Եղեալ ոչ գնացեալ 'ի պաշտամանդ որպէս պարտն է, մերմեռելոյն եղեցեալ և վատանդեան յանխոնարհ»։

Եւ քանզի ընդ այն առուրս Սադուր Ղի Մէհէմմէտ ոչ մի ինչ արուեստեան գործ ցուցեալ յաշխարհին Մառնաստ՝ յուզեաց և զպայրոյն ցասման ենթէ-

1 Զի սա երկին հրամարդաւոր արքունեաւ սա երկուսին եղբարս Ղազի սերեալ Ցնեղիկ սերեալ՝ երկոսանցն ևս ընդհանր թշնամանութեան թագաւորելոյ, այլ զընդարութեանն պատսան առնէր 'ի նոսա ամբոխին։ Յորմէ ցանուի անհաւրինք յուզեցան 'ի Խրիմ. մինչև պատնա Ցնեղիկ և ընդեցաս ապստամբեալ, և Ղազի ճաց ինքնիշխան։

րեաց, որ խորտակեցին 'ի գլուխ նորա զվրան նորին, ապկաւ նա 'ի ապարատաութեանն պաշտամանեն, և կարգեցաւ փոխանակ նորա ապարատեա և վեզիր մեծ գարձեալ Իբրահիմ փաշա։

Խաղաց գնաց Իբրահիմ յամին 1599 'ի Գելիբոլս, և անտի յերկիրն Մանանաց։ Այլ նախ հոգացաւ բանիւք շրջոմութեան թակարթել զՍագուրձին 'ի խորխորատ կորուստն. վասն որոյ գովեաց և հաստատեաց զապօրինաւոր գործ նորին՝ որով զկուսակալութիւնն Սէմէնտրէի տուեալ էր նա 'ի խանն Խրիմու, և 'ի ծածուկ ազգ ազգաց զիրացն 'ի Կոստանդնուպօլիս։ Անտի եհաս ընդհուպ զօրավարն Ենիչէրեաց Դրբնագին Հասան, և երբեր զգաստակնիք մահուանն 'ի Հիսարդրդ, ուր ինքն իսկ Սագուրձին հրաւիրեաց զզօրավարն 'ի խրախութիւն մեծածախ սեղանոյ, և խիլայեաց նա զնա։ Եհան զօրավարն 'ի ծոցոյ իւրմէ զհրովարտակն ապրանքի, և ապրն որ ընդ իւր էին՝ յարձակեցան անկան 'ի վերայ և սպանին զՍագուրձին անդէն 'ի բազմականի անդ։ Իրրև ազդ եղև Իբրահիմայ՝ կնեղեաց նա զանդիտութիւն և զարմանս և բարկութիւն նա ընդ ինքնահրամանն գործ զօրավարին. սակայն և ինքն հրամանս եառ թագնաբար զօրավարին ուսանին հեծելոց՝ Ալանա Մէհէմմէտ կոչեցեալոյ ձերբակալ առնել զհամարակալ սպանելոյն զՆՈ-

մեքենզաւոր և արկանել 'ի բանս։ Նաև բարբարոսաց մեզ մեղապարտն վէճիւրն՝ զի յանդգնաս իւր բանսարկել եղեալ էր հանդարտական, և բազմաբարբառ առ Խալրահիմ. և նա զարձեալ կերդեաց զգիտել ինչ ամենեին. և կոչեցեալ զԱլաձա յանդիմանեաց զնա և ասէ. «Զի՞նչ այդ յանդգնութիւն իցէ բանսարկել զայր հանդարտական բան ունձին հաճոյից». և մինչդեռ զայսպիսիս ասէր բերանով, զաջոյ ձեռին զցուցանէաւն Ն՚ելլով յամի աւելին՝ ակնարկէր պնդապոյնս պահն ուներ հանդարտական։ Սակայն Էքմէքճիզաւնն յետ Ժամանակաց ոչ միայն զերծաւ 'ի բանսարկանութենէ, այլ և հաստատեցաւ յառաջնեան բարձին, և էառ զքէն վրիժուն ՅԱլաձա ՄԷՀԷՄԷՏայ՝ գրաւեալ յարքունիս զինչս նորա ակնարկելոյ բարկանեաց։

Յայնմ ամի վէճքն մեծ էին բերդաբոյս բազուն՝ զորս գրաւեալ էր Գերմանացւոց, և ձեռնեաց 'ի Պելգրատ. և 'ի գալ միւսոյ ամին էին և զամուրն Գանիշա կամ Գանիժէ յետ քառասուն և ութօրեայ պաշարման, յորում յիսուն թնդանօթք մեծամեծք անկան 'ի ձեռս յաղթականացն։

Այս արշաւանք Օսմանեանց 'ի Մաճառս ձգեցան այլ ևս ամս վեց, յորում Ժամանակի գէպք նշանաւորք եղեն ազգակ հեծելազօրացն 'ի կոստանդնուպօլիս։ Որոց սրամտեալ ընդ

գործս Քէբրա անուն կնոջ հրէի, որ
իմանակաւ գոլով իրաց կանանոցին ար-
քունեաց խառնէր և 'ի խնամս պահա-
մէ ունի, և կաշառակուրծ լինելով զարս
անարժանս ժանան առնէր 'ի բարձս
սատարմանս, ամբոխս արարին, և 'ի
ձայն բարձրկոմէին զգլուխս պատուոյն:
Եւ սեղապան վերլրին մեծի խաղիլ
փաշա երկուցեալ՝ զի մի զանազով զՏը-
բեայն՝ մահ 'ներհամեցուք անէին, և մեր ևս
մատաւորին, հրամանս ևս մատանէ զՔէ-
բրա որդւոյն Հանեգերա 'ի ձեռս հեծե-
լազօրուն: Իսկ 'ներքս յարձակեալ 'ի
վերայ երկիւղացն անդէն 'ի գլուխս
անդրոց առնին զէշագէշ պատան-
ցին զկիներն և զորդիս նորա, և զյոշա-
ակալ անդամանն կտրեցին առ գրամբ
ասադորերոյն՝ յորոց ձեռս հաստաքերնա
զկաշառս: Ամ խաղիլ վասն այնորիկ
իսկ ընկեցիկ եղև յիշխանութենէ իւրմէ:

Սհադնադոյն քան զայս յուզէր յա-
րևելս խառնութիւն ապստամբութեան
'ի ներին ժամանակի. զի Աղամբէգի
Գարամանցին անուն գնդապետն ենի-
չէրեաց 'ի գլուխ կացեալ քան հա-
զար Քրդաց և Թիւրքմենաց փոխան
ասեալ գնացեալ 'ի բանակն որ 'ի Մա-
ռաս, զգէմ կարաս երկիցս և երիցս
արքունի զօրաց մարտիս պատերազմի,
և սպանցեալ յԵղեսիոս՝ անուանեալ
զանձն իւր թագաւոր Աղեոյ: Եւ թէ-
պէտ ևս յետ երկուց ամաց 'ի պարտու-

թիւն մասնեալ փոխուսական անկաւ 'ի
լերինս Ճանիկոս, և անդէն մեռաւ,
սակայն առ նմին կալաւ զոմանսի նորա
և զդայրն իւր Տէրն Հիւսէյին, և ընդ նոսա
Շահվերդի և Եռաբարգամի և Դա-
վիթ զօրավարք ապստամբ գնացին. որք և
յաշուառազգեալն Ալիսէ Հաշիանոյ 'ի ա-
զգէն զաշուառածն յայլ և այլ տեղիս,
զի մի կարասցին Օսմանեանք ոչինչ գնա-
նել։ Բայց ոչ ինչ աշխատ արարին ոչինչ
զկրս ոչինչ, և բազմագոյն մեծաս
վասնզի հասուցին բնակչաց փոքրուն Ա-
նոյ. այլ յամի եւ առ ոչինչ Տէրն Հիս-
սէյին զզօրավարն իւր զՇահվերդի 'ի
Կոստանդնուպաւլս և հնազանդեցաւ զնեղու-
թիւն։ Եւ ոչ միայն զնեղութիւն, այլ և զբոշ
և խիստս ընկալաւ, և զկուսակալու-
թիւն եւս Պոնտոյ. իբրու զի ընդ թշ-
նամիս հասաւոյ իւրեանց մարտս և զեռ-
քաւեալն զյանցանսն. և խոստաստ-
ման զօրք նորա ածան 'ի սամերայամ
'ի Մահնաս։

Յամին 1600 յանկարծանահ փոխ-
նամուս էլ 'ի կենդանեաց զԵնգիսն Սա-
սէս. յետ սակաւուց և սարա-
գլուխն օսմանեան քերթողաց Ալսիէլ
պարգ. և անկեալն և խոհական սամ-
ուսդիրն Ալի Էֆենտի Ա՝ 'ի սոցա մա-
հուն ոչ ինչ այնպէս կարեւոր փոխուս-
թիւնք եղեն 'ի սեռս մեծաս որպէս 'ի
մեռանել անդ մեծի վեզիրին Խարահի-
մոյ 'ի միում ամին։

Քանզի խնամն խաղաղութեան հնարք ընդ Գերմանացիս՝ մինչդեռ գարձ արարեալ զայր Խաղահիմ 'ի Կոստանդնուպաւլիս, հիւանդացեալ մեռաւ. ինչք նորա կիրք ցան, և զխակնեանծեալ 'ի թագաւորեալ քաղաքն Համբցաւ 'ի շիրմին, զոր ինքն կանգնեալ էր 'ի գաւթի անդ մկրտիչն Ճէհզատէ Հասիսի կոչեցեալ։ Եւ կարաւ զառ զնորս, որպէս և զինչս և զկիրս նա՝ ԵմիշՄի Հասան. և շատ ապաղնապաւ զօրս ծանու գիսակաց ազատել յերկամեակաց պաշարմանէն զամուրն Գանիժէ, յորում՝ արիապար և Հարստաշնար խորամանկութեամբք ամրացեալ մարդունքն զօրավարն Թիրեաքի Հասան, օժանդակիչ իւր ունելով յանձկութեամբ պահանջգարս Խամէր զուինզի ինքն պատմութեամբք զանազան երաշոց քաջալերիչք զմարտիկս իւր, և Խամէր կերդեալ զարարկամութիւն առ պաշարիչն՝ թագաւորն պատրաստական ասէր ասէր արձակէր 'ի բանակն Գերմանացւոց. և առ 'ի կերդելոյ պատուաւք առաքն զերեսլոյն քրիստոնէից զմիշտս պոռնն իւրոյ՝ զի յապաղէ Գերմանիանաս սատակացուցանել զպաշարեալն ամրոցին, Հանապազ կրէր 'ի ձեռին իւրում՝ թագաւորակ ոսկեայ թանձեալ 'ի սոխաջուր. ապա արձակեաց և զանձն 'ի գերեաց անուն առ Գերմանիանաս։ Ընդ նոս իրրև էառ զլուր մերձենալոյ մեծի վէճիրին, հարկեալ և

'ի սասիկ ելոյ ձմերայնոյն, 'ի փախուստ
խուճապեցան, թողուալ ելքուալ և զկահ
և զկարասի բանակին ողջոյն։ Հետամուտ
եղեն ամենակարգն փախստականցն, և գերե-
ցին 'ի նոցանէ ոգիս վեց հազար, թող
զոչս 'ի սուր սուսերի կոտորեցին. և
Թիրեանքն Հասան մնաց 'ի խորան զրաք-
սին՝ մատոյց զաղօթսն զահուժեանն 'ի
վերայ գահոյից նորին, և ապա ածեալ
սուսերսն յերկուս ձեռքեաց զգահն
և նստաւ 'ի վերայ։ Իբրև եհաս անդր
վէզիրն մեծ, պատուեաց զարդեանք մե-
ծամեծք զիշխանն քաջ. որ կրկին եւս
մեծարեցաւ՝ առեալ 'ի մեծէ դրանէն
առանձին նստեալ ոսկեղէն և շիգդ ոսկի։

Ի գալ ամին միւսոյ եկաւ Զմիշձի Հա-
սան պատանեաց պարշարանաց անդրէն և
գրաւեցեալ Պէլկրատ և զայլ ամուր ա-
մուր տեղիս, և 'ի գարձին խրատեաց 'ի
ձմերոյ 'ի Պէլկրատ քաղաք, և հաս անդր
իսանն Իսրմեա Ղազի քէրէչ. որոյ քան-
զի և զդարդն Սէլամեթ քէրէչ, Մէհէմմէտ
քէրէչ, և Շահին քէրէչ յերկիրն Օսման-
նեանց էին, առ ահին թէ զուցէ զմի ոք
'ի նոցանէ 'ի տեղի իւր կացուցանիցէ
թագաւորն, զայս անդամ անկարգ
փոխեցաւ 'ի բանակին։ Այլ վէզիրն մեծ
ահագանեաց հասանէլ 'ի Կոստանդ-
նուպօլիս, սէր ազնուկ մեծ բորբոքէր
գարձեալ յերկուսց հեծելազօրացն։

Զանազի ոչխս յանեալսն յուռուպի
յամին 1603 ամբոխ ազգաց բազմաց

լան առ թագաւորն ասկր յանդիմանելոյ
զարամանցոյ Աղխա. յոյր ասկ կամիմք,
ասէին, գէմ յանդիմանն խօսել ընդ ար-
քայի։ Եւ արքայ 'ի գուռն կանգնոցին և
բազմեցաւ 'ի գահոյս՝ ունելով յաջմէն
յահեկէ զգենդեմն և զանազան զան վէ-
զիրին, և զխունկանոս երեսառն. և ա-
ռաջնորդք սարդարքն Հիւսէյնն
Խալիֆա, Փորհաղ Օսման, և Ճիզմի ա-
նուն ունի ժարհեաղ մնացին 'ի ձեռս
նոցին խակ արքայի, առանց ասելոյ զայն
նոսա 'ի ձեռս վէզիրաց, զիր ամրապան-
նուելեան, որով պահանջէին ասիրա-
վրէժխնդիր լինել յառագանելոյն վասն
անարգանելեան նոցին. և զի նոքա են,
ասէին, ամենայն չարեացդ պատճառք՝ ոչ
ինչ ազդելով առանց վերուստ արքայի
զհանգամանս աշխարհիս։ Սոքին իրի և
ասեցէին ասլ 'ի ձեռս իւրեանց յանուա-
նէ զգլուխս երկուց ներքինապետացն։
Հրամանն էր արքայ յանկանոյ կանն՝ ա-
ծել վաղվաղակի զկառավարս նոցա.
և ասեցէն բերեալ ընկեցան առ ոտս
խառվայն ասեա և ապիսակ գլուխքն
արիւնապատեալք. և արքայ ոչինչ
զամենակալսն մեկնեցաւ 'ի ներքս։

Ի նոյն առաւօտս անհանգիստ սաղմա-
պան եհաս Եմիրէն Հասան 'ի Դրա-
մանդեռապոլիս լուսիկ մեջիկ, և 'ի նմին
գիշերի ազգ ազար զգալուստ իւր ար-
քայի, և գենդեմն, ապաշելով զնա
ծանուցանել ինքեան՝ եմէ յորում

պահուառուառուսուն հնար իցէ խուսակից
լինել ընդ նմա զկարևոր ինչ իրաց։ Ի
վաղիւ ուրեմն ընդ վայր ոստանէր նա առ
'ի գնդապետն պատասխանեաց. քանզի
խուսափարքն գիմեցին առ գնդապետն
Սամուէլն, և ասին 'ի նմանէ վնիս
հրամանի՝ եթէ մահապարտ է վէզիրն
մեծ, փոխանակ զի շիարաց վնասել 'ի
Ապա յեօթնեսանելորդի աւուր ամենայն մայիսի հրամայեաց Օսման ապքայ հարկանել զարքունական վրանն յԹանկիւտար : Գրեաց առ նա գենարալն վՅիս հրամանի , եթէ ոչ ինչ է պէտք թագաւորաց յուխտ գնալ , այլ իրաւանց և արդարութեան եթէ միտ դնել , մանաւանդ յերկիւղալից ժամանակս : Այլ նա պատասխանեաց զմուղմն զայն , որպէս ասէ թուղթ էֆէնտի : Զնոյն թէլագիր եղեն նմա և Մահմուտ Թանկիւտարի , և արքունի առաջապահն Մէհէմէտ Ճէլէպի , որ գուշակեաց նմա ձախող լինել առաջիկայ իրաց , զի շարագուշակ առաջքն ասէ (երեսակն և հրատ) են արդ 'ի խնդրելոյն : Այլ 'ի զուր :

Յաւուր ութուսանելորդի ամսեանն մայիսի , յորոց 'ի վաղնջն վրանք

թագաւորին շուտ ոնեին յԻսկիս-
տար, ենիչէրիք և սպայք աղմկեալք և
խռովայոյզք սակս հանդերձանացն, և
կատաղեալք 'ի լուր համբաւոյ գալըս-
տեան եգիպտացի զօրականաց, ժողո-
վեցան միահամուռ յԷթիմէյանին։
Զնուիրակապետն Զալբիզատէ զառա-
քեալն առ նոսա 'ի թագաւորէն քար-
կոծ արարեալ հալածեցին. և ապա խոր-
հուրդ արարեալ հարցին վճիռ 'ի գեն-
պետէն՝ եթէ օրէն ելցէ սպանանել իրա-
ւամբք զայնոսիկ՝ որ թեկագիր լինին ար-
քայի նորաձևութիւնս առնել, և վառ-
նել յումպէտս զինչս Օսմանեանց։ Հաս-
տատեաց գենպետն զվճիռն, և ասէ.
Այո։ Յայնժամ ենիչէրիք հալածա-
կան վարեալ բռնաքարամբք զզօրավարս
իւրեանց զեկեալս 'ի ցաւուցանել զնո-
սա, դիմեցին յապարանս ուսուցչին
արքայի, և նա հայէր ընդ պատուհանս
վերնատան իւրոյ։ Ի ձայն բարձր կար-
դացին առ նա ելանել 'ի վայր. այլ նա
կերպարանափոխ լեալ 'ի փախուստս
Հապարեաց։ Սրբա խորտակեցին զդը-
ուռնն և զապարանն յաւարի առեալ
կողոպտեցին։ Ընդոմ յարձակեցան յա-
պարանս վեզիրին մեծի. և զի անզգէք
էին՝ վանեցան 'ի պահապանաց գրանն։
Դիմեցին 'ի կրպակս զինավաճառաց և
կամէին յափշտակել զզէնսն. այլ յա-
զանել կրպակատերացն, և զի խաւար և
ելեկոյին եւ 'ի վերայ հասեալ էր, մեկ-

1

նեցան 'ի սեղան խրախճանց՝ մանաւանդ 'ի խորհուրդ քան 'ի քուն հանգստանն։

Յայնմ գիշերի առեալ կազմեալ խոստացաւ արքայ գիտակնոց՝ յետակալ 'ի խորհրդոյ ոնոմ գնալոյ 'ի Մէքքէ։ Ապ ենիշէրիք և տպայք վաղ քաջ ընդառաւօտն Ժողովեալ 'ի գաւիթ մկիթին Մէհէմմէտայն, և մատուցեալ զաղօթս խրախանց զայգուն, գիտեցին մոլեգնաբար 'ի ձիարձակարանն, և գոչէին. «Սպանցի Խաղէր էֆէնտի ուսուցիչն արքայի, նենգիւնագլուխն Սիւլէյման, սեղանատն Ահմէտ փաշա, հանդարտակալն Պաքը փաշա, վէզիրն մեծ Տիլաւէր փաշա, և զօրավարն Ղասան աղա»։ Ընդ 'ի ձիարձակարանին էր և գենդեան Ղասանլուն հանգերձ այլովք մեռանն արամբք գիտնականաց։ զոր և հաւանեցան առաջի առնել արքայի զինեղիս խառվելոցն։ բայց նախ հարցին ցնսա եմք բաց 'ի նենգիւնագլուխն և յուսացէն արքայի՝ շորիցն մնացելոց զինեալ յանցանք եղեն։ Պատասխանի եառեալ ենիշէրիքն և ասեն. «Ի գրուանս վէզիրին մեծի քարկոծ եղաք և նեռասիրաբանք։ հանդարտակալն փոքր անպիտանս հաստատեալ մեզ։ սեղանատն խոտիանէ զառ Ձիկս հրաժարելոցն 'ի զինեւորութենէ, և Ղասան գործակից նորա»։ Եղեալ գիտնականաց առ արքայ՝ խնդրեցին 'ի գինոյ զօրացն տալ զդրուխս արանցն այնոցիկ։ յաւելին և ազատել զնա՝ զի յեր-

կուց չարեաց զնուազագոյնն ընտրեալ կալցի։ Թագաւորն ասէ համարձակեաց զնոսա. և 'ի ամենեալ նոցա ապերախտ, բարկացաւ ընդ նոսա և ասէ. «Արդարև իբրև զդլուխս ապատամբաց խօսէք։ Նախ զձեզ խորտակեցից, ապա զնոսա»։ Իբրև նոքա լռեցին, վէզիրն Հիւսէյին անկեալ առաջի գահոյից նորա գոչէր. «Տէր արքայ, եթէ և զիսմ խնդրեացեն զդլուխս, մատնեա և զիս, միայն թէ գուսպրեսցիս»։ Կրկնեցին և գիտնականք զիւրեանցն ապերս, այլ ոչ այլ ինչ լուան պատասխանի, բայց եթէ՝ 'ի բաց, և կալ մնալ յարքունիսն։

Իսկ խառվարպքն 'ի յամենայն նոցին 'ի միս առեալ զկրացն գէպս, խուժեցին 'ի գուռն արքունի, և անընդդիմակ մտին 'ի գաւիթ ապարանիցն։ Ընդ ժամն երիկուս յածեալք կոծեալք անդէն ապաղաղակէին տալ ինքեանց զդլուխս ուսուցչին, զնեղբինապետին, և զվէզիրին մեծի. և չէր ինչ պատասխանի։ Ապա խորտակեցին և զերկրորդ գուռն, և պաշարեալ զաստան սատարեցին՝ զնոցն ապաղաղակ հարկանէին։ Դարձ գիտնականաց բազմեալ կային յայնժամ առ երրորդի գրան արքունեացն՝ որ կոչի Պարպիսատակ. և որպէս ասեն, մի ոմն 'ի գլխաւորաց անտի նոցա Ղուպալի էֆէնտի կոչեցեալ՝ ասէ ցապատամբսն. «Բանք մեր չինին լսելի, երթայք և դուք ինքնին խօսեցարուք»։ Զայն ան-

սեալ Նեղբինեաց ոմանց որ անդ մնա
կացեալ պահ ունէին գրանն փախեան
'ի Նեղբա. և ապա զՀեռ նոցա փողիցին
մանին 'ի Նեղբաբերդն գաւիթ անդր։
Յայնժամ գոչեաց մի ոմն 'ի նոցանէ.
«Պամիրք զսուլդան Մուսդաֆան։ Զայն
բարբառ կրկնեցին ամենեքեան իբրև ընդ
մի բերան, և 'ի խուռնքս խուռնքս շուրջ
եկեալ 'ի սենեակսն և 'ի սրահս անկոխս
հասարակաց մարդկան՝ 'ի վեր և 'ի վայր
հնչեցուցանէին զնոյն բարբառ. «Պա-
միրք զսուլդան Մուսդաֆան։ Մի ոմն
'ի գիտականաց եղբոյր նոցա զկանանա-
ցին, և նոքա առ հասարակ անդր ընդ-
հատան. և զի շինուածն այն շուռնէր ինչ
գուռն արտաքուստ, կազմեցին վեր-
էլս 'ի փայտից և յառաստանաց և ելին
'ի վեր մինչև 'ի գմբէթի մի, և ահա ըն-
սն պատասխանի նուազ ինն ձայնիւ.
«Ասէ սուլդան Մուսդաֆան։ Յայն-
ժամ քակեցին ենիչէրիքն զարկին, ապա-
նին զերկուս խամբիկ պահանդրդս՝ որ
'ի Նեղբուստ անուն լարեալ զաղեղունս
իբրև անց նետաձիգ կամէին լինել 'ի ա-
ստ. և առաստանք վարագուրաց առ-
նին զմի ոմն յընկերակցաց իբրև անց ի-
ջուցին 'ի Նեղբա։ Եւ ահա Մուսդաֆա
նստեալ յակուռն հնոտի, և զառաջնա-
նորա ազատեալքն երկու։ «Տէր ողբայ,
ասէ ցնա որ ինքն էր, զգրականք ամե-
նեքեան քեզ ապատեալինան ատաքոյ»։
Իսկ նա զայս ելեմ ասաց նոսա 'ի ապա-

սասխանի. Դարաւի եմ։ Զի յերկից աչուրց հեռէ անտուաղ կայր։ Ընդէն ի ջուցաւ առնա՝ի վերուստ կաշեայ գուլիս ջուր ըմպելոյ. եւ ապա հանեալ զնա ընդ երդան հեծուցին յերիվար գնեպէտին. այլ զի չկարէր ուղղորդ կալ առ ակարութեանն, ածին զնա՝ի սրահ արքունական ամրոցն։ Դուղայր նա սարսափմամբ՝ի սեսիլ արանցն սուսերամերկաց շուրջ զնովն. այլ նոքա հարին սուղ ինչ սիրտեալ անդորրեցին զնա, և ոմանք ընթացեալ՝ի հին ներքուստ առեսին եւուն մօրն նորա։

Ի քակել ենիչէրեաց զյարկ վանդակին Մուսդաֆայի, բացաւ յանկարծակի գուռն սենեկին. մղեալ ընկեցան՝ի ներքս վէզիրն և նեղբինապետն, և անդէն փակեցաւ գուռն. և մոլեգին զբարկանքն սա եռեալ պատառեցին զեղկեալսն զերկուսեանն։

Ապա երբեմն ածին ենիչէրիք զՄուսդաֆա՝ի սրահն մեծ և բազմեցուցին յաթոռն՝ սոխակին զգիտնականն երկիր պագանել նմա. և՝ի շառնուալ նոցա յանձն՝ ասէր ամենայն ահա առիք զգլուխս արանցն զոր խնդրէիք, արդ զի՞ նա անպատրաստք լինիցիք. ասեն ցնոսա ենիչէրիք. «Այո գտաք զոր խնդրէաքն, գտաք զՄուսդաֆա զմատգաւորն մեր։» Ասեն գիտնականքն. «Ընդարձք մեր ի՞նչ կերակիցք. Օտանն արքայ ոչինչ ասց ձեզ և ասէ. ահա եռաւ՝ի ձեռս ձեր

զերկրորեալսն, ասացեալ զայլս զոսկի ընդ-
կէր, և ասացէ անշուշտ. զխառնիչսն զի
թէ թագաւորեսցէ Մուսադիա, զուք
ինքնին սպրծասցիք ընդ դրծդ ձեր։» ։—
«Զայդ կանխաւ արժան էր ձեզ ասել,
գոչեցին նոքա. արդ զասա մեք զթագա-
ւոր մեր, հապա և զուք երկիր սպրդէք
նմա։» ։ Եւ երբեմն զի անխոնար-
հելի կամ մնասն նոքա 'ի բանս իւրեանց,
ապա զմերկ առաւելսն ամբարձեալ 'ի
վերայ գլխոց նոցա՝ եռաւն կատարել
զկամս իւրեանց. և մի ոմն 'ի նոցանէ մե-
ռաւ առ ահին։ Ապա ածին Ենիշէրիքն
զՄուսադիա պատգարակաւ 'ի հինն
արքունիս, և անտի 'ի մզկիթն իւրեանց.
և առ յաղխանէլոյ ինքեանց օրդնակաւն
ընդ գլխի Օսմանայ՝ բացին զբանսն և ըզ-
նուագսն, և արձակեցին զկրակսն։

Իսկ Օսման ապրայ յետ մնասանելոյն
'ի ձեռս ապստամբաց զՏիլամիրն զներ-
քինսանելսն, կարգեալ էր փոխանակ
առաջնոյն 'ի վերայ մեծ զՀուսէյին փա-
շա, և առ և պատմանդիպացին Մահ-
մուտ անուն յորդոր լինելին ապրայի շա-
հել զսիրտս Ենիշէրեաց 'ի ձեռն զօրա-
վարին նոցա, որ զառաջինն ոչ էր ընդ
խորհուրդս ապստամբացն, և յետոյ
բռնութեամբ երթեալ էր յերկրպա-
գութիւն Մուսադիայի։ Ապարդեան
ելն. և զիշերապահաց եղեալ գաղտ 'ի
տուն առնն՝ ասացեալս նմա խոստանալ Ենի-
շէրեաց յիսուն ոսկիս ըստ գլուխ և հան-

գերձ ծկրանի, և հեծելազնդին յաւելուած ռոճկի փոքր տաման, եթէ յանձին առնուցուն վերատին խոնարհել ընդ իւրով ձեռամբ։

Ի վաղիւ անդր իբրև տեսին Ենիչէրիք զդաշուառ զօրավարին իւրեանց՝ դուշակեցին զոր ինչ ասելոցն էր. բանս ելին չտալ նմա քնաւ խօսել. և այն ինչ հասեալ նորա 'ի գլուխ սանդղոցն՝ զաղաղակ բարձին, «Հարէք, մի տայք խօսել»։ Մղեաց արկ զնա մի ոմն 'ի վայր ընդ սանդուղսն, և այլք անդէն յօշռտեցին զնա։

Յետ այնորիկ խուժեցին 'ի տուն զօրավարին, և հանին քարշեցին զՕսմանն աղքայ 'ի տեղւոջէ Թաքստեան նորա սպիտակ ներքնաձորձով միով և գիշերային գլխանոցաւ. և ապայն որ կալան զնա՝ եդ 'ի գլուխ նորին զիւր զպատառատուն և զաղտեղի փակիցն, և հեծուցեալ 'ի գրաստ անպէտ՝ ածին 'ի Ամիրոցդս իւրեանց։ Կամէին ունել զՀուսէյին փաշա և տանել ընդ Օսմանայ. այլ նա զերծեալ 'ի կապանաց և խուսափեալ՝ անկաւ ապա 'ի սուր հեատանոցին։ Եւ պատճառք մեծի տարաբաղձութեան Ենիչէրեաց ընդդէմ սմին այն էր, զի 'ի պատերազմին Լեհաց փոխանակ խրախուսելոյ զնոսա բանիւք քաջալերութեան՝ ազաղակեաց էր առնոսա. «Մինթէ կարօտ ինչ իցէ արքայ զօրականաց։ Եթէ հաց անկանիցին,

երիվարս լծեսցուք»։ Իբրև եհաս Օսմանն 'ի սեղանն ուր անկեալ գնէր գիակն Հիսէյնայ, յարատուս հարաւ ասէ. «Ընդարձակ էր գա. եթէ անասնական էր իմ բանից դորա՝ ոչ գայիր յիմ վերայ զարկեալ այս. խարեցայ ես, առաջ. 'ի զար խորհրդոց ուսուցին և նենգիներ սեռին»։ Ոչ ինչ ազգէին ցուսագինիս առանձնաբանեալ նորա 'ի սիրոս մոլեգնեալ, որ ընդ սանձայն Հանապարհն անդադար կսկծեցուցանէին զնա դառն նախատանօք և այպանալից ծաղրս ըստ բանեան. և նա լալագին ասէր ցնորս. «Ա՛յ ժամկոնք, ինչ՞ եմ թագաւոր ձեր»։

Յամ էր Հաշու, և յաշտարակաց մզկիթացն հնչէին աղօթք ուրբանոն։ Զայն բարբառ կարծեալ զօրացն՝ թէ բոզոք եկէ մահուն Օսմանայ, ամբարձին միաբան զձայնս իւրեանց և ասեն. «Մի՛ լիցի ինչ շար Օսմանայ. թող թագաւորեսցէ այժմ Մուսդաֆա. պահեսցի Օսման յապարգայ սէտս»։ Եւ նոր վէզիրն Մուսդաֆայի Տաւուս փաշա առ 'ի ցաւուցանելոյ զաղմուկն եհան զոզորմելի աղքայն 'ի պատուհանն մզկիթին՝ զի տեսցեն ժողովուրդքն թէ կենդանի է։ Մուսդաֆա տակաւին ևս 'ի գողմանն կայր անդանօր. և 'ի սատկանալ ազազակի իրիք արտաքոյ՝ անդէն 'ի պատուհանս ընթացեալ՝ և լանէր յարկը մարդոյն 'ի վանդակսն երկաթիս, զի

տեսցէ թէ զինչ իրք իցեն. և հազիւ մեկ-
նէր զնա անսի մայրն իւր ասելով ողո-
քանօք. «Եկ առիւծ իմ, եկ»։

Օսման արքայ յայնմ միջոցի ոգորմե-
լիս բարբառէր առ որս մերձն կային.
էր զի լալով կշտամբէր զնոսա և ասէր.
«Զինչ կամիցիք անցուցանել ընդ ար-
քայս ձեր ո՛ երիտասարդք, զոր ձերով
ձեռամբ պատրաստէք զկորուստ ան-
տուժեանս և զանձանց ձերոց»։ և էր
զի յերկիր անկեալ զներսումն հայցէր,
և ասէր. «Երեկ թագաւոր էի ես, այս-
օր մերկ և թափուր յամենայնէ. յինէն
առչիք զոր օրինակ, զի և ձեզ ոչ մնայ
կենցաղս այս 'ի ժառանգութիւն»։ Ե-
հաս զինապետն (ՃէպէՃիպաշի) ընդ
Տաւուս փաշային, և արկ զխեղդանն
'ի պարանոց Օսմանայ. այլ նա ուժեղ
գոլով և առոյգ՝ կալաւ զնեղապէս ըզ-
շուանն. և զօրագլուխքն գոչեցին. «Դա-
գարեցէք, մի. ապա թէ ոչ, կորեաք մեք
ամենեքեան»։ Ասէ Օսման ցՏաւուս.
«Ընդդիմանայ դու, և զի՞նչ չար արարի
քեզ. բայց զի երկիցս խնայեցի յանձն
քո և չեռաս 'ի մահ, այլ և յիշատակ-
թիւն ամբարձի»։ Դարձեալ ակնարկեաց
Տաւուս արկանել զխեղդանն, և դարձ-
եալ ընդդէմ կացին զօրագլուխքն։
Յայնժամ ասէ Օսման ցպահակն իւր.
«Ո՞ կացոյց զքեզ յայդ գործ»։ և յա-
սել նորա՝ թէ արքայ Մուսդաֆա, ա-
սէ. «Արքայն Մուսդաֆա յիմար է, և

զանուն անդամ զիւր անդիտանայ. ապէ
էկ քայ ինձ զպատուհանս, և թող խո-
սեցայց առ ծառայս իմ»։ Գթացաւ
պահակն և էքայ զպատուհանն որ հայէր
'ի դաւթի անդր մերկեցին. և Օսման խո-
նարհեալ ընդ այն ասէ. «Ո՞ զօրագլուխք
հեծելազօրաց իսոյ, ո՞ հիւսաւորքս ենի-
չէրիք, ով հարք իմ, անփորձութեամբս
մանկամտութեան ածայ ես 'ի սոյն. արդ
զի է ձեզ յայս չափ անարգութիւն զի-
ջուցանել զիս. և ոչ ես կամիցիք զիս»։
Ելոյս առ հասարակ ձայն բարձին և ա-
սեն. «Զկամիմք մեք զմատաւորելդ քս,
այլ և ոչ զարիւնդ»։ Յայնմ պահու զի-
նուորքն միաբան ես անդամ արկ զիւրք
զանն. այլ գարձեալ արգելք ինա պա-
հապանն Օսմանայ։

Զկնի Հաշուն Պուսդաֆա արքայ
ածուկաւոք յարքունիս հանդերձ մար-
բրն և երիզքուովքք ազատեալք, և բաղ-
մեցաւ յամենն. և ենիչէրիք խուռն
գիմեցին անդր և 'ի տուն զօրավարին
խրմանց 'ի գտանել զերիտասարդս քա-
կեալս ոսկւոյ՝ զորս ածեալէր առ նա Օս-
ման 'ի միւսում գիշերին։ Յետ ընդ երի-
կար խիլ արկեալ յուզելոյ մին ելեմ
գտաւ, և մեռանելն բարձեալ էին 'ի
միջոց. քաղքրացի՛ն որոց վիճակեցան,
ասէ Ղայիսա։ Իսկ Տաւուս փաշա ե-
րիւք ոմանքք գարձեալ էին և ասարա
զՕսման Ղամի գուլէ։ Ոչ էր չափ բաղ-
մութեան ամբոխին որ խուռն գիմեալ

գնային անդր. այլ ապա ցրուեցան, և գրուեալ ամրոցին փակեցան ընդդէմ նոցա։ Յայնժամ չորեքին արքն այնոքիկ սկսան կատարել զերդեանսն ըստ գործն։ Մարտեաւ ընդ նոսա սատակեցին քաջաբազուկ արքայն. այլ զինեալսն 'ի վերջէ արկ 'ի պարանոց նորա զեղդանն և անդեւաց, և միւս ոմն Գալէնտէր օղու անուն՝ խժաբար զկարեալ զմարմնոյ նորա ի հատեալ զուանկն նորա ածին առ մայրն Մուսդաֆայի։ Այսպէս զրաւեցաւ 'ի կենաց արքայն Օսման Բ. Յաղագս որոյ ասեն չորս անկանգիտաս պատերազմաց արուարեաւ և խռովութիւնսն 'ի նեղբուսաւ. և էր 'ի մեռանելն իւրում ամաց ութսունամեայ։

ՍՈՒԼԴԱՆ ՄՈՒՍԴԱՖԱ Ա.

ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ

ՅԱՒՈՒՐ երկրորդի թագաւորելոյն Մուսդաֆայի բաշխեցան սովորական պարգևքն իբրու միլիոն մի և հինգհարիւր հազար ոսկիք. բայց զի ենիչէրիքն չկամէին ուծանի առնուլ, այլ ոսկիս խնդրէին, ամբոխ ապարեալ գիմեցին առ Տաւուտ փաշա, յորոյ 'ի տան էր յայնժամ Մուսդաֆա ազգայ մնալն հանգերձ, և գոչէին. «Ո՞ր վասն ապաներ զՕսման ազգայ, զոր մեք առեալ էաք քեզ յերաշխի»: Ասէ ցնոսա Տաւուտ. «Ազգայն Մուսդաֆա ոչ աշխարհիս այլ պէս հրամայեաց»: Եւ նոքա լուեալ մեկնեցան առ ժամն: Զհետ երից եօթնեկաց միւս ևս անգամ խառվ հարեալ 'ի մի վայր էկին ենիչէրիքն և ապայք և խնդրէին զգլուխն Իսմէլայ ուսուցչին Օսմանայ ազգայի: Ի նմին գիշերի և ապարատական մանկտին յարեան 'ի վերայ նեղբինապետաին ապիտակ նեղբինեաց և ապանին զնա: Զայն լուեալ զօրականացն՝ կոչեցին զՏաւուտ և հարցանէին ցնա զպատճառս գաւոյն. իսկ նա ասէր

չգիտել ինչ ընաւ։ Յայնժամ գիմեցին առ գենպեռան և հարկեցուցին զնա փոխել զՏաւռոս. և եղև վէճիր մեծ Մէրէ հիւսէյին կուսակալն Եգիպտոսի։

Սորա կամեցեալ ցուցել յայլ և այլ տեղիս զզօրս քաղաքին՝ արկաւ 'ի պատուոյն. զի իբրև զգացին զիրան էնիշէրիք և ապայք՝ դարձեալ աղմկեցան և բողբոջեցին ընդդէմ նորոյ վէզիրին։ Վասն որոյ եւ հրամայեաց այսպիսի յաղթայաղոյս կոչմանէ. «Ընտրեցէք դուք ընդ Տաւռոս փաշա, ընդ Կիւրճի Մէհէմմէտ փաշա և ընդ Լեւքէլի Մուսդաֆա փաշա. իմ առաջի ոչ ինչ է խոսիր»։ Մայրն արքայի էր որ էտ զայս վճիռ 'ի գիմաց որդւոյն. որ և յետուստ կոչմանէ վարագուրին խօսեցաւ առ ապրատամքան։ Իսկ նոքա ոչ միաբանեալք լինեան՝ 'ի կամս արքայի արարին ապատան զընտրութիւնն, և ընտրեցաւ Մուսդաֆա փաշա։ Զկնի ամենաբարեայ ժամանակի մինչդեռ արքայ էր յատարանն որ 'ի Տաւռոս փաշա, հեծելազօրն եկեալ մատուցին առ նա թուղթ ապաշանաց՝ զի արկցի յիշատակութենէ անտի վէզիրն մեծ ասկս իւրոյ աշառութեանն և ապահութեան, և կարդեցաւ փոխանակ նորին Կիւրճի Մէհէմմէտ փաշա. որ արդարև այր գոլով արժանի այնմ բարձի, խորհուրդ կալաւ ընդ աւագանեանն և ընդ գիտնականաց, նորոգեաց զիսամարեալ օրէնս և զկարգս պեռաս-

թեան, և արծարծեաց վերատին զմեծաշուք պայծառութիւն Օսմանեանց։

Սակայն չև էր 'ի սպառ ջնջեալ հրդեհ բոցոյ ապստամբութեան զօրականին. որում լուցկիս պատրաստեաց և Ալպազա փաշա բդեաշին Կարնոյ՝ բանտեալ զսմանս յենիչէրեաց, և զսմանս 'ի բաց վանեալ։ Որոց հասեալ 'ի Կոստանդնուպօլիս, ապստամբեցին զենուորակցեալս խրեանց, և նորոգ խառնութեամբ ապստամբեցին զմագաւորն ընկեցեալ առնել զԱլպազա յիշխանութենէն։ Այլ այն չէր շատ։

Զարթեաւ 'ի նոսա զկոչ մեծ ընդմանէն Օսմանոյ. և յառաջնում առուր յունուարի յամին 1623 դիմեալ յառաջնին՝ ոչ ևս հանդուրժեալք ասէին կրշտամբութեանց զօրագլխացն մերոց ընդունելարար արիւնն Օսմանոյ, թող որ պատճառն եղև քաւեսցէ զայն. և խնդրեին զմահապատիժն զարքայ։ Այլ երբև տեսին թէ ոչ ինչ ապցեն բանք խրեանց, ալք տուն 'ի ծերունեաց անտի ապայեց երթեալք առ դէնդեան՝ խնդրեին զվճիռն առ 'ի նոսանէ։ Եւ յառեալ նորա՝ եթէ արժան է հարցանել զվրդ նախ ցարքայ. զի թէ չիցէ կատարեալ ապանութիւնն հրամանաւ արքայի, մահապարտ է ապանիչն Օսմանոյ, առաւել ևս ամենեցուն նորա 'ի պահանջանն։ Ցայնժամ եկ նոսանկ յարքայէ յորում ասէր. «Ես ոչ սաս-

ցի սպանանել զՕսման. այլ Տաւուսա
փաշա հնարեցաւ զդաւն. որք սպանին
լուծցեն և զվերժնոյ: Կատարեցան զօրքն
առ հասարակ, և զվնասակն գլխաւ-
որեալ գոին 'ի Թաքսամն և զՏաւուսա փա-
շա քրձազգեաւ ընդ յարգիւ, և ածին
չարաչար քարշանօք 'ի տեղի պատուհա-
սին բացագրուին և ընդարմացեալ յա-
հին: Ա յն ինչ դահիճն 'ի ծուռը իջու-
ցեալ ամբառնայր զմահացու երիսամն,
և հան Տաւուսա 'ի ծոցոյ իւրմէ զդատա-
վճիռ մահուն Օսմանայ զոր գրեալ էին
դատաւորքն զօրաց, և զարքայապիծ
վճիռն Մուսդաֆայի, և 'ի վերբ բարձ-
բացուցեալ զմուղիմն սկսաւ ազդա-
կել: Ընդէն վազվազելի ամբարձաւ
գոչեաւն ձայնի. «Դադարեա՛, կաց»: Ա-
կէսք գոչէին. Հայր: Ընդ ծոցաւ մի ոմն
յենիչէրեաց, առ զնա և եդ յերիսամ-
և այլք շուրջ պատեալ զնովաւ ածին 'ի
մզկիթն իւրեանց: Զձանապարհայն ո-
մանք 'ի խառնվարարաց անուն ունե-
լով զի յամբառնալ Տաւուսայ 'ի նախնին
իւր իշխանութիւն գարձեալ համարձակ
ելցի ինքեանց 'ի ներանոր յերազակու-
թիւնս բուռն հարկանել, խառնեցան
զնովաւ. և ոչան ինդրէին 'ի նմանէ, զի
թէ կացցէ գարձեալ վերզոր մեծ՝ երախ-
տապարտ ծանիցէ զանձն իւր կարեկ-
ցութեան իւրեանց. և յառհաւաչէայ
խոստմանն հատին կարատեցին զգլուխ
ներսա և զձորձն և պահեցին: Իբրև հա-

սին 'ի մեկեմն՝ եղին 'ի գլուխ նորա զգլխարկին, և զգեստաւորեալ զնա ըստ օրինի՝ կարգացին վէզիր մեծ. և սկսան ցուցանել նմա այլ իւրաքանչիւր զկարկեալս նշանակացն։ Եւ նա ամենեալ գլուխ շուրջանակի 'ի խուժանէն՝ զմի ոմն 'ի մերձակայից կացոյց իւր առջեւաւն, զմիւս ոմն նուիրակապետս, զայլ ոմն առաջ հրամարտակաց։ Ի նմին ատենս վէզիրն Կիւրճի Մէհէմմէտ յառնանկոչեաց զաւագանին. այլ նոցա խառնեալ ընդ արկածանն և ոչ ինչ էին հնարս գլուխ ելանել զրուէցան։ Յայնժամ անեկապետն Տամատ Ահմէտ յանձն առեալ կորզել զՏաւուս 'ի ձեռաց խառնիչացն՝ և թէ վէզիրն մեծ ասացէ զՀրամանն, գնաց երկիւղիւ բարապանաց արքունեաց 'ի մեկեմն ոնդր։ Ի յանկարծակի գտանէ անտի նորա շփոթեցեալ ենիչէրիք և 'ի փախուստս խուճապեցեալ։ Իսկ նա ած տարաւ զՏաւուս յԱրի գուլէ նոսին կառաք՝ որով զՕսմանն արքայ տարեալ էր, և անդէն խնդացեալ տարաւ։ Զնոյն արարին և ընդ Դալէնտէր օղլուն. և երկոցուն կա գլխակոնք արկան 'ի ծով։

Ոչ սակաւ նեղասոս լեալ էր ազգին և Մէրէ Հիւսէյին. որ և խոստացեալ ենիչէրեաց հարիւր հազար ոսկիս, այնչափ գրդռեաց զնոսա ընդդէմ ուխտաւորեանն վէզիրին Կիւրճի Մէհէմմէտայ նեղբինեայ, զի յարձակեցան նորա ապայ-

իւր հանդերձ յատանանն, և ասէն ընդ
երեսս վէզիրին. «Դու ապաներ յառաջ
ղազոյն զերդրարս մեր, և մեք ջիամիմք
զքեզ, և ոչ թողուամք ներքինեաց ապա-
կանել զան սչուիմիւն աշխարհիս. եթէ
հակառակ մեզ կացցես, սուսերք մեր
կերիցեն զքեզ»: Յայնժամ Մէհէմմէտ
հրաժեշտ կալաւ 'ի պաշտամանէն և
գնաց 'ի տուն իւր, և սենեկապետն մեծ
տարաւ զինիքն առ աղքայ. իսկ նա ասէ.
«Տացիս՝ զորընտրեսցն ինքզքարանքն»
ենոքա ընտրեցին զՄէրկ Հիւսէյին: Եւ
'ի հրաժարելն նորա 'ի պատուոյն՝ մայր
թագաւորին ջանահնար լինէր զխաղիլ
զծոմակալն ամբառնալ յայն պաշտօն.
այլ Մէրկ Հիւսէյին հուպ 'ի տեղեան
գտեալ՝ անց բազմեցաւ յատենին անդ 'ի
տեղւոջ մեծի վէզիրին, և անդէն հրա-
ման արար՝ զի Կիւրճի Մէհէմմէտ աղ-
ասրեսցի 'ի Պրուսա, և խաղիլ 'ի Մաղ-
զարա:

Մուսպաֆա աղքայ յայսմ ժամուս ինչ
նուազի թագաւորութեանն առաւել
և յայս առնէր զանյարմարութիւն իւր
'ի բարձն վեհականն: Ընթանայր ընդ
արահս աղքանեացն, բանէր զայս և
զայն դառն, և կոչէր զերդրարդին իւր
զՕսման յանուանէ՝ զի եկեսցէ առցէ
յինքենէ զբեռն թագաւորութեանն:
Էր զի երիվարաւն հանդերձ կամէր 'ի
նուազակ մատանել, և էր զի զնաւակն ա-
ղաչէր յաղքանիս իւր բերել: Եւ 'ի պա-

բարկէ նորա յայտարարեալ, զամենայն
խնամս ազատութեան ունէր մայր նո-
րին, որ յանուն որդւոյն Հաստատեաց
և զդաշինս ուխտի ընդ դեսպանին Լե-
հաց։

Սակայ սակայ և համապարզորդ հրաշ-
գութիւնք յայտ առնէին զարձեալ ըզ-
վերահաս իւն խառնութեան վասնզ.
զի ասէին ենիչէրիք՝ եթէ սխալիմ թշ-
նամին Լեհաց բդեաշին Կարնոյ Ա-
պարզա ապատանքութեանէ բռնացեալ
մինչև 'ի կոշնանս փոքրուն Սոխոյ քա-
ռասուն հազար զօրաք գողացուցանէր
զաշխարհն։ Ի գարնան իրացս հնարե-
ցաւ մինչև յանդոյց Մէրէ Հիւսէյին զենի-
չէրիս առաստաձեռն բաշխմանէ արքու-
նի գանձուն առ նոսա. և զի հաստատ
ապառէր գանձն, խորհուրդ կարաբ
ընդ մօր թագաւորին, և բաղում ինչ ք-
պատ արծաթոյ և ոսկւոյ 'ի գրանն փո-
խեաց և զմերին 'ի կէս զէքմանէ ազնիւին
ընդդէմ։ Յայնժամ ապստամբեալ հնծեալ զաղ-
ջին գունդս ելանելոցն 'ի մեծի ձիարձակա-
րանին, և բոլոր հարկանէին ընդդէմ
ամենարարութեանց և կողմնապարութեան
վէճերին մեծի։ զի ասէին՝ եթէ նա զե-
նիչէրաց ետեթ զկողմն ունի։ և թէ-
պէտ յաղաչանաց և 'ի ապառնալեաց
գենեալին և գաստարոց զօրացն ա-
ժանն ցրուեցան ապա, ասկայն բռնու-
թիւնք Հիւսէյինայ՝ մինչև 'ի գանակոծ
առնել զկողմնապետս և զխանիկոնս

անդամ, բորբոքեցին զքոց խռովութեան և 'ի գասս գիտնականաց։

Քանզի սոցա առ ահի եւ թյանձին կալեալ էր զմատաւորին Մուսդաֆայի. և առաւել ևս զկիզեցան 'ի տարոյ հիւսէյինայ ենիչէրեաց և ապայեց ըստ սեպհութեան հասեալ մզկիթացն, և 'ի գանելոյ նորա զմի ոմն 'ի նոցանէ՝ որ գաղտաւոր էր։ Յորմէ ցան 'ի մի վայր եկին 'ի մզկիթ սուլթան Մէհէմմէտայ, և հաստին վանիս զվէզիրէն՝ եթէ մահապարտ է. զի 'ի վերայ ամենայն անիրաւութեանցն և անհաւատութեան բանս բարբառեալ է անդամին մինչդեռ կուսակալէին Եգիպտոս։ Ածին անդր բրնաւութեամբ և զդենալեան, և ասդէին 'ի գատ կոչել զՀիւսէյին. այլ նա ասէ, «Մինչև ոչ արկցի Հիւսէյին յինչանութեանէն իւրմէ, ես ոչ եկից. կացէք ինքնագէք գուք ատեանն, և ես երթեալ բոզքէցից զնմանէ առ արքայ»։ Այն ինչ մեկնէր նա անտի, մի ոմն 'ի ապայեցն ապատամբաց Պրչագչի օղլու անուն խառնեալ 'ի ժողով անդր գիտնականաց կապուտակ ձորձով գոչեաց. «Մի թողուք գնա երթալ. ապա թէ ոչ՝ մեռանիք ամենեքեան»։ Այլ ոչ ոք անսաց նմա, և գենալեան գնաց առ արքայ։ Ընդ յարքունիս էր յայնժամ Հիւսէյին ընդ սեղասպահին իւրում և ընդ երկոսին գատաւորս զօրաց. և երբև եհաս գենալեան, նա անդէն հրամայեաց երբև

'ի գլխոյ արքայն և մեր նորա՝ ցուցել վաղ ընդ փոյթ զմոգով գլուխանոց։

Ապա ելեալն 'ի մզկիթի անդր զօրավարք էրկու - յոլոց 'ի մնասնելն 'ի նեղբն՝ Եահէա էֆէնտի, որ կանխաւ գաստաւոր էր զօրաց, առնեալ ունէր ինչ առ մոգուկանն ջերմաջերմ. և իբրև տեսն նա զարան եկեալն՝ աղաղակեաց առ գլուխանուն. Հարէք, հարէք։ Եւ նոքա խառնեալ 'ի վերայ արանցն՝ թշնամանաւք և գանիւք հալածեցին 'ի բաց։ Ի նմին պահս ոմանք 'ի գլուխանոց անտի, ընդ որս և Պրչագճի օղլուն, գնացեալ 'ի ձեռոցն Ենիչէրեաց՝ ասեն ցնոսա. «Մուսաֆիս արքայ մնասուկ է պակասանիս, և զինանն թագաւորութեան ոչք ունին. Հապա կամիցիք և դուք զայլ ոմն կարգել մեզ 'ի թագաւոր»։ Եւ նոքա ասեն. «Ուրանօր էրկեն ուստրքն մեր գլուխանոցք, անդ լիցուք և մեք»։ Հաստատեցին արքն բանից անդրեւն զբանականին և գնացին յիւրեանս։ Իսկ Մէրէ Հիւսէյին առաքեաց 'ի մզկիթն անդր զգրեալն Էմիրայ՝ որ կոչի Ղազիպ իւլ Էշրաֆ, և միանգամայն հրամանն էառ Ենիչէրեաց վասն 'ի զէն, և 'ի չանալ գլուխանոցս բանից ողբանաց՝ ուժգին ցուցել զնոսա։ Եկն այրն 'ի ժողովն անդր, և առ 'ի հաւանեցուցանելոյ զնոսա 'ի բանս իւր էհան 'ի ծոցոյ իւրմէ հրովարտակ արքունի։ Գոչեցին յայնժամ գլուխանոցքն. «Ոչ ինչ ոչ գիտէ

ազգաց զՀրովարտակդ, այլ այս անուն և այն անուն յօրինեալ են զդա ՝ն : Եւ հանին զայրն արտաքս : Եւ ապա առին զարտասխոյր Ագշէմենէատին շինին որ 'ի մզկիթի անդ կայր 'ի պահեստի, պարզեցին զայն 'ի ձև գրոշու, և գունդագունդ եղեալ 'ի մզկիթէն՝ յուզն անկան: Ապա և ամենեքեան զիւրեանց Թաշկինակս 'ի նոյն մերձեցուցեալ՝ պարզեցին զնոսա ևս 'ի ձև գրոշու, և կարգալով զկուրանն խաղային գնային գէպ յարքունիսն: Այլ երբև լուան զդարուստ զջրաւորին Ենիշէրեաց յիւրեանց վերայ, կէսք պատճառելով զերեկանալ առուրն՝ ցրուեցան, և որք մնացին՝ էին որ 'ի սուր Ենիշէրեաց անկան, և էին որ յաքսորս առաքեցան, և բազում մնացեալքն 'ի փախուստս և 'ի Թաքուստս ապրեցին, և զաւուրս բազումս ծածկեցին առ ամօթոյ զերեսս իւրեանց : Սակայն եղեն ևս որք 'ի ծածուկ գերգռեցին զԱղաղա փաշա վրէժխնդիր յառնել ազատութեանն Օսմանայ :

Մէրէ Հիւսէյին նուաճմամբ գիտակցեալ յաւել և ևս 'ի խժդժութիւնս իւր, և անդադար էր 'ի խոշտանգելոյ և 'ի սպանանելոյ զարս անպարտս . և 'ի լրումն ոմեքրիմ առելութեան իւրոյ ընդդէմ ազգին՝ եդ 'ի մտի կատարել զնոսա գաւով առ հասարակ: Զոր երբև ղդացին նոքա ըստ գիտաց իմն, ամենեքեան գիմեցին յատեան նորա և

գոչէին. «Դու զմեզ կամիս կոտորել, և մեք չկամիմք զքեզ՝ վեզիր մեծ»։ Ներքինապետն և զչնոյն ասացին Հիւսէյնայ 'ի բաց տալ զկնիքն. այլ նա ոչ առնայր, և փոխուցեալ անկաւ առ զօրավարն Ենիչէրեաց, որպէս զի բռնութեամբ Ենիչէրեաց վանեսցէ զսպայսն։ Սակայն Պայրամ փոխանորդ զօրավարին մի առ մի եղեալ էր առաջի Ենիչէրեաց զդառնութիւնն և զմեծ գժութիւն Հիւսէյնայ, և զբանս միաբանելոյ նոցին ընդ հեծելազօրսն։ Ամենեքին 'ի բողոքել սոցա ընդդէմ վէզիրին, սղաղակեցին և ենիչէրիք ընդ մի բերան. «Եւ մեք չկամիմք զվէզիր կոչիանաէր. ուր զինուորականքն մեր լցին, անդ եմք և մեք ընդ նոսա»։

Յայնժամ հարկեցաւ Մերն Հիւսէյնին տալ զկնիքն 'ի գենդեռն՝ ծրարեալ 'ի թաշկինակի, և նա մատոյց զայն առաջոյ. և ապա առաքեցաւ կնիքն առ Ռէմմանքէշ Ալի փաշա։

Սա նոյնժամայն 'ի խորհուրդ բազմեցաւ ընդ գենդեռին, ընդ գատաւորաց զօրացն, և ընդ այլոց առաջաց առ ընկերցիկ առնելոյ զսպիկար թագաւորին, և ամենեքեան հաւանեցան։ Գործ էր գրեան հաւաքել լիբրս հաղարս հազարաց ոսկւոյ 'ի բաշխելոյ զսպայսն. այլ զզրանկանքն յանձն առին հրաժարել զայս նուագ 'ի սպայեաց անտի ոսկս ոչ տալ առեալ։ Այսպէս ապարաբայն Սուլթանին ածաւ յապարանից

Տաւուս փաշային անդրէն յարքունիս 'ի վանդակն, և ընդ այդն աւագանին և պաշտաւանքն առ հասարակ թագաւորեցուցին զերիցս որդին Ահմէտայ զՄուրատ, որ էր յայնժամ ամաց մեծամանից:

Ի ժամանակին յայնմիկ 'ի պատճառս ակարութեան արքային և բռնութեան զօրականին և ոչ էպ խառնութեանց բազմաց նուազեալ էր նախնի շուք և բարեկարգութիւն օսմանեան պետութեան: Գաւառք բազումք անկեալ էին 'ի ձեռս Պարսից, որպէս Վրաստան, Գանձակ, Երևան, Պաղտատ և Պասրա. և որ մնացեալ էին՝ ոչ 'ի ձեռս արդարակորով իշխանաց էին մնացեալ, այլ մատնեալք յաւար և 'ի յափշտակութիւն ապստամբ բռնակալաց, որպիսի որ և Ապազայն էր: Թողից ասել զընչաքաղցութիւնս գաւառաց, զիաշառասէր բարս մեծամեծաց, զյոյժ հանդգնակութիւն զիսնականաց և զայլսն, զորոց մի առ մի զրուցաբանէ Գոչիպէյ 'ի հանձարեղ մատենին իւրում որ յաղագս պատճառաց նուազելոյ օսմանեան պետութեան: Պիտոյ էր ապա թագաւորք հզօր, որ արդարութեամբ վարեալ սուսերաւ՝ զպատժապարտից հաստատցէ զարժանին զհատուցումն, և որ տակաւին խեռն ընկամիցին՝ ահիւ պակուցման ստնձակոծեսցէ: Եւ ահա այսպիսի որ յարեաւ 'ի ժամանակին Մուրատ

ալքայ ջորորդ՝ գեռահասակ արդարև, այլ որպէս կորիւն առիւծու՝ քան ժամանակին ալիասյից վաղ հրահանգեալ յահարկաւթիւն գիշերատէրն ալքատատէրց։

ՍՈՒԼԴԱՆ ՄՈՒՐԱՏ Դ.

ՊԱՏԱՆԵԱԿ էր սա միջահասակ, բարեղրադէմ, թխահեր, մեծաքիր, առոյգ և ուժեղակ, և յոյժ մեծ ընծայէր առատանելեաց՝ եթէ բան ժամանակին կանգնեսցէ և պայծառացուսցէ անդրէն զատանեալ պետութեան յերկաստից ընտանի և օտար շփոթից. որպէս և արարն իսկ յաջողութեամբ։ Զա ժամն թէպէտ և ած ընդ մէջ զառաջին արքունի 'ի մեռատանելոցդն առաջ ունեան սեպհականելոյ, այլ զինուոր անպատեալ աշխարհին ունէր մայրն Նարին գշխոյն Մահմէտքէր, որ և Քիւանէմ առեալ։ Բայց առաջ զի ձախողակին պատահարքն սկսան և որոյս թագաւորութիւն։

Քանզի նախ գաղք զօրականաց ոչ կացեալ յիւրեանց բանին՝ պահանջէին առին զառաջորութեան արարգեան, և ապառեցան գանձն. զի երկու միլիոնք ոսկւոյ բաշխեցան 'ի նոսա։ Երկրորդ զի ժլատութիւն և բռնութիւն Քէմանքէշ վէզիրին մեծի՝ զընտիր ընտիր արեան պետութեան ընկեցիկ արար յինչանութեանց, որպէս և

զգնդակսն Շահնա Էֆենտի, և պա-
կասեցին ապք խորհրդակցեք յաստենն
ապրանի։ Եւ որ մեծն է, մինչդեռ
Աղարդա երիմաքով երիմայր և բռնա-
նայր 'ի փոքր Հայս, յԱրարխա անկաւ
Պարսատա 'ի ձեռս Պարսից. զորոյ
գիարգն կարճ 'ի կարճոյ ածցուք 'ի
յիշատակ։

Պէքիր ոմն զօրավարնեւաձեալ զիւրն
Համանուն զՊէքիր զկուսակալն Պար-
սատու, մահու քարտ ապան զնա-
ապա սիրեաց քաղաքին, և առ յինքն
ձգելոյ զկուսակալութիւն նորին՝ ապ-
արար զքանչութեանց իւրոց 'ի Կոս-
տանդնուպոլիս։ Սէրկ Հիւսէյին՝ որ
յայնժամ վէզիր էր, կարգեաց կու-
սակալ Պարսատայ զՍիւլէյման զոմն.
այլ Պէքիր յապատամբութիւն թեան-
կոխեալ ունչս արար զհրամանաւն։
Յայնժամ պատուէր եւս վէզիրն կու-
սակալին Աղդայ որում անուն էր Հա-
ֆիզ փաշա՝ խաղալ գնալ 'ի վերայ
Պէքիրայ ենդակակցութեամբ կուսա-
կալացն Մարաշոյ, Սեբաստիոյ, Քէր-
քիւքայ և Մելիտենայ Աղուոց. և
նա երթեալ պաշարեաց զՊարսատա։

Տեսեալ Պէքիրայ զպակասել համ-
բարոյ քաղաքին՝ նամակագիր եղև առ
Շահարաս աղբայ Պարսից՝ ասել 'ի նա
զքաղաքն, եթէ զերծուցէ զնա 'ի
պաշարմանէ օսմանեան զօրայ։ Եւ
Շահարաս, որ պատճառս ինքեր

ցանգ կծանեալ էնք յաշխարհէն Օս-
մանեանց, գեսպան զոմն առաքեաց
հանգերձ թղթով առ Հաֆիզ և ասէ.
«Պէքիր այժմ ընդ Պարսից իշխանու-
թեամբ կայ. վասն որոյ տեղի տուր
այսմ. ապա թէ ոչ՝ լուծանին գաշինք
ոխմին»։ Եւ յասել Հաֆիզայ, «Մէք
'ի մերում աշխարհի նկուն առնեմք
զարտասուքն. և զինարդ լուծանիցին
գաշինքդ», յաւելգեսպանն. «Թռչուն
որ 'ի ծառատունկս ուրուք թռուցեալ
գադարիցէ, ապաքէն տեառն
տեղւոյն անկանի»։ Պատասխանի եւ
Հաֆիզ. «Իսկ արդ այս թռչուն 'ի
մերում վանդակի ատա է. այլ թէ
թռուցեալ գադարեսցէ 'ի միում
ուրեք 'ի ձերոցդ ծառատնկոց՝ ոչ եւ
պահանջեսցուք զնա յետս»։ — «Շատ
է արդ, ասէ գեսպանն. տեղի տուր
ասոյ, ապա թէ ոչ՝ զօրավարն մեր
Գարչէղայ երեսուն հազար արամբք
վանեսցէ զձեզ»։ Եւ Հաֆիզ ասէ.
«Եթէ լուծցիք գաւք այդպէս զգաշինս
ոխմին, հատուսցիք անշուշտ զար-
ժանին պատիժ պատուհասն»։

Յետ այնորիկ խորհուրդ կալաւ Հա-
ֆիզ ընդ զօրավարս իւր, և շնորհեաց Պէ-
քիրայ զիւրատեսակս թիւնն Պարսատու
'ի գլուխս Մուրատայ արքայի։ Սարդ-
ջայաւ յաշնեամ Պէքիր ընդ հրաւիրեալն
զՊարսս, և շնորհս կալաւ Հաֆիզայ.
այլ և արքայն մեկնեալ 'ի քաղաքէն, զի

անելիկիւղ եղէց ասէ։ Ապա հրաւիրեալ յընթրիս զգեսպանն Շահաբասայ՝ ասէ ցնոսա. « Կեցցէ յամայր մեծ արքայդ Պարսից՝ որ ազատեաց զմեզ 'ի պաշարմանէ Օսմանեանց որպէս եղբայր և բարեկամ. պատրաստ եմք և մեք նուիրել նմա զմերս ծառայութիւն երբ և պէտք ինչ պահանջեսցէն »։ Սրտմտեալ գեսպանացքեղ բանեն՝ ազգ ազգ արարին արքային արքայի։ Իսկ Պէքիր կոչեցեալ առ ինքն զերեքարիւր պարսիկս՝ որ բերեալ էին նոքա զիսակէզն 'ի պարզևս 'ի գլխոյ Շահաբասայ՝ առ ոմն կոխեաց զիսակէզն, և կոխեաց զնոսին զլա'ի վայր ընդ ծայրս պարապաց քաղաքին։

Նոքա ասկաւ աւուրց եհաս 'ի Պաղատաս Շահաբաս արքայ զօրք բազմաք և պաշարեաց զքաղաքն։ Յայնժամ Հաֆիզ փաշա որ 'ի Մուսուլ կայր՝ ազգ ազգ զէզելոցն 'ի Կոստանդնուպոլիս, և զօրս 'ի Թիկուռնս ինդրէր հասուցանել. այլ Քէմանքէշ Ալի վէզիրն մեծ յանդգնոգս եղև։ Ամիսս երիս սեւեաց պաշարումն, և սով սաստիկ անկաւ 'ի քաղաքն. և ապա Մէհէմմէտ որդի Պէքիրայ գաղտ բանադնաց լեալ ընդ Շահաբասայ՝ եբաց դիշերայն զդրունս քաղաքին, և ընկալաւ զՊարսիկսն 'ի նեղբս։ Պէքիր հանեալ 'ի մեծադրատանէ՝ ածաւ առաջի Շահաբասայ. առ արքայն բազմեալ կայր որդի

Պէքիրայ Մէհէմմէտ. և ասէ ժպիրն ցհայր իւր. «Ահա գտեր դու զպա-
տիժս երդմնազանցութեանդ. և ես կամեցայ կատարել զնոյն այսպէս»։ Ար-
կաւ Պէքիր'ի ժամուն 'ի բանտ. և Շահ-
աբաս յետ զինեալմամբ առնելոյ զքօր
քաղաքին՝ 'ի մի վայր ժողովաց զնոսա
և պատուիրեաց զօրացն իւրոց առ-
նուլ'ի նոցանէ ըստ դլուխ ոչս չորս
կամ հինգ. և փակեալ զդրուն քա-
ղաքին՝ խոշտանգել զնոսա զաւուրս
եօթն, որպէս զի յայտնեացին զգանձս
իւրեանց։ Բազումք յերկեղեաց անտի
մեռան 'ի հարուածսն, և այլք խեղ-
ցան չարչարեալ։ Կամէր Շահաբաս 'ի
սկզբան անդ կատարել առհասարակ
զամենայն բնակիչս քաղաքին. այլ
գլխաւորն յէմիրս Պաղտատայ Սէյիտ
Տիւրրան անուն հաւանեցոյց զնա
խնայել գէթ 'ի պարսկաստանդ մար-
դիկն։ Վասն որոյ'ի գիր եւ գրոշմել զա-
նուանս ամենեցուն նոցա, և զայլս որ
աղանդակիցք Օսմանեանց էին՝ 'ի տուր
սուսերի կատարեաց։ Արկաւ և Պէքիր
'ի վանդակ երկաթի, և զաւուրս վեց
չարչարեալ անքուն՝ յեօթներորդին
եդաւ 'ի վերայ խարուկի մեծի՝ մինչև
հալեցաւ թանձրամասուքն նորա,
որպէս զի յայտնեացէ նա զգանձս իւր։
Այլ հանդէպ նորա բազմեալ առ Շահ-
աբասայ չարաչուք որդին զաղանամիտ՝
ունելով 'ի ձեռին զբաժակ գինւոյ.

և ծնունդքէր ընդ աղէտս հօրն խորամ-
ոյ. ոչ նախատանաց մատղկեղէն բեռ-
ին։ Ապա եղաւ Պէրիր 'ի նաւակ
օծեալ նաւին, և ընկեցաւ 'ի Տիգրիս
գետ, և բացակիզեալ ընդ նաւակին
մեռաւ բան նոցին օրինակի որպէս ապա-
նեալ էր իւր զոմն 'ի զօրավարացն Օս-
մանեանց յանդիման ամենայն բնակ-
չացն Պարսատայ։ Այլ ընդ խժդը-
ժումն ընդ ոգեղէն ասկացաւ Շահ-
աբաս ինքնին և աքսորեաց զՍուլտան
Կանին 'ի Խորասան. ուստի կամիցեալ
նորա փոխել՝ ապանաւ քարացար։

Խաղաց անուն Շահաբաս 'ի վերայ
այլոց քաղաքացն Օսմանեանց. այլ ոչ
ոչինչ եհաս 'ի Կոստանդնուպօլսոյ
քաջանուանն Քիւչիւք Ահմէտ փաշա,
և հալածեաց զՊարսս 'ի Մուսուլոյ։ Եւ
Հաֆիզ փաշա գիմեաց 'ի վերայ Մէրտինոյ,
զոր գ�եւ առեալ էր Պարսկաց։

Իսկ 'ի Կոստանդնուպօլիս վերջին
մեծ Քէմանքէշ Ալի ասկս խրոց հա-
ղարատարութեանց առեալ էր ամենեցուն։
Եւ թէպէտ եւ Մուրատայ
արքայի ապանեալ զանարգս այնր Պէ-
տէր Մէհէմէտ փաշա՝ դիւրահաւան
եղեալ ապստից ոմանց ասելոց, որ
զարգարեցին զնա առ վերջին որ-
պէս թէ կարեալ իցէ զարգանալ 'ի
զօրականէն առ 'ի կորզել զայ 'ի ձեռաց
Ալեայ զիշխանութիւն նորին։ Ապա-

քեաց Աքի առ Պէպէր զանէրն իւր զՊասիանզասէ զդասաւորն եւ զ-
պեան՝ զի քաղեսցէ բանս'ի բերանոյ նորա և սորեցուցէ նմա զարդարեալ
հեատանոս իցէ նա այնմ բարձի։

Եկին Պասիանզասէ, և միանգամ ըզ-
պէպէս իրաց զոյց արկեալ հոսէին,
եհան'ի փակեզանէ իւրմէ թղթեակ
մի՝ յորում էին հաշիւք և գծագրք, և
ասէ ցՊէպէր. «Հմուտ եմ ես փոքր'ի
շատէ ախտարական գուշակութեանց.
և տեսանեմ զի գոս, տէր, յաջորդեսցես
զիւրեանցն իսկ զԱքի 'ի գերագոյն
բարձին»։ Պէպէր լուա և եհատ կայր. և
'ի կրկին զդասաւորին զնոյն բանս՝ ասէ.
«Եթէ այն հրամանք իցեն վերին տես-
չութեան, բարւոք իցէ»։ Շատ հա-
մարեցաւ Աքի զբանն զայն առ'ի մտահս
պարտ ցուցանել զայրն առաջի արքայի.
և յաւուր միում'ի գնալ Պէպէրայ առ
արքայ՝ կանխեաց քան զնա Աքի, և
միանգամ յանդիման լեալ արքայի ասէ
ցպարսկազասան զօրականսն. «Ար-
քայի հրամանք են ապանանել մտհա-
պարտ զսին. արդ ո՞ 'ի ձէնջ յանձին
կալցէ զկատարումն հրամանին»։ Մի
ումն'ի նոցանէ Գարա Մահմուտ անուն
հաւատարիմ ծառայ Պէպէրայ՝ ոչ ինչ
ոչ գիտելով յիրաց անսի՝ յանձն էառ
մտադիր. և վէրին ապամէջ ոմանք
թաքեալ 'ի գրուխս ասնդղոյն՝ ընդ որ
ունէր եղանել Պէպէր։ Եկին և 'նա, և

վէզիրն յանկարծակի 'ի վեր եկեալ՝ կշռատուէաց զնա գառն նոխտամանաք և մղեաց ուժգին ընկէց 'ի յենարանաց ամենգոյն 'ի վայր։ Եւ յայնժամ և Դարա Մահմուտ՝ ըստ որում բան եղեալ էր ընդ վէզիրին. ծանեաւ զի խրատ տուառն դահիճ կացեալ էր. այլ երկիւղ մահուն յաղթահարեաց զսէր մեծութեանն նորա, և սպան զՊէգէր։

Սակայն և նա ինքն Ալի փաշա խորհրդով գենեալսին Լատայ և ներքինապետին Մուսդաֆայի սպանաւ, և անց 'ի տեղի նորա Ջէլքէս Մէհէմմէտ, որ կուսակալն էր Դամասկոսի, և կարգեցաւ միանգամայն սպարապետ ընդդէմ Աղաղա փաշային։ Քանզի 'ի բազում բդեշխից արձակելոց 'ի վերայ սոնն՝ էին որ հարան 'ի նեռանէ, և էին որ 'ի նորա կողմն հաստատեցան. քանզի սպառնաւէր նա քինախնդիր ընդ լսատեսութեանն Օսմանայ։ Իսկ Մէլիք Հիւսէյին, որ զհետ էր սպարապետութեան և կամ տեղապահութեան, սերտատանեալ առ արքայի՝ կոխեցաւ։

Ի գաշտավայրին Կեսարիոյ Ճակատեցոյց վէզիրն զզօրս իւր ընդդէմ սպարապետին, և 'ի ծածուկ պատգամս զանուն 'ի հաստատելոցն բդեշխից՝ զի 'ի ժամ խառնելոյ Ճակատուն՝ յայտ կողմն անցցեն։ Եւ խառնել նոցա այնպէս. Աղաղա փաշա յետ մարտնչելոյ հա-

բուսաս մի անհնարին մոլեգնութեամբ՝ 'ի փախուստս դարձաւ, և զոլք իւր 'ի սուր սուսերի կոտորեցան յՕսմանեանց, և բազումք 'ի գերութիւն անկեալ գրեթէ խաւեցան։ Իսկ Ղազայի փախուցեալ անկեալ 'ի Կարին, անտի փութացաւ հնարս հաշտութեան գտանել ընդ մեծի վեզիրին, որ ժամանեալ էր 'ի Դերջան. և նա հաստատեաց զնա անդրէն կուսակալ Կարնոյ, պայմանաւ զի տարին գունդս ենիչէրեաց առեալ կարգեսցէ պահապանս քերդին, և մի ինչ չար անցուսցէ ընդ նոսա. և ինքն խաղաղեցաւ ձմերել յԵդեսիա։

Ընդ այն ժամանակս Մէհէմմէտ քէրէչ խանն Խրիմու և ընդ նմա եղբայր նորին Ճահինքէրէյ զօր բազում 'ի թաթարաց գումարեցին, և զմիկուն իւրեանց հարիւր հազար ղազայ թաթարօք և ութհազար խազախօք սուսուրացուցեալ ընդվզեցան յՕսմանեանց, և զերկուս գեսպանս Ռուսաց որ գտանային 'ի Կոստանդնուպօլսոյ 'ի Խրիմ՝ սպանին, և զընծայս նոցա կողոպտեցին։ Յայնժամ կարգեցաւ խան Խրիմու վերսին Ճանիպէկ քէրէյ. զոր ծուխաքն ՐԷՃԷպ փաշա ած 'ի Քէֆէ, և ինքն օսմանեան բանակաւ բախեալ ընդ ապստամբսն՝ խորտակեցաւ 'ի նոցանէ 'ի սպառ, և հաշիւ ճողոպրեցաւ 'ի նաւս իւր։ Լցան զերդան թաթարքն յամենայն կողմանց Խրիմու 'ի Քէֆէ, և

Շահին քիրիչ հրաման եւ օսմանցի բը-
նակչաց քաղաքին՝ յերկոց աւուրց միջոցի
մեկնել՝ ի բաց նաւուք. այլ Բէձէպ փա-
շա աղերսանօք հաւանեցոյց զՇահին՝
տեղն տալ՝ ի Քէֆիէ, եւ զՄէհէմմէտ
դարձեալ ծանուցեալ խան Խրիմու՝
ուղարկեցաւ՝ ի Կոստանդնուպօլիս։

Ի նմին ամի եւ գրոհք Խազախաց Լեռնա-
երկրին Երկայնաձգ նաւակք մտեալ
ընդ նեղուցն Կոստանդնուպօլսոյ ապ-
պատակեցին զԵրուսալան ծովեզե-
րեա, եւ սպրդեցին զՄիւսիւք տէրէ, զՆիք-
քէօյ եւ զՍաէնիա։ Արձակեցան վաղվա-
զակի ընդդէմ նոցա ջորս կամ հինգ-
հարիւր նաւակք, զի մի յառաջ եւս խա-
զացեն, եւ մեծ շղթայ նաւահանգստա-
մէն առաքեցաւ՝ ի բերդս Վասիլոնի։
ուր զօրն ցերեկ դադարեալ Խազա-
խաց՝ դարձան ապա սպառատակեալ այլ
ծովափունս Պոնտոսի։ Այլ ծովակալն
Օսմանեանց բազմութեամբ նաւուցեալ
՝ի նաւահանգստէն Վառնայի՝ ելեալ
հար ընկալեաց զեօթանասուն նաւակս
Խազախաց, հարիւր եօթանասուն և
երիս նաւակս ձերբակալեաց, և եօ-
թընհարիւր և ութսուն Խազախս՝ ի
գերութիւն վարեաց։

Բան զամենայն կորուստս ցաւալի
էր Օսմանեանց կորուստն Պաղատայ-
սմին իրի՝ ի մեռանել Ձէրբէս Մէհէմ-
մէտայ Ընդոսկիս, Հաֆիզ փաշա կար-
գեալ փոխանակ նորա վեզիր մեծ և

սպարապետ՝ մեծաւ հանդէրձանաւք ա-
բաստ էրրուս հարիւր հազարաւ խաղաց
գնաց և պաշարեաց զքաղաքն Պաղ-
ատաս. այլ զի սակաւ հրազէնս ածեալ
էր ընդ իւր, յետ երկամեայ անգուլ
վասատակց ուրուրեան յաջողեցաւ նոցա
պատառել զպարիսպն. և 'ի բուռն յար-
ձակմանէ խուժել Օսմանեանց 'ի ներ-
քին՝ բռնադոյն անդրէն 'ի գուրս վա-
նեցան 'ի Պարսից։ Ամենայն վեց այսպէս
պաշարեալ Օսմանեանց զՊաղատաս,
երբէք երբէք և ընդ զօրավարս Պարսից
մարտ եղեալ կռուէին արտաքոյ, մինչև
և հաս յօդնութիւնքաղաքին ինքն Շահ-
աբաս զօրս ծանու։ Ապա յաւուր
միում մինչդեռ վէճիրն 'ի մականախա-
ղութիւնս պարապէր, գեսպան 'ի Շահ-
աբասայ Յսմանեանց առ նա. Հաճիլ
ընթերցեալ զնոսին՝ հրամայեաց յա-
ռաջ վարել զնսան. և 'ի քրմութենէ զօ-
բականաց ընդ սարագէպ արարան՝ ասէ
նա զայսպիսի. «Թող մի ոմն 'ի կու-
սակալաց խանց տացէ նմա զպատաս-
խանին»։ Ա յսպէս երկարեալ յան-
հոգս 'ի խաղն անդ առ 'ի ցոյց պարակին՝
ապա գարձաւ գանդաղաբայլ 'ի խո-
բանն իւր. և 'ի խնդրել գեսպանին պա-
տասխանի՝ ասէ ցնա. «Զկնի պատե-
բազմի տաց»։ Բախեցան կողմանքն
երկոքին միանգամ և երկիցս, և երկուս-
անք նախանձիք բազում գործեցան,
այլ մարան մնաց անպարտելի։ Եկն այլ

գեղապան 'ի Շահարամայ, որ խնդրէր յարքայէն Օսմանեանց զՊաղտատ իբրև 'ի բաժին ժառանգութեան որդւոյ իւրոյ, մանաւանդ տակաւ գերեզմանին Ալեայ ազատելոյն Պարսից. բայց վէճերն մերժեաց զայն խնդիր, ասէ. «Ձեզ հնար թէ հրաժեշտ առնիցիմ ես 'ի Պաղտատայ. և այս կամք են մերոյ արքայի՝ զի եթէ Շահաբաս եկեալ իցէ յոսխատ 'ի շրջիմն Ալեայ 'ի Պաղտատ, և ես երթայց 'ի շրջիմն Սեֆիեայ յԱրատաբիլ»:

Ամ իրրև յերկարագոյն նուազաձգեցեր բանագնացութիւնն ընդ գեղապանին՝ զօրականքն ոչ ոչն ապնուկ հարեալ արտաքոյ ապաղակէին. «Զի՞ յապաղեմք այլ ևս առանձն, ուր ձեզ մեր գերատաս հեծանելոյ, և ոչ կերակուր ուտելոյ»: Եւ կործանեալ զվրան վէճերին՝ եդին զնա բռնութեամբ յերիվար, և ածին 'ի բերդն. և գեղապանն Պարսից 'ի զնին կայր երկեղուցս: Կուսակիցք Մուրատ փաշայի կուսակալին Բերիոյ, որ յոլով ուրեք 'ի վառանգ կորսեան արկեալ էր զՕսմանեանս, դիմեալ 'ի վերայ նուիրական դրօշուն՝ կամէին կանգնել զայն հանդէպ վրանին Մուրատայ, և կարգել զնա վէճիր մեծ: Ամ քաջ դրօշակիրն Օսման գոչեաց ընդդէմ նոցա. «Ո՞ կարէ ընկենցիկ առնել զվէճիրն մեծ բայց յարքայէ. ցորչափ է յեա շուն չկենդանութեան, դրօշանը-

ելիցեն ոչ ժամանեսցի 'ի ձեռս ձեր ։։ Ղաբ բաւեն արարին նոքա, և իբրև գարձեալ ոչ եմաղ՝ հասին զբազաւին ։ Մինչև ժամանեալ 'ի բերդ անդր՝ եկին ընդ առաջ աղկիերցին ոմանք 'ի հիւսաւորց զօրականէն և հանդարտեցին զնոսա ։ « Ոչ օրէն՝ ոչ 'ի դէպ է, ասեն, բանդել զվերջիր մեծ ։ և գարձեալ թէ յարձակեսցին 'ի մեզ թշնամիք՝ զի գործիցեմք անդրադարձ ։։ Յայնժամ հարին 'ի բացի զվրան և անդր ածին զՀաֆիզ, և նա ասէ ցնոսա ։ « Եւ արդ զինչ կամք իցեն ձեր երդարք ։ և ո՞ր այնքիկ իցեն որ լաւ համարիին մեռանել քան թողուլ զՊաղատա ։։ Յայնժամ զաղապակ բարձին ամենեքեան ։ « Խափանեալ են մեզ անցք համբարոց և օգնութեան ։ հապա գարձցուք 'ի տունս մեր ։ զի ոչ ևս հնար է մեզ կալ մնալ սասանօր ։ եթէ իցէ քո սուտ ։ փութա սա այսօր զՊաղատա ։ և եթէ ոչ, ապաշէսցուք զկարմրագլուխն զՊարսս զի թողցեն մեզ գառնալ անխոտիսն յերկիրս մեր ։։ Եւ Հաֆիզ յանկանոյ կանն յանձին կալաւ զաւ գարձի առնել ։ Զայն իբրև զգաց Շահարաս, յետս կոչեաց զգնդապետն՝ զոր առաքէր առ Հաֆիզ, և պատուեալ զնոսանն՝ ասէ ։ « Ոչ վայելի ինձ տալ երդեալ զոմիոց 'ի ձեռս զօրաց որք 'ի փախուստս գառնան վատութեամբ ։։

Բաղուսի աղկիաւ արարին Օսման-

նեմանք զգարձն 'ի Պարսատայ 'ի Մուսուլ, 'ի գեռ ամացեալ զամենայն զրեռ
ֆնա խրեանց, և զբնակիչսն ի Մեղաղ
նամն խորտակեալ. սակայն և այնպէս
Էհաս չէեռ 'ուցս Շահարաս։ Հրամանն եռ վերջին Մուրատ փաշայի
վերջապահ զօրքն զգեմ ուռնել թշնամեռց. այլ նա ոչ լուաւ, և Հաֆիզ
Հարիէցաւ գառնալ տալ ընդ Պարսից
պատերազմ, և վանեաց նս զնոսա, և
ապա խնդրեաց զայր զՄուրատ։
Ընդ սոյն փոանդի կերան զօրքն զՀանապարհայն զերիսարս անդամ զիրեռնց, մինչև 'ի հասանել յԱմիդ, որ
արձակուրդ շնորհեաց բանակին, և 'ի
Կոստանդնուպոլսոյ ընկալաւ խիստ
պատուոյ և բան քաջալերս սակս
վատակոցն յիմեռանեռց պարգևեալ
անդ, և հրամանն ձմերելոյ 'ի Բերիա։

Սակայն որպէս 'ի Կոստանդնուպոլիս հեծելապետն և ենիչերիք 'ի սադրելոյ ԲէՀէզ փաշային ազգեալ մեծ
յարուցեալ առին զդրան խնամանին
անզգուշացեալ Կիւրճի Մէհէմէտայ,
ուստի և 'ի Բերիա կամէին յոչնչել
զամենայնսին խրեանց զՄայոց և
ինչեռն։ Եւ զի և 'ի Կարին խլրտէր Ա
պարսպ փաշա մեռանեալ զամենայն
բռնեալ, Հաֆիզ փաշա կոչեցաւ 'ի
Բերիոյ, և փոխանակ նորա կարգեցաւ
Էլչի մեծ Խալիլ փաշա։

Յամին 1626 'ի սամսանաւորդ ա-

սարս անեսանն գեկուսիքերն ամեց գը-
նաց Խալիլ Յուսկիւտար, և յայց էլ
նախառ ամուսանին Ժերուն Մահմուտ,
առ որում ապաստեսալ էր յառաջ-
նում նուազն ամեդ ընկերցիկ լինելոց խ-
բոց յիշխանութենէն։ Մահմուտ զայս
նեղ ասաց ցնա. «Ապա ուրեմն գարձ-
ձեալ ապարատեա կացէր գու և ոչ այլ
ինչ»։ Ընդ այս բան արտնուեալ Խալի-
լայ՝ էլ 'ի բաց 'ի նմանէ, և խրթն չարա-
գուշակ հանդիպեցան զՀակիրն ասա-
ցուած ժերուեսոյն։

Հասեալ Խալիլայ 'ի Բերիա, գարձ
արար անտի 'ի կազմանս Կարնոյ. և ըն-
դեալ ի Թէ Պարոք յարձակեալ գան յԱ-
խլցխա՝ արձակեաց ամենայն զկուսակալս
Ամիդայ, Բերիոյ, Մարաշոյ և փոքրուն
Ասիոյ արամբք իրրս հինգհազարաս,
և զօրագլուխ նոցա էարդեաց զՏիշլէնկ
հիւսէյին փաշա։ Ազգ արար և ապրա-
տանիին Ապազայի նիզամակից կուս-
կաղացն լինել, և նա 'ի վերին երեսս յան-
ձին կալաս. այլ քանզի ընդ ձեռն ցան-
ասց ոմանց 'ի բուռն ապկեալ էր ըղ-
թուղթս ինչ Խալիլայ՝ յորս յայտնապէս
նիւթէրնս զկորուստ անձին խրոյ, էլ
'ի Կարնոյ և բանակեցաւ յԻլնէ՝ որ-
պէս թէ չուէլ կամիցի յԱխլցխա։ Իբ-
րև գիտաց զմտել բանակին անդր, յան-
կարծակի յարձակեցաւ գիշերայն 'ի վե-
րոյ ենիչէրեաց և կուսակեաց զնոսա։
Ել Տիշլէնկ այր քաջանարտակ, բայց

յանդուգն, յարհամարհս ուռնելով զզ-
ղութիւն Ալպարսլանի՝ գանդաղէր գիմել
'ի վերայ նորա. և զի զոյգն ամենայն
ուղղաստարափ լեալ էր անձրևոյ՝ Տիշլենկ
մերկացեալ զհանդերձս իւրև սիրեալ
էր 'ի ցամաքել: Եւ ահա ընդ այդս այ-
գոյն անկաւ Ալպարս իւրովքն սպա-
ռազինովք 'ի վերայ հանդարտելոյն յան-
հոգութեան և խորտակեաց զնոսա: Հե-
ծաւ Տիշլենկ լոկով պարեգօտիս յերի-
վար իւր և արիաբար շահատակեաց,
այլ 'ի վերջէ պարտուցաւ անկաւ խո-
ցոտեալ 'ի սէգ թշնամեաց. և Ալպարս
սեսեալ զնա այնպէս արիանալոյն և
'ի հանդերձ կանաչագոյն՝ էջ յերիվա-
րէն, և զկիսակենդան գլուխն ելդեալ
'ի գիրկս իւր՝ խօսէր ընդ նմա բա-
նիս ողբանաց: Եթաց Տիշլենկ զաչս
իւր, այլ անդէն գարձեալ եխից, և յեր-
սակաւուց փչեաց զոգին:

Իսկ Ալպարս գարձ արարեալ 'ի Կա-
բին՝ սկսաւ կոտրել զենիչերիս. մար-
թեզերծ արար զզօրապետս նոցա, և
անդամ անդամ յօշատեալ կախեաց 'ի
պարիսպս քաղաքին, և զայլս 'ի կուսա-
կալաց ընկրանելոց խեղդամահս արար:
Յուզեաց ընդ ամենայն խորշս ծածու-
կըս և զմաքմաքուր ենիչերիսն և գբլ-
խաստեաց զամենեսեան:

Զայս ամենայն իրրև լուաւ Խաքիլ
գնաց պաշարեաց սասակուքեամբ ըզ-
Կարին զաւուրս եօթանասուն. և 'ի լի-

նել սատանիկ ձիւնաբերբոց՝ մեկնեցաւ բազում կոտորածիւ զօրացն 'ի ցրտոյ և 'ի հիւսից ձեռն յԵւգոկիա։

Մուրատ արքայ ծանրացաւուն յոյժ էրև ընդ այս գործ Խաղիբայ և արկ զնա 'ի պատուոյն. և նա դարձեալ 'ի Կոստանդնուպօլիս՝ յետ սակաւուց մեռաւ ի աւուրքն։ Խոտով փաշա բնիկ պոնացի՝ այր խիստ և ահարկու՝ կացեալ փոխանակ նորա վէզիր մեծ, անակնկալ Ռեպովեհաս 'ի Կարին, և չեմ ոչ Աստուծոյ պատրաստել զանձն իւր 'ի պատերազմ կամ 'ի պաշարումն։ Հրաւիրեաց նախ զապստամբն յանձնառուս լինել. և նա յանձին կալաւ՝ վառահացեալ 'ի խոստումն վէզիրին չապանանելոյ զնա։ Եւ արդարև ոչ միայն չապանն զնա Խոտով, այլ և մեծապէս պատուասիրեալ ած ընդ իւր 'ի Կոստանդնուպօլիս, և նեղումն և պատիւս վասն նորա ընկալաւ յարքայէ. և Մուրատ արքայ շնորհեաց Աստուծոյ գկոստակալութիւն Պոնտոյ։

Էր յայնժամ Մուրատ արքայ ելմնելոսան ամաց, պատանի բարձրահասակ և հուժկու, և հեռաքնին ամենայն կարևորաց 'ի գիտութիւն, և սկսաւ Ճանաչել զզօրութիւն իշխանութեան իւրոյ, և 'ի կիր արկանել. զի թուէր նա տաղտկացեալ նմին 'ի խնամակալութենէ մօր իւրոյ Քիւսեմայ, որ 'ի հնգից ամաց հետէ ըստ կամի՝

մանաւանդ և քան հաճոյս ներքինապետին Մուսաֆայի վարէր զառաջութեան իրս։ Ի սկզբան ամին 1629 արքայ Մուրատ հրաման եւ վէզիրին իւրում Խոսրովայ դիմել առնուլ զՎաղատատ. և նա յանկանին մայիսի յուղարկեալ, զամենայն զՀանապարհն ներկեաց արեամբ անիրաւ իշխանաց, որպէս ասեն պատմագիրք Օսմանեանց։

ՅԱԳՇԷՀԻՐ քաղաքի քարշեցաւ յաւեան նորա զրպարտութեամբ Տուրմուշ պէյ ոմն իշխան արդիւնական. ասէցնա վէզիրն բանիւք խաղութեամբ. «Տուր 'ի քաց զգանձս քո. ապա թէ ոչ՝ մեռանիս»։ Ասէ Ծերունին. «Զօրակոնս բազումս կերակրեմ եւ յիմոց ծախուց. և ուստի՞ իցեն իմ գանձք պահեսի»։ Եւ 'ի սպառնալ նոնա Խոսրովայ ոչ եւս ժուժեալ առնն՝ գոչեաց ընդդէմ նորա և ասէ. «Եթէ չեւ իցէ հասեալ ժամն իմ, ոչ կարես զուսպանանել զիս. և եթէ շաղախեսցես զձեռն քո յարիւն իմ անպարտս, յաւուր անդ դատաստանին ձեռն իմ լիցի 'ի վերայ պարանոցի քո։ Ամենայն աւելի եմ ես քան ուրեմնից, և նոյնչափ ապիս վերայ կրեմ 'ի մարմնի, զորս վերաւորեցայ զգուսա գենիս մերոյ և սրեաւ թեանս. այլ առ իշխանութեամբ արիանդաւորեալ որ իրրև զքեզդ իցէ՝ լաւ է ինձ մեռանել քան զկենս դառնութեան»։ Եւ առժամայն լուեցոյց զնա

երկաթն մահաբեր։

Ինքնին ամի մեռեալ էր Շահաբաս արքայ յետ քառասուն և չորից ամաց թագաւորութեանն, և պայազատեալ էր բարոյդ ինորին Զամ Միրզա որ և Շահ Սէֆի. սին իրն վատահագոյնս հաստեալ անցեալ Օսմանեանց զտարաձիգ ուղին, և ուրեք ուրեք արիաբար վանեալ զջրաւարս Պարսից՝ նեղակացութեամբ իշխանացն Մարաց, առին և զՀամատանքաղաք, այն է նախնին Եկբատան՝ երբեմն Էջմնադարանն. և զաւուրս վեց յաւարի առեալ՝ զծառայսն կոտորեցին, զփայտակերսն հրդեհեցին, և ոչ թողին քար 'ի քարի վերայ 'ի ճնացուածս պարսպացն, և զպարսկադէն բնակիչսն 'ի սուր սուսերի մաշեալ սպառեցին։ Խոտորեցան ապա 'ի կողմն Պաղտատայ, և զկնի վաթսուն օթևանաց հասեալ պաշարեցին զքաղաքն 'ի քսանեորդի աւուր ամսեանն սեպտեմբերի յամին 1630։ Զմիս մի ոչ վատակեալ յականի, ոչ ինչ օգտեցան. և 'ի պատճառս վրիպակ խորհրդոց ինչ Խոսրովայ, և յանխոնջ դիմակալութենէ պաշարելոցն զերեսաց սրիսկան ձիգն օսմանեան բանակին, և հրամանն եղև չուս դարձի առնել։ Մեկնեցաւ վէզիրն ձմերել 'ի Մերոմն, և յայտ արար 'ի դուռն արքունի զկարևոր հարկ առաքելոյ առ ինքն զօրս թաւմարաց յօգնութիւն։

Իրրև չերևեցան թամբարք մինչև ցամաքն միայոյ ամին, ապրուկ յուզեալ զօրացն՝ հարկեցուցին զյոտարով դառնալ յԱմիդ. և մինչդեռ գնայր նա ձիմերել՝ ի Բերիա՝ հասին թամբարքն հետոսս զգեցեալ, անկարգ և անդրոսիք, և հրամայեցաւ նոցա ձմերել՝ ի կողմանս Կարնոյ։ Ընդ այն ժամանակս տարափք անձրևաց յաճախեալ յԱրաբիա՝ ողողեցին և զՔեռապէ և խարխարեցին զրմանն նորա, և արքայ Մուրատ հրամայեաց փլուզանել զԳլխամին զրմանն և նորս կանգնել. և որպէս առանդ է Տաճկաց, այս փառք մեծ է Մուրատայ՝ զի մեռանելոցդ կառուցիչ դառաւ Քեռապէին։

։ Զառաջին Քեռապէն հրեշտակք կանգնեցին, ասեն նոքա, ըստ օրինակի խորանին որ յերկինս՝ համակ՝ ի լասանեղոյլ յանրեն։ Զերկրորդն կոչոյց Ադամ՝ բերելով նմա հրեշտակաց փարին՝ ի հինգ ներոնց, որ են Լիբանան, Այրարատ, Սինա, Լեռան Զիրենեաց և Փառան։ Եւ գանգի Ադամ գրաւ, ասեն, զՔեռապէն ընդ իւր յերկինս, Սէթ զինեաց զերրորդն՝ ի գարանց, որ յոսորս ջրհեղեղին անհետացաւ։ Զչորրորդն կանգնեաց Աբրահամ, զոր ապա նորոգեցին Ամալեկիացիք։ Յետ բազում ժամանակաց վերստին կոչոյց զնոյն Գառաս ոմն, ապա Գոսրեայանք, ապա Ադրոսյան հորդի Զիրդերի, ապա հեծեալ բռնակալ, և զինի

իսկ 'ի Կոստանդնուպոլիս հեծելա-
գունդն մատուցեալ արքայի զմուղմ
բողբոյ զինուորակցաց իւրեանց՝ որ 'ի
բանակին խնդրէին կատարել զաղաչան-
նոցին և առաքել 'ի բանակ անդր զՀա-
ֆիզ փաշա և զհամարակալն Մուսդա-
ֆա, որ թշնամիք էին վէզիրին և ուզա-
պահի նորուն Ռէճէպայ։ Հաֆիզ և
Մուսդաֆա խնայեալ եթէ դաս է 'ի
բանին 'ի կողմանէ Խոսրովայ, ամբաս-
սան եղեն զնմանէ ընդ գենալեսին
առ արքայ, և զամենայն զինեալս ձախո-
ղելոյ արշաւանին արկեալ զնովաւ՝ հա-
սանեցուցին զՄուրատ ընկեցիկ առ-
նել զԽոսրով, և նա կարգեաց 'ի տեղի
նորա Երկրորդ անգամ զՀաֆիզ։ Իբրև
ազդ եղեն իրքն 'ի բանակ անդր՝ ազմկե-
ցան զօրքն առ հասարակ, և ասէին.
«Ո՞է որ եւ ընկեցիկ առնել զվէզիրդ
մեծ. չկամիմք զայլ ոք ապարտակեա բայց
'ի քէն». և խնդրէին որոնէին ապանա-
նել զմղմաբերն։ Այլ Խոսրով 'ի վե-
րին երեւս խաղաղեաց զնոսա. «Ո՞չ
ապաքէն ծառայք եմք, ասէ, արքայի.
նա է որ կարգէ և բառնայ զոր ոք և
կամի. հանդարտ լերուք»։ Ապա կրն-
քեաց զգանձն, կացոյց իւր փոխանորդ
զԴայեար Մէհէմմէտ փաշա, և ընդ
երկուց ոմանց յուզն անկաւ երթալ

ԻՆՆԱԲԵՐԷ ԷՐԷՍՈՒՆ Ե ԷՕՐԻՆ ԱՄԱՅ ՈՅ ՄՈՒ-
ՐԱՏ ԱՐՔԱՅ Դ։

'ի Մարգարիտաց քաղաքն։ Յանցս Եփ-
րատայ պատահեաց նոցա սենեկապե-
տին Ամիտա արքունի նամակաւ, և պա-
հանջեաց տալ զնոսա նմին. և խոս-
լով առ վայր մի խորհրդածեալ, ի հան-
ապա 'ի ծոցոյ իւրմէ զնոսա նմին և ետ
'ի նա ասելով. «Հրամանն է տեառն ի-
մոյ»։ Ազոյց պատգամաւորքն զան-
մեղութենին ըստ սովորութեան, պարգե-
ւեաց նոսա երիվար և սակիս և արձակեաց
յետս, և ինքն ուղևորեցաւ յԵդեսիա։

Յայն միջոց Ժամանակի աղմուկ զո-
րացն 'ի բանակին և յայլ կողմանս
աճելով աճէր սակս բարձրանկեցու-
թեանն խոսրովայ. այլ արդասիք ջա-
լեացն 'ի Կոստանդնուպոլիս եկին 'ի
յայտ։ Քանզի գիմեալ զօրացն հան-
խուռնք 'ի Գուրջուանլու խան հուպ 'ի
փողերանոցն, և անտի 'ի ձիարձակա-
նին, սկսան գոչել. «Կոմիսք զգլուխ
Հաֆրզայ, զգենալեսին Եահեայի,
զհանարակալին Մուսաֆայի» և զայ-
լոց ոմանց, ընդ ամենայն զեօթնեւտասն
ոմերոց։ Փակեցան կրպակք, և 'ի շփո-
թիւն մեծամեծս էր քաղաքն ոչիչն։
Յառաւօտն էրզուրդի կանխեցին ապրա-
տամարքն և զնոսն 'ի դաւիթ արքունեաց։
Ել էրնին Պայրամ փաշա ազգ. արար Հա-
ֆրզայ՝ հարցուցանել զանձն իւր մինչև
անցցէ մրրիկն այն. այլ նա ծիծաղե-
ցաւ և ասէ. «Յայտ՝ իսկ գիշերի սե-
ամ ես զբազդն իմ՝ յերազի. քաւ յինեն ի-

կնչել 'ի մահուանէ »։ Եւ եկն Եմուա
աներկիւղ 'ի պարտան։ Յայնժամ յեր-
կուս բաժանեցան խումբս ապստամբքն,
և կարծէր Հաֆրզ՝ եթէ անցս կամի-
ցին պատրաստել նմա. բայց նոքա քա-
ջինս երկուսեքն կարկատարար տեղա-
ցեալ 'ի վերայ նորա արկին յերկիրն, և
հաղիւ Ճողոպրեցին զնա իւրքն շա-
լակաւ 'ի ներքս։ Հաֆրզ քանզի կորու-
սեալ էր 'ի խուռն անդ զփակէզն
իւր և զվերարկուն, խնդրեաց 'ի տէր
նոցին այլս, և Եմուա առ արքայ տալ
նմա զինքն. և նա զարհուրեալ՝ զայս
միայն ասաց. « Երթ, ապրեցո զանձն
քո »։ և Հաֆրզ Եմուա վաղվաղակի
'ի նաւակ փոքրիկ փախչել յԴեսկիւ-
տար։ Յայնմ պահուանցն ապստամբքն
'ի գաւիթն երկրորդ և յատեան կար-
գային զարքայ։ Եվ Մուրատ առ նո-
սա, և յոտնկենալեաց ասէ ցնոսա. « Զինչ
խնդրէք, ծառայքդ իմ »։ Եւ նոքա
ասեն. « Տուր 'ի բաց զդլուխս Եսմէ-
նաստն ապանցն, ապա թէ ոչ՝ չար նա
արասցուք »։ և սկսան մտանել ժպրհու-
թիւնամբ յանձն արքայի և կամէին խնդ-
մանել 'ի նա զձեռս։ Ասէ Մուրատ ցնոսա-
մամբ. « Թէ չկամիք լսել ինձ, էր
ապա կոչեցէք զիս »։ և անդէն շուրջ
պատեալ 'ի պաշտօնէից իւրոց՝ մեկնե-
ցաւ 'ի ներքս յարքունիսն։ Դիմեցին խուռ-
վեալքն հանդոյն մրրկածուփ ալեաց
զհետ նորա. այլ փակեցաւ դուռն, և

յորդեաց գոչումն ապաստակին. «Կամ
ասցես զդլուխն, կամ կորուսցես զա-
մուսդ»։ Յայնժամ Ռեձէպ փաշա
դաղանի բորբոքիչ ապստամբութեան՝
յայտ արար Մուրատայ զանհրաժեշտ
հարկ կատարելոյ զկատն ապստամբելոցն.
և նորա յանհնարս մեռեալ առաքեաց
զպատմանձի պաշին ածել Յուսկիւտա-
ր՝ զՀաֆիզ։ Բացաւ գարձեալ գուռն
նեղբին, և ապքայ վերատին բազմեալ
յառնելն ակնարկեաց ջորից ոմանց գել-
խաւորաց ապստամբացն մատագոյնս
մատչել առ իւր, և խօսեցաւ ընդ նո-
սա բանիւք բազմօք՝ ի բաց կալ յապի-
րատութենէ խորհրդոց անտի. այլ
բանք իւր ոչինչ ոչ ազդեցին առ նոսա։

Յայնմ վայրի Հաֆիզ՝ ի թիկանց
կուսէ դրանն կատարէր զբնական
լուացումն և զաղօթս. և իբրև եռան
եմեկ ոչ ինչ ըմբռնեցաւ բանից մատա-
ւորին, եկաց՝ ի մէջ և ասէ. «Տէր
ապքայ, հազար գերիք իբրև զիս՝ ի զոհ
մատուցին վասն քո. զայս միայն ա-
պաչեմ, զի մի գոս ապանցես զիս, այլ
ուրբ զիս՝ ի ձեռս գոցա, զի մեռայց
վկայական մահուամբ և անարատ ա-
ռիւնս իմ՝ ի գլուխս գոցին եղիցի»։ Նա-
ապա երկրպագեալ ասէ. «Յանուն
Աստուծոյ գթութեանց և ողորմու-
թեանցն միայն է բարձրեալն միայն
ամենակալ. Աստուծոյ եմք մեք և առ
Աստուած դառնամք»։ և եկ գնաց

արիարար 'ի հրապարակ անդր։ Հե-
ծեր առ վերին Մուրատ աղբայ, լային
պաշտօնեայք նորա, և աւազակքն
արտասուաւոր աչօք կային և հայէին։
Մառեան առ նա մի առ մի ապայքն. և
հաֆիզ 'ի խառնել առ նովաւ զօրացն՝
ած միում 'ի նոցանէ ուժգին ապտակ
և տապալեաց յերկիր։ Յայնժամ հա-
բան այլքն 'ի վերայ նորա, և վերս ջա-
բաշարս եօթնեւտասան եդին 'ի վերայ. և
ենիչերի ոմն ծունր եդեալ 'ի վերայ
լանջաց նորին եհատ զգլուխն։ Հրա-
մայեաց աղբայ և պատեցին զդիակն
նորա կանաչագոյն կերպասիւ, և ապա
ասէ. «Արդ թէ կամք իցեն Աստու-
ծոյ, հատանելով հատցէ 'ի վերայ ձեր
վրէժ մահու գորա, ո՞ բռնաւորք, աներ-
կիւղք յԱստուծոյ, և անպատկառք
'ի մարգարէէ նորին»։ Եւ մեկնեցան
եմուտ 'ի նեղքս, երդուեալ նախ 'ի բրա-
նագատելոյ նոցին՝ զի այնուհետև
բարձցին 'ի միջոյ կաշառք, և մի ևս վա-
ճառեսցին իշխանութիւնք, և թե-
թևասցին ծանրութիւնք հարկաց։
Յայլում աւուր խնդրեցին ապատանքն
և զգլուխ դեղեալսն. այլ նա արգել
եւ թ յիշխանութենէն, որպէս և այլք
յառաջանեալն։

Տեսեալ Մուրատայ յայտնապէս՝ ե-
թէ խորով է պատճառ ամենայն
չարեաց այսոցիկ, պատուիրեաց Մեր-
թէզայի կուսակալին Օղուի երկեալ

բանալ զկնիանս առնն։ Իբրև եհատեալ
Յեդոկիա, գիտաց Խոսրովայ զատաճառս
գալստեան նորին, և կարգեալ 'ի գուռն իւր
պահապանս սուսերամերկս՝ ազգ արար Միհրմէզայի գալ առ
նելոյ։ պատրաստ եմ ասէր կատարել
զհրամանս տեառն իմոյ ազգայի։ Ել
Միհրմէզ Ճարտարապետն քան զնա
գտեալ՝ զհրովարտակն ետուն ազգուն
առաքեաց առնս։ և Խոսրով իբրև ընթ
երցաւ զիմաստն՝ կատարեաց զուա
ղու

և զաղօթսն, դարձաւ 'ի հարաւ
կոյս, և մատոյց զպարանոց իւր 'ի խնդ
դանն։

Յաւուր յորում եհաս գլուխն Խոս
րովայ 'ի Կոստանդնուպօլիս, դար
ձեալ սատակեցին զօրքն, և խնդրեին
զգլուխս համարակալին Մուսգաֆայի,
զգօրավարին ենիշէրեաց զՀասանայ, և
զՄուսայի պատանեայ մտերմին ար
քայի։ Երևեցաւ նոցա Մուրատ արքայ
և ասէ։ «Մուսգաֆա և Հասան 'ի
թագուոր կան, և ձեք գտանեալ զնոսա։
իսկ Մուսայի զինչ յանցանք իցեն»։
'Նոքա ընդ մի բերան գոչեցին։ «Ա
ցին արտաքս արքայորդիքն»։ Ելին առ
նոսա քարեբին եղբարքն Պայէզիտ, Սիւ
լէյման, Գասրմ և Իբրահիմ, և ասեն
ցանդրոսն։ «Զինչ բանք իցեն ձեր ընդ
մեզ։ մի՞ և առնուցուք 'ի բերան զա
նուն մեր, և մի՞ զուր տարապարտուց
կասկածեալս առնեք զմեզ։ անեկիւղք

յԱստուծոյ և անպատկառք յայլքայէ։ Աստուած է որ պահպանէ զմեզ անկաթոտ ձերումդ օգնականութեամն։ Իսկ խռովարարքն Երաշխաւորս խնդրեցին վասն կենաց արքայորդւոցն, և զենարէն և վէզիրն մեծ Րէձէպ յախտուռն առին զնոսա յերաշխի, և նոքա ածան անդրէն 'ի տեղիս իւրեանց։

Րէձէպ փաշա խարկանոք էառ յարքայէ և զգաստանին Մուսա Խալիֆէ, զի տարայց ասէ, 'ի տուն իմ, և անտի ցուցեալ զնա զօրացն՝ հանդարտեցուցից զնոսա, և յետոյ կացցեն 'ի պահանջելոյ զգլուխս երեցունցն, զնորա և զհամարակալին և զզօրավարին ենիչէրեաց։ և թէ շար ինչ պատահեսցէ նմա, անձն իմ փոխանակ անձին նորա։ Ի վաղիւ անդր խառնեցան ապստամբք դարձեալ առաջի ապարանիցն Րէձէպայ, և խնդրէին զգլուխն Մուսայի։ Եւ նորա հանեալ զգաստանին արտաքս, որպէս հրաման տուեալ էր իւրոցն 'ի ծածուկ՝ մղեցին ընկեցին զգաստանին 'ի առնդրոց անտի 'ի վայր, և անդէն յօշատեցաւ Մուսա 'ի հազարաւոր տուսերաց։ և Րէձէպ 'ի բարձուէ անտի կականաւ գոչէր։ «Զի՞ գործէք ո՛ արք, իմ առեալ է զդա յերաշխի։ աւա՜ղ, աւա՜ղ»։

Խնդրեցան և զօրավարն ենիչէրեաց Հասան և համարակալն Մուսադ՚ֆա, և շարամահ ապանան, և զօրականքն ա-

ուրալ կախեցին զդիակունս նոցին ըզ-
ծառոյ գլխիվայր։ Սակայն այսու
ամենայնիւ հանգիրձ չեւ եւ ցածեան 'ի
մոլեգնութենէ անտի իւրեանց. նա և
եւ զգլխուալք՝ զամիսն բանդարան 'ի
բուն յամենայն անկարգութիւնս ան-
ցուցին։ Ի միւսում ամենեան զինարար-
քին եւ 'ի նոսա յաւելան, զի նախանձ
շարժեցեալ ամենեան 'ի նոսա կախել և
զիւրեանց զօրավարն զծառոյ ըստ օրի-
նակի Ենիշէրեաց, որպէս և արարին իսկ-
և ահ երկիւղն 'ի վերայ կայր ամենե-
սեան, եթէ գուցէ նորոգեսցին գար-
ձեալ արկածքն Օսմանեայ ազգայի։ Սա-
կայն Մուրատ ազգայ քաջ գիտայ վախ-
ճան առնել խռովութեանցն և երկիւղին. և սկիզբն գործոյն մեծի եղ
զնահն ՌէՀէպայ. որում չկարէր նե-
րել և զնահն Մուսայի, եզյանդուզնե-
բաշխաւորութիւն նորա վասն կենաց
ազգայորդւոցն՝ քրէական յանցանաց,
եւ առաւել զյանդուզն բարբառն՝ ո-
րով 'ի կոչել անդ զազգայ յասեան
ապստամբայն առացեալ էր. «Տէր ազ-
գայ, արասցիր զոչիսական լուացում-
նդգ»։ Թող զի ոչ անդիսանայր Մու-
ռատ՝ եթէ ՌէՀէպ է սկզբնաւոր
այսր ամենայնի չարեաց։

Յաւուր միում, այն ինչ գարձեալ
էր վէճքն յասենեկ անտի 'ի տուն իւր.
եկն անենեկապետ ոմն և կոչեաց զնա
անդրէն յարքունիս. և իբրև եհաս 'ի

զուռն, նեղբինեք ոմանք ցուցին նմա 'ի ձախակողմն կուսէ գոյզն ինչ մուռս, ուր մնայ քեզ ասեն ազքայ։

Իբրև եառաս Ռէձէպ 'ի գաւթի անդ զբազմութիւն խոփշիկ նեղբինեաց՝ զարհուրեցաւ յանձն իւր և գուսանեցաւ, և ասդնապետաց յանդգնութենէ՝ եմուտ կապարով 'ի մերձակայ սենեակն, ուր կայր Մուրատ. որ և գոչեաց առ նա. «Էկ, եկ այսր այդ գու կապ աւաջնորդ ապատամբաց»։ Զանազր ձգնեբ Ռէձէպ անբասիր զանձն առնել, այլ Մուրատ բարձրացոյց 'ի վերայ նորա զբաբբառ իւր. «Ա՛յ անօրէն, ասէ, արա՛ զքուայուանդ». և 'ի նոյն յարեալ ասէ. «Հատէք վարվարակի զգլուխ գաւառանիդ»։ Եւ զի չէր գահիճն 'ի պատրաստի՝ նեղբինեքն խնդ գանահ արարին զնա։ Իբրև տեսին ապստամբք զգլուխն Ռէձէպայ առ գրան ազքուն, վարատեալ ցրուեցան ահարեալք։ Եւ Մուրատ սկսաւ այնուհետև զօրանալ ինքնիշխան 'ի Թագաւորութեան անդ իւրում՝ ամաց գոլով քսանից։

Կարգեաց նախ վէզիր մեծ զԴատանդ եառաջ Մէհէմմէտ. և 'ի քանեորդի ինեորդի աւուր ամենանուն մայիսի հրամայեաց արար. զի մի ևս բաշխեսցին հեծելազօրուն պատիւք սպասաւորաց։ Ելանէն կոչեաց ապա 'ի պատուգամին Սիւլեյման զամենայն զաւագրելոյն և

զչքաւորս Ներչէրեաց. և մինչդեռ նոքա յոտս կային, ինքն բազմեալ յաթոռ խրատ խօսեցաւ ընդ նոսա անդ բարբառով և ասէ. «Եթէ հաղանդ և հլու եղեն ինձ հեծելապետքն իմ, թող արձակեսցեն առ իս զոմանս 'ի զքաւորաց խրատուն»։ Ապա գովեաց զՆերչէրեաց և յորդորեաց զնոսա յետս կալ յապստամբեաց անտի. և նոքա ընդ մի բերան երկայն աւուրս մաղթեալ նմա ասեն. «Հնազանդ եմք մեք բանից արքայի, հեռի լիցի 'ի մենջ ապստամբութիւն»։ Յայնժամ բերան 'ի մէջ կուրանեն և նոքա երգուան 'ի նոյն և յանուանն Աստուծոյ երկնչին, և արձանագրեցան երգումն նոցա 'ի մատեանս յիշատակաց։ Ապա գարձաւ Տուրան առ զքաւորս ապստամբեցեալս Ժողովրդոց յայնժամ 'ի Ձիարձանկարանին և ասէ. «Աղբ խառամքանք եք գուք ապստամբք, և գործ մի գժուարին և տալ ձեզ 'ի միտ առնուլ զլաւն և զգոտակար։ Զերդիք խիստանկրութիւնքն խառնգարեալ ապականեցեալք գուք զպատուիրութիւնս առ հաստատակ, և յանդգնեցեալք 'ի միջի ձերում ապա անօրէնս՝ որ ոչ ինչ անասն բանից զքաւորացդ 'ի նոսա, այլ կենդանի զհոգատակս, ուստի զհաս մեկնեցաց, և ձգեն յանձին խրատուն զանուն վատութիւն զապստամբութեան ամենայնոցն»։ Պատասխանի առեալ ապստամբն արքայն և ասէն. «Հաւ լիցի

մեզ յանձն առնուլ զանուն ապաստամ-
բութեան. այլ քարեկամք եմք մեք բա-
րեկամացն քոց, և թշնամիք թշնամեաց
քոց. գարշիմք մերժիմք յանօրէնութեաց
գործելոց հակառակ ազգայիդ, այլ
չկարեմք խաղանել զնոսին։ Գովեաց
և զնոսա ազգայ և երդմնեցոյց. և ապա
կոչեցեալ զկանանսն՝ ի գաստաւորաց
աշխարհին՝ խօսեցաւ առ նոսա և ասէ.
«Չի՞ է զի ամենեքեան բոզոք զՀէնչ
դարկանեն, որպէս թէ կաշառակուրծ
լինելով նեղէք զՀպատակս իմ»։ Ն-
քա էառն պատասխանի և ասեն.
«Մեք ոչ երբէք թիւրեմք զկիսաւոնս
և ոչ երթամք զՀեռ կաշառուց, քաւ
մի լցի. այլ զի չկարեմք ապրաստ-
թեամբ առնել զկիսաւոնս, քանզի այն-
պէսքառնադատեն զմեզ ապայքն գոռ-
զացեալք. և թէ չտամք ինչնոցա յու-
ռեան, դատապարտեն զմեզ երբեմն զկա-
շառաբերկս»։ Մի ումն՝ ի գաստաւորաց
Ասիոյ ազգացն խնդալոյ՝ եհան անդէն
զսուսեր իւր և ասէ. «Տէր ազգայ,
սուսեր միայն է գարման չարեացս այ-
սոցիկ»։ Ապէք ազգայն և ամենայն ժո-
ղովոյն գարձան՝ ի հրացայտ կերպա-
րանս առնն. այլ նա ոչ այլ ինչ յաւել
ասել։ Յետ այնորիկ հրամարակեցաւ
երդմնակուռ խոստումն երեցուն գա-
ստեցս առ՝ ի պահելոյ զանդորրութիւն
հասարակաց, պատուհաս՝ ի վերայ կա-
ռնալ երդմնազանցիցն զանէծս Աստու

ծոյ և զնարդարիէին խրատանց, և զՀրեշտակաց և զսատանայից առ հասարակ։

Զհետ երից աւուրց կամէր Մուրատ ապառապուռ ընկնել 'ի միջոց զհեծելազօր գունդն. այլ յընդդէմ կալ դիւրխառուրց նոցին՝ երաշխաւորելով զպարհպանութիւն երդմանն խրատանց, ասէ ցնոսա. «Արիցին ապա առաջի արքունական դրանն զլուխք առաջնորդացն ապստամբութեանն»։ Յայնժամ ակաւ կուտրած նոցին. և զլուխք էին նոցա Սադա Մէհէմմէտ, Կիւրճի Ռիզվան, ճին Ալի, ճաուս Օսման, և այլք բազումք։ Եւ որք արտաքոյ 'ի զանազան քաղաքս բռնացեալ էին՝ որպէս Տէլի Իսահի ոմն եղբօրորդի այլոց ուրումն բռնակալի՝ որում անուն էր Տաղլար ոչխար, և Տէրէլի Խաչիլ, և Իլիաս փաշա, 'ի ձեռն քաջ զօրավարաց ընկալան զպատիժ արատուհասի չարեացն գործելոց. զորոց ընդերկ առին մանրապատում լինել։ Ալ զբռնագունեին 'ի նոսա ապստամբացուք 'ի կարճոյ զկատարած՝ զԻլիաս փաշայի որ մականուն Սօլադ օղլու անուանէր։ Սա 'ի բազում ապստամբանս քաջ գտեալ՝ առաւել ևս ապստամբութեանէն հաչակեցաւ. յաւուրսն էառ զՄագնեսիա, և արհամարհեաց զՀրամանն արքունի զընդարդ 'ի Դամասկոս, և ընդդէմ յարձակեան կուսակալաց փոքուն Ասիոյ և Դարամանայ՝ որ էին Քիւչիւք Ահմէտ

և Տիրամէր փառաւ՝ ամրացաւ 'ի Պէր-
գամոն։ Տեսեալ պաշարողացն զանառիկ
ամրութիւն տեղւոյն՝ սկսան յոյզք ան-
ցանել. առաքէին առ նա կերակուր և
միրգ և շաքար, և ընկալան նա 'ի Կոս-
տանդնուպօլսոյ նամակ արքունի՝ յո-
րում թողութիւն շնորհէր նմա արքայ։
Յայն խոստումն վստահացեալ Իլիաս
անձնատուր եղև, և յուզի անկեալ
ընդ Բիւզիւք Ահմէտայ գնաց 'ի Կոստան-
դնուպօլիս և յանդիման եղև արքայի։
Ասէ ցնա Մուրատ արքայ. «Այր ա-
նուանց, զի է զի ոչ ջոգայր 'ի Դամաս-
կոս, զորոյ զկուսակալութիւնն 'ի քեզ
առանդէի»։ Իլիաս պատասխանեաց ըղ-
խօսիմն լինել։ Ասէ Մուրատ ասէ. «Որ-
դի անիծեալ, ոչ խօսիմ էիր ապաքէն յա-
ղագսն վարել զՄազնեսիս զաթոռ
նախնեացն իմոց։ Հատէք զկառափն
անօրինիդ»։ Կալան զնա զօրականքն,
և մի ոմն խողխողեաց զնա անդէն գաշ-
նակաւ։

Իսկ Բիւզիւք Ահմէտ որ երաշխաւոր
լեալ էր կենաց առնն՝ գոռայր արդարա-
սափնամբ սակս իւրոյ կենդանութեան,
քանզի գիտէր զբոլոր բնակչացն Կէր-
միանու ընդդէմ անձին իւրոյ։ Մու-
րատ սուղ ինչ 'ի լռութեան կացեալ,
ապա ասէ ցնա. «Անօրէն դու, էր ա-
կրս տառապեցուցանես զհպատակսն
իմ»։ Պատասխանի ետ Բիւզիւք Ահ-
մէտ. «Տէր իմ և թագաւոր, խոսա-

վանեմ՝ ահա զի նեղեցի զՀպատակս, այլ զոր ինչ և առի 'ի նոցանէ՝ 'ի պէտս զօրուն ծախեցի. եթէ այն չէր, և ոչ զօրս կարէի գումարել, և ոչ սա այսպէս ընդունէր առաջի քո զարժանին զպատուհաս. և արդարև տակաւին ևս պարտապան եմ զօրացն վաճառն հազար դահեկանաց։ Այլ եա 'ի ձեռս սեառն խնոյ արքայի կամ, 'ի քո ձեռս է սպանանել զիս և կամ ներուանն շնորհել։» Եւ արքայ խրատեալ զնա՝ ըզգեցոյց ապա նմին պատուական փառաց, և կարգեաց զնա կուսակալ Դամասկոսի։

ՅԱրաբիա ևս 'ի կողմանս Եմենու և Հիճազայ Արաբացիք հարիւր հազար ապստամբեալք յերից ամաց հետէ 'ի մարտս կաքաւէին ընդ Օսմանեանս։ Դէօր Մահմուտ զօրավար Օսմանեանց վանեաց միանգամ զԱկիտա զիշխանն Մէքքէի, և 'ի Մէքքէ հինգարար յաղթեալ տակուրթիւնս և քանդմունս արար բազումս։ Յետ այնորիկ կատարեալ անդէն զուխան՝ արար և զեօթնամիւ շրջանն զՔաբէպէիս։ այլ գիտելով չափ չյանցանս իւր՝ փոխանակ գառնալոյ 'ի Կոստանդնուպօլիս խոտորեցաւ 'ի Պարսս, և անկեալ 'ի ձեռս Արաբացւոց սպանաւ։ և վերստին տիրեաց Մէքքէի շերիֆն Սկիտա։

Իսկ 'ի Կոստանդնուպօլիս յետ հանդիսից և Ջահալոյց ուրախութեանց

վան ծննդեան նոր արքայորդւոյ, ան-
կաւ հրդեհ մեծ 'ի գուռն ճիւպ Ալի
և տարածեցաւ 'ի նաւահանգստի ան-
ոյ մինչև 'ի Մոլլա Կիւրանի, և 'ի Ֆի-
նէռ դրանէ մինչև յՈՒնգափան, և այ-
ցեցան՝ ասեն՝ տունք քսան հազար,
երկուք եւեթ անմերձ 'ի հրոյ մնացեալ 'ի
մեծի ընդարձակութեան անդ։ Ժողո-
վուրդն կարի խիստ զայրագնեալ ընդ
դէպն՝ բազում ինչ խառնախօս լինէին
տրանքելով 'ի Ժողովս իւրեանց. սին
իրի հրամայեալ զի կործանելոյ կամ վա-
կելոյ 'ի սպառ զամենայն կրպականին
դահվէի։ Ապա արդեալ և ծխաձիգն
լինել հանդերձ սպառնալեօք մահու,
զի պակաս ելցի վասանդ հրձգութեան։

Յամենայն գիշերի շուրջ ընդ քաղա-
քըն յածէր Մուրատ արքայ, և զոր ոք
գտանէր անլոյս կամ ընդելով զդահվէ,
կամ ծխաձիգ լինելով, առ ետեղ 'ի
մահ դատապարտէր։ Զգերեկ ևս յայ-
լակերպս շրջէր ընդ ամենայն անկիւնս
քաղաքին, և իւրով առաջնակայ գտա-
նելումն ցրուէր վարատէր զամենայն ժո-
ղովակս արանց խռովասիրաց։ Յաւուր
միում մատեաւ առ մեծանուն ծերու-
նին Սիմասիզատէ, որ 'ի պատուոյ ու-
ռեք ընդ բարեկամս իւր բանս 'ի մէջ
առնոյր զվարուց լաւութենէ, և հրա-
մայեաց իւրոցն հարցանել զԺողովա-
կանսն թէ զինչ ինչ ունիցին ընդ իւրեան-
նրա։ և նոքա հանին ցուցին մատեանս

և օրհնարան։ Եբաց Մուրատ զառաջին մատեանն և ասէ. «Այս իմոյ վարժապետիս Եահեայի գործ է». ապա ակնարկեալ և յայլսն՝ ասէ. «Ես չիտամ բնաւ զգիտնականս և զգրիչս և զմիտնձուռնս»։

Յաւուր յիշատակի ծննդեան մարգարէին իւրեանց 'ի մեկնիչն տուրգան Ահմատայ քարոզեաց նախ Սիմասիոյ, և ապա այլ ոմն հանրաւեալ գաղղատէ անուն. և սա քանզի հանարձակութիւն յոյժ ունէր առ արքայի՝ անէրկիւղս բարբառէցաւ ընդդէմ աւագ որերոյ, և առակ 'ի մէջ բերեալ զմի յարարոց 'Լապրէատինայ՝ ասէր. «Արօրագիր լինէր նա երբեմն՝ լծեալ եղինս երկուս, զմին մեծ և զմիւսն փոքր. և յոյժ ամէրկրորդն չձգէր, նա զառաջինն հարուածէր. և իբրև հարցաւ 'Լապրէատին զպատճառսն՝ ասէ. զի մինչև առաւելագոյն փոքրն զմեծն պատուհաս, ոչ ձգէ զարօրն»։ Բազումք յաւագանեացն Թշնամանս անձանց հանարեալ զբանսն՝ կամէին անդէն յանիշատակեալ քարշել զնա 'ի բեմէն անտի. այլ արգել զնոսա դենպէատն, զի չէ օրէն ասէ առաջի արքայի։

Ընդ այն ժամանակս յարձակեցան Պարսք 'ի վերայ բերդին Վանայ. և Մուրատ առաքեաց փութանակի ընդդէմ նոցա զվէզիրն մեծ Մէհէմմէտ փաշա, ինքնին ուղեկից լեալ բանակին մինչև

անդր քան զՆիկոմիդիա 'ի Գազբդելը։ Յետ աւուրց գնաց և 'ի Պրուսա՝ ան-
ցեալ ընդ Նիկոմիդիա, զորոյ զդասա-
ւորն Կիւմիւշչատէ անուն գովեցեալ
զի նոր գեալ էր զարարեալս քաղաքին,
և հրամարակ եւ ինքնագիր շնորհեաց
նմա՝ ոչ եւս ընկենուլ զնա յիշխանու-
թենէն։ Ապա յերթալ իւրում 'ի Նի-
կիա անհարթ գտեալ զճանապարհն,
զի անակնկալ էր գալուստն արքայի և
անագդ, հրամայեաց Պուրսա կախել
զդասաւորն։ Յուցանէր այրն զհրա-
վարտակն արքունի և բողոք հարկանէր
ընդդէմ հրամանին. այլ 'ի զուր։ Եւ
'ի պահս անդ կախեալն գարձաւ առ-
ժողովուրդն և ասէ. «Զձեզ ունիմ, ո՛
Տաճիկք, վկայս անպարտ արեան ի-
մոյ»։ Զերիս աւուրս մնաց նա կա-
խեալ իւրով փակեալսն և հանդէր-
ձիւք գասաւորութեան 'ի գրան քա-
ղաքին, և ապա ի՛ջուցեալ ածաւ 'ի
թաղումն՝ ոռոգելով զճանապարհն
արեամբ իւրով։

Ընդ այս գործ գժգոհեցան գիտ-
նականք 'ի Կոստանդնուպօլիս. և գնն-
պեան Ախիզատէ ազգ արար մեր թա-
գաւորին՝ զի խրատեսցէ զորդին իւր,
որպէս զի մի անկցի ասէ ընդ անիծիւք
գիտնականաց, և մի յերկիւղալի ժամա-
նակիս գրգռեսցէ զցասումն ամենայնի։
Յայնժամ գշնոյն ժամոյց Պուրսայոյ
թղթով զկրան, և ասէ. «Ահիւ իմ,

փուլմամ գարձիր յեռաս. զի զփոփոխանեն ամենայդ բանք ընթանան »։ Մինչդեռ յորս հեծանէր Մուրատ՝ ընկալաւ զիմուղմն. և ոչ ինչ հանեալ ուսքեր 'ի վերայ, գիմեաց գէպուղիղ 'ի Կոստանդնուպօլիս, և վաղվաղակի առաքեաց զպատանեաց պաշին աքսորելոն Խիզատէ 'ի Կիպրոս, որոյ փոխանակ կարգեցաւ գենպէտ էրբորդ անդամ Եահեա էֆէնտի։ Ի վաղիւ անդր պատուէր եւ արքայ նոցին իսկ պաշտօնէի՝ ամենայն զհետ աքսորելոյ գենպէտին, և թէ գայցէ ասէ զնա 'ի մերձակայս ուրեք քաղաքիս՝ սպանանիցիր։ Եւ նորա գտեալ զայրն գեռ եւս յաւանն արբոյն Սուէփանոսի անուանեալ, եբարձ զնա 'ի սայլ ինչ յարդի՝ ակնարկուելեամբ նորին իսկ Մուրատայ որ էրիվարաւն իւրով եկեալ էր 'ի տեղին, և տարեալ 'ի գիւղն մերձակայ խեղդեաց զգենպէտն և ընդաւազեաց 'ի ծովն զերին։ Եւ էղև Ախիզատէ նախկին գենպէտ գառապարտեալ 'ի մահ։

Մինչդեռ բանակն Օսմանեանց 'ի Բերիա էր, ասիոխեցան էնիչէրիք, և պատճառանօք խնդրելոյ գահեկանս 'ի ռոճիկ փոխանակ փոպոյ՝ 'ի մի վայր եկեալ պատեցին զտուն զօրավարին իւրեանց և գոչէին. « Ձկամիմք մեք զքեզ »։ — « Ես եմ որ զձեզ չկամիմ »։ ապաղակեաց առ նոսա զօրավարն ընդ պատուհանս տան իւրոյ, և սկսաւ նե-

տաճիգ լինել 'ի նոսա։ Իսկ նոքա գի-
մեալ առ վէզիրն՝ ասիպէցին զնա տալ
ինքեանց զգլուխ զօրավարին և զիր-
խանորդի նորա։ Եւ յասել նորա եթէ
փախուցեալ է նոքա. թէ գտանիցեմ՝
ասց 'ի ձեռս ձեր, սկսան քարկոծ առ-
նել զնա։ Գրաւեաց վէզիրն զինչս փա-
խուցելոցն, և ազգ արար 'ի Կոստանդ-
նուպօլիս. և Մուրատ արքայ զի կա-
մէր զկորուստ խռովարար զօրապետին
արձակեաց զսենեկապետն մեծ, որպէս
զի ուրև գտցէ զայրն՝ սպանցէ զնա։ Քէօ-
սէ Մէհէմմէտ, քանզի այս անուն էր
զօրավարին, ապաչեաց զսենեկապետն
ածել զինքն կենդանւոյն զառաջեաւ
արքայի. զի յանհնարիցն է, ասէր, թէ
սպանցէ արքայ զայր վաստակաւոր իբ-
րև զնա։ Եւ 'ի ժամանել իւրում 'ի
Կոստանդնուպօլիս իբրև յանդիմանեալ
արքայի, զայս ետեղ լուաւ 'ի պատաս-
խանի ապաչանաց իւրոց. « Որդի անի-
ծեալ, ո՞չ ապաքէն գու յուզեցեր զաշխ-
խառովութեան. և արդ կամիս հանգոյն
ձիմոյ յերեսս էլանել Ջուրց. հասէք
զգլուխ անօրինիդ »։

Յայնմ ժամանակի Քիւչիւք Ահմէտ
փաշա կուսակալն Դամասկոսի խաղաց
'ի վերայ Տիւրքն անուանեալ լեռնակա-
նացն Լիբանանու, որոց ամիրէն ապրա-
տամարտութեամբ Մաան օղլու Ֆախրէտ-
տին հաշակաւոր բռնակալն, որ և յԵ-
ղոտա Հանապարհորդեալ էր երբեմն։

Վանեցոյ Ահմէտ զոչս նորա. և զնա
ինքն զապատանեալն յանձնաւ ուրեք
ծխահեղձոյցանելոյ՝ ասելով ցանձ-
նատուր լինել, և առաքեաց 'ի Կոս-
տանդնուպոլիս։

Ի նմին ամի գեղապան ոստիկին Լե-
հաց Թրեպինեքի անուն եկեալ 'ի Կոս-
տանդնուպոլիս 'ի խնդիր խաղաղու-
թեան՝ յանդիման եղև Մուրատայ։ Իսկ
նորա զայրացեալ ասէ ցգեղապանն.
«Մի՛ և ես խօսելոյս զիսաղաղութենէ,
այլ զմարտից և զպատերազմաց. ընդ իս
և ընդ Լեհս ոչ լիցի բարեկամութիւն՝
եթէ ոչ հատուսցիք զհարկն, կործա-
նեսցիք զամրոցս Տնեստրայ, և խորտա-
կեսցիք զԽոտզախս»։ Եւ երբև եկն նեղն
պատասխանի գեղապանն՝ եթէ լաւ պա-
տերազմն քան զայդպիսի պայմանս ան-
արգութեան, բուռն եհար Մուրատ
զսուսերն իւրմէ և ասէ. «Ո՞չ գիտես
զի ինքնակալ եմ՝ և ես այնպիսի, յորոյ 'ի
սուսերէն ապրին ազգք և ազինք»։
Պատասխանի եւ գեղապանն. «Գի-
տեմ և ես զքեզ թագաւոր մեծազօր, այլ
առաքեալ եմ 'ի թագաւորէ՝ որ և նա
մեծազօր է իբրև զքեզ»։ — «Այլ
և ես հեզեզեցից զԼեհսն, ասէ Մու-
րատ, անհամար զօրօք, և 'ի հուր և 'ի
սուր մատնեալ ծախեցից»։ Ասէ ցնա
Թրեպինեքի. «Ի քո ձեռս է գալ անդր,
այլ յաղթութեան յաջողութեանցն 'ի ձե-
ռին Աստուծոյ. և Ս. յարութեան արքայ ոչ

վերջացի մերկանալ զուսանէրն իւր յաղ-
թական »։ Զարմացաւ արքայ ընդ
աներկիւղ համարձակութիւն դեսպա-
նին, և դարձեալ առ իւրսն ասէ. « Աղ-
ժան էր ձեզ ծառայս լինել հաւա-
տարիմս քան օրինակի առնս այսորիկ »։

Յետ այնորիկ խաղաց գնաց Մուրատ
արքայ յԱգրիանուպոլիս առուար բա-
նակաւ, առ'ի գիմելոյ անտի 'ի պա-
տերազմ 'ի վերայ Լեհաց. այլ'ի խլնդ-
բել նոցա սխալաւ զհաշտութիւն՝
դարձաւ անդրէն 'ի Կոստանդնուպոլիս
և մեծաշուք հանդիսիւ արար զմուտս իւր
անդր։ Զհանապարհայն մինչդեռ ան-
ցանէր արքայ ընդ կամուրջ մի, տէր-
վիշք երեսուն որ թագուցեալ էին ընդ
նովաւ՝ զի մարթացեն անխափան 'ի
թիկնապահաց թագաւորին հայցել 'ի
նմանէ առաքս ողորմութեան, յանկար-
ծակի արտաքս ոստեան 'ի գարանէ
անտի, և այնպէս իմն խրատեցին զե-
րիվարն արքայի, զի անկաւ նա 'ի վայր.
և հրամայեաց առ ետեղ կառափնա-
տել զյանդգուզանն։ Իբրև Լեհաս Մու-
րատ արքայ 'ի թագաւորական քաղաքն՝
արդեալ գարձեալ ընդ պատուհասիւ
մահու զգահվէ, զծուխ, զարիւն և զէ-
նի, և 'ի մահ տարով անաչառ զամենայն
յանցաւորս՝ զարհուրելոյց զարս չարա-
գործս, և շինոյց գէթ առ ժամանակ
մի զկայծակն ապատամբութեան։ Այլ
ահագնագոյն գոռս յաչս բոլորից մահ

հղոր ապաստամբին Ապարա փաշային։

Քանզի առ զինի մեկնելոյ 'ի կուսակալութենէն Պոնտոյ, և յետ յաղթելոյ Լեհաց պատերազմաւ՝ բդեաշխ գոլով Օղուի, էանց 'ի կարգս վեզիրաց, և ընդ արքային դարձաւ եկն յԱդրիանուպոլսոյ։ Այնչափ շնորհս եգիտ առ առաջի Մուրատայ իւրոմն պատերազմաւէր ոգւով, զի ցանգ անբաժան էր 'ի նմանէ 'ի տան և արտաքոյ։ և Մուրատ արքայ ախորժէր յամենայնի 'ի ձեռս զգեստուցն, 'ի փաթթոյթս փակէղան, 'ի կազմս երիվարի և յամենայն գնացս նմանող լինել Ապարային։ Այլ թշնամիք նորա տեղապահն Պայրամ, գենարեան Եահեա, և մտերիմն արքայի Մուսդաֆա զինակիր՝ նեղվեալ էին զանձինս իւրեանց 'ի կորուստ առնել, և անդադար կասկածանս յաւելուին 'ի միտս Մուրատայ զնմանէ։ Ապա յաւուր միում մինչդեռ էլանէր արքայ երիվարաւն իւրով ընդ Դոփ գաւառս ըզգնալ ըստ սովորութեան իւրում արտաքոյ քաղաքին, ընդ առաջ էլ նմա Ապարա ընդ Էյրի գաւառ, և կամէր իջանել յերիվարէն առ 'ի համբուրելոյ զոտապատանգն արքայի։ Հրամայեաց նմա Մուրատ մնալ 'ի նուա երիվարին։ այլ կոչեցեալ վաղվաղակի զզօրականն ասէ, որ մերձ գիտակարէր, ասէ ցնա։ «Իջի զԱպարա, և առ 'ի բաց 'ի նմանէ զսուսերն»։ Ասէ զօրականն յառ-

նուլ անդ զառաքն ցԱպարզա. «Զգի-
ակցեա զի չէ օրէն առաքը ընդ մէջ ու-
նելով ձիավարել առ ոչքային»։ Ան-
սաց Ապարզա. այլ խնացեալ և զարիսն
որմնայնն նեմա, պատրաստեաց յԻուսկիս-
տար երիվարս յիսուն, զի փախիցէ յա-
բեալս։ Սոսոր էր նա 'ի խոկալ ինչ կա-
բեորս գիշերային հանդերձիւք զցայ-
գրն ամենայն զգնալ յածել յառանձին
վայրս 'ի վեր և 'ի վայր՝ ձգելով գար-
ձուցանելով միանգամայն զհատս օրհ-
նարանին զմատամբք իւրովք։ Զնոյն և
յայնմ գիշերի արար. և ազգ էղեալ
Մուրատայ՝ յաւել 'ի միտս նորա զկաս-
կածանս առնն։ Դարձեալ և վէճն Հայ-
ոց ընդ Յոյնս վասն վանացն որոյն Յա-
կոբայ որ յԵրուսաղէմ, պատճառեաց
մեհեան Ապարզայի։ Զի առեալ ասրա 'ի
Հայոց գահեկանս քսան հազար, 'ի հար-
ցանել ոչքային զքանակ կաշառոյն՝ նա
թոթովելով ասէ՝ թէ երկոտասան հազար
եղեալ ասաց լինել։ Ուստ յայնժամ չափ
սրամտութեանն Մուրատայ։ Ապա
յաւուր յորում առեան ուղղել կարգել
սակս գասին Հայոց և Յունաց, էլ Մու-
րատ ոչքայ ընդ արշալուրջն, և գնաց
'ի գաւիթ Ա յա Սոֆիայի, և զպատան-
ձի պաշին յայլակերպս 'ի ձև զինուորի
առաքեաց յատեան անդր, պատուի-
րանաւ՝ զի գլխատեսցին անդէն Հայքն
եկեալք վասն գասին իւրեանց։ Ծա-
նեալս տեղապահն Պոլսոյ զայրն, և

առեալ 'ի ձեռանէ նորա զմուրհակն՝ որով էբրու եմէ խնդրէր նա զուռնիկ զմեռուրուեմեան իւրոյ, եւ ցասեցեալ զկիր, և նշանացի ակնարկութեամբ եհարց ցպոսթանձին թէ զինչ իցէ. և նա ըստ օրինակի համերցն որ յարքունիս՝ պնդեաց զբերթուն իւր, որ է նշանակ արեան: Կոչեցեալ ապա առ ինքն զպատգամաւորն՝ լուաւ յունկանէ զհրամանն արքայի, և անդէն հրամայեաց գահճաց գլխատել զոմանս 'ի Հայոց խուռն եկելոց յատեան անդր:

Դարձ արարեալ Մուրատայ յարքունիս՝ եւ կոչել զԱպազա, և փակել 'ի պարսիզն. և ապա առաքեաց առ նա զկիր պատուհասին ընդ ձեռն պաշտօնեի ուրումն: «Հրամանն է տեառն իմոյ արքայի» ասաց այրն կորովի, և կատարեալ զպօթան՝ մատոյց զպարանոց իւր որոյ գահճին: Ա յապէս բարձաւ 'ի կենաց վրէժխնդիրն մահուն Օսմանայ, ոխոյ ամն ընդդէմ Պարսից և Լեհաց, և որ ապատամբութեամբ ցածուցանել կամէր զապատամբութիւն՝ վէճերն Ապազա:

Ի նոյն աւուրս արկաւ յարեւէ և երդիծաբան քերթողն Նէֆիի: Հնգամեայ ժամանակաւ յառաջագոյն մինչդեռ Մուրատ արքայ բազմեալ յապարանս իւր որ 'ի Պէշիքթաշ՝ ընթերնոյր զքերթուածս նորա զկոչեցեալսն Նէռոք բաղդին Նէֆեայ յանկարծուստ

ինն խառվեցան օդք, և չանէր կայծա-
կան հարեալ առ ոտս արքայի զարհու-
րեցոյց զնա յոյժ, մինչև պատառոտել
նմա զքերթուածն և կշտամբել զնէ-
ֆիլի. այլ ոչ ինչ արար նմա չար։ Ապա
իբրև յաճախեաց նա զանպատկառ նե-
տաձգութիւնն և յամենայն աւադա-
նին, և մանաւանդ 'ի տեղապահն Պայ-
բամ, սա բողոք կալաւ զնմանէ առ
արքայ և ընկալաւ զվճիռ մահու նորին։
Գնաց առ նա մահահրաւէր պաշտօ-
նեայն և ասէ. «Եկ Նէֆիլի, երթիցուք
'ի մայրիսն ուստի հատցես քեզ զնեռս
բաղդիդ»։ — «Ընդունեալ թուրք, ասէ
ցնա քերթողն, և գո՞ւ փայտ գօս աս-
տուածարիլ կամիցիս»։ Եւ խեղդա-
մահ եղեալ արկաւ 'ի ծով։

Ընդ նոյն ժամանակս աներևոյթ է-
ղև և Պայսանկուր միրզա որդի Տանչա-
հայ արքային Մողոլաց, որ ապաւինեալ
առ Մուրատ՝ խնդրէր 'ի նմանէ ձեռն
օգնականութեան ընդդէմ յաջիշտակը-
ղաց աթոռոյ հօրն իւրոյ. այլ սակս ան-
միտ ամբարտաւանութեան իւրոյ վրի-
պեցաւ 'ի խնդրոյն։ Զի զպարգևսն զ-
ոլորս ընկալաւ յարքայէ յառաջնուտ ա-
ւուրս՝ բաշխեաց 'ի գռնապանս և 'ի
փայտաբերս արքունեացն. և քանիցս
անգամ երթայր առ արքայ, ասայր բե-
ռել զնեռս իւր և մորթ եղջերուի, յորոյ
վերայ վարվարակին նստէր բազմէր։ Սա-
կայն որոյ և Մուրատ ոչ ևս յաան յառ-

նէր 'ի գալ նորուն. և ապա յերեսս իսկ ասաց ցնա՝ թէ չկարեմ ձեռն տալ քեզ: Յայնմհետէ ոչ ևս ուրեք երևեցաւ այրն:

Կամեցեալ յետ այնորիկ աղքայն Մուրատ անձամբ խաղալ 'ի Պարսս, յամին 1635 յամսեանն փետրուարի եւ հարկանել զքան իւր յԻսպահիւսար, և թափօրիւ երթալ հինգհարիւր խմբից արուեստաւորաց էանց յԱսիա: Եթող ինալ 'ի Կոստանդնուպօլիս զտեղապահն Պայրամ, որում և պատուիրեաց գլխատել զապստամբն Ֆախրէտտին որ կայր անդ 'ի կապանս բանտի, և զորդի նորա: Եւ ինքն մինչև 'ի ժամանել 'ի Կարին անթիւ կոտորածս արար ակամաւոր մարդկան՝ զորոց միանգամ ամբաստանութիւն ինչ լուաւ 'ի բնակչաց կողմանցն և կամ յաւագանեաց:

Մինչդեռ մերձ 'ի Տէվէլի Գարահիսար կառավարէր Մուրատ աղքայ, եկեալ զի արքենթաց վաշիւք փախչէր այծեանն մի. անդէն 'ի ձի աշտանակեալ ընդեցաւ զհետ և ապան զնա գաւազանաւ ձեռինն, զի անդէն էր. և զոչքն յապուշ կրթեալք ազաղակեցին. «Օգնութիւն տեառն Աստուծոյ 'ի վերայ քո»: Քանզի ընդ արիսկան տրոին և ուժով մարմնոյն երևելի էր Մուրատ աղքայ. բազում անգամ յօգս վերամբարձեալ զյաղթանդամ վէշին Մուսա փաշա. և 'ի Հանապարհին զամիսս քա-

զուսն Համեստ Երիվարին բարձ էր նոր-
բա, և վերանակ՝ ծածկոյթ դրասուն։
Ի Կարին եհաս 'ի բանակն արքունի
և վեզիրն մեծ Դասպանը եասաը Մէհէմ-
մէտ, որ 'ի Բերիա ձմերեալ էր. և 'ի
մասչէլ իւրում 'ի Համբոյր ոսից Թա-
գաւորին՝ ունելով 'ի ձեռին զդրօշն
Ռուիրական, Մուրատ քայլափոխս ինչ
առեալ գնաց նմա ընդ առաջ, կալաւ
առ վայր մի զդրօշն իւրով ձեռամբ, և
ապա տուեալ զայն 'ի ձեռս միոյ ու-
րուք 'ի նեղբին պաշտօնեից՝ բաղմեցաւ
դարձեալ 'ի գահ՝ մինչև անցին զա-
ռաջեաւ նորա զօրքն ամենայն հան-
դերձ իւրեանց զօրավարօք ըստ կարգի։
Ի քանեղրորդի ուրեղրորդի աւուր
ամսեանն յունիսի հասին Օսմանեանք
յԵրևան, որոյ կուսակալ էր Էմիրկու-
նէ նախարարն Պարսից, և նիզակակից
նմա առաքեալ էր 'ի շահէն Էմիր Ֆէթ-
թահ զօրավարն քաջ։ Հուպ գնայր բա-
նակն առ պարսպաւք քաղաքին, զի հոգ-
մին և փոշի սաստիկ խոփան լինէր
սեսուրեանն նոցա։ Եւ ասէ ցարքայ
յառաջընթացն նորին. «Տէր արքայ,
աւասիկ հասեալ կամք ընդ պարսպաւ
Երևանայ. կաց առ վայր մի մինչև ե-
կեսցէ բանակն»։ — «Վասն արանց,
գոչեաց առ նա Մուրատ. ուստի քեզ
երկիւղ. միթէ մեռանիցի մարդ մինչև
ժամանեալ օրհասին»։ Ի հանդարտել
մրրկին պատուէր եառ Մուրատ պաշա-

ընկղքաղաքն շուրջանակի, և մի առ մի քաջալերս կարդայր զօրավարացն։ Զոր ասէ ցկուսակալն Կարնոյ. « Ահմէտ փաշա, փոքր ինչ ետէ նուազել զապրստամբն Իլիաս, կամ ձերբակալ առնել զՅախրէտտին բռնակալ. այսօր է օր քաջութեան »։ Եւ ցՃանպուլատ զասէ, « Ցոյց ինձ, ասէ, զզօրութիւն քո զերկաթի, որդիդ պողոտամին »։ Եւ ցՄիւրիդէզ. « Հապա քաջդ, ասէ՝ զհանդէս քաջութեան քո, և քոյոցդ առոյգ հեծելոց »։ Եւ ցզօրավարն Ենիչէրեաց ասէ. « Տես քաջ, ոչ արութեան ինչ գործ է պահ ունել կոստանդնուպօլսոյ և չնել զարքեցողս. ասա՝ ասպարէս քաջայայտի մարտակցութեան՝ որպէս կուռեսցիս Ենիչէրեաց խնամք 'ի պատերազմի մէջն »։ Խակ զհասարակ զօրականն խրախուսէր լիաբուռն բաշխմամբ ոսկւոյ և արծաթոյ որ 'ի քարակս քարակս կային նոցա առաջի, և ասէր ցնոսա. « Հապա գայլքդ իմ, հապա արծուիք իմ, մի կասկածիք յընթացից »։ Պատանեակք շուրջ զնովաւ պարս առեալ՝ օշարակաբ զուարճութեանէին զայնոսիկ որ բերէին առ նա գլուխս. և վիրաբոյժք անդադրէին զամենայն գարմանս մատուցանել վիրաւորելոցն 'ի մարտին։

Նոքանեակ մի ոք կարկատէս ասէր՝ այլն ուռմէք 'ի քաղաքն և խրատեսցուք պարսեան։ Ցայնժամ առաքեաց

Էմիրկիւնէ զիսոխանորդն իւր Մուրատ պէյ անուն առ արքայ՝ խօսել 'ի հաշտութիւն [1]։ Առնան կարգեցաւ հապշտապ, յորում 'ի ձայն ահեղ բարբառեցաւ արքայ առ գեսպանն և ասէ. «Զի՞ է զի չեռուք զբերդն»։ Եւ պատասխանի գեսպանն. «Որպէս զի արութիւն քաջութեան արքայիդ մեծի հասցէ 'ի լսելիս շահին, և հնչեսցէ մինչև 'ի ծագս աշխարհին Պարսից. յայս սակս ետեթ մրջմուղքս մեք յանդգնեցաք ընդդէմ կալ նորոյդ Սողոմանի»։ Եւ Մուրատ ասէ. «Թէ խնդրեք ըզներուութն, ուրեք 'ի բաց վաղվաղակի զամուրդ»։

Ի վաղիւ անդր բացան դրունք Երևանայ. Էմիրկիւնէ անց դնաց 'ի դրանէ բերդին մինչև 'ի խորանն արքայի ընդ մէջ երկկարգեան զօրականաց՝ ուրոց եօթն արանց խորութիւն էր. և զինին նորա զօրավարն Պարսից Դահմաս-

[1] Սա այն Մուրատ է, զորմէ ասէն պատմագիրք՝ նոր Մանկիլ խոշեալ պէպռոնեանն Պարսից, վանմրճան ոմն 'ի Քանաքեռոյ արքայէսոյ 'ի Կոստանդնուպոլիս՝ որպէս նոր 'ի երթեալ էին յով ուղղեալ իշեն հանդերձանք արքանին Օսմանեանց. և 'ի ծածուկ փոխեալ 'ի յեռաս նորա նուազն ելոս, առ արքայ, առ վէզիրն մեծ, և առ սպարապետն և առ գենպէպն, հրաբեր խարդեալ նոցա գալ յառաջն Երևանայ։

գուրի խան և Էմիրքեմեմաճ՝ զուսանելու իբրեւ ոնց կախեալ զպարանոցաց իւրոցաքանչիւր։ «Ահա շնորհեմ քեզ որ ինչ քեզ անկանի» ասաց Մուրատ արքայ ցԷմիրկիւնէ, և զգեցոյց նմա երրեակ հանդերձս պատուոյ. եւ նմա փեսուր ակնակուռ, և գաւազն և սուսերս, և անուանեաց զնա Եուսուֆ փաշա։ «Զի է, ասէ ցնա արքայ, զի ահա շուրջ ամենք են յորմէ հեռէ եկեալ եմ և յատարէզ մարմի, և Թագաւորդ ձեր կանացարար 'ի Թաքատ կայ»։ Ասէ Էմիրկիւնէ. «Հատու է սուսերս ուսանդ խոց, և երիվարդ ահարկու. ո կարասցէ ընդդէմ կալ իշխանիդ յաւիտենից այսորիկ»։ Յետ այնորիկ եւ արքայն զհամար մԹերից գանձուցն Եղեանոյ, և ընկալաւ զկուսակալութիւն Բերիոյ, այլ չկարաց վայելել 'ի պատիւն. փոխանակ զի զայրագնեալ էրդեմն ընդ փոխանորդն իւր ընդ Մուրատ, որ և նա 'ի բանակին Օսմանեանց կայր, խողխողեաց զնա ինքնահրամանն. վասն որոյ և արկաւ յիշխանութենէ անտի իւրմէ։

Մուրատ արքայ արձակեաց և զզօրս Պարսից որ յԵրեւան՝ գնալ յազատութիւն, Թէպէտ և իւրքն յորդոր լինէին մի ապրեցուցանել զնոսա։ Ապա առաքեաց 'ի Կոստանդնուպոլիս աւետաւորս յաղԹանակին, և հրամայեաց զաւուրս եօԹն ջահավառութիւնս առնել անդ

գէն։ Գրեաց և թուղթ առանձինն առ Պայրամ փաշա, և առ պոսթանճի պաշին Տիւճ, յորում պատուիրէր բառնալ 'ի կենաց զԵրիկոսին եղբարս իւր զՊայէզիտ և զՍիւլէյման. զի խէթ էին նոքա արտին իւրում յօրէ յորմէ գենպեան և վէզիրն մեծ երաշխաւոր կացեալ էին կենաց նոցին. և ինդուԹիւն քաղաքացեացն 'ի սուգ փոխեցաւ ընդմահ արքայորդւոցն ամենեցուն։

Եռապատգիուսակալութիւնն Երևանայ ցՄիւրԹէզա փաշա, և հրաման էառ նորոգել զպարիսպս քաղաքին, որոյ շրջապատն ձգէր գիրկս իններեսուն հազար էօլճեհարիւր և վաԹսուն։ Եւ ըզմանն պարսպին ցիններհազար էրկերիւր և ուԹսուն գրկաչափ՝ սահմանեցաւ եւրոպեան զօրաց և բերիացւոց կառուցանել. ուԹհազար հինգհարիւր և վաԹսուն՝ ասիացւոցն և ենիչէրեաց, և այլն գնդիցն Կարնոյ, Դարամանայ և Կարուց։ Յաւուրս ուԹ հանաւ շինուածքն 'ի գլուխ. և արքայն ԹողեալՀ անդէն զօրականս էրկուսասան հազար և հրաղէնս կարևորս՝ չուեաց 'ի Դավրէժ։

Մինչդեռ անցանէր արի արքայն Մուրատ ընդ գետն Երասխ՝ հարկանէր ջուրն մինչև ցգօտին իւր. յայնմ պահու ձեռն էառ միում ուսէք յաղնեաւոր զօրականէն որ գետատար լինէր, և զերծոյց զնա 'ի գետոյն։ Դարձեալ և 'ի ժամանել Օսմանեանց 'ի ՃԷվէՀս

քաղաք, տեսին զի գուռն նոցին այն-
պիսի ինն փայտս էր խառատվեալ, զի եր-
կաթի բնաւ չտգէր 'ի նա։ Հրամայ-
եաց Մուրատ ազգայ ածել կոնձ մի
ծառոյ, և ածին ազգ բազուկք. և ա-
ռեալ զայն 'ի ձեռս իւր ինքնին առան-
ձին՝ և հայր սատակապէս և Ջանիջանեան
նոքին զգուռնն։

Յամենայն սեպուհիքին եմուտ
Մուրատ ազգայ 'ի Դամրիժ. և յետ եր-
թալոյ 'ի զնին հոյակապ և վաղեմի շի-
նուածոց որ 'ի նմա, հրամայեաց քանդել
աւերել զնոսին. և տուին կողոպտաւք
յանոյշագ զօրականքն հրոյ Ճարակ եղին
հանգերձ զուարճ բուրաստանքն և
պարտիզքն։ Մինչն զմիկիթն Ուզուն
Հասանայ անարատ պահեաց, և զայն
'ի իւրոյ գենեալսին։ Եւ զի ձմեռն 'ի
վերայ հասեալ կայր, և Հայաստան աշ-
խարհ ոտնակոխն և կապուտ կողոպուտ
յամենայն արգեանց՝ ոչ ունէր այլ ևս
հանգարտ մատակարարել բանակին, հր-
ամայեաց ազգայ չուս գարձն առնել։
Ասուրս հնգետասան զկայ էառ Մու-
րատ ազգայ ՅԱՀԻՔ ասկս ոտնառու-
թեանն, ոչ վասն և զմնան իւրոյ Հա-
նապարհին պատգարակս արարեալ
էր. և ապա 'ի քանեքորդի հինգերորդի
աւուր ամենայն գեկուսիքին մեծա-
շուք յաղթանակս եմուտ 'ի Կոս-
տանդնուպաւլիս։ Մինչն սեղապահն
ունէր 'ի գլուխ զգլուխն գլխանոցն

հանդիսի Միհաքիլէ անուանեալ. խակ այլ աւագանին ըստ հրամանի Թագաւորին ներքաթել կերպասս պատառեալ էին 'ի գլուխս իւրեանց. և զորավարն Ենիչէրեաց զրահ զգեցեալ, և զսաղաւարտին շղարշ ածեալ էր գեղնագոյն։ Նոյնպէս և Մուրատ արքայ յոտից մինչև ցգլուխ սպառազէն զրահապատեղեալ՝ զոսկեկմբեայ սաղաւարտին Թագաձև պարուրէր տեռ ըստիսակ, և 'ի վերայ ականակուռ միտուր շքեղաշուք ըստ սովորութեան նախնի Թագաւորացն Պարսից։ Ընդառաջ յԵրևանայ պատուէր յղեալ էր արքային առ Պայրամ փաշա՝ տալ բռել զորմանն քաղաքին Կոստանդնուպօլսոյ 'ի պայծառութիւն հանդիսի յաղթանակին։ Ապա հրաման տարեալ էր և զամենայն բնակիչս Կեսարիոյ և այլոց քաղաքացն Ասիոյ, որք ըստ մեծի մասին Հայք էին, զփախուցեալս յերևայոց ապատանեաց 'ի Թագաւորեալ քաղաքն յերևան և 'ի քառասուն տնոց հետ՝ դարձուցանել յիւրաքանչիւր տեղիս. յորմէ անպատուեմ վիշտք և տառապանք հասին եղկելեացն։

Եւ ոչ միայն տարկացն գոսք ընկենեալ խոնարհէին ընդ պերճ գաւազանաւ արքային Մուրատայ, այլև ազատքն կարծեցեալ Եւրոպացիանք որ 'ի Թագաւորեալ քաղաքն անդ դատանէին։ Թարգման գեսպանին Գաղղիացւոյ

սակս յանդուգն համարձակութեան
իւրոյ յառնելի, ուր պաշտպան կայր է-
լոյց վաճառականի ուրուն գաղթիա-
ցւոյ, ցցահարս սպանաւ։ Վենետիկցիսն
վաճառական՝ փոխանակ զի՛ի պատու-
հանէ տանիւրոյ հայէր գիտակամբ յար-
քունիս՝ անդէն՝ ի պատուհանին կա-
խեցաւ, իբրու զի կանանոց արքունեա-
ցն նստէր՝ ի ներսն։ Ամենայն ինչք նո-
րա յարքունիս գրաւեցան, և որ մի-
անգամ վաճառականքդ էին նորա գաղ-
թականքդ և անգղիացիքդ՝ արկան՝ ի բանտ,
և քառասուն հազար գահեկանս տու-
գանեալ հաղիւ թէ զերծան։

Ծովակալն Օսմանեանց թշնամա-
ցեալ ընդ դեսպանին Գաղթիացւոց,
որում անուն էր Մաուշելլ, սիրաս-
տան եղև զնմանէ առ արքայ. և նա
՝ի հաճել զսիրելին իւր՝ հրաման եւ
հանել՝ ի կախաղան զթարգման դես-
պանին՝ ունելով՝ ի գլուխ զնոյնն սա-
մուրնին։ Ի բողոքել դեսպանին զիրա-
ցին՝ տուաւ նմա պատասխանի, եթէ
սէր է արքայից արքայ յիւրում աշխար-
հին, և առ՝ ի կատարելոյ զօրէնս սէտու-
թեան ոչ ինչ կարօտանայ հրաման հայ-
ցել՝ ի թագաւորէն Գաղթիացւոց կամ
՝ի դեսպանէ նորին։ Եւ անդէն առժա-
մայն ինքն իսկ դեսպանն յանկարծակի
յապարանքի մուծեալ՝ ի նոսա պատրաս-
տական և արկաւ յուղղ, և՝ ի սուն իւր
անգամ՝ զկարաց գառնալ և առնուլ

ընդ իւր կարասի ինչ կամ ծառայս։

Ապա մանաւանդ Յովհաննէսն այնչափ յաճախեալ էր գլխապարտութեան պատուհաս, զի տէրունական ոմն Գէորգեանտէ անուն տեսիլ ևս էառեալ, որպէս թէ մարգարէն Իսրայէլեանց գլխատէր իւրով ձեռամբ զՀռչակաւոր քարոզն մեկնելոյն Ա յա Սոփիայի զԳաղզարատէ,փոխանակ զի յուրասա գայրնա՝ի սրբոց, և գատապարտ առնէր զնուազս և զսարդ Մէվլէվի և Խալվէթի անուանեալ տէրունական։ Գէորգեանտէ երթեալ վաղվաղակի առ գատաւորն Կոստանդնուպօլսոյ Գարաչէլէպիզատէ Մահմուտ էֆէնտի, ետ՝ի գիր գրոշմել ըստ տեսչին. և Դաղըզատէ յետ աւուրց ինչ մեռաւ, և թաղեցաւ ըստ իւրումն վարդապետութեան առանց երդոց և պարուց։ Հանդարտակալն Իպրահիմ էֆէնտի զանկատեալ՝ի տէր աւագութեան, խոստացաւ սրբոյն գանձս անթիւս՝ եթէ շնորհեսցէ ինքեան զբարձ վէզիրին մեծի. Մուրատ սրբոյ յղեաց ընդդէմ Հանդարտակալին առ նոյն ինքն վէզիրն մեծ, և նա կոչեաց զԻպրահիմ և գլխատեաց զնա։

Յաւուր յորում եմուտ՝ի Կոստանդնուպօլիս Մուրատ սրբոյ, հասին պաշարեցին Պարսք զԵրևան։ Ապարեաց վէզիրն մեծ՝ի Տիգրանակերտէ գալ Ժամանել՝ի քաղաքն Կարնոյ, և անդ լինել զօրաժողով. այլ մինչև

մեկնեալ նորա անսի՝ առաւ Երևան, և Միրիթէզա փաշա վիրաւորեալ մեռաւ։ Ընտրով մոբ ընկալաւ Մուրատ արքայ զգոյժն, և գիր եւս քաջալերութեան առաքեաց առ վէզիրն մեծ. այլ զքէն վրիժուն թափեաց յՕսման էֆէնտի՝ յառնադպիրն ենիչէրեաց, որ զընտրութիւն զօրականին յայնմ կարեւոր պահու յախտուռն և յանխորհուրդս արարեալ էր 'ի մանկանց և 'ի խուժանէն։ Յղեաց Մուրատ արքայ առ Օսման զմի ոմն յիւրոց պաշտօնէից, որ ոսկիս հարիւր ընծայեալ նմին՝ խրնդրեցէ գրել և զինքն 'ի զինուորութիւն. և նա անդէն գրեաց զնա։ Յայնժամ էջ արքայ 'ի դուռն զօրավարին ենիչէրեաց, ասաց մատուցանել առ իւր զանուանս զօրականացն, և ելհարց ելթէ ո՞ւցէ այրն գնա՞ եւս գրեալ 'ի կարգին։ Եւ յանդիմանեալ զօրավարին՝ կոչեցաւ առնադպիրն և մատնեցաւ 'ի ձեռս գահճաց։

Ընդ այն ժամանակս արքն զօրավարն Օսմանեանց Բիւյուք Ահմէտ փաշա հարաւ ընդ ապարատակուն Պարսից Բիւրթէմոյ. և ձգեցաւ Ճակատամարտն զերկուս ամս և զերկուս գիշերս։ Վերադարձեցաւ Ահմէտ. այլ ժուժեալ յերիվարին քաջութեամբ՝ իբրև եռեւ զնորատակեալ խրոցն ասէ. «Թող ամենայն որ անձին վրիժութեան հոգայցէ. ինձ ինքս յաշխարհի ցանկալի ինչ քան

զմահ քաջուԹեամբ »։ Անդէն եհան
'ի վերայ ումն պարսիկ, և արկ զնա'ի գե-
տին. ընԹացան և այլք, և հատեալ
զգլուխն առաքեցին մեծաքաղաքն առ
շահն. և նորա գիտելով շատի զարմա-
նիս առնն՝ գարձոյց ապա զիրառսին
նորին առ Օսմանեանս, և Թաղեցաւ 'ի
Դամասկոս։

Իսկ Մուրատ աղքայ Թէպէտ և առ
ժամն ներեալ Թուէր զյանցանս վէզի-
րին մեծի, այլ յամին երկրորդում ըն-
կեցիկ արարն զնա, և կարգեաց 'ի տեղն
նորին զՊայրամ փաշա, որ խաղաց զբ-
նաց 'ի Բերիա. զի անընդհատ էր պա-
տերազին 'ի տաճիկս աշխարհին։ Եւ
նախարգ նորին Դատանը եառաջ Մե-
հէմմէտ կացուցաւ կուսակալ Օզովի,
առ'ի կարելոյ ցաղուցանել զերկիրս
շիտիա խանիցն Խրիմու։ Բանզի Ի-
նայէթ քէրէյ խնդրեալ'ի Կոստանդնու-
պօլսոյ զօրս յօգնականութիւն ընդ-
դէմ ԳանԹէմիր միրզայի եշխանին Ղա-
զայից՝ երբեւ չեղեալ լսել, յարձակեցաւ
'ի Քէֆէ, զքաղաքսն և զգաստ-
ուրն 'ի մահ եառ, և զքաղաքն յաւարի
էառ. և 'ի կարգել Օսմանեանց խան
Խրիմու զՊէհատուր քէրէյ՝ Ինայէթ
անկաւ 'ի Կոստանդնուպօլիս. և մինչ
դեռ վիճէր յաստենի Թագաւորին ընդ
ԳանԹէմիրայ ոստիսն իւրում՝ անդէն
խեղդեցաւ ակնարկութեամբն Մու-
րատայ։

Ընդակառ էին և յարևմտակողմն աշխարհին Օսմանեանց ազգուկ և ապաշնութիւնք և անգազար փոփոխութիւնք կուսակալաց և բդեշխաց։ Եւ 'ի Կոստանդնուպոլիսընդ այն ժամանակս խեղդամահ եղև Յաղիգուլէ պապարիարգն Յունաց Կիւրեղ՝ թշնամին Յիսուսեան կրօնաւորաց։

Մագուսա խան գեղապանութեամբ էկեալ 'ի շահէն Պարսից 'ի հնարս հաշտութեան, ածէր ընդ իւր և պարգևս հնգիկ երիվարաց ուղղ, տաճիկ ուղտս քառասուն, մուշկ ազնիւ և ծանրակշիռ, և յամբարս անուշահոտս ընտիր՝ 'ի պարկս պարկս կնքեալս մատանեաւ շահին։ Հակս սամուրենեաց երեսուն, ոսկեխառն և արծաթախառն կապերտս մեծամեծս ուղղ, և այլ իրս բազմագին։ Զառաջինն պատուէրս նա և ինքեանցս յարքունի ապարանսն 'ի Տաւրուս փաշա։ այլ յետոյ սակս ծանրութեան պայմանացն 'ի նմանէ առաջարկելոց՝ խոստացեալս արդեալս 'ի նմին տեղոջ ինքեանին իւրոյ։ Խցան և հեղուսան պատուհանք սենեկաց նորա, և ամենայն լուսամուտք։ և երկուք ոմանք 'ի պաշտօնեէից նորա արձակեալք 'ի նմանէ թղթով յայլակերպս առ շահն՝ ձերբակալ եղեն և ածան կապանօք 'ի Կոստանդնուպոլիս։ Հրամայեաց արքայ Մուրատ, և կախեցան ոչքն ականջաւք և մնջաւք առ դուրս բնակու-

թեանխբրեանց, և թուղթքն զորս կա-
մէին տանել՝ բեռեռեցան 'ի գէմս նոցին։

Դեսպանին Պարսից տուեալ էր
Մուրատ պատասխանի, եթէ արշաւանն
իսկ յառնուլ 'ի ձէնջ զՊաղտատ ան-
խափան վնարեցի, և անտի ապա ար-
ձակեցից զքեզ առ տէրն քո։ Եւ մինչ-
գեռ վէզիրն մեծ յԱսիա զօրաժողով
լինէր մեծաւ պատրաստութեամբ, 'ի
Կոստանդնուպօլիս հինգ հազար ման-
կունք քրիստոնէից ետ յաւելան 'ի նոր
ենիչէրիս. և Մուրատ արքայ 'ի մահ
տուեալ զմի յերիկուց եղբարց իւրոց
մնացելոց զԳասպմ, անց գնաց Յիս-
կիւտար մեծաշուք հանդիսիւ յամ-
սեանն ապրիլի յամին 1638։ Աշունա-
կեալ էր արքայ յերիվար համակ էր-
կամիտպատ՝ սաղաւարտ 'ի գլուխ իւր
ունելով երկաթի, և զնովաւ շղարշ կար-
մրագոյն՝ որոյ տուունք կրկին հովա-
հարեալ ծածանէին 'ի վերայ ուսոցիւ-
րոց։ Աւուրս քսան և հինգ զուզի կա-
լաւ բանակն Յիսկիւտար. և անդ բաշ-
խեցաւ ամենայն ճանապարհն Յիս-
կիւտարէ զՊաղտատ յինքեանս հարիւր։

Ինիկոմիդիայ հրաժեշտ տուաւ գիտ-
նականաց գարշ առնել 'ի Կոստանդ-
նուպօլիս։ Այլ չև մեկնեալ նոցա ան-
տի, կամեցաւ արքայ 'ի փորձ հանդիսի
մատուցանել զորս ոմանս հեռամուտս
գտաւորութեանն բարձի, որ լեալ իսկ
էին երբեմն գտաւորք Պրուսայ, Ե-

գիպտոսի և Ենիշէհրայ։ Եւ այս իրն-
գիրք էին առաջարկեալ քնոցա յարքայ-
ին. «Հաւատք գոյացութիւն իցեն՝ և-
թէ պատահումն, և առ ո՞ր 'ի սոսն
սորոգութեանց Աբիսոսէլի պատ-
կանիցին»։ Բ. «Որ երդուեալ իցէ ոչ
շուտել զմիս, համարիցի երդմնազանց՝
եթէ զձուկն ուտիցէ»։ Երեքեան 'ի
քննելեաց անսի գաստաւորաց հայցե-
ցին պարապ ակնարկելոյ 'ի գիրս. և
շարբարդն Էզհէմզատ առ ժամն զայս
արար պատասխանի առ երկրորդ խն-
դիրն. «Հաւատք խնամ ունին սոխ-
բութեան, վասն որոյ և սոխորութեան
իւրաքանչիւր բարբառոյ. իսկ որդ սո-
խորութիւն մերոյ բարբառոյս մի ա-
սելով չիմանայ երբէք ձձուկն, ապա
և որ երդուաւ մնահատ լինել, ձկնակերը
թէ լինիցի՝ չէ նա երդմնազանց»։ Իսկ
առաջնոյ խնդրոյն յանձն էառ գրով
ապէ զլուծումն. և ընդ բազմակնճիռն
նրբութիւն բանից առնն ժպտեալ
արքայի՝ պատուեաց զնա վերսին
գաստաւորական իշխանութեամբ։

Այն ինչ մեկնեալ էր բանակին 'ինն-
կոմիդիոյ, և հաստատեաւ առ արքայ՝
եթէ ծնաւ արքայն որդի մի 'ի քաղաքի
անդ։ Ի կալանս արկաւ այրն՝ մինչև
սուգեսցի բան նորա. և զի գուսար
էր նորածինն, այրն այն ցցահար ապա-
նաւ, փոխանակ զի սատեթիւն կայր
յաւերման։

Հուպ յԻկոնիոն եկ ընդ առաջ արքայի վեզիրն մեծ Պայրամ փաշա, և խիլայիւք և էրիվարդք և ակամակուռ դաշնակաւ մեծարեցաւ 'ի նմանէ։ ՅԱգէհիր քաղաքի յայց եկ արքայ 'ի մենատման ուրեք գեղեցկանիստ, յորում և ջրվէժ ձեռագործ ախորժ զբաղեցմամբ սահեալ անկանէր։ Հաճեալ յոյժ արքայի ընդ վայրն՝ գրոշմեաց 'ի պատուհանին ոսոս ջրոս, յորում Ագենայ ասէր հանդէս զուեղին։ Ապա հրամայեաց գենդեռմին յաւելուլ 'ի տեղն նոմին ջամով այլ ևս ոսոս ջրոս։ և նա չև արեգականն 'ի մուտս լեալ՝ շարագրեաց անդէն գրուատխաւեղոյն և արքայի միանգամայն։

ՅԻկոնիոն ձերբակալ եղև տէրվիշն, որ Մէհմի զանձն իւր անուանեալ կենդանի իւրովքն հանդերձ զգաւառականան։ Նա զի անխոցելի զնա իւրքն հանարին, հրամայեաց արքայ 'ի շերտս շերտս կտրատել զմորթ նորա, և զմատուռնոսակաւ յօդակոտոր առնել։

Չհեռ այնորիկ եռ ապանանել արքայ 'ի սադրանաց զինակրին իւրոյ զԲեժիշկն իւր զԷմիր չէլէպի։ քանզի ոխացեալ ընդ նա զինակրին՝ քսեաց առ արքայ՝ և թէ Էմիր չէլէպի սովորէ կլանել զափիոն։ և պատճառանաց մեկնելոյ յօրինական լուացումն՝ զափիոն երթայ կլանել։ Յաւուր միում՝ 'ի մեկուսանալ դարձեալ բժշկին պատճառա-

նոք յաղօթս կալոյ, ասէ ցնա արքայ. «Հան՝ի ծոցոյ քումմէ զառուփդ». և իբրև էհան, ասէ. «Զինչ իցէ՝ի դմա»: Ասէ բժիշկն. «Ախիան, որ ոչ ինչ է վնասաբեր»: Ասէ արքայ. «Կեր ապա զդա»: Եւ կէաւ նորա հատս ինչ՝ ասէ. «Հատս իցէ, տէր արքայ, և գեղթափն անշափ կերեալ՝ ապաքէն՝ի թոյն փոխի»: Այլ թագաւորն բուռն արար նմա կլանել զամենայն, և ապա հրամայեաց խաղալ ընդ իւր՝ի նարտս: Յետ սուղ ինչ ապահու ոչ ևս հանդուրժեալ բժշկին յայն տարդնապ՝ ածաւ՝ի տուն, ուր ծառայքն իւր անթեղայս պատրաստեալ էին նմա. այլ նա ասէ. «Ձէ ինձ այդ՝ի պէտս. որ ասես իւր ունիցի զքինակիրթագաւորին, լաւ իցէ նմա մեռանել քան զայնպիսի կեանս». և առեալ օշարակ փչեաց զոգին:

Սուգ մեծ էառ Մուրատ արքայ ընդ մահ մեծի վէզիրին Պայրամայ յուղղոջն, որ արդարև այր էր քաջպատրաստ և խոհական. և կարգեաց փոխանակ նորա զԴայեար Մէհէմմէտ փաշա: Բազում խաղաղութեամբ շարժանսն արար նա յայնմ արշաւանին զանհնազանդս հրամանի իւրոյ առ՝ի շնչելոյ զծուխ, մինչև էհաս՝ի Պաղատաս. զի զոմանս գլխատէր, զկէսս՝ի կախաղան հանէր և զայլս մորթեղերծ առնէր:

Ի Մուսուլ գլխատեցաւ Տէրվիշ աղա, որ գարձեալ էր՝ի մանկամոլով

առնելոյ 'ի Յունաստան. և ամբաստանէր բազում տառապանս հասուցեալ բնակչաց աշխարհին։ Յայնմ հետէ բարձաւ 'ի սպառ և մանկաժողովն 'ի պետութենէ Օսմանեանց։

Ընդդ 'ի Մուսուլ ժամանեաց 'ի բանակն արքունի և գեսպան ոմն արքային Հնդկաց, որ ընդ այլ ընծայսն ածէր գօտի մի ակաճակուռ հարիւր և յիսուն հազար գահեկանաց գինք, և վահան մի յունկանէ փղի կազմեալ, և պատեալ մարմոր ռնգեղջիւր, և ասէր վասն վահանին զդէմ ունել սուսերաց և ռմբաց գլխովին։ Մուրատ արքայ հրամայեաց դնել զվահանն 'ի գետին, և իւրով լախտիւն կոփեալ միանգամ խորտակեաց, և ապա լցեալ զայն հինգհարիւր ոսկւով առաքեաց առ գեսպանն։

Յեօթնեերորդում ամսեան յետ մեկնելոյ 'ի Կոստանդնուպօլսէ եկին Էհսան բանակն Օսմանեանց հանդէպ Պաղտատայ։ Յայնմ կողմանէ պարսպաց քաղաքին, զորով պատ առնու Տիգրիս գետ, ինքնասն և եօթն աշտարակք էին, և 'ի ցամաքակողմն կուսէ հարիւր և չորեքտասան։ Իսկ շրջապատ պարսպացն էր աւելի քան զտասն հազար քայլ։ Յարևմտից գետոյն հանդէպ քաղաքին կայ արձակավայրն Գուշլար գաղէսի անուանեալ, որ և կամրջաւ կցի ընդ քաղաքին։ Արդ վերագոյն քան զտեղիս զայս 'ի բարձրաւանգագոյն ուրեք

զկայ էառ Մուրատ արքայ. ապա չև
ինքեալ յերիվարէն՝ 'ի գլուխ բանակին
կացեալ խաղաց յառաջ, և հրաման էառ
պատնէշս և մարտկոցս կանգնել անդէն
զքաղաքաւն, և պաշարել զայն շուր-
ջանակի։

Ի վաղիւ անդր հասին և թնդանօթ-
քին, և բաշխեցան տասն'ի վէզիրն մեծ,
վեց 'ի ծովակալն, և շրջք 'ի կողմնա-
պետն Ասիոյ, և սկսան առ հասարակ
բախել զպարիսպն։ Յաւուրն ութե-
րորդի կործանեցան աշտարակքն, և
խրամատեցան պարիսպք. սակայն պա-
շարեալքն ոչ դադարէին կարկառել
զնոսին հողալից կողովակք հիւսելովք
յարմաւենեաց։ Յայնմ վայրի գերիք
պարսիկք երկոտասան բերան արքայի 'ի
պարգևս. և նա հրաման էառ զուլթե-
ցուն 'ի նոցանէ անդէն հատանել զկա-
ռափուն, և շորիցն որ փողարք էին
բուռն արար էլանել կալ 'ի պատնէշն,
և զպարսկականն հնչեցուցանել նուագ
պատերազմական առ ահաբեկ զպա-
շարեալսն առնելոյ։ Ապա գլխատե-
ցան և տղա, և կառափունք նոցին
վարեցան 'ի գլուխս պատնէշաց։ Բռ-
վանդակ զօրն 'ի կառոյցս մարտկոցացն
պարապէր փուլթանակի, զի և ինքն իսկ
Մուրատ արքայ 'ի տեղւոջն կացեալ
խրախոյս կարդայր առ նոսա. «Հապա
առաքինիք, ցուցէք ինձ զզօրութիւն
քաջութեան ձերոյ. մի որ թերի գրա-

ցի 'ի նախանձուէ գէնիս մէրոյ »։

Ի նմին պահու անկան կործանէցան մարտիրոսք բազումք, և պարիսպք անգամ քաղաքին գլորեալ հոսէցան ընդ երկայնութիւն ութհարիւր գըրկաչափից. ժամ էր այնուհետև յարձակել 'ի քաղաքն. այլ անդէն ազգ էղև, եթէ խրամք և խորափիոք մեծամեծք հատեալ կան 'ինէրբուստ, և դարձեալ պատուէր տուաւ բարձրացուցանել զպատնէշն։

Մուրատ արքայ ոչ ևս հանդուրժեալ յապաղմանն, կշտամբեաց զվէզիրն բանիւք սաստկութեան։ Պատասխանի ետ այրն քաջ. «Թող անշնչացի ծառայ քո Դայէար, տէր իմ արքայ, միայն թէ առցես դու զքաղաքդ»։ Քարոզ կարգաց 'ի բանակին՝ պատրաստ լինել ամենեցուն առ վաղիւն յարձակել հարկանել առ հասարակ զքաղաքն, և անուն յաւիտենից առնալ անձանց և աշխարհին. և զդիշերն ամենայն խիզախէին քաջքն աղաղակելով, Մեծ է Աստուած։

Ընդ այգս այգոյն խաղացին անցին զջրքն 'ի պատնէշաց անտի հուպ 'ի պարիսպն. և վէզիրն մեծ մինչդեռ յառաջինն արիապար շահատակեալ առաջամերկ պուզէր պղտորէր զբազմութիւն պարսկական ամբոխին և զյոլովս 'ինոցանէ տապատաց յերկիր կործանէր, դնդակ հրացանի հարաւ 'ի Ճակատն

նորա, և անկաւ անդէն այրն քաջ, և Մուրատ արքայ ասէ հեծեծագին. «Ա՛հ Դայեար, գու ինձ լաւ էիր քան զհարիւր ամուրս որ իրրև զՊաղտատ»: Տուեալ ապա զհանանին 'ի ծովակալն Գարա Մուսդաֆա փաշա, խրատուսէ զնա յառաջիկայ գործն. «Քաջալերեաց և լեր այր զօրութեան. 'ի քէն ակն ունիմ և առման Պաղտատայ, և անձնանուէր արքանեկութեան կամայ սեաւեռնա քո. տէր ընդ քեզ»: Երկիր եպարգ Մուսդաֆա առաջի արքայի և ասէ. «Տացէն ինձ երկինք կամակատար լինել սեաւեռնխոյ արքայի, և ինանոց սրանչելագոյգ արժանաւոր հանդիպել». և անդէն փութացեալ 'ի պատնէշն՝ խրախոյս կարդայր մարտիկացն, որ ոչ սակաւ վհատեալ ելեալ էին ընդ անկումն վէզիրին:

Յարձակեցան առ հասարակ ուժգին սատակութեամբ, «Եւ որո՞ւմ առար պահիցեմք զմահ մեր» գոչէին առեծարար: Անկան զվէզիրաւն բազմութիւնք ակամաւոր արանց, այլ նա ոչ կասեցաւ 'ի ջանիցն մինչև առին Օսմանեանք զամենայն զմարտիկսն. և առաւ մեծն Պաղտատ ամուր պատուարն Պարսից աշխարհին 'ի քսանեքորդի հինգերորդի աւուր ամսեանն գեկտեմբերի յամի 1638 որ օր քառասնեքորդ էր պաշարմանն:

Անձնատուր էղև կուսակալն Պաղ-

տասայ Պէկդաշեան, որ'ի քնէ հայկազն էր, որպէս ասէ Ղուրի էֆէնտի, և էկն 'ի վրան վէզիրին, և անտի 'ի խորանն արքունի, ընդ մէջ անցեալ բազմութեան ապայից և զինակրաց երիսուսուէք կացելոց և 'ի զէն և 'ի զարդ վառելոց։ Ընդ բազմեալ էր Մուրատ արքայ 'ի գահ ոսկի, և շուրջ զնովաւ գինեպետն և վէզիրք և ոսկեգօսի արքանեակք։ Եմուտ նախ վէզիրն մեծ, և զկնի նորա Պէկդաշեան, որ երկիր էապագ արքային խնդրեաց զներումն գիմակացութեանն եղելոյ։ Եւ ասէ արքայ. « Ներեալ ձեզ, այլ այժմէն իսկ էջիք 'ի բաց 'ի քաղաքէդ, և երթիջիք յոր և կամք լցեն իւրաքանչիւր. թէ վաղագոյն եկեալ էր քո, ոչ այսպէս զրավառակ վնեալք. սակայն գովեմ և զհաւատարիմ ծառայութիւնքդ զոր հարկանես բնիկ տէառնդ »։ և հրամայեաց պարգևել նմա վեսոուր ականակաս, և գաշոյն, և մուշտակ պատեալ սամուրենեաւ նեղքոյ և արտաքոյ։

Ի նմին ատենս քանզի բերդակիսքն գեռ ևս մարտ եղեալ կռուէին՝ լցան զերան Օսմանեանք 'ի քաղաքն, աւարեցին զապարանս խանին և զշուկայն, և զիմակացան 'ի սուր սուսերի կոտորեցին։ Ամապարեաց վէզիրն մեծ 'ի նեղքն՝ ցածուցանել զաղմուկն, այլ 'ի զուր։ Այլ և պատանի ոմն եռանգուն ընթացեալ առ Մուրատ ասէ. « Տէր

արքայ, զոր բան եւոր Պարսից չապա-
նանել զնոսա, այլ մեք ոչ »։ Ասէ ցնա
արքայ. « Զինչ խօսիս »։ Եւ նա ասէ.
« Տէր իմ արքայ, յայսմ պատերազմի
անկաւ հայրն իմ, և եղբարք և հօրեղ-
բայրն իմ որդւովքն հանգերձ. արդ զի
է զի արդէլուս յաղէցուցանել զվրէժ-
խնդրութիւն իմոյ զնախանձ. թէ
զոր ներեա Պարսկաց, ապայն մեք ոչ
բնաւ »։ Զբարին եբարձ արքայ մեծա-
ձայն, և արձակեաց զպատանին։

Ապա սոսդեալ զդիմակացն լինել
Պարսից զեռ ևս 'ի քաղաքին, հրամն
եւ կոտորել զնոսա. և յերեսուն հա-
զար պարսկաց երեքարիւրքն հազիւ թէ
'ի փախուստ Հոզարդեցան, տասն հա-
զարք 'ի պաշարման անդ կորեան, և
բան հազարք յաւուր առման քաղաքին
'ի հուր և 'ի սուր Օսմանեանցն մաշե-
ցան։ Յետ այնորիկ խաղաղանալ թուէր
քաղաքն. այլ 'ի բարբոքել և յոգս վե-
րանալ շուտ մարանի վառօղն մեծաւ
շառաչմամբ և բազում ճեռուք արանց
և տանց և կոտրածիւ ուրիշարիւրգոմ-
շաց, հրամայեաց Մուրատ արքայ ան-
դէն 'ի սուր սուսերի կոտրել առ հա-
սարակ զպարսիկ բնակիչս քաղաքին,
և քարոզքն ազաղակէին 'ի բանակին.
« Առ որում գտանիցի պարսիկ ոք,
սպանցէ, կամ սպանցի »։ Ի էր բա-
նակն պարսիցք սպասանելովք անդր
յանկասկածս. Մուրատ հրամայեաց

հազար մի 'ի նոցանէ տողել յանդիման
իւրոյ խարանին, կարգեալ առ միոյ միոյ
գահիճ մի սուսերամերկ. և յանկար-
կել իւրաքանչիւր հազարաւոր կառափունքն
միանգամայն յերկիր Թօխմախեալք
Թաւալեցան : Եւ եղև Թիւ կոտորե-
լոցն 'ի նմին աւուր 'ի քաղաքին և 'ի
բանակին երեսուն հազար արանց :

ՑեօՀնեանանելոյդի աւուր ամ-
սեանն յունուարի յամի 1639 չոս գար-
ձի արար Մուրատ արքայ : Ի Մուսուլ
